

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**«ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՄ.
ՍԻՍԻՑ ՄԻՆՁԵՒ ԱՆԹԻԼԻԱՍ»**

**ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

2022 թ. սեպտեմբերի 8-9





**ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ
«ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՄ.
ՍԻՍԻՑ ՄԻՆՋԵԻ ԱՆԹԻԼԻԱՍ»**

2022 թ. սեպտեմբերի 8-9

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ – 2023

ՀՏԴ 94(479.25):27(082)
ԳՄԴ 63.3(5Հ)+86.37Գ43
Կ 477

Ժողովածուն հրատարակության է երաշխավորվել
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
պատմության և հասարակագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի կողմից

***Ժողովածուն հրատարակվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած
ֆինանսական աջակցությամբ՝
21T-6A2242 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:***

Խմբագիր՝

բ. գ. Թ. Գևորգ Մադոյան

Կ 477 «Կիլիկիո Հայոց կաթողիկոսությունը պատմության քառուղիներում.
Սիսից մինչև Անթիլիաս», գիտաժողովի հոդվածների ժողովածու /
Կազմ.՝ Ա. Հարությունյան.- Եր.: Հեղ. հրատ., 2023. - 435 էջ:

Հոդվածների ողովածուի մեջ ընդգրկված են 2022 թ. սեպտեմբերի 8-9-ը Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ պատմության և հասարակագիտության ֆակուլտետում կազմակերպված «Կիլիկիո Հայոց կաթողիկոսությունը պատմության քառուղիներում. Սիսից մինչև Անթիլիաս» խորագիրը կրող հանրապետական գիտաժողովի նյութերը: Հեղինակներն իրենց հետազոտություններում անդրադարձ են կատարել Մեծի Տանն Կիլիկիո Հայոց կաթողիկոսության պատմության զանազան հարցերին: Ժողովածուի մեջ տեղ գտած հոդվածներն ունեն ինչպես գիտաճանաչողական, այնպես էլ գործնական-կիրառական նշանակություն: Առաջ քաշված մի շարք հիմնախնդիրներ հայրենական պատմագիտության մեջ քննարկման նյութ են դարձել առաջին անգամ:

Ժողովածուն նախատեսված է պատմաբանների, բանասերների, Հայ Առաքելական եկեղեցու, նրա նվիրապետական աթոռների և Հայկական Սփյուռքի պատմության հարցերով հետաքրքրվողների, ինչպես նաև ընթերցողների լայն շրջանակների համար:

ISBN 978-9939-0-4559-7 ԳՄԴ

© Հարությունյան Ա., 2023

Գիտաժողովի հանձնախումբ՝

պ.գ.թ., պրոֆ./պաշտ. Ավետիս Հարությունյան

պ.գ.թ., դոցենտ Էդգար Հովհաննիսյան

պ. գ. թ. դոցենտ Արշակ Բալյան

պ. գ. թ. Վահագն Հարությունյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԱՆՈՒԱՆԷ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ՆԵՐՍԻՍԵԱՆԻ Տ. ԱՆՈՒՇԱԻԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԸ..... 8

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՊԱՏԳԱՄԸ «ԿԻԼԻԿԻՈՅ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՄ. ՄԻՄԻՅ ՄԻՆՉԵԻ ԱՆԹԻԼԻԱՍ» ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ ԵՐԵՒԱՆ, 8 ՍԵԱՊՏԵՄԲԵՐ 2022 10

Շահան Արք. Սարգիսեան
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ (1914-1939) ՆԱԽԱՄՈՒՏ 12

Քնարիկ Աբրահամեան
ԳՐԱԿԱՆ-ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ «ՀԱՍԿ»-Ի ՄԻՋՈՅՈՎ 30

Հասմիկ Ամիրջանյան
ԱԴԱՆԱՅԻ ԹԵՄԻ ՀՈԳԵԻՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐՈՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1908 1909 ԹԹ..... 45

Արծուի Բախչինեան
ՄԻ ԱՆՏԻՊ ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԻԼԻԿԻՈՅ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍԱՀԱԿ Բ. ԽԱՊԱՅԵԱՆԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ 62

Սուրէն Դանիէլեան
ՅԱԿՈՒ ՕՇԱԿԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՓՈՐՁԱԳՐՈՒԹԻՒՆԸ. «ԱՐԵԻԵԼԱՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԷՋՄԻԱԾԻՆ. ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ»..... 74

Օֆելյա Դարբինյան

Մեծի ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԴՊՐԵՎԱՆՔԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՐԵԳԻՆ Ա ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1943-1952 թթ.) 91

Աեւրոպայի Դոկտրինայի

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՆՇԱՆԱԿՈՐ ՀԱՅԱԳԵՏ ՎԻԿՏՈՐ ԼԱՆԳԼՈՒԱՆ ՍՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ114

Արմինե Եփրկյան, Խաչիկ Խամիսյան

ԲԱԶՄԱՏԵՍԱՆԿՅՈՒՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ և «ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՄ. ՍՍԻՑ ՄԻՆԶԼ ԱՆԹԻԼԻԱՍ» ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ131

Վազգեն Համբարձումյան

«ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԵՐԵՆԸ» ՄԻՋԻՆ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՆՈՐՄԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ (ԽՆԴԻՐՆԵՐ և ԼՈՒԾՈՒՄՆԵՐ).....156

Ավագ Հարությունյան

ՄԱՏԹԵՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԻԶՄԻՐԼՅԱՆԸ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱՐԱՆ175

Ավետիս Հարությունյան, Արշակ Բալյան, Ինգա Խուրշուդյան

ՄԵԾ ՐԱԲՈՒՆԱՊԵՏ ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՅՈՒ «ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ»-Ը ՈՐՊԵՍ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՐ 187

Վահագն Հարությունյան

ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍԱՀԱԿ Բ. ԽԱՊԱՅԱՆԻ 1920 թ. ԵՒՐՈՊԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱ, ԻՏԱԼԻԱ ԵՒ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ...201

Էդգար Հովհաննիսյան, Բալինտ Կովաչ

ՍԻՐԻԱՅԻ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՊԱՏԿԱՆ ԹԵՄԵՐԻ ՓՈԽԱՆՅՈՒՄԸ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆԸ ԵՒ ԴՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 225

Արման Մարտիրոսյան

ՍԻՐԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԵՏԻ ՍԱՆՋԱՔԻ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ «ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ» ՏԱՐԻՆԵՐԻՆ (1936-1939 թթ.)

..... 262

Արմեն Մարուքյան

ՍՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԱԼՎԱԾՔՆԵՐԸ ԵՒ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՅ ԴՐԱՆՅ ԲՈՆԱԶԱՎԹՈՒՄԸ

276

Հայկանուշ Մեսրոպյան

ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

293

Էդիկ Մինասյան

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՅՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-2018 թթ.)

308

Շահէն Յովսէփեան

ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ԻՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔՈՒՄ

335

Մանյա Նաչարյան

Կ .ՊՈԼՍԻ ԵՒ ԿԻԼԻԿԻԱՅԻ (ՍՍԻ) ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՒՆԵՐԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

356

Գայանե Զիլավյան

«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ
«ՄԻԱԲԱՆՈՂ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ» ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՅՈՒ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

371

Սամվել Պողոսյան

ԿԻԼԻԿԻԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

384

Լիլիթ Սարվազյան

ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՅՈՒ
ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ 396

ԱՆԻ ՖԻԶԵՆԿՃԵԱՆ (ՖՆԿՂԵԱՆ)

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ «ՀԱՍԿ»
ԱՄՍԱԹԵՐԹԸ ԲԵՐԻՈՅ ԹԵՄԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ 414

**ՅԱՆՈՒԱՆԷ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ՆԵՐՍԻՍԵԱՆԻ Տ. ԱՆՈՒՇԱԿԱՆ
ԵՊԻՍԿՈՊՈՍ ԺԱՄԿՈԶԵԱՆԻ ՈՂՋՈՑՆԻ ԽՕՍՔԸ**

Գերաշնորհ սրբազան եղբայր՝ Շահան արք. Սարգիսեան,

Խ. Աբովեանի անուան պետական մանկավարժական համալսարանի, ազնուափայլ տիկ. ռեկտոր՝ Սրբուհի Գեւորգեան, գիտաժողովի՝ յարգարժան նախագահութիւն, սիրելի՛ ներկաներ եւ հիւրեր:

Յանուանէ Ամենայն Հայոց շնորհազարդ Հայրապետի՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. կաթողիկոսի, շնորհաւորում եմ Զեզ՝ փոխանցելով Վեհափառ հայրապետի օրհնութիւններն ու աղօթքները «Կիլիկիոյ Հայոց կաթողիկոսութիւնը պատմութեան քառուղիներում. Սիսից մինչեւ Անթիլիաս» հանրապետական գիտաժողովի կազմակերպիչներին եւ մասնակիցներին:

Հայագիտութեան օրրան հանդիսացող Հայոց Մայր եկեղեցին իր գոյութեան ողջ ընթացքում յատուկ խնամքով եւ հոգատարութեամբ մշտապէս գուրգուրել եւ փայփայել է ազգային, հայրենի գիտութիւնն ու մշակոյթը, արուեստն ու արհեստը, մատենագրութիւնն ու ճարտարապետութիւնը, լեզուն եւ գրականութիւնը, երաժշտութիւնը, պատմագիտութիւնը ... եւ այն ամենը, ինչը ձեւաւորում է հայրենականն ու ազգայինը: Այս հանրապետական գիտաժողովը միտուած է եւս մէկ անգամ վեր հանելու եւ քննական լոյսի ներքոյ հայեացք ձգելու մեր արժէքների, պատմական փառաւոր անցեալի եւ մեր լուսաւոր ու լուսահոգի նախնիների անցած՝ յաճախ փորձութիւններով լի, բայց ոսկեղէն ուղու վրայ՝ ինչու չէ նաեւ, պատմական անցեա-

լին հայեացք գցելով իմաստութեան առկայութեան դէպքում դասեր քաղել լուսաւոր ապագան ճիշտ կառուցելու համար: Ես վստահ եմ, որ մեր ժամանակներում անչափ փխրուն հայագիտութիւնը՝ նմանատիպ գիտաժողովների, քննարկումների եւ հրապարակումների միջոցով, պէտք է էլ աւելի ամրապնդուի ու կայունանայ մեր զաւակների հայեցի եւ ազգային կրթութեան ու դաստիարակութեան համար, եւ այդ ժամանակ մեր կեանքում կը բացուեն յուսոյ դռներ, մեր երկրից փախ կը տայ ձմեռը եւ մեր չքնաղ Արմէնիոյ երկրում կը բացուեն քաղցրիկ օրեր:

Սիրելի՛ բարեկամներ, կրկին անգամ Ամմենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունից, բարի եւ արդինաւէտ ընթացք եմ մաղթում «Կիլիկիոյ Հայոց կաթողիկոսութիւնը պատմական քառուղիներում. Սիսից մինչեւ Անթիլիաս» հանրապետական գիտաժողովի բոլոր մասնակիցներին:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՊԱՏԳԱՄԸ
«ԿԻՒԿԻՈՑ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՄ. ՄԻՍԻՑ ՄԻՆԶԵԻ ԱՆԹԻԼԻԱՍ»
ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ ԵՐԵՎԱՆ, 8 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2022**

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի մայրավանքէն հայրապետական օրհնութեամբ եւ քրիստոնէական ջերմ սիրով կ'ողջունենք խաչատուր Աբովեանի անուան պետական մանկավարժական համալսարանի, պատմութեան եւ հասարակագիտութեան ֆակուլտետի կազմակերպութեամբ տեղի ունեցող «Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութիւնը Պատմութեան Քառուղիներում. Սիսից մինչեւ Անթիլիաս» գիտաժողովի մասնակիցները: Բարձր կը գնահատենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մօտիկ անցեալի պատմութիւնը լուսարձակի տակ բերելու եւ գիտական քննարկումի նիւթ դարձնելու կոչուած ներկայ կարեւոր նախաձեռնութիւնը:

Վստահ ենք, որ գիտաժողովի մասնակիցները առարկայական ու համապարփակ մօտեցումով պիտի փորձեն ուսումնասիրել Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առանցքային դերակատարութիւնը մեր պատմութեան ամենէն վճռորոշ տարիներուն, յատկապէս՝ Համաշխարհային Առաջին Պատերազմի, Հայոց Յեղասպանութեան, արեւմտահայութեան եւ Կիլիկիոյ հայութեան հայրենագուրկ դառնալու եւ վերընձիւղման առնչուած շարք մը հիմնահարցերու ու գլխաւոր երեւոյթներու, զանոնք վերլուծելով իրենց պատմաքաղաքական պարունակին մէջ:

Արդարեւ, Հայ Եկեղեցւոյ պատմական դերակատարութեան եւ մասնաւորաբար Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հաւատքի առաքելութեան եւ ազգային ծա-

ռայութեան վերարժեւորումը Սփիւռքի յարաւիտփոխ պայմաններուն ու մարտահրաւէրներուն դիմաց, կը նկատենք խիստ այժմէական ու հրամայական: Անհրաժեշտ է, որ հայրենաբնակ մտաւորականութիւնը եւ ժողովուրդը ճշգրիտ ու ամբողջական ծանօթութիւնը ունենայ Կիլիկեան դարաւոր Աթոռի երէկի պատմութեան ու ներկայի համահայկական առաքելութեան:

Անկասկած բազմակողմանի մօտեցումներով եւ գիտական հայեացքով կատարուած աշխատանքը ո՛չ միայն նոր լոյս կը սփռէ յիշեալ տագնապալից ժամանակաշրջանի մեր պատմութեան վրայ, այլեւ նոր հորիզոններ կրնայ բանալ համապարփակ մօտեցումով ու իրապաշտ ոգիով ըմբռնելու Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առանցքային դերը Հայ Եկեղեցւոյ, հայրենիքին ու ընդհանրապէս հայ ժողովուրդի կեանքին մէջ:

Մեր օրհնութեամբ ներկայ գիտաժողովին իր մասնակցութիւնը կը բերէ Կիլիկիա Մատենադարանի Տնօրէն Գերաշնորհ Տ. Շահան Արք. Սարգիսեան:

Գիտաժողովի քննարկումներուն իր մասնակցութեան կողքին, Սրբազանը ձեզի հետ նաեւ պիտի քննարկէ հետագային Սուրբ Աթոռին հետ կատարուելիք համատեղ աշխատանքներու կարելիութիւնները:

Գիտաժողովի աշխատանքներուն կը մաղթենք լիառատ արդիւնաւորութիւն: Հայրական սիրոյ ջերմ ուղջունիւ,

Աղօթարար՝
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Շահան Արք. Սարգիսեան

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ (1914-1939) ՆԱԽԱՄՈՒՏ**

Հիմնաբառեր՝ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, Հայ Եկեղեցի, Աթոռ, Անթիլիաս, Պատմութիւն, Արխիւ:

Ключевые слова: Католикосат Великого Дома Киликийского, Армянская церковь, Престол, Антилиас, История, Архив.

Key words: The Catholicosate of the Great House of Cilicia, Armenian church, See, Antelias, History, Archive.

Երկու խօսք

Մեծապէս ողջունելի գիտածողովի մը արտասանուած գեկոյցս, երբ հրատարակութեան կը պատրաստեմ նոյն համալսարանի ժողովածուի մը համար, կրկին կը փափաքիմ շնորհատրել կազմակերպողները եւ գնահատել գիտնականներու թէ ուսանողներու լուրջ մասնակցութիւնը, որովհետեւ, զարմանալի կերպով, Հայաստանի Հանրապետութեան տարեգրութեան մէջ առաջին անգամն է որ գիտական լայն եւ լուրջ ֆինանսական առարկայ կը դառնայ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնն ու անոր առաքելութեան պատմական ընթացքը՝ ակադեմական բեմահարթակի վրայ:

Այս «մոռացում»ին տուն տուող այլազան պատճառներէն ու պատճառաբանութիւններէն անկախ, իրողութիւնը այն է որ հայութեան եւ անոր կրօնական-եկեղեցական ինքնութեան ու պատկանելիութեան ճանաչման խնդրին մէջ կարեւոր բացթո-

դում մը, ի վերջոյ, այս համախմբումով կը սկսի դարմանուիլ կամ սրբագրուիլ, որպէսզի համապարփակ, ընդգրկուն եւ ամբողջական ձեւով հասկցուի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տեղն ու դերը հայութեան եւ հայ եկեղեցիին մէջ: Այս արտայայտութիւնները պէտք է ընկալել դրականօրէն՝ իբրեւ գնահատանք:

Ներածութեան համար: Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նուիրուած գիտաժողովին ներկայացուող զեկոյցը, խորքին մէջ, ներածական խորհրդածութիւն մըն է՝ տեսական բնոյթի եւ ընդհանրացում մը՝ ցարդ իրականացած եւ ապագային իրականացուելիք հետազոտութեանց համար:

Հայ ժողովուրդի բազմաշերտ պատմութեան տարրալուծումն ու վերլուծումը, նախ՝ հայ մարդուն եւ ժողովուրդին համար ինքնանաւանշման գոյութեանական խնդիր է, ինքնութիւնն ու արմատները մոռցնող կամ ուրացնող ներկայ ժամանակներուն յատկապէս, ապա՝ մերձաւոր թէ հեռաւոր ժողովուրդներու այլաբնոյթ հետաքրքրութեանց առարկան կը շարունակեն մնալ հայն ու Հայաստանը:

Հայ եկեղեցւոյ պատմութեամբ հետաքրքրուած կամ զբաղած ոեւէ անհատ, վստահաբար, առաջնային պարտականութիւն պիտի նկատէ, իր նիւթին վերաբերող ու ցարդ հրատարակուած ձեռնարկներու (հատորային ու յօդուածային տեսքով) ցանկագրումը, որ գիտական շրջանառութեան մէջ «աղբիւրներ», «մատենագիտութիւն» կամ պարզապէս «մատենագիտական ցանկ» կը կոչուին:

Յաջորդ աշխատանքը պիտի ըլլայ, հաւանաբար, ուսումնասիրումը «ներածական» կամ այլ անուանումներով ծանօթ (յառաջաբան, երկու խօսք, բացատրողական, եւայլն) հեղինակային թէ խմբագրային գրութեանց, ուր սովորաբար պատ-

մութեան մշակման մեթոտը, մօտեցումը, ծրագիրն ու նպատակը պարզուած կ'ըլլան¹:

Այս գիտաժողովին ընթացքին մենք մէկ կողմէ կը վերապատմենք մեր իմացած/հաւաքած տեղեկութիւնները, միւս կողմէն կ'արձանագրենք նոր տուեալներով նորութիւնները, ի վերջոյ՝ վերահաստատելու կամ վերատեսութեան ենթարկելու մեզի փոխանցուած պատմագիտական ուսումնասիրութիւնները:

Զեկոյցը վերաբաղ մը կրնար ըլլալ 1914-1939 ժամանակաշրջանին գրուած, հրապարակուած վաւերագիրներուն, անոնց կարեւորութեան²: Երբեմն զգուշաբար պէտք է անդրադառնալ վրիպումներու, որոնք յանախակի են, ապա՝ այսօր, մեր տրամադրութեան տակ գտնուող կամ մեզի հասած արխիւային նիւթերուն եւ անոնց օգտագործման կարելիութիւններուն մասին: Նիւթը, սակայն, զուտ արխիւագիտական չէ, ո՛չ ալ վերապատումն է ժամանակաշրջանի դէպքերուն/դէմքերուն կամ անոնց «վերլուծումը», այլ՝ աւելի մատնանշումներ են ապագային մեր ընելիքներուն հաշտոյն:

Պատմութիւն եւ Եկեղեցի: Պատմութիւնը վերաբաղ ընթերցում մըն է մօտիկ թէ հեռաւոր անցեալին տեղի ունեցած դէպքերու եւ մեզի հասած տեղեկութեանց ճամբով ու անոնց համադրումով իրադարձութեանց՝ դէպքերու եւ դէմքերու շարա-

¹ Տէս Եղիայեան, Բ., Ժամանակակից Պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ (1914-1972), Անթիլիաս, 1975, էջ 22-28: Aram I, *The Armenian Church, An Introduction to Armenian Christianity*, Antelias, 2016, pp. 11-12. R. Kévorkian, L. Nordigian, V. Tachjian, *Les Arméniens 1917-1939: la quête d'un refuge*, Liban, 2006.

² Տէս Ծ. Արք. Սարգիսեան, Որբանոցէն Կաթողիկոսարան, տէս «Հայերի Փրկութեան Գործը Մերձատուր Արեւելում 1915-1923 թթ.», միջազգային գիտաժողովի նիւթերի ժողովածու, Երեւան, 2020, էջ 296-309:

յար ընթացքին: Անցեալին վերաբերող որեւէ նիւթ, երբ մեզի կը փոխանցուի եւ կը պատմուի, բնականօրէն, առարկայական տուեալներու վրայ հիմնուած պարտի ըլլալ եւ ենթակայական մեկնութեամբ ու վերլուծմամբ վերակառուցման ենթարկուած կ'ըլլայ:

Երբ կ'ընթերցենք պատմութիւնը կամ «պատմական» կոչուած դէպքի մը/դէմքի մը մասին գրուածները, տրամաբանութեան եւ փոխանցուած աղբիւրներուն կամ վաւերագիրներուն համադրումին կը նայինք, որպէս մեկնութիւնը տուեալ դէպքին/դէմքին, եւ բնականաբար ենթակային համակարծիք կամ հակակարծիք կ'ըլլանք, մեկնելով ներկայացման մեթոտէն/եղանակէն ու փաստերուն օգտագործման ձեւէն ու անոնց վաւերականութեան արժէքէն: Որքան ֆննարկուած նիւթը ապացոյցներով հիմնաւորուած ըլլայ, այնքան մտքին կողմէ ընդունելի եւ հետեւաբար իրական/նշմարիտ կը նկատուի: Երբեմն վաւերաթուղթերուն փոխանցածները պարտաւորուած կ'ըլլանք վերստուգել, երբ գործածած բառերն ու բացատրութիւնները՝ եզրակացութիւնները «անտրամաբանական», «տաւրիմանակ», «զարմանալի» ու յանախ ցարդ մեր իմացած/կարծածէն մեծապէս եւ բացայայտօրէն տարբեր են:

Հայ եկեղեցոյ հայրապետութեան կամ հովուապետութեան նուիրապետական կաթողիկոսական Աթոռներէն՝ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, պաշտօնական անուանումով՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմութեան վերընթերցումը եւ նորովի ուսումնասիրութիւնը, հետազօտութիւնը, ֆննարկումը անհրաժեշտութիւն մըն է, նկատի ունենալով մէկ կողմէ անոր գոյատեւումը եւ հայ ժողովուրդի կեանքին մէջ իր առաքելութեան ծաւալումը, միւս կողմէ հայ եկեղեցոյ դարաւոր պատմութեան իսկական ու նշմարիտ՝ ամբողջական հաս-

կացողութեան տեսակէտէ անոր անշրջանցելի իրականութիւն մը ըլլալը, որուն ուսումնասիրութեամբ աւելի կը յստականայ եկեղեցւոյ ճշգրիտ պատկերը: Այս հաստատումը նոյնչափ ալ իրական է Նովորասպետական միւս Աթոռներուն առնչութեամբ:

Հայ եկեղեցւոյ պատմութեան նիւթի զարգացման ընթացքը ցոյց կու տայ, որ նախորդ երկու դարերուն, բացի հայ մամուլին մէջ պատահական կերպով երեւցած յօդուածներէն, միայն քանակ մը գիրքերով հետազօտուած է, ինչ որ շատ քիչ է աւելի քան 1800 տարուան երթ ապրած ժողովուրդ-եկեղեցւոյ եւ եկեղեցի-հաստատութեան մը համար:

Այս պատմագիր/պատմաբան անձերուն ուսումնասիրութեանց մեթոտներն ու նպատակները, առաւել կամ նուազ նոյնը եղած են՝ հայ եկեղեցւոյ պատմութիւնը ներկայացնել ժամանակագրական ընթացքով եւ ամփոփ պատումով, նախ՝ որպէս դասագիրք հայ դպրոցին ու աշակերտութեան, յետոյ՝ այս նիւթով հետաքրքրուած ընթերցողներուն: Այսօր ալ շատ բան փոխուած չէ այս մօտեցումէն:

Ահաւասիկ ժամանակագրական ցուցակ մը.

1. Մելքիսեդեկ Վրդ. Մուրատեանց, Պատմութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, Երուսաղէմ, 1872, վերահրատարակութիւն՝ էջմիածին, 2011:

2. Աբէլ Արքեպ. Մխիթարեանց, Պատմութիւն Ժողովոց Հայաստանեայց Եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1874:

3. Յուսիկ Վրդ. Մովսիսեան, Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ Պատմութիւն, Վաղարշապատ, 1884, վերահրատարակութիւն՝ էջմիածին, 2008:

4. Մեսրոպ Ծ.Վրդ. Նարոյեան, Հայ Եկեղեցւոյ Պատմութիւն, ձեռագիր եւ անտիպ, Արմաշ, 1905:

5. Կարապետ Մ.Վրդ. Տէր-Մկրտչեան, Հայոց եկեղեցւոյ Պատմութիւն, մասն Ա., Վաղարշապատ, 1908:

6. Աբրահամ Զամինեան, Հայոց եկեղեցւոյ Պատմութիւն, Ա. մաս, Նոր Նախիջեւան, 1908 եւ Բ. մաս, Նոր Նախիջեւան, 1909:

7. Գէորգ-Մեսրոպ, Պատմութիւն Հայ եկեղեցւոյ, Ա. եւ Բ. հատորներ, Կ. Պոլիս, 1913 եւ 1914:

8. Օրմանեան, Մաղափա Արք., Ազգապատում, Ա. հտ. Կ. Պոլիս, 1912, Բ. հտ. Կ. Պոլիս, 1914, Գ. հտ. Երուսաղէմ, 1927, վերահրատարակութիւն՝ Անթիլիաս, 2001:

9. Բաբգէն Ա. Աթոռակից Կաթողիկոս Կիլիսեան, Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը), Անթիլիաս, Ա. հրտ. 1939 եւ Բ. հրտ. 1990:

10. Բիւզանդ եղիայեան, Ժամանակակից Պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, 1914-1972, Անթիլիաս, 1975:

Մեր օրակարգային նիւթին աղերսուած գիտական կամ պատմագիտական առումով եւ ընդարձակութեամբ երեւցող երկասիրութիւններէն կը յիշենք, Մաղափա Արք. Օրմանեանի բազմահատոր Ազգապատումը¹ եւ Հայոց եկեղեցին², Բաբգէն Աթոռակից Կաթողիկոս Կիլիսեանի Կիլիկիոյ Կաթողիկոսաց Պատմութիւնը³ (թերաւա՞րտ) եւ Բիւզանդ եղիայեանի Ժամանակակից Պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ⁴ ծաւալուն աշխատասիրութիւնը, որոնք Հայ եկեղեցւոյ Պատ-

¹ Տէ՛ս ցուցակի թիւ 8:

² Հայոց եկեղեցի, Կ. Պոլիս, 1911, որ ունի բազմաթիւ թարգմանութիւններ եւ հրատարակութիւններ:

³ Տէ՛ս ցուցակի թիւ 9:

⁴ Տէ՛ս ցուցակի թիւ 10:

մութեան ուսումնասիրման աստիճանաբար բարձրացող ընթացքը կը յայտնաբերեն: Ասոնց կողքին յատուկ կարեւորութեամբ պէտք է յիշել օտար լեզուներով մշակուած պատմութիւններէն՝ Հայր Յակոբոս Իսապետեանցի¹, Լեւոն Արփիի², Յակոբ Ներսոյեանի³, Տիրան Արք. Ներսոյեանի⁴, Գարեգին Բ. Սարգիսեան Կաթողիկոսի⁵, Սիրարփի Տէր-Ներսիսեանի⁶, Նինա Կարսոյեանի⁷ եւ այլ հետազօտողներու գիտական ուսումնասիրութիւնները, իսկ վերջին տասնամեակին Անթիլիաս տպագրուած ընդարձակ *The Armenian Catholicosate of Cilicia: History, Mission, Treasures*⁸, որուն պատմական ներածականը եւ առանձին ամփոփ ուսումնասիրութիւն մը կատարուեցաւ Սեդա Տատոյեանի⁹ կողմէ, ի վերջոյ՝ Արամ Ա. Վեհափառի կողմէ անգլերէնով մշակուած «Հայ Եկեղեցին»

¹ Issaverdens, J., *Armenia and the Armenians, Ecclesiastical History*, vol. II, Venice, 1877.

² Arpee, L., *A History of Armenian Christianity*, New York, 1946.

³ Տէս H. Nersoyan, *A History of the Armenian Church*, 1963.

⁴ Տէս T. Nersoyan, *Armenian Church: Historical Studies*, 1966.

⁵ Տէս Catholicos Karekin II Sarkissian, *The Armenian Church in Contemporary Times, Religions in Middle East*, ed. AJ Arberry, vol. I, Cambridge, 1969, pp. 482-520.

⁶ Տէս S. Der-Nersessian, *The Armenians*, London, 1969.

⁷ Garsoïan, Nina G., *L'Église arménienne et le grand schisme d'Orient. Peeters Publishers*. 1999. *Church and Culture in Early Medieval Armenia*. Ashgate, 1999.

⁸ Dadoyan, Seta B. (edit.), *The Armenian Catholicosate of Cilicia: History, Mission, Treasures, Antelias*, 2015.

⁹ Seta B. Dadoyan, *The Armenian Catholicosate from Cilicia to Antelias*, Antelias, 2003.

հատորը¹, որ կը շարունակուի թարգմանուիլ տարբեր լեզուներու²:

Աղբիւրներ եւ արխիւներ: Եթէ ընդունինք որ այս ենթախորագիրին երկու բառերն ալ պարզապէս վաւերագիր ու վաւերաթուղթ կը նշանակեն, մեր ուսումնասիրութիւնը անսպառելի կը դառնայ: Եթէ որդեգրուած ձեւին հետեւելով «աղբիւր»ը վերապահենք հեռաւոր եւ մերձաւոր անցեալէն եկած պատմագրական նիւթերուն, իսկ արխիւը պահենք, սովորաբար, պաշտօնական նամակներուն, եկեղեցոյ պարագային՝ կոնդակներուն, տեղեկագրութեանց, համաձայնագրերուն, սահմանադրական եւ իրաւական նշանակութիւն ունեցող գրութեանց, յուշագրութեանց, օրագրութեանց եւ լուսանկարներուն, այն ատեն քիչ մը սեղմած կամ մասամբ սահմանափակած կ'ըլլանք մեր պրպտումներուն շրջագիծը: Յիշենք, որ մօտիկ անցեալի պատմութեան մշակման համար նիւթերու առատութիւնը, ծաւալային կամ քանակական չափը անհամեմատելի է հեռաւոր անցեալէն մեզի հասած/փոխանցուած տեղեկութեանց հետ, ուստի եւ շատ աւելի դժուարին է անոնց մշակման գործը: Ի դարու հայերուն աղերսուած դէպքերուն այլազանութիւնն ու անոնց ներկայացման պատմութեան ընդարձակութիւնը երեւակայութենէ անդին է:

Այս գիտաժողովը պիտի փորձէ հաւանաբար ու առանձնաբար Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմութիւնը լուսարձակի տակ առնել, որպէս անբաժանելի եւ բնականօրէն կազմաւորող մասը հայութեան եւ հայ եկեղեցոյ պատմութեան:

¹ *Aram I, The Armenian Church, Antelias, 2017.*

² Գիրքը անգլերէն գրուած է եւ ցարդ թարգմանուած է ֆրանսերէնի, պարսկերէնի, արաբերէնի, ռուսերէնի եւ հրատարակութեան մէջ է գերմաներէն թարգմանութիւնը:

Այստեղ կը վկայակոչեմ Բիւզանդ Եղիայեանի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմական երթին իր տուած բանաձեւումը, որ խորապէս արտայայտողն է հաւատքի առաքելութեան, երբ կը գրէ. «Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ժամանակակից պատմութիւնը հարկ է դիտենք, նիւթերու անմիջական ու դրուագային նկարագրէն վեր, ամբողջականութեան պատկերով եւ համայն ազգի ու հայրենիքի կեանքի մեծ հոսանքին մէջ կատարած ազգաշէն ու միութենապան դիրքին ու դերին մէջ»¹: Եթէ սանձաւարփակօրէն առաջադրուած ժամանակամիջոցին մէջ՝ 1914-1939, նկատի պէտք է ունենանք հետեւեալ հիմնական երեւոյթներն ու անոնց աղերսուած խնդիրները.-

ա) Առաջին Աշխարհամարտը եւ Հայոց Ցեղասպանութիւնը (1914-1918)²:

բ) Ցեղասպանութեան տարիներուն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան աքաղաղական վիճակը իր ժողովուրդին հետ՝ Միջին Արեւելքի մէջ եւ յատուկ պարագան՝ 19 Յուլիս 1916 Սահակ Բ. Կաթողիկոսի «Կաթողիկոս-Պատրիարք» նշանակուիլը Օսմանեան կայսրութեան կողմէ³:

գ) Զինադադարն (31 Հոկտեմբեր 1918 Մունտրոսի դաշինք)⁴ ու մնացորդաց վերադարձը Կիլիկիա իր Հովուապետին հետ՝ Ատանա, Հայ Ազգային Միութիւն (Փետրուար-Մարտ 1919)⁵:

¹ Տէն Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 34:

² Նիւթի ընդարձակութեան եւ մատենագիտական ցանկերու (օտարալեզու թէ հայալեզու) առատութեան պատճառով կը խոսափիմ մասնատր յիշատակութիւններ կատարել:

³ Տէն Եղիայեան Բ., նշվ. աշխ. էջ 57-66: Տէն նաեւ Dadoyan, *History, Mission, Treasures*, pp. 48-54.

⁴ Տէն Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 72, 74-75:

⁵ Տէն անդ., էջ 69-102:

դ) Կիլիկիոյ յանձնումը Բեմալական Թուրքիոյ եւ Կիլիկիոյ աստիճանական պարպումը¹:

ե) Հայրապետը առանց հայրապետանոցի՝ գաղթական գաղթականացած զաւակներուն հետ (25 Նոյեմբեր 1921)²:

զ) Իննամեայ թափառումներու ժամանակաշրջան՝ Ս. Ա. թողին նոր կայքի փնտռտով Միջին Արեւելի մէջ, եւ Սփիւտի մէջ հրապարակուած առաջին կամ անդրանիկ Կոնդակը (Դամասկոս, 28 Փետրուար 1922)³:

է) Սիսէն վտարանդի եւ Անթիլիաս (Լիբանան) հաստատումը՝ Դպրեվանքի (բացում՝ 1930, պաշտօնական նանաշում՝ 1 Մարտ 1931) եւ յարակից կառոյցներու ստեղծումով⁴:

ը) Կաթողիկոսութեան վերակազմակերպումը՝ Աթոռակիցի ընտրութիւն եւ թեմերու կազմակերպումով⁵:

թ) Նոր յարաբերութեանց մշակում՝ Ֆրանսական հոգատարութեան, տեղացի՝ Բրիտանացի եւ իսլամ պաշտօնական ու ժողովրդային շրջանակներու հետ, Հայրապետին եւ Կաթողիկոսարանին նանաշումը որպէս գաղութահայ համայնֆային կեդրոն⁶:

¹ Տէս անդ, էջ 103-129:

² Տէս անդ, էջ 131-169, 207-216:

³ Տէս անդ, էջ 211-214: **Hovhannisyan E.**, “*The Restoration of the Catholicosate of the Great House of Cilicia After Exile*”, *Quaestio Rossica*, vol. 10, 2022, No 4, p. 1274-1287.

⁴ Տէս **Եղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 337-338, 343-373, 398-404:

⁵ Տէս անդ, էջ 312-321, 279-309: Ձեռքի տակ ունինք Շահէ Արք. Գասպարեանի արխիւն, 1931ին պատրաստուած, 65 մեքենագիր էջերէ, հարցում պատասխաններով Կիլիկիոյ թեմերու վերաբերող անտիպ Տեղեկագիր մը:

⁶ Տէս **Եղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 216-225 եւ հոն հրապարակուած պաշտօնական վաւերաթուղթերը: Տէս *Les Arméniens*, pp. 93, 97-111.

ժ) Հայկական եկեղեցական թե՛ ֆաղափական յարաբերությանց վերադասատրում՝ Նուիրապետական Աթոռներու¹:

Ժա) Վախճանումը հիմնադիր երեքին՝ Շահէ Արք. Գասպարեանի (26 Նոյեմբեր 1935), Բարգէն Աթոռակից Կաթողիկոսի (Հիմնգլաբթի 9 Յուլիս 1936) եւ Սահակ Բ. Վեհափառ Հայրապետին (8 Նոյեմբեր 1939), որոնց պիտի միացնենք Պետրոս Ա. Սարանեան Կաթողիկոս (30 Մայիս՝ ընտրութիւն, 2 Յունիս՝ օծում եւ 28 Սեպտեմբեր 1940): Յիշենք Ժամանակակից երկու մեծ դէմքերու վախճանիլը՝ Խորէն Ա. Մուրադբէկեան Կաթողիկոս յէջմիածին (6 Ապրիլ 1938) եւ Թորգոմ Արք. Գուշակեան Պատրիարք յերուսաղէմ (10 Փետրուար 1939)²:

Արխիւներու արժէքը լաւապէս հասկցած ըլլալով եւ անոնց պատմական թէ՛ իրաական կարեւորութեան գիտակցութեամբ Սահակ Բ. Խապայեան Հայրապետը ափսոսական կամ գաղթական, իր շունեցած ոսկիներուն փոխարէն տեղէ տեղ փոխադրած է իր կաթողիկոսութեան դիւանի նշանատր ինը տետրակները «ընդ հուր, ընդ սուր եւ ընդ ջուր»³:

Այս բոլորին առնչուած արխիւային բազմատեսակ նիւթեր ներառուած են Կիլիկիեանի, բայց յատկապէս ու մանաւանդ Եղիայեանի ստուարածաւալ ուսումնասիրութեանց մէջ⁴, գրեթէ

¹ Տէս Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 283-309, 413-419:

² Տէս անդ., էջ 452-458, 478-488, 523-528:

³ Սահակ Կաթողիկոսի մասականիին մասին Եղիայեան կը գրէ. «վշտաբեկ Կաթողիկոսէն մնացած են ի՛ր իսկ ձեռագրովը գրուած թղթակցութեանց պատնէնները, լման 9 հատորներու մէջ ամփոփուած, իւրաքանչիւրը 500-ական էջ (թիւ 2-ը՝ 1.000 էջ), ընդամենը 5.000 ձեռագիր էջերու վկայագրութիւն մը թանկագին» (անդ., էջ 37-38): Տէս Շահինեան Գ., Սահակ Բ. եւ Բարգէն Ա. Կթողիկոսներու Թղթակցութիւնը, ՀԱՍԿ, Կէ. Տարի 1998, էջ 144-145:

⁴ Տէս Եղիայեան Բ., նշվ. աշխ., արխիւային նիւթերու ցանկը՝ «Մատենացանկ»-ը, էջ 929-934:

սպառիչ կերպով, սակայն ամէն ինչ ըստա՞ծ եւ աւարտա՞ծ է ... անկասկած ո՛չ, բայց հիմնական կերպով պատմութեան պարբերականացման հանապարհը բացուած է, զորս կարելի է այլ դիտանկիւններէ բարեփոխել, վերատեսութեան ենթարկել եւ գուցէ նորերը առաջարկել¹:

Անկասկած հետաքրքրական պիտի ըլլայ համեմատութիւն կատարել 1914-1936/39 ժամանակամիջոցի պատմութեան, նախ՝ Կիլիկիեան եւ Եդիայեան, ապա՝ արխիւային նոր նիւթեր «Վաւերագրեր»-ում, Անթիլիասի Արխիմներուն միջեւ, յետոյ՝ անտիպ հայկական թէ օտար վաւերագրեր ու ի վերջոյ զանոնք դիտել կամ վերամտածել համաշխարհային պատմութեան նորագոյն վերլուծումներու շրջագիծին մէջ:

Մենք ա՛յս հանաշումով, գիտակցութեամբ ու հպանցիկ ներկայացումին յաջորդող ժամանակաշրջանին յայտնաբերուած արխիւային նիւթերով կրնանք լուսաբանել բազմաթիւ կէտեր, հայկական եւ օտար արխիւներէ լոյս ընծայող նիւթերով կրնանք վերամշակել այլազան երեսները Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմութեան, որոնց մասին հետեւեալ նշումներ/յիշեցումները անհրաժեշտ կը նկատեմ.

Բիւզանդ Եդիայեանի պատմական գիրքը լոյս ընծայուեցաւ 1975ին եւ կ'ընդգրկէ 1914էն 1972 թուականները²: Այս գիրքէն ետք Հայաստանի Հանրապետութեան մէջ (սովետական, բայց մանաւանդ վերանկախացումէն սկսեալ) լոյս ընծայուեցան եւ կը շարունակուին, արխիւային բաւական հետաքրքրական նորութիւններ, որոնց համեմատական ուսումնասիրութիւնները նոր կը սկսին կամ պէտք է սկսիլ: Այստեղ կարեւո-

¹ Տե՛ս **Aram I**, *The Armenian Church*, pp. 22-24.

² Տե՛ս ներկայ յօդուածի ծանօթ. 1:

րութեամբ կը յիշենք Սամուրո Բէհբուղեանի անունը եւ իր Վաւերագրեր Հայ Եկեղեցւոյ Պատմութեան ցարդ հրատարակուած 15 կամ 16 հատորները¹: Ազգային Արխիւի գիտաշխատող Գոհար Ասագեանը եւ Գարեգին Ա. Յովսէփեանի նամակներուն հրատարակութիւնը²: Մաշտոցեան Մատենադարանը իր Արխիւներուն դասաւորման եւ հայ եկեղեցւոյ առնչուած նիւթերու ցանկագրումը կը կատարէ, որոնք անկասկած պիտի հրապարակուին եւ նոր լոյս պիտի սփռեն հայ եկեղեցւոյ պատմութեան վրայ³:

Ինչ կը վերաբերի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան արխիւներուն, հետեւեալ տեղեկութիւնները կրնանք արձանագրել: Կաթողիկոսարանը, որպէս ապրող՝ գործող, ծառայող եւ ընդարձակուող հաստատութիւն, Անթիլիաս հաստատման օրերէն իր Դիւանատունը ունեցեր է եւ արխիւները (լայն առումով) հոն յատուկ կերպով դասաւորուած են: Փաստօրէն գոյութիւն ունին «հին» եւ «նոր» շրջաններու արխիւային նիւթեր: 1984-85ին առաջին փորձ մը կատարուեցաւ վերահասաւորել զանոնք: Փաստօրէն Արամ Ա. Վեհափառի օրերուն արխիւները ունեցան իրենց մնայուն վայրը, արդիական դասաւորման ենթարկուեցան (տեղական ուժերով եւ ՀՀ Ազգա-

¹ Տե՛ս Վաւերագրեր Հայ Եկեղեցւոյ Պատմութեան (1921-1938 թթ., գիրք Ա., Կազմ. Ս. Բէհբուղեան, Երեւան, 1994: Տե՛ս ամբողջական ցանկը գիրք ԺԳ., էջ 711:

² Տե՛ս Գ. Ասագեան, Գարեգին Ա. Յովսէփեան Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, փաստաթուղթերու եւ նիւթերու ժողովածու, Ա. հտ. Էջմիածին, 2017, Բ. հտ. Անթիլիաս, 2017:

³ Այս իմաստով արդէն նոր լոյս ընծուեցաւ Ատանայ թեմի արխիւներուն վերաբերող հատոր մը՝ Անթիլիասի մէջ: Տե՛ս Մաշտոցեան Մատենադարանի կայքէջի արխիւներու բաժինը՝ <https://matenadaran.am/>:

յին Արխիւի աշխատակիցներու մասնակցութեամբ)¹: Վանական կանոնագրութեան համաձայն Արխիւատունը «Տեսչութիւն» մըն է եւ ունի իր պատասխանատու տեսուչը: Այսօրուան տեսուչը Հոգշ. Տ. Վիգէն Վրդ. Տալզլընեանն է: Արխիւները թուայնացման, թէւ դանդաղ, ընթացքի մէջ են: Վեհափառ Հայրապետի թելադրութեամբ երիտասարդ միաբաններ 1914էն սկսեալ հայ եկեղեցական առաջնորդներու, ազգային գործիչներու եւ կազմակերպութեանց վերաբերող վաւերաթուղթեր (նամակ/տեղեկագիր) կը մոտագրեն եւ կ'ուսումնասիրեն, որպէս «Վարդապետական Ասարտանառ»: «Հասկ» պաշտօնաթերթը անդրադարձներ ունի Արխիւատան գործունէութեան առնչութեամբ²: Յայտօր ուղղակի Արխիւէն նամակներու հինգ ժողովածուներ լոյս ընծայուեցան՝ Սահակ Բ. Խապայեանի, Բաբգէն Ա. Կիւլեսէրեանի, Պետրոս Ա. Սարանեանի, Գարեգին Ա. Յովսէփեանի եւ Խորէն Ա. Մուրադբեկեանի դիւան/նամականիէն³: «Հասկ»ին մէջ երբեմն կը հրատարակուին տարբեր բնոյթի արխիւային յուշագրական անտիպ նիւթեր եւ վաւերաթուղթեր: Արխիւատան մէջ, գիտածողովի առաջադրած ժամանակահատուածին առնչուած գլխաւոր դէմքերու նամակ/արխիւային նիւթերէն, բացի վերոյիշեալներէն, Մաղափա Արքեպս. Օրմանեան, Շահէ Արք. Գասպարեան, Փարէն Արք. Մելքոնեան, Խաղ Արք. Աջապահեան եւ Եղիշէ Արք. Կարո-

¹ Տե՛ս «Անթիլիասի Արխիւատունը Վերադասաւորման Ընթացքի մէջ», «ՀԱՍԿ», Հն. տարի, 2006, էջ 481-482:

² «ՀԱՍԿ»-ի էջերուն եւ տարբեր աղբիւրներով (1940 թուականէն մինչեւ օրս) բազմաթիւ տեղեկութիւններ կը գտնմք արխիւներու մասին՝ յօդուած կամ տեղեկանք:

³ Տե՛ս Կաթողիկոսարանի հրատարակութեանց ցանկը՝

<https://ciliciabookstore.com/>:

յեան, ազգային ժողովականներ կամ աշխարհական գործիչներ մեծաթիւ վաւերաթուղթեր¹:

Սակայն, Հայ Եկեղեցւոյ եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նոր ժամանակներու պատմութեան աղետուած հսկայական արխիւներ ցարդ անհասանելի կը մնան (այլատեսակ պատճառներով) տարբեր կեդրոններու դարակներուն մէջ, ինչպէս՝ Կ. Պոլսոյ եւ Երուսաղէմի Պատրիարքութեանց, Միջին Արեւելքի երբեմնի հայահոծ կեդրոններուն (Հալէպ, Դամասկոս, Պէյրութ, Գահիրէ, Նիկոսիա, Աթէնք մինչեւ Փարիզ եւ անդին), թեմերուն, կազմակերպութեանց մօտ, տեղական հայկական եւ օտար մամուլի էջերուն, պետական եւ կառավարական հաստատութեանց մէջ, զորս պեղող ու պրպտող անձերու եւ աշխերու կը սպասեն:

Եզրակացութեան համար: Այս զեկոյց-յօդուածով կը փորձեմ աւելի հետաքրքրութիւն փան սովորական առումով եզրակացութիւն հասնիլ: Առաջարկային ձեւով հետեւեալ կէտերը կը փափաքիմ ընթերցողներու ուշադրութեան յանձնել.

1.Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմութիւնը հայութեան եւ հայ Եկեղեցւոյ մէկ եւ անբաժան պատմութիւնն է: Հայոց հայրապետութիւնը կաթողիկոսական երկու Աթոռներու կը վերածուի, երբ 1441 թուականին Էջմիածնի մէջ նոր կաթողիկոսի ընտրութիւն կը կատարուի եւ Սիս ու Էջմիածին գուգահեռաբար իրենց փրստոսահաստատ եւ առաքելահիմն առաքելութիւնը կը կատարեն: Հայոց Ցեղասպանութեան հետեւանմով եւ Կիլիկիոյ պարպումով Կիլիկիոյ Ս. Աթոռը ափսոսական կու գայ նոր հայք հաստատելու Միջերկրականի արեւե-

¹ Տե՛ս **Շահինեան Գ.**, «Օրագիրներ Կաթողիկոսարանի Արխիւներուն մէջ», «Հասկ», ԿԸ. Տարի 1999, էջ 733-737:

լեան կողմը՝ Անթիլիասի (Լիբանանի) մէջ: Նուիրապետական կաթողիկոսական զոյգ աթոռները կը շարունակեն հայ ժողովուրդին մատուցել իրենց ծառայութիւնները:

2. Հաւաքական պատմութիւն մշակելու համար պէտք է գիտնական լրջութեամբ մօտեցում ունենալ: Վերլուծման հիմքը կամ մեթոտը ընդունիլ՝ անկախ անհատական, գաղափարական ու քաղաքական հայեացքներէ, կամ կանխակալ ու նախաորամադրեալ կարծիքներէ՝ պատմութեան «ըստ կամս» մեկնութեան մոլութիւններէ:

3. Արխիւագիտական մեր ներկայ վիճակին նայելով, անհրաժեշտ է որ աղբիւրներու քննական-համեմատական հրատարակութեանց համակարգուած աշխատանոց մը հաստատուի (հաստատութեանական առումով), եւ միջազանցային/համազանցային դրութեան ստեղծումով այժմէականացուի հայ եկեղեցւոյ պատմութեան ուսումնասիրումն ու դասաւանդումը:

4. Այս գիտաժողովը ցոյց տուաւ, որ անհրաժեշտ է, պատմագիտական դիտանկիւն, յստակացումներ կատարել գործածուող կամ օգտագործուող որոշ եւ մասնագիտական բառերու, եզրերու եւ դարձուածներու, որոնք տարակարծութեանց դուռ կը բանան:

5. Գիտաժողովի կայացումը եթէ նկատենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմութեան որոշ ժամանակահատուածի վերլնթեցման փորձ, ուրեմն մենք կատարեցինք նախերգանքը Հայ եկեղեցւոյ եւ նուիրապետական Աթոռներու պատմութեան վերաքննութեան եւ նորովի ներկայացման:

Համապարհը բաց է եւ երկա՛ր՝ հասնելու պատմական իրականութեան:

ВВЕДЕНИЕ ИСТОРИИ КАТОЛИКОСАТА ВЕЛИКОГО ДОМА КИЛИКИЙСКОГО (1914-1939)

Архиепископ Шаан Саркисян

РЕЗЮМЕ

Автор статьи рассматривает ряд теоретических вопросов истории католикосата Киликийского и делает ряд обобщений, касающихся истории католикосата периода 1914-1939 гг. Автор анализирует опубликованные историографические исследования, связанные с историей католикосата Киликийского. Обсуждаются также архивы Католикосата Киликийского и их роль в исследовании истории католикоса. В статье также обозначен ряд вопросов и проблем для дальнейших исследователей истории Киликийского католикосата.

AN INTRODUCTION OF THE HISTORY OF CATHOLICOSATE OF CILICIA (1914-1939)

Archbishop Shahan Sarkissian

SUMMARY

The author of the article discuss a number of theoretical issues of the history of the Catholicosate of Cilicia, and makes a number of generalizations concerning to the history of Catholicosate in the period from 1914-1939. The author analysis published historiographical researches connected with history of Catholicosate of Cilicia. The archives of the Catholicosate of Cilicia and their role in researching the history of the Catholicos are also discussed. The article also outlines a number of issues and problems for further researchers of the history of the Catholicosate of Cilicia.

Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Կիլիկիա» Մատենադարանի տնօրէն: Գիտական հետաքրքրութիւնները՝ Հայոց եկեղեցու և Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ժամանակակից պատմութեան հարցեր. ✉ arekagan1@gmail.com

Архиепископ Шаан Саркисян, Директор библиотеки «Киликия» Католикосата Великого Дома Киликийского. Сфера научных интересов: Вопросы истории Армянской Церкви и новейшей истории Католикосата Великого Дома Киликийского. ✉ arekagan1@gmail.com

Archbishop Shahan Sarkissian, The director of the “Cilicia” Library of the Great House of Catholicosate of Cilicia. Scope of Academic interests: Issues of the history of the Armenian Church and the contemporary history of the Catholicosate of the Great House of Cilicia. ✉ arekagan1@gmail.com

Քննարկ Արահամեան

ԳՐԱԿԱՆ-ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԺՇԳՐՏՈՒՄՆԵՐ «ՀԱՍԿ»-Ի ՄԻՋՈՑՈՎ

Հիմնաբառեր՝ «Հասկ» ամսաթերթ եւ տարեգիրք, մատենագիտական նշգրտումներ, գրապատմական հարցադրումներ, ձեռագիր, համելուկ, նամականի, ծածկանուն:

Ключевые слова: ежемесячная газета и Ежегодник «АСК», библиографические уточнения, литературно-исторические вопросы, рукопись, загадка, письмо, псевдоним.

Key words: “Hask” monthly and annual, bibliographical adjustments, literary-historical questions, manuscript, mystery, correspondence.

Ամէն մի մատենագիտական յաւելում, բնականօրէն, գալիս է լրացնելու արդէն եղածը, որ շատ յաճախ երկար ու ձիգ տարիների պրպտումների արդիւնք է: Այս առումով խիստ բնութագրական է Յակոբ Օշականի մէկ հաստատումը, թէ «տարիներ կը հաւաքենք, կը շինենք, կը հաւատանք վերջնական արդիւնքներու՝ մեր աշխատանքին ու ահա նոր աւերակէ մը բուսնող թիւ մը, անուն մը, գիր մը կու գան մեզի ըսելու իրենց սառն դատաւճիռը մեր չարաչար սխալանքէն, կորանքէն: Ի՞նչ անհուն գերեզմաննոցներ են ձեռագիրներու մատենադարանները, որոնց պեղումը մեր մէջ հազիւ թէ սկսած է»¹:

¹ Յ. Օշական, Արեւելահայ բանասիրութիւնը եւ էջմիածին. Գարեգին Կաթողիկոս Յովսէփեան, Անթիլիաս, 1948, էջ 56:

Ուղիղ 90 տարի առաջ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Հասկ» պաշտօնաթերթը առաջին իսկ թիւով խոստանում էր, որ «կրօնական, գիտական եւ այլն, նիւթեր ալ պիտի բովանդակէ... իր տրամադրելի մասերուն մէջ»¹։ Նկատենք, որ ի սկզբանէ հիմնականում կրօնական բնոյթի բանաստեղծութիւնների կողքին (Գամբեր Պասմաճեան, Նշան Խօշաֆեան, Արսէն Երկաթ, Նորայր Պօղարեան, Լեւոն Վարդան, Դերենիկ Փօլատեան, Կորիւն Վարդապետ Գոճապապեան) յետագայում տեսնում ենք նաեւ զուտ քերթողական մուտք (Լեւոն Էսաճանեան, Վահէ-Վահեան, Վահան Թէքէեան, Գէորգ Գանտահարեան, Մուշեղ Իշխան, Զարեհ Մելքոնեան, Յ. Գեղարդ, Աբրահամ Ալիքեան, Շահանդուխտ), այդ թւում եւ արեւելահայ բանաստեղծներ՝ Յովհաննէս Թումանեան, Աւետիք Իսահակեան, Սիրուա Կապուտիկեան, Յովհաննէս Շիրազ² եւ ուրիշներ, իսկ արդէն 1936-ի համարներից երեւան են գալիս հայ գրականութեան տարբեր շրջաններին վերաբերող գրականագիտական եւ բանասիրական բնոյթի յօդուածներ։

«Հասկ» ամսաթերթի ու տարեգրքի բաւական ստուար նիւթից այս աշխատանքում առանձնացուած են միայն գրապատմական եւ մատենագիտական տեսանկիւնից նոր իրողութիւններ պարզող թղթակցութիւնները՝ միաժամանակ բաւարարուելով արձանագրողի դերով, ձգտելով զերծ մնալով գնահատութիւններից։

Իւրաքանչիւր դէպքի համար հիմնականում նկատի են առնուած առաւել բնորոշ մէկ-երկու օրինակ՝ շարադրանքում նիւթերը դասաւորելով քննարկուող հեղինակների եւ

¹ «Հասկ» ամսաթերթ, պաշտօնական հրատարակութիւն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Անթիպիա, 1932, Ա տարի, Յունուար, թիւ 1, էջ 1։

² Թուարկման մէջ զանց են առնում բանաստեղծների որակական տարբերակումներ։

գրապատմական երեւոյթների ժամանակագրական կարգով: Միաժամանակ պիտի նշել, որ բանասիրական քննութիւնը իւրաքանչիւր նոր տուեալի կամ յաւելումի պարագայում կարող է ուսումնասիրութեան առանձին դաշտ բացել, ուստի սահմանափակուել ենք ուղղակի նիւթերի շրջանառութեամբ:

Այսպէս, Ն. Վ. Ծովական ստորագրութեամբ Նորայր Վարդապետ Պօղարեանը հրատարակել է «Ն. Շնորհալիի հանելուկներէն» վերտառութեամբ 13 կտոր¹, ըստ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի ձեռագրատան թիւ 1447 գրչագրի, որոնցից եւ ոչ մէկը չի տպագրուել «Բանք չափաւ» հատորում (Վենետիկ, 1830): Բանասիրական պրպտումները, սակայն, նորագոյն շրջանում պարզում են հետեւեալ պատկերը: Ասատուր Մնացականեանի կազմած «Հայ միջնադարեան հանելուկներ (Ե-ԺԸ դդ.)» ժողովածուում տեղ են գտել հետեւեալ ինը կտորները՝ «Նաւ», «Դիրք», «Զուկն», «Ենովս», «Մովսէս», «Լուսաւորիչն» («Գրիգոր Լուսաւորիչ»), «Ղազար», «Սաղմոսարան» («Սաղմոս»), «Կանթեղ»: Իսկ ահա մնացեալ չորսից երկուսը՝ «Մկրատ» եւ «Օձ», պատկանում են Յովհաննէս Ծործորեցուն, մէկը՝ «Ծովն»՝ Գէորգ Երզնկացուն, վերջինը՝ «Պօղոս»ը՝ Աբրահամ Դոնարարին:

1943-ի համարներից մէկում նորից Նորայր Պօղարեանի աշխատակցութեամբ լոյս է տեսել «Անտիպ տաղ մը Խեւ Յովհաննէս Թլկուրանցիէն» թղթակցութիւնը՝ հանուած Սրբոց Յակոբեանց Մատենադարանի թիւ 1647 գրչագրից²: 1958-ին այս տաղը հեղինակը ներառել է իր պատրաստած «Տաղագիրք»ի մէջ, «Խրատ պիտանի» խորագրով:

¹ «Հասկ», 1944, ԺԳ տարի, Մայիս-Յունիս, թիւ 5-6-7, էջ 89:

² Նոյնը, 1943, ԺԲ տարի, Մայիս-Յունիս, թիւ 5-6, էջ 230-231:

Նկատենք, որ այն չի ներառուել էմմ. Պիւազեանի աշխատասիրութեամբ աւելի ուշ՝ 1960-ին Երեւանում հրատարակուած «Տաղեր» հատորում:

«Հասկ»ը ըստ էութեան նաեւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մատենադարանի ձեռագրերի ուսումնասիրութեան արդիւնքներն է ամփոփում, որոնցից մէկ օրինակը թիւ 5, 6 եւ 7 ձեռագրերի հիման վրայ ներկայացնում է Վարդան Վարդ. Տէմիրճեանի աշխատասիրութեամբ 1959-1962 թթ. լոյս տեսած «Մարտիրոս Արքեպիսկոպոս Ուռոմանեցի. տաղասաց, բարոյախօս եւ նուիրակ Ս. Էջմիածնի (ԺԸ դար)» յօդուածաշարը, որին իբրեւ արդիւնք շուրջ մէկ տասնամեակ անց լոյս է տեսել «Տաղասաց Մարտիրոս Արքեպիսկոպոս Ուռոմանեցի. կեանքն ու գործունէութիւնը» հատորը:

Մատենագիտական ուշագրաւ դրուագներից մէկն էլ, արդէն նոր շրջանի համար, վերաբերում է Յովհաննէս Թումանեանի «Հայր Գարեգին, մենք երեքով» բանաստեղծութեան ստեղծագործական ու հրատարակութեան պատմութեանը, ինչի կարեւորութիւնն ընդգծում է ինքը՝ Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանցը՝ «Յովհաննէս Թումանեանի անտիպ մի քերթուածը»ին յաջորդող բաւական ծաւալուն գրութեան մէջ, թէ «Հրատարակելով Յովհաննէս Թումանեանի երգիծական այս գեղեցիկ քերթուածը... անհրաժեշտ ենք համարում բացատրել եւ նորա ծագման հանգամանքները, որ կարեւոր է բանաստեղծի տաղանդի գնահատութեան տեսակէտով»¹: Իսկ այդ հանգամանքը Հայր Ղեւոնդ Ալիշանի յիշատակին պատշաճ կերպով արձագանգելու անհրաժեշտութիւնն էր մի ժամանակ, երբ ինքը

¹ Նոյնը, 1945, ԺԵ տարի, Նոյեմբեր-Դեկտեմբեր, թիւ 11-12, էջ 217:

Աւելին՝ ամսագիրը դեռ նախորդ թոսով ծանուցում էր այս բանաստեղծութեան հրատարակութեան մասին (Նոյնը, 1945, Օգոստոս-Հոկտեմբեր, թիւ 8-9-10, էջ 167):

Թիֆլիսում առաջնորդական փոխանորդի պաշտօն էր կատարում: Քերթուածի տպագրութեան այս բաւական տպաւորիչ ճանապարհը, սակայն, զանց է առնուած Թումանեանի 1950-ին լոյս տեսած «Երկերի ժողովածու»ի առաջին հատորում, որտեղ խորագրուած է «<Էքսպրոմտ>», եւ որի ծանօթագրութիւններում նշուած է, թէ «տպագրուած է առաջին անգամ, ձեռագրից»¹: Բանաստեղծութեան գրութեան օր նշուած է Նոյեմբերի 19-ը, ինչը ճշդուած է նաեւ ինքնագրի միջոցով²: Նոյնը մօտաւորապէս համանման բովանդակութեամբ, միայն ԳԱԹ ձեռագրի ֆօնդի յիշատակութեամբ, տեղ է գտել նաեւ ակագեմիական առաջին հատորում եւ անցել 2018-ի վերախմբագրուած հրատարակութիւն: Նշենք նաեւ, որ փոքր-ինչ տարբեր են Գարեգին Կաթողիկոսի վկայութիւնը եւ գրքերի ծանօթագրութիւններում բերուածը: Առաջին դէպքում ըստ էութեան կաթողիկ եւ առաքելական համայնքների միասնական մօտեցումների անհրաժեշտութիւնն է շեշտուած, մինչդեռ երկրորդ պարագային որոշակի բաժանարար գիծ է նկատուած: Գարեգին Կաթողիկոսը յիշում է, որ հոգեհանգստեան արարողութեան համար իր մօտ եկած երեք պատգամաւորներից մէկը Թումանեանն էր, միւսը՝ Շիրվանզադէն, երրորդին դժուարանում է մտաբերել, իսկ գրքում ճշդուած է, որ խօսքը իրաւաբան Գէորգ Մելիք-Ղարազէօզեանի մասին է:

Այս բանաստեղծութեան, նոյն «Հասկ»ի էջերում «Լուսաւորչի կանթեղը» բալլադի տպագրութեան եւ Յովհաննէս Թումանեանի թանգարանի բացման առթիւ Նուարդ Թումանեանի աշխատակցութեան մասին վկայութիւնները

¹ Յովհ. Թումանեան, Երկերի ժողովածու, հատոր Առաջին. բանաստեղծութիւններ, լեզենդներ, բալլադներ, առակներ. 1881-1922, Երևան, 1950, էջ 730:

² ԳԱԹ, Թումանեանի ֆօնդ, թիւ 81:

Մինչդեռ Գարեգին Կաթողիկոսը վկայում է նոյեմբերի 23-ը:

բացակայում են նաեւ «Յովհաննէս Թումանեան. մատենագիտութիւն» (1960, էդուարդ Զրբաշեանի խմբագրութեամբ) եւ «Յովհաննէս Թումանեանի կեանքի եւ ստեղծագործութեան տարեգրութիւն. 1869-1908» (2010, Վլադիմիր Կիրակոսեանի խմբագրութեամբ) հատորներում: «Հայր Գարեգին...»-ի մասին մատենագիտական մեզ յայտնի միակ վկայութիւնը կարդում ենք «Հասկ»ի շուրջ բաւական սուղ տեղեկատուութիւն պարունակող «Հայ պարբերական մամուլի բիբլիօգրաֆիա. 1900-1956» աշխատութեան մէջ¹:

Յաջորդը վերաբերում է Արշակ Զօպանեանի՝ Գարեգին Ա. Յովսէփեան Կաթողիկոսին յղուած նամակից հատուածին², ուր յայտնում է Ֆրանսիացի պատմաբան Ռենէ Գրուսէի Հայաստանի մասին աշխատութեան, իր թելադրանքների եւ յետագայ անելիքների, այդ թւում եւ՝ «Վարդենիք»ի շարադրելիք երեք հատորների մասին: Այս յօդուածի յանձնառութիւնից դուրս է նամակում արծարծուած խնդիրների մանրամասն բանասիրական քննարկումը: Միայն արձանագրենք, որ նամակը գրուած պիտի լինի հաւանաբար 1947-ին, որովհետեւ ակնարկուողը արեւելագէտի՝ այդ թուականին լոյս տեսած «Հայաստանի պատմութիւնը սկզբից մինչեւ 1071 թ.» գիրքն է: Աւելորդ չենք համարում նշել, որ «Հասկ»ի էջերում Ֆրանսիացի հայագէտին, նրա հետ ունեցած բարեկամութեանը, վերոնշեալ աշխատութեան գնահատութեանը Արշակ Զօպանեանը դիմում է հեղինակի մահուան առթիւ գրուած «Ռընէ Կռուսէ»

¹ Աւելորդ չէ նկատել, որ այս գրքի մասին «Հասկ»ի 1965, 1966 եւ 1973 թուականների համարներում բաւական ծաւալուն «գիտական-ֆննական գրախօսութիւն» է ներկայացրել մատենագէտ Արտաշէս Տէր-Խաչատուրեանը: Աշխատութիւնը յետագայում տեղ է գտել հեղինակի «Հայ մամուլի մատենագիտական գործեր» հատորում (Պէրոպ, 2014):

² «Հասկ», 1948, ԺԷ տարի, Ապրիլ, թի 4, էջ 109:

յօդուածով¹: «Հասկ»ի էջերում տեղ են գտել նաեւ Միհրան Տամատեանին ուղղուած 7 Փետրուար, 1921² եւ Գարեգին Ա. Կաթողիկոսի մահուան առթիւ ցաւակցական 22 Յունիս, 1952 թուակիր³ նամակները, որոնցից ոչ մէկը չի մտել Արշակ Զօպանեանի՝ 1980-ին հրատարակուած «Նամակա-նի»ի մէջ, թէպէտ կազմողը նշում է, որ «Զօպանեանի գրած հազարաւոր նամակներից մի մասի»⁴ ընդգրկումով է կազմուած այն:

Զօպանեանի նամականիի մասին մէկ այլ տեղեկոյթի հանդիպում ենք շատ աւելի ուշ՝ 1997-ին: Ստացւում է, որ Գարեգին Ա. Կաթողիկոսի արխիւում պահւում են Արշակ Զօպանեանին ուղղեալ 28 նամակներ եւ նաեւ վերջինից յղուած «Նամակաշար»⁵: Նշենք, որ փնտռութեան արդիւնքում ԳԱԹ Զօպանեանի ֆօնդում գտնուեցին Գարեգին Յովսէփեանից բաւական պատկառելի թուով՝ հինգ տասնեակից աւելի եւ Զօպանեանից նրան ուղղուած վեց նամակներ:

Մատենագիտական հետաքրքիր դրուագներ կան Յակոբ Օշականի ստեղծագործական հանգրուանների հետ կապուած: Նախ, 1946-ի վերջին համարում կարդում ենք նրա սրտառուչ նամակ-հեռագիրը Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանի եռեակ՝ ծննդեան, քահանայական եւ գրական-գիտական գործունէութեան յօբելեանների առթիւ⁶, որը տեղ չի գտել «Յակոբ Օշականի մատենագիտութիւն»ում, իսկ դրանից վաղ՝ նաեւ Յակոբ Օշական «Նամա-

¹ Տէս նոյնը, 1952, ԻԱ տարի, Հոկտեմբեր-Դեկտեմբեր, թիւ 10-12, էջ 539-542:

² Տէս նոյնը, 1949, ԺԸ տարի, Հոկտեմբեր, թիւ 10, էջ 296:

³ Տէս նոյնը, 1952, Յուլիս-Օգոստոս-Սեպտեմբեր, թիւ 7-9, էջ 372:

⁴ Ա. Զօպանեան, Նամականի, Երևան, 1980, էջ 10:

⁵ «Հասկ», 1997, ԿԶ, տարի, Յուլիս-Օգոստոս-Սեպտեմբեր, թիւ 7-8-9, էջ 590-591:

⁶ Տէս նոյնը, 1946, ԺԵ տարի, Դեկտեմբեր, թիւ 12, էջ 372:

կանի» (Ա. հատոր) գրքում (Պէյրութ, 1983): 1948-ի 3-րդ համարում, Օշականի մահուան օրերին, լոյս է տեսնում նրա «Եկար» գրութիւնը, որի իբրեւ սկզբնաղբիւր ամսաթերթը ճշմարտացիօրէն վկայաբերում է «Զուարթնոց»ը: Այս հանգամանքը, սակայն, կազմողների ուշադրութիւնից վրիպել է ե՛ւ «Յակոբ Օշականի մատենագիտութիւն»ում, ե՛ւ «Ամբողջական գործեր»ի առաջին հատորի (2020) ծանօթագրութիւններում:

1980-ի «Հասկ» տարեգրքում «Յակոբ Օշականի արխիւ» վերտառութեամբ լոյս է տեսնում Արտաշէս Տէր Խաչատուրեանի մօտ պահուող ութ նամակ, որոնցից վեցը՝ ուղղուած Օշականին, երկուսը՝ գրուած Օշականի կողմից: Այսպէս, Արամ Հայկազի 1925 Յունուար 16, Նիւ Եորք թուակիր նամակը դուրս է մնացել Մարգարիտ Խաչատուրեանի կազմած «Նամակներ» (Երևան, 2009), Վահան Թէքէեանի 1927, 5 Ապրիլ, Գահիրէ թուակիր նամակը՝ 1983-ին Աւետիս Գ. Սանճեանի կազմած «Վահան Թէքէեանի նամակա-նի» հատորներից: Վերջինը տեղ է գտել Վաչէ Ղազարեանի կազմած «Յակոբ Օշական – Վահան Թէքէեան» գրքում (- Պէյրութ, 1985): Մեզ թուում է՝ Յ. Օշականի 24 Դեկտեմբեր, 1924, Գահիրէ թուակիր նամակի¹ պատասխանն է «Հասկ»ում լոյս տեսած Գեղամ Յեներճեանի 28 Յունուար, 1925, Փարիզ թուակիր նամակը: Էօթէնի Աւետեանին ուղղուած 1934 Յունուար 1 եւ 1935 Յուլիս 28, Երուսաղէմ թուակիր երկու նամակները լոյս են տեսել Պ. Մնապեանի խմբագրած Օշականի «Նամականի»ում:

1984-1985-ի «Հասկ»ի համարներում լոյս է տեսնում «Հրաշքը (մեր օրերու խօսակցութիւն)» թատերախաղը՝ նկատի առնելով այն հանգամանքը, որ 1983-ի Դեկտեմբերին

¹ Տե՛ս **Յ. Օշական**, Նամականի, Ա. հատոր, Պէյրութ, 1983, էջ 47-50:

լրացել էր հեղինակի 100 ամեակը: 1938-1939 թթ. Կահիրէի «Յուսաբեր»-ում տպագրուած այս գործը խմբագրական ծանօթութիւնը նշում է, որ «ընթերցողներուն կը ներկայացնենք անոր համար, որ Օշական իր այս փոքրածաւալ երկին մէջ իրենց արժանի պատուանդանին կը դնէ մեր հիմնական արժէքները»¹: Նոյն ծանօթութեան մէջ, սակայն, բաց է թողնուած այս տրամախօսութիւնից 1935-ի «Սիրոն»ի 8-րդ համարում լոյս տեսած հատուածի մասին տեղեկոյթը:

«Հասկ»ի 1986-1987 թթ. համարներում լոյս են տեսել նաեւ հեղինակի ա) «Փաւստոս Բուզանդ» գրութիւնը, բ) «Պատանութիւն մը» եւ «Մանկութիւն մը» շարունակական էսսէն՝ նուիրուած Սահակ Պարթեւին, գ) «Եղիշէ», դ) «Մովսէս Կաղանկատուացի», ե) «Յովհաննէս Պատմաբան», զ) «Ներսէս Շնորհալի», է) «Ներսէս Լամբրոնացի» գրութիւնները, որոնք, սակայն, նախապէս, դեռեւս 1920-1940-ական թթ. լոյս են տեսել տարբեր պարբերականներում, ինչպէս «Սիրոն», «Ամէնուն տարեցոյցը», «Ընդարձակ տարեցոյց», ինչի մասին չի նշում «Հասկ»ը: Յակոբ Օշականի մատենագիտութիւն»-ում, զանց առնելով «Հասկ»ը, տրւում են այս կտորներից շատերի ծանօթութիւնները, սակայն ճշգրտման կարիք ունեն մի քանի մանրամասներ: Այսպէս, «Մովսէս Կաղանկատուացի»ի առիթով կազմող Մարկ Նշանեանն արդարամտօրէն նշում է, որ «աղբիւրը մեզի անծանօթ է»²: Այս հատուածն իրականում շարքում առաջինն է եւ լոյս է տեսել 1927-ին, «Սիրոն»ի 9-րդ համարում: Իսկ «Պատանութիւն մը» էսսէն տեղ է գտել ոչ թէ 1935-1936 թթ. «Սիրոն»-ում³, այլ՝ Փարիզի «Կեանք եւ արուեստ» պարբերա-

¹ «Հասկ», 1984, ԾԳ տարի, Փետրուար, թիւ 2, էջ 61:

² **Յակոբ Օշականի մատենագիտութիւն**, կազմ. Մ. Նշանեան, Լոս Անճելէս, 1999, էջ 36:

³ Սահակ Պարթեւին նուիրուած «Մանկութիւն մը» եւ «Պատանութիւն մը» երկու հատուածները տրւում են նկատելի շփոթով (Տէս նոյն տեղում, էջ 35-36):

կանուժ¹: Շփոթը թերեւս գալիս է Պ. Մնապեանի «յուշումներից», երբ վերոնշեալ ութ կտորներն ամփոփող «Մեր մատենագիրները (վերլուծումներ)» գրքի (Անթիլիաս, 1987) ծանօթութիւններում մամուլի անունների թուարկման մէջ բաց է թողնում «Կեանք եւ արուեստ»ը, իսկ ահա «Անգղին կտուցին տակ (տեսական գրութիւններ)» գրքի մէջ «Երբ հիները կը կարդանք» խորագրով մտած նոյն «Պատանութիւն մը» գրութեան համար արդէն տրուում է «Կեանք եւ արուեստ»ի նշումը՝ սոսկ 1936 թուականի ընդգծումով:

Ի դէպ, Յ. Օշականից Բաբգէն Ա. Աթոռակից Կաթողիկոսին ուղղուած նամակների մասին կարդում ենք «Հասկ»ի 1997-ի համարներից մէկում՝ Գրիգոր Շահինեանի վկայութեամբ²: Աւելորդ չէ նշել, որ ըստ պարբերականի մէկ այլ տեղեկութեան՝ «Արեւմտահայ գրականութեան տիտան դէմքերէն Յակոբ Օշականի (Քիւֆէճեան) ձեռագիրները, որոնք տքնաջան աշխատանքներէ ետք անցնող քսան տարիներու ընթացքին իրարու ետեւէ լոյս տեսած էին Անթիլիասի տպարանէն, իրենց վերջնական հանգիստը գտան Անթիլիասի նորակառոյց ու նորագոյն յարմարութիւնները ունեցող արխիւատան մէջ: Յ. Օշականի ձեռագիրները իր որդւոյն Վահէ Օշականի կողմէ տրամադրո-

¹ Տե՛ս՝ «Կեանք եւ արուեստ» (ամսագիր), Փարիզ, 1936, 6-րդ տարի, Մայիս, թիւ 5, էջ 140-145 եւ Օգոստոս-Սեպտեմբեր, թիւ 7, էջ 193-197, «Եւր ճիները կը կարդանք» խորագրի տակ:

² «Հասկ», 1997, Մարտ, թիւ 3, էջ 282:

Ի դէպ, այդ առթիւ պրպտումների արդիւմնում Ե. Զարենցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարանում գտնուեց Բաբգէն Կիլեսերեանի՝ 1927-ին Օշականի ուղղուած նամակը՝ վերջինիս՝ «Սիոն»ին աշխատակցելու խնդրանքով (ԳԱԹ, Օշականի ֆոնդ, թիւ 1), որտեղ եւ Օշականը տպագրուել սկսում է հէնց այդ թուականից:

լած էին Անթիլիասի Կաթողիկոսարանին, տպագրութեան յանձնուելու համար, ու այնուհետեւ կը մնային Անթիլիասի հոգածութեան ներքոյ: Քանի մը ամիսներ առաջ, Անահիտ Օշական՝ Յակոբ Օշականի դուստրը, ձեռագիրներու նկատմամբ բծախնդիր մօտեցումով, յատուկ պաշտօնական փոխանցագիրով զանոնք յանձնեց Անթիլիասի արխիւատան, եւ ինչպէս իր նամակին մէջ կը գրէ՝ «արդար է, որ ձեռագիրները մնան իրենց հարազատ տունը»¹:

Յակոբ Օշականի այս եւ հնարաւոր այլ ձեռագրերի յետագայ ճակատագրի շուրջ տեղեկութիւնների հաւաքագրումը արդէն մէկ այլ աշխատանք է ենթադրում:

Մատենագիտական այս ճշգրտումների կողքին հանդիպում են նաեւ դէպքեր, ինչպէս նշեցինք նաեւ վերը բերուած օրինակներում, երբ վրիպում է «Հասկ»ը: Սա արդէն Եղիշէ Զարենցի առիթով. 1955-ի մի քանի համարներում լոյս տեսած բանաստեղծութիւնների կամ հատուածների տակ, ինչպէս «Իմ օրերում ես ցանկացայ լինել վսեմ», «Ջարմանալի աշուն», «Էպիտաֆիա», «Այդպէս՝ թողած աշխարհն ու ինձ»², նշում է «անտիպ», մինչդեռ դրանք մէկ տարի առաջ, 1954-ին, լոյս են տեսել բանաստեղծի «Ընտիր երկեր»ում:

Մատենագիտական մէկ այլ ուղղութիւն են ներկայացնում ծածկանունների վերհանումները: Օրինակ, Ե. Տաւրոս յաճախադէպ անունի տակ Բիւզանդ Եղիայեանի հանդէս գալու հանգամանքը, որ չի նշում Ստեփանոս Աբեղայ Փաշայեանի կազմած «Մատենագիտութիւն «Հասկ» ամսագրի (Ա.-Հէ. տարիներ. 1932-2008)» (Անթիլիաս, 2008) հատորում: Իսկ Բախտիար Յովակիմեանի «Հայոց ծածկա-

¹ «Հասկ», 2004, ՀԳ տարի, Սեպտեմբեր-Հոկտեմբեր, թիւ 9-10, էջ 786-787:

² Բանաստեղծոյիմը կրկնում է ամսաթերթի մայիսեան եւ յունիսեան համարներում:

նունների բառարան»ում նշում է հեղինակի ինքնութիւնը՝ այս անգամ առանց «Հասկ»ի վկայակոչման: Միաժամանակ նկատենք, որ միւս՝ Բ. Ե. ծածկանունի համար, որով հեղինակը հանդէս է եկել վերլուծական բնոյթի գրութիւններում, յետագայում նաեւ բանաստեղծութիւնների մէջ, նոյն աղբիւրը նշում է «Հասկ»ի 1950-ի համարներից մէկը:

Նմանօրինակ ճշգրտումների առիթները ամսագրում շատ են, ինչպէս օրինակ Աշտիշատ ծածկանունան տակ Իսահակ ծայր. Վարդապետ Ղազարեանի պարագան, որի քերթուածները յետագայում մտել են նոյն ծածկանունով եւ յայտնի մանկավարժ եւ մտաւորական Շահան Ռեթէոս Պէրպէրեանի նամակ-առաջաբանով հրատարակուած «Միստիք տաւիդ» խորագրով քերթողագրքի մէջ:

Ամփոփելով՝ նկատենք, որ «Հասկ» ամսաթերթի եւ նոյնանուն հայագիտական տարեգրքի ուսումնասիրութիւնը թոյլ է տալիս պատկերացում կազմել ոչ միայն պարբերականի գրական-բանասիրական, հայագիտական եւ պատմական բազմազան նիւթերի մասին, այլեւ օգնում է շրջանառութեան մէջ դնել նոր գրապատմական երեւոյթներ՝ ուղենշային դառնալով կարեւոր դրուագների վերարժեւորման ճանապարհին:

ЛИТЕРАТУРНО-БИБЛИОГРАФИЧЕСКИЕ КОРРЕКТИРОВКИ ПОСРЕДСТВОМ «АСК»-а

Кнарик Абраамян

РЕЗЮМЕ

В статье рассматриваются имеющие литературно-историческое значение с библиографической точки зрения литературно-литературоведческие страницы ежесеченика и ежегодника Католикосата Великого Дома Киликийского «Аск». В частности, рассматриваются те

фрагменты, которые нуждаются в библиографических уточнениях или представляют новые данные с точки зрения разъяснения отдельных творческих эпизодов автора. Предметом обсуждения стали эпизоды издания оригиналов Нерсеса Шнорали, Ованеса Тлкуранци, отдельные вопросы источниковедения произведений Ованеса Туманяна, Егише Чаренца, Акопа Ошакана. Любопытные подробности раскрываются в аспекте эпистолярного жанра Аршака Чопаняна, Католикоса Гарегина Овсепяна и других.

Автор статьи считает, что подобные исследования позволяют составить представление не только о различных литературно-филологических, арменоведческих и исторических материалах издания, но и помогают ввести в оборот новые литературно-исторические явления, став ориентиром на пути переоценки важных эпизодов.

LITERARY-BIBLIOGRAPHIC ADJUSTMENTS THROUGH “HASK”

Knarik Abrahamyan

SUMMARY

The author of the article refers to the literary and literary-critical pages of Armenian Church Catholicosate of Cilicia's “Hask” monthly and annual, which are literary and historical significance from the bibliographic point of view. The pieces that need bibliographic adjustments or present new data from the point of view clarifying individual creative episodes of the authors are mainly examined. The subjects of the examination were parts of the editions of the originals of Nerses Shnorhali, Hovhannes Tlkurantsi, separate parts of the source studies of the works of Hovhannes Tumanyan, Yeghishe Charents, Hagop Oshagan. Remarkable details

are revealed on the occasion of the correspondence pages of Arshag Tchobanian, Karekin Catholicos Hovsepien and others.

The author of the article is of the opinion that such studies allow us to get an idea not only about the diverse literary, philological, armenological and historical materials of the periodical, but also to put into circulation new literary-historical phenomena, becoming a landmark on the way to the reevaluation of important episodes.

Քնարիկ Աբրահամեան, բանասիրական գիտութիւնների թեկնածու, դոցենտ: *Խ. Աբովեանի անուան ՀՊՄՀ Վաչէ Պարտիզունու անուան հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոն, «Սփիւռք» Գիտաուսումնական Կենտրոնի գիտական աշխատող: Գիտական հետաքրքրութիւնների շրջանակը. Սփիւռքահայ գրականութեան պատմութիւն, նամակագրութեան հարցադրումներ, արեւմտահայ լեզու: Խմբագրել է Սփիւռքի գրականութեանը վերաբերող տասնեակ գրքեր.* ✉ spyurkka@gmail.com, abrahamyanknarik21@aspu.am

Кнарик Абраамян, кандидат филологических наук, доцент АГПУ имени Хачатура Абовяна, кафедра новой и новейшей армянской литературы и методики ее преподавания имени Вачэ Партизунуи, научный сотрудник научно-учебного центра «Дiasпора». Круг научных интересов: История зарубежной армянской литературы, проблемы эпистолярного жанра, западноармянский язык. Редактировала десятки книг по западноармянской литературе. ✉ spyurkka@gmail.com, abrahamyanknarik21@aspu.am

Knarik Abrahamyan,

Candidate of Philological Sciences, Docent ASPU after Khachatur Abovyan the Chair of New and Modern Armenian

Literature and its Teaching Methods after Vache Partizuni. research fellow at “Diaspora” Scientific-Educational Center of the University. Scope of Academic interests: History of Diaspora Armenian literature, problems of epistolary genre, Western Armenian language, edited artistic and scientific books about Diaspora Armenian literature.

✉ spyurkka@gmail.com, abrahamyanknarik21@aspu.am

Հասմիկ Ամիրջանյան

ԱԴԱՆԱՅԻ ԹԵՄԻ ՀՈԳԵԻՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐՈԲՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1908 1909 ԹԹ.

Հիմնաբառեր՝ Կիլիկիա, հայերի կոտորած, թուրքական կառավարություն, Սսի կաթողիկոսական Աթոռ, Ադանա, Մուշեղ եպիսկոպոս, թեմ:

Ключевые слова: Киликия, погром армян, турецкое правительство, трон Католикоса Сис, Адана, духовный, иепископ Мушех, епархия.

Key words: Cilikia, The Massacre of the Armenians, the Turkish government, the throne of the Catholicos of Sis, Adana, spiritual, Bishop Mushegh, diocese.

1908 թ. հեղափոխության արդյունքում օսմանյան կայսրությունում իշխանության ղեկը ստանձնած երիտթուրք պարագլուխների կողմից շրջանառված նոր Սահմանագրությանը հաջորդեց 1909 թ. Ադանայի և Կիլիկիայի մյուս հայաբնակ վայրերի կոտորածը: Սկզբնական շրջանում սկսված իրարանցումը հանկարծակիի բերեց հայ պետական, հասարակական ու կրոնական գործիչներին և թույլ չտվեց կողմնորոշվել ջարդերի կազմակերպիչների և դրանց ուղղորդված լինելու հարցում: Դրան նպաստեց նաև Կիլիկիո Սուրբ Աթոռի ներսում առկա ներքին խնդիրները՝ ինչը որոշակիորեն պայմանավորված էր Սսի կաթողիկոս Սահակ Խապայանի (1902-1939) ժամանակավոր հրաժարականի հետ: «Իր այս ցավալի վիճակի մեջ ժողովուրդը անղեկ էր մնացել, Սիսի կաթողիկոս Սահակ Խապայանը կորցրել էր հեղինակությունը և չգիտեր ի անե-

լիքները, իսկ հասարական գործիչները չգիտեին ինչից սկսել»¹, -գրում է Հ. Սիմոնյանը:

Այս ժամանակաշրջանը համընկավ նաև պատրիարք Մ. Իզմիրլյանի (Կ.Պոլսի պատրիարք (1894-1896, 1908-1909) Ամենայն հայոց կաթողիկոս (1909-1909/10) ընտրվելու հետ: «Թուրքիայի հայ ժողովրդի դրուժյունը ծանրանում է նրանով, որ այսպիսի վճռորոշ պահին չկար ո՛չ պատրիարք, ո՛չ հեղինակավոր քաղաքային վարչություն»², -գրում է «Մշակը»:

Նմանօրինակ պայմաններում կարևորվում էր Սսի կաթողիկոսության տարբեր միաբանների ու տեղերում հոգևոր առաջնորդների գործունեությունը: Իր աշխույժ գործունեությամբ աչքի ընկավ հատկապես Ադանայի Հայոց թեմակալ առաջնորդ Մուշեղ եպիսկոպոս Սերոբյանը (1904-1909), որի գործունեության նշված ժամանակաշրջանն իր ամբողջության մեջ ուսումնասիրված չէ: Պատշաճ ուշադրության չեն արժանացել ժամանակի մամուլի նյութերը, որոնք նրան տվել են իրարամերժ գնահատականներ՝ «անհաշտ», «մեծամիտ», «հայրենասեր», «համարձակ» և այլն:

Մուշեղ եպս. Սերոբյանը, տուրք տալով ժամանակի հայ հասարակական-քաղաքական մտքին, հավատաց երիտթուրքական վարչակարգի առաջ քաշած ազատությունների կարգախոսին ու հանդես եկավ նրանց կողմից կյանքի կոչված Սահմանադրության պաշտպանությամբ: Նա հանգամանալից ներկայացնում է կիրիկիահայերի ոգևորությունն ու պատրաստակամությունը՝ հին, սուլթանա-

¹ Հր. Սիմոնյան, Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Երևան, 2009, էջ 181:

² «Մշակ», Թիֆլիս, 1909, ապրիլի 7, թիվ 70:

կան վարչակարգի վերացման և նոր, սահմանադրական կարգերի հաստատման նկատմամբ: Մանավանդ, որ եպիսկոպոսն իր ըմբոստութեամբ վաղուց հայտնվել էր սուլթանական կառավարության ուշադրության կենտրոնում: Դեռևս 1907 թ. սկսած լուրեր են տարածվում և հոգիվածներ տպագրվում այն մասին, իբր եպիսկոպոսը կայսրութեան ներքին գավառներից հայություն է տեղափոխում Ադանա՝ այնտեղ հայ տարրն սովորացնելու և ապստամբություն նախապատրաստելու նպատակով (գավառների հայությունը, հարստահարությունից աղքատացած՝ աշխատանքի ու անվտանգության ակնկալիքով գաղթում էր տարբեր վայրեր, այդ թվում՝ Ադանա):

Ոգևորված երիտթուրքական հեղաշրջմամբ, Կ. Պոլսում գտնվող եպիսկոպոսը 1808 թ. ընթացքում քաղաքի տարբեր թաղամասերում հավաքներ է կազմակերպում և բոցաշունչ ելույթներ ունենում: Կ. Պոլսի Բերայի հայաշատ թաղամասի Ս. Երրորդություն հայկական եկեղեցում հուլիսի 31-ին հրավիրված ցույցը նվիրված էր հանուն սահմանադրության պայքարի զոհված մահմեդական և հայ նահատակների հիշատակին¹: Այդտեղ կարգացած նրա ճառն առաջ է բերում հավաքին ներկա թուրք պետական գործիչների դժգոհությունը, որոնք դրանում Հայաստանի անկախության գաղափարի տարրեր են տեսնում:

Կ. Պոլսում, օսմանյան սահմանադրության հռչակումից մի քանի օր անց, պաշտոնապես տեսակցելով իթթիհատի առաջնորդներից, հետագայում Ադանայի կուսակալ Ջեմալ բեյին՝ քննարկելու հայ և թուրք համագործակցության եզրերը, Մուշեղ եպս. Սերոբյանը, սակայն, գալիս է եզրակացության, որ երիտթուրքերը իշխանության են գալիս բա-

¹ «Հովիտ», 1909, Թիֆլիս, օգոստոսի 9, թիւ 29:

ցահայտ «համաթրքութեան ծրագիրներով» և կանխատեսում է դրա աղետալի ետևանքները¹:

1908 թ. հոկտեմբերի 16-ին երեքուկես ամիս բացակայությունից հետո Մուշեղ եպիսկոպոսը Կ. Պոլսից ժամանում է Ադանա: Քաղաքում նա ականատես է լինում վախի ու սարսափի մթնոլորտի: «Տեսա կոտորածի սպառնալիքի պարագան»², գրում է նա: Պատճառն այն էր, որ նահանգի զինվորական հրամանատարությունը հանձնվել էր 1895-1896 թթ. հայկական կոտորածների կազմակերպիչներից Մուստաֆա Րեմզի փաշային: Եպիսկոպոսը վստահ էր, որ փաշան Ադանայի նահանգն էր ընտրել՝ Զեյթունում իր կրած պարտության վրեժը լուծելու նպատակով: Տեղի ուստիկանական հրամանատարությունը հանձնվել էր Ահմեդ բեյին, իսկ նոր կուսակալ էր նշանակվել համիդյան ոգով դաստիարակված, ջարդարարական հակումներ ունեցող Զևադ բեյը³:

Թեմակալ առաջնորդն անմիջապես հակահայկական տրամադրությունները կանխելուն ուղղված բովանդակությամբ հեռագրեր է հղում Կ. Պոլիս և Կիլիկիայի իշխանական ներկայացուցիչներին: Մյուս կողմից, ժողովրդի անհանգստությունը փարատելու նպատակով հոկտեմբերի 25-ին կոնդակով դիմում է Ադանայի բնակչությանը՝ կոչ անելով պահպանել համերաշխություն և սատարել Սահմանադրությանը⁴:

¹ Մուշեղ եպիսկոպոս, Հայկական մղձաւանջը (հննական վերլուծումներ), Պոսթոն, 1916, էջ 9-10, 92:

² Մուշեղ եպիսկոպոս, Ատանայի ջարդը եւ պատասխանատուները (նախընթաց պարագաներ), Գահիրէ, 1909, էջ 25:

³ Ռ. Գասպարյան, Ադանայի 1909 թ. կոտորածները, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1990, հ. 4, էջ 26:

⁴ Մուշեղ եպիսկոպոս, Ատանայի ջարդը եւ պատասխանատուները, էջ 25-28: Կոնդակի թուրքերեն տարբերակը կարդացվում է թեմի բոլոր եկեղեցիներում, իսկ հայերեն

Զբաղվարարվելով այդքանով, նույնմբեր 2-ից սկսած մոտ մեկ ամիս շրջագայում է թեմի տարբեր բնակավայրերով՝ իրավիճակին մոտիկից ծանոթանալու նպատակով: Թեմակալ առաջնորդը հատկապես Զեբել-Բերեքեթի գավառում¹ ականատես է լինում տեղական կառավարիչների ու մահմեդական մոլեռանդ առաջնորդների կողմից նախապատրաստվող դավադրության: Տեսակցելով Զեբել-Բերեքեթի գավառապետ Մյուլթասարիֆ Մեհմեդ Ասաֆ էսադ բեյի հետ և համոզվելով իր կասկածների մեջ, նա գիտակցում է, որ դավադրության «առաջին զոհը հայերը պետք է լինեն» և տեղի հայությանը հորդորում է երկրի և Սահմանադրության հանդեպ «Իր քաղաքացիին պարտականությունը հարկին կարենալ կատարելու համար ամեն մարդ իր կարողութեան չափով քիչ թէ շատ զինուի»²: Այդ նախապատրաստությունը միևնույն ժամանակ ինքնապաշտպանական միջոց պետք է հանդիսանար, որպեսզի «ո եւ իցէ դժբախտ յարձակումի մը դէմ, մինչդեռ, որ սահմանադրասէր կառավարութիւնը եթէ գոյութիւն ունենայ, զիրենք պաշտպանելու կար»³: Սույնից եզրահանգում ենք, որ եպիսկոպոսը դեռևս հավատում էր, որ հնարավոր էր փրկել Սահմանադրությունն ու փոխել նախկին վարչակարգը:

Շրջագայության արդյունքում նա ցավով արձանագրում է, որ ամբողջ գավառի կառավարիչները, Մյուլթեսա-

տարբերակը տպագրվում է «Ազգ» պարբերականում (1908, թիւ 32): Տե՛ս Ք. Աւագեան. Ատանայի կոտորածը եւ ամերիկահայությունը. Ամերիկեան միսիոներների եւ տեղեկատուության արձագանքները, «Հասկ», Անթիլիաս-Լիբանան, ԺԲ տարի, 2009, էջ 70:

¹ Զեբել Բերեքեթ (Ճեպելը Պեռեքեթ, Յարփուզ (Եարփըզ)- գավառ Ադանայի համանուն նահանգում:

² Մուշեղ Եպիսկոպոս, Ատանայի ջարդը եւ պատասխանատուները, էջ 30:

³ Նույն տեղում, էջ 31:

րիֆից սկսած մինչև վերջին պաշտոնյան, սահմանադրական վարչակարգի պահպանմանն ու զարգացմանը նպաստելու փոխարեն թուրք մոլեռանդ խավին տրամադրում էին հայության դեմ:

Վերադառնալով Ադանա, թեմակալ առաջնորդը 1909 թ. հունվարին թուրք կառավարիչների հակասահմանադրական կեցվածքի վերաբերյալ բանավոր և գրավոր ներկայացնում է կուսակալ Զևադին, օսմանյան պետության Մեծ Եպարքոս Հյուսեյին Հիլմի փաշային, երեսփոխանական ժողովի նախագահին, արդարադատության և ներքին գործերի նախարարին, Կ. Պոլսի հայոց պատրիարքին, ինչպես նաև պոլսահայ և թուրքական մի շարք լրագրերի և խնդրում է հանձնաժողով ստեղծել՝ քննության ենթարկելու ներկայացված խնդիրները: «Մեր այդ տեղեկագրով Ճէպէլի սանճակին իւրաքանչիւր գազան առանձին ուսումնասիրուած է, հոն ցոյց տրուած են հայերուն հանդէպ կատարուած զրկանքները, ...բոլոր այն բռնապետները, որոնք նոյն իսկ սահմանադրական ըէժիմի որով ժողովուրդը իբրեւ ստրուկ գործածելու մտադրութիւն ունին... բոլոր մոլեռանդ հակասահմանադրականները, որոնք իրենց շահերուն համար հայերուն հանդէպ կոտորած սարքելու մտադրութենէն չէին հրաժարած...»¹: Հունվարի 10-ի գանգատագրում նա Զևադ բեյին անվանում է «արդարութենէ ու ճշմարտութենէ խորշող», որը դավաճանեց օսմանյան հայրենիքին և Սահմանադրությանը: Իսկ Մյուսթասարիֆին բեյին հղած նոյեմբերի 5-ի գրության մեջ վերջինս անվանում է «կրթութենէ եւ փափկանկատութենէ» զուրկ մարդ և նրա ապօրինությունների մասին տեղեկագիր է տալով «Հուգուդը Ումումիյե»-ի էջերում: Ի պատասխան, Ադանայում հրապարակվող «Թէհպէրի Իթիտալ» լրագրի 3-րդ

¹ Տե՛ս «Արեւելեան մամուլ», Զմիտնիա, 1909, յունիսի 9, թիւ 24:

համարում զրպարտիչ հողված է տպագրում նաև Մյուլթաֆերիֆ փաշան: Նույն թերթի էջերում պատասխան հողված հղելու եպիսկոպոսի փորձը ձախողվում է կուսակալի հարուցած խոչընդոտների պատճառով:

Մուշեղ եպս, Սերոբյանին մեղադրելով թուրքերին հայերի դեմ տրամադրելու մեջ, ժամանակի հասարակական գործիչ, «Հովիւ» շաբաթաթերթի թղթակից Ս. Չերքեզյանը հարցնում է, որ եթե անգամ գավառապետը կիրթ և արդարասեր մարդ լիներ, հայ եկեղեցականից նմանօրինակ բովանդակությամբ նամակ ստանալուց հետո ինչպե՞ս կվերաբերվել իր նահանգում ապրող հայերի հանդեպ¹:

Այդ ամենի արդյունքում տեղական թուրք պաշտոնյաներն ավելի են կոշտացնում վերաբերմունքը հայ բնակչության նկատմամբ՝ հատկապես Ջեբել-Բերեքեթի գավառում: Կուսակալ Ջևադ բեյն ի պատասխան՝ «ժողովրդեան դահիճները դատաւոր կարգեց, այսինքն՝ մեր կողմէն ամբաստանուածներուն յանձնեց մեր տեղեկագիրը... ոճրագործներին իրենց ոճիրը քանի մը բառով հերքել տալու նպատակով»², - գրում է Մուշեղ եպիսկոպոսը:

Այնուհետև, հունվարի 16-ին եպիսկոպոսին պաշտոնանկելու և ձերբակալելու առաջարկով Ջևադ բեյն ամբաստանագիր է հղում ներքին գործերի նախարարի անունով՝ թեմակալ առաջնորդին որակելով որպես առաջնորդական պաշտոնը վարելու մեջ անկարող անձ: Ի պատասխան Մուշեղ եպիսկոպոսը հեղինակում է «Զրպարտող կուսակալը: Բաց նամակ Ատանայի նախորդ կուսակալ Ճէվատ Պէյի»³ գրությունը, որում նա անդրադառնում է կու-

¹ Տե՛ս «Հովիւ», 1909, սեպտեմբերի 27, թիւ 36:

² Մուշեղ եպիսկոպոս, նշ. աշխ., էջ 32:

³ Տե՛ս «Արեւելեան մամուլ», 1909, թիւ 24, յունիսի 9:

սակալի գրպարտագրի հատկապես այն տողերին, որում նշվում է, որ եպիսկոպոսը հայերին տրամադրում է պետության և վարչության օրենքների դեմ:

Փետրվարի 3-ին և 17-ին եպիսկոպոսը հերթական բողոքագրերն է հղում թուրքական կառավարիչներին, ինչը զուգահեռ կազմակերպված ցույցերին¹՝ առիթ հանդիսանալով թեմակալ առաջնորդի նկատմամբ նոր պարսավանքների: Կառավարությանը ներկայացված պատասխան մեղադրագրերում թուրք պաշտոնյաները բողոքում են, որ եպիսկոպոսը խառնվում է իրեն չվերաբերվող գործերի²:

Այդ ընթացքում, եպիսկոպոսի վկայությանը, թուրքական կառավարությունը շարունակում էր զենք ու ռազմամթերք տեղափոխել Կիլիկիա՝ իբրև տեղում որևէ հակասահմանադրական շարժում կանխելու նպատակով: Տարբեր վայրերում տեղի էին ունենում հայերի նկատմամբ մանր հարձակումներ, Սահմանադրությանը սատարող փոքրաքանակ ղեկավար անձինք փախուստի էին դիմում կամ ահաբեկումների ենթարկվում: Եպիսկոպոսը գրում է. «Այս ու այսօրինակ իրողություններ ինձի տակաւ սա հա-

¹ Առաջին ցույցը կազմակերպվեց փետրվարի 1-ին՝ մամուլի ազատությունը սահմանափակող օրենքի դեմ՝ թաղապետական պարտեզում, որտեղ երկուս ունեցավ նաև Մուշեղ Սերոբյանը՝ խոսելով հայրենիքի ընդհանուր շահերից: Նրա ճառերը «...սելի կնճռոտեցին և լարեցին հայ և մահմեդական ժողովուրդների յարաբերութիւնը»: «Հովիս», 1909, դեկտեմբերի 20, թիւ 48: Սի-սում ցույցի հաջորդ ալիքն սկսվեց փետրվարի 3-ին, որի պատճառը Օսմանյան կայսրության Պետական խորհրդի կողմից Սսի կաթողիկոսության վանքապատկան կալվածքների նկատմամբ ապօրինի որոշումներն էին, ինչին հետևեց կաթողիկոս Սահակ Խապայանի հրաժարականը: Կոչեր հղ-վեցին Կիլիկիայի տարբեր շրջաններ՝ կոչ անելով տեղերում ևս բողոքի ալիք բարձրացնել, ինչի պատճառով թուրքական թերթերը Սսի կաթողիկոսարանին մեղադրում են հայ ժողովրդին ապակոդմնորոշելու մեջ: Տե՛ս «Արեւելեան մամուլ», 1909, թիւ 24, յունիսի 9, «Արարատ», Էջմիածին, 1909, Ե-Ձ, էջ 532:

² «Հովիս», 1909, նոյեմբերի 29, թիւ 45:

մոզումը կազմել կուտային, թէ Օսմ. Հայրենիքը մասնաւորապէս Կիլիկիան ահաւոր եւ արիւնոտ փորձութեան մը առջեւ կը գտնուէր»¹:

Փետրվարի վերջին եպիսկոպոսը ժամանում է Տարսոն, որտեղ նա ականջալուր է լինում կեղծ լուրեր, իբր հայերը պատրաստվում են ներխուժել ռազմակայաններ և գրավել զենքը: Կուսակալ Զևադ բեյը և Ադանայի հրամանատար Մուստաֆա Րեմզի փաշան անմիջապէս հայկական թաղամասերն առնում են ռազմական հսկողութեան տակ²: Թեև պարզվում է լուրերի անհիմն լինելը, սակայն հետապնդումները շարունակվում են, ինչի վերաբերյալ հայերն առաջնորդարան են ինը կետից բաղկացած տեղեկագիր³:

Այնուհետև, մինչև մարտի 2-ը հանդարտութուն է տիրում, ինչը նախորդեց հայութեան կոտորածին, որն սկսվեց ապրիլի 1-ին և տևեց մինչև ապրիլի 4-ը: Այնուհետև ավելի դաժան կերպով վերսկսվեց և շարունակվեց ապրիլի 12-ից 14-ը:

Այդ ընթացքում, մարտի 4-ին, եպիսկոպոսը ելնելով դեռևս փետրվարի 16-ին Ադանայի գավառական ժողովի կայացրած որոշումից, մեկնում է Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաք: Իր մեկնումը թեմակալ առաջնորդը մեկնաբանում է հետևյալով. «... Ատանայի մէջ բացուելիք Գիւղատնտեսական վարժարանին հասոյթին մէկ մասը ապահովելու համար Եգիպտոսի Հ.Բ.Ը. Միութեան եւ հայ հարուստներու քով դիմումներ ընելու»⁴: «Հովիւ»-ը զարմանալի է համարում այն հանգամանքը, որ Մուշեղ եպիսկոպոսը «թողնում է Ադանան և նրա հայ ազգաբնակիւթիւնը այդպիսի

¹ Մուշեղ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 35:

² Նույն տեղում, էջ 38:

³ Տեղեկագիրն ամբողջությամբ տե՛ս Մուշեղ եպիսկոպոս, նշվ. աշ., էջ 44-46:

⁴ Նույն տեղում, էջ 35:

շփոթ, խառն ճգնաժամի և ահուդողի մէջ և ինքը գնում է Եգիպտոս՝ Ադանայի մի ինչ որ երեւակայական գիւղատնտեսական դպրոցի համար ժողովարարութիւն անելու»¹։

Մյուս կողմից, եպիսկոպոսին հանուն Սահմանադրութեան բացահայտ պայքարում մշտապես մեղադրող թերթը ծայրահեղութեան մէջ ընկնելով գրում է, որ եթե Ադանան ավել դաժան կոտորածի ենթարկվեց քան մյուս հայաբնակ վայրերը, ապա պատճառն այն է, որ Մուշեղ եպիսկոպոսը «...բոլորի հետ կռուած է եղել, բոլորին հայհոյած, բոլոր պաշտօնեաներից գանգատներ ուղարկած իրանց բարձր իշխանութեանը, նրանց պաշտօնանկութիւնը պահանջած, բոլորին գրգռած, թշնամացրած, վարկաբեկ արած...»²։

Կոտորածի լուրն իմանալով, Մուշեղ եպիսկոպոսն անմիջապէս Եգիպտոսից շոգենավով ժամանում է Մերսին։ Սակայն թուրքական կառավարութիւնն արգելում է նրա մուտքը քաղաք. «Եւ վշտակիր Առաջնորդը գլխիկոր՝ ստիպուեցաւ վերադառնալ դարձեալ Եգիպտոս»³։

Եպիսկոպոսը, սակայն, Եգիպտոսում հանգիստ չի նստում⁴։ Ամբողջ ապրիլ ամսվա ընթացքում նա ձեռնա-

¹ «Հովիտ», 1909, դեկտեմբերի 20, թիւ 48։

² Նույն տեղում։

³ Յ. Թեղեան, Կիլիկիոյ աղետը, Կ. Պոլիս, 1912։

⁴ «Հովիտ» շաբաթաթերթը դատապարտում է եպիսկոպոսի Եգիպտոս վերադառնալը՝ կարծիք հայտնելով, որ նա Եգիպտոս էր կանչվել Կիլիկիայի համգանակության պատրվակով՝ Եգիպտոսի թեմակալ առաջնորդ նշանակելու համար։ Սակայն Ադանայի ջարդերի պատասխանավորքունը նրան բարդելու հետևանքով այդ նպատակը չիրագործվեց։ Այդ պատճառով վակա-բեկված արքեպիսկոպոսին սատարում էր Եգիպտոսի «Լուսաբեր-Արեւը» լրագիրը՝ նրան ֆենադատողներին «դավաճան» անվանելով։ «Այժմ... Մուշեղ եպիսկոպոս և իր Եգիպտոսի պարբերականը («Լուսաբեր Արեւը».-Հ. Ա.) միայն անէծք ու հայեդյաք ունեն նրանց դէմ, որ Մուշեղ եպիսկոպոսին մեղադրում է Ադանայի ջարդի համար»։ Թերթը գովելով է արձագանքում եպիսկոպոսի պաշտպանությանն ուղղված «Լուսաբեր-

մուխ է լինում Կիլիկիայի հայ սովյալների ու անտուն մնացածների համար միջոցների հայթայթմանը: Այդ հարցում նա համագործակցում է հայ ազգային գործիչ Պողոս Նուբարի հետ: Այդ է վկայում այն հանգամանքը, որ Մուշեղ եպիսկոպոսն Ալեքսանդրիայից գնացել էր Կահիրե: Դեռևս 1909 թ. ապրիլի 18-ին, մինչև Մերսինից Եգիպտոս վերադառնալը, նա նամակներով օգնություն էր խնդրել Պողոս Նուպարից՝ Ադանայի աղետյալների համար¹:

Կահիրեում հեղինակած «Կոչ արտասահմանի և ամբողջ հայության արյունազանգ Կիլիկիայի համար» խորագիրը կրող հրապարակման մեջ նա նկարագրում է թուրք խուժանի վայրագությունների հետևանքներն ու ներկայացնում թուրքական կառավարության թողտվությունն այդ հարցում: «Եւ մենք ամենատխուր փորձառութիւնը ունեցանք, թէ Թուրքիան, վարչական ինչ փոփոխութիւններ ալ որ կրէ, ըլլայ Միապետական թէ սահմանադրական, հայաչինջ սկզբունքը իր քաղաքային դաւանանքին, իր այլամերժ ծրագիրներուն հիմնակէտը պիտի կազմէ... Օգնութիւն... վաղը ուշ կլինի, և ձեր անտարբերութիւնը գերեզմաններով կփակէ արյունոտ դրուագը այն մեծ Եղեռնի, որ թուրք մոլեռանդութիւնը վերստեղծեց Կիլիկիայում»²:

Արևը»-ի տողերին՝ խորհուրդ տալով դրա փոխարեն համոզել Եգիպտոսում նստած Մուշեղ եպիսկոպոսին հանուն հազարավոր զոհերի անձամբ գնալ Ադանա և ներկայանալ իրենց համոզմամբ՝ «Արդարադատ Ատյանին», իր վրայից սրբել մեղադրանքները: Տե՛ս «Հովիս», 1909, օգոստոսի 30, թիւ 32: Հավելեմք, որ հետագայում, 1911 թ. Մուշեղ Սերոբյանը դարձավ ԱՄՆ-ում Հայ Առաքելական եկեղեցու հոգևոր առաջնորդ: Տե՛ս Ք. Ասազեան, նշվ. յօդվ., էջ 65:

¹ Գր. Մ. Վրդ. Զիֆթեան, Ատանայի կոտորածին ակնարկությունները առաջնորդ Մուշեղ եպս. Սերոբեանի ծոցատետրին մէջ (1909), «Հասկ», ԺԲ տարի, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 121:

² «Արարատ», Ե-Ձ, 1909, էջ 549-551:

Այսպիսով, եպիսկոպոսը գալիս է համոզման, որ սահմանադրական Թուրքիան ոչնչով չի տարբերվում սուլթանական բռնապետությունից¹: Նա երիտթուրքերի հանցագործությունը բնորոշեց եղեռն անունով՝ նշելով, որ այն «...ոչ միայն նախատինք պիտի մնայ Օսմ. Ազատագրուած Հայրենիքին, այլեւ անբուժելի... վէրքը հայութեան սրտին վրայ»²: Նախկինում օսմանյան սահմանադրության հետ հուլյսեր կապող ու այն սատարելու կոչեր անող եպիսկոպոսը առաջիններից մեկն էր, որն Ադանայի կոտորածի կազմակերպիչ համարեց երիտթուրքերին, ինչը «վերապահութեամբ ընդունեցին» ժամանակի անգամ առաջադեմ շատ գործիչներ³:

«Միություն և առաջադիմություն» կազմակերպության հիմնադիրներից Ահմեդ Ռիզայի մասին գրում է. «Ահմէտ Ռիզա եւ իրեն հետ ամբողջ Իթթիհատը, թուրք էին եւ թուրք մնացին, թուրք բառին ամենազգուշ իմաստովը, անփոփոխելի ու անսրբագրելի, որ ո՛չ հին սովորութէն մը կը հրաժարին, եւ ո՛չ ալ նոր բարեփոխութեան մը ընդունակ ցոյց կու տան ինքզինքնին»⁴: Նա դառնորեն գրում է, որ անցյալի զրկանքների ու տառապանքների ենթարկված հայության կողմից Սահմանադրության նկատմամբ «համակրական ցոցը այսքան արիւնոտ պիտի ըլլար»⁵:

Որպէս կոտորածի կանխամտածված լինելու ապացոյց նա վկայակոչում է Թուրքիայի ներքին գործերի նախարար Ադիլ բեյի հեռագիրն՝ ուղղված կիլիկիայի թուրք պաշտոնյաներին. «Մեծագոյն ուշադրութեամբ հոգ տարո-

¹ Տե՛ս Մուշեղ Եպիսկոպոս, նվշ. աշխ., էջ 35:

² Նույն տեղում, էջ 6:

³ Մուշեղ Եպիսկոպոս, Հայկական մղձաւանջը, էջ 9:

⁴ Նույն տեղում, էջ 79:

⁵ «Արարատ», 1909, Ե-Ձ, էջ 549:

ւի, որ վնաս չհասնի օտար կրօնային հաստատութիւններուն եւ հիւպատոսարաններուն»¹։ Ըստ Եպիսկոպոսի հեռագիրը հրաման էր հայերին ջարդելու՝ «համիդեան բնադրումով մը խմբագրուած»²։

Անգամ հեռավոր Եգիպտոսում շարունակվում են նրա անձի շուրջ ամբաստանությունները։ Թուրքական կառավարությունը, փորձելով Կիլիկիայի աղետից շեղել հասարակության և եւրոպայի ուշադրությունը, դիմում է ավանդական գործելակերպի՝ հայերին ամբաստանելով և կոտորածի մեղքը բարդելով նրանց վրա։ Մուշեղ եպիսկոպոս Սերոբյանի անունը հայտնվում է երիտթուրքական կառավարության կազմած պետական քննիչ հանձնաժողովի՝ փախուստի մեջ գտնվող հայերի անվանացանկում, այն մեղադրանքով, որ նա Կիլիկիայում հայկական անկախ պետություն հիմնելու նպատակով «անջատողական շարժում» էր սկսել։ «...Եւ նոյն իսկ առաջ կերթան Ատանայի դժբախտ Առաջնորդն՝ Մուշեղ Եպիսկոպոսն ամբաստանելու և զայն իբրեւ յանցաւոր նկատելով եգիպտական կառավարութեանէն պահանջելու»³։

Այդ առիթով «Արեւելեան մամուլը» հեզնանքով գրում է. «...զարմանում ենք, որ մի քիչ ուշ են արթնանում՝ Մուշեղ եպիսկոպոսին հանցագործ հանելու համար։ Մինչդեռ նրա՝ Մերսինում գտնվելու ժամանակ կրկին դիմումները՝ ցամաք ելնելու, կարգելեն, և սպառնալիքներով կստիպեն վերադառնալ Եգիպտոս»։ Թերթը հարցնում է. «Եթէ յանցաւոր էր՝ ինչու՞ Թուրքիա անոր մուտքը արգիլեցին ուրեմն»⁴։ Թերթի թղթակից Լևոն Մկրտչյանը գրում է, որ Եւ-

¹ Մուշեղ եպիսկոպոս, Ատանայի..., էջ 4։

² Նույն տեղում։

³ «Արեւելեան մամուլ», 1909, մայիսի 19, թիւ 21։

⁴ Նույն տեղում։

րոպային աչքին իբրև ջարդերի պատճառ թուրքերը ցույց են տալիս հայերին՝ ամբաստանելով Ադանայի առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսի նման նշանավոր գործչին, որի նմանը չկար օսմանյան կայսրությունում¹։

«Թասվիրի էֆքեարի» խմբագրի հետ ունեցած հարցազրույցում Կ. Պոլսի Ազգային ժողովի երեսփոխան Հակոբ Պապիկյանը, որը մասնակից էր Ադանայի կոտորածների հետաքննությանը, ժխտում է Մուշեղ եպիսկոպոսի վերաբերյալ զրպարտությունները՝ նշելով, որ թեմակալ առաջնորդը հիշատակագրերում կառավարությանը և կուսակալին բանավոր կարգով սոսկ զգուշացել է, որ առաջիկայում կարող են խառնաշփոթություններ ծագել և անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել. «Բայց առաջնորդին խօսքերը չափազանցութիւն նկատուեր են և ու է պէտք չէ տեսնել միջոցներ ձեռք առնել»²։

«Հովիւր» վկայակոչում է, որ Ամերիկայում հրատարակվող «Pearsons Magazine» հանդեսը ջարդից հետ Ադանա է ուղարկել սեփական թղթակից Զեյմա Քրիլմընիին, որը վկայում է, որ հայերի մեծամասնությունն անմեղ էր և հեղափոխական ծրագրեր չուներ և Ադանայի ջարդի պատասխանատու է համարում Մուշեղ եպիսկոպոսին, որն իր կրակոտ ճառերով կոչում էր զենք գնել³։ Իրականում, սակայն, ամերիկացի թղթակիցը եպիսկոպոսին անվանում է պարզապես «խռովարացույց մը» և «անօգնական երազող»⁴։

Հայտնի են Տարսոնի Ամերիկյան քուլեջի տնօրեն Թովմաս Քրիսթիի, Կ. Պոլսի անգլիական դեսպանատան առաջին թարգման Ֆիցմորիսի դիրքորոշումը, որոնք աղետի

¹ Նույն տեղում։

² «Առաքել-Արեւ», Գաֆիթ, 1909, 15 յուլիս, թիւ 670-81։

³ «Հովիւ», 1909, հոկտեմբերի 25, թիւ 40։

⁴ Տե՛ս «Երիտասարդ Հայաստան», Նիւ-Եօրթ, 1909, սեպտեմբեր 8, թիւ 8։

պատասխանատվությունը բարդում են եպիսկոպոսի անխոհեմ ու անզգույշ քայլերի վրա¹ փաստորեն մեկ անձի գործոնով մեկնաբանելով համահայկական աղետի պատճառները, որն ընդգրկեց ոչ միայն Ադանայի գավառը, այլև շրջակայքի հայկական բնակավայրերը:

Նմանօրինակ կարծիք է հնչեցնում Ս. Չերքեզյանը. «Ես կարծում եմ, որ Ադանայի ջարդերի կորիզը եղան նոյնիսկ Ադանայի առաջնորդի այդտեղ հնչեցրած «...յառաջ եկաւ անկախ Հայաստանի կազմութեան գաղափարը» խօսքերը»²:

Այսպիսով, Մուշեղ եպիսկոպոս Սերոբյանը, որպես իր թեմին ու ժողովրդին նվիրված հովիվ, աշխույժ գործունեություն է ծավալում՝ փորձելով կանխել հայ բնակչության գլխին կախված աղետը: Առանց պատճառի հայությունը վրա պարբերաբար գինված հարձակումների ենթարկվող թուրք կառավարիչների արարքները ներկայացնելով համապատասխան մարմիններն՝ նա մի կողմից ձեռք է բերում թուրքական կառավարության թշնամանքը, մյուս կողմից մեղադրվում «հեղափոխական» ու «անզգույշ» լինելու մեջ: Եպիսկոպոսի «մեղքն» այն էր, որ նա մեղադրում էր բռնակալական վարչակարգի հետևորդ կառավարիչներին, իսկ ժողովրդին հորդորում պայքարել հանուն Սահմանադրության և դիմակայել հնարավոր վտանգին:

ДЕЯТЕЛЬНОСТЬ ПРЕДВОДИТЕЛЯ АДАНСКОЙ ЕПАРХИИ И ЕПИСКОПА МУШЕХА СЕРОПЯНА В 1908-1909 ГГ.

¹ «Լուսաբեր-Արեւ», 1909, 4 դեկտեմբերի, թիւ 760, «Հովիւ», 1909, դեկտեմբերի 20, թիւ 48:

² «Հովիւ», 1909, օգոստոսի 9, թիւ 29:

РЕЗЮМЕ

Младотурецкая революция июля 1908 года была воспринята как завершение векового турецкого ига и деспотизма гамидского периода. Армянские деятели поверили в провозглашенные младотурками лозунги равенства и свободы. Однако младотурки начиная с начала апреля 1909 г. организовали погромы армян в Адане.

В этот период своей активной деятельностью отличился предстоятель Аданской епархии епископ Мушег Серобян. Он, понимая, что армянству Киликии грозит опасность и пытаясь ее предотвратить, направляет многочисленные обращения к турецким чиновникам. В то же время призывает армянское население оставаться верным Конституции. В конце концов епископ приходит к выводу, что за трагедией в Адане стояли младотурки.

THE ACTIVITIES OF THE LEADER OF DIOCESES OF ADANA BISHOP MUSHEGH SEROBYAN IN 1908-1909

Hasmik O. Amirjanyan

SAMMARY

The Young-Turks revolution of June 1908 hailed as the termination of century-long Turkish yoke and despotic rule of the Hamid period. The Armenian figures did in actual act believe the slogans proclaimed by the Young Turks of brotherhood, equal rights and freedom. However, the young Turks beginning from the April in 1909 organized the massacre of the Armenians of Adana.

During this period, the primate of the Diocese of Adana, Bishop Mushegh Serobyen, distinguished himself by his activity. Realizing that the Armenians of Cilicia are in danger of a catastrophe and trying to prevent it, he sends

numerous appeals to Turkish officials. At the same time, he calls on the Armenian population to remain faithful to the Constitution. In the end, the bishop comes to the conclusion that the Young Turks were behind the tragedy in Adana.

Հասմիկ Ամիրջանյան, պատմական գիտությունների թեկնածու: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունների շրջանակը. Նոր շրջանի պատմություն, Լոռու գավառ, հայ-վրացական հարաբերություններ, ժողովրդագրության հարցեր, հայոց եկեղեցու պատմություն, Հովսեփ արքեպիսկոպոս Արղունյան, Ամենայն Հայոց կաթողիկոս Ղուկաս Կարնեցի, հայկական մամուլ:

✉ amirjanyan.hasmik@rambler.ru

Асмик Амирджанян, кандидат исторических наук. Национальная академия наук Республики Армения, Институт истории, научный сотрудник, Круг научных интересов: Новая история, область Лори, армяно-грузинские отношения, демографические вопросы, история Армянской Апостольской Церкви, Иосиф архиепископ Аргутян, Котолокос Всех Армян Гукас Карнеци, армянская пресса.

✉ amirjanyan.hasmik@rambler.ru

Hasmik Amirjanyan, Candidate of Historical Sciences. Institute of History, National Academy of Sciences of Republic of Armenia, senior scientific researcher, Doctor of History. Scope of Academic interests: The new history, the region of Lori, the Armenian-Georgian relations, demographic questions, The History of the Armenian Apostolic Church, Archbishop Hovsep Arghutyan, Catholicos of All Armenians Ghukas Karneci, the armenian press. ✉ amirjanyan.hasmik@rambler.ru

**ՄԻ ԱՆՏԻՊ ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԻԼԻԿԻՈՅ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍԱՀԱԿ Բ. ԽԱՊԱՅԵԱՆԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ**

Հիմնաբառեր՝ Գիւտ Մխիթարեան, կաթողիկոս Սահակ Բ. Խապայեան, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարան, Մեծ եղեռն, յուշագրութիւն:

Ключевые слова: Кюд Мхитарян, католикос Саак II Хабаян, Киликийский католикосат Армянской апостольской церкви, геноцид армян, мемуары.

Key-words: Kud Mkhitaryan, Catholicos Sahak II Khabayan, Catholicosate of Cilicia, Armenian genocide, memoirs.

Հաղորդումը վերաբերում է Գիւտ Մխիթարեանի «Դրուագներ հայկական Գողգոթայէն. 1912–1937» անտիպ յուշագրութեանը: Հեղինակը 1903–1919 թթ. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանում աշխատել է որպէս կաթողիկոս Սահակ Բ. Խապայեանի (1849–1939) հաշուակալ-քարտուղար եւ իր յուշագրութեան մէջ արտացոլել ինչպէս Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, այնպէս էլ արեւմտահայութեան (մասնաւորապէս՝ Կիլիկիոյ հայութեան) պատմութեանն առնչուող իրադարձութիւններ՝ Մեծ եղեռնից առաջ եւ յետագայ տարիներին՝ կենտրոնանալով 1915 թուականի վրայ: Յուշագրութիւնն անդրադառնում է Սահակ Բ. Խապայեանի գործունէութեանը, նրա այցելութիւններին տարբեր քաղաքներ, Մեծ եղեռնի ժամանակ Սսոյ վանքի խուզարկութիւնը եւ պարպումը, կաթողիկոսի տարագրմանը եւ ժամանակատր վերադարձին Կիլիկիա եւ այլն: Յուշագրութիւնը յաւելեալ տեղեկութիւններ է տրամադ-

րում 1914–1921 թթ. արեւմտահայութեան հանդէպ գործուած ցեղասպանութեան եւ տարագրութեան, հոգեւոր-եկեղեցական կեանքի վերաբերեալ, յիշատակում են ժամանակաշրջանի հայ եւ օտարազգի տարբեր գործիչներ, մասնաւորապէս՝ եղեռնամահ մտաւորականներից մի քանիսը:

2017 թուականին բրազիլացի պատմաբան էյտօր Լօուրէյրօն, որ զբաղւում է Բրազիլիայի հայ համայնքի պատմութեան ուսումնասիրութեամբ, մեզ յանձնեց 124 էջից բաղկացած պատճէնահանուած մի հայերէն ձեռագիր՝ «Գիւտ Մխիթարեան, Դրուագներ հայկական Գողգոթայէն. 1912–1937» վերնագրով: Նա յայտնեց, որ ձեռագիրն իրեն է փոխանցել հեղինակի՝ Գիւտ Մխիթարեանի դուստրը՝ բրազիլաբնակ Շաքէ Աւետիսեանը: Հեղինակը 1903–1919 թթ. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանում աշխատել է որպէս 1902–1939 թթ. կաթողիկոս Սահակ Բ. Խապայեանի (1849–1939) հաշուակալ-քարտուղար եւ վկայութիւններ թողել արեւմտահայութեան (մասնաւորապէս՝ Կիլիկիոյ հայութեան) նախա- եւ յետեղեռնեան ժամանակաշրջանի վերաբերեալ: Ձեռագրի շարադրանքը մուտքագրեցինք եւ բնագիրը պատրաստեցինք հրատարակութեան՝ առաջաբանով եւ ծանօթագրութիւններով: ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտն այն նախատեսում է լոյս է ընծայել որպէս իր հերթական հրատարակութիւն 2023 թուականին:

Սոյն հաղորդման մէջ նախ ներկայացնենք յուշագրութեան հեղինակին: Գիւտ Մխիթարեանը¹ (1877 (1878), Սկիւտար, Կ.Պոլիս – 1940, Բրազիլիա) հոգեւոր, կրթական գործիչ

¹ Մխիթարեանի կենսագրական տուեալները մասնատրապէս փաղէ ենք իր իսկ գրութիւններից եւ հետեւեալ աղբիւրներից՝ Գառնիկ Ստեփանեան, Կենսագրական բառարան, հատոր Գ, Երեւան, 1990, էջ 56, Վ. Մաաթեանեան, Հարաւային կողմն աշխարհի. հայերը Լատին Ամերիկայի մէջ սկիզբէն մինչեւ 1950, Ամթիլիաս, 2005, էջ 263-264:

եւ բանասէր էր: Աւագանի անունը եղել է Մանուկ: Կրթութիւնն ստացել է ծննդավայրում՝ Ս. Խաչ ծխական վարժարանում եւ Ազգային Կեդրոնական վարժարանում, որն աւարտելուց յետոյ 1896-1898 թթ. ուսանել է Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանում: 1903-1919 թթ. աշխատել է Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանում հաշուակալ-քարտուղար աշխատելուն զուգահեռ Մխիթարեանը պաշտօնավարել է նաեւ որպէս դպրոցի տեսուչ եւ ուսուցիչ Կիլիկիայում: 1905-ին արեղայ է ձեռնադրուել՝ Գիւտ անունով: 1907-1914 թթ. ստացել է վարդապետի, ծայրագոյն վարդապետի եւ եպիսկոպոսի աստիճաններ: 1910-1915 թթ. վարել է Սոյ ժառանգաւորաց վարժարանի տեսչութիւնը: Երբ 1915-ի յունիսին Սսի Մայրավանքից աքսորուել են եպիսկոպոսները, Սահակ կաթողիկոսը ներկայացել է Հալէպում գտնուող Ջէմալ փաշային եւ խնդրել «որ գոնէ «այս ծանր հարուածը խնայովի մեզի...»: Ու ճէմալ փաշայի սիրտը կը կակուղնայ միայն այնքան, որ կ'արտօնէ, առժամանապէս, Գիւտ եպիսկոպոսին Մայրավանքին մէջ մնալ...: Վերջը յայտնի պիտի ըլլար, թէ այդ իսկ խաբկանք էր, որովհետեւ Գիւտն ալ պիտի աքսորուէր»¹: 1915-ին Սահակ կաթողիկոսի եւ այլ հոգեւորականների հետ Հալէպից մեկնել է Իտլիպ: Սակայն հագիւ տեղաւորուած՝ հրաման է եկել, որ կաթողիկոսը պիտի Հալէպ վերադառնայ: Սահակ վեհափառը Գիւտի եւ այլ հոգեւորականների հետ եկած ճանապարհով վերադարձել է Հալէպ, որտեղ տեղեկացրել են, որ Ջէմալ փաշան իրեն ուղարկում է Երուսաղէմ²: 1916-ի մայիսին Ջէմալը Երուսաղէմ գալով՝ Սահակ կաթողիկոսին հրաւիրել է մասնաւոր տեսակցութեան, որին մաս-

¹ Բիւզանդ եղիայեան, Ժամանակակից պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս, 1975, էջ 51:

² Անդ, էջ 55:

նակցել են նաեւ Գիւտ եւ Եղիշէ եպիսկոպոսները: Զէմալ փաշան յայտնել է, որ օսմանեան կառավարութիւնը որոշել է միաւորել Պոլսոյ եւ Երուսաղէմի պատրիարքութիւնները եւ Աղթամարի կաթողիկոսութիւնը եւ պահել միայն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը, որի Աթոռը պիտի լինի Երուսաղէմի Հայոց վանքը¹: 1917-ին Սահակ կաթողիկոսը Մաղաքիա պատրիարք Օրմանեանի եւ այլոց հետ տեղափոխուել է Դամասկոս, եպիսկոպոսական փոխանորդ Գիւտ Մխիթարեանը չի կարողացել նրան ընկերակցել²: 1920–1923 թթ. վարել է հարբերդի առաջնորդական տեղապահի պաշտօնը: Այստեղ նա գրի է առել հարբերդի շրջանում նահատակուած եկեղեցականների անունները եւ նրանց նահատակութեան պարագաները, որ պատրաստել է Թէոդիկի խնդրանքով, ինչպէս նաեւ նոյն շրջանի տարագրութիւնների եւ ջարդերի մասին հաւաքած նիւթերը, որոնք կորսուել են³:

1923-ի սկզբին Գիւտ Մխիթարեանը մեկնել է Մարսէյլ, որտեղ հրաժարուել է հոգեւոր կոչումից: Ֆրանսիայից մեկնել է ԱՄՆ, այնտեղից՝ Բրազիլիա, հաստատուել Սան Պաուլօ քաղաքում: Այստեղ ամուսնացել է եւ աշխոյժ դերակատարութիւն ունեցել հայ համայնքի կեանքում: Աշխատակցել է ամերիկահայ պարբերականներին, մասնաւորապէս Բօսթօնի «Հայրենիքին»⁴, Ֆրէզնոյի «Մշակին» եւ Բուենոս Այրէսի «Արմէնիային»:

1937-ին Անթիլիասում լոյս է տեսել Գիւտ Մխիթարեանի առաջին գիրքը՝ «Յուշեր եւ վերյիշումներ (1918–1935)» վերնագրով, որն ընդգրկում է նախապէս մամուլում լոյս տեսած

¹ Անդ. էջ 60:

² Տէս Մ. **արքեպս Օրմանեան**, *Խոնք եւ Խօսք*, Երուսաղէմ, 1929, էջ 13–14:

³ Տէս Գ. **Մխիթարեան**, Յուշեր եւ վերյիշումներ (1918–1935), Անթիլիաս, 1937, էջ 7:

⁴ Տէս Կ. (*Sic*) **Մխիթարեան**, Նամակներ Պրազիլիայէն, «Հայրենիք», Պօսթըն, 17.04.1926, էջ 1:

նրա գրությունները: Հեղինակը նշել է, որ իր նպատակն է եղել վկայել Խարբերդի բնակիչների «եռամեայ դժնդակ ապրումներու մասին»¹: Գրքոյկի զուտ հասոյթը տրամադրուել է Անթիլիասի Կաթողիկոսարանի կարիքները հոգալու գործին²:

«Յուշեր եւ վերլիշումների» կազմի վրայ «Հեղինակին հրատարակելի գործերը» խորագրի ներքոյ նշուած են «Ուրուագիծ Պրագիլահայ գաղութի ծագման ու զարգացման (1880-1934)», «Պրագիլական հանրապետութիւն (ուսումնասիրութիւն)» եւ «Դրուագներ հայկական Գողգոթայէն» վերնագրերը: Առաջին երկուսը լոյս են տեսել յաջորդ իսկ տարին՝ «Պրագիլոյ հայ գաղութը, սկիզբէն մինչեւ մեր օրերը» (Փարիզ, տպ. Խ. Մաթիկեան, 1938, Սիմոն Վրացեանի առաջաբանով) եւ «Պրագիլոյ հանրապետութիւն (համառօտ ուսումնասիրութիւն)» (Պուէնոս Այրէս, 1938) վերնագրերով, մինչդեռ երրորդը՝ սոյն հաղորդման բուն նիւթը, ցարգ մնում էր անտիպ:

Յուշագրութեան սկզբում գետեղուած «Երկու խօսքով» Մխիթարեանը պարզում է իր գրութեան շարժառիթը (մէջբերում ենք ամբողջութեամբ). «Տասնեւկէ տարիներ անընդհատ Կիլիկիոյ Կաթողիկոսարանին մէջ մեր վարած փառաւորութեան պաշտօնին բերումով, ոչ ոք առաւել քան զմեզ, կրնար տեղեակ ըլլալ տարիներու ընթացքին տեղի ունեցած եղերական եւ արիւնագանգ դէպքերուն, պատահարներուն եւ անց ու դարձերուն, որոնց միջոցին Ն. Ս. Օծուրին Տ. Տ. Սահակ Բ կաթողիկոս եղաւ, ըստ Աւետարանի, «չանքն իւր ի վերայ ոչխարաց» դնող փաշ եւ արթուն Հովուապետը:

¹ Գ. Մխիթարեան. Յուշեր եւ վերլիշումներ, անդ:

² Անդ. էջ 8:

Այդ դեպքերէն մէկ մասին ամփոփ պատկերը եւ Սահակ կաթողիկոսին ցոյց տուած կորովի ընթացքը եւ ըրած ձեռնարկները հրատարակութեան տալու մեր նպատակն է հերքել այն անտեղի մեղադրանքները եւ անիմաստ խօսքներն ու վերագրումները, զորս Օրմանեան արեւելահայոց ըրած է իր յետ մահու հրատարակուած «Խոհի եւ Խօսի»-ին¹ մէջ՝ ներկայացնելով Սահակ կաթողիկոսը լուռ բերան, անխօս լեզու եւ անշարժ ձեռք²:

Ընթերցողը պիտի տեսնէ, որ Ն. Ս. Օծոբինը՝ մինչեւ մահը եւ հակառակ իննսուն երկար տարիներու ծանր բեռը իր ուսերուն վրայ կրելուն՝ ցոյց տուած է իր անլուռ բերանը, խօսուն լեզուն, շարժուն ձեռքը, ոսկեղէն գրիչը եւ զգայուն սիրտը:

Գալիֆ սերունդները վերապահութեամբ պէտք է կարդան Օրմանեանի այդ տողերը, որ արդիւնք են շիւ տեսութեան եւ մասամբ ալ նախանձոտ կիրքի՝ հանդէպ մէկու մը, որուն պաշտօնին երեսունեւեօթ տարիները արիւնի ու անքի սեւ օրեր միայն եղած են»:

Փաստօրէն, սոյն յուշագրութիւնը գրելու Մխիթարեանի շարժառիթներից մէկը եղել է Սահակ Բ. Խապայեան կաթողիկոսի իրական կերպարի եւ բարի անուան աւան-

¹ Մ. արեւայ. Օրմանեան, (1841–1918), Կ. Պոլսի Հայոց պատրիարք, աստուածաբան, հայագէտ, պատմաբան, բանասէր, հրապարակախօս:

² Օրմանեանի խօսքը Մխիթարեանը մէջբերել է յիշողութեամբ. իրականում վերջինս գրել է. «Հայաբնակութեան արմատին տապարն ալ դրուեցաւ. Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը ջնջուեցաւ, պատրիարքը աքսորուեցաւ, երուսաղէմի պատրիարքութիւնն ալ վերցուեցաւ, Սսոյ եւ Աղթամարայ կաթողիկոսութիւններ ձուլուեցան, Մայր Աթոռի առաքելական իշխանութիւնը փառաքանական իշխանութեամբ անգոյ հռչակուեցաւ, եւ բոլորէն գոմարուած նոր իշխանութիւն մը ստեղծուեցաւ, եւ լուռ բերանի, անխօս շրթոմէի, անգործ ձեռքի, անշարժ սիրտի մը յանձնուեցաւ, որ անունը գրուցով, իսկ գործը խափանով, երեւոյթը արդարանայ եւ իրականութիւնը չհանայ»: Տէս Մ. արեւայ. Օրմանեան, Խոհի եւ Խօսի, Երուսաղէմ, 1929, էջ 471:

դումը հետագայ սերունդներին՝ փորձելով հերքել Մադաքիա արքեպիսկոպոս Օրմանեանի պէս ազդեցիկ գործչի կողմից վերջինիս հասցէագրուած որակումները¹: Սակայն ինչպէս Մեծ եղեռնի փորձառութիւնն ապրած բազում մտաւորականներ, Մխիթարեանը եւս իր պարտքն է համարել գրի առնել ժամանակի իրադարձութիւնները՝ գլխաւոր «հերոս» ունենալով Սահակ Բ Խապայեանի գործունէութիւնը: Այն ընգրկում է 1912-ից 1937 թուականները՝ կենտրոնանալով յատկապէս, հեղինակի բնորոշմամբ, «1915 անիծակոտ տարիի» վրայ:

Յուշագրութիւնն ամփոփուած է 14 ոչ մեծ գլուխներում: Դրանք են՝

1. Գարանֆիլեան վարդապետ ի Զէյթուն
2. Սահակ կաթողիկոս ի Հալէպ
3. Սահակ կաթողիկոս ի Հանըն
4. Սահակ կաթողիկոս յԱտանայ
5. Խուզարկութիւն Սոյ վանքին
6. Սահակ կաթողիկոս կրկին ի Հալէպ
7. Սոյ միաբանութեան տարագրումը
8. Սահակ կաթողիկոսի տարագրումը
9. Կաթողիկոսութիւն-Պատրիարքութիւն
10. Սահակ կաթողիկոս ի Դամասկոս եւ յԵգիպտոս
11. Վերադարձ ի Կիլիկիայ
12. Սահակ կաթողիկոս յԵրոպայ
13. Վերադարձ յԵրոպայէ

¹ Մինչ այդ Գիտ Մխիթարեանը «խոնֆ եւ խօսֆի» վերաբերեալ ճշտումներ է կատարել «Օրմանեանի ինքնակենսագրութեան շուրջ պատմական ճշդումներ» յօդուածում (տե՛ս Գիտ Մխիթարեան, Յուշեր եւ վերլիշումներ (1918-1935), էջ 90-96), իսկ «Պատմական ճշդումներ» յօդուածով անդրադարձել է նաեւ Օրմանեանի «Ազգապատում» աշխատութեան Գ. հատորին (տե՛ս անդ. էջ 83-89):

14. Արտագաղթի Սուրիայ

Յուշագրութիւնն ամփոփում է «Յաւելուածը», որն ընդգրկում է երկու փաստաթուղթ՝ «Երգմնագիր Յովհաննէս ծայրագոյն վարդապետ Գարանֆիլեանի» եւ «Ամփոփում Սահակ կաթողիկոսին խօսած խրատականին»:

Սոյն հաղորդման նպատակը յուշագրքի բովանդակութիւնը մանրամասնօրէն պատմելը չէ, այլ համառօտ ներկայացնելը՝ նախքան հրատարակուելը: Ինչպէս երեւաց յուշագրութեան գլուխների վերնագրերից՝ Գիւտ Մխիթարեանը ներկայացրել է մասնաւորապէս Կիլիկիոյ Հայոց կաթողիկոսի գործունէութիւնը՝ նրա այցելութիւնները զանազան քաղաքներ, Մեծ եղեռնի ժամանակ Սսոյ վանքի խուզարկութիւնը եւ ապա պարպումը, Սսոյ միաբանութեան եւ Սահակ կաթողիկոսի աքսորը եւ ժամանակաւոր վերադարձը Կիլիկիա, նրա ուղեւորութիւնը Եգիպտոս եւ Եւրոպա: Յուշագրութիւնը յաւելեալ տեղեկութիւններ է տրամադրում 1914-1921 թթ. արեւմտահայութեան հանդէպ գործուած ցեղասպանութեան եւ տարագրութեան, հոգեւոր-եկեղեցական կեանքի վերաբերեալ, յիշատակում են ժամանակաշրջանի հայ եւ օտարազգի տարբեր գործիչներ, մասնաւորապէս՝ եղեռնամահ մտաւորականներից մի քանիսը: Մխիթարեանը ներկայացրել է հիմնականում յայտնի փաստեր, սակայն առկայ են նաեւ արժէքաւոր լրացումներ եւ մանրամասներ:

Յուշագրութեան հաւաստիութիւնը ամրապնդում է Սահակ կաթողիկոսի նամակներից եւ հեռագրերից կատարուած բառացի մէջբերումների առկայութեամբ: Մխիթարեանը քարտուղարի իր պաշտօնի բերումով յաճախ ձեռքի տակ է ունեցել կաթողիկոսի գրութիւնների պատճէնները, իսկ երբ չի ունեցել՝ յարկ է համարել նշել այդ մասին:

Օրինակ, խօսելով Գրիգոր Զօհրապի՝ Սահակ կաթողիկոսին յանձնած կտակի մասին, Մխիթարեանը նշել է. «Ժամանակին թէև ընդօրինակած էինք կտակը, բայց դժբախտաբար այսօր չունինք մեր տրամադրութեան տակ: Ոչ ալ՝ Զօհրապի՝ Սահակ կաթողիկոսին գրած նամակը, որով ցաւ կը յայտնէր Կիրակի օրը եկեղեցի չի կրնար երթալուն եւ Ն. Ս. Օծութեան օրհնութիւններէն զրկուած ըլլալուն համար»: Նրա ձեռքի տակ, անշուշտ, եղել է նաեւ «Կիլիկեան կսկիծներ, վաւերագրեր Կիլիկիոյ կաթողիկոսական դիւանէն, 1903-1915» հատորը (Պէյրուսթ, 1927), որտեղ ընդգրկուած է Սահակ կաթողիկոսի թղթակցութիւնների մի մասը:

Յուշագրութեան էջերից յառնում են նաեւ մի շարք արժէքաւոր խորհրդածութիւններ ժամանակի իրադարձութիւնների վերաբերեալ՝ կատարուած հեղինակի կողմից կամ մէջբերուած ուրիշներից: Այսպէս, Սահակ կաթողիկոսը 1914-ին Զաւէն պատրիարքին գրել է. «Բնաւ սխալած չեմք ըլլար, եթէ ըսեմք, թէ ներկայ կառավարութիւնը նախորդ ռեժիմէն շատ աւելի առիթ կուտայ լեցնելու դառնութեան բաժակը»: Եւ կամ, յիշելով Մարաշի կուսակալի բնորոշումը հայ-թուրքական բախումների վերաբերեալ որպէս «հօր ու զաւկի կռիւներ», Մխիթարեանը պարզաբանել է. «Թուրք երբէք զաւակ չէ նկատած հայը, ընդհակառակը, միշտ իբրեւ ստրուկ՝ հալածած, կողոպտած, բռնաբարած եւ սպաննած է...», եւ այլն:

Յուշագրողի լեզուն յաճախ զգացմունքային է, յատկապէս Սահակ կաթողիկոսի խօսքից կատարուած մէջբերումները հարուստ են տարբեր վկայակոչումներով, ոչ միայն աստուածաշնչեան յղումներով, այլեւ հայոց պատմութիւնից կատարուած զուգահեռներով (Սահակ Զորոփորեցի, Վահան Գողթնացի, Ֆրանսիացիների հետ ամուսնացած

կիլիկեան իշխանուհիներ եւ այլն): Շարադրանքում քիչ չեն թուրքերէն բառերը եւ նախադասութիւնները, որ արտացոլում են տուեալ ժամանակաշրջանի արեւմտահայերէնի պատկերը:

Ամփոփելով նշենք, որ Գիւտ Միւթարեանի «Դրուագներ հայկական Գողգոթայէն» աշխատութիւնը լրացնում է Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, Հայոց ցեղասպանութեան եւ գաղթականութեան վերաբերեալ յուշագրական գրականութիւնը: 16 տարի Կիլիկիոյ կաթողիկոսարանում պաշտօնավարած հեղինակը եղել է իրադարձութիւնների կիզակէտում՝ պարբերաբար «առաջին ձեռքից» ստանալով թարմ տեղեկութիւններ կատարուող դէպքերի վերաբերեալ եւ գրառել դրանք՝ վստահելի հիմք ապահովելով իր հետագայ յուշագրութեան համար:

НЕИЗДАННЫЕ МЕМУАРЫ О КАТОЛИКОСЕ КИЛИКИИ СААКЕ II ХАБАЯНЕ

Արշւի Գ. Բախչиян

РЕЗЮМЕ

Публикация представляет неизданные мемуары Кюда Мхитаряна «Фрагменты Армянской Голгофы: 1912-1937». Автор в 1903-1919 гг. работал в Киликийском католикосате Армянской апостольской церкви секретарем католикоса Саака II Хабаяна. В своих мемуарах он описывает как события, связанные с католикосатом Киликии, также с жизнью западных армян (в частности, армян Киликии) в общем, до Геноцида и после него, уделяя особое внимание, «проклятому 1915 году». В мемуарах отражена деятельность Саака II Хабаяна, его посещения разных городов, взятие монастыря Сиса, изгнание католикоса и его временное возвращение в Киликию, и т. д.

Мхитарян приводит дополнительную информацию о геноциде и изгнании западных армян в 1914-1921 гг., об их духовной и церковной жизни, также упоминает имена армянской творческой интеллигенции – жертв Геноцида.

AN UNPUBLISHED MEMOIR ON CATHOLICOS OF CILICIA SAHAK II KHBAYAN

Artsvi H. Bakhchinyan

SUMMARY

The publication presents Kud Mkhitaryan's unpublished memoirs "Episodes from the Armenian Golgotha. 1912-1937." In 1903-1919 the author worked at the Armenian Catholicosate of the Great House of Cilicia as the secretary of the Catholicos Sahak II Khabayan. In his memoirs, he presented both events regarding the Catholicosate of Cilicia and, in general, of Western Armenians (in particular, the Armenians of Cilicia) before and after the Genocide, paying special attention, in his words, to "the accursed 1915." The memoirs reflect the activities of Sahak II Khabayan, his visits to different cities, the capture of the Sis monastery, the expulsion of the Catholicos and his temporary return to Cilicia, etc. Mkhitaryan provides additional information about the genocide and expulsion of Western Armenians in 1914-1921, about their spiritual and church life, also mentions the names of the Armenian creative intelligentsia - the victims of the Genocide.

**Արծուի Բախչինեան, բանասիրական գիտութիւնների
թեկնածու: ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտի աւագ գիտ-
աշխատող: Գիտական հետաքրքրութիւնների շրջանակը ներա-
ռում է հայ համայնքների եւ Սփիւռքի պատմութիւնը, հայ մշա-
կոյթի պատմութիւնը, հայազգի ականաւոր անհատները:**
✉ artsvi@yahoo.com:

Արցւի Բախչինյան, кандидат филологических наук. Старший научный сотрудник Института Истории НАН, Армения. В круг научных интересов входят история армянских общин и диаспоры, история армянской культуры, выдающиеся армянские деятели.

✉ artsvi@yahoo.com.

Artsvi Bakhchinyan,

Candidate of Philological Sciences. Senior researcher at Institute of History of National Academy of Sciences, Armenia. His academic interests include the history of Armenian communities and the Diaspora, the history of culture, prominent Armenian individuals.

✉ artsvi@yahoo.com.

**ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՓՈՐՁԱԳՐՈՒԹԻՒՆԸ.
«ԱՐԵՒԵԼԱՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԷԶՄՄԱՄԻՆ.
ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ»**

Հիմնաբառեր՝ Յակոբ Օշական, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Յովսէփեան, արեւելահայ բանասիրութիւն, գերմանական կրթութիւն, մատենագիտական եւ կենսագրական որոնումներ:

Ключевые слова: Акоп Ошакан, Католикос Великого Дома Киликийского Гарегин Овсепян, восточноармянская филология, немецкое образование, библиографические и биографические поиски.

Key words: Hagop Oshagan, Karekin I Hovsepien Catholicos of Cilicia of the Armenian Apostolic Church, Eastern Armenian philology, Germanic education, bibliographic and biographical searches.

Յակոբ Օշականի եւ Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Առաջին Կաթողիկոսի գիտական ընդհանրական շփման եզրերը, անտարակոյս, շատ են եւ բազմաբնոյթ: Առաջինը, եւ թերեւս գլխաւորը, պէտք է նկատել նրանց՝ գրամշակութային եւ գիտական երեւոյթները համապարփակ եւ սեւեռուն գաղափարի տակ տեսնելու բացառիկ շնորհը: Թերեւս այստեղ է նիւթի հանդէպ երկու գիտական այրերի շահագրգիռ մօտեցումը, այն թելադրանքը, որը բխում է հայագիտական նիւթի հարուստ շերտերից, որ հետապնդում է 20-րդ դարի առաջին կէսի գիտական միտքը:

Այս առումով, անշուշտ, պատահականութեան կնիք չունէր Յակոբ Օշականի՝ արեւմտահայ եւ արեւելահայ գիտական շրջանակներում քիչ ուսումնասիրուած կամ աւե-

լին՝ գրեթէ շրջանցուած վերջին՝ «Արեւելահայ բանասիրութիւնը եւ էջմիածին. Գարեգին Կաթողիկոս Յովսէփեան» աշխատասիրութիւնը՝ գրուած 1947-ին եւ հրատարակուած Յ. Օշականի յանկարծահառ մահից անմիջապէս յետոյ, 1948-ին, Անթիլիասում՝ իբրեւ յարգանքի տուրք խոշորագոյն վիպասանի, քննադատի, գրականութեան պատմաբանի թարմ յիշատակին: Սա հայագիտութեան ածուներում ամէնից բեղուն գրիչ խաղացրած, անկրկնելի հետագիծ թողած գրագէտի վերջին խօսքն էր:

Նա մի փոքր այլ կերպ էր տեսնում նիւթի մատուցման եղանակը. նախ, այն դիտում էր նորագոյն մեկնումով՝ իբրեւ «փորձագրութիւն», այս գրքում արդէն քանիցս կարելի է հանդիպել օտարահունչ «էսսէ» եւրոպական զուգահեռ եզրին: Հաւանաբար, եթէ նաեւ այս գրքի հրատարակութեան գլխին հասցնէր լինել, կ'ուղղորդէր հարցադրման սլաքը: Կը յուշէր, որ այն ոչ միայն աւարտուն չէ, այլ առաջին հերթին ենթադրելի ամբողջական գրքի միայն սկզբնական մասն է: Յաջորդը կամ աւելի ճշգրիտ՝ յաջորդները, պիտի խորացնէին «արեւելահայ բանասիրութիւն» հասկացութեան ներքին տարողութիւնը: Ահա թէ ինչու է շարադրանքի այստեսակ «փորձը» նա դիտում «ամբողջականի» առաջին մաս՝ յուշելով, թէ իր «ընդհանուր խորագիրը... չունի յաւակնութիւն գործադրելու վերլուծական հանդէս մը եւ հասնելու վճռական կշիռի մը շատ ընդարձակ պատմաբանասիրական այն գործունէութենէն, որ մօտաւորապէս դարու մը կեանքը ունի իր ետին, եւ տենդագին, խորահաւատ աշխատանքէ մը վերածուած է սրտագրաւ, շնորհաւէտ գեղեցկութեան մը արդէն»¹:

¹ Յ. Օշական, Արեւելահայ բանասիրութիւնը եւ էջմիածին. Գարեգին Կաթողիկոս Յովսէփեան, Անթիլիաս, 1948, էջ 3:

Ինքն էլ է գիտակցել, որ թերեւս մի փոքր հապճեպ է ստացուել առաջին հատորը. գրել է արագ, որպէսզի հասցնի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի ութսունամեակին: Դա ցոյց է տալիս գրքի կառուցման, շարադրանքի ուղղութիւնը, նիւթերի ներքին անցումների տրամաբանական ոճաւորումը, ինչն այնքան էլ բնորոշ չէ Յ. Օշականին, որի նախասիրութիւնը սովորաբար գիտապատմական մանրամասների խորքային, բժախնդիր ներթափանցման ջանքն է՝ իբրեւ մեթոդոլոգիա կամ առարկայացում:

Իրականում Յ. Օշականի գիտական համապարփակ հարցադրումը պիտի ենթադրէր ենթախորք, վերլուծական յաջորդականութեան սկզբունք: Արդիւնքում ստացուել է Վեհափառ Տիրոջ կեանքի ու ապրած ժամանակի, գործունէութեան իսկապէս համալիր քննութեամբ «էսսէ», ուր պահպանուած են մնում գիտական նկարագրի, արեւելահայ եւ արեւմտահայ հոգեւոր եւ մշակութային համադրումների հարուստ կողմերը:

Միւս հատորներում գրականութեան պատմաբանը թերեւս պիտի ծանրանար արեւելահայ բանասիրութեան վերջին առնուազն հարիւր տարուայ ակունքներին: Ինչո՞ւ այդպէս չվարուեց. առաջինը, ինչպէս նշեցինք, արեւելահայ առաջնակարգ հոգեւորականի ծննդեան մօտալուտ տարեդարձն էր, որին պատշաճօրէն, գիտականօրէն անդրադառնալը գնահատութեան ներքին պահանջ էր նախ իր համար: Անտեսելու էր եւ Յ. Օշականի ստացած կաթուածների հետեւանքների շարունակական «ներկայութիւնը», երբ բժիշկները խստիւ կարգադրել էին օրը մէկ ժամից աւելի գիտական աշխատանքով չզբաղուել: Այս ամէնին զուգընթաց նրան ուղեկցում էր մահուան կանխազգացումը, այն մտավախութիւնը, թէ գուցէ այլեւս շատ բան չէր հասցնելու, էլ չենք խօսում լայն ծրագրի հեռանկարի ծան-

րութեան մասին: Աւելորդ չէ ընդգծել, որ հետզհետէ իրեն կլանող աշխատութիւնը ծրագրում էր գրել նոր մօտեցումով, ոչ այնպէս, ինչպէս շարադրել է «Համապատկեր արեւմտահայ գրականութեան» տիտանական տասնհատորեակը: Նա փորձագրութիւնները դիտել է անցման յաջորդական փուլերի վկայութիւն, ինչպէս յուշում են եւրոպական նորագոյն ընկալումները:

Փորձագրութիւնը կառուցում է ելնելով այն մտադրութից, որ, հակառակ իր երբեմնի գնահատութիւններում լայն տարածում գտած ժխտական տպաւորութեան, «Արեւելահայ բանասիրութիւնը այլեւս համազգային փառք է ու արժանիք»¹: Նա հաստատում է բանասիրական ընդհանուր կրթանքի առաջին հարիւր տարուայ բոլորումի նշածողը, առանց տարակոյսի վստահ է. «Ժրողութիւն է, որ Մանանդեանի Հայաստանը հարիւր անգամ աւելի իրաւ է, քան Չամչեանի, Ալիշանի Հայաստանները: Ու ասիկա բաւ է ինծի»²: Իսկ սա քննութեան մեկնակէտ է իր համար, որովհետեւ հայոց պատմութիւնը ներկայացնելիս Հայաստանը դիտւում է իբրեւ պատմութեան սուբյեկտ, որն աւելին է, քան հեղինակների յաւակնութիւնը:

Ի՞նչն է, որ առանձնացնում է Յակոբ Օշականը Գարեգին Յովսէփեանի ծովածաւալ իմացութեան եւ գնահատումների մէջ. առաջինը եւ խորհրդանշականը գիտական խորունկ ձգտումն է՝ «պատմութեան միջոցներով պատմութեան անցնիլն էր անդին: Այսինքն՝ մշակոյթին: Ու կը կրկնեմ – Քաղաքը կ'անցնի, բայց անկէ կը մնայ արձանիկը»³: Գ. Յովսէփեանը մոռացուող, փոշիացուող քաղա-

¹ Նոյն տեղում:

² Նոյն տեղում, էջ 7:

³ Նոյն տեղում, էջ 111:

քակրթութեան մէջ տեսնում է «արձանիկը», մանրամասնը, այն, ինչ ստեղծուած է յաւերժի համար, այսինքն՝ այն, ինչ ապահովում է քաղաքակրթական նոր մակարդակ: Պատմութեան քննութեան խորքում արժէքն է, յետահայեաց քաղաքակրթութեան պաշտպանութիւնը, որը պահպանում է ազգային նկարագիր, ինչի ակունքների պաշտպանն է հին եւ միջնադարեան մեր դպրութեան գիտակ Յ. Օշականը:

Ինչ վերաբերում է արեւելահայ գեղարուեստական անդրադարձների՝ Յ. Օշականի բերած տարընթերցումներին, ապա դա պէտք է բացատրել գրականութեան նշանակութեան իր յայտնի համակարգի խստահայեաց մշակումով, որը տարածում է գտել արեւմտահայ արժէքների ընկալման վրայ հաւասարապէս:

Սոյն աշխատասիրութեան մէջ արեւելահայ գրականութիւնը քննում է մեկնական տարբեր պատուհաններից: Նախ, գրականութեան պատմութեան պարբերացումի միջանցքներում համոզիչ ոճով հաստատագրում է, որ յատկապէս դարասկզբին Թիֆլիսը հատել է արեւելահայ մշակոյթի «ամէնէն փայլուն շրջանը» ու տալիս է նուիրական անուններ՝ Ղ. Աղայեան, Յովհ. Թումանեան, Ալ. Շիրվանզադէ, Մուրացան եւ ուրիշներ, մասնաւորում Ալ. Շիրվանզադէի «Արսէն Դիմաքսեան» վէպը, 20-րդ դարասկզբի «այդ օրերու հոգեխառնութիւնը» դեռ վէպ չգրած Յ. Օշականը որսում է զարմանալի ջղազրգոնութեամբ, արուեստագէտի բնութագրումով՝ «իր բովանդակ խոռովիչ հրապոյրներուն մէջ»¹, ինչպէս որ զգացել է, օրինակ, Ժամանակի մէջ Լէոյի ստեղծագործական տարերքը¹:

¹ Նոյն տեղում, էջ 37: «Արսէն Դիմաքսեան» վէպի աոիթով Յ. Օշականը նկատելիօրէն շտապում է ժամանակի ընդգրկման տեսակէտից: Այն առաջին անգամ տպագրուել է

Այդ շրջանը թանկ է նաեւ նրանով, որ համընկնում է Գարեգին Յովսէփեանի՝ Երեւանի թեմական դպրոցի տեսչութիւնը ստանձնելու հետ (1901-1903):

Ուսումնասիրութեան մէջ եւս մէկ անդրադարձ Յ. Օշականը կատարում է՝ յատկապէս ընդգծելու համար արեւելահայ արձակի բարձագրութեան ուժեղ կողմը: Նկատի ունենալով ազգային զոյգ գրականութիւններին վերաբերող իր նշանաւոր «Զուգակշիռ...»ների հատորը՝ բացում է որոշ փակագծեր. «Ըսեք եմ տեղ մը վիպասան իսկ անունին համար արժանաւորութիւն չունեցող Պերճ Պոռեանց մը կէս դար վերջը իր մահէն, ոչ միայն գնած է իր անկատարութիւնը, այլեւ անցած երախտաւորներու փաղանգին: Իրեն ժամանակակից, ոճի վարպետներէն (նար-պէյները, թերգեանները, չերազները, քանի մը հատը յիշելու համար) հայ մշակոյթը այսօր անուն իսկ ժառանգած ըլլալու կը դժուարանայ, մինչ Պոռեանցին գործը ժամանակէ մը

ոչ թէ դարասկզբին, այլ 1893-ին, «Մուրն» ամսագրի հիմնադիր խմբագիր Աւետիք Արասխանեանի շրջանով (1889-1900)՝ կանխելով Յ. Օշականի յիշատակած «օրերու հոգեխառնութեան» շրջանը առնուազն տասը տարով: Յ. Օշականի ակամայ շփոթը մեկնալական է ամենայն հաւանականութեամբ ծանօթ շինելով «Մուրն»ի մէջ վէպի վաղ հրատարակութեան գրական փաստին՝ բաւարարուել է Ալ. Շիրվանզադէի՝ ձեռքի տակ եղած երկերի հետեւ դարասկզբի՝ 1903 կամ գոյցէ աւելի ուշ՝ 1930 թուականի նոր հատորեակներով, որոնցում տեղ են գտել «Արսէն Դիմաֆսեան» վէպի վերահրատարակումները:

Հնարատու է, որ Յ. Օշականի վրայ առ ժամանակ իշխել է այն տպատրոփներ, թէ այս վէպում պիտի որ յարանուն ուրուագծուէր Մսէրեանի կեդարի թէկուզ թոյլ աղերսը միջալայրը համախմբել փորձող Գարեգին Յովսէփեան հոգեւորականի ազնիւ նկարագրի փայլին, ներուժին: Բայց դա միայն կարող է թուալ. Մսէրեանը զաղափարատիպ է, ինչպիսին են Դիմաֆսեանը եւ միւսները, եւ հետո է Գարեգին Յովսէփեանի նախատիպ լինելու յաւակնութիւնից:

¹ Տե՛ս Յ. Օշականի խօսքի ծաւալումը՝ «Լէօն՝ ուրիշ վկայութիւն: Ես կ'արձանագրեմ փաստը, առանց զարմանքի» (Նոյն տեղում, էջ 37): Մեր կարծիքով, «փաստի» արձանագրումն է Յ. Օշականի վեպը:

լայն բաժին մը փրկած ըլլալուն բարիքովը մեզ կը ձգէ երախտապարտ»¹:

Ուշագրաւ նկատառում է: Ակներեւ է արեւմտահայ գրագէտի ակնարկածը. ժամանակի մոռացումից լայն բաժին փրկելու առաքելութիւնը ժողովրդական բարքի պաշտպանութիւնն է: Եւ արեւելահայ Պոօշեան վիպագրի ծառայութիւնն այստեղ է անկասկած: Յ. Օշականը չի սխալուում: Անկեղծ է ու շիտակ գնահատութեան մէջ, ուր տաղանդը եւ բարքագրութեան պահանջը, որքան էլ իրարից հեռու, գալիս լրացնում են միմեանց: Սա է արեւելահայ արձակի արժեւորման նախահիմքը: Նոյն տրամաբանութիւնը գործում է միւս գրական սեռերի համար, երբ առանձնացնում է Ղ. Աղայեանի չափածոյի եւ հէքեաթի գործօնը:

Յ. Օշականի գերագոյն հիացմունքը գրքում Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսն է, նրա նուիրումի բացառիկ օրինակը հայոց Եկեղեցուն, հայոց գրին, ձեռագրերին, մշակոյթին առհասարակ: Քննութեան կենտրոնում նրա գիրն է, խօսքը, մանրանկարչութեան քաջիմացութիւնը:

Գարեգին Յովսէփեանը Անիի պարիսպների մօտ հասաւ հոգեւոր գիտակցութեան արշալոյսին, երբ հենց այստեղ, 1888-ին, 21 տարեկանում, ձեռնադրուեց սարկաւազ: Արդէն վեց տարի էր, ինչ դանդաղ, բայց հիմնաւոր խմորւում էր իր աշխարհայեացքը՝ հերոսներ ծնած ծննդավայր Զարդախլուից դէպի Շուշիի թեմական դպրոց, Մոսկուա, Պետերբուրգ, Վիեննա: Գէորգեան ճամբարանում գրականութիւն եւ հոգեբանութիւն դասաւանդած Ս. Մանդինեանի եւ Ղ. Աղայեանի շնորհիւ բացել է եւրոպական գրականութեան, Շէքսպիրի դռները, ինքնուրոյնաբար կողմնորո-

¹ Նոյն տեղում, էջ 103:

շուեւել մարքսիզմից տոլստոյականութիւն, ապա դէպի քրիստոնէութիւն տանող բաւիղներում, ապաւինել է առաջինի գերմանական հակուածութեանը, նրա խորհրդով ուսանել գերմանական համալսարաններում (նախ, Լայպցիգում, ուր արժանացել է փիլիսոփայութեան դոկտորի աստիճանին, ապա՝ Բեռլինում եւ Հալլէում):

Իր փորձագրութեան սկզբունքների մասին խօսելիս Յ. Օշականն անդրադառնում է Գերմանիան գիտականօրէն իւրացնելու փորձառութեանը, որ ձեռք էր բերել նոր քսանը թեւակոխած սարկաւազը: Նախընթաց դարի ութսունականների վերջերն էին: «Գ. Յովսէփեան ուսանողը մեր օրերու բարձրագոյն ուսման սպասարկու տղոց չի նմանիր: Ու անոր Գերմանիան դարձեալ տարբեր է մեր, այսինքն՝ արեւմտահայերուս յղացքներէն: Այդ Գերմանիան չէ, որ անշուշտ ստեղծեց Կոմիտասը: Բայց առանց այդ Գերմանիային Կոմիտաս դժուար թէ ըլլար ան, զոր եղաւ: Պարագան նոյնութեամբ կը կրկնեմ Գ. Յովսէփեանին համար: Գերմանիան անոր շտուաւ անշուշտ իր անհուն հայրենասիրութիւնը, բայց տուաւ այդ հայրենասիրութիւնը կազմակերպուած իմաստութեան մը վերածելու համար ընդունակ մեթոտ մը, իմացական ապաւարատ մը, գործածելու համար արեւելահայ տարազ մը, իր նախասիրանքը, կոշումը պաշտելու (բառը կը գործածեմ հին առումով) մէջ գերմանական աշխոյժ ու լրջութիւն նոյն ատեն»¹:

Գերմանիայից առաջին վերադարձին (1897) երեսնամեայ հոգեւորականը դարձաւ արեղայ: Բեռլինում նա յայտնուեց նաեւ Առաջին Համաշխարհային պատերազմի սկզբին, ուր 1914-ին տարել էր տպագրելու իր այնքան փափաքած ձեռագիր «Հայ մանրանկարչութեան քարտէ-

¹ Նոյն տեղում, էջ 33-34:— Ընդգծումը՝ բնագրում- Ս. Գ.:

սը»։ Արդի՞նքը, հազիւ կարողացաւ մազապուրծ դուրս գալ արեան հրդեհներից, ձեռագիրն անգամ թողեց այդ քաղաքում, ձեռագիր, որի ողիսականը ուրիշ պատմություն է, եթէ նկատի ունենանք, որ կտրել է «լման Անատոլուն»¹։ Երիտասարդ սարկաւագի հոգու վրայ կսկծագին ի՞նչ ապրումներ ու խորհուրդներ են կուտակուել, երբ կորցնում է հնարաւորութիւնը, ինչպէս ասում է Յ. Օշականը, «իր կեանքին տիրական կիրքը կազմող, իր «Քարտէս հայ մանրանկարչութիւն»ը հրատարակելու»²։ Զեւաւորուող Գարեգին գիտնականի աշխատանքային նոր յատակագիծը կազմելու էր Մաղաքիա Օրմանեան Սրբազանի անկրկնելի «Ազգապատում»ը յիշեցնող «Յիշատակարաններ հայ ձեռագրաց» աշխատասիրութիւնը, որ լոյս է տեսել միայն 1951-ին, ինչով սկիզբ է դրուած հայ մշակոյթի պատմութեան ուսումնասիրութեան փուլերին՝ «անհուն մթերք՝ հայոց անցեալէն փրցուած»³։ Արձակագիր եւ ձեռագրագէտ Սիմոն Սիմոնեանի՝ դեռ քառասնական թթ. մօտաւոր հաշուարկներով ձեռագրերի յիշատակարանները, եթէ դրանց յաւելենք մեկնական նօթեր, անհրաժեշտ յաւելուածներ, ընդարձակ ցուցակներ, պիտի որ հասնէին առնուազն հինգ հատորի։

20-րդ դարասկիզբը եւ յատկապէս 1918-1920-ականները ժողովրդի եւ երկրի համար ծանրագոյն ժամանակներ էին, բայց հենց այդ ժամանակաշրջանն էր ողողում մեր ազգային գիտակցութիւնն ու հպարտութիւնը։ Բեռլինում իւրացրած հնագիտական փորձառութիւնը օգնում է նրան աջակից լինելու Նիկողայոս Մառին Գառնիի պեղումների

¹ Նոյն տեղում, էջ 41։

² Նոյն տեղում, էջ 53։

³ Նոյն տեղում, էջ 57։

ընթացքում (1909-1910), Քասախի ակունքներում յայտնաբերելու Տրդատ Ա.ի յունարէն արձանագրութիւնը: Յետագայում պեղումները շարունակել է Արագածի ստորոտին:

Ուրիշ որտե՞ղ է Գարեգին Յովսէփեանը, բառիս առարկայական իմաստով՝ «Սասնայ ծռեր»ի նոր երկու տարբերակների ձեռագրերի մէջ (1892), «Ռոստոմ-Ձալ» ժողովրդական վէպի ու դրա ուսումնասիրութեան արդիւնաւոր ծալքերում (1901-1904), մատենագիտական եւ կենսագրական որոնումներում («Մխիթար Սասնեցի», 1899, «Խոսրովիկ թարգմանիչ», 1903, «Ձագաւանից ժողովրդ», 1913, «Թովմա Մեծոփեցի», 1914, Մխիթար Այրիվանեցուն (1930), Ստեփաննոս Սիւնեցուն նուիրուած գրքերում, որոնցից վերջինը ոգեշնչել է եւ Յ. Օշականին, որ նիւթի շուրջ գրել է «Ստեփաննոս Սիւնեցի» դրաման: Երուսաղէմում 1937-ին հրատարակել է «Հաւուց թառից Ամենափրկիչը եւ նոյնաւուն յուշարձաններ հայ արուեստի մէջ» մենագրութիւնը:

Նրան կարելի էր տեսնել մոսկովեան, պետերբուրգեան, պոլսական, Թիֆլիսեան կրթական լսարաններում, Ս. Էջմիածնայ հոգեւոր հանգիստութիւններում եւ հաւաքներում, գլխաւորապէս գրասեղանների առջեւ: Աւելորդ չի լինի վկայաբերել, որ դարասկզբին «Արարատ»ի խմբագրապետն էր (1907-1908 եւ 1918-1919), Հռիփսիմէի վանահայրը, պարզապէս ամենուր, ամենո՛ւր:

Ծանր տարաւ, երբ փակեցին ճեմարանը 1917-ին, որի տեսուչն էր ինքը: Զվհատուեց, նետուեց պայքարի նոր գոհիճների մէջ. պէ՞տք էր կրթական հանգանակութիւնների հետամուտ լինել, երբ սկսել էր առուփախի շրջանը, պատկառելի գումար ժողովեց եւ տնօրինեց: Եկեղեցին նրա դերը լաւագոյնս արժեւորեց, նոյն 1917-ին օծուեց եպիսկոպոս, նոր հորիզոններ բացուեցին, բայց եւ միեւնոյն

ժամանակ՝ պատերազմների նոր օջախներ չարշրկուած երկրում:

Անասելի բերկրանք ապրեց 1918-ին հաստատուած անկախութեամբ, Մայիս 28-ով: Յետոյ իրեն գտաւ Սարդարապատի ճակատամարտերի հնչնուքի մէջ. պարզ ու անպաճոյճ գրիչ է խաղացնում Յ. Օշականը այդ առթիւ. «Ասոնք ոչ թիւ են, ոչ ալ յիշատակ: Գ. Յովսէփեան Սարտարապատի կռիւներուն մէջ կը տեսնուի բանակի առաջին գիծերուն: Ոչ ըմբանթիզմ է ասիկա, ոչ ալ արկածախնդրութիւն: Անիկա կը գործէր Հայաստանեայց Եկեղեցւոյ գերագոյն անուններուն ցուցմունքովը: Կ'ըսեն թէ խօսած է զինուորներուն հին հերոսներուն լեզուովը, կիրքովը, կարողութեամբը: Մարդիկ անոր այս կեցուածքը կը նմանցնեն Ղեւոնդներու, Սահակներու, Յովսէփներու, Ե. դարու անմահ փաղանգին սրբազան միաւորներէն: Գ. Յովսէփեան չէ սիրած ցոյցը: Լուրջ էր, ու կը խորհիմ թէ պատերազմի առաջին գիծերու վրայ խօսքը, այնքան մահուան սպառնալիքի տակ, ոչ ճառ է, ոչ ալ գրականութիւն»¹:

Այս ամէնի կողքին Գարեգին եպիսկոպոսը ծանր զգացումներով է յիշում Կարսի յանձնումը թուրք զօրավարին (1918): Եթէ հարկ էր, պատրաստ էր ներկայանալ եւ ներկայացաւ անգամ՝ ժողովրդի մնացորդացը փրկելու: Կաթողիկոս դառնալու տարին, 1943-ին, այդ օրը նա համարում էր «կեանքիս ամենադժբախտ օրը»²: Բայց նոյն շրջանում ապրում է նաեւ հպարտութեան, իր բառով՝ իր կեանքի «երջանկութեան ըրպէն»՝ 1925-ին, վաթսուն տարեկանում, բարձրանալով Արագածի կատարը՝ «Լուսաւորչի կանթեղին ի գիւտ»:

¹ Նոյն տեղում, էջ 41:

² Նոյն տեղում, էջ 78:

1921-ին արդէն ուրիշ ժամանակ էր. Խորհրդային Հայաստանը կարիք ունէր գիտական այրերի խօսքին, համալսարանական կրթութեան, պարզապէս Հայաստան վերադարձի ու Հայաստանին ծառայութեան: Տարբեր տարիների շատերը փորձեցին համակերպուել Հայաստանի պայմաններին: Կոստան Զարեանը «ձգեց» մինչեւ քսանականների կէսերը, Զապէլ Յսայեանը եկաւ անհամեմատ ուշ՝ երեսնականների առաջին կէսին, եւ ընկաւ Խորհրդային որոգայթների մէջ, հասաւ մինչեւ աքսորավայր եւ մահուան ճամբար: Հրաւիրուածների մէջ էր եւ Յակոբ Օշականը, որը ընդհանրապէս մերժեց Երեւան գալու հեռանկարը:

1922 թ. Յունիսին էջմիածնում լոյս տեսաւ նոր հիմնուած Հայաստանի գիտական ինստիտուտի «Բանբեր» հրատարակութիւն-գրքի միացեալ Ա.-Բ. համարը՝ 1921-1922 թուագրութեամբ, գիտնական-քարտուղար Երուանդ Տէր-Մինասեանի անմիջական խմբագրութեամբ: Այն, ըստ էութեան, առանձնանում էր ակադեմիական յաւակնութիւններով: Հենց այստեղ էլ երեք հիմնարար ուսումնասիրութիւններով հանդէս է եկել Գարեգին արքեպիսկոպոս Յովսէփեանը¹: Յատկապէս առաջինում նա ընդլայնում է խօսքը Խաղբակեանց (Պոօշեանք) թեմատիկ ծաւալումների վրայ (ամբողջութեամբ առաջին անգամ լոյս է տեսել 1928-1943 թթ.):

1924-ին նրան կրկին վստահեցին հանգանակութեան պատասխանատու գործը, այդ թւում՝ Մայր տաճարի նորո-

¹ Տե՛ս «Բանբեր» Հայաստանի գիտական ինստիտուտի, էջմիածին, 1922, միացեալ Ա.-Բ. համար, տե՛ս **Գարեգին Խալ.**, Ազիզբէկեան Է. նրանց շինարարական գործը, էջ 177-206, Հայ նարտարապետութիւնը Ստրիգովսկու նոր աշխատութեամբ, էջ 282-294, **Կարապետ Կոստանեան**, էջ 314-316:

գութեան համար: 1934-ից Գարեգին եպիսկոպոսը Սփիւռքի հայրապետական նուիրակն էր:

1936-ից ճակատագիրը նրան նետում է ամերիկեան մայրցամաք: Երկու տարի անց հիւսիսամերիկեան թեմի առաջնորդն էր: Աւելի պատասխանատու շրջանը գալիս է 1943-ից, երբ դառնում է Մեծ Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս, եւ բազմապատկուծ են աշխատանքները: Ահա մի հատուած Յ. Օշականին ուղղուած անձնական նամակից. «Ձաքարեանց տան մասին իբրեւ ամբողջութիւն այլեւս չենք կարող գրել, որովհետեւ ձեռքի տակ չունենք մեր հաւաքած նիւթերի ամբողջութիւնը, բայց նրանց մասին գրել ենք մասամբ մեր խաղբակեանք Ա. հատորին մէջ, պիտի գրենք Օրբէլեանց եւ Վաչուտեաններուն նուիրուած հատորներուն մէջ: «Օրբէլեանք»ը յոյս ունիմ 1948-ին հրատարակուած տեսներ»¹:

Գարեգին Յովսէփեանի հիմնական գիտական մտահոգութիւնը սարկաւագ եղած շրջանից մինչեւ կաթողիկոսական գահակալութիւն, Յակոբ Օշականի դիպուկ բնորոշմամբ, եղել է հայ մշակոյթի անծայրածիր պատմութեան ուրուագծումը եւ ջանքը՝ ենթարկելու այն ներքին կանոնակարգման, ուղղելու «Դէպի լոյս եւ կեանք», ինչպէս անուանում է իր ամփոփումի արժէք ստացած աշխատութիւնը (1947), ուր մահից հինգ տարի առաջ ձգտել է «իրարու հաշտ ընծայելու «Գրչութիւն»ն ու «խաղբակեանք»ը: Իսկ դա ձգտում էլ չէ, այլ «տառապանք», Յ. Օշականի նկատառումով՝ «...գործեր ասոնք, որոնք կը մեկնին գրեթէ հակամարտ հոգեդրութիւններէ: Իր սկզբնական յղացման մէջ «Գրչութիւնը» («Գրչութեան արուեստը հին հայոց մէջ», 1913, Վաղարշապատ – Ս. Դ.) դասագիրք մըն է, մի մոռ-

¹ Յ. Օշական, Արեւելահայ բանասիրութիւն..., էջ 58:

նաք: «Խաղբակեանք»ը՝ հայ արուեստին եւ մշակոյթին համար նախանիւթ»¹:

Ի հա՛րկէ, «նախանիւթը» «մոռնալիք» չէր: Այն Սրբազնագոյն Կաթողիկոսի գլուխգործոցն էր, Երուսաղէմի «Դուրեան» մրցանակին արժանացած վերոնշեալ «Խաղբակեանք եւ Պոռեանք հայոց պատմութեան մէջ» եռահատոր կոթողային աշխատասիրութիւնը, որի առաջին գիրքը լոյս էր տեսել դեռ Վաղարշապատում, 1928-ին, երկրորդ եւ երրորդ հատորները՝ Երուսաղէմում, 1942 եւ 1942/1943-ին՝ բնութագրական խորագրերով՝ «Խաղբակեանք կամ Պոռեանք հայոց պատմութեան մէջ. պատմագիտական ուսումնասիրութիւն», «Հոգեւոր կեդրոններ եւ Գլաձորի բարձր դպրոցը Պոռեանց իշխանութեան մէջ»:

Այսօր այն հատում է ութսունամեայ հեռւորութեան, միշտ թարմ ու իմացական բարձրագոյն սահման:

ПОСЛЕДНИЙ ОПЫТ АКОПА ОШАКАНА.
«ЗАПАДНОАРМЯНСКАЯ ФИЛОЛОГИЯ И ЭЧМИАДЗИН.
КАТОЛИКОС ГАРЕГИН ОВСЕПЯН»

Сурен Даниелян

РЕЗЮМЕ

В статье рассматривается последняя книга Акопа Ошакана «Восточно-армянская филология и Эчмиадзин. Католикос Гарегин Овсепян», труд (1948), посвященный 80-летию Католикоса Великого Дома Киликийского Гарегина Овсепяна. Выявлен путь, пройденный высокопоставленным священнослужителем, круг его научных интересов, национальное значение деятельности католикоса. Оценен объединяющий потенциал католикоса как в

¹ Նոյն տեղում, էջ 52:

эпизодах обороны Карса, Сардарapatской битвы, так и в годы высоких обязанностей Католикоса. Автор статьи рассматривает главные структурные вопросы книги Акопа Ошакана, незавершенное впечатление от ее изучения, показывает ту известность, которая сравнима с ролью Комитаса в армянской культуре. В отдельных случаях рядом с именем Гарегина Овсепяна приводятся различные оценки Акопа Ошакана (Прошян, Лео, Ширванзаде и др.), противопоставляются противоречивые суждения о том, что восточно-армянская филология, в целом, не находилась в центре внимания Ошакана.

HAGOP OSHAGAN'S LAST ESSAY: "EASTERN ARMENIAN PHILOLOGY AND ETCHMIADZIN: KAREKIN CATHOLICOS HOVSEPIAN"

Suren Danielyan

SUMMARY

The article examines Hagop Oshagan's last "Eastern Armenian Philology and Etchmiadzin: Karekin Catholicos Hovsepian" critical work (1948) dedicated to the 80th anniversary of the birth of Karekin I Hovsepian Catholicos of Cilicia of the Armenian Apostolic Church.

The path taken by a high-ranking clergyman, the scope of his scientific interests and the national aims of his activity have been taken out. The unifying of the Catholicos was evaluated both in the episodes of the defence of Kars and the heroic battle of Sardarapat, as well as in the years of high commitment of the Catholicos.

The author of the article focuses on the structural main questions of Hagop Oshagan's book, the unfinished impression of the study, shows the recognition, that it is compatible with Komitas's role in Armenian culture. In separate cases, on the occasion of Karekin Hovsepian,

other evaluations of Oshagan are cited along with them (Proshyan, Leo, Shirvanzadeh and others), while opposing the judgments that Eastern Armenian philology was not in Oshagan's scientific focus.

Սուրէն Դանիէլեան, բանասիրական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր: Խ. Աբովեանի անուան ՀՊՄՀ Վաչէ Պարտիզունու անուան հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա դասական դման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտօնակատար, «Սփիւռք» Գիտաուսումնական Կենտրոնի տնօրէն: Գիտական հետաքրքրութիւնների շրջանակը. Սփիւռքի գրական աշխարհի կենսապատումը, արեւմտահայ կրթական խնդիրներ: Կազմել եւ հրատարակել է յիսունի հասնող ժողովածուներ՝ դասագրքեր, ձեռնարկներ, պատմական, գիտական եւ գեղարուեստական հատորներ.

✉ spyurksd1948@gmail.com, danielyansuren21@aspu.am

Сурен Даниелян, доктор филологических наук, профессор. заведующий кафедры новой и новейшей армянской литературы и методики ее преподавания имени Вачэ Партизуни АГПУ имени Хачатура, директор научно-учебного центра «Дiaspora». **Круг научных интересов:** История зарубежной армянской литературы, новейшие проблемы западноармянской образования. Составил и опубликовал более 50 сборников книг, учебников, монографий, художественной литературы.

✉ spyurksd1948@gmail.com, danielyansuren21@aspu.am

Suren Danielyan, Doctor of Philological Sciences, Professor. Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, head of the Chair of New and Modern Armenian Literature and its Teaching Methods after Vache Partizuni, head of the “Spyurk” (Diaspora) Scientific-Educational Center. Scope of Academic interests: History of

Diaspora Armenian literature, Western Armenian educational problems. Collected and published around *50* collections, textbooks, historical, educational and artistic books.

✉ spyurksd1948@gmail.com, danielyansuren21@aspu.am

Օֆեյսա Դարբինյան

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Դպրեվանֆի դերն ու նշանակությունը Գարեգին Ա Հովսեփյանի կաթողիկոսության տարիներին (1943-1952 թթ.)

Հիմնաբառեր` Սփյուռք, Դպրեվանֆ, Գարեգին Ա Հովսեփյան, Լիբանան, Սիրիա, Ամերիկա, Եգիպտոս, «Կենտրոնական ուսումնական խորհուրդ», ուսուցչական համագումար:

Ключевые слова: Диаспора, Дпреванк, Гарегин А. Овсепян, Ливан, Сирия, Америка, Египет, «Центральный образовательный совет», учительская конференция.

Key words: Diaspora, Dprevank, Garegin A. Hovsepyan, Lebanon, Syria, America, Egypt, "Central Council for Education", Teacher's Congress.

1940-1950-ական թթ. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Դպրեվանքը հոգևոր և կրթամշակութային կյանքի կազմակերպման առումով առաջնային դերակատարում է ունեցել Սփյուռքի հայաշատ համայնքներում:

1943 թ. նախաշեմին, նյութական սուղ միջոցների և ուսանողների թվի տարեցտարի նվազման արդյունքում, Դպրեվանքը հայտնվել է լրջագույն մարտահրավերների առաջ: Ստեղծված պայմաններում, երբ 1930-ին հիմնադրված և իր գոյություն տարիներին բուռն գործունեություն ծավալած կառույցը¹ գրեթե փակվելու եզրին էր հայտնվել,

¹ Հիմնադրման պահից մինչև 1935 թ. ընկած շրջանում Դպրեվանֆում իրականացվում էր հնգամյա ուսուցում՝ կրթական երկու ծրագրով: 1935 թ. հուլիսին գալիք ուսումնական տարիների համար ընդունվում է նոր ծրագիր, որի համաձայն Դպրեվանֆը պետք է կենտրոնանար միայն եկեղեցականներ պատրաստելու

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս է ընտրվում Գարեգին Ա Հովսեփյանը (1943-1952 թթ.)¹, ում հաջորդվում է խելամիտ

աշխատանքների վրա: Բացի այդ հնգամյա ուսուցումը վերածվում է յոթնամյայի՝ «Ժառանգաւորաց» և «Ընծայարանի» բաժիններով: Առաջինի դեպքում ուսուցումը տևում էր չորս տարի, և այն հիմնականում իրականացվում էր Սիյոտի երկրորդական վարժարաններին բնորոշ ծրագրերով, իսկ ուսումնառության ավարտին ուսանողները ստանում էին սարկավագի աստիճան: Երկրորդի դեպքում ուսուցումը երկու տարի էր՝ միայն աստվածաբանական ծրագրերով, որի ավարտին ստանում էին ֆանանայի կոչում: Բացի նշված յոթ տարիների, սահմանվում է նաև հավելյալ երկու տարի, որը կոչվում էր «յետընթացաւարտութեան շրջան»: Այս ընթացքում ֆանանայի կամ աբեղայի աստիճան ստացած ուսանողը կարող էր գիտական աշխատանք գրել (վարդապետական քեզ) և հաջող պաշտպանելուց հետո ստանալ վարդապետի կոչում: Նշվածներից բացի որոշվում է նաև կիսով չափ նվազեցնել ուսանողության թիվը, տե՛ս Բ. Եղիաւեան, Ժամանակակից պատմություն Կաթողիկոսութեան հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս, 1975, էջ 582: Դպրեվանքի հիմնադրման և գործունեության առաջին տարիների մասին առավել մանրամասն տե՛ս **Հովհաննիսյան է.,** Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության հիմնումը, 2020, «ՎԷՄ» համանայական հանդես, ԺԲ (ԺԸ) տարի թիվ 2 (70), ապրիլ-հունիս, էջ 227-231:

¹ Գարեգին Ա Հովսեփյանի՝ իբրև գիտնական-հոգևորականի կայացման մասին պատկերացում կազմվելու համար հարկ ենք համարում հակիրճ կենսագրական անդրադարձ կատարել: Նշենք, որ նա ծննդով Արցախից էր: Սովորել է Շուշիի հայոց թեմական հոգևոր դպրոցում: 1882 թվականին ընդունվել է Գևորգյան Հոգևոր ձեմարան: Գարեգին Հովսեփյանը 1897-ին Լայպցիգի համալսարանն ավարտելուց և փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան ստանալուց հետո վերադարձել է Հայաստան, որից հետո հրավիրվել է Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարան՝ որպես աստվածաբանության և հայոց մատենագրության պատմության դասախոս: 1901-1902 թթ. Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկի հորդորով նա նշանակվել է Ներսիսյան հոգևոր դպրոցի հոգաբարձության նախագահ, իսկ 1902-1905 թթ. եղել է Երևանի թեմական դպրոցի տեսուչ: Կրթական արդյունավետ գործունեություն ծավալելու արդյունքում հայոց կաթողիկոսի 1905թ. օգոստոսի 20-ի կոնդակով Գարեգին Հովսեփյանը նանաչվել է Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ, առավել մանրամասն տե՛ս **Մելեքյան Ա.,** Գարեգին Ա. Հովսեփյան. երանաշնորհ հայրապետն ու մեծ գիտնականը. Մաս Ա: Ուսումնառության տարիները (1877-1897 թթ.), «ՎԷՄ», Երևան, 2018, թիվ 1 (61), էջ I-XXIV, նույնի՝ Բարեկրթական ծրագրերը (1897-1917 թթ.), էջ I-XII, նույնի՝ Մաս Գ: Բարեկրթական ծրագրերը գիտակրթական ոլորտում,

ու հեռատես քայլերի իրականացմամբ վերականգնել և կատարելագործել Դպրեվանքի դերն ու նշանակությունը:

Սույն ուսումնասիրությունն մեջ վեր են հանվել Դպրեվանքի առջև ծառացած խնդիրները, ներկայացվել են այդ խնդիրների հաղթահարմանն ուղղված և կառուցյի վերընթացին նպաստող ձեռնարկները: Անդրադարձ է կատարվել Դպրեվանքի ուսումնական ծրագրերին, ուսուցման եղանակներին, ուսուցչական կազմի և ուսանողների ձեռքբերումներին:

Նշենք, որ թեև Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Դպրեվանքի և Գարեգին Ա Հովսեփյանի մասին մի շարք ուսումնասիրություններ են կատարվել, սակայն թեման մինչ այժմ հետազոտողների ուշադրության առանցքում չի հայտնվել:

Գարեգին Ա Հովսեփյանի գործունեությունը Դպրեվանքի հետ կապված պայմանականորեն կարելի է բաժանել երկու ժամանակափուլի:

Առաջին փուլ՝ 1943-1945 թթ.: Այս տարիներին թեև նա Կիլիկիո կաթողիկոս էր հանդիսանում, այնուհանդերձ մի շարք հանգամանքների բերումով մինչև 1945 թ. ապրիլ ամիսն ընկած շրջանում գտնվում էր Ամերիկայում¹: Այդ

«Վեմ», Երևան, 2018, N 3 (63), էջ I-XVI, նույնի՝ Մաս Դ: Ազգային-հասարակական գործունեությունը 1914-1917 թթ., «Վեմ», Երևան, 2020, N 1 (69), էջ I-XVII: Տե՛ս նաև **Ոսկերչեան Մ.**, Վեմափառը: Ն. Ս. Օծոթին Տ. Տ. Գարեգին Ա Յովսեփեան շնորհազարդ կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Պէրոպ, 1951, էջ 9-38:

¹ Գարեգին Ա Հովսեփյանի Ամերիկայում գտնվելու հանգամանքը հակասական կարծիքների ձևավորման պատճառ է հանդիսացել: Ուրոշ տեսակետների համաձայն նրա՝ Ամերիկայից Լիբանան տեղափոխմանը խոչընդոտել են Եկեղեցիի աշխարհամարտով պայմանավորված դժվարությունները: Սակայն, Կիլիկիո կաթողիկոսության միաբան Դեռենիկ վարդապետ Փոլադ-յանի՝ 1944 թ. հոկտեմբերի 19-ին Գարեգին Ա-ին ուղարկված նամակից տեղեկանում ենք, որ շատ լիբանանահայեր չեն համարել, որ պատճառը պատերազմական վիճակն է, «հանգի

տարիներին նրան հաջողվել է հօգուտ Դպրեվանքի արդյունավետ գործունեություն ծավալել, ինչը հետագայում վերջինիս զարգացման ու առաջընթացի ապահովման կարևոր նախահիմք է հանդիսացել: Մասնավորապես, կաթողիկոսը զգալի նյութական միջոցներ է հավաքել, Կալիֆոռնիայում ու Ջիկագոյում և Կիլիկիո աթոռին օժանդակող մշտական հանձնաժողովներ է կազմավորել¹: Հարկ է նշել, որ Գարեգին Ա Հովսեփյանը դեռևս Ամերիկայի հայոց թեմի առաջնորդ լինելու ժամանակներից (1938-1943 թթ.) վայելում էր ամերիկահայերի սերը, հարգանքը և վստահությունը²: Այս հանգամանքը կարևոր դեր էր կատարում վերջիններիս կողմից աջակցություն ստանալու գործում:

Նշված տարիներին կաթողիկոսը եղել է նաև Ալեքսանդրիայում և Երուսաղեմում: Այդ ընթացքում ևս նա հօգուտ Կիլիկիո կաթողիկոսության կարևոր աշխատանքներ է ծավալել³:

կը տեսնեն, որ ուրիշներ, որոնք ոչ մի տեսակետով օգուտ ունին, կը նամբորդեն», տե՛ս Գարեգին Ա Յովսեփեան կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ (1943-1952), հ. Բ, փաստաթղթերու և նիսթերու ժողովածու, հեղինակ և կազմ. Գ. Աւագեան, Ամթիլիաս, 2017, էջ 149: Մինչդեռ նորանշանակ կաթողիկոսը դեռևս 1944 թ հունվարին Կիլիկիո կաթողիկոսարանի տեղապան Խաղ Աջապահյանին ուղղված նամակով մանրամասն ներկայացրել է իր՝ Լիբանան մեկնելու ուղացման պատճառները, որոնց թվում էին ինչպես պատերազմով պայմանավորված դժվարությունները, այնպես էլ էջմիածնի կողմից Ամերիկայի թեմի նոր առաջնորդի հաստատման ձգձգումը, Կիլիկիո արքեպիսկոպոսի աջակցող միությունների հիմնումը և այլն, առավել մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 138, 140-141:

¹ Տե՛ս Գարեգին Ա Յովսեփեան կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ (1943-1952), հ. Բ, էջ 142-144:

² Տե՛ս Ոսկերիչեան Մ., նշվ. աշխ., էջ 52:

³ Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 103-113: Ամթիլիաս մեկնելուց առաջ կաթողիկոսը ԱՄՆ-ում և Եգիպտոսում իր ֆանամայության և գրական գործունեության 50-ամյակի առթիվ տոնակատարություն է կազմակերպում, որոնց ընթացքում մոտ 100 հազար

Երկրորդ փուլ՝ 1945-1952: Այս փուլը բնորոշվում է առավել գործնական ձեռնարկներով: Լիբանանում հաստատվելուց անմիջապես հետո Գարեգին Ա-ն իր ձեռքում է կենտրոնացնում Դպրեվանքի աշխատանքները¹: Սկզբում նա փորձում է վեր հանել այն խնդիրները, որոնք խոչընդոտ են հանդիսացել հաստատության վերընթացին, ապա սկսում է այդ խնդիրների հաղթահարման ուղիներ մշակել:

Պատմաբան է. Հովաննիսյանը, որ անդրադարձել է Դպրեվանքի հիմնադրման և Սիրիայի ու Լիբանանի հայ համայնքներում նրա ունեցած դերակատարման հարցերին, նշում է, որ նյութական անմխիթար պայմանների հետևանքով է նման որոշում կայացվել. «1935 թ. ուսումնական տարվանից, փաստորեն, նոր շրջափուլ է սկսվում Դպրեվանքի համար: Այդ թվականից սկսած՝ բավարար նյութական միջոցների բացակայության պայմաններում Դպրեվանքի ուսանողների թիվը կիսով չափ կրճատվում է... Փաստորեն, գործունեության առաջին հնգամյա շրջանից հետո Դպրեվանքը վերածվում էր հոգևոր ճեմարանի»²:

Գարեգին Ա-ի տեսակետի համաձայն, Դպրեվանքի շուրջ ստեղծված ծանր դրությունը բխում էր ոչ միայն ֆինանսական սնանկությունից, այլ նաև՝ հաստատության մեջ գործող ուսումնական ծրագրերից: Բացի այդ, նա համարում էր, որ միայն հոգևոր կրթության կազմակերպմանն անցնելն էլ իր հերթին էր նպաստել ուսանողների և

դուարի նվիրատվություն է ստանում: Նա այդ գումարն ամբողջությամբ ներդնում է Կիլիկիո Աթոռի և Դպրեվանքի կառիքները հոգալու, տե՛ս ՀԱՍ. (Հայաստանի ազգային արխիվ), ֆ. 409, ց. 1, գ. 4524, թ. 4:

¹ Տե՛ս «Հասկ», Անթիլիաս, մատ-ապրիլ, 1944, էջ 61:

² Հովհաննիսյան է., նշվ. աշխ., էջ 229:

նվիրատուների թվի կրճատմանը¹, քանի որ «թերի է՝ դուրսէն դիտողներուն կողմէ առ հասարակ Դպրեվանքի արդիւնքը միմիայն ձեռնադրեալ եկեղեցականներու թիւով չափելու կերպը...Եթե Դպրեվանքը չհոգայ կրթական այդ ընծայումները, հայ վարժարաններ իրենց ուսուցիչները պիտի ստանան օտար գոլեժներէ կամ զուտ աշխարհիկ ուսուցումով վարժարաններէ, և հետզհետէ պիտի նուազի թիւը հայագիտական, կրօնագիտական ճիւղերու մէջ վարժ ուսուցիչներու և դպրապետներու ինչ որ անուղղակի պիտի թոյլատրէ մեր դպրոցներուն ապագգայնացումը»²: Ըստ էութեան պատճառն այն էր, որ Դպրեվանքի նվիրատուների մեծ մասն ապրում էր աշխարհիկ կյանքով և իր ուշադրութեան առաջին հերթին սեւեռում էր աշխարհիկ կրթութեան կազմակերպմանը, քանի որ նրանց հիմնական նպատակը Սփյուռքի տարբեր համայնքների դպրոցների համար որակյալ ուսուցչական կադրերի պատրաստումն էր:

Սակայն իրականում միայն եկեղեցական կրթութեան կազմակերպմանն անցնելն ունեցել է նաև մեկ այլ միտում: Դպրեվանքի ուսումնական բաժնի ղեկավար Բյուզանդ Եղիայանն իր աշխատութեան մեջ գրում է հայ պատանիների եկեղեցական կրթութեան ստանալու և հոգևորական դառնալու նվազ ցանկութեան մասին: Ընդ որում, եթե ուշադրութեան դարձնենք, ապա կնկատենք, որ այս մտավախութեանը գրեթե միշտ էլ առկա է եղել: Դերենիկ եպիսկոպոսի կողմից 1951 թ. կազմված տեղեկագրերից մեկից հայտնի է դառնում, որ Կիլիկիո կաթողիկոսութեանը փորձում էր հնարավորինս ամեն ինչ անել, որպեսզի

¹ Տե՛ս «Հասկ», յունիս-յուլիս, 1945, էջ 108:

² Անդ, էջ 109:

Դպրեվանքի ուսանողներին ուսումնառության տարիների ընթացքում, նույնիսկ ամռան ամիսներին, իրենց տներ չուղարկի, որով «կարելի պիտի ըլլայ վանական մթնոլորտ ստեղծել և ուսանողութիւնը հեռու պահել աշխարհիկ մտայնութենէ»¹:

Եթե հաշվի ենք առնում նաև այն, որ Սփյուռքում Կիլիկիո կաթողիկոսությունը ծանրակշիռ դերակատարում ուներ հատկապես իր թեմին պատկանող համայնքների հոգևոր կյանքի կազմակերպման գործում², ապա անշուշտ, Բ. Նզիայանի նշված իրողությունը բացասաբար կարող էր անդրադառնալ, քանի որ Սփյուռքի հայ առաքելական եկեղեցին հետզհետե զրկվելու էր կարող ու բանիմաց հոգևորականներից:

«Հասկ»-ի մեջ խոսք է գնում նաև այն մասին, որ Դպրեվանքի գործունեության արդյունավետությունը որոշ չափով կախված է ղեկավար կազմից, և մինչև 1943 թ. ընկած շրջանի ղեկավարության գործունեությունը հետևյալ կերպ է ներկայացվում. «Դպրեվանքը ունեցավ ընտիր ուսանողութիւն, ընտիր ուսուցչութիւն, բայց չունեցաւ ասոնք շրջանակող, զնահատող մտայնութիւն՝ վարիչ դասակարգին մէջ», իսկ նորընծա կաթողիկոսի գործունեության մասին գրվում է, որ «ազնիւ ու թափով շարժումը որ ստեղծուեացաւ նորընտիր կաթողիկոսի շուրջ՝ Ամերիկայէն մինչեւ Եգիպտոս եւ Լիբանան: Վստահ ենք, որ անոր մեծ անձին հմայքը այս բոլոր ազնիւ տրամադրութիւնները պիտի կարենայ վերածել արդիւնաւոր աշխատանքի, իր շուրջ շարժման մէջ դնելով Լա-

¹ Անդ. յունիս, 1951, էջ 211:

² 1950-ական թթ. սկզբին Կիլիկիո կաթողիկոսությունն ուներ չորս թեմեր՝ Հալեպի, Լիբանանի, Դամասկոսի և Կիպրոսի՝ 160 հազար հայությամբ, տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1., գ. 4524, ք. 6:

ւագոյն ոյժերը և բարեգոյն կամեցողութիւնները և կենդրոնացած ոյժով յառաջ տանելու գործելաոճը»¹:

Կարելի է արձանագրել, որ Գարեգին Ա-ն, հաշվի առնելով նաև նախորդ տարիների փորձերը, առավել արդյունավետ ու հեռանկարային էր համարում աշխարհիկ և հոգևոր ուսուցման մեկտեղման տարբերակը: Ուստի, երբ նա Կիլիկիո Աթոռին աջակցելու նպատակով հատուկ կոնդակով դիմում էր սփյուռքահայությանը, նշում էր, որ Կիլիկիո Աթոռը ոչ միայն կրոնաեկեղեցական «մատակարարութեան կենդրոն» է, այլ նաև՝ կրթամշակութային²:

Գարեգին Հովսեփյան կաթողիկոսը գտնում էր նաև, որ հայ երեխաները շատ հաճախ օտար դպրոց են գնում հայկական դպրոցների անկազմակերպության և կրթական բարձր մակարդակի պակասի պատճառով³:

Նշված խնդիրների գիտակցումից ելնելով՝ Կիլիկիո կաթողիկոսարանը 1943-ից սկսած նախաձեռնում է իրականացնել մի շարք փոփոխություններ, որոնց համաձայն՝

ա. Դպրեվանքի վերջին երեք տարիները, որոնց ընթացքում զուտ եկեղեցական ուսուցում էր իրականացվում, պետք է վերածվեին ընդհանուր ուսուցման: Այս դեպքում

¹ «Հասկ», հունիս-հուլիս, 1945, էջ 109.

² Նույն տեղում, օգոստոս-հոկտեմբեր, 1945, էջ 203:

Գարեգին Ա. Հովսեփյանը նմանատիպ մոտեցում է ցուցաբերել նաև Էջմիածնի Գևորգյան հոգևոր նեմարանի տեսուչ եղած տարիներին (1905-1906 թթ. և 1915-1917 թթ.), սակայն արժանացել է հակասական գնահատականների և ֆնստադատությունների, որոնցով էլ հիմնականում պայմանավորված է նրա ընդհատումներով պաշտոնավարումները, այս մասին առավել մանրամասն տե՛ս Մեղիճյան Ա., Գարեգին Ա. Հովսեփյանի ծրագրերը գիտակրթական ոլորտում, էջ IV-XII:

³ «Հասկ», յունիս, 1951, էջ 256:

Դպրեվանքը ծառայելու էր ինչպես հոգևորականներ, այնպես էլ՝ աշխարհիկ ուսուցիչներ պատրաստելու գործին¹:

բ. Կիլիկիո կաթողիկոսության թեմերում պետք է կարևորվեր Դպրեվանքի հանդեպ հետաքրքրության արթնացումը:

գ. Անհրաժեշտ էր զորացնել Դպրեվանքի կրթական գործի կազմակերպման արդյունավետությունը՝ բարեկարգելով ուսումնական ծրագրերը և ավելացնելով մասնագիտական բարձր կարողություններով օժտված ուսուցիչների թիվը²:

Այս ծրագրերի և բարեփոխումների մասին կաթողիկոսը հայտարարում է նաև Ամերիկայի և Եգիպտոսի հայությանը՝ նշված երկրներ իր կատարած այցերի ընթացքում: Սակայն, նա առավելապես ուշադրության կենտրոնում էր պահում Սիրիայի և Լիբանանի հայ համայնքների կրթամշակութային կյանքը, քանզի համարում է, որ «Սիրիոյ և Լիբանանի հայ կրթական գործին պէտք է նայիլ լայն ճակատէ: Ան միայն եկեղեցւոյ կամ դպրոցի կամ այս ու այն կազմակերպութեան զօրացման խնդիր մը չէ, այլ հայ ժողովուրդի բարգաւաճ պահպանման խնդիր: Հայը Սփիւռքի մէջ պէտք է ուշադիր ըլլայ իր տոհմային դաստիարակութեան և ազգային մշակոյթի զարգացման: Եւ այս աշխատանքը կրնան կատարել միայն հայ աւանդութեան ու հայ ոգիին հաւատարիմ դաստիարակներ, որոնք պիտի դուրս գան Դպրեվանքէն»³:

¹ Նշված մտադրության մասին Գաբեզին Ա. հայտարարել է նաև էջմիածնում՝ 1945 թ. սեպտեմբերի 20-ին Միաբանական ընդհանուր ժողովի ընթացքում, տե՛ս **Նդիաեան Բ.**, նշվ. աշխ., էջ 580:

² Տե՛ս «Հասկ», 1945, յունիս-յուլիս, էջ 109, տե՛ս նաև **Նդիայան Բ.**, նշվ. աշխ., էջ 580:

³ Նույն տեղում:

Ուսուցման արդյունավետության ուղղված քայլերը: Դպրեվանքի կրթական ծրագրերի պատասխանատուները ուսանողների գիտելիքների յուրացմանն ու կարողությունների զարգացմանը միտված հատուկ մեթոդաբանություն էին մշակում, որով պետք է առաջնորդվեին թե՛ դասավանդողները, թե՛ ուսանողները: Դպրեվանքի տեսչությունը խրախուսում էր, որ դասախոսները իրենց լսարանային աշխատանքը ընդլայնեին. դասագրքից և դասախոսությունից բացի ուսանողներին մատենագիտական աղբյուրների հենքի վրա փոքրածավալ ուսումնասիրություններ իրականացնելու հանձնարարություն տալին, ինչպես նաև քաջալերեին, որ դասերին զուգընթաց նրանք համապատասխան փորձագիտական և վիճակագրական աշխատանքներ իրականացնեին¹:

Մեծ ուշադրություն էր հատկացվում օտար լեզուների ուսուցմանը, որի նպատակը ոչ միայն ուսանողներին հետագայում տարբեր բարձրագույն հաստատություններում ուսման շարունակության ապահովումն էր, այլև՝ մասնագիտական օտարալեզու աղբյուրներից օգտվելու և գիտական ուսումնասիրություններ կատարելու հմտությունների խորացումը²:

Կաթողիկոսը հատուկ ուշադրություն էր դարձնում նաև դասախոսական կազմի հմտություններին ու կարողություններին: Գարեգին Ա փորձում էր Դպրեվանքում կենտրոնացնել առավել բանիմաց և փորձառու դասախոսների³: Միա-

¹ Տե՛ս «Հասկ» 1950, յուլիս-օգոստոս, էջ 202:

² Տե՛ս նույն տեղում:

³ 1945 թ. մայիսի 12-ին Գաբեգին Ա Հովսեփյանը հատուկ նամակով դիմում է մշակութային գործիչ, մանկավարժ, բանասեր և պատմաբան Հակոբ Թովիշյանին, որ հայտնի է նաև իր «Յուցակ ձեռագրաց Արմաշի վանքին» աշխատությամբ, որպեսզի Դպրեվանքում հանդես գա իր դասախոսություններով, քանի որ, ինչպես ինքն է նշում

ժամանակ նա կրթության կազմակերպման գործում կարևորում էր նաև համեմատաբար քիչ փորձառություն ունեցող, սակայն գիտելիքներով օժտված երիտասարդ մասնագետների դերը:

Դասախոսական կազմի կարողությունները հնարավորինս կատարելագործելու նպատակով նրանք հաճախակի տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններ էին ուղարկվում վերապատրաստումների կամ հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու նպատակով: Օրինակ, հայտնի է, որ դասախոսներից Ռուբեն Պողոսյանն ընդունվում, սովորում և ավարտում է Բելյուլի ֆրանսիական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը՝ հաջողությամբ պաշտպանելով իր դոկտորական աշխատանքը¹:

Շատ հաճախ հենց Դպրեվանքի ուսուցիչներն էին բանախոսությամբ հանդես գալիս: Հրավիրվում էին նաև կիբանանի ռադիոժամերի եթերներին կամ տարբեր մշակութային միջոցառումների²:

«Մեր նպատակն է հաւատարիմների եւ գործակիցների մի շրջան ստեղծել, որպէսզի Անթրիխատում մշակութային-գիտական մի նոր շարժում եւ գործ սկսել կարողանանք», առավել մանրամասն տես «Գարեգին Ա Յովսէփեան կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկոյ (1943-1952)», հտ. Բ, էջ 163-165, 173: Կաթողիկոսն աշխույժ կապերի մեջ էր նաև Ֆրանսիայում հաստատված բանաստեղծ, հրապարակախոս, խմբագիր, թարգմանիչ, կուսակցական և հասարակական գործիչ Առշակ Չոպանյանի հետ, որին ուղղված նամակներում ևս նա հաճախ էր նշում, որ ցանկանում է վամբր եկեղեցական-վաշական կենտրոն լինելուց բացի, լինի գիտամշակութային ակուր, «կրակաբան», ինչի արդյունքում հնարավոր կլիներ նաև ընդարձակել և կարգավորել տպարանի աշխատանքները, «որպէսզի ոչ միայն «Հասկ» այլեւ գիտական աշխատութիւններ հրատարակել կարողանանք, լինի այն միաբանութեան, թէ դրսի աշխատատեղերի...», նույն տեղում, էջ 175, 430-432:

¹ Տես «Հասկ», յուլիս-օգոստոս, 1950, էջ 202:

² Տես նույն տեղում, էջ 204:

Դպրեվանքում շաբաթ օրերը հատկացվում էին գրական-գեղարվեստական երեկույթներին՝ գրականության և գեղարվեստի ներկայացուցիչների առաջնորդությամբ: Հավաքույթի ժամանակ նախ ուսանողներն էին հանդես գալիս գեկույցներով, ապա բանախոսություններ էին տեղի ունենում Բեյրութից հրավիրված մտավորականների կողմից¹:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին կազմակերպվում էր հատուկ մրցանակաբաշխություն, որի ժամանակ մրցանակներով խրախուսվում էին այդ տարվա լավագույն ուսանողները: Կային մի քանի տեսակ մրցանակներ՝ ուսման առաջնության, ուսման երկրորդության, ինչպես նաև՝ արվեստի և ձեռագործ աշխատանքների մրցանակներ՝ կրկին առաջնության և երկրորդության²:

«Կենտրոնական ուսումնական խորհրդի» կազմավորումը և գործունեության հիմնական նպատակները: 1943 թ. Լիբանանի անկախության հռչակումից հետո երկիրը հետզհետե դուրս է գալիս ֆրանսիական ազդեցությունից, որը արտացոլվում է նաև կրթության ոլորտում³: Երկրում գործող կրթական հաստատություններն արդեն իրենց կրթական չափորոշիչները պետք է համապատասխանեցնեին նորանկախ պետության պահանջներին: Բնականաբար, Դպրեվանքը

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս նույն տեղում:

³ 1921-1943 թթ. Լիբանանը ֆրանսիական հովանավորության ներքո էր գտնվում, որի արդյունքում երկրում գործող բոլոր կրթական հաստատությունների ծրագրերը, այդ թվում նաև փոխամասնությունների, համապատասխանեցվում էին ֆրանսիական դեկլարության հետ, տե՛ս **Թյաթյունյան Պ.**, Լիբանանի ժողովրդի ազատագրական պայքար և հայ համայնքը 1920-1990 թթ., Երևան, 1992, էջ 55, 108: **Հովհաննիսյան Ն.**, Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիմադրությունը, Երևան, 1982, էջ 7:

բացառություն չէր կազմելու¹: Քանի որ Դպրեվանքի ուսումնական ծրագրերում բավականին փոփոխություններ էին կատարվելու, իսկ Կիլիկիո կաթողիկոսությանը ենթակա թեմերի վարժարանները որոշ չափով ուղղորդվում էին նրա մշակած ծրագրերով, Գարեգին Ա 1946 թ. հունիսի 26-ին հատուկ շրջաբերականով դիմում է թեմական առաջնորդներին՝ մոտ ապագայում «Կենտրոնական ուսումնական խորհուրդ» ձևավորելու առաջարկով: Այդ խորհուրդը պետք է համընդհանուր կանոնագիր կազմեր բոլոր վարժարանների համար: Նպատակն իրագործելու համար որոշվում է Ազգային առաջնորդարաններին կից գործող ուսումնական խորհուրդներից մեկական պաշտոնական ներկայացուցիչներ ուղարկվեն Կիլիկիո կաթողիկոսարան, որտեղ Դպրեվանքի տեսուչի և ուսուցիչների հետ համատեղ պետք է կազմեն նախատեսված «Կենտրոնական ուսումնական խորհուրդ»-ը: Այսպիսով, նախաձեռնությունն իրականություն է դառնում և 1946 թ. հուլիսի 20-ին Գարեգին Ա նախագահությանմբ տեղի է ունենում խորհրդի առաջին նիստը², որի ընթացքում քննարկվում են նորանկախ Սիրիայի և Լիբանանի կառավարությունների որդեգրած կրթական քաղաքականությունն ու պահանջները, ինչպես նաև տեղի հայերի՝ դեպի Խորհրդային Հայաստան ներգաղթի հետևանքով ստեղծված դրությունը³: Վերջինիս քննարկումը բխում էր այն գիտակցումից, որ շատ հնարավոր էր ներգաղթի արդյունքում համայնքները հայաթափվեին, իսկ տեղում մնացողների շրջանում հետզհետե աճեին ուժացման միտումները, ինչը բնականաբար հանգեցնելու էր նաև հայկական կրթության նկատմամբ հետաքրքրության

¹ Քանզի օրենքը նախատեսված էր Կիբանանի բոլոր կրոնադավանական համայնքների համար, տե՛ս Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 7-9:

² «Հասկ», սեպտեմբեր-հոկտեմբեր, 1946, էջ 290:

³ Տե՛ս նույն տեղում:

նվազմանը: Ուստի, պատահական չէր, որ Կիլիկիո կաթողիկոսը առանձնապես ոգևորություն չէր ցուցաբերում հայրենադարձության կազմակերպմանը¹:

Նիստի վերջում որոշում է կայացվում առաջիկայում կազմակերպել ուսուցչական համագումարներ, որոնց ընթացքում առավել կազմակերպված ձևով առանցքային հարցերի շուրջ կիրականացվեին քննարկումներ²:

Ուսուցչական համագումարները: Այսպես, 1946 թ. սեպտեմբերի 19-21-ը Գարեգին Ա գլխավորությամբ հրավիրվում է ուսուցչական առաջին համագումարը, որտեղ օրակարգային հարցեր են հանդիսանում՝

- Սիրիայի և Լիբանանի ազգային վարժարանների միօրինակ ծրագրերի պատրաստությունը,

- ազգային վարժարանների համար կանոնադրքի կազմումը,

- կրթական ծրագրերի բարելավմանն ուղղված քայլերի մշակումը,

- ուսուցիչների հմտությունների կատարելագործմանը միտված ծրագրերի կազմումը:

Համագումարի ընթացքում մանրամասն քննարկվում են արևմտահայության շրջանում ընդունված և գործնականում կիրառություն ստացած գրեթե բոլոր կրթական ծրագրերը՝ առանձնացնելով կարևոր դրույթներն ու ձեռքբերումները: Քննարկվում են նաև Խորհրդային Հայաստանում գործող ծրագրերը³:

¹ Տե՛ս Դարբինյան Օ., Կրթամանհայերի հայրենադարձության առանձնահատկությունները, արդյունքներն ու հետևանքները, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2021, հ. 2, էջ 153:

² Տե՛ս «Հասկ», սեպտեմբեր-հոկտեմբեր, 1946, էջ 290:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 292:

Համագումարների ընթացքում օրակարգային հարցերի քննարկումից դուրս տեղի էին ունենում նաև ուսուցման արդյունավետությանը նպաստող մեթոդաբանական հատուկ դասախոսություններ հետևյալ ուղղություններով՝ կրոնական դաստիարակություն, ցուցողական դասեր և ազգային պատմության դասավանդման մեթոդաբանություն¹:

Կազմակերպվող դասընթացներին, սեմինար-քննարկումներին ներկա էին լինում ինչպես Դպրեվանքի դասախոսները, այնպես և Սփյուռքի տարբեր համայնքների հայկական կրթօջախների ուսուցիչները, որը նաև շատ կարևոր էր փորձի փոխանակման առումով²: Տեղին է մեջբերել Դպրեվանքի տեսչության այն գրությունը, որ «Այս համագումարները վիճելու, ժամանակ մը անցնելու և ապա վճիռներ արձակելու համար չեն, այլ տեսակ մը դպրոց ուր ներկաներ իրարմէ կը սորուին ինչ որ չեն գիտեր, մութ կէտեր կը լուսաբանուին, թիրիմացութիւններ կը հարթուին, և մտածումի միատեսակութիւն մը կստեղծուի»³:

Բացի նշված համագումարներից, տարեկան 7 անգամ տեղի էին ունենում նաև մանկավարժական ժողովներ, որոնց ընթացքում քննարկում էին կարգապահական, ուսումնական, առողջապահական և այլ խնդիրներ⁴:

Դասագրքերը: Դպրեվանքում ուսուցանվում էր գրաբար, աշխարհաբար, հայ մատենագրության պատմություն, ընդհանուր պատմություն, հայոց պատմություն, հայ եկեղեցու պատմություն և եկեղեցական երաժշտություն, արդի հայ գրականություն, ընկերաբանություն, ծիսագի-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 254:

² Տե՛ս նույն տեղում, էջ 255:

³ Նույն տեղում:

⁴ Տե՛ս նույն տեղում, յուլիս-օգոստոս, 1946, էջ 230:

տություն, համեմատական դավանաբանություն, տոմարագիտություն, հոգեբանություն, օտար լեզուներ¹:

Միջնակարգ ուսուցման դասարանները (1-4) հիմնականում ունեին տպագրված դասագրքեր, իսկ այն առարկաներից, որոնցից չկային տպագրված դասագրքեր, օգտագործում էին ուսուցիչների կողմից պատրաստված ձեռագիր նոթատետր-դասագրքերը²: Ընծայարանի բաժնի դասերը իրականացվում էին միայն ուսուցիչների դասախոսությունների հիման վրա³:

Սակայն ձեռագիր դասագրքերի կազմումը բավականին մեծ ժամանակ էր պահանջում: Բացի այդ, նման դասագրքերի գործածումը որոշ դժվարություններ էր առաջացնում: Խնդիրները մեղմելու համար 1950-ից սկսած Դպրեվանքի տեսչությունը որոշում է ձեռագիր գրքերը հատուկ տպագրական սարքերով բազմացնել, որպեսզի բոլոր ուսանողներին էլ հասանելի լիներ⁴:

Օժանդակություններ: Երբ Դպրեվանքը 1945 թ.-ից սկսած կազմակերպչական առումով տեսանելիորեն սկսում է զարգացում ապրել և հաջողություններ գրանցել, Կիլիկիո կաթողիկոսությունը որոշում է այդ մասին վկայող հատուկ տեղեկագրեր ու գրություններ կազմել և ուղարկել սփյուռքահայ համայնքներ: «Հասկ»-ում հետևյալ կերպ է ներկայացվում, որ «ամենէն առաջ պէտք է արագ եւ կենդանի կապ հաստատել բարերարներու հետ, զանոնք տեղեակ պահել եւ խանդավառել Դպրեվանքի գործունէութեամբ: Այդպիսով բարեկամներու օժանդակութիւնը ոչ միայն կը դառնայ տեւական, այլ նորանոր բարերարներ

¹ Տե՛ս նույն տեղում, օգոստոս-հոկտեմբեր, 1945, էջ 189:

² Տե՛ս նույն տեղում, յուլիս-օգոստոս, 1950, էջ 202:

³ Նույն տեղում:

⁴ Տե՛ս նույն տեղում:

կավելանան հիներուն վրայ»¹: Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա քաջ գիտակցում էր, որ սփյուռքահայերի կողմից վստահության արժանանալու և աջակցություն ստանալու համար նախ և առաջ անհրաժեշտ է ներկայացնել Դպրեվանքի ծրագրերը, նպատակները, գրանցած արդյունքները, ապա նոր անդրադառնալ նյութական միջոցների տրամադրման հարցերին: Բացի նշված տվյալների տրամադրմանը, Կիլիկիո կաթողիկոսն անձամբ այցելում էր տարբեր համայնքներ, հանդիպում էր տեղի հայերին, ներկայացնում էր կատարված և կատարվելիք աշխատանքները, հետաքրքրվում էր հայության խնդիրներով, հատուկ ուշադրություն էր դարձնում նրանց կրթամշակութային կյանքի կազմակերպման աշխատանքներին, ապա փորձում էր տարաբնույթ եղանակներով կապեր ստեղծել տվյալ համայնքի և Դպրեվանքի միջև²:

Բացի այդ, կաթողիկոսի կողմից Նյու-Յորքից մինչև Կալիֆոռնիա գտնված բոլոր հայաշատ քաղաքներում կազմակերպվում էին դասախոսություններ, որոնց ընթացքում կատարվում էին հանգանակություններ և կազմավորվում էին «Կիլիկիո կաթողիկոսարանի օժանդակ միության» նոր հանձնախմբեր: Նմանատիպ հանձնախմբեր են ձևավորվում նաև Անգլիայի, Ֆրանսիայի, Եգիպտոսի հայաշատ տարբեր վայրերում³:

¹ Նույն տեղում, ապրիլ, 1949, էջ 93:

² Տե՛ս «Գարեգին Ա Յովսէփեան կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ (1943-1952)», հտ. Բ, էջ 263-264, 275-278, 431, 493:

³ Առավել մանրամասն տե՛ս «Հասկ», ապրիլ, 1949, էջ 102-103, 106: Կաթողիկոսը նշված համայնքներ այցելություններ կատարելիս առաջնային էր համարում նաև երիտասարդների հետ հանդիպումներ անցկացնելը, օգտակար խորհուրդներ տալը, որոնք վերջիններիս կողմից մեծ հետաքրքրությամբ ու ոգևորությամբ էր ընդունվում, տե՛ս «Արեւ», Կահիրե, 10.09.1947, էջ 2, նույն տեղում, 11.09.1947, էջ 2:

Կաթողիկոսը հատուկ ուշադրություն էր դարձնում նաև Սփյուռքում բնակվող հայության կողմից կազմավորված հայրենակցական միություններին¹, քանի որ գիտակցում էր, որ վերջիններս գործունե կապեր էին պահպանում նաև սփյուռքահայ այլ համայնքներում հաստատված իրենց հայրենակիցների հետ և առավել ոգևորությամբ հանգանակություններ կտրամադրեին: Այսինքն, Կիլիկիո կաթողիկոսարանը դառնում է կապող օղակ տարբեր երկրներում հաստատված հայրենակիցների միջև², ինչը դրական հանգամանք էր նաև եկեղեցու նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու առումով:

1940-ական թթ. վերջերին Սփյուռքում Դպրեվանքի գործունեությունը մեծ հնչեղություն է ստանում, որի արդյունքում հայ համայնքներում գործող մի շարք կառույցներ,

Կարևոր է նշել, որ Գարեգին Ա-ն հատուկ նախագծով հստակեցրել էր նաև օժանդակությունների կիրառման ուղղությունները: Նույնիսկ հայտարարում էր, թե բարերար կարելի էր դառնալ այն դեպքում, երբ անհատը կամ կազմակերպությունը նախապես համաձայնություն է հայտնում, որ իր կողմից տրամադրված միջոցները պետք է օգտագործվեն նշված ուղղություններով, մանրամասն տե՛ս «Գարեգին Ա Յովսեփեան կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ (1943-1952)», հտ. Բ, էջ 394-395, 397-398: Այս շրջանում Դպրեվանքին աջակցություն է ցուցաբերել նաև 1942 թ. Եգիպտոսում հիմնված «Հայ ազգային հիմնադրամ»-ը, տե՛ս **Ճափուճեան Ա.**, Պատմություն հայ ազգային հիմնադրամի (1942-1982), Գահիրե, 1984, էջ 250-256:

¹ Տե՛ս «Հասկ», մարտ-մայիս, 1945, էջ 91: Գարեգին Ա-ն հաջողվում է կապեր հաստատել նաև Հարավային Ամերիկայում հաստատված հայերի հետ: Նրանց ևս մանրամասն տեղեկություններ է հաղորդում Կիլիկիո կաթողիկոսության գործունեության նպատակների և ձեռքբերումների մասին, տե՛ս **Գարեգին Ա Յովսեփեան կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ (1943-1952)**, հ. Բ, էջ 487-491:

² Տե՛ս «Գարեգին Ա Յովսեփեան կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ (1943-1952)», հտ. Բ, էջ 264, 292, 294-296: Ամերիկահայերը, ոգևորվելով Կիլիկիո կաթողիկոսության արգասաբեր աշխատանքով, հավելյալ գումարներ են տրամադրում ինչպես կիբանանում, այնպես էլ Սիրիայում հաստատված իրենց հայրենակիցներին աջակցելու նպատակով: Այդ հատկացված միջոցներից օգնություն է ցուցաբերվում նաև Եռուսաղեմի հայությանը, տե՛ս «Հասկ», ապրիլ, 1949, էջ 103:

կազմակերպություններ և անհատ բարերարներ Դպրեվանքին աջակցություն ցուցաբերելու պատրաստակամություն են հայտնում¹: Այսպիսով, 1949 թ. դրությամբ կառույցն ուներ 40-ից ավելի բարեգործներ և Կիլիկիո կաթողիկոսարանին օժանդակող 20 հանձնախմբեր²:

Արդյունքները: Գարեգին Ա Հովսեփյանի ձեռնարկած բարեկարգումների արդյունքում Դպրեվանքի ուսանողների թիվը նախորդ տարիների համեմատ զգալիորեն աճում է՝ 20-25-ից հասնելով 72-ի: Նրանք Սփյուռքի տարբեր համայնքներից էին, հիմնականում Լիբանանից, Սիրիայից, Եգիպտոսից, Պաղեստինից, Կիպրոսից: Փոքրաթիվ ուսանողներ կային նաև Թուրքիայից (Կ. Պոլիս) և Իրաքից, ովքեր ուսումնառությունն ավարտելուց հետո շարունակել են աշխույժ գործունեություն ծավալել իրենց համայնքներում: Այն ուսանողները, որոնք ուսումը շարունակելու ցանկություն են հայտնել, ուղարկվել են եւրոպական և ամերիկյան բարձրագույն համալսարաններ, որից հետո

¹ Տե՛ս «Գարեգին Ա Յովսէփեան կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ (1943-1952)», հտ. Բ, էջ 500: Նշենք, որ Կիլիկիո կաթողիկոսարանին մեծապես աջակցել է Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, «Կիլլապի Կիլպէնկէան» հիմնադրամը, ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4526, ք. 3, տե՛ս նաև «Գարեգին Ա Յովսէփեան կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ (1943-1952)», հտ. Բ, էջ 576-578, 629, 630-631: Հետաքրքրական է նշել, որ ԱՄՆ Թեֆզաս նահանգի Արինգթոն ֆաղաֆում գործող «Հայ կին» ակումբի կանայք ցանկություն են հայտնել կառույցի միջոցներով Դպրեվանքում սան պահել, տե՛ս նույն տեղում էջ 332: Դպրեվանքի սաներն աջակցություն են ստացել նաև ԱՄՆ-ում գործող «Վարդանանց ասպետներ» կազմակերպության կողմից՝ վերջինիս ավագ սպարապետ Ալեք Մանուկյանի գլխավորությամբ, տե՛ս նույն տեղում, էջ 333, նաև՝ Ալեք Մանուկյան.

<http://vardanang.y-su.am/ալեք-մանուկյան/>, մուտքը՝ 13.08.2022:

² Տե՛ս «Հասկ», յունիս, 1949, էջ 185:

կրկին վերադարձել են և իրենց գիտելիքները ներդրել համայնքային կյանքի կազմակերպման գործին¹:

Դպրեվանքի ողջ ուսուցչադասախոսական կազմը՝ առաջնորդվելով այն սկզբունքով, որ «...Աշակերտներուն թիւը բազմացնել Տեսչութեան եւ ուսուցիչներու համար չի նշանակեր անշուշտ միայն քանակի սիրոյն ոեւէ աշակերտ ներս առնել, այլ ընդհակառակը մասնաւորաբար անոնց որակը բարձրացնել: Պահել ու դաստիարակել միայն ու միայն այն աշակերտները, որոնք մտքով, հոգով ու նկարագրով յարմարութիւն եւ կոշում ունին հոգեւոր ասպարէզին: Այս կերպով սրտեռանդն կը հաւատանք որ ամեն տարի պիտի կարողանանք հայութեան հոգեւոր եւ մտաւոր անդաստանը պտղաբերող մշակներ հասցնել»², հաջողել է Դպրեվանքում կրթական բարձր մակարդակ ապահովել:

Օգտվելով Կիլիկիո կաթողիկոսութեան հրապարակած տվյալներից՝ գծապատկերի միջոցով ներկայացրել ենք 1943-1952 թթ. Դպրեվանքի ուսանողների թիվը.

Ուսումնական տարի	1943-1944 թթ. ³	1944-1945թթ. ⁴	1945-1946 թթ. ⁵	1946-1947 թթ. ⁶
Ուսանողների թվաքանակ	24	33	40	40

Աղյուսակ 1.

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4524, ք. 6: Տե՛ս նաև «Հասկ», նոյեմբեր, 1949, էջ 340:

² «Հասկ», յունիս, 1949, էջ 185:

³ Տե՛ս **Եղիաեան Բ.**, նշվ. աշխ., էջ 586:

⁴ Տե՛ս «Հասկ», օգոստոս-հոկտեմբեր, 1945, էջ 189:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 190:

⁶ Տե՛ս նույն տեղում, սեպտեմբեր-հոկտեմբեր, 1947, էջ 298:

1947-1948 թթ. ¹	1948-1949 թթ. ²	1949-1950 թթ. ³	1950-1951 թթ. ⁴	1951-1952 թթ. ⁵
42	50	72	52	44

Աղյուսակ 2.

Եզրակացություն: Ամփոփելով կարող ենք արձանագրել, որ Դպրեվանքը 1940-1950-ական թթ. վերածվել էր ոչ միայն Լիբանանի հայ համայնքի, այլ նաև Սփյուռքի մի շարք համայնքների ներուժի կենտրոնացման և հայապահպանության կենսական կարևոր օջախի, իսկ Դպրեվանքի շրջանավարտների մեծ մասը դարձել են կրթության մշակներ և նվիրյալ հոգևորականներ, ովքեր բավականին բուռն գործունեություն են ծավալել գրեթե ողջ Սփյուռքում՝ զարկ տալով տեղի կրթամշակութային կյանքի աշխուժացմանը:

РОЛЬ И ЗНАЧЕНИЕ ДПРЕВАНКА КАТОЛИКОСА ВЕЛИКОГО ДОМА КИЛИКИЙСКОГО ГОДЫ КАТОЛИКОСАТА ГАРЕГИНА А ОВСЕПЯНА (1943-1952ГГ.)

Офелия Дарбинян

РЕЗЮМЕ

1940-1950-е годы. Дпреванка Католикоса Великого Дома Киликийского играет первостепенную роль в армянонаселенных общинах диаспоры в плане органи-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 299, տե՛ս նաև Տէմիրճեան Վ., Օրագիր Անդրէաս եւ Թադէոս Արքեպիսկոպոսաց եւ Պատմութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանուց 1930-1960, Պէյրուք, 1960, էջ 107:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում, նույնբեր, 1949, էջ 338, 340:

⁴ Տե՛ս նույն տեղում, հունիս, 1951, էջ 209:

⁵ Տէմիրճեան Վ., նշվ. աշխ., էջ 117:

зации духовной и образовательно-культурной жизни. В 1943 году в результате скудных материальных ресурсов и снижения количества студентов из года в год Дпреванк столкнулся с серьезными проблемами. В сложившихся условиях, когда строительство, основанное в 1930 году и развернувшее активную деятельность в годы своего существования, оказалось почти на грани закрытия, Католикосом Великого Дома Киликийского избирается Гарегин А. Овсепян (1943-1952), кому удастся путем осуществления разумных и дальновидных шагов восстановить и улучшить роль и значение Дпрванка.

В данном исследовании были освещены проблемы, с которыми сталкивается Дпрванк, представлены пособия, направленные на преодоление этих проблем и способствующие развитию структуры. Были затронуты учебные программы Дпреванка, методы, преподавательский состав и успеваемость учащихся. Следует отметить, что хотя Великий Дом Киликии является католикосатом об Овсепяне был проведен ряд исследований, но эта тема до сих пор не затрагивалась и не попала в поле зрения исследователей.

DPREVANK OF THE CATHOLICOSATE OF CILICIA IN THE YEARS OF THE CATHOLICOS OF GAREGIN A. HOVSEPYAN (1943-1952)

Ofelya Darbinyan

SUMMARY

In the 1940s-1950s, Dprevank of the Catholicosate of the Great House of Cilicia played a leading role in the formation of spiritual and educational life in the Armenian communities of the Diaspora.

At the beginning of 1943, as a result of the limited financial resources and the year-by-year decrease in the students'

number, Dprevank faced serious challenges. Under the created conditions, when the structure, founded in 1930 and active during its existence, was almost on the verge of closure, Garegin A. Hovsepyan (1943-1952) was elected Catholicos of the Great House of Cilicia, who managed to restore and improve the role and importance of Dprevank by taking reasonable and far-sighted steps. In this study, the problems faced by Dprevank were highlighted, the manuals aimed at overcoming these problems and contributing to the progress of the structure were presented. Reference was made to the educational programs of the school, teaching methods, the achievements of the teaching staff and students.

It should be noted that although a number of studies have been done about Dprevank and Garegin A. Hovsepyan of the Catholicosate of Cilicia of the Great House, but this topic has not been the focus of researchers' attention so far.

Օֆելյա Դարբինյան, ԵՊՀ պատմության ֆակուլտետի սոցիոլոգիտության ամբիոնի մագիստրոս: Դիտական հետաքրքրությունների շրջանակը. Հայկական սոցիոլոգիական և աշխարհագրություն.

✉ ofelya.darbinyan@ysumail.am

Офелия Дарбинян, Магистрант кафедры диаспороведения исторического факультета ЕГУ. Область научных интересов: история и география армянской диаспоры. ✉ ofelya.darbinyan@ysumail.am

Ofelya Darbinyan, MA student of the Department of Diaspora Studies, YSU History Faculty. The Field of Scientific Interests: History of the Armenian Diaspora.

✉ ofelya.darbinyan@ysumail.am

Աեւիտա Դոկումենտան

ՖՐԱՆՍԻԱՑԻ ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԱԳԵՏ ՎԻԿՏՈՐ ԼԱՆԳԼՈՒԱՆ ՍՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմնաբառեր՝ Վիկտոր Լանգլուա, Նապոլեոն Երրորդ, Սիս, Սսի մատենադարան, կաթողիկոս, Սսի գրացուցակ, ոչնչացում:

Keywords: Victor Langlois, Napoleon III, Sis, Sis manuscript repository, Catholicos, catalog of Sis manuscripts, destruction.

Ключевые слова: Виктор Ланглуа, Наполеон III, Сис, хранилище рукописей Сиса, Католикос, каталог рукописей Сиса, уничтожение.

Ներածություն

Վիկտոր Լանգլուան ԺԹ դարի նշանավոր ֆրանսիացի հայագետներից է, որը շնայած իր կարճատև կյանքին (1829-1869 թթ.), թողել է հայագիտական մեծարժեք ժառանգություն: Նրա երազանքն էր հայ միջնադարի պատմիչների երկերը հրատարակել ֆրանսերեն՝ դրանց կցելով համապատասխան առաջաբան և գիտական ծանոթագրություններ: Ցավոք, նա հասցրեց իր ծրագրած հայ պատմիչների ժողովածուից հրատարակել միայն երկու ստվար հատորներ, որոնցում Ոսկեդարի (Ե դար) պատմիչների և մատենագիրների գործերն են:¹

Լանգլուայի հայագիտական հետազոտությունները բազմաբնույթ են: Նա հրատարակել է Կիլիկյան հայ թա-

¹ V. Langlois, Collections des historiens anciens et modernes de l'Aeménie, t. I, Paris, 1867, t. II, Paris, 1869.

գավորների հրովարտականները¹։ Մեծ եռանդով լծվել է Կիլիկյան Հայաստանի պատմությունը հնագիտական փաստերով, աղբյուրագիտական պրպտումներով ամբողջացնելու գործին և հասել է իր նպատակին։ Նա գիրք է գրել Վենետիկի Մխիթարյան Միաբանության պատմության մասին, ուր ուրվագծերով ներկայացված են հայ ժողովրդի պատմությունը, գրականությունը, Միաբանության կատարած դերը ԺԸ-ԺԹ դարերում։ Այդ հետազոտության հիման վրա ամբողջական պատկերացում կարելի է կազմել հայ ժողովրդի կյանքում «Դպրության՝ այդ հանրապետության» խաղացած դերի և նշանակության մասին։ Վ. Լանգլուան կարևոր փաստաթղթեր է հայտնաբերել Կիլիկիայի հայ թագավորների դիվանագիտության վերաբերյալ՝ շրջելով եւրոպական հարուստ գրադարաններն ու դիվանները՝ Թուրին, Ճենովա, Վենետիկ, Ֆլորենցիա, Պիզա, Փարիզ, Բեռլին, Բարսելոնա և այլուր։ Քննախույզ ձևով ներկայացրել է ոչ միայն Կիլիկիայի հայ թագավորների հրովարտականները, այլև նշանավոր վանքերի ու եկեղեցիների արձանագրությունները։

Վիկտոր Լանգլուան հայ դրամագիտության երախտավորներից է և այդ ճյուղի հիմնադիրը ֆրանսիական դրամագիտության մեջ։ Նա շարունակական կապի մեջ էր իր ժամանակի տարբեր երկրներում գործող նշանավոր հայագետների հետ, նրա գրքերն ու հոդվածները լույս էին տեսնում ոչ միայն Փարիզում, այլև Պետերբուրգում, Վենետիկում և այլուր։ Նա մի շարք երկրների գիտությունների ակադեմիաների անդամ էր, պատվավոր շքանշանների ասպետ։ Հայագետը շարունակ շեշտում էր միջնադարյան հայ

¹ V. Langlois, Trésor des chartes d'Arménie ou cartulaire de chancellerie royal des Aoupiéniens, Venis, 1863.

գրականության համամարդկային արժեքը, Հայաստանը համարում էր մարդկության հնագույն քաղաքակրթության օրրաններից մեկը, որն իր ներդրումն ունի համընդհանուր մշակույթի ու գրականության մեջ:

Հայագետը հիանալի նկարագրել է Կիլիկիայի Սիս մայրաքաղաքի հնագիտական արժեք ունեցող հուշարձանները՝ արքայական պալատը, եկեղեցիները, պաշտպանական պարիսպները, արձանագրությունները: Նրա բոլոր հետազոտությունների մեջ խոր ցավ կա մահմեդականների՝ հատկապես թուրքերի կողմից հայ մշակույթը, գրականությունը ոչնչացնելու փաստերի առիթով:

Վ. Լանգլուան հատուկ ուսումնասիրություն է նվիրել Մովսես Խորենացուն: Նա համոզված է, որ Խորենացին 5-րդ դարի պատմիչ է, նրա «Հայոց պատմության» արտասովոր լինելու մեջ տեսնում է ինքնատիպ վավերականություն և համոզված է, թե հետագա հայագետները նրան կկոչեն Մեծ պատմիչ¹: Կարևոր ծառայություն է մատուցել Վ. Լանգլուան հայ գրականությանը՝ հայերեն թարգմանելով 11-րդ դարի ակնառու պետական գործիչ Գրիգոր Մագիստրոսի 83 թղթերի համառոտ բնագրերը՝ կցելով համապատասխան գիտական հետազոտություն²:

Անշուշտ, Վ. Լանգլուայի հետազոտություններում կան վրիպակներ, սխալ եզրակացություններ, սակայն դրանք բնավ չեն ստվերում կատարածի վիթխարի նշանակությունը, նա հայ ժողովրդի ճշմարիտ բարեկամներից էր:

Հատկապես պետք է շեշտել նրա ջանքերը հայ դիվանագիտության 200-ամյա ընթացքը (ԺԳ-ԺԴ դդ.) ուրվագ-

¹ Ա. Դավթաճյան, Վիկտոր Լանգլուան հայագետ, Երևան, 2003, էջ 114:

² V. Langlois, *Memoire sur la vie et les écrits du prince Grégoire Magistros, duc de la Mésopotamie, auteur Arménien du XIe siècle*, Paris, 1869.

ծելու և փաստավորելու գործում, որ հիմք պետք է հանդիսանան մեր օրերում այդ բնագավառում մի առանձին ուսումնասիրության ստեղծման համար:

Ճանապարհորդություն դեպի Սիս

Վիկտոր Լանգլուան Ֆրանսիայի Նապոլեոն Երրորդ կայսեր հանձնարարությամբ և նյութական աջակցությամբ 1852-1853 թվականներին այցելում է Կիլիկիա, Փոքր Հայաստան՝ հնագիտական հետազոտություններ կատարելու: Նա ընդամենը քսաներեք տարեկան էր, սակայն ուներ իր գործի կարևորության գիտակցումը և անսահման նվիրվածությունը՝ իրեն վստահվածը հնարավորին չափ անթերի կատարելու: Այդ հետազոտման արդյունքներին նա անդրադարձավ իր կարճատև, սակայն գիտական առումով բեղուն ու օրինակելի կյանքի տարբեր տարիներին¹:

Գրական, ազգագրական, հնագիտական, բանասիրական, պատմական առումով մեծարժեք է Վիկտոր Լանգլուայի «Ճանապարհորդություն դեպի Սիս» աշխատությունը:

1852 թվականի նոյեմբերի 20-ին Վիկտոր Լանգլուան թողել է Ադանան և մեկնել Կիլիկիայի հյուսիսը, որտեղ պետք է տեսներ միջնադարյան Հայաստանի բազմաթիվ հնագիտական հուշարձաններ:

Սսի պատրիարքը կարգավորում է ուղեկցող խմբի խնդիրները և Վիկտոր Լանգլուային ուղեկցում են արտասահմանցի հյուրերի սենյակը, որը վանքի ամենագեղեցիկ և լավագույն կացարանն էր: Հայագետը պատի վրա տեսնում է մեծաքանակ անուններ՝ թուրքերի, արաբների, հայերի հիշատակարաններ տարբեր լեզուներով և դրանց մեջ նրան մի անուն, որը հայտնի է հնագետների և արևելա-

¹ V. Langlois, *Rapport sur l'exploration archéologique de la Cilicie et la Petite-Arménie, pendant les années 1852-1853*, Paris, 1854.

գետների շրջանում, հաճելի անակնկալ է պատճառում:
Անունը գրված էր կավճով և մեծ տառերով.

CH. TEXIER, VOYAGEUR FRANÇAIS,
20 JUIN 1836¹

Շ. ԹԵՔՍԻԵ, ՖՐԱՆՍԻԱՅԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ,
20 ՀՈՒՆԻՍԻ 1836

Կրոնավորները Վ. Լանգլուային ասում են, որ իրենք տասնվեց տարի է, ինչ չեն տեսել եւրոպացիների, և վերջինը Թեքսիեն էր, որ անցնում էր Սսով՝ Մարաշ և Տրապիզոն գնալու համար:

Վիկտոր Լանգլուան մանրամասն նկարագրում է Ռուբինյանների գահակալության շրջանի հուշարձանները: Հայ թագավորների պալատը կոչվել է դարպաս: Հայագետը Սիս հասնելուց չորս օր հետո ուղևորվում է դեպի թագավորական պալատ՝ վանքի եպիսկոպոսներից մեկի՝ Կարապետի հետ: Երկու ժամ չափազանց շոգին քայլելով՝ նրանք հասնում են ամրոցի դարպասներին: Ինչպես միջնադարի բոլոր ամուր բերդերը՝ Սիս-ամրոցը նույնպես լքված է: Թուրք ցեղերը նրանում պահում են իրենց հոտերը՝ գտնելով առատ խոտ: Դիպվածի բերումով այդ օրը ամրոցում արածում էր այծերի հոտ, և երիտասարդ հովիվը եկողներին այծի կաթ է հյուրասիրում:

Սիս-բերդը ձվաձև է, ունի երեք դուռ: Ժայռը, որի վրա կանգնեցված է ամրոցը, ունի ոչ հավասար բարձրություն, որից էլ ամրոցի պատերը տարբեր չափերի են: Ամրոցը, բացի իր անհավասար բարձրություն, բաժանված է երեք մասերի, և ամեն մասը նստած է առանձին ժայռի գագաթին: Հարավային կողմում, ուր գտնվում է դիտանոց-աշ-

¹ V. Langlois, *Voyage à Sis, capitale de l'Arménie au moyen age*, Paris, 1855, p. 9.

տարակը, շատ ամուր է շինված և եղել է առաջին Ռուբինյան թագավորների նստավայրը: Լևոն Երկրորդը վերակառուցելով քաղաքը՝ մեծ նշանակություն է տվել արքայական պալատի ամրությանը: Կիլիկիայի մյուս քաղաքները՝ Տարսուր, Ադանան, Կոռիկոսը, Մամեստիան, գտնվում են դաշտավայրում և մատչելի են բոլոր կողմերից թշնամու հարձակման համար և չեն ընձեռում հնարավորություն՝ դիմադրելու ահարկու թշնամիներին: Սիսն, ընդհակառակը, իր դիրքով և ժայռերով շրջապատված գոտիով, մահմեդական ելուզակների համար ծառայում է որպես դժվարին արգելք՝ նրանց մոտենալու քաղաքին, և հայերը կարող էին հեշտությամբ իրականացնել իրենց պաշտպանությունը:

Լևոն Երկրորդը ամրոցը կառուցում է ժայռի գագաթին (որն իշխում է քաղաքի վրա) և նախագծում է նոր քաղաքը Ք. ծ. հետո 1186-ին: Կիլիկյան Առաջին հայ թագավորը չի ավարտում իր նախագծերն իրականացնելը, այդ գործը շարունակում է հաջորդներից մեկը՝ նրա Զաբել դստեր ամուսինը՝ Հեթում Առաջինը, որը գահ է բարձրանում Լևոնի մահից հետո: Հեթումն ավարտում է Լևոնի սկսած գործերը: Դա շատ լավ երևում է մի արձանագրությունից, որը ցավոք վնասված է. այն փորագրված է աշտարակի դահլիճի ներսում:

Այս թերի արձանագրությունն ասում է, թե Հեթումը ավարտել է դիտակետ-աշտարակի կառուցումը, և այն դարձել է նստավայր հայ թագավորների համար: Աշտարակի հյուսիսային կողմում կա աստիճան, որը տանում է դեպի ամբար, ուր հավաքվում է անձրևաջուրը: Շարունակելով շրջագայությունը ամրոցում՝ Վ. Լանգլուան տեսնում է նոր ամրություններ՝ կառուցված երկրորդ ժայռագագաթին:

Վ. Լանգլուայի կարծիքով Կիլիկիայի հայկական եկեղեցիներն ու մատուռները նման են նույն վայրերում եղած հունականին: Հայկական եկեղեցիներն արտաքինից ունեն պարզ զարդարանք, իսկ ներսի մասում ունեն սյուներ և որմնանկարներ, որոնք ներկայացնում են Հայ Եկեղեցու սրբերին. մատուռներն առավել պարզ են: Եկեղեցու ճակատային մասը մի շքամուտք է, և կան երեք դռներ, որոնք ներս են տանում:

Սիս-ամրոցի երկրորդ գագաթի ամրություններն առավել տուժել են թուրք-սելջուկների և Եգիպտոսի մամլուկների հարձակումներից: Երրորդ և չորրորդ գագաթների արանքում կա հրաշալի ջրի մի ամբար, որն ըստ ավանդության օգնել է հայերին բուժելու զանազան հիվանդություններ: Երկրորդ և երրորդ գագաթների միջև կա մի քարանձավ, որը տեղացիներն անվանում են Գերշինլիկ (Աղավնատուն), սակայն այնտեղ չկա ոչ մի աղավնի: Ամրոցի երեք տարբեր հարկաբաժիններում երևում են այլ շինությունների հետքեր՝ խանութներ, բանտեր, զորանոցներ և այլն:

Վիկտոր Լանգլուան առանձնակի պատկերում է թագավորների պալատը: Պալատում եղել է Սուրբ Սոֆիա եկեղեցին, որի համար Հեթում թագավորը կառուցել է մի շատ բարձր զանգակատուն: Լևոն Երկրորդի ժամանակ պալատն ունեցել է մի չքնաղ պարտեզ, որի հոյակապությունը, ըստ ականատեսների, դժվար է գրչով նկարագրել:

Եթե Սսում մնացել են քիչ թվով կանգուն հուշարձաններ, դրա պատճառը մահմեդականների հաճախակի հարձակումներն են: Ըստ հնագույն ճանապարհորդների հուշերի՝ Սիս քաղաքը եղել է գեղեցիկ և ունեցել է ընտիր կոթողներ՝ արդեն Լևոն Երկրորդի ժամանակ: Սսի հուշարձանները քանդված են, եկեղեցիները ավերված, լքված, և քաղաքի կարևորությունը վերացած է: Հայաստանի երբեմնի շեն ու գեղե-

ցիկ մայրաքաղաքը թուրքական ցեղերը վերածել են մի ավանի:

Ուսումնասիրության երկրորդ գլուխը կոչվում է “Monuments Aeméniens de l’époque musulmane” («Մահմեդականների շրջանի հայկական հուշարձանները»): Եգիպտոսի մահմեդականների հարձակումների հաճախանալու հետևանքով Հայաստանի կաթողիկոսական աթոռը Հռոմկլայից տեղափոխվում է Սիս՝ թագավորական պալատին մոտ: Կաթողիկոսը նստում է դարպասում: Առաջին կաթողիկոսն ունեցել է մի համեստ նստավայր, որը հետագայում առավել բարգավաճել է: Դեռևս պահպանվում է հնագույն կաթողիկոսարանը, որը կառուցել է Ղուկաս կաթողիկոսը իր և հոգևորականների համար: 1734-ին Ղուկաս կաթողիկոսը կառուցում է մի վանք ու մի եկեղեցի՝ ընծայված Սուրբ Գրիգոր Լուսավորչին: Եկեղեցին, որը հիանալի է կառուցված, դարձել է դպրոց, ուր հայ երեխաները սովորում են իրենց լեզվից տարրական գիտելիքներ և ծանոթանում են կրոնին: Հետագայում կառուցվել է կաթողիկոսական նստատեղը՝ փորագրված փայտից և ոսկետառ մակագրությամբ: Աջ խորանի առաջ պահպանվում է Ղուկասի գերեզմանը, որը Սսում կառավարել է 1734-1737 թվականներին:

Վիկտոր Լանգլուան նկարագրում է նոր վանքը, որը կոչվում է Կիրակոսի վանք: Այս վանքերում նրա այցելության ժամանակ նստում էր կաթողիկոսը. վանքը կառուցվել էր Ռուբինյանների արքայական հին պալատի նյութերով: Այն զբաղեցնում էր մեծ տարածք և շրջապատված էր ուժեղ պարսպով, որի ներսում անկանոն ձևով կային մի քանի շինություններ: Այնտեղ հասնում էին աստիճաններով և յուրաքանչյուր ամֆիթատրոնային մասում կար մի կառույց: Փայտաշեն ու բարձր մի հովանոց, որն իշխում էր քաղաքի վրա, կաթողիկոսի բնակարանն էր: Կար նաև մեկ ուրիշ ավելի

բարձր հովանոց, որը հոգևորականների ժողովատեղին էր: Այդտեղ էլ կաթողիկոսն ընդունում էր օտարերկրացիներին: Վանքի ամենապատշաճ շինությունը եկեղեցին էր, որը պահպանվում էր հատուկ հոգածությամբ: Միաբանների երգելու տեղը հին էր, իսկ շինության մյուս մասերը ժամանակակից կառույցներ էին: Վանքն ավարտվել էր Կիրակոս կաթողիկոսի ջանքերով՝ 1810-ին: Եկեղեցին ուներ երեք բաժին, դրանցից մեկը նվիրված էր Գրիգոր Լուսավորչին, մեկ ուրիշը՝ Սուրբ Էջմիածնին: Զրի խողովակի բերանները առյուծաձև էին՝ տեղադրված շինության անկյուններում և եկեղեցու գմբեթին, հիշեցնում էին Ռուբինյանների արքայական խորհրդանիշը: Առջևում մի մենաստան էր, որով անցնում էին վանք մտնելու համար: Գլխավոր դռան վրա կար չափածո արձանագրություն:

Երգչախմբի կանգնելու տեղում կաթողիկոսի նստեկատեղն էր՝ սպիտակ մարմարից, պատրաստված հենց Սսում, Կոստանդնուպոլսից եկած վարպետների ձեռքով: Թուրք գլխավորների ընչասիրությունը չշարժելու համար խորանը զարդարված էր խիստ անշուք: Նույն ձևով խնամքով թաքնված էին եկեղեցու գանձերը, որոնք փակված էին մի փոքրիկ մատուռում, որը կոչվում էր Գրիգոր Լուսավորչի անունով: Այդ մատուռում հոգևորականները պահում էին զանազան մասունքներ, որոնք շատ էին և նրանց համար ունեին մեծ արժեք: Դրանք վերաբերվում էին Գրիգոր Լուսավորչին, Սուրբ Նիկողայոսին և այլ սրբերի ու ճգնավորների: Գրիգոր Լուսավորչի աջ ձեռքը ամենաթանկ ու կարևոր մասունքն էր, որ պահպանվում էր վանքում: Այն դրված էր արծաթե դրվագազարդ ձեռքի մեջ, որը հիշեցնում էր բյուզանդական ոճ, վրան ուներ մի գմբուխտե քար, և երևում էին ոսկեզօծ լինելու հետքերը: Սուրբ Նիկողայոսի՝ Զմուռնիայի հույն պատրիարքի աջը նույնպես դրված էր արծաթե ձեռքի մեջ, բայց

առավել պարզ զարդաքանդակներով: Երեսուներեքերորդ պապ Սիլվեստրի ձեռքը պահպանվում էր նույն ձևով, ինչպես նախորդների, իսկ ճգնավոր Բարսամի ձեռքը դրված էր ձվաձև արծաթյա տուփի մեջ: Այդ մասունքները մնացել էին Սսի պատրիարքարանում և անգամ Հայոց Եկեղեցու բաժանումից հետո, երբ կաթողիկոսական աթոռը 1441-ին տեղափոխվեց Մեծ Հայք՝ Էջմիածին, նրանք շարունակում էին մնալ տեղում:

Էջմիածնի կաթողիկոսը հավակնում էր Գրիգոր Լուսավորչի աջի տերը լինելու և ցույց էր տալիս մի մասունք, որը պահվում էր Հռոմկլայում՝ Կիլիկյան կաթողիկոսների հին նստավայրում, մինչև նստավայրը Սիս փոխադրվելը: Ըստ Վ. Լանգլուայի՝ հայագետ Մ. Բրոսսեն Էջմիածին այցելած ժամանակ տեսել է այդ բազուկը, որը դրված էր ոսկեզօծ արծաթե ձեռքի մեջ, սակայն այն չի համարվում վավերական: Սսի գանձերի մեջ էր նաև Հակոբ կաթողիկոսի եմփիորոնը՝ պատրաստված Հալեպում: Այս եմփիորոնը մետաքսից էր, ասեղնագործված Հիսուս Քրիստոսի և բազմաթիվ սրբերի պատկերներով: Ըստ ավանդության՝ այդ եմփիորոնը կապված է ավելի վաղ գործած նշանավոր հոգևորականների հետ:

Եկեղեցու գանձերի մեջ էին նաև երկու Ավետարանները, որոնցից մեկը գրվել էր Լևոն Հինգերորդի ժամանակ Սորովանքում՝ 1332 թվականին: Երկրորդը, որը նույնպես մագաղաթից էր, գրվել է Կոստանդին Զորրորդ Լուսինյանի ժամանակ՝ 1344-ին: Այս վերջին Ավետարանը, ըստ հոգևորականների ասածի, հրաշագործ է, կարծում են, թե այն գրվել է Լևոն Երկրորդի ձեռքով: Եւ վերջապես ամենամեծ գանձը արծաթյա և ոսկեզօծ մյուռոնի ամանն է՝ պահված խորանում, որը հատուկ նվեր է վանքին՝ Կոստանդնուպոլսի Դուզ-օղլի ընտանիքից:

Վ. Լանգլուան ներկայացնում է վանքի արխիվը: Կաթողիկոսը գերագույն իշխանությունն է, ոչինչ վանքում չի կարող կատարվել առանց նրա գիտություն: Սակայն վանքի արխիվը գրեթե չի պահպանվել, պատմական փաստաթղթերը կորսված են, որոնք կարող էին հիանալի կերով ներկայացնել անցյալի դեպքերը: Կային ավելի ուշ ժամանակի նամակները՝ ուղղված Ադանայի, Այնթապի, Հալեպի, Մարաշի և այլ վայրերի եպիսկոպոսներին, որոնք խառնիխառն էին և չէին դասակարգված: Մի հոգևորական, որը գրագրի դեր էր կատարում, դրանք հավաքում էր մի տեղում: Արխիվի նյութերը Վ. Լանգլուան դասակարգում է հետևյալ կերպ՝

1) Պատրիարքին ուղղված նամակներ, որպես պատասխան վերջինիս նյութական օգնության խնդրանքի իր հավատացյալներից՝ Կուսան-Դաղի բեկերի ընչասիրությունը բավարարելու համար:

2) Տեսրեր, որոնք պարունակում էին այն մարդկանց անուններն ու տրված գումարների չափերը, որոնք օգնել էին վանքի կարիքները հոգալու:

3) Նամակներ, որոնք շոշափում էին անկարևոր հարցեր: Սաի այս նոր արխիվը կարևոր էր հայոց լեզուն ուսումնասիրելու առումով: Վ. Լանգլուան ասում է, թե այդ նամակներով կարելի է ուսումնասիրել Կիլիկիայի այդ շրջանի հայերենը, որը բավականին տարբեր է Մեծ Հայքի, Պարսկահայաստանի, Կոստանդնուպոլսի և Զմրուռնիայի հայերենից: Այդ լեզուն հատկապես հետաքրքրել է հայագետ էդուարդ Դյուլոփիին:

Գրական, բանասիրական, մատենագիտական առումով արժեքավոր է Վ. Լանգլուայի ուսումնասիրությունն այն հատվածը, որը ներկայացնում է Սաի գրադարանը: Նա կազմել է Սաի գրադարանում պահվող ձեռագրերի ցուցակը: Սաի գրադարանում կային և՛ տպագիր, և՛ ձեռագիր մատյաններ: Կա-

Թողիկոսը երկար ժամանակ երկմտել է ցույց տալ հայագետին այդ գրադարանը, այն պատճառաբանությամբ, թե չի կարելի դուռը բացել տարին մեկ անգամից ավելի: Գրադարանի սենյակը փոքր էր, և լուսավորվում էր միայն մի պատուհանից, գրադարանն ուներ հարյուր քառասունհինգ ձեռագիր և միայն երկու հարյուր հիսուն հատոր տպագիր գրքեր: Տպագիր գրքերը ծիսական-կրոնական էին և առանձին կարևորություն չունեին: Զեռագրերի մեծ մասը 16-րդ դարից հետո էր ստեղծվել և պատմական արժեք չէր ներկայացնում: Հին ձեռագրերը տեղափոխվել էին Կ. Պոլիս և էջմիածին, որոշ արժեք ունեցող ձեռագրեր էլ վաճառվել էին օտարերկրացի ճանապարհորդներին: Վիկտոր Լանգլուան նշում է ձեռագրի համարը, բովանդակությունը, դարը և ինչի վրա գրված լինելը: Բնականաբար մեծ թիվ են կազմում Ավետարանները, Աստվածաշունչ մատյանները, մի քանի տասնյակ Մաշտոցներն ու Քարոզգրքերը: Շատ են Ավետարանի, քերականության, «Երգ-երգոցի» մեկնությունները, կան Ներսես Շնորհալու չափածո գործերը, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մի օրինակը, Գրիգոր Տաթևացու, Հովհան Որոտնեցու, Դավիթ Անհաղթի երկերից, Արիստոտելի փիլիսոփայության մեկնությունները, Թովմա Աքվինացու քարոզները, Վարդան Մեծի գործերը, Սուրբ Հովնանի Հայտնությունը, Եւագրոսի Սուրբ հայրերի պատմությունը, Սոկրատեսի գործերից, Ներսես Լամբրոնացու Պատարագի մեկնությունը, Պողոս առաքյալի թղթերը, Ալեքսանդր Մակեդոնացու վարքը, Կանոնգիրքը, փիլիսոփայության մեկնությունն ըստ Առաքել Սյունեցու, Գրիգոր Նյուսացու գործերից, տարբեր պատմիչներից հատվածներ, Հայ կաթողիկոսների ցուցակը՝ Գրիգոր Լուսավորչից մինչև Ներսես Շնորհալի, և այլն, և այլն:

Գրքի վերջին՝ երրորդ գլխում, ներկայացված են Սսի պատրիարքարանի իրավական հնարավորությունները: Կիլիկիայի բոլոր եկեղեցիները ենթակա էին Սսի կաթողիկոսին, վերջինս ենթակա էր թուրքական կառավարիչներին: Սսի կաթողիկոսի իրավունքները տարածվում էին Ադանայի, Մարաշի, Հալեպի և Կիպրոսի փաշայությունների վրա, որտեղ կայր հիսուներեք եկեղեցի և չորս վանք: Վ. Լանգլուան աղյուսակի ձևով գրքի 46-րդ էջում ներկայացնում է փաշայությունները, նրանցում եղած հայկական գյուղերը, ամեն գյուղի բնակիչների թիվը, եկեղեցիների և վանքերի ցուցակը: Եկեղեցիները պահվում էին հավատացյալների նվիրատվությամբ, հաճախ հարուստ ընտանիքները մուծում էին խոշոր գումարներ, այն դեպքում, երբ աղքատները մի մանրադրամ (փարա) էլ չէին տալիս: Սսի հոգևոր թեմը բաղկացած էր կաթողիկոսից, երկու արքեպիսկոպոսից, մի եպիսկոպոսից, տասներկու կրոնավորներից, որոնցից տասը կցված էին Զեյթուն և Հաճն քաղաքներին և սպասավորում էին այնտեղ: Կաթողիկոսի հագուստը սովորաբար երկար զգեստն էր և լայն կապույտ գլխանոցը: Կրոնական արարողությունների ժամանակ նա բռնում էր արծաթե երկար գավազան, նրա խուլըր արծաթե էր և հիշեցնում էր արքայական թագ: Հոգևորականները նույնպես սևազգեստ էին, իրենց գլխին ունեին սրածայր թասակներ, որոնց վրա գցված էին սև քողեր, որը փողփողում էին գլխիավերելում: Վիկտոր Լանգլուայի այցելության ժամանակ Սսի կաթողիկոսը եղել է Միքայել Ներկորդը, ծնվել էր Սիս քաղաքում և 1832-ին փոխարինել էր Նփրեմ Ներկորդին: Ասում են, թե նա արմատներով ծագում է Գրիգոր Լուսավորչի տոհմից: Հոգևորականներն ամեն ինչ անում էին, որ գոհացնեն թուրք կառավարիչներին՝ իրենց հոգևոր գործերն առաջ տանելու համար:

Հայագետը Կիլիկիայում կատարած ուղևորությունների ժամանակ գտել է բազմաթիվ դրամներ, դրանց մասին գրել է հատուկ ուսումնասիրություն՝ “Numismatique de l’Arménie au moyen âge”, որը լույս տեսավ Փարիզում՝ 1855-ին¹:

Վիկտոր Լանգլուայի կարծիքով, նրանք, ովքեր կատարել են նման ճամփորդություններ, կհասկանան, որ քիչ ուսումնասիրված և հեռավոր երկրների մասին գրելիս հնագետը իր կողմից առանձնացնում է այն, ինչ գտնում է կարևոր:

Վերջում հայագետը իր ջերմ ցանկությունն է հայտնում, որ ուրիշ ճանապարհորդներ ու գիտնականներ շարունակեն իր գործը, որին ինքը նվիրել է մի ողջ տարի, և երջանիկ կլինի, եթե այս գիրքը, որին նա նվիրել է իր ջանքերը, արգասավոր և ներշնչող լինի ընթերցողների համար:

¹ **M.Langlois**, *Numismatique de l’Arménie au moyen âge*, Paris, 1855. Այս գիրքը և Մարի Բրոսսեի հայ դրամներին նվիրված գրքերն ապացուցում են հայ պետականության միջազգային արժեքը: Բրոսսեն ապացուցում է, որ Աղվանքի թագավորները եղել են հայ Բագրատունիները: Նա ներկայացրել է Աղվանքի արքա Կորիկի պղնձե դրամի նկարը, որի երկու կողմերում էլ հայերեն բառերով գրված է Յիսուս Քրիստոս, մյուս կողմում՝ «Տէր ՈԳՆԷ ԿՈՐԻԿԻ...»: Նա ասում է, որ այս թագավորը հայ Բագրատունիներից և մահացել է 989-ին: Նրա մահից հետո որդին՝ Դավիթը, ընդլայնել է Աղվանքի սահմանները՝ տարածքներ գրավելով Վրաստանից, վերցրել է նաև Գանձակը: Տե՛ս **M.Brosset**, *Monographie des monnaie arméniennes*, S. Peterbourg, 1899, pp. 29-30:

ИЗВЕСТНЫЙ ФРАНЦУЗСКИЙ АРМЕНОВЕД ВИКТОР ЛАНГЛУА О КАТОЛИКОСАТЕ СИСА

Аэлита Долуханян

РЕЗЮМЕ

Научное путешествие Виктора Ланглуа проходило в 1852-1853 годах. Он перенес в Париж большое количество археологических материалов, связанных с культурой Киликийской Армении, и они были выставлены в музее Лувра.

В книгах Ланглуа о Киликии показано, как турки уничтожали ценные памятники армянской культуры, которые красноречиво свидетельствовали о цивилизованности их владельцев-армян. Арменовед считает Мовсеса Хоренаци историком Золотого века и с большой любовью сам перевел «Историю Арменин» Отца армянской историографии.

Исключительную ценность представляют факты, приводимые арменоведом о Католикосате Сиса, его хранилище рукописей, о тяжелом правовом и материальном положении армянского духовенства, что являлось следствием турецкого ига. Факты, изложенные Ланглуа, нигде больше не встречаются, они важны как свидетельства знающего очевидца и уникальны.

FAMOUS FRENCH ARMENOLOGIST VICTOR LANGLOIS ABOUT THE CATHOLICOSATE OF SIS

Aelita Dolukhanyan

SUMMARY

The scientific journey of Victor Langlois took place in 1852-1853. He brought to Paris a large amount of archaeological materials related to the culture of Cilician Armenia, and they were exhibited in the Louvre Museum.

Langlois' books about Cilicia show how the Turks destroyed valuable monuments of Armenian culture, which eloquently testified to the civilization of their Armenian owners. The armenologist considers Movses Khorenatsi a historian of the Golden Age and with great love he himself translated the *History of Armenia* by the Father of Armenian historiography.

Of exceptional value are the facts cited by the armenologist about the Catholicosate of Sis, its repository of manuscripts, about the difficult legal and financial situation of the Armenian clergy, which was a consequence of the Turkish yoke. The facts presented by Langlois are found nowhere else, they are important as evidence of a knowledgeable eyewitness and are unique.

Անլիտա Դոլուխանյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հին և միջնադարյան հայ գրականություն, բանահյուսություն, ժամանակակից հայ գրականություն, գրականության դասավանդման մեթոդիկա, գրաքննադատություն, հայագիտություն, գրական կապեր: Հեղինակ է 33 գրքի և շուրջ 675 հոդվածի.

✉ aelita.dolukhanyan@gmail.com

Аэлита Долуханян, Член корреспондент НАН РА, доктор филологических наук, профессор. Заведующий кафедрой древнеармянской и средневековой армянской литературы и методики ее преподавания АГПУ им. Х.Абовяна. Научные интересы: древнеармянская и средневековая армянская литература, устное народное творчество, современная армянская литература, мето-

дика преподавания литературы, литературная критика, арменоведение, литературные связи.

✉ aelita.dolukhanyan@gmail.com

Aelita Dolukhanyan, Doctor of Sciences in Philology, Professor, Correspondent Member of the NAS RA. Chair of the Department of Ancient and Medieval Armenian Literature and its Teaching Methodology at the ASPU after Kh. Abovyan. Scientific interests: Ancient and Medieval Armenian Literature, folklore, contemporary Armenian Literature, methodology of teaching literature, literary criticism, Armenology, literary connections, Author of 33 books and over 675 articles.

✉ aelita.dolukhanyan@gmail.com

Արմինե Եփրկյան
Խաչիկ Խամիսյան

**ԲԱԶՄԱՏԵՍԱՆԿՅՈՒՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ «ԿԻԼԻԿԻՈ
ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՄ. ՍՍԻՑ ՄԻՆՋԵՎ ԱՆԹԻԼԻԱՍ» ԹԵՄԱՅԻ
ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ**

Հիմնաբառեր՝ բազմատեսանկյուն մտածողություն, տեխնոլոգիա, հնար, մեթոդ, դասավանդում, Կիլիկիո Հայոց կաթողիկոսություն:

Ключевые слова: мультиперспективное мышление, технология, методика, метод, учение, Армянский католицизм Киликии.

Key words: multi-perspective thinking, technology, technique, method, teaching, Armenian Catholicism of Cilicia.

Այսօր ՀՀ կրթական համակարգի պահպանումը, նրա հետագա զարգացումը, մրցունակության ապահովումը միջազգային ասպարեզում համարվում են ազգային անվտանգության կարևորության խնդիր: Այն ոչ ավել, ոչ պակաս պետականության կայացման երաշխիք է: Տրամաբանական է, որ մասնավորապես պատմության դասավանդումը կրթական բոլոր աստիճաններում այդ երաշխիքներից մեկն է, եթե ոչ հիմնականը: Ուստի, պատմության դասագործընթացի տեխնոլոգիականացման պայմաններում իրացվող բարեփոխումները պահանջում են վերանայել ոչ միայն դասագործընթացի կառուցվածքը, գործառության կազմակերպման հիմքը, այլև ամենակարևորը՝ կրթության բովանդակությունը:

Պատմության դասավանդման մեթոդիկայի տեխնոլոգիականացման արդյունքում առաջացած հիմնախնդիրներից են նաև սովորողների բազմատեսանկյուն մտածողության ձևավորումն ու այդ գործընթացի արդյունավետությանն ապահովող արդի մեթոդների և տեխնոլոգիաների ընտրությունը: Մինչև 1990-ական թվականները «բազմատեսանկյուն մտածողություն» եզրույթը հազվադեպ էր օգտագործվում պատմության դասավանդման բնագավառում, թեև այն առաջարկվում և աշխույժ կերպով քննարկվում էր որոշ գերմանացի պատմաբանների, այդ թվում՝ ֆոն Բորրիեսի կողմից դեռևս 1970-ական թթ.¹:

Ամեն դեպքում «բազմատեսանկյուն մտածողություն» հասկացության հիմքում ընկած են երեք, միմյանց հետ փոխկապակցված բավական հին գաղափարներ: Առաջինը «նոր պատմության» գաղափարն էր, որը 1970-ական թթ. առաջացել է Արևմտյան Եվրոպայում, հետագայում՝ 1980-ական թթ., ներթափանցել է Հյուսիսային Եվրոպա՝ իր ազդեցությունը տարածելով նաև պատմության դասավանդման ոլորտի վրա: «Նոր պատմության» գաղափարն արտացոլում է նախ և առաջ դասավանդման ավանդական մեթոդների և տեխնոլոգիաների անբավարար լինելը՝ մատնանշելով դրանց հետևյալ բաղադրիչները.

- պատմական պատրաստի գիտելիքների փոխանցումը,

¹Bodo von Borries, (2001) "Multiperspectivity" – *Utopian Pretensions or Feasible Fundament of Historical Learning in Europe?*, in Joke van der Leeuw-Roord (ed.), *History for Today and Tomorrow: What does Europe mean for School History?* Hamburg, Körber Stiftung.

• պատմության առարկայական ծրագրի բովանդակության մեջ քաղաքական և

սահմանադրական ուղղվածության գերակայությունը,

• պատմական իրադարձություններին և անձերին չափազանցված դերեր վերագրելու միտվածությունը,

• ծրագրի կառուցումն ազգային պատմության բովանդակությամբ հարուստ, ժամանակագրական բնույթ կրող շարադրման շուրջ,

• ազգային պատմաշարին (նարատիվ) առանցքային և բացարձակ նշանակություն տալը:

Երկրորդ գաղափարը, որը նպաստել է բազմատեսանկյուն մտածողության հանդեպ հետաքրքրության առաջացմանը, այն է, որ անցյալում պատմությունը հաճախ դասավանդվել է մեկ մշակույթի վրա հիմնվող, էթնոկենտրոն, առավելապես բացառող և ոչ ընդգրկող տեսակետից: Այդպիսի դասավանդումը հիմնված է եղել այն մոտեցման վրա, որ ազգային պատմությունը համընկնում է ամենամեծ ազգային խմբի կամ տիրապետող լեզվա-մշակութային համայնքի պատմության հետ: Նույն միտումը նկատելի էր նաև ակադեմիական պատմագրության բնագավառում: Վերջին տարիներին, պատմագրության դասավանդման գործընթացում մասնավորապես հասարակական, մարդաբանական, մշակութաբանական ուսումնասիրությունների ոլորտներում կարևորվում է հասարակական խմբերի պատմությունը, որոնք մինչև այժմ հիմնականում անտեսվել են: Այդպիսիք են կանայք, չքավորները, էթնիկ փոքրամասնությունները, երեխաները, ընտանիքները և փախստականները:

Քննարկվող գաղափարներից երրորդը կապված էր այն գիտակցման հետ, որ պատմության դասավանդման գործընթացում սովորողները պետք է նախապատրաստվեն ապրելու այնպիսի աշխարհում, որը բնութագրվում է էթնիկ,

մշակութային, լեզվական և կրոնական բազմազանությունը: Մշակութային բազմազանության խորացման հետ կապված խնդիրների լուծման առումով մշակութային բազմազանությունը սկսեցին դիտարկել իբրև «բազմամշակութայնություն» (multiculturalism) և «միջմշակութային կրթություն», ինչի արդյունքում պատմական կրթության բովանդակություն ներառվեցին բազմամշակութային ուղղվածություն ձևավորող թեմաներ, որոնք վերաիմաստավորում էին պատմական ուրոշ դրվագներ:

Ինչպես նշում է պատմության դասավանդման միջոցով սովորողների բազմատեսանկյուն մտածողության ձևավորման և շարունակական զարգացման գաղափարի առաջատար պաշտպաններից մեկը՝ պրոֆեսոր Գիտա Ստայներ-Խամսին, «...հասարակական համերաշխությունը, խաղաղությունը և ժողովրդավարությունը ենթադրում են անցյալի, ներկայի և ապագայի ընդհանուր տեսլական»¹: Այս պնդման հետ դժվար է չհամաձայնվել, ավելին, այս պնդման հետ կհամաձայնվեր պատմություն դասավանդող մասնագետների մեծ մասը, այդ թվում՝ նրանք, ովքեր գտնում են, որ պատմության դասավանդումն ունի կարևոր դեր ազգային ինքնության և ազգի հանդեպ հավատարմության հանրային զգացում ձևավորելու գործում: Այս առումով, լրացնելով իր միտքը, պրոֆ. Ստայներ-Խամսին փաստել է նաև, որ այդպիսի ընդհանուր տեսլականը չի կարող պարտադրվել իշխանություն ունեցողների կողմից, որոնք ներկայացնում են հասարակության մեջ մեծամասնություն կազմող էթնիկ,

¹ Газман О.С., Неклассическое воспитание от авторитарной педагогики к педагогике свободы, М., 2002, с. 308.

լեզվաբանական կամ կրոնական խումբը: Այն առաջանում է բազմամշակութային և բազմատեսանկյուն մտածողության շնորհիվ, բայց ոչ երբեք պարտադրանքով, և ներառում է բոլոր ազգերի և ժողովուրդների պատմության նույնիսկ մոռացության տրված մանրամասները:

Այսօր բազմատեսանկյուն մտածողության ձևավորման տեխնոլոգիայի կիրառման պայմաններում ակնհայտ է դառնում այն հանգամանքը, որ որքան ավելի շատ են պատմական շարադրանքի մեջ ընդգրկվող շերտերը և տեսակետները, այնքան ավելի է բարդանում ընդհանուր պատկերը, և այնքան ավելի դժվար է լինում սովորողների համար դատողություններ և եզրակացություններ կատարելը, հատկապես, երբ նրանք գործ ունեն տարբերվող և միմյանց հակասող տեսակետների, մեկնաբանությունների և եզրակացությունների հետ: Խնդիրն էլ ավելի է դժվարանում, երբ նրանք փորձում են բացահայտել այն բազմաթիվ եղանակները, որոնց միջոցով տեսակետները փոխազդում են միմյանց հետ: Այս խոչընդոտները վերացնելու նպատակով դասավանդողը պետք է ավելի հստակ դարձնի այդ կապերը, պետք է սովորողներին օգնի ձևավորել բազմակողմանի ժամանակային շրջանակներ և պատմաշարեր՝ ուսումնասիրելով մեդիա տեղեկատվությունը, քարոզչությունը, օգտագործի տեսազննական տարբեր միջոցներ:

Թե որքանով են լուծելի թվարկված բոլոր խնդիրները, մասնավորապես պատմության դասագործընթացում սովորողների բազմատեսանկյուն մտածողության ձևավորման տեխնոլոգիայի կիրառման հետ կապված ուսումնառության հնարավոր դժվարությունները, կախված է դասավանդողի մեթոդական և տեխնոլոգիական պատրաստվածությունից, նրա ստեղծարար ներուժից և առաջադեմ հայացքներից:

Այս ամենի առկայությունը սովորողների բազմատեսանկյուն մտածողության արդյունավետ ձևավորման համար պարտադիր է, սակայն ցանկալի է նրանց՝ պատմական աղբյուրները վերլուծելու, վկայությունները մեկնաբանելու, տեղեկությունները համադրելու և սեփական պատմաշարը մշակելու փորձը, քանի որ առավելագույնս կհեշտանան տարբեր տեսակետների համադրումն ու համեմատությունը, եթե նրանք իրենց հանդիպած ցանկացած աղբյուրի՝ փաստաթղթերի, տեսանյութերի նկատմամբ կիրառեն վերլուծական որոշակի համակարգ։ Նմանօրինակ համակարգի կիրառումը մեր կողմից ներկայացվող՝ «Կիլիկիո Հայոց կաթողիկոսությունը պատմության քառուղիներում. Սսից մինչև Անթիլես» թեմայի (նշենք, որ թեման որպես այդպիսին ներառված է «Հայոց պատմություն» առարկայի դպրոցական ծրագրում, սակայն մեր կողմից ստորև ներկայացվող մեթոդները, հնարները, վարժությունները առաջարկում ենք իրականացնել «Կիլիկյան Հայաստանը» թեմայի ամբողջական ավարտին) դասավանդման շրջանակներում, արդյունավետ է նաև, երբ աղբյուրների տարբեր տեսակները, առանցքային հարցերը կարող են խմբավորվել որոշ հիմնական վերլուծական գործընթացների մեջ։

Նշենք, որ «Կիլիկիո հայոց կաթողիկոսությունը պատմության քառուղիներում. Սսից մինչև Անթիլես» թեմայի դասավանդման շրջանակներում, առաջնայինը կարևորում ենք թեմայի պատմական աղբյուրի նկարագրությունը, որի շրջանակներում վերլուծվում են հետևյալ կարևոր հարցադրումները.

- Ի՞նչ բնույթի է թեմային առնչվող ուսումնասիրվող աղբյուրը,
- ո՞վ է ստեղծել այդ աղբյուրը,

- ինչպիսի՞ն է եղել աղբյուրի հեղինակի ներգրավվածությունը իրադարձություններին՝ մասնակից, ականատես, լրագրող, մեկնաբան, պաշտոնյա և այլն,

- որքա՞ն ժամանակ է անցել իրադարձությունից,

- արդյոք աղբյուրն ասո՞ւմ է, թե որն է եղել դրա ենթադրվող լսարանը,

- արդյոք աղբյուրն ասո՞ւմ է, թե որն է եղել դրա հեղինակի նպատակը,

- ի՞նչ է այն մեզ ասում որոշակի պատմական իրադարձության կամ զարգացման վերաբերյալ:

«Կլիկիկո հայոց կաթողիկոսությունը պատմության քառուղիներում. Սսից մինչև Անթիլես» թեմայի դասավանդման շրջանակներում երկրորդը կարևորում ենք աղբյուրի պատմական մեկնաբանությունը, որի շրջանակներում վերլուծվում են հետևյալ կարևոր հարցադրումները.

- եթե հայտնի չէ, թե ով է եղել թեմային առնչվող աղբյուրի հեղինակը, արդյոք աղբյուրից ինչ-որ բան կարելի՞ է եզրակացնել նրա ներգրավվածության աստիճանի, իրադարձություններին մոտ լինելու, տեսանկյունի, կապերի, դերի մասին և այլն,

- արդյոք աղբյուրից կարելի՞ է գուշակել, թե ինչպես է հեղինակը ձեռք բերել տեղեկատվությունը,

- արդյոք հնարավո՞ր է ստուգել տեղեկատվության արժանահավատությունը,

- կարելի՞ է արդյոք տարբերակել ստուգման ենթարկվող փաստերը, փորձագիտական կարծիքը և անձնական կարծիքները,

- կարելի՞ է արդյոք բացահայտել աղբյուրի տեսակետը պայմանավորող հանգամանքները, օրինակ՝ որոշակի դիրքորոշումը, մեկ այլ դիրքորոշման հանդեպ նախապաշարմունքը,

- արդյոք աղբյուրի հեղինակն առաջարկում է որոշակի եզրակացություններ,

- արդյոք դրանց հիմքում շոշափվում են որոշակի վկայություններ կամ կարծիքներ,

- արդյոք աղբյուրի հաղորդած տեղեկությունները հաստատում են այլ աղբյուրներում առկա տեղեկությունները, թե՞ հակասում են դրանց,

- արդյոք բացակայում են որոշակի անուններ, տարեթվեր կամ այլ փաստեր, որոնք կարող էին օգնել պատասխանելու նախորդ հարցերին,

- ո՞ր աղբյուրների օգնությամբ կարելի է ստուգել աղբյուրի հաղորդած տեղեկությունները և մեկնաբանությունները¹:

Ընդգծենք, որ «Կիլիկիո հայոց կաթողիկոսությունը պատմության քառուղիներում, Սսից մինչև Անթիբես» թեմայի դասավանդման ընթացքում աղբյուրներից տեղեկություններ քաղելը և աղբյուրի ներկայացրած փաստերն ու իրադարձությունները նկարագրելը շատ ավելի դյուրին են, քան այն գործընթացները, որոնք կապված են մեկնաբանություններ և ենթադրություններ անելու, աղբյուրի արժանահավատության մասին դատելու հետ: Ուստի դասավանդման մեր փորձից ելնելով՝ սովորողներին այդպիսի գործընթացներում աջակցելու նպատակով առաջարկում ենք կիրառել հետևյալ տեխնոլոգիական միջոցները: Դրանցից մեկը հերթական աղյուսակն է, որում նշվում են «Կիլիկիո հայոց կաթողիկո-

¹ Robert Stradling, (1999), *The Secretary General's New Initiative: The Reform of History Teaching and the Preparation of New History Textbooks*, Strasbourg, Council of Europe Publishing, p. 39.

սությունը պատմության քառուղիներում. Սսից մինչև Անթիլիաս» թեմային առնչվող պատմական աղբյուրի մեջ առկա իմաստային տարբերությունները: Երբ սովորողները վարժվեն տեխնոլոգիական այս հնարին, սովորեն նման մոտեցմանը, կկարողանան անցնել ավելի բարդ վերլուծության, որն արդեն կօգնի նրանց համեմատել և հակադրել տարբեր աղբյուրներ, այդ թվում նաև նրանք, որոնցում ներկայացված են միևնույն փաստերի զանազան մեկնաբանություններ տե՛ս աղյուսակներ 1, 2):

Աղյուսակ 1

Աղբյուրների վերլուծության հերթականությունը

ՀԱՏՎԱԾ ԱՂԲՅՈՒՐԻՅ		
Աղբյուրը փաստում է	Աղբյուրից հետևում է	Աղբյուրում նշված չէ

Աղյուսակ 2

Աղբյուրների վերլուծության կառուցվածքը

Աղբյուր 1. Գրվել է _____ կողմից, ով Սա----- վերաբերյալ : Զեկույցն ուղարկվել է _____ : Նա բացատրում է, որ _____ : Նա ենթադրում է, որ _____ :

Պատմության դասագործընթացում «Կիլիկիո Հայոց կաթողիկոսությունը պատմության քառուղիներում. Սսից մինչև Անթիլիաս» թեմայի դասավանդման շրջանակներում սովորողների բազմատեսանկյուն մտածողության

ձևավորման տեխնոլոգիական մեկ այլ հնար կարելի է առաջարկել սովորողներին՝ տարբեր գույների մարքերներով, գրիչներով կամ մատիտներով նշել փաստական կամ նկարագրական պնդումներն ու եզրակացությունները՝ նախապես նրանց տրամադրելով գրելու մոդելներ, որոնք օգնում են վերլուծական գործընթացը կառուցելուն: Որոշ պատմաբան-մեթոդիստներ բացահայտել են, որ աղբյուրների վերլուծության հենքով իրացվող դասագործընթացի հետ կապված վտանգներ կան: Դրանցից մեկն այն է, որ սովորողները, հատկապես համեմատաբար պակաս ընդունակ կամ պատմությամբ չհետաքրքրվողները, այս գործընթացը համարում են ինքնանպատակ, մինչդեռ այն իրականում պարզապես գործիք է՝ պատմական բազմատեսանկյուն մտածողություն ձևավորելու համար: Սովորողների նմանօրինակ վերաբերմունքը պայմանականորեն կարելի է անվանել կեղծ-վերլուծական: Այս դեպքում նրանք օգտագործում են սկզբնաղբյուրների քննական վերլուծության տեխնիկական եզրույթները՝ վկայություն, կողմնակալ վերաբերմունք, սկզբնաղբյուրներ, առանց դրանց իմաստը լիարժեք ընկալելու: Որպես հետևանք նրանք կարող են համարել, որ սկզբնաղբյուրը որևէ արժեք չի ներկայացնում, քանի որ նրա որոշ պնդումներ «կողմնակալ են», որ աղբյուրներից մեկն ավելի «լավն է», քանի որ այն գրվել է որոշակի ժամանակաշրջանում: Այսպիսի դեպքերում դասավանդողը պետք է վերլուծության ենթարկի նման դիրքորոշման դրդապատճառները, նպատակներն ու տեսակետները:

Դասավանդման գործունեության ընթացքում նկատել ենք, որ աղբյուրներ ուսումնասիրելու որոշակի կարողություններ ձեռք բերելով հանդերձ՝ պատմական շարադրանք մշակելու ընթացքում առաջանում են տարբեր աղբ-

յուրներից վերցված տեղեկատվությունն իրենց ունեցած պատմական գիտելիքների հետ կապելու որոշակի դժվարություններ: Հետևաբար՝ «Կիլիկիո Հայոց կաթողիկոսությունը պատմության քառուղիներում, Սսից մինչև Անթիլիաս» թեմայի դասավանդման ժամանակ գործընթացի սկզբում սովորողներին անհրաժեշտ է դասավանդողի աջակցությունը՝ իրենց հետազոտությունները կազմակերպելու և դրանց տրամաբանական կառուցվածք հաղորդելու համար: Հարկ է օգտագործել տրամագրեր կամ գծապատկերներ, որոնցում ներառված կլինեն այնպիսի հարցեր, որոնք կօգնեն նրանց տեսնելու, թե ինչպես է տեղեկատվությունը վերածվում վկայության: Այստեղ կարող են նպաստավոր լինել քարտերի կիրառմամբ իրացվող վարժությունները, որոնց ժամանակ, իրադարձության ամբողջական և արժանահավատ պատկեր ստանալու նպատակով, «Կիլիկիո Հայոց կաթողիկոսությունը պատմության քառուղիներում, Սսից մինչև Անթիլիաս» թեմային առնչվող տարբեր վկայություններն ու տեսակետները գրվում են առանձին քարտերի վրա:

«Կիլիկիո Հայոց կաթողիկոսությունը պատմության քառուղիներում, Սսից մինչև Անթիլիաս» թեման կարող է արտահայտվել նաև պատմողական կառուցվածքի ձևով, կարելի է օգտագործել «սցենար գրելու» վարժությունները: Դա կարելի է անել այն դեպքում, երբ սովորողները գրում են իրադարձությանը համանման խաղարկային սցենարներ: Օրինակ, «Կիլիկիո Հայոց կաթողիկոսությունը պատմության քառուղիներում, Սսից մինչև Անթիլիաս» թեմայի հենքով՝ կինոնկարի կամ հեռուստահաղորդման սցենար, որի հիման վրա կկառուցվի ֆիլմը: Այս մեղիա տեխնոլոգիան սովորողներին ոչ միայն օգնում է օգտագործել տարբեր աղբյուրներից եկող վկայությունները՝ իրադար-

ձուլթյունների հերթականությունը հասկանալու համար, այլև հնարավորություն է տալիս հետևելու, թե ինչպես են հիմնական գործող անձինք արձագանքում իրադարձություններին ու միմյանց գործողություններին: Խաղարկային սցենարների ստեղծումը հրաշալի միջոց է սովորողների մոտ պատմության մեկնաբանողական հմտություններ զարգացնելու, պատմական որևէ դեպքի զարգացումն ավելի խորքային կերպով քննելու, մասնավոր օրինակով տվյալ ժամանակի պատմական համատեքստը հասկանալու համար:

Խաղարկային սցենարները հաճախ սովորողների համար որևէ նոր բան իմանալու հետաքրքիր ու գրավիչ տարբերակներ են. ավելին՝ դրանք հնարավորություն են տալիս տեսնել դեպքերի հստակ զարգացում, ինչպես նաև պատմական իրադարձություններն ավելի պատկերավոր կերպով ընկալել:

Այս հնարը իրականացնելիս նախ անհրաժեշտ է՝ պաստառի գաղափարի նախապատրաստում, որն իրենից ենթադրում է.

- Սովորողների հետ կազմել «Կիլիկիո հայոց կաթողիկոսությունը պատմության քառուղիներում. Ս-սից մինչև Անթիլիաս» թեմայի ժամանակագրությունը, փաստական տվյալները, կերպարները:
- Սովորողներին աջակցող հարցեր տալ. օրինակ՝ ինչպիսի տեսանկյունից են դիտարկում ներկայացվող թեմայի ֆիլմի սցենարը, որոնք են հիմնական կերպարները, նրանց միջև ինչպիսի հարաբերություններ կան, իրադարձության մաս կազմող ո՞ր դեպքերն են ֆիլմում արտացոլվելու, ինչ վերնագիր ընտրել:

- Սովորողների հետ քննարկել, թե ինչ ժանրի ֆիլմ են պատրաստվում նկարահանել (դրամա, ողբերգություն, կատակերգություն և այլն), գլխավոր ինչպիսի դրվագներ են դնելու ֆիլմի հիմքում, որ կարտահայտեն նրանց հիմնական շեշտադրումները:
- Սովորողներին խրախուսեք խմբերով աշխատանքի միջոցով ընտրել, թե թեմայի կերպարներից քանիսն են ներկայացված լինելու, որ կերպարները և ինչու հենց նրանք, ինչպես են այդ կերպարները կապվելու ֆիլմի ընդհանուր տրամաբանության հետ:
- Սովորողներին կարող եք հարցնել՝ արդյոք պատառի կամ տեսանյութ-հոլովակի մեջ ներառելու են նաև որևէ ապրանքի գովազդ. եթե այո, ապա՝ ինչպե՞ս, ինչու:
- Սովորողներին առաջարկեք քննարկել, թե ինչ են պատկերելու ֆիլմի պատատառին, որպեսզի գրավեն հանդիսատեսի ուշադրությունը, դիպուկ արտահայտեն ֆիլմի տրամաբանությունը:
- Սովորողները կարող են ֆիլմի պատատառը ստեղծել էլեկտրոնային որևէ անվճար ծրագրով կամ ձեռքով՝ թղթի վրա կամ էլ ուղղակի գրելով, թե ինչ է լինելու պատատառին: Կարևոր է՝ որքան հմուտ է ձևավորված պատատառը, կարևոր է, թե ինչ տրամաբանությամբ է այն ստեղծված:

Պատատառի օրինակ.

Մեր ֆիլմի դեպքում որպես վերնագիր ընտրել ենք հետևյալը՝ «Կիլիկիո հայոց կաթողիկոսությունը պատմության քառուղիներում. Սսից մինչև Անթիլիաս».

- ⊙ Պատահաբար վրա պատկերելու համար ընտրել ենք Սարգիս Պիծակի կտավները (նկարչի և հասարակարգի հարաբերություններն արտահայտելու, միջնադարյան Կիլիկյան Հայաստանի մանրանկարիչ Սարգիս Պիծակի մանրանկարների և քրիստոնեական հավատքի հետ կապը ցույց տալու համար):

Նյութի ժամանակագրության օրինակ

- ⊙ Պահլավունիների տոհմի հաստատումը հայոց կաթողիկոսական աթոռին:
- ⊙ Հայոց եկեղեցու պառակտումները: Բարսեղ Ա Անեցու ջանքերը հայրապետական աթոռի վերամիավորման հարցում:
- ⊙ Գրիգոր Գ Պահլավունին Հայոց կաթողիկոս, կաթողիկոսարանի տեղափոխումը Հռոմկլա:
- ⊙ Ներսես Շնորհալու գործունեության սկիզբը:
- ⊙ Ներսես Շնորհալու մատենագրական վաստակը:
- ⊙ Մլեհ իշխանապետի եկեղեցական քաղաքականությունը:
- ⊙ Լևոն Մեծագործը և եկեղեցին Գրիգոր Տղայի աթոռակալության տարիներին:
- ⊙ Գրիգոր Քարավեժի կարճատև աթոռակալումը (1193-1194):
- ⊙ Եկեղեցին Գրիգոր Ապիրատի կառավարման ժամանակաշրջանում և Կիլիկիայի հայկական թագավորության հռչակումը:
- ⊙ Ներսես Շնորհալու Գրիգոր Տղայի Գրիգոր Քարավեժի Գրիգոր Ապիրատի Ներսես Լամբրոնացի:
- ⊙ Հովհաննես Սսեցի կաթողիկոսի գործունեության առաջին շրջանը:

- ⊗ Զաքարե ամիրսպասալարի և եկեղեցու հարաբերությունները:
- ⊗ Հայոց եկեղեցին Հովհաննես Սսեցու աթոռակալման վերջին շրջանում:
- ⊗ Կոստանդին Ա Բարձրբերդցին՝ կաթողիկոս: Սսի 1243 թթ. եկեղեցական ժողովը:
- ⊗ Եկեղեցաքաղաքական իրավիճակը Կիլիկյան Հայաստանում 1250-1280-ական թթ.:
- ⊗ Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունների բարդացումը և Հռոմկլայի կաթողիկոսարանի կործանումը:

Սովորողների հետ կարելի է քննարկել Ֆիլմի իրադարձային համատեքստը, օրինակ՝ հասարակական երևույթներ, որոնք տեղի են ունեցել Կիլիկիան Հայաստանում ներկայացվող ժամանակահատվածում: Կարող ենք նաև սովորողների հետ դիտարկել տարբեր կերպարներ. Ներսես Շնորհալի, Գրիգոր Քարավեժի, Գրիգոր Զ Ապիրատ, Ներսես Լամբրոնացի և այլն:

Կրոնի՝ երբեմնի ունեցած կարևորության և ազդեցության չափերի գիտակցումը շատ բարդ է մերօրյա, անընդհատ ավելի աշխարհիկ դարձող իրականության պայմաններում: Ժամանակակից աշխարհն ու կենսակերպը գնալով աշխարհիկ են դառնում, ուստի սովորողների համար դժվար է լինում պատկերացնել, թե իրականում ինչպիսի ծավալների էր հասնում եկեղեցու ներկայությունը և ազդեցությունը, օրինակ՝ 14-րդ դարից մինչև 20-րդ դարի սկիզբ՝ հայկական պետության բացակայության պայմաններում, հասարակական հարաբերություններում, կրթական և այլ ոլորտներում:

Ուստի սովորողները պետք է ինքնուրույն կամ խմբով պատասխանեն նշված հարցին.

❖ Ինչու է Հայաստանում և աշխարհի հայ գաղթօջախներում կրոնի, մասնավորապես Հայ առաքելական Սուրբ եկեղեցու, դերն ավելի մեծ եղել Միջնադարում և Նոր շրջանում, քան մեր օրերում և այլն

«Կրիկիկո հայոց կաթողիկոսությունը պատմության քառուղիներում. Սաից մինչև Անթիլես» թեմայի դասավանդման շրջանակներում մեկ այլ տարբերակ է բազմատեսանկյուն քննարկում-բանավեճի կազմակերպումը: Սրա էությունն այն է, որ սովորողները լսում են մի շարք բանավոր վկայություններ Կրիկիկո Հայոց կաթողիկոսության պատմության, լսում են մարդկանց, որոնք խոսում են միևնույն իրադարձությունների մասին՝ դրանք նկարագրելով կամ մեկնաբանելով տարբեր կերպ: Այս դեպքում սովորողներն ի զորու են մանրամասն վերլուծելու դրանք և այդ ընթացքում համոզվելու, որ հիշողությունը մեծապես ազդում է բանավոր վկայությունների վրա:

Մեկ այլ տարբերակ է տվյալների պատկերման հնարը, այն արդյունավետ միջոց է պատմական վիճակագրական տվյալների համադրման և ներկայացման հմտություններ ձեռք բերելու, դրա միջոցով պատմական նյութի համատեքստն ավելի լավ պատկերացնելու համար: Այս հնարը ևս առաջարկում ենք կիրառել մեր կողմից ներկայացվող թեմայի դասավանդման ժամանակ:

Սովորողների հետ ուսումնասիրեք թեմային առնչվող պատմական տարբեր տվյալների պատկերման օրինակներ, կարող եք քննարկել, թե «Կրիկիկո հայոց կաթողիկոսությունը պատմության քառուղիներում. Սաից մինչև Ան-

թիւիւս» թեման ինչ բնույթի տվյալներ է ներառում, ինչ տեսակի գծապատկերներ են ընտրված և ինչու:

● Ուսումնասիրվող՝ «Կիլիկիո Հայոց կաթողիկոսութ-
յունը պատմության քառուղիներում, Սսից մինչև Անթի-
լիաս» նյութի վերաբերյալ կարող եք սովորողներին առա-
ջարկել լրացուցիչ փաստական տվյալներ հավաքել, սա
կիսթանի պատմական աղբյուրների հետ աշխատանքը և
կօգնի էլ ավելի խորը պատկերացնել համատեքստը:

● Առաջարկեք ինքնուրույն կամ փոքր խմբերով
տվյալների գծապատկերներ ստեղծել:

● Քննարկեք, թե որքան հստակ են դրանք ներկայաց-
նում տվյալները, ինչ կարելի է եզրակացնել տվյալների ու-
սումնասիրությունից:

Օրինակ՝ բազմաշերտ տվյալներ դուրս բերել Կիլի-
կիո կաթողիկոսության վերաբերյալ ի դարասկզբին:

Կարող եք սովորողներին առաջարկել ստեղծել, Օրի-
նակ՝

- ◎ նրանք կարող են բազմաշերտ տվյալներ դուրս բե-
րել ի դարասկզբին Կիլիկիո կաթողիկոսության
թեմերի վերաբերյալ,
- ◎ Կիլիկիո կաթողիկոսությանը ենթակա հայ բնակ-
չության թեմական բաժանման,
- ◎ Կիլիկիո Հայոց կաթողիկոսության եկեղեցական
կալվածքների վերաբերյալ:

Սովորողները կարող են այս տվյալների հիմքով գծա-
պատկեր ստեղծել, որը թույլ կտա փոփոխությունները
պատկերավոր տեսնել: Տվյալները կարելի է պատկերել
թղթի վրա՝ կիրառելով գունավոր մատիտներ, գրիչներ
կամ էլ տարբեր գույների թղթեր: Հնարավորության դեպ-
քում կարելի է կիրառել պարզ համակարգչային ծրագրեր՝

MS Word կամ MS Excel: Դրանից բացի՝ հնարավոր է կիրառել առցանց գործիքներ, օրինակ՝ public.tableau.com:

Հաջորդիվ՝ կարող եք նրանց հետ քննարկել, օրինակ, հետևյալ հարցերը.

1. Կրոնա-քաղաքական և տնտեսական ինչպիսի՞ իրադարձություններ ու գործընթացներ կառանձնացնեք, որ ազդել են Կիլիկիո Հայոց կաթողիկոսության պատմական գործընթացի վրա:
2. Ինչպիսի՞ կրոնական զարգացումներ են տեղի ունեցել:
3. Կիլիկիո Հայոց կաթողիկոսությունն քաղաքական, տնտեսական ու մշակութային ինչպիսի՞ ազդեցություններ է ունեցել Կիլիկիայի պատմության մեջ:
4. Կիլիկիո Հայոց կաթողիկոսությունն ինչպիսի՞ հարաբերություններ է ունեցել էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսության հետ:

Դասախոսությունների և ընթերցանության համար արդյունավետ ռազմավարության՝ հմտություններից է նաև նշումներ կատարելը, որ հատկապես կարևոր է պատմական տարբեր, բարդ նյութեր համակարգված ուսումնասիրելու համար:

Սովորողները հաճախ խուսափում են նշումներ կատարելուց, քանի որ իրականում չգիտեն, թե ինչպես կարելի է դա անել: Այդ իսկ պատճառով նպատակահարմար է տիրապետել տարբեր ռազմավարությունների, որոնք կարող եք ներկայացնել սովորողներին և այդպիսով նրանց հնարավորություն տալ ընտրել ամենահարմար տարբերակը: Սովորողների հետ քննարկեք, թե որ նոթագրման ռազմավարությունն է ամենից հարմար իրենց: Մեր պարագայում առաջարկում ենք կիրառել հիմնական դրույթների քարտեզ ռազմավարությունը: Այս ռազմավարությունը քաջալերում է սո-

վորողներին «Կիլիկիո հայոց կաթողիկոսութունը պատմութ-
յան քառուղիներում. Սսից մինչև Անթիլիաս» թեմայի նյութը
բաժանել հիմնական մտքերի, երկրորդական մտքերի և այդ
մտքերը հիմնավորող պնդումների: Այս մոտեցումն օգտա-
կար է որպես դասարանում կատարված նշումների վերջնա-
կան մշակում, այսինքն՝ սովորողները կարող են իրենց կա-
տարած խառը նշումները ամփոփելու համար դրանք վերա-
ծել հասկացությունների քարտեզի: Վերջնական քարտեզի
ստեղծումը նախապես մտքում ունենալն օգնում է սովորող-
ներին սկզբնական նշագրման ժամանակ ավելի հասցեակա-
նացված և կենտրոնացված նշումներ կատարել: Մտքի քար-
տեզագրման մեթոդի կիրառումը, հատկապես բովանդա-
կությամբ հագեցած պատմության դասին, խթանում է սովոր-
ողների տրամաբանության շերտերում թաքնված մտքի
պատկերավորման, առարկայացման և տեսակավորման
ճիշտ ուղղությամբ տանող միջոցները, որոնք հեշտացնում
են ոչ միայն սովորելու, այլև սովորածն ամրապնդելու գոր-
ծընթացը:

Մտքի քարտեզագրումը թույլ է տալիս ստեղծել տրա-
մագիր, որով կդասակարգվեն և կտեսակավորվեն ձեռք բեր-
ված պատմական գիտելիքները: Նմանատիպ ֆառեզները
կառուցվում են մեկ մեծ գաղափարի շուրջ, որից նյութավորվում
են ավելի փոքր, ածանցված գաղափարներ: Քարտեզը կարող
եք կառուցել բազմաթիվ կայքերի ու հավելվածների միջո-
ցով: Օրինակ՝ <http://drichard.org/mindmaps/>

Տարբեր տարիների ընթացքում կատարված ուսումնա-
սիրությունները ցույց են տալիս, որ գաղափարների շուրջ
քարտեզի կառուցումն ավելի արդյունավետ է, քան սովորե-
լու ավանդական տեխնոլոգիաները: Իսկ եթե մտքի քարտե-
զագրման մեթոդը կիրառվի գրառումներ կատարելու Քոր-

ների մեթոդին զուգահեռ, ապա պատմության դասագործընթացի արդյունավետությունը կկրկնապատկվի:

Գրառումներ կատարելու Քորների մեթոդը պատմության դասավանդման գործընթացում դեռևս լայն տարածում չունի, սակայն այն արդի և առավել քան արդյունավետ փոխներգործուն եղանակներից է¹:

Քորների մեթոդով նոթագրելու համար նշումները պետք է բաժանել երեք մասի. հիմնական մտքերը կամ հարցերը գրվում են ձախակողմյան սյունակում, այդ հարցերի պատասխանները կամ դրանք հիմնավորող պնդումները գրվում են աջակողմյան սյունակում (դասի ընթացքում կամ դասից հետո), իսկ էջի ներքևում կատարվում է դասի ընդհանուր ամփոփումը:

Ներկայացված աղյուսակի կիրառումը պատմության դասագործընթացում հնարավորություն կընձեռի՝

- հստակ տարանջատելու առաջնային տեղեկատվությունը երկրորդայինից, հիմնական տեղեկությունները՝ լրացուցիչ տեղեկություններից, թեմայի առանցքային հարցերն՝ օժանդակ հարցերից,

- գրառումների սյունակում գրառելու կարևոր մտքերը՝ գծապատկերների, նկարների, խորհրդանիշերի և այլ նշանների գործածմամբ,

- հարցերի սյունակում պատասխաններ ստանալու ակնկալիքով, ձևակերպել առաջացած բոլոր հարցերը,

- հակիրճ բովանդակության սյունակում՝ դասի ավարտից հետո մի քանի նախադասությամբ ամփոփելու ուսումնասիրված նյութը:

¹ Шадриков В., Учебный план и личность учителя, М., изд-во “Педагогика”, 1993, с. 177,

**Քորների մեթոդով գրառումներ կատարելու
աղյուսակ**

ԱՄՍԱԹԻՎ	Կիլիկիո հայոց կաթողիկոսությունը պատմութ- յան քառուղիներում. Սսից մինչև Անթիլես
ՀԱՐՅԵՐ/ Հիմնա- կան մտքերը/	ԳՐԱՌՈՒՄՆԵՐ Պատասխաններ կամ հիմնավորող պնդումները/
ՀԱԿԻՐՃ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	

Այսպիսով, կարելի է ասել, որ պատմության դասագործընթացում սովորողների բազմատեսանկյուն մտածողության ձևավորման արդյունավետությունը պայմանավորվում է փոխկապակցված տարբեր տեխնոլոգիական մոտեցումներով և բազմատեսանկյուն մտածողությունը չի ձևավորվում պարզապես պատմական որևէ մեթոդի կամ տեխնոլոգիայի կիրառմամբ, այն ձևավորվում է, երբ դասավանդողի կողմից նպատակային ընտրված արդի մեթոդների և տեխնոլոգիաների օգտագործմամբ ընդլայնվում են որոշակի թեմայի կամ երևույթի վերաբերյալ պատմական վերլուծության շրջանակները: Այսպես, հնարավոր է կիրառել այնպիսի մեթոդ, որ հարցականի տակ դրվի ընդունված կարծիքն այն մասին, թե որ տեսակետներն են կարևոր որոշակի պատմական իրադարձության կամ զարգացման վերաբերյալ սովորողների ընկալումների համար: Այս համապատկերում տալով այդ տարբերական բացատրությունը՝ Մաքքյուլախը գրում է. «Եթե ես ասեմ, որ շունն ունի մեկ ականջ, մեկ ոտք և մեկ պոչ, այդ պնդումը բառացիորեն ճշմարիտ կլինի: Շունն ունի այդ ամենը: Սակայն այդ պնդումը չի տալիս իմ շան արդարացի

նկարագրությունը, քանի որ շունս ունի երկու ականջ, չորս ոտք և մեկ պոչ»¹:

Ամփոփելով նշենք, որ պատմության դասագործընթացում սովորողների բազմատեսանկյուն մտածողության ձևավորման նպատակով վերոնշյալ ուսումնական տեխնոլոգիականացված հնարների, վարժությունների աշխույժ կիրառումը կնպաստի նրանց հստակ պատկերացումների ձևավորմանը հատկապես այն գործընթացների վերաբերյալ, որոնց միջով պետք է անցնի պատմության հետազոտողը՝ վկայությունները հավաքագրելու, հաստատելու և դրանց հիմնավորվածության, արժանահավատության, անաչառության, անկողմնապահության և ստույգության աստիճանը որոշելու նպատակով:

ТЕХНОЛОГИЯ ФОРМИРОВАНИЯ МУЛТИПЕРСПЕКТИВНОГО МЫШЛЕНИЯ И «АРМЯНСКИЙ КАТОЛИЦИЗМ КИЛИКИИ НА ЧЕТЫРЕХ ПУТЯХ ИСТОРИИ. ОТ СС ДО АНТИЛЬСКИХ ОСТРОВОВ» ПРЕПОДАВАНИЕ ТЕМЫ

*Армине Еприкян
Хачик Хамисян*

РЕЗЮМЕ

Таким образом, можно сказать, что эффективность формирования мультipersпективного мышления учащихся в процессе урока истории определяется различными взаимосвязанными технологическими подходами, и

¹ D. Harkness, (1994), *History Teaching and European Awareness*, Strasbourg, Council of Europe.

это мышление формируется не просто при использовании какого-либо исторического метода или технологии, а при помощи определенных современных методов и технологий, целенаправленно отобранными учителями, которые являются расширенными рамками исторического анализа темы или явления. В статье: «Армянский Католицизм Киликии на четырех путях истории» показаны некоторые приемы, методы и упражнения, представленные нами в ходе преподавания темы «От Азии до Антильских островов», которые дадут возможность поддерживать будущих учителей истории современными методическими навыкам, развивать у них умение придавать технологичность процессу обучения, формировать умения грамотно пользоваться современными техническими средствами, а также развивать умения, возникшие в области методики преподавания истории и наметить пути преодоления трудностей.

TEACHING THE TOPIC ABOUT THE TECHNOLOGY OF FORMATION OF MULTI-PERSPECTIVE THINKING AND THE “ARMENIAN CATHOLICISM OF CILICIA IN THE FOUR PATHS OF HISTORY. FROM SIS TO ANTILLES”.

*Armine Eprikyan
Khachik Khamisyan*

SUMMARY

Therefore we can say that the effectiveness of multi-perspective thinking of students during the history lesson is determined by various interrelated technological approaches and multi-perspective thinking, which is not simply formed by using any historical method and technology. They are originated by certain modern methods and technologies intentionally selected by the teacher and can be expanded within the frameworks of historical analysis of a certain topic

or phenomenon. In the article “Armenian Catholicism of Cilicia in the four paths of history. From Ss to Antilles”, some techniques, methods and skills which were presented by us while teaching the theme on “From Asia to the Antilles” will provide an opportunity to support future teachers of history with modern methodological skills, develop their abilities to give somewhat a technological character to the teaching process, usage of contemporary competent technical methods and also skills to be fully emerged in the field of history teaching methodology and also to outline ways to overcome challenges.

Արմինե Եփրիկյան, պատմական գիտությունների թեկնածու, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի դոցենտ: Հետաքրքրությունների ոլորտը՝ պատմություն դասավանդման մեթոդիկա, Նախիջևանի պատմություն, հայերի ինքնապաշտպանական մարտերի պատմություն.

✉ armineeprikyan@mail.ru

Խաչիկ Խամիսյան, ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի պատմության բաժնի IV կուրսի ուսանող.

✉ xachik.xamisyanyan@mail.ru

Армине Еприкян, кандидат исторических наук, доцент Кафедры истории Армении АГПУ. Сфера интересов: Методика преподавания истории, история Нахичевана, история боев самообороны армян.

✉ armineeprikyan@mail.ru

Хачик Хамисян, Студент 4 курса исторического отделения факультета истории и социальных науки АГПУ

✉ xachik.xamisyanyan@mail.ru

Armine Eprikyan, Ph.D., Associate Professor Faculty of History and Social Sciences of ASPU. Areas of interest: Methodology of teaching history, the history of Nakhichevan, The history of self-defense battles of the Armenians.

✉ armineeprikyan@mail.ru

Khachik Khamisyan, 4th year student of the Department of History the Faculty of History and Social Sciences ASPU.

✉ xachik.xamisyan@mail.ru

Վազգեն Համբարձումյան

«ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԵՐԵՆԸ» ՄԻՋԻՆ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՆՈՐՄԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ (ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)

Հիմնաբառեր՝ գրական հայերեն. հին և միջին շրջան. գրաբար և աշխարհաբար, «կիլիկյան հայերեն». բարբառներ և այլ տարածք-ների լեզու, միջին հայերենի ամբողջական ընդգրկում:

Ключевые слова: литературный язык, древний и средний периоды языка, «килийский армянский», диалекты и другие территориальные варианты языка, среднеармянский литературный язык как целое коммуникативное явление.

Keywords: The Literary Armenian language, Old and Middle Armenian, Cilician Armenian, dialects and other regional language variants, Middle Armenian as a common communicative phenomenon.

Ներածական

Հայերենի պատմության միջին շրջանը (ԺԲ-ԺՁ դդ.) ներկայանում է ոչ միայն գրական և խոսակցական (բարբառային), տարածքային (արեալային) և գործառական (ֆունկցիոնալ) տարբերակներով, այլև պետական լեզվի կարգավիճակով. այդ շրջանում գուգահեռ գործածվում է գրաբարը՝ արդեն ոչ իբրև կենդանի լեզու:

Հայերենի այդ շրջանի ուսմնասիրությանը, մանավանդ նրա ենթաշրջանների առանձնացմանն ու բնութագրմանը դասական հայերենագիտությունը մոտեցել է միայն գրական (ժամանակի պետական) լեզվի նկատառումով՝ սկսած ԺԹ դ. կեսերից մինչև մեր օրերը:

Այդուհանդերձ, դեռևս կան խնդիրներ, որոնք ենթադրում են նոր լուծումներ՝ ամենից առաջ գրական հուշարձանների տվյալների ամբողջության մեջ:

1. Միջին հայերենի ավանդական շրջանաբաժանումը

Հայերենի գրավոր շրջանի պատմությունը ներկայանում է մի քանի փուլով, ժամանակային-գործառական անվանումով՝ հին, միջին և նոր, որոնք, իրենց հերթին, ունեն ենթաշրջաններ՝ պայմանավորված լեզվի կառուցվածքի մեջ բաղադրիչների և նրանց փոխհարաբերության տարբերությունների մեծությամբ: Նման բաշխումը գիտական-տեսական ընդհանուր մոտեցման արդյունք է, որ կիրառելի է ամեն մի գիտության դեպքում:

Դասական հայերենագիտության մեջ, բնական է, եղել են շրջանաբաժանման փորձեր՝ ամբողջական կամ որևէ պատմաշրջանի վերաբերյալ (Ա. Բագրատունի, Հր. Աճառյան, Ա. Ղարիբյան, Գ. Սևակ, Էդ. Աղայան, Գ. Զահուկյան և ուրիշներ)¹: Դրանք մեծ մասամբ ընդհանուր բնույթի են՝ ոչ միայն ժամանակային սահմանի որոշման, փաստական նյութի ամբողջական ընդգրկման առումով, այլև հին գրական հայերենի (գրաբարի) հետագա տարբերակի (ոչ կենդանի լեզվի) և միջին շրջանի տարածքային տարբերակների (բարբառների) առնչության տեսանկյունից²:

¹ Տե՛ս **Բագրատունի Ա.**, Հայերէն ֆեռականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852: Հր. Անադյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Ե., 1951: **Гарибян А.**, *К периодизации истории армянского литературного языка*, «Աշխատությունների ժողովածու», հ. III, Ե., 1948, էջ 41-64: **Սևակ Գ.**, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Ե., 1948, էջ 9-18:

² Հմմտ. **Աղայան Է. Բ.**, Գրաբարի պատմության շրջանաբաժանումը, «Բանբեր երևանի համալսարանի», 1974, 2, էջ 58-81: **Համբարձումյան Վ. Գ.**, Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., Ե., 1990:

Ներկայումս ընդունելի է համարվում Գ. Զահուկյանի շրջանաբաժանումը, որն անփոփոխ բերվում է հեղինակի տարբեր աշխատություններում, ուղենշային է լեզվի պատմությանը նվիրված ուսումնասիրությունների համար¹:

Միջին շրջանից ունենք տարբեր բնույթի գրական հուշարձաններ (ինքնուրույն ձեռագրեր, դրանց հիման վրա կազմված քննական բնագրեր, հիշատակարաններ, վիմագրեր և այլն), որոնք մեծ մասամբ ուսումնասիրված են հայոց լեզվի ընդհանուր և առանձին աշխատություններում, թեև դեռևս կան ամենևին չուսումնասիրված կամ մասամբ ուսումնասիրվածներ:

Լեզվի գրավոր շրջանի պատմության վերաբերյալ նոր պատկերացումների պայմաններում, տեսական սահմանման որոշակի չափանիշների (պարամետրերի) նկատառումով, ինչպես նաև հատկապես գրական հուշարձանների լեզվի ավելի մանրամասն և ամբողջական քննության հաշվով Զահուկյանի կատարած շրջանաբաժանումը, մեր այս թեմայի հետ կապված, ունի վերանայելի կողմեր, այսինքն՝ կարիք կա որոշակի ճշգրտումների և լրացումների, և դա բնական է: Ի դեպ՝ այդ շրջանաբաժանման վերաբերյալ նախկինում ևս եղել են առարկություններ. օրինակ՝ հին գրական հայերենի, այսպես կոչված, ինքնակա («հայկաբան») և օտարաբան (հատկապես՝ «հունաբան») տարբերակների սահմանների հստակեցման, և առանձնացման, միջին գրական հայերենի և ժամանակի գրաբարի, նոր գրական հայերենի (վաղ աշխարհաբարի), «երկճյուղ աշխարհաբարի» առանձնացման

¹ Տե՛ս Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմության պեթիոդիգացիայի հարցերը // «Գիտական աշխատություններ» (Երևանի պետական համալսարանի), հ. 57, 1956, էջ 49-102: Նույնի՝ Հայոց լեզվի պատմության փուլերը, Ե., 1964: Նույնի՝ Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969:

ժամանակի ճշգրտման հարցերում¹ էդ. Աղայանը միջին հայերենի և ժամանակի գրաբարի առնչությամբ գրում է. «Գրաբարն իր հեղինակությամբ, ստեղծված «սրբազան» ավանդույթներով ու իր մշակվածությամբ դեռևս կենսունակ է իբրև գրական լեզու: Նրանից բոլորովին հրաժարվել անհնարին է: Այս էլ, ահա, թելադրում է երկու գրական լեզուների զուգահեռ գործածությունը՝ նրանց գործառույթյան ու լորտների որոշակի բաշխումով ու տարբերակումով»²:

Հայոց լեզվի պատմության միջին շրջանը, ըստ ավանդական (տրագիցիոն) շրջանաբաժանման, ընդգրկում է XII-XVI դդ., որի ընթացքում հայերենը շարունակում է հանդես գալ նաև գրավոր լեզվի գործառույթյամբ, ընդ որում այն ոչ միայն հին շրջանից եկող գրավոր ավանդների շարունակողն է (պատմություն, վարք, փիլիսոփայություն, աստվածաբանություն, բնագիտություն), այլև նոր ժանրի (սեռի) գրականության սկզբնավորողը (օրենք և իրավունք, բժշկություն, բանաստեղծություն, առակագրություն և այլն):

Մի որոշակի ժամանակում (XI դ. վերջ – XIII դ.) այն հանդես է գալիս պետական լեզվի կարգավիճակով, որ առհասարակ հաղորդակցական առումով ամեն մի լեզվի բարձր մակարդակ է նշանակում: Միջին հայերենը, ի տար-

¹Տե՛ս Овсепян Л.С., *К вопросу о взаимоотношении древнеармянского литературного языка и диалектов в V веке*, “Лингвистическая география, диалектология и история языка”, Ереван, 1976, с. 369-376: Հովսեփյան Լ. Ս., Հին հայերենի պատմության շրջանաբաժանման մասին, Միջազգային հայերենագիտական գիտաժողով (Երևան, 21-23 սեպտեմբերի, 1982թ.), Զեկուցումներ, Ե., 1984, էջ 379-384: Мурадян М.А., *Территориальные письменные разновидности и диалекты на первом этапе развития среднеармянского языка (XII-XIV вв.)*, “Лингвистическая география, диалектология и история языка”, Ереван, 1976, с. 362-368: Աճեմյան Վ. Լ., Գրական արևմտահայերենի ձևավորումը, Ե., 1972:

² Աղայան է. Բ., նշվ. աշխ., էջ 78:

բերություն առանձնապես հին գրական լեզվի, ունեցել է այդ բացառիկ (իշխանապետության և թագավորության լեզու լինելու) հնարավորությունը, մի երևույթ, որ հայերենն առհասարակ վերստին պիտի ունենար բավականին ուշ՝ մեր օրերում:

Միջին գրական հայերենի բարբառային հիմքը պատմականորեն առաջ եկած լեզվական վիճակն է՝ իբրև վերբարբառ (կոյնե), որով այն հանրության բնաշխարհիկ և տարաշխարհիկ անջատվածության պայմաններում, հայտնի է, ձևանում է կիլիկյան (իշխանա)պետության և բնաշխարհիկ (պետականությունից զուրկ) գոյատևության պայմաններում: Եվ ըստ այդմ՝ լեզուն կրող նույն հանրության հասարակական, տնտեսական, մշակույթի ընդհանուր կազմի դեպքում է, որ հնարավոր է լինում խոսելու վերջինիս գրական և ոչ գրական (բարբառ, խոսվածք և այլն) հարաբերության մասին: Ուստի ընդհանուր միջին գրական հայերենը մի կողմից՝ տարաշխարհիկ անջատվածության, իսկ մյուս կողմից՝ բնաշխարհիկ գոյակցության պայմաններում ձևացած վերբարբառի (կոյնեի) հիմքով լեզու է, որ բնութագրվում է «կիլիկյան» և (առանձին) «բնաշխարհիկ» (պայմանական) անվանումներով:

Գ. Ջահուկյանի շրջանաբաժանման մեջ առանձնացվում է միջին հայերենի երկու ենթաշրջան՝ «կիլիկյան նորմավորման» (XII-XIV դդ.) և «աշխարհաբարացման» (XV-XVI դդ.), որոնք բնորոշվում են ոչ այնքան լայն, որքան մասնակի հատկանիշների նշումներով, այսինքն՝ գրավոր աղբյուրների նյութի ոչ բավարար ընդգրկմամբ, ընդ որում

ուչ ավելի մեծ ուշադրություն արժանացած լեզվի տարբերակմամբ¹։

Ճիշտ է, հեղինակը տալիս է որոշ բացատրություններ՝ «գրական լեզվի հիմքում ընկած» կիրիկյան բարբառային-խոսակցական նորմայի, վերջինիս և ավելի ուշ երևան եկած Կիրիկիայի բարբառի լեզվաքերականական տարբերությունների մասին, այնուհետև՝ նշում է, որ «արևելահայ բարբառները, մասնավորապես Արարատյան բարբառը այս ժամանակ (իմա՝ «կիրիկյան նորմավորման» ենթաշրջանում. – Վ. Հ.) դրսևորում էին առանձնահատուկ գծեր», այդուհանդերձ խնդրի լուծումը, կարելի է ասել, հեռու է սպառնալիքներից²։ Այսպիսով, ըստ Գ. Զահուկյանի տեսության՝ միջին գրական լեզուն առավելապես «կիրիկյան հայերենն» է՝ իր «նորմավորման և «աշխարհաբարացման» միտումներով։

Այնինչ, խնդիրն ավելի իրական լուծում է ենթադրում՝ առավելապես կապված միջին շրջանի գրական լեզվի և նրա բարբառային հիմքի, այլև մյուս, մանավանդ արևելահայն բարբառների հետ հնարավոր առնչությունների, գրական տարբերակի գործառական ընդգրկումների, տարածքային բաշխվածության հետ։ Գ. Զահուկյանի այդ կարևոր աշխատությունից հետո հարցի լուծումը, ինչպես գիտենք, մնում է չիրագործված. որովհետև հետագա ուսումնասիրությունները խնդրին (իմա՝ շրջանաբաժանմանը) չեն անդրադառնում՝ չհաշված այն, որ փորձ է արվում լեզվի այդ տարբերակի ինչ-ինչ իրողությունների քննության ընթացքում մասնակի լուծումներ առաջարկել։

¹Տե՛ս Զահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմության պեթոլոգիզացիայի հարցերը, էջ 79-84։

² Տե՛ս նույն տեղում, էջ 79, նաև 82։

2. Միջին հայերենի նյութի հաղորդակցական ընդգրկումը

Լեզվի պատմության շրջանաբաժանումն առհասարակ ինքնանպատակ չէ, այլ հիմնված է լինում արտալեզվական, առավել ևս լեզվական հանգամանքների վրա, կատարվում է այդ պատմությանը վերաբերող երևույթների մասին ավելի իրական պատկերացում ունենալու նպատակով:

Միջին հայերենով մեզ հասած գրավոր աղբյուրները մի մասն են այն ամբողջի, որ ստեղծված է եղել ժամանակի ընթացքում, ոչ միայն, այսպես կոչված, «կիրիկյան հայերենով», այլև այդ շրջանում գործառած մյուս տարբերակներով (գրաբար, այսպես կոչված՝ «գրաբարախառն բարբառ», «բարբառախառն գրաբար» և այլն), ընդ որում ստեղծված մայր հայրենիքում (տարբեր գավառներում), այնպես էլ նրանից դուրս (նաև Կիրիկյան ինքնավարության պայմաններում)՝ վերջիններիս ընդհանուր իմացական, կրթական-հոգևոր միջավայրում, գրված ոչ միայն գրական (գրաբարի բազայի վրա), այլև ժամանակի խոսակցական (բարբառալին) հիմքով:

ա) Այդ գրավոր աղբյուրները, իբրև ժամանակի լեզվի քննության առարկա, կարող են հիմք հանդիսանալ միջին շրջանի փուլերի ավելի հստակ առանձնացման համար՝ կապ հին և նոր հայերենի միջև. դա մի օղակ է, որ ինչպես ճանաչողության ամեն մի երևույթի, այնպես նաև այս դեպքում կարելի է նկատի ունենալ ժամանակի առանցքի վրա, այն էլ ոչ թե երկանդամ, այլ եռանդամ հակադրությամբ, ինչպիսին է հին և նոր շրջանների դեպքում՝ հիմնված ընդհանուր սկզբունքի վրա¹:

¹ Գ. Զահուկյանի շրջանաբաժանման մեջ, ինչպես վերը նշվեց, ի տարբերություն հին և նոր շրջանների, որոնց դեպքում առանձնացվում է երեխական ենթաշրջան, այս

Որքան էլ մեզ հասած լեզվական նյութը համարում ենք ժամանակի ընթացքում ստեղծվածի մի մասը, այնուամենայնիվ ունենք պատկառելի քանակով գրական աղբյուրներ, որոնք աչքի են ընկնում իրենց գործառական (ժանրային կամ սեռային) առանձնակիություններ, դրանք են՝ գեղարվեստական (բանաստեղծություն), կրոնական-եկեղեցական (ճառեր, ներբողներ, շարականներ), պետական-իրավական (ասիզք, դատաստանագիրք), բնագիտական (բժշկություն, մաթեմատիկա, փիլիսոփայություն աստղագիտություն), քերականական («մեկնություններ») և այլն, վիժագիր կամ մագաղաթյա, մատչելի՝ նույնությամբ կամ քննական բնագրով։ Դրանք այսօր հայտնի են քննական բնագրերով, մեծ մասամբ եղել են բանասիրական, մասամբ լեզվական ուշադրության առարկա։ Այդուհանդերձ, այդ աղբյուրների լեզվի քննությունը չի կարելի համարել ամբողջական¹։ Նման մի դիտարկում ունի Ա. Մեյեն՝ Կարստի գրքի գրախոսության առիթով. «... դեռևս շատ բան է հարկավոր, որպեսզի հստակ պատկերացում ունենանք հայերենի զարգացման մասին, և ամենաէական հարցերը մնում են լուծման կարոտ»²։

բ) Ոչ միայն աշխարհագրական տարանջատվածության, այլև օտար անհարկավորության պատճառած խորթաց-

դեպքում դրանք երկուսն են, որ մի տեսակ անհամամասնություն է առաջ բերում թեկուզ լոկ տեսական առումով։

¹ Տե՛ս Karst J., *Historische Grammatik des Kilikisch-Armenischen*, Strassburg, 1901, նաև Կարստ Յ., Կիլիկյան հայերենի պատմական ֆեռականություն, Ե., 2002)։ Ղազարյան Ա. Ղ., Միջին հայերեն, գիրք Ա, Ե., 1960։ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Ա-Բ, Ե., 1972-1975։ Մուրադյան Հ.Ռ., Հայոց լեզվի պատմական ֆեռականություն, հ. I, Հնչյունաբանություն, Ե., 1982։ Հայոց լեզվի պատմական ֆեռականության, հ. II, Ե., 1975։

² Մեյե Ա., Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1978, էջ 581։

ման հետևանքը լինում է այն, որ հանրության հաղորդակցական միասնությունը դառնում է ջլատված, ընդ սմին մի կողմից՝ օտարաբան տարրերի, մյուս կողմից՝ տեղական-խոսակցական միջոցների առկայության պայմաններում անհնարին է խոսել միասնական լեզվի մասին:

Միջին շրջանի հայերենը օտարլեզվյան փոխնիփոխ ազդեցության կրող է, ինչպես նաև պատմական հայրենիքի տարբեր գավառներին յուրահատուկ տեղական անմիօրինակ խոսքի արտահայտություն: Օտարամուտ տեղական տիրապետության պայմաններում, բնական է, որ տեղ գտնեին «անհարազատ», բառեր, անվանումներ (տերմիններ), խոսքի այլ կառույցներ:

գ) Միջին հայերենի բնույթը բոլորովին այլ է, եթե նկատի ենք ունենում լեզվի տարբերակների առկայությունը՝ միջին շրջանի գրաբար, խոսակցական հիմքի վրա գրականացող լեզու, մայր երկրից հեռացած տարբեր բարբառների կրող հանրության խոսակցական լեզու, որոնք փաստորեն հանդես են գալիս իբրև ընդհանուր որակ, որ ընդունված է անվանել միջին գրական հայերեն:

Միջին գրական հայերենը խոսակցական լեզվի տարրերի գերակշռությամբ երևան եկող հաղորդակցական միջոց է. դա լավագույնս նկատելի է այդ շրջանի բանաստեղծության (Հովհաննես Երզնկացի, Գրիգորիս Աղթամարցի և ուրիշներ), առակագրության (Վարդան Այգեկցի, Ներսես Շնորհալի և ուրիշներ), այլ սեռի (Ժանրի) գրավոր հուշարձաններում՝ բժշկություն (Մխիթար Հերացի, Ամիրդովլաթ Ամասիացի և ուրիշներ), իրավագիտություն (Սմբատ Սպարապետ, Մխիթար Գոշ և ուրիշներ), շարականագրություն (Հով-

հաննես Իմաստասեր, Ներսես Շնորհալի և ուրիշներ)¹։ Մեծ տեղ ունեն ժամանակի ձեռագիր հիշատակարանները, որոնց լեզուն առաջ է բերում որոշակի պատկերացում միջին շրջանի, իբրև գրավոր, չնչին մասով միասնական, առավելապես տարբերակային լեզու²։

դ) Ինչպես ցույց են տալիս գրավոր աղբյուրները, միջին հայերենը ներկայանում է գրական նորմավորման ավելի ցածր մակարդակով, քան հին գրական հայերենը։

Եթե հին գրականում օտարլեզվյան ներթափանցումը (ասորաբան, հունաբան և այլն) մեծ մասամբ մշակութային էր, քան բանավոր-խոսակցական, ապա միջին շրջանում՝ ընդհակառակը, գերակայում է վերջինը, և դա անվարան բացատրելի է այն հանգամանքով, որ նվաճողների լեզուն (մոնղոլ-թաթարական, թյուրքական, և այլն) չունեւ այն մշակվածությունը, որ նկատելի էր հին շրջանի հայերենի հետ այլ լեզուների առնչության դեպքում։ Թեկուզ միայն այդ փոխառությունների նման տարբերությունը բավական է ասելու, թե միջին գրական հայերենը որակապես այլ է, քան հին գրական հայերենը, որը և ենթադրում է նոր, ուրույն սկզբունքների և մոտեցումների վրա հիմնված ուսումնասիրություն։

3. Միջին հայերենի նյութը գիտական ուսումնասիրություններում

Այս շրջանի գրական հուշարձանները, բնականաբար, ուսումնասիրության առարկա են եղել հայ գրավոր մշակույթի և հայագիտության տարբեր խնդիրների պարզաբանման

¹ Տե՛ս **Հակոբյան Գ. Ա.**, Շարականների ժամը հայ միջնադարյան գրականության մեջ (V-XV դդ.), Ե., 1980, էջ 206-286։

² Տե՛ս **Մաթևոսյան Ա. Ա.**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (Ե-ԺԲ դդ.), Ե., 1988։ Լ. Ա. Խաչիկյան, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե., 1950։ Նույնի՝ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հհ. Ա-Գ, Ե., 1955-1967։

բերումով: Դրանց լեզվի քննությունը հեռու է բավարար լինելուց, որ կարելի է բացատրել նյութի ծավալի, բովանդակության բազմազանության, լեզվական տարբերակների հասկանալիության աստիճանի տարբերության հանգամանքներով: Կան միջին հայերենի նվիրված տարբեր աշխատություններ, որոնք արժեքավոր են, կարևոր հայոց լեզվի պատմության համար, սակայն ամբողջական չեն¹:

Այսպես, քերականությունների որոշակի մասին, այսպես կոչված, «գրչության արվեստի» հայտնի նմուշներին անդրադարձել են հիմնականում քերականական ըմբռնումների պարզաբանման նպատակով, իսկ դրանց լեզուն, իբրև հատուկ նյութ, չի եղել հատուկ ուշադրության առարկա:

Անցյալ դ. 70-ական թթ. նկատվեց որոշակի աշխուժացում այս շրջանի լեզվի պատմության լիաժամալ նկարագրության նպատակով՝ գրավոր աղբյուրներին լայն ուշադրության առնելով: Խոսում են լեզվի, այսպես կոչված, բազմաձևության մասին, այն, որ գրավոր հուշարձանները ներառում են խոսակցական, նույնիսկ բարբառային բառեր և քերականական ձևեր, որոնք հեռու են նույն ժամանակի, այսպես կոչված, միջին գրական «ստանդարտից»²:

Ներկայումս խնդիր է առաջանում կատարելու միջին շրջանում երևան եկած գրավոր աղբյուրների լեզվի լայն քննություն՝ թե՛ քանակապես և թե՛ նյութի լայն ընդգրկմամբ (լեզվի բոլոր բաղադրիչների հաշվով)՝ ավելի իրական պատկերացում ունենալու համար³: Այսպիսի մտածումով էլ տա-

¹ Նման աշխատություններից տե՛ս, օրինակ, **Յովնանեսան Ղ.**, Հետազոտութիւնք նախնեաց ռավօրեմի վրայ, մասն 1, տետր Ա.Բ, Վիեննա, 1897:

² Հմմտ. **Мурдян М. А.**, նշվ. աշխ., էջ 366-367:

³ Այս շրջանի գրաբարի բնորոշ օրինակ է Հակոբ Դրիմեցու (XIV-XIV դդ.) տոմարագիտական երկերի լեզուն: Տե՛ս **Հակոբ Դրիմեցի**, Տոմարագիտական աշխատություններ, աշխատասիրությամբ Զ. Ա. Էյնաթյանի, Ե., 1987, էջ 126-308:

րիների ընթացքում մեր կատարած աշխատանքը, որքան մեզ այն հաջողվել է, հիմք է հանդիսանում առանձնացնելու միջին հայերենի ոչ թե երկու, այլ երեք ենթաշրջան:

4. Միջին հայերենի պատմության երեք ենթաշրջանի առանձնացումը

Միջին հայերենի պատմությունը, իբրև առանձին շրջան, որ հանդիսանում է ժամանակային և գործառական օղակ է հին և նոր հայերենի միջև, մենք բաժանում ենք երեք ենթաշրջանի՝ ա) գրական ոչ ընդհանուր նորմավորման ենթաշրջան (XII-XIV դդ.), բ) գրական նորմայի թուլացման և բարբառային աշխուժացման ենթաշրջան (XV դ.), գ) գրական ընդհանուր նորմայի հաստատման փորձերի ենթաշրջան (XVI դ. - XVII դ. սկիզբ):

Առաջին ենթաշրջանն ունի ժամանակային ավելի մեծ ընդգրկում, քան մյուս երկուսը, որը բացատրվում է ամենից առաջ երևան եկած պետական լեզվի հանգամանքով, մի հանգամանք, որ հաշվի է առնված նախկինում գրված բոլոր աշխատանքներում¹: Որքան էլ մյուս երկու ենթաշրջանները ժամանակի ընդգրկման առումով, գրավոր աղբյուրների սակավությամբ զիջում են առաջինին, դրանցում նկատելի են որակական ակնհայտ տարբերություններ, թեկուզ եթե հաշվի առնենք միայն ոչ գրական (բարբառային-խոսակցական), ինչպես նաև օտարլեզվյան ձևերի գերակայությունը, որն այս դեպքում առանձնացման էական հատկանիշ է:

Նախ նկատի ունենք արտալեզվական այն հանգամանքը, որ միջին հայերենը, իբրև գրական լեզու, իրականացրել է մի կողմից՝ պետական-պաշտոնական լեզվի գոր-

¹ Տե՛ս Զաֆուլյան Գ. Բ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Ե., 1954: Նույնի՝ Հայոց լեզվի պատմության պերիոդիզացիայի հարցերը, Ե., 1956, նաև Мурадян М. А., նշվ. աշխ., էջ 362:

ծառույթներ կիլիկյան հայկական պետության մեջ, մյուս կողմից՝ հանդես է եկել իբրև ընդհանուր լեզու մայր հայրենիքում («բնօրրանում»)։ Առկա է գործառական (ֆունկցիոնալ) որոշակի տարբերակվածություն, որ էական է լեզվի ընդհանուր բնութագրի համար։

Պետք է նաև ուշադրության առնել հիշյալ տարբերակների բուն պատմական փոփոխությունները, ընդ սմին ոչ միայն ներքին պայմաններում, այլև արտաքին առնչությունների (այլ լեզուների հետ շփումների) հետևանքով։ Հստակացման համար, որ «կիլիկյան» տարբերակը շփումներ է ունեցել եվրոպական լեզուների, իսկ բուն հայրենիքում գործառույթ տարբերակը՝ արևելյան լեզուների հետ։

Այնուհետև, դա մի շրջան է, որ պարունակում է լեզվի գործառույթյան ոչ միայն հնից եկող, այլև նոր շերտեր՝ կրոնական, փիլիսոփայական, քերականական, պատմագիտական, բժշկագիտական, գեղարվեստական (բանաստեղծություն, ներբող, առակագրություն, հանելուկ և այլն)։

ա) Գրական ոչ ընդհանուր նորմավորման ենթաշրջան (XII-XIV դդ.)։ Այս ենթաշրջանը ամենից առաջ բնորոշվում է նվաճողների օտարլեզվյան բանավոր ներթափանցումների սկզբնավորման, ինչպես նաև ժամանակի խոսակցական լեզվի լայն գործածության դրսևորումներով, քանի որ հին հայերենը (գրաբարը) դադարել էր ընդհանուր գրական լեզու լինելուց, հայտնվել էր սահմանափակ (պատմագրություն, կրոնական-եղեկեցական միջավայր և այլն) գործածության ոլորտում։

Բուն Հայաստանի կենտրոնական և հարավային մասերում սկիզբ առած նոր տիպի օտար ազդեցության, հյուսիսային և արևելյան հատվածում՝ հայ իշխանական տների տեղային-խոսակցական լեզվի դրսևորման, կիլիկյան հայության շրջանում բնօրրանից տեղափոխված և եվրոպական

լեզվական մշակույթի հետ պաշտոնական առնչությունների առկայության պայմաններում գոյանում է լեզվական մի նոր, ինքնօրինակ «լեզու», որի առաջին հատկանիշը բազմաշերտ (տարբերակված) լինելն է: Նման կացության մեջ ստեղծված գրական հուշարձանները վկայություն են լեզվական նոր որակի, որ է միջին գրական հայերենը՝ գործառական-տեսակային (ժանրային) բազմազանությունը: Գրական լեզվի այդ որակը իր հիմքում ունեւ հին գրականը (գրաբարը), սակայն դառնում է միասնական (նորմավորված) սկզբնական շրջանի ամբողջության մեջ:

Լեզվական հատկանիշներ են հնչյունական մակարդակում բաղաձայնների տարբերակված լինելը՝ ամենից առաջ պայթականների ձայնեղություն-խլություն հակադրության մեջ, ձևաբանական մակարդակում՝ սահմանական եղանակի ձևերի, հոգնակի թվի կազմության տարբերությունը, բառապաշարի մակարդակում՝ նոր բառերի կազմության և գործածության, այլև փոխառությունների բնույթը:

Առանձնապես այս ենթաշրջանում գրական նորմավորումը միակերպ չի եղել՝ հատկապես վերը նշված հանգամանքներով պայմանավորված: Դա, այսպես կոչված, տարանջատ նորմավորում է, որն ավելի նկատելի է դառնում հետագայում: Նորմավորումը տարանջատ է, եթե նկատի ենք ունենում մի կողմից՝ Կիլիկիայում և հարակից շրջաններում, իսկ մյուս կողմից՝ բուն հայրենիքում (բնօրրանում) լեզվական (բարբառային, ընդհանուր խոսակցական, այլև գրաբար) տարբերակների կիրառության չափերը և ոլորտների ընդգրկումը:

բ) Գրական նորմայի թուլացման և բարբառային աշխուժացման ենթաշրջան (ԺԵ դ.): Որքան էլ նախորդ ենթաշրջանը ընդգրկում է ժամանակային մեծ հատված, այն չի հասնում լեզվի ընդհանուր նորմավորվածության, ավելին՝ հետագա-

յում տեղի է ունենում որոշակի թուլացում և հաղորդակցական տարանջատում:

Նկատի ունենալով արտալեզվական հանգամանքները, այլև ժամանակի գրավոր խոսքում բարբառային իրողությունների առավել աշխուժացումը (հմմտ. այդ շրջանի բանաստեղծության, բժշկության, տպագիր գրքերի և այլն լեզուն)¹ ավելի իրական է նման ենթաշրջանի առանձնացումը:

Նախորդ ենթաշրջանում այսպես թե այնպես հաստատված միջին գրական նորման խախտվում է, զարգացման ընդհանուր միտումը նկատելի է դեպի լեզվի աշխարհաբարացումը (իմա՝ գրաբարի առավել թուլացում, լատինաբանության ազդեցության մեծացում և այլն), որ դեռևս հենու է նոր գրական լեզվի ամբողջացումից և ամրակայումից:

Այս ենթաշրջանի լեզվական տարաբնույթ իրողությունները վերը նշված տիպի գրավոր հուշարձաններից բացի կան նաև ձեռագիր հիշատակարաններում, վիմական արձանագրություններում՝ թե՛ բառային, թե՛ քերականական մակարդակում¹:

Գրական հուշարձանների (ձեռագիր, տպագիր և վիմագիր) լեզվի ըստ ամենայնի ուսումնասիրությունը, կարծում ենք, ավելի կամրապնդի այս ենթաշրջանի առանձնացման իրական լինելը:

¹ Հմմտ. **Խաչիկյան Լ. Ս.**, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հհ. Ա.-Գ, Ե., 1955-1967: **Մկրտչյան Է. Լ.**, Աշխարհաբարի տարբեր միջնադարի գրական հուշարձաններում, Ե., 1980, էջ 72-141: **Բախշինյան Հ. Գ.**, Հայերեն ձեռագիր հիշատակարաններ, Ե., 1980: **Ավագյան Ս.**, Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն (X - XIV դդ.), Ե., 1973: Նույնի՝ Վիմագրական պրպտումներ, Ե., 1986: **Ջաֆուկյան Գ. Բ.**, Բարբառային երևույթներ ձեռագիր հիշատակարաններում, Ե., 1997, էջ 40-43:

դ) Գրական ընդհանուր նորմայի հաստատման փորձերի ենթաշրջան (ԺԶ դ. - ԺԷ դ. սկիզբ): Նախ՝ նկատենք, որ ընդունված է նոր գրական հայերենի սկիզբը դնել ԺԷ դ., իբրև վաղ աշխարհաբարի ենթաշրջանի սկիզբ, թեև այն դիտում են նաև իբրև միջին գրական հայերենի ավարտ¹: Նման երկվությունը հնարավոր է պարզել գրական աղբյուրների լեզվից քաղված ավելի հստակ հատկանիշների հիման վրա: Այս ենթաշրջանի ավարտը են դիտում ԺԷ դ. սկիզբը (10-20-ական թթ.):

Ընդհանուր վիճակի լավագույն օրինակ է Թովմա Մեծոփեցու երկերի լեզուն: Որքան էլ հեղինակը ձգտում է գրաբար շարադրանքի, առավել չափով նորոգյուն են ժամանակի աշխարհիկ մտածողությունը (գրաբարի մեջ), խոսակցական (եթե ոչ նաև բարբառային) ներթափանցումները, օտար բառերի և պատմական անվանումների (տերմինների) գործածությունը:

Այս ենթաշրջանի գեղարվեստական խոսքի նմուշներ են, օրինակ, Գրիգորիս Աղթամարցու տաղերը, Քուչակի հայրենները, որոնք ներկայացնում են լեզվական մի այնպիսի վիճակ, որում կան և՛ գրաբարի և «աշխարհաբարի» (միջին հայերենի), և ժամանակի խոսակցական-բարբառային տարրեր (հետագա կոնկրետ անվանումով՝ Վանի բարբառին):

Եզրակացություններ:

1. Հայերենի գրավոր շրջանի պատմությունը իր հիմնական գծերով բաժանված է տարբեր շրջանների և ենթաշրջանների, որ հիմնված է ըստ հնարավորին մատչելի գրական հուշարձանների տվյալների վրա:

¹Հմտ. Աղայան Է. Բ., Հայոց լեզվի պատմության հարցերը նորագույն ուսումնասիրություններում, «Պատմա-բանասիրական հանդես», 1962, 1: Զաքուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմության փուլեր, Ե., 1964, նաև Մկրտչյան Է. Լ., նշվ. աշխ., էջ 11-15:

2. Ավանդաբար հայերենի պատմության միջին շրջանը բաժանվում է երկու ենթաշրջանի, որն ընդունված է հայերենագիտության մեջ, և որոշ նկատառումներով կարելի է համարել առարկելի: Այն հայտնի է որոշակի տարբերակներով՝ հին գրական (գրաբար), միջին գրական («կիրիկյան»), խոսակցական (բարբառային)՝ միջանկյալ առնչություններով հանդերձ:

3. «Կիրիկյան միջին գրականը» այդ տարբերակներից մեկն է, որ համեմատելի է գրաբարի հետ՝ գրական նորմավորվածության հատկանիշով, այլև համեմատվել նոր գրական հայերենի հետ՝ պետական լեզվի կարգավիճակ ունեցածի հաշվով:

4. Միջին շրջանի շրջանից հայտնի և նոր, տարբեր ձևի և բնույթի գրավոր հուշարձանների լեզվի ավելի մանրամասն քննության հիման վրա առանձնացնում ենք, ինչպես վերը ներկայացվեց, երեք ենթաշրջան:

«КИЛИКИЙСКИЙ АРМЯНСКИЙ» - КАК ВАРИАНТ НОРМИРОВАНИЯ СРЕДНЕАРМЯНСКОГО ЛИТЕРАТУРНОГО ЯЗЫКА (Проблемы и решения)

Вазген Амбарцумян

РЕЗЮМЕ

История письменного периода армянского языка содержит три отдельные периоды – древний, средний и новый, которые, в свою очередь, имеют подпериоды. В среднеармянском периоде традиционно выделяются два периода. Среднеармянский известен следующими вариантами: древнеармянский литературный (грабар), разговорный (диалектный), среднеармянский литературный («киликийский»). Тем самым мы предлагаем следую-

шие подпериоды. а) литературный подпериод с необщим нормированием языка (XII-XIV вв.), б) подпериод ослабления литературной нормы и активизации диалектного варианта языка и в) подпериод стремления установить общелитературную норму языка (XVI в. - начало XVII в):

«CILICIAN ARMENIAN» AS A VARIANT OF THE MIDDLE ARMENIAN LITERARY LANGUAGE (issus and solutions)

Vazgen Hambardzumyan

SUMMARY

The history of the Armenian literary language is traditionally periodised in Old, Middle and Modern Armenian, which are also considered to comprise the respective subperiods. In the Middle Armenian period, we traditionally separate two subperiods. Middle Armenian involves several variants - Old literary language ("Grabar"), Middle literary language ("Cilician Armenian"), and spoken (dialect) language - with the respective interconnections. The "Cilician Middle literary language" is one of those variants. Within Middle Armenian, there are three subperiods distinguished: a) subperiod non-common standard (XII-XIV cc.), b) subperiod of weakening of Standard and enlivening of Dialects (XIVc.), c) subperiod of experience of the general norm of language (XVI - beginning of XVII c.) confirmed.

Վազգեն Համբարձումյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՄՀ Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ Ընդհանուր լեզվաբանության և նշանագիտության հարցեր, հայերենի համեմատական և տիպաբանական ուսումնասիրություն, հայերեն ստուգաբանություններ, հայոց լեզվի պատմություն, ժամանակակից հայերենի քերական-

նական կառուցվածքի ուսումնասիրություն, Հայ բառարանագրության պատմություն, Հայերենի բարբառների ուսումնասիրություն, Լեզվի ոճաբանություն.

✉ vazgengurgeni@mail.ru

Вазген Амбарцумян, доктор филологических наук, профессор. Заведующий кафедры армянского языка и методики его преподавания имени Арарата Гарибяна АГПУ. Круг научных интересов: Общие вопросы языкознания и семиотики, сравнительно-типологическое изучение армянского языка, армянские этимологии, история армянского языка, изучение грамматического строя современного армянского языка, история армянской лексикографии, изучение армянских диалектов, языковая стилистика.

✉ vazgenqurgeni@mail.ru

Vazgen Hambardzumyan, Doctor of Philological Sciences, Professor. Head of the Chair of Armenian Language and its Teaching Methods after Ararat Gharibyan. Scope of Academic interests: General linguistics and semiotics questions, Comparative and typological study of Armenian, Armenian etymologies, History of the Armenian language, Study of the grammatical structure of modern Armenian, History of Armenian lexicography, Study of Armenian dialects, Language stylistics.

✉ vazgenqurgeni@mail.ru

**ՄԱՏԹԵՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԻԶՄԻՐԼՅԱՆԸ ԿԻԼԻԿԻՈ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԲԱՆ**

Հիմնաբառեր՝ Մատթեոս եպիսկոպոս Իզմիրլյան, Ամենայն Հայոց կաթողիկոսություն, Կ. Պոլսի Հայոց պատրիարքարան, Կիլիկիո կաթողիկոսություն, Մկրտիչ Քեֆսիզյան:

Ключевые слова: епископ Матеос Измирлян, Католикос всех армян, К. Армянский Патриархат Константинополя, Католикосат Киликии, Мкртич Кефсизян.

Key words: Bishop Mattheoc Izmirlyan, Catholicosate of All Armenians, Armenian Patriarchate of Constantinople, Catholicosate of Cilicia, Mkrtitch Kefsizyan.

Ներածություն

Մատթեոս եպիսկոպոս Իզմիրլյանը¹ (ապագայի Մատթեոս Բ. Ամենայն Հայոց կաթողիկոս) Հայաստանյայց Առաքելական սուրբ Եկեղեցու և մասնավորապես Կիլիկիո կաթողիկոսության մոռացություն մատնված կամ քիչ հայտնի պատմաբաններից է: Ի տարբերություն շատերի՝ նա խնդրո առարկա պատմությունը ներկայացնում և վերլուծում է որպես ականատես, ինչն առավել վստահություն է ներշնչում: Հատկապես, եթե հաշվի առնենք նրա զբաղեցրած վարչադիվանական պաշտոնները: Այսպես, 1870 թ. նա դարձավ Կ. Պոլսի նորընտիր Մկրտիչ Խրիմյան Պատրիարքի մասնավոր քարտուղարը, ինչը ժամանակի հանգամանքից ելնելով նաև

¹ Մանրամասն տե՛ս «Մատթեոս Բ. Իզմիրլեան. Կաթողիկոս Ամենայն Հայոց»: «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», գիրք Ը, Երևան, 2001:

դիվանագիտական պաշտոն էր համարվում: Իսկ 1871թ. ընտրվեց Կ. Պոլսի Հայոց Ազգային Ժողովի երեսփոխան: Նա Ազգային Ժողովի ամենից գործունյա և բանուկ երեսփոխաններից էր: Միանգամայն օրինաչափ էր այն փաստը, որ 1872 թ. ընտրվեց նոր Կրոնական ժողովի անդամ-ատենադպիր:

Հենց այդ տարիներին ծագեց վիճահարույց և հայ ազգի անդորրը խռովող ու երկար տասնամյակների ծավալման միտում ունեցող Սսի կաթողիկոսության այդքան չարշրկված և տարաբնույթ նպատակներով օգտագործվող խնդիրը: Կիլիկիո կաթողիկոս էր ընտրվել Ս. Էջմիածնում Մայր Աթոռին ուխտած և ձեռնադրված Մկրտիչ եպիսկոպոս Քեֆսիզյանը, նրա ընտրությունը Կ. Պոլսի Ազգային Ժողովը վավերացրել էր: Սակայն, Գևորգ Դ. կաթողիկոսը Կ. Պոլսի Հայոց Պատրիարքին և Երեսփոխանական ժողովին ուղղված հանդիմանության գրով հայտարարեց, թե Ս. Էջմիածնում օծված եպիսկոպոսն առանց իր արտոնության չի կարող Կիլիկիո կաթողիկոս դառնալ, իսկ Ազգային Ժողովն էլ իրավասու չէր նմանի ընտրությունը վավերացնելու: Այս խնդրի լուծման ուղիների փնտրտուքի նպատակով Ազգային Ժողովը 1872 թ. 12 հոգանոց հանձնախումբ է ընտրում՝ խնդիրն ուսումնասիրելու և տեղեկագիր կազմելու համար: Այս հանձնախմբի անդամ էր Իզմիրլյանը: Ազգային Ժողովը 1874 թ. քննելով այդ տեղեկագրի մասին նախաքննիչ դիվանի զեկույցը՝ Իզմիրլյանի ելույթից հետո ընդունեց այն¹: 1878 թ. Մատթեոս եպիսկոպոսը նորաբաց Կրոնական ժողովի Բ. ատենապետ ընտրվեց, իսկ 1880 թ.՝ Կրոնական խորհրդի անդամ: 1881-1886 թթ. նա անդամակցել է Երեսփոխանական ժողովում կազմված բոլոր հանձնախմբերին:

¹ Տե՛ս «Արաբս», Ա. Պետերբուրգ, 1893, գիրք Ա., էջ 88:

Իզմիրլյանի նպատակը

Աշխատանքի ստեղծման պատճառների ու հիմնավորման մասին պարզաբանում է տալիս գրքի անդրանիկ հրատարակիչ «Փունջ»-ի խմբագիր Հ. Ալաճաճյանը: Նա ամենայն ուշադրությամբ դիտարկելով Մկրտիչ Քեֆսիզյանի «փառասիրական ազգավնաս» ձգտումներն ու պահանջները, և «զառաջս առնուլ ապագայ վնասուց եւ չարեաց», ավելին՝ «ցաւօք նկատելով նորա անուղղայ գտնուիլն եւ օր քան զօր չափազանցելն ու յամառիլն», և նպատակ ունենալով ընթերցողներին «վաւերական տեղեկութիւն» հաղորդել Հայաստանեայց Եկեղեցւոյ Հայրապետական իշխանության ծագման և պատմության վերաբերեալ» նյութեր է փնտրել: Սակայն, առկա հրատարակութիւնները («ցան եւ ցիր եւ անկապ ու անյարիր») ամենեւին չէին բավարարում նրա պահանջները, նա այդ խնդրանքով դիմել է Մատթեոս Եպիսկոպոսին: Վերջինս «անձնուիրաբար» ընդունելով առաջարկը՝ աշխատասիրեց «Հայաստանեայց Եկեղեցւոյ Հայրապետութեան ամբողջ պատմութիւնն՝ հին եւ նոր» («որոյ նմանը չգտնուիր ցարդ Ազգիս մէջ»): Այս աշխատասիրութիւնը 1879-1880 թթ. շուրջ մեկ տարի հրատարակվեց «Փունջ»-ի էջերում, ապա՝ առանձին գրքով:¹

Իսկ հրատարակչի նպատակն որքան ակնհայտ, նույնքան և ավելին՝ արդիական է նաև ներկայիս, որպեսզի «ոչ ոք յանդգնի այսուհետեւ ըստ հաճոյս խօսիլ Հայրապետական խնդրոց վրայ եւ յաջողիլ պատրել պարզամիտներն ի վնաս միութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ Ազգիս»: Իսկ ո՞րն է Իզմիրլյանի նպատակը: Այն նույնպես հստակ և ի-

¹ Տե՛ս Մ. Եպս. Իզմիրլեան, Հայրապետութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ եւ Առթամար ու Սիս: Կ. Պոլիս, տպ. «Գէորգ Զարդարեան», 1881, ԺԳ+1288 էջ: Օգտվել ենք մեր աշխատասիրած Բ. հրատարակությունից, որ տպագրվել է Ա. Էջմիածինում 2008 թ.: Բոլոր մեջբերումներն այդ հրատարակությունից են:

մաստալից է. «Ամենայն խնդիր, որ պատմութեան կը վերաբերի, պատմութեան վելուծմամբ կը պարզուի եւ կը լուծուի ... վասն միութեան Ազգիս եւ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյս Հայաստանեայց»։ Առարկայական և ճշմարիտ է Իզմիրլյանի դիտողութիւնը. «Սոյ խնդիրն առանց իւր ծագման պատմութիւնը սերտելու՝ ի զուր է զայն լուծել ճգնիլը, ի զուր է եւ վերջնական եզրակացութեան մը յանգելու համար եղած ջանքը»¹։

Աշխատութեան կառուցվածքը եւ խնդիրները

Ահաւասիկ, Իզմիրլյանը հիմնախնդիրը դիտարկել է ամենայն մանրամասնութեամբ, անաչառ ու անկողմնապահ, համալիր ձեւով՝ աստվածաբանական, պատմագիտական, իրավաբանական տեսանկյուններից։ Օգտագործելով տարաբնույթ և բազմաթիվ սկզբնաղբյուրներ՝ տեսակետները ներկայացնում է բավական հիմնավոր, փաստարկված, համոզիչ։ Ավելին, նրա համար առաջնային ու կարևորագույն նշանակութիւն ունի խնդրի ազգային-քաղաքական և եկեղեցական կողմը. միևնույն քաղաքական նպատակը հետապնդող մեկ-միասնական Հայ Ազգը պարտ է և պետք է ունենա մեկ-միասնական եկեղեցի, որի գլուխն ու ղեկը անվերապահ ու անպայման պետք է մեկը լինի՝ Ս. Էջմիածինն իր Ընդհանրական Կաթողիկոսով։

Աշխատութիւնը բաղկացած է երեք մասից՝ ութ գլուխներով։ Քննարկվող թեմային վերաբերում են հատկապէս 1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ գլուխները։ Իզմիրլյանը ներկայացնում է Ամենայն Հայոց Հայրապետութեան և Կիլիկիո կաթողիկոսութիւնների պատմութիւնը, տալով յուրաքանչյուրի «առանձինն ունեցած իրաւասութեան սահմանը, պաշտօնն ու պարտաւորութիւնը», ակնկալելով խնդրի «մի անգամ եւ

¹ Մ. Եսս. Իզմիրլեան. նշվ. աշխ., էջ 21։

ընդմիջտ լուծումն»։ Ներկայացնելով Հայոց Ընդհանրական Հայրապետի իրավասության խնդիրը՝ իրավացի կերպով հարցադրում է կատարում և ինքն էլ դիպուկ պատասխանում. «Կարելի՞ է ըսել, որ միեւնոյն Հայաստանեայց Եկեղեցին մէկէ աւելի Հայրապետ կրնայ ունենալ, կաթողիկոս կրնայ ունենալ։ Այս հարցման պատասխանը՝ երկու անգամ երկու չորս կընէի թուական ճշգրտեան պէս՝ ՈՉ է»¹։ Վերլուծելով ու հիմնավորելով Ամենայն Հայոց Կաթողիկոսների իրավաբանորեն հաստատված պատմական անդրդվելի գերագահությունն ու առաջնությունն՝ միաժամանակ հանգամանալից ներկայացնում է նրանց պաշտոնը, պարտավորությունները, կետ առ կետ թվարկում անժխտելի իրավունքները։

Իզմիրլյանի համար խնդրի համապարփակ պատկերացման առումով հետաքրքրություն է ներկայացնում Հայրապետական Աթոռի կամ Հայրապետանիստ Մայր Եկեղեցու գտնվելու վայրերի տեղափոխման պատճառների ուսումնասիրությունը, քանզի դրանով կլուծվի նաև «Սույ վանահայր վիճակաւորութեանց ծագման խնդիրը»։ Ինչ վերաբերում է Հայրապետական Աթոռի տեղափոխութեան պատճառներին, ապա նա դրանք միանշանակ համարում է քաղաքական. «Ասի ապացուցեալ ճշմարտութիւն մ'է, որոյ վկայն է Հայ Ազգին եւ Եկեղեցւոյ բազմադարեան կենաց պատմութիւնը... Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ սեփական Հայրապետարանը կամ Հայրապետական Աթոռը Ս. Էջմիածնի Մայր Եկեղեցին է, ուրիշ ուր տեղ որ նստան մեր Հայրապետք՝ առ ժամանակեայ էր իբրեւ պանդխտութիւն, որոյ տեղի տուած են քաղաքական կացութիւն եւ վիճակ ազգին մերոյ»²։

¹ Մ. ԵԱՍ. Իզմիրլեան. նշվ. աշխ., էջ 50:

² Անդ. էջ 87:

Բնականաբար, նրա համակ ուշադրությանն և հատուկ ուսումնասիրությանն է արժանացել 1441թ. Հայրապետական Աթոռի Ս. Էջմիածին վերադարձի պատմությունը, արժեքավորումը ու պատշաճ գնահատումը: Մատենագրության հաղորդած հարուստ տեղեկությունների համադրմամբ նա շարադրում է այսպես կոչված «անուանական կաթողիկոսաց աթոռատեղեաց ծագումն եւ վերջանալն», որոնցից իր ժամանակ տակավին շարունակում էին գործել ընդամենը երկուսը՝ Աղթամարն ու Սիսը: Նա անհրաժեշտ ծավալով շարադրում է Սսի կաթողիկոսության պատմությունը՝ հասկանալիորեն ծանրանալով 19-րդ դարի վիճահարույց խնդիրների ներկայացման ու գնահատման վրա:

Առանձին գլուխներով նա վերլուծում է Ամենայն Հայոց Հայրապետության հանդեպ Սսի պարտավորությունները, վերջինիս կաթողիկոսների ընտրության, վավերացման և պաշտոնավարման պարագաները և լայնորեն օգտագործում Ազգային Ընդհանուր Ժողովի նիստերի ատենագրությունները: Այս հույժ կարևոր հարցում նրա եզրակացությունը միանշանակ հստակ ու պարզորոշ է. «ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՋ Աղթամարայ եւ Սսոյ վանանայր վիճակաւո՞ր՝ ոչ այլ ինչ են, բայց եթէ Եպիսկոպոս ձեռնադրելու եւ միւռոն օրհնելու արտօնութեամբ թեմական գլխաւոր առաջնորդներ»¹: Իսկ որպես իր գնահատականի լրացուցիչ հիմնավորում նա մանրամասն ներկայացնում է Ազգային Ընդհանուր Ժողովի 1870 թ. նիստերում հնչած տեսակետները, որոշումներն ու բանաձևերն, որոնք միաձայն հանգում էին հետևյալին. «Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու Հայրապետութեան Առաքելական Մայր Աթոռ Ս. Էջմիածինն է, եւ անդ բազմողը միայն Ամենայն Հայոց Առաքե-

¹ Անդ. էջ 219:

լայաջորդ Հայրապետն եւ Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսն է»։ Ազգային ժողովի այս որոշման ուժի հիման վրա Իգմիրլյանն Աղթամարի և Սսի կաթողիկոսներին անվանում է. «Վանահայր վիճակաւոր, մասնաւոր կաթողիկոս, կաթողիկոս վանահայր, թեմական կաթողիկոս, ինքնընտիր կաթողիկոս»։

Իգմիրլյանը խիստ քննադատում է Մկրտիչ Քեֆսիզյանին և հանգում ճշմարտացի եզրակացութեան. «Թուրքիոյ Հայոց ներքին վարչական միութեան **ֆակտումն** է, զոր կը պահանջէ Տ. Մկրտիչ Սրբազան։ Ամենայն Հայոց Հայրապետական իշխանութեան անբաժանելի միութեան **ֆակտումն** է, զոր կը պահանջէ նա։ Կիլիկիոյ աւերումն ու Սսոյ Վանուց կործանումն է, զոր կը պահանջէ նա։ Կը պահանջէ անդադար, ինչպէս տեսանք, իւր պաշտօնավարութեան թուականէն, եւ ցարդ ոչ միայն անասատելով Ազգային եւ Եկեղեցական օրինաւոր իշխանութեան, այլեւ **ապստամբելով** իսկ ընդդէմ Ազգին՝ ոչ նուազ դատապարտելի միջոցներով ամեն ճիգ եւ ջանք կը թափէ իրականացնելու համար իւր ազգավնաս խորհուրդը»¹։ Նույն տրամաբանութեան համապատկերում է անհրաժեշտ դիտարկել և ընդունել նրա փաստարկը. «Մեր Եկեղեցւոյ մէջ ոչ **հակաթոռ** եւ ոչ **անկախ** կաթողիկոս չկայ, զի այն է **հակաթոռ**, որ Ս. էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան **դէմ** եւ **հակառակ**՝ ինքզինք Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ Ծայրագոյն Պատրիարք հռչակելու կամ ներկայացնելու կը յանդգնի, իսկ **ապստամբ** կըլլայ եւ ոչ հակաթոռ այն կաթողիկոսն կամ Եպիսկոպոսն, որ Ազգային Եկեղեցւոյ **միութեան** եւ **ամբողջութեան** **դէմ** կեղիւ եւ կը գործէ։ ...

¹ Անդ. էջ 346:

Անկարելի է, որ Սսոյ եւ Աղթամարայ կաթողիկոսներն անկախ ըլլան»¹:

Աշխատութեան աղբյուրները

Իզմիրլեանն աշխատասիրութեան մեջ բոլոր աղբյուրները նշում է բուն շարադրանքում, սակայն գերազանցապէս առանց դրանց տպագրութեան վայրն ու թվականը նշելու, ինչպէս ընդունված էր ժամանակին: Ճշգրտել ենք բոլոր սկզբնաղբյուրների հիմքերը: Այսպէս, մեր հաշվարկով նա օգտագործել է 29 պատմագրական աղբյուր՝ Կորյունից սկսյալ մինչև Նսայի Հասան-Ջալալյան: Աշխատանքի դրվատելի կողմերից է ձեռագիր աղբյուրների գիտական շրջանառութեան մեջ ներառումը²: Այդ պարագան հատկապէս վերաբերում է նաև Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանում պահպանվող պաշտոնական վավերագրերին, որոնց մի մասն անտիպ ու անհասանելի են մնացել³: Դրանով նրա աշխատանքը յուրահատուկ սկզբնաղբյուրային բնույթ է ստանում: Կարևոր հատված է կազմում պարբերականների խումբ-

¹ Ամդ. էջ 354:

² Օրինակ տե՛ս Եփրեմ, «Պատմութիւն կաթողիկոսաց»: Խորհրդածութիւնն ինն դասուց աստիճանաց եկեղեցոյ: «Խորհրդատետր Սրբազան Պատարագի ըստ արարողութեան եկեղեցեացս Հայաստանեայց»: Ի Մաշտոցն ի ձեռնադրութեան Կաթողիկոսի: Մաշտոցն Եպիսկոպոսական ձեռնադրութեան: Թուղթ Վանականաց Վանից Արմաշու:

³ Օրինակ տե՛ս Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ: 25 օգոստոս 1860-23 յունուար 1870, անտիպ: Խառն ժողովոյ 1867-1868 նիստերու արձանագրութիւններ: Համարատուութիւն Ազգային Կեդրոնական Վարչութեան 1872-1873 ամի: Տեղեկագիր ի վերայ կաթողիկոսական խնդրոյ առ Ազգային Ընդհանուր ժողով Կեդրոնական Վարչութեան Հայոց ի Տանկաստան ի դիմաց կաթողիկոսական յանձնաժողովոյ: Տեղեկագիր համարատուութեան Քաղաքական ժողովոյ 1871-1872 ամի:

բը¹։ Ոչ պակաս նշանակություն ունի օգտագործված ազգային-եկեղեցական տպագիր սկզբնաղբյուրների խումբը²։

Անշուշտ, Իզմիրլյանի համար օգտակար է եղել նաև պատմագիտական աշխատությունների օգտագործման հանգամանքը³։ Այսուհանդերձ, նրա համար առաջնային նշանակություն ունեին գերազանցապես պատրիարքարանի դիվանական վավերաթղթերը։

Եզրակացություն

Իզմիրլյանը գրքում սկզբից մինչև վերջ ազգային-եկեղեցական պատմական աղբյուրների, Ազգային Ժողովի ատենագրությունների, Ամենայն Հայոց Կաթողիկոսների ու Կ. Պոլսի Պատրիարքների, ինչպես նաև այլ եկեղեցական գործիչների պաշտոնական գրություններով լիարժեքորեն կատարում է ստանձնած պարտականությունը՝ հմտալից, հանգամանալից և վավերական կերպով մեկ անգամ ևս ապացուցելով Ս. Էջմիածնի Մայր Աթոռի ու նրա Գահակալի գերազա՛հ ազգային-եկեղեցական իրավունքները, այդ ամենը հակիրճ ու հստակ, բայց ոչ հավակնոտ ներկայացնելով որպես անբեկանելի ճշմարտություն։

¹ Օրինակ տե՛ս «Արարատ», Ս. Էջմիածին, 1871։ «Ծիլն Ասարայրի», Կ. Պոլիս, 1867։ «Կոռնկ Հայոց Աշխարհի», Տփլիս, 1863։ «Մախիս», Կ. Պոլիս, 1868։ «Մեղու Հայաստանի», Տփլիս, 1866։

² «Ազգային Սահմանադրություն»։ Կ. Պոլիս, 1863։ Կարգադրություն յաղագս կառավարութեան գործոց Լուսատրչական Հայոց Եկեղեցոյ ի Ռուսաստան։ Էջմիածին, 1836։ Համարատություն Քաղաքական ժողովոյ 1870-1872։ Կ. Պոլիս, 1873։

³ Օրինակ տե՛ս Վ. Ըստկարեան, Եկեղեցական պատմություն, Վիեննա, 1872։ Ն. Ճնտոյեան, Առձեռն ընդհանուր ժամանակագրություն հին եւ նոր տերութեանց, Վենետիկ, 1880։ Ս. Մանդլինեան, Համառօտ եկեղեցական պատմություն նոր ուխտի, Վաղարշապատ, 1870։ Մ. Զամչեանց, Պատմություն Հայոց, հտ. Գ., Վենետիկ, 1786։ Ա. Պէրպլեռեան, Պատմություն Հայոց, Կ. Պոլիս, 1871։ Հ. Իգնատիոս վրդ. Փափազեան, Պատմություն եկեղեցական, Վենետիկ, 1848։

Ամփոփելով, ներկայացնենք Մատթեոս Եպիսկոպոս Իզմիրլյանի վերջնական եզրակացությունը. «Թէ Ս. Էջմիածնի Գերագահ Աթոռոյ Հայրապետաց Իշխանութիւնն ու իրաւասութիւնը՝ ըստ սահմանելոյ Եկեղեցական կանոնաց, ընդհանրական է, եւ կը տարածուի համայն հայոց եւ Հայկական Ս. Եկեղեցւոյ անխտիր ամեն կարգի եւ աստիճանի պաշտօնէից վրայ, որք պարտին հպատակ մնալ եւ հնազանդ ամենայն կանոնական հրամանաց նոցա: ... Աղթամարայ եւ Սսոյ կաթողիկոսութիւններն՝ ցորչափ ժամանակ տեւեն շարունակել, պէտք է առ Հայրապետութիւնն Ամենայն Հայոց հոգեւոր հնազանդութեամ պայմանաւ Կ. Պօլսոյ Հայրապետական Փոխանորդ Պատրիարքական Իշխանութեան ենթարկեալ մնան՝ յանվթար պահպանութիւն միութեան եւ ամբողջութեան Ազգիս եւ ի շինութիւն բազմադարեան նահատակ»¹:

Անտարակոյս, Մատթեոս Եպիսկոպոս Իզմիրլյանի աշխատությունը ժամանակի հեռավորությունից ունի ոչ միայն պատմագիտական, այլև արդեն կարևոր աղբյուրագիտական նշանակություն: Այն օգտակար կլինի ժամանակաշրջանի ազգային-քաղաքական ու եկեղեցական պատմության համալիր իմացության և հետագա ուսումնասիրության առումով:

МАТЕОС ЕПИСКОП ИЗМИРЛЯН - ИСТОРИК КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА

Аваг Арутюнян

РЕЗЮМЕ

¹ Մ. Եպս. Իզմիրլեան. նշվ. աշխ., էջ 405-406:

Епископ Матеос Измирлян - один из малоизвестных историков Армянской Апостольской церкви, в частности католикосата Киликийского. В отличие от многих, он представляет и анализирует историю как очевидец.

Он рассматривал проблему подробно, объективно, комплексно с теологической, исторической и правовой точек зрения. Используя множество источников, он излагает свои взгляды обоснованно, аргументированно и убедительно.

Для него национально-политический и церковный аспект проблемы имеет первостепенное и важнейшее значение. Его работа имеет не только историографическое, но и важное источниковедческое значение. Будет полезно в плане всестороннего познания и дальнейшего изучения национально-политической и церковной истории того периода.

MATTHEOS BISHOP IZMIRLYAN - THE HISTORIAN OF CATHOLICOSATE OF CILICIA

Avag Harutyunyan,

SUMMARY

Bishop Mattheos Izmirlyan is one of the lesser-known historians of the Armenian Apostolic Church, and particularly of the Catholicosate of Cilicia. Unlike many, he presents and analyzes history as an eyewitness.

He considered the problem in a detailed, objective, complex manner from theological, historical, legal perspectives. Using many sources, he presents his views in a well-grounded, well-argued, and convincing manner.

For him, the national-political and church aspect of the problem is of primary and most important importance. His work has not only historiographical, but also important sourceological significance. It will be useful in terms of

comprehensive knowledge and further study of the national-political and church history of the period.

Ավագ Հարությունյան, պատմական գիտությունների թեկնածու: Հայաստանի ազգային արխիվի Կինոֆոտոֆոնո փաստաթղթերի մասնաճյուղի վարիչ: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ հայ ժողովրդի նոր և նորագույն շրջանի պատմություն:

✉ avaq.harutyunyan@yandex.ru

Аваг Арутюнян, кандидат исторических наук, заведующий филиала кино-фото-фоно документов Национального архива Армении. Круг научных интересов: новый и новейший периоды истории армянского народа,

✉ avaq.harutyunyan@yandex.ru

Avag Harutyunyan, Doctor of History, head of Department of cinema-photo-phono documents of National archive of Armenia. Research fellow at new era history of Armenian people.

✉ avaq.harutyunyan@yandex.ru

*Ավետիս Հարությունյան
Արշակ Բալյան
Ինգա Խուրշուդյան*

**ՄԵԾ ՐԱԲՈՒՆԱՊԵՏ ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑՈՒ
«ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ»-Ը ՈՐՊԵՍ ԿԻԼԿԻՈ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ**

Հիմնաբառեր՝ Թովմա Մեծոփեցի, «Յիշատակարան», Հովհաննես Հերմոնացի, Էջմիածնի 1441 թ. ազգային ժողով, Գրիգոր Մուսաբեկյանց, Կիրակոս Վիրապեցի:

Ключевые слова: Товма Метсопечи, "Мемориал", Ованнес Гермонаци, Эчмиадзинский Национальное собрание 1441г. , Григор Мусабекянц, Киркос Вирапечи.

Keywords: Tovma Metsopetsi, "Memorial", Hovhannes Hermonatsi, Etchmiadzin national assembly 1441, Grigor Musabekyants, Kirakos Virapetsi.

ԺԵ. դ. ոչ միայն շնչանավորվեց ե., կամ Ժ. դարերին համարժեք պատմագրական երկերով, այլև Հիսմապատասխանեց պատմագրություն հասկացության դասական պատկերացումներին: Բանն այն է, որ ԺԴ. և ԺԵ. դդ. հայ և հարևան ժողովուրդների պատմական իրադարձություններն արձանագրվել են մանր ժամանակագրությունների, հիշատակարանների ու վիմական արձանագրությունների տեսքով:

Հիշատակարանների՝ որպես պատմական սկզբնաղբյուրների նշանակությունը շատ ավելի մեծ է հատկապես ԺԴ.-ԺԵ. դդ. Հայաստանի և Մերձավոր Արևելքի երկրների միջնադարի ընկերային-քաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային պատմության ուսումնասիրման առումով, երբ հայ պատմագրությունն ունեցավ համեմատաբար հա-

մեստ դրսևորումներ: Մասնավորապես հիշատակարանները հարուստ փաստագրական նյութ են պարունակում Հայաստանի տարբեր շրջանների դրուժյան, տնտեսության, հարկերի, կոտորածների, գերեվարությունների, քաղաքների, գյուղերի, տեղանունների, ավատատիրական-իշխանական տների, եկեղեցական կալվածատիրության, ընկերային կեղեքումների, գրչության կենտրոնների, վարդապետարանների, զանգվածային արտագաղթների, գաղթավայրերի և այլ հարցերի վերաբերյալ:

Մովսես Արծկեցու «Տարեգրութեան», Գրիգոր Մերենց Խլաթեցու «Յիշատակարան աղէտից» աշխատության, Սամուել Անեցու «Ժամանակագրութեան» շարունակող Ստեփանոս Եպիսկոպոսի «Տարեգրութեան», ԺԳ. դ. Անանուն տարեգրի «Ժամանակագրութեան», Հեթում Բ. Թագավորի «Տարեգրութեան», Անանուն Սեբաստացու «Տարեգրութեան», ինչպես նաև մանր ժամանակագրությունների կողքին իր կարևորությամբ առանձնանում են ԺՆ. դարի մեկնիչ, հայ նշանավոր պատմիչ, բանասեր, մանկավարժ, գրիչ, մշակութային և հասարակական գործիչ Թովմա Մեծոփեցին և իր «Յիշատակարան»-ը, մատենագիր, որն ապրել է հախուռն գիտական կյանքով, իրեն նվիրել հարազատ ժողովրդին ու Եկեղեցուն: Նա մեծ դեր է խաղացել աշակերտներ պատրաստելու, հայ դպրոցի համար դասագրքեր ու ձեռնարկներ ստեղծելու, ձեռագրերի հավաքման, նորոգման, խմբագրման, լրացման, ընդօրինակման և փրկության գործում:

Նրա գրչին են պատկանում շուրջ երեք տասնյակ գործեր¹, որոնցից նրա պատմագիտական երկերը դեռևս հեղինակի կենդանության օրոք արժանացել են ժամանակակից-

¹ Տե՛ս Ա. Մաթևոսյան, Գրիգոր Տաթևացին և Մեծոփականի դպրոցի հիմնադրումը, «ՊԲՀ», 1969, հ. 2 (45), էջ 154:

ների գնահատականին և կարևոր հետք են թողել միջնադարագիտության բնագավառում:

Թովմա Մեծոփեցու պատմագիտական ժառանգության ամենակարևոր և հազվագյուտ երկերից է՝ «Պատմութիւն Հանկ Թամուրայ և յաջորդաց իւրոյ» երկը (սկսել է 1430-ական թվականներից և ավարտել 1440 թ.), որն ընդգրկում է Հայոց պատմության 1386-1440 թթ. իրադարձություններն ու անցքերը:

«Պատմութեան» անմիջական շարունակումը՝ «Յիշատակարան» փոքր ծավալի երկն է, որը մշտապես գրավել է ուսումնասիրողների ուշադրությունը: «Յիշատարական»-ն իրավամբ համարվել է «Պատմութեան» շարունակությունը, ուստի ինչպես Արշակ Մադոյանն է նկատում, ժամանակին ճիշտ էր դրանց համատեղ հրատարակումը¹, քանի որ ուշ միջնադարում արդեն միասնական ձևով են ընկալվել Մեծոփեցու այս գործերը. «Թովմաս Մեծոփեցի, աշակերտ սրբոյն Գրիգորի Տաթեւացոյն. Բ. հատոր պատմութիւն, Ա. Վասն Թամուր Կաղին եւ չար[ե]աց նորին, եւ միւսն վասն նորոգութեանն կաթողիկոսութեանն սուրբ Էջմիածնի»²:

Այդ է պատճառը, որ երբ 1860 թ. Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի երբեմնի վերատեսուչ Կարապետ վրդ. Շահնազարյանը Փարիզում հրատարակում էր Մեծոփեցու «Պատմութիւն Հանկ Թամուրայ» աշխատությունը, նա կարևոր և ճիշտ էր համարում վերջինիս հետ հրատարակել նաև «Յիշատակարան»-ը:

Թովմա Մեծոփեցու երկը նվիրված է 1441 թ. կաթողիկոսության վերադարձին ս. Էջմիածին. ազգաշահ գործ, որի

¹ Տե՛ս Թովմա Մեծոփեցի, Պատմագրական երկեր, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Մադոյանի, Երևան, 2003, էջ 5:

² Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հատ. Ա, Երևան, 1959, էջ LV:

անմիջական նախաձեռնողներից էր հենց երկի հեղինակը։ Նա շատ լավ էր հասկանում, որ Կիլիկիայի թագավորության անկումից հետո անկախության ճանապարհի առաջին քայլերից մեկը կարող էր հանդիսանալ կաթողիկոսական Աթոռի վերահաստատումը ս. էջմիածնում, որը կունենար համազգային խոշոր նշանակություն և, որի համար ժամանակին մտահոգ էր Թովմա Մեծոփեցու ուսուցիչ մեծահոշակ Գրիգոր Տաթևացին։ Թովմա Մեծոփեցին Հովհաննես Հերմոնացու և այլոց հետ կազմակերպել է էջմիածնի 1441 թ. ազգային ժողովը՝ մեծ ավանդ ներդնելով Հայոց կաթողիկոսության՝ վերստին էջմիածնում հաստատվելու գործում և մինչև 1443 թ. մնացել է այնտեղ ու օգնել նորընտիր կաթողիկոսին։

Պատմաքաղաքական դեպքերի բերումով 484 թվականից ի վեր Հայոց կաթողիկոսությունը թողնում է իր նախնական աթոռանիստ Վաղարշապատը և տեղից-տեղ դեգերելով, 1105 թ. հաստատվում է Կիլիկիայում, որտեղ այն շուրջ 270 տարի կարողանում է պահպանել հոգևոր-եկեղեցական բարձրագույն իշխանության իր դերակատարումը։ Սակայն 1375 թ. Կիլիկյան հայկական պետության անկումից հետո Սսի Հայոց կաթողիկոսությունը կորցնում է իր քաղաքական հենարանը, իսկ կաթողիկ եկեղեցու ունիթորական ոտնձգությունների դեմ մղած դարավոր պայքարի և Կիլիկիայում հայ բնակչության թվաքանակի հետզհետե նոսրացման պատճառներով քայքայվում է նաև տնտեսապես։

Առավել ծանր էր վիճակը հոգևոր-մշակույթային կյանքում։ Դրությունն ավելի վատթարացավ 1426 թ. հետո, երբ կիլիկյան վերջին հայ իշխանավոր Կոնստանդին Սսեցին, չկարողանալով դիմակայել Եգիպտոսի Մուզաֆար սուլթանին, լքեց Սիսը և բազմահազար կիլիկիահայերի հետ ապաստան գտավ Կիպրոսում։ Քաղաքական և տնտեսական

այդպիսի աննպաստ պայմաններում կիրիկիայում մնացած Հայոց կաթողիկոսությունն աստիճանաբար ավելի ու ավելի անգոր է դառնում օտար երկրներում հաստատված հայկական գաղթավայրերի հետ մշտական մշակութային կապերի պահպանումը, ուսումնական կենտրոնների ստեղծումը և հայրենիքից տարասփյուռ զանգվածներին ազգային ավանդույթներով շաղկապելը: Մեկուսանալով կիրիկիայում՝ այն ամբողջությամբ կտրվել էր բուն Հայրենիքից նրա տեղաբնիկ ժողովրդից, կորցրել քաղաքական ու կրոնական երբեմնի կենտրոնի՝ հույժ կարևոր նշանակությունը: Նկատի ունենալով այդ կարևոր հանգամանքները՝ հայ հասարակական-քաղաքական, կրոնա-եկեղեցական ու մշակույթի առաջադեմ գործիչները դեռևս ԺԳ. դ. վերջից ցանկանում էին Հայոց կաթողիկոսությունը տեղափոխել քաղաքականապես ու տնտեսապես ապահով վայր: Աթոռի տեղափոխությունը, բացի եկեղեցական հիմնավորումներից ունեւ նաև ազգահավաք նշանակություն¹:

Սակայն, կաթողիկոսական աթոռի տեղափոխման ուղղությամբ որոշակի քայլեր ձեռնարկվեցին միայն ԺԵ. դ. առաջին կեսին, երբ կարա-կոյունլու Ջհանշահի (1437-1467 թթ.) տիրապետության օրոք համեմատաբար խաղաղություն հաստատվեց երկրի կենտրոնում՝ Այրարատում²:

Հայ աշխարհիկ ու հոգևոր գործիչները միջոցներ ձեռնարկեցին Հայոց կաթողիկոսությունը վերահաստատելու իր նախնական վայրում՝ Վաղարշապատում: Ապագա կաթողի-

¹ Տե՛ս **Թովմա Մեծփեցի**, Յիշատակարան, հրատարակութեան պատրաստեց՝ տէր Արարատ Բախնայ Պողոսեանը, Ա. էջմիածին, 2007, էջ 6:

² Կաթողիկոսական արքոի տեղափոխության մասին ավելի մանրամասն տե՛ս **Մ. Վրդ. Ամիրջան**, Ամենայն Հայոց կաթողիկոսական արքոը և նրա տեղափոխությունները, հրատարակության պատրաստեց Ախթալայի Սուրբ Աստվածածին վանքի վանահայր Տ. Հեթում Բախնայ Թարվեդյանը, Երևան, 2022, էջ 207-213:

կոսանիստը տնտեսապես ամրապնդելու նպատակով Սյուն-
յաց իշխան Ռուստամ Օրբելյանը 1431 թ. վաճառքի անվան
տակ էջմիածնի վանքին՝ Գրիգոր եպս. Արտազեցու անունով
նվիրում է յոթ խոշոր գյուղեր (Վաղարշապատ, Օշական,
Բաթոխնջ, Աղավնատուն, Նորագավիթ, Թղենիս և Մուղնի)։
Ստանալով Զհանշահի հավանությունը և Երևանի ամիրա
Յաղուբ-բեկի աջակցությունը, Հովհաննես Հերմոնեցին և
Թովմա Մեծոփեցին 1439 թ. սկսում են նախապատրաստել
Վաղարշապատի ժողովը։ Նրանք նամակներ են հղում և
կազմակերպչական գործունեության արդյունքում ստանում
հայ հոգևոր ու աշխարհիկ խոշոր գործիչների հավանությու-
նը։ Ստացվում է նաև Կիլիկիայի չորս թեմակալ եպիսկոպոս-
ների գրավոր համաձայնությունը։

Այդ ընթացքում՝ 1440 թ. վերջին Սսի կաթողիկոսարա-
նից անհետանում է Գրիգոր Լուսավորչի Աջը, որով հեշտա-
նում է կաթողիկոսական աթոռի տեղափոխության հարցը¹։
Ամենայն հավանականությամբ Աջի անհետացումը պետք է
վերագրել այն չորս եպիսկոպոսներին, որոնք աթոռի փո-
խադրության հարցում համաձայնության էին եկել Թովմա
Մեծոփեցու և Հովհաննես Հերմոնեցու հետ։

1441 թ. սկզբին Հովհաննես Հերմոնեցին շրջաբերական-
ներ է հղում հոգևոր-եկեղեցական, հասարակական-քաղա-
քական ու մշակույթի նշանավոր գործիչներին։ Վերջիններս
հրավիրվում էին մասնակցելու էջմիածնում կայանալիք ժո-
ղովին, որը նշանակված էր 1441 թ. ապրիլի 16-ից՝ Զատիկից
հետո։ Մայիսի սկզբին մասնակիցները հավաքվում են Եր-
ևանում և մեծ շուքով մեկնում Վաղարշապատ։

¹ Հայաստանյայց Առաքելական սուրբ Եկեղեցու ավանդական կանոնադրությամբ
կաթողիկոսարանում պառտադիր է Գրիգոր Լուսավորչի Աջի առկայությունը։

1441 թ. մայիսի երկրորդ կեսին տեղի է ունենում էջմիածնի ազգային ժողովը, որին մասնակցում էին ավելի քան 300 պատվիրակներ, այդ թվում հիշվում են՝ 4 արքեպիսկոպոսներ, 12 եպիսկոպոսներ, 21 վարդապետներ, ինչպես նաև այլ հոգևորականներ, տանուտերեր, ձեռնավորներ և հասարակ ժողովրդի ներկայացուցիչներ։ Էջմիածնի ազգային ժողովում պատվիրակներ կային Գուգարքի, Ուտիքի, Արցախի, Սյունիքի, Վասպուրականի, Պարսկահայքի, Մոկքի, Աղձնիքի, Տուրուբերանի, Բարձր Հայքի, ինչպես և Կիլիկիայի գավառների մեծ մասից ու բոլոր խոշոր վանքերից։ Ազգային-եկեղեցական ժողովին մասնակցելու էին եկել Արևելյան Հայաստանի չորս մեծ թեմերի՝ Բջնիի (Հովհաննես), Հաղպատի (Գրիգոր), Տաթևի (Շմավոն) և Արտազի (Գրիգոր) եպիսկոպոսները, որոնց հավանություն էին միայն կաթողիկոս ընտրվում։ Այդ ժողովի որոշումներին նախօրոք գրավոր համաձայնություն էին տվել Աղթամարի կաթողիկոս Զաքարիա Գ. Աղթամարցին, 7 եպիսկոպոսներ և 16 վարդապետներ։ Իր համաձայնությունն էր տվել նաև Գանձասարի կաթողիկոս Հովհաննես Հասան-Ջալալյանը։ Հրավիրված էր նաև Հայոց կաթողիկոս Գրիգոր Թ. Մուսաբեկյանցը, որը թեպետ մերժել էր հրավերը, սակայն արգելք չէր հարուցել։ Էջմիածնի ազգային ժողովը կրել է համազգային բնույթ և ընթացել հայ եկեղեցական կանոնների հիման վրա՝ օրինականության և վավերականության սահմաններում։

Եւ քանի որ Գրիգոր Մուսաբեկյանցը հրաժարվել էր ներկայանալ Էջմիածնի ազգային ժողովին և վերածովել կաթողիկոս, ապա առաջադրվել են ուրիշ թեկնածուներ՝ Զաքարիա Հավուցթառեցին, Հովհաննես Հերմոնեցին, Զաքարիա Աղթամարցին, Գրիգոր Արտազեցին։ Սակայն հավանաբար կողմերի հավասար քվեների պատճառով, կաթողիկոս է ընտրվել չեզոք անձ՝ ծնունդով Վասպուրական աշխարհի

Քաջբերունյաց գավառի Խառաբաստ գյուղի բնակիչ, Մաս-
յացոտն գավառի Ակոռի գյուղի ս. Հակոբ վանքի առաջնորդ՝
Կիրակոս վարդապետ Վիրապեցին, որը չէր մասնակցել ա-
թոռի փոխադրության գործին: Ենթադրվում է, որ կաթողի-
կոսական օծումը տեղի է ունեցել 1441 թ. մայիսի 25-ին՝ Համ-
բարձման տոնին:

Էջմիածնի ազգային ժողովից որոշ ժամանակ հետո՝ հա-
վանաբար 1441-ի վերջերին հայտաբերվեց նաև Գրիգոր Լու-
սավորչի մասունքների ոսկեձուլ Աջը և վերահաստատվեց
Էջմիածնում, որով 957 տարվա թափառումներից հետո վա-
վերականացվեց կաթողիկոսական գահակալությունը Վա-
ղարշապատում:

«Հիշատակարան»-ի գլխավոր արժանիքներից մեկն այն
է, որ հեղինակը ոչ թե դեպքերի սոսկական և պարզ ականա-
տես է, այլ գտնվել է իրադարձությունների կենտրոնում: Այս
առումով «Յիշատարական»-ը անգնահատելի աղբյուր է
իբրև ժամանակակից և ականատես անձի նկարագրություն,
որով մեծանում է երկրի հավաստիությունն իբրև Հայոց եկե-
ղեցական պատմության «այդ առաջնակարգ երևութի միակ
ամբողջական նկարագրություն»¹: Հ. Տաշյանը հավաստում է,
որ «Մեծոփեցին այն գլխավոր» անձն է, որ կաթողիկոսական
աթոռը վերահաստատեց Էջմիածնում²:

Թովմայի Երկը բաղկացած է երեք մասից՝ «Ա. Հայոց
միաբանութեան եւ կաթողիկոսի ձեռնադրութեան մասին, Բ.
Էջմիածնի օրհնութեան եւ [կաթողիկոսի] ձեռնադրութեան
մասին, Գ. Տէր Կիրակոս կաթողիկոսի վտարման մասին»:

¹ Գ. Վրդ. Յովսէփեան, Թովմա Մեծոփեցու կեանքը (կենագրական նոր նիւթերով),
Վաղարշապատ, 1914, էջ 11:

² Տե՛ս Յ. Տաշեան, Թովմա Մեծոփեցի, «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1893, էջ 266:

Թովմա Մեծոփեցին նախ նշում է, որ 1441 թ. սուրբ Հոգու ազդմամբ եւ բարերար Աստուծոյ հրաշագործութեամբ, բոլոր հայերի միաբանությամբ էջմիածնում կաթողիկոս կարգվեց Կիրակոս Վիրապեցին, որ «սուրբ եւ ընտրեալ այր է, որովհետեւ 846 (1397) թուականից, երբ քահանայ ձեռնադրուեց... մինչեւ 890 (1441) թուականը ո՛չ միս էր ճաշակել, ո՛չ գինի էր ընպել եւ ո՛չ անասունների կիթ կերել, գովելի եւ առաքինի, սրբաբերան, հեզ ու խոնարհ, ո՛չ նզովք, ո՛չ անէծք բերանից չէր եղել...»¹:

Ապա հեղինակը ներկայացնում է էջմիածնի ժողովի մասնակից հոգևորականների և իշխանների անունները և նշում նրանց, ովքեր նամակով միացել էին ժողովին:

Կաթողիկոսությունը Սսից էջմիածին տեղափոխելու համար Թովմա Մեծոփեցին առանձնացնում է 12 պատճառ:

Ըստ հեղինակի Կիլիկիայի կաթողիկոսության վերջին 147 տարիների ընթացքում ապականվեցին «մեր սուրբ հայրերի» կարգն ու կանոնները: Իսկ քաղկեդոնական Կոնստանդին և Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսներից մնաց «գարշ և վաւաշոտ աղթարմութեան խմորը»:

1392 թ. մինչև 1441 թ. դավադրությունների արդյունքում սպանվեցին վեց կաթողիկոսներ՝ Թեոդորոս Բ. Կիլիկեցին (1382-1392), Կարապետ Ա. Կեղեցին (1392-1404), Հակոբ Գ. Սսեցին (1404-1411), Գրիգոր Ը. Խանձողատը (1411-1418), Պողոս Բ. Գառնեցին (1418-1430) և Կոստանդին Զ. Վահկացին (1430-1439): Եպիսկոպոսներից շատերը Հայ Առաքելական Եկեղեցու հետևորդներին հեռացրին Քրիստոսի հավատքից և անհավատ դարձրին: Նրանք զբաղվում էին անա-

¹ Թովմա Մեծոփեցի, Յիշատակարան, հրատ. պատրաստեց՝ տեղ. Արարատ ֆինյ. Պողոսեան, էջ 45:

ռակուլթյամբ, հարբեցողությամբ և ապրում էին վարքով արատավոր և մեղքերով հերյուրված: Աստվածային մեռոնի փոխարեն ձիթապտղի հասարակ յուղ էին օգտագործում, «Սուրբ Հոգու շնորհներն» արծաթով էին բաշխում (մինչդեռ Տերը սովորեցնում էր՝ ձրի առեք եւ ձրի տվեք.) մեկ վիճակի վրա 3-4 եպիսկոպոս էին ձեռնադրում, 1500 ֆլորի դիմաց անխրատներին ու անկարգներին էին ձեռնադրում եպիսկոպոս, իսկ աղքատներին քամահրում էին: Սսի կաթողիկոսության անվայելուչ բարքերի պատճառով հայոց ազգն արժանացավ մյուս ազգերի նախատինքին, իսկ հակոբիկները՝ ասորական ուղղափառ եկեղեցու հետևորդները, որ մինչ այդ մեր կաթողիկոսից էին ստանում ձեռնադրությունը, մեզանից հեռացան նգիպտոս:

Ամբողջացնելով տեղափոխության պատճառները թովմա Մեծոփեցին եզրակացնում է, որ արծաթասիրության պատճառով վերստին նորոգվեց նախաստեղծի անեծքը, նոր դժոխք պատրաստվեց Հայկազյան ազգի համար, որի հետևանքով էլ հասունացավ Թորգոմյան ազգի փրկության ժամանակը:

2017 թ. Մայր Աթոռ Ս. էջմիածնի հրատարակչությունը, «Սարգիս Գաբրիելյան» հիմնադրամի մեկենասությամբ, 500 օրինակ տպաքանակով, լույս է ընծայել Թովմա վարդապետ Մեծոփեցու «Յիշատակարան» երկասիրությունը՝ գրաբար (բնագրը՝ Լևոն Խաչիկեանի) և աշխարհաբար (թարգմանիչ՝ Արշակ Մադոյեան) զուգադիր տպագրությամբ: Երկը հրատարակության է պատրաստել տեր Արարատ քահանա Պողոսյանը՝ իր փաստառատ և հիմնավոր առաջաբանով, Գևորգ Հնձացյանի խմբագրությամբ ու պատմաքննարկա՞ն տպավորիչ վերջաբանով:

Թովմա Մեծոփեցու «Յիշատակարան»-ի վերջին այս հրատարակչությունն ունի ոչ միայն գիտական կարևորութ-

յուն, այլև այժմեական անհրաժեշտություն և անհետաձգելի հրատապություն: Այն կարող է ոչ միայն նոր լույս սփռել Սսի եկեղեցական պատմության անաշու լուսաբանման ուղղությամբ, այլև նպաստել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո Հայոց Կաթողիկոսության հարաբերությունների համահարթեցման հրամայականին:

ТРУД ВЕЛИКОГО РАБУНАПЕТА ТОВМА МЕЦОПЭЦИ «МЕМОРИАЛ» КАК ИСТОЧНИК ПО ИСТОРИИ КИЛИКИЙСКОГО АРМЯНСКОГО КАТОЛИКОСАТА

*Аветис Арутюнян
Аршак Балян
Инга Хуришудян*

РЕЗЮМЕ

Книга Товмы Мецопеци посвящена 1441 году, возвращению католикосата в Св. Эчмиадзин; произведение общенародного значения, автор которого был одним из непосредственных инициаторов данного действия. Он прекрасно понимал, что после падения Киликийского королевства одним из первых шагов на пути к независимости могло бы стать восстановление престола Католикоса в Св. Эчмиадзине, которое имело бы большое общенациональное значение и о котором некогда мечтал знаменитый Григор Татеваци, учитель Товмы Мецопеци. Товма Мецопеци вместе с Ованесом Гермонаци и другими создали Собор в Эчмиадзине в 1441 году. Народный собор, в котором участвовали более 300 вардапетов, епископов, дворян и деревенских старост внесло большой вклад в восстановление армянского Католикосата в Эчмиадзине и до 1443 г. Собор продолжал оставаться там и помогал новоизбранному Католикосу.

THE WORK "MEMORIAL" OF THE GREAT RABUNAPET TOVMA METSOPETSI AS A ORIGINAL SOURCE OF THE HISTORY OF THE CATHOLICOSATE OF CILICIA

*Avetis Harutunyan
Arshak Balyan
Inga Khurshudyan*

SUMMARY

The book of Tovma Metsopetsu is dedicated to 1441, upon the return of the Catholicosate of St. Etchmiadzin: a work of national interest, the author of which was one of the direct initiators. He understood very well that after the fall of the Kingdom of Cilicia, one of the first steps on the road to independence could be the re-establishment of the Catholicosate under St. In Etchmiadzin, which would have great national significance and for which the famous Grigor Tatevatsi, the teacher of Tovma Metsopets, was once concerned. Tovma Metsopetsi, together with Hovhannes Hermonatsi and others, organized assembly in Etchmiadzin in 1441. The national assembly, making a great contribution to the re-establishment of the Armenian Catholicosate in Etchmiadzin and until 1443 stayed there and helped the newly elected Catholicos.

Ավետիս Հարությունյան, պատմական գիտությունների թեկնածու, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է՝ Հայաստանի պատմական աշխարհագրություն, Առաջին աշխարհամարտի տարիներին հայ գաղթականության պատմություն, Վասպուրականի պատմություն, Հայ եկեղեցու պատմություն: Ունի հրատարակված շուրջ 180 գիտական աշխատություններ, որոնք վերաբերում են Հայաստանի պատմության տարբեր խնդիրներին:

✉ avharutunyan@mail.ru

Արշակ Բալյան,
պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ Աստվածա-
բանության և Հայոց Եկեղեցու պատմության ամբիոնի դոցենտ:

✉ bal.ars.hak@mail.ru

Ինգա Խուրշուդյան,

ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի մագիստրոս:

✉ inga.khurshudyan99@mail.ru

Аветис Арутюнян, Кандидат исторических наук, профессор кафедры Истории Армении АГПУ им. Х. Абовяна. Сфера научных интересов охватывает темы: историческая география Армении, армянские беженцы в годы Первой мировой войны, история Васпуракана, история Армянской церкви. Имеет около *180* научных трудов, посвященных разным вопросам истории Армении.

✉ avharutunyan@mail.ru

Аршак Балян,

Кандидат исторических наук, доцент кафедры теологии и истории Армянской церкви ЕГУ.

✉ bal.ars.hak@mail.ru

Инга Хуршудян,

Магистр кафедры истории Армении АГПУ

✉ inga.khurshudyan99@mail.ru

Avetis Harutunyan, Candidate of historic scienceis, professor at the Chair of the History of Armenia at the State Pedagogical University after Kh. Abovyan. The sphere of scientific interests includes such subjects as: The Historical Geography of Armenia, Armenian Refugees During the First World War, The History of Vaspurakan, The History of Armenian Church. Has written over *180* scientific works dedicated to various subjects on the History of Armenia.

✉ avharutunyan@mail.ru

Arshak Balyan, Candidate of historical sciences, docent of the Department of Theology and History of the Armenian Church of YSU,

✉ bal.ars.hak@mail.ru

Inga Khurshudyan, Master of Armenian History Department of ASPU,

✉ inga.khurshudyan99@mail.ru,

Վահագն Հարությունյան

ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍԱՀԱԿ Բ. ԽԱՊԱՅԱՆԻ 1920 Թ. ԵՐԱՅԵՐԱՅԻՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱ, ԻՏԱԼԻԱ ԵՒ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

Հիմնաբառեր՝ Մուդրոսի զինադադար, Սահակ Բ. Խապայան, Կ. Պոլսի Հայոց պատրիարխություն, Երուսաղեմի Հայոց պատրիարխություն, ներգաղթ, Մայրավանք, Սսի Ազգային միություն, Միհրան Տամատյան, Ադանա, Պողոս Նուբար:

Ключевые слова: Мудросское перемирие, Саак Б. Хапаян, Константинопольский Армянский Патриархат, Иерусалимский Армянский Патриархат, иммиграция, Майраванк, Национальный Союз ССИ, Мигран Таматян, Адана, Погос Нубар.

Key words: Armistice of Mudros, Sahak II Khapayan, Armenian Patriarchate of Constantinople, Armenian Patriarchate of Jerusalem, immigration, Mairavank, National Union of SSI, Mihran Tamatyan, Adana, Poghos Nubar

Մուտք: 1919 թ. իրականացվեց հայ ազգաբնակչության ներգաղթը Կիլիկիա, որի կազմակերպման աշխատանքները մեծամասամբ համակարգում էր Կիլիկիո կաթողիկոսությունը՝ իբրև Հայ Առաքելական Եկեղեցու բացարձակ մեծամասնության ներկայացուցչական աթոռ: Սահակ Բ. Խապայանի մասնակցությամբ իրականացվեցին մի շարք միջոցառումներ, որոնցով վերականգնվեց Եկեղեցու խախտված իրավունքը, վերակառուցվեցին եկեղեցիները, վերակազմվեցին Ազգային վարչական ժողովները, վերականգնվեցին Ազգային առաջնորդարանների և հեռավոր գավառների ու արտասահմանի միջև խախտված եկեղեցական հարաբերություն-

ները, մշտական կապ հաստատվեց միջհարանվանական և միջկրոնական ներկայացուցչությունների հետ, կազմակերպվեց որբերի և այրի կանանց հավաքագրումը, վերաբացվեցին ազգային վարժարանները, բնականոն հունի մեջ դրվեցին երեխաների դաստիարակության և կրթության հարցերը:

Սահակ Բ. Կաթողիկոսի ուղևորությունը Ֆրանսիա: Սակայն դրույթունը Կիլիկիայում սրվեց 1919 թ. աշնանը, երբ Ֆրանսիական ու անգլիական կառավարությունների միջև 1919 թ. սեպտեմբերի 15-ին ստորագրված համաձայնագրով Կիլիկիայում և «արևելյան տարածքներում»՝ Ալեքսպոլիս, Ուրֆայում, Բիրեջիկում անգլիական 36 հազ. զորքերին փոխարինեցին Ֆրանսիական զորամիավորումները¹, որոնք, ցավոք, առաջին իսկ օրվանից չկարողացան դառնալ կացության տերն իրենց որդեգրած տատամսող և անվճռական քաղաքականության պատճառով:

Դրան հաջորդեց 1919 թ. դեկտեմբերի 5-ին Մ. Քեմալի և Սիրիայի ու Հայաստանի Ֆրանսիական բարձր կոմիսար Ժորժ Պիկոյի միջև Սվազում ստորագրված պայմանագիրը, ըստ որի՝ Ֆրանսիան պարտավորվում էր ոչ միայն անհապաղ թողնել Կիլիկիան և այն առանց որևէ պայմանի վերադարձնել Թուրքիային, այլև պաշտպանել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունն ընդդեմ Անգլիայի, Իտալիայի և Հունաստանի: Դրա փոխարեն Թուրքիան Ֆրանսիային խոստանում էր տնտեսական մենաշնորհներ²:

Ելնելով ընձեռված հնարավորությունից՝ քեմալական Թուրքիան որոշեց 1919 թ. աշնանը պատերազմ սկսել Հայոց

¹ Տե՛ս Picon J, *Le partage du Proche-Orient*, Paris, 1938, p. 200:

² Տե՛ս Ա. Աթանասեան, Կիլիկիոյ մօտաւոր անցեալէն (պատմական ակնարկ), առաջաբան եւ նօթեր Մ. Ա. Դաւիթ-Բէկի, Փարիզ, 1937, էջ 25:

Կիլիկիայի դեմ: Նման ընտրությունը պայմանավորված էր առաջին հերթին այն մտավախությամբ, որ Կիլիկիայում բարենպաստ պայմաններ էին ստեղծվել երկրորդ հայկական պետության կազմավորման համար: Պատահական չէր, որ Մ. Քեմալը նշում էր, որ իր հիմնական նպատակներից մեկն էր հայկական բանակի և պետության ոչնչացումը, որը թարախապալարի նման դեռևս մնացել էր «մեր երկրի մարմնի վրա»¹: Հաջողության հասնելու համար նա օգտագործում է կրոնական սկզբունքը՝ ատելություն և թշնամանք բորբոքելով մահմեդական ազգաբնակչության մեջ: Խոսելով քեմալական շարժման մասին՝ Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ. Խապայանը Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե. ուղղված 1919 թ. դեկտեմբերի 29-ի իր նամակում նշում էր, որ, «Թրքական նոր կուսակցություն կազմուած է նոր անունով՝ միլլի, ազգայնական, բայց հին հոգով և խմորով: Առերևոյթ կեդրոնական իշխանութեան ընդդէմ, իսկապէս անկէ կը հրահանգուի, թերևս համաձայնականներու մէկէն կամ միւսէն»²:

1920-ական թվականներին քեմալական արշավանքները եկան փշրելու հայերի լավատեսությունը և ստիպեցին կիլիկիահայերին դեմ հանդիման կանգնելու այդ վտանգին և վերստին լքելու իրենց նորաշեն հայրենիքը: Կիլիկիայի քաղաքներից առաջին զոհը դառնում է Մարաշը, որի հայկական թաղերի վրա թուրքերի առաջին հարձակումը տեղի ունեցավ 1920 թ. հունվարի 21-ին: Խորհելու, խոսելու և գործելու մեջ իր խոհմոլթյամբ աչքի ընկնող Սահակ Բ. կաթողիկոսը, որը ազդված էր Մարաշի դեպքերից, ներկայանալով զնդ. Բրեմոնին՝ ահազանգում էր. «Պարոն Գնդապետ, Կար-

¹ М. Кемаль, Путь Новой Турции 1919-1927, т. 3 - Интервенция союзников, греко-турецкая война и консолидация национального фронта 1920-1921, М., 1934, с. 314.

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2046, ք. 4:

միր սուլթանի օրերը կապրենք»¹։ Սակայն ֆրանսիական իշխանությունների թուրքոֆիլ քաղաքականության պատճառով Մարաշում չհաջողվեց կազմակերպել ուժեղ ինքնապաշտպանություն²։ Մուշեղ արք-ը 1920 թ. մարտի 2-ին իր տեղեկագրի մեջ նշում է, որ քեմալականների կազմակերպած և ֆրանսիական իշխանությունների թողտվությամբ իրականացրած 21-օրյա կոտորածներից հետո Մարաշում ապրող 29.091 հայերից ողջ էր մնացել միայն 10.000-ը³։ Մազապուրծ լինելով՝ նրանք հաստատվել էին Ադանա, Տարսոն, Մերսին քաղաքներում։

Սահակ կաթողիկոսը շատ ծանր է տանում Մարաշի 15.000 հայ ազգաբնակչության կոտորածը և այս առիթով գրում է. «Մարաշի ահռելի աղէտը ո՛չ հանգիստ, ո՛չ կերակուր ուտելու ժամանակ, ո՛չ գիշերային քուն թողուց»⁴։

Հաշվի առնելով ստեղծված ողբալի իրավիճակը և Հաճընի քեմալական պաշարումը՝ Սահակ Բ. Խապայանը, որը ծանոթ էր կացությունը և մեծ հեղինակություն ուներ արտասահմանում, ցանկություն է հայտնում անմիջապես և անաղմուկ մեկնել Եւրոպա, մասնավորապես Ֆրանսիա՝ «իր ժողովուրդին կեանքը ապահովել»⁵ և իշխանություններին խնդրել, որ կանխեն հայկական հետագա կոտորածները, ո-

¹ Ս. Կելեկեճեան, Կիլիկեան հայ դէմքեր (գինադադարի շրջանին), «Պայքար» հանդես ազգային, գրական և տնտեսական, Պոսթոն, 1931 թ. սեպտեմբեր, էջ 35։

² Տէն Ռ. Եֆենդիեւա, Борьба турецкого народа против французских оккупантов на юге Анатолии (1919-1921 гг.), Баку, 1966, с. 115։

³ Տէն «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», գիրք Դ, Սահակ Բ Խապայեան, կաթողիկոս Կիլիկիոյ, 1891-1940 թթ., կազմեց Սանդրո Բենքոպեան, Եւեան, 1997, էջ 274-275։

⁴ Բ. Նոյայեան, Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ (1914-1972) Անթիլիաս-Լիբանան, 1975, էջ 117։

⁵ Մ. Եպիսկոպոս Աղաւնունի, Միաբանք և այցելութ Հայ Երուսաղէմի, Երուսաղէմ, 1929, էջ 438։

րոնք կարող էին անդառնալի հետևանքներ ունենալ ողջ կիլիկիահայություն համար¹։ Իսկ ինչո՞ւ հենց Ֆրանսիա. քանի որ Ֆրանսիայում էր գտնվում կիլիկյան թնչուկի բանալին։ Թեև կիլիկիահայություն համար պահն անցած էր, սակայն դեռևս հույս կար, որ Ֆրանսիական 154-րդ զորաբաժնի հրամանատար, գեներալ Տյուֆիոն և «հակակշռի պետ»² Բրեմոնը չէին ընդունում Ֆրանսիական կառավարության որոշումը։ Այնպես, որ Սահակ Բ. ուղևորությունը Ֆրանսիա կարող էր օգտակար լինել։

Իր ուղևորության մասին Սահակ Բ. խապայանը տեղեկացնում է կիլիկիահայ ազգային գործիչ Վահան Խուպեսեռյանին և առաջարկում է նրան ուղեկցել իրեն՝ որպես թարգմանիչ և օգնական։ Լինելով Կիլիկիայի Ֆրանսիական պաշտոնյա, Վ. Խուպեսեռյանը Մարաշի դեպքերի ժամանակ հրաշքով փրկվել էր կոտորածներից և հրաժարվելով ձեպել բերեքեթի նահանգի իր պաշտոնից, տեղափոխվել էր Ադանա։ Բայց քանի որ Ֆրանսիական կառավարությունը չէր ընդունել նրա հրաժարականը, Վ. Խուպեսեռյանին արտոնվում է դառնալ կաթողիկոսի պատվիրակության անդամ՝ որպես Ֆրանսիական պաշտոնյա և թարգմանիչ³։

¹ Տե՛ս «Սյոն» հայ ամսագիր. կրօնական, գրական, բանասիրական, Երուսաղեմ, 1929, փետրուար-մարտ, թիւ 2-3, էջ 76։

² Ֆրանսիական կառավարության հատուկ հանձնակատար, որը զբաղվում էր Կիլիկիայում ֆրանսիական հեղափոխության գաղափարների տեղայնացմամբ, հայերի, մյուս քրիստոնյաների ու մահմեդականների իրավունքների համահարթեցմամբ։

³ Տե՛ս Հանապարհորդության ժամանակ Վ. Խուպեսեռյանի կազմած օրագրությունը հանդիսանում է Սահակ Բ. Կաթողիկոսի արտասահմանյան ուղևորության մասին պահպանված ամենակարևոր սկզբնաղբյուրը։ Հետագայում Վ. Խուպեսեռյանն իր մոր հետ Դամասկոսից Բեյրութ գնալու ժամանակ էլ Համե կայսրանում զոհվում է ավտոմեքսից և «Լազալ Կաթողիկոսը մահից հայրական սիրով, ինչպես Դավթ

Սահակ Բ. Խապայանի երոպական ուղևորությունն սկսվեց 1920 թ. մարտի 13-ին և տևեց մինչև 1920 թ. նոյեմբերի 1-ը՝ ավելի քան 7,5 ամիս: Արգեն մարտի 15-ին Բեյրութում՝ Փրանսիական Բարձր կոմիսարության պալատում, վեհափառին մեծ ընդունելություն ցույց տվեցին գեներալ Կուրոն, ծովակալ Լը Պոն, բարձրաստիճան սպաներ, հայ և կաթոլիկ հոգևոր ներկայացուցիչներ: Գեներալ Կուրոյի այն հարցին, թե ինչո՞ւ և ի՞նչ նպատակներով է կաթոլիկոսը մեկնում Երոպա, Սահակ Բ. պատասխանում է. «Կ'երթամ Ձեր վսեմութեան օգնութիւն խնդրելու Կեդր. Կառավարութեան... Կիլիկիոյ ամբողջ Հայութիւնը իր համակրանքն ու սէրը կեդրոնացուցած է Ֆրանսայի վրայ և իր ապահովութիւնը անկէ կը սպասէ...»¹:

Տեսակցությունից հետո Սահակ Բ. «Պաթավիա» նավով Բեյրութից ուղևորվեց Ֆրանսիա և 8 օր նավարկելուց հետո՝ մարտի 23-ին, հասավ Մարսել²: Ոտք դնելով Փրանսիական հողին՝ Սահակ Բ. Խապայանն շտապեց հեռագիր ուղղել Ֆրանսիայի հանրապետության նախագահին՝ հետևյալ բովանդակությամբ. «Այսօր երջանկութիւնն ունեցայ Փրանս. ազատ հողին վրայ ոտք դնել. ի դիմաց Կիլիկիոյ Հայութեան կ'ողջունեմ յանձին Ձեր մեծն Ֆրանսան...»³:

Կաթոլիկոսը մարտի 25-ին ժամանեց Փարիզ և հանդիպումներ ունեցավ նախ Վոամշապուհ ծ. վրդ.-ի, Ֆրանսիայում հաստատված Ազգային պատվիրակության անդամներ՝ Մ. Պապաջանյանի, Վ. Թեքեյանի, դոկտ. Հ. Ներուզյանի, ադանացի իրավաբան Զ. Պղտիկյանի և հայ գաղութի ներկա-

ողբաց Աբխաղովի մահը»: Տե՛ս Վ. Խապայան, Օրագրութիւն ուղևորութեան յԵրոպա Սահակ Բ. Կաթողիկոսին Կիլիկիոյ, Հալեպ, 1928, էջ Է:

¹ Վ. Խապայան, նշվ. աշխ., էջ 3:

² Տե՛ս նույն տեղում, էջ 4:

³ Նույն տեղում, էջ 5:

յացուցիչների, ապա Ֆրանսիայի նախագահի հատուկ դեսպան և նախագահության քարտուղար Լուի Հերմիթի և վարչապետի արևելյան գործերի դիվանապետ Պարոթոննի հետ: Նախքան վարչապետի հետ հանդիպելը, Սահակ Բ. թեժ քննարկումներ ունեցավ Մ. Պապաջանյանի և դոկտ. Հ. Նևրուզյան հետ¹:

Մարտի 31-ին վեհափառը Վ. Խուպեսերյանի և Զ. Պղտիկյանի ուղեկցությամբ «Քե-դ'Օրսեում»² հանդիպում ունեցավ Ֆրանսիայի վարչապետ Միլլրանի հետ, որին ներկայացրեց մի հուշագիր Հաճընի դեպքերի և Կիլիկիայի հետագա ճակատագրի վերաբերյալ³: Իր հերթին վարչապետը հավաստիացրեց. «Ինչ որ պետք է պիտի ընէ Ֆրանսան ո՛չ միայն ներկան ապահովելու, այլև ապագայ զարգացման և զօրաւոր Հայաստան մը կազմելու համար»⁴:

Հանդիպման վերջում վարչապետը Սահակ Բ. կաթողիկոսին խորհուրդ տվեց հանդիպել նաև Ֆրանսիայի նախագահի հետ: Ապրիլի 1-ի երեկոյան, նախապես տեղի ունեցած պայմանավորվածության համաձայն, Սահակ Բ. Խապայանը Փարիզի էլիզեի (ելիսեյան) պալատում Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարության հայազգի պաշտոնյա Նշան Գալլպեյանի ուղեկցությամբ և կազմակերպված զինվորական պատիվներով հանդիպում ունեցավ Ֆրանսիայի նախագահ Պոլ Տեշանելի հետ: Ներկայացնելով Կիլիկիայի կացությունը՝ կաթողիկոսը նախագահին առաջարկեց է՛լ ավելի մեծ եռանդով պաշտպանել Հայոց դատը, որին Տեշանելը պա-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 6:

² «Քե-դ'Օրսե»-ն Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարությունն էր:

³ Տե՛ս «Ատանայի հայոց պատմություն. պատմագրական, եղեռնագրական, ազատագրական, մշակութային, ազգագրական, վաւերագրական, ժամանակագրական», խմբ.՝ Բիզանդ եղիայեան, Ամբիլիաս-Լիբանան, 1970, էջ 552-554:

⁴ Վ. Խուպեսերեան, նշվ. աշխ., էջ 7:

տասխանեց. «Ինքզինքս երջանիկ կը զգամ Հայ Ազգին Կաթողիկոսին ներկայութիւնը վայելելու... Հայերուն կրած տառապանքը և յանուն արդարութեան դաշնակիցներու կողքին ըրած զոհողութիւններն ալ ծանօթ են մեզ, մանաւանդ Մարաշի վերջին աղէտը բոլոր Ֆրանսացիները խորին վշտով համակեց...»¹։ Սահակ Բ. Խապայանի այն հարցադրմանը, որ Կիլիկիայի պաշտպանութեան համար առաջնային պետք է դարձնել ֆրանս-հայկական զինակցութիւնը, Տեղանքը հավաստիացրեց, որ «Ֆրանսա երբէք չը պիտի թերանայ Հայերու հանդէպ իր պարտուց մէջ և կարելին պիտի ընէ յօգուտ և յապահովութիւն Հայերու»²։

Այն, որ ֆրանսիական կառավարութիւնն արտաքուստ բարյացակամ էր տրամադրված հայերի նկատմամբ, իմանում ենք Մ. Տամատյանին ուղղված Վ. Թեքէյանի, դոկտ. Հ. Ներուզի և Ա. Չոպանյանի 1920 թ. ապրիլի 15-ի նամակից, ուր նշվում է, որ ֆրանսիական կառավարութիւնը քանիցս հավաստիացրել էր Ազգային պատվիրակութեանը, Սահակ Բ. Խապայանին և Զավեն պատրիարքին, որ բոլոր միջոցները ձեռք էր առել հայերի իրավունքները պաշտպանելու համար³։ Սակայն Ֆրանսիայի նախագահի համոզմամբ՝ հարցերի լուծման լավագոյն տարբերակը դիվանագիտութիւնն էր։ Արդեն Հաճընի դեպքերի ժամանակներից Ֆրանսիան կատարել էր իր արտաքին քաղաքական կողմնորոշումը Կիլիկիայի հարցում, որի անմիջական արձագանքը գտնում ենք ֆրանսիական «Տան» թերթի 1920 թ. փետրվարի 15-ի համարում⁴։

¹ Նույն տեղում, էջ 9-10։

² Նույն տեղում, էջ 10։

³ Տե՛ս «Մամուլի մէջ տպուած և անտպ Երկեր ու նամակներ Վահան Թէֆէեանէն», հասաւեց և ծանօթագրեց դոկտ. Վաչէ Ղազարեան, Պէրուք, 1987, էջ 207։

⁴ Տե՛ս **M. Paillarés**, *Le Kémalisme devant les Alliés*, Paris, 1922, էջ 127։

Նույն օրը երեկոյան կաթողիկոսը կարևոր հանդիպում ունեցավ Լոնդոնից Փարիզ ժամանած Ա. Չոպանյանի հետ, որն առաջարկեց դիմել Ֆրանսիական կառավարութեանը՝ Անդրանիկին որպէս փորձառու, վստահութիւն և համակրութիւն վայելող գործարարի Կիլիկիա հրավիրելու, ինքնապաշտպանութեան գործը կազմակերպելու և Ֆրանսիային ռազմական ծառայութիւն մատուցելու համար: Ապրիլի 2-ին Սահակ Բ. Խապայանը Քե-դ 'Օրսեում հանդիպում ունեցավ արտաքին գործերի դիվանապետ (նախարար) Պարթիոնի հետ, որին ներկայացրեց Անդրանիկի հարցը: Սակայն Ֆրանսիացի պաշտոնյան պատասխանեց, որ իր երկրի նպատակն է՝ «Քաղաքակիրթ եւ ինքնագիտակից կառավարութիւն մը կազմել, թուրք դրօշակը պահել Կիլիկիոյ մէջ իւրաքանչիւր ցեղի եւ ազգի առանձնաշնորհումով»¹: Միակ բանը, որ Ֆրանսիական պաշտոնյան կաթողիկոսին խոստացավ՝ օգնանովով Հաճընին օգնութիւն հասցնելն էր:

Ի դեպ, Հաճընի հերոսամարտի այդ սրտաճմլիկ օրերին Սահակ Բ. Խապայանի գործունեութեանը զուգընթաց Ադանայի թեմի առաջնորդ Պետրոս եպս. Սարաճյանն իր հերթին, Կիպրոսից կոչով դիմում է ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարութիւններին, որ օգնեն հաճընցիներին և կանխեն կոտորածները՝ միաժամանակ դատապարտելով արեւմտյան տերութիւնների ցուցաբերած անտարբերութիւնը հայերի նկատմամբ²:

Նշենք, որ Հաճընի դեպքերին համահունչ Ֆրանսիական կառավարութեան մեջ և խորհրդարանում ձեւավորվել էր երկու հակադիր հոսանք, որոնցից մեկը պահանջում էր հրա-

¹ Վ. Խուպէնեան, նշվ. աշխ., էջ 11:

² Տե՛ս «Յուշամատենն նուիրում Հաննոյ հերոսամարտի 75-ամեակին», պատրաստեց Կարպիս Գոյումեան, Աթէնք, 1995, էջ 44:

ժարվել Կիլիկիայից և Սիրիայից՝ փոխարինելով այն մեկ այլ տարածքով, իսկ մյուս մասը կողմ էր Կիլիկիայում Ֆրանսիայի ներկայությունը, սակայն հայկական ինքնավարության մասին խոսք անգամ լինել չէր կարող, քանի որ Ֆրանսիացիները կարծում էին, որ Կիլիկիայի բոլոր ժողովուրդների իրավունքները պետք է հարգվեին¹:

Փարիզում Սահակ Բ. Խապայանը հանդիպումներ ունեցավ նաև Ֆրանսիայի մշակույթի նախարարի և Ռազմական նախարարության դիվանապետ, գեներալ Բենենի, Փարիզի արքեպիսկոպոս Ամեթիի, Հունաստանի վարչապետ է. Վենիզելոսի հետ՝ ներկայացնելով իր Ֆրանսիա ժամանելու պատճառները, Կիլիկիայի գրավման ժամանակներից ի վեր տեղի ունեցած քաղաքական և զինվորական անցուղարձեքը, Մարաշի գրավումը, թույլ տրված քաղաքական և զինվորական սխալները, հույների վիճակը Կիլիկիայում և կոչ արեց իրենց զորավոր ձայնը բարձրացնելու «մարդկության թմրած խիղճը արթնացնելու համար»²: Վենիզելոսի այն պատասխանին, թե՝ «Ես փոքրիկ տէրութեան (խօսքը՝ Յունաստանի մասին է - Վ. Յարուսիլենեան.) մը ներկայացուցիչն եմ, ինձմէ հզորագոյնները կան», կաթողիկոսը հակադարձում է և պատասխանում. «...թէեւ փոքր, մեզ համար մեծագոյնը ըրիք արդարասիրութենէ թելադրուած: Մեծն ու հզորագոյնը արդարութիւնն է, պաշտպանեցէ՛ք արդարութիւնը»³: է. Վենիզելոսը վստահություն էր հայտնում, որ արևելքում խաղաղության կարելի էր հասնել միայն հայերի և հույների հզորացման ճանապարհով, և որ անհրաժեշտության ու դաշնակիցների համաձայնության դեպքում Զմյուռնիայում գտնվող հունա-

¹ Տե՛ս «Մամուլի մէջ տպուած եւ անտիպ երկեր ու նամակներ Վահան Թէֆէեանէն», էջ 209:

² Վ. Խապայան, նշվ. աշխ., էջ 16-17:

³ Նույն տեղում, էջ 17:

կան 100 հազ. բանակը կարող էր փոխադրվել Կիլիկիա:

Ապրիլի 9-ին՝ Լոնդոնի վեհաժողովի ավարտից հետո, Փարիզ վերադարձավ Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը, որն այցելեց Սահակ Բ-ին: Ինչպես Վ. Խուպեսեյանն է հիշում՝ Հայ դատի համար անհավատ, համեստ, անձնագոհ և ազնվականի օրինակելի տիպար հանդիսացող պատկառելի ծերունին անիրազեկ լինելով Հայաստանի իրական կացությանը և երկրին սպառնացող վտանգին՝ «թուղթի վրայ գծուած սահմաններով կը գոհանար»¹: Միաժամանակ նա կաթողիկոսին տեղեկացնում է, որ Հայաստանի խնդիրը մինչև սեպտեմբեր հետաձգվել էր:

Ապրիլի 13-15-ը Սահակ Բ. կաթողիկոսը մասնավոր և կարևոր հանդիպումներ ունեցավ հայ հասարակական-քաղաքական անվանի դեմքերի՝ Լոնդոնից վերադարձած Կ. Պոլսի պատրիարքի, Գր. ծ. վրդ. Պալաքյանի, Հ. Նևրուզի, Առաքել Բեյի, Գ. Նորատունկյանի հետ, իսկ ապրիլի 18-ին ազգային գործիչների ուղեկցությամբ այցելության գնաց նաև Սեն-Տընի՝ Կիլիկիայի վերջին գահակալ Լևոն Զ. շիրմին²:

Ապրիլի 15-ին վեհափառը հանդիպեց Ֆրանսիայի ռազմական նախարար Անդրե Լըֆերի հետ, որը Կիլիկիայի կորուստը համարելով Ֆրանսիայի պատիվը, այնուամենայնիվ անընդունելի էր համարում Կիլիկիա Ֆրանսիական նոր գործ ուղարկելը և կողմ էր խնդիրը դիվանագիտական ճանապարհով լուծելուն³:

Նշենք, որ Արևելյան խնդիրը վերջնականապես լուծելու նպատակով մեծ տերությունները Լոնդոնի համաժողովից հետո նախատեսում էին նոր՝ երրորդ խորհրդաժողով հրա-

¹ Նույն տեղում, էջ 16:

² Տե՛ս Մ. Եսայ. Աղաճունի, Միաբանք եւ այցելութ Հայ Երուսաղեմի, Երուսաղեմ, 1929, էջ 439:

³ Տե՛ս Վ. Խուպեսեյան, նշվ. աշխ., էջ 21:

վիրել, այս անգամ Սան-Ռեմոյում: Սահակ Բ. Խապայանը ցանկանում էր մեկնել Սան-Ռեմո և վեհաժողովին ներկայացնել Կիլիկիայի հայության բաղձանքները: Սակայն Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարությունը նպատակահարմար չգտավ վեհափառի ներկայությունը վեհաժողովում: Դրա փոխարեն կաթողիկոսը Պողոս Նուբարի և Ա. Ահարոնյանի հետ Սան-Ռեմո ուղարկեց Ադանայի հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչների բողոքագիրը՝ Կիլիկիան քեմալականներին թողնելու քաղաքականության դեմ¹:

Շուտով Փարիզում եղած ժամանակ կաթողիկոսին պարզ դարձավ, որ Ֆրանսիացիներն սկսել էին աստիճանաբար հետ քաշվել Կիլիկիայից, իսկ Այնթապում սկիզբ էին առել խժոժություններ: Ելնելով ծայրահեղ ծանր իրավիճակից՝ Ադանայի հոգևոր ներկայացուցիչները դիմում են Սան-Ռեմոյի վեհաժողովին՝ խնդրելով քրիստոնյաներին այլ վայր տեղափոխել: Բացի այդ, անգլիական և Ֆրանսիական թերթերից պարզ դարձավ, որ Ադանայի հայությունը դատարկվում է: Խուճապ առաջացնող լրատվությունն ստուգելու նպատակով կաթողիկոսի պատվիրակությունը հանդիպեց Արտաքին գործերի նախարարության Արևելյան գործերի դիվանապետ Պարթևոնի հետ, որը մի կողմից հերքեց Կիլիկիան դատարկելու մասին տեղեկատվությունը, իսկ մյուս կողմից կաթողիկոսին հայտնեց Սան-Ռեմոյի որոշումն առ այն, որ Ջիհան գետին արևմուտք ընկած տարածքները, այդ թվում՝ Ադանան, Տարսոնը, Մերսինը, Սիսը հանձնվում էին թուրքերին՝ ազգային փոքրամասնությունների իրավունքները պաշտպանելու պայմանով²: Ինքը՝ կաթողիկոսը, դեմ էր կիլիկիահայությանն այլ վայր տեղափոխելու մահաբույր

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 22-24:

² Տե՛ս նույն տեղում, էջ 30:

գաղափարին և միշտ կրկնում էր, որ, «Եթե մեռնիլ պէտք է, մեր հայրենի հողին վրայ մեռնինք»¹։

Սահակ Բ. Խապայանը Վենետիկում։ Օգտվելով արտասահմանյան ճամփորդության ընձեռած հնարավորությունից և ցանկանալով իրականացնել իր վաղեմի փափագը՝ Սահակ Բ. Խապայանը 1920 թ. մայիսի 4-ին դուրս գալով Փարիզից՝ մայիսի 6-ին ուղևորվում է նախ Վենետիկ, ապա նույն օրը ուխտի է գնում ս. Ղազար՝ «հայ գրականութեան և մտաւորականութեան վառարանը»՝ իր հայրապետական ողջունն ու օրհնությունը հաղորդելու կղզու միաբանությանը։ Կաթողիկոսի ուղևորությունը տեեց ընդամենը մեկ օր, որի ընթացքում նա ս. Ղազարում հանդիպումներ ունեցավ տեղի հոգևորականության հետ։ Սահակ Բ. կղզու միաբաններին ներկայացնում է Կիլիկիայի շուրջ ստեղծված քաղաքական իրավիճակը և այն թուրքերից գերծ պահելու ճարահատյալ ձգտումները, քանի որ, ինչպես վեհափառն էր խոստովանում, «Եւրոպացիները՝ ընդունայն խօսքերով՝ խաբեցին մեր տէրութիւնը»²։ Նա այցելեց և ծնրադիր համբուրեց եկեղեցում գտնվող Մխիթար Սեբաստացու դամբարանը, այցելեց վանքի գերեզմանատուն և հարգանքի տուրք մատուցեց Մ. Զամչյանի, Ղ. Ալիշանի գերեզմաններին։ Նա եղավ միաբանության թանգարանում, ուր մասնավոր հետաքրքրությամբ զննեց Գր. Լուսավորչի, Հ. Այվազովսկու, Գ. Բաշինջաղյանի, Ս. Երկանյանի, Է. Շահինի նկարները։ Ապա եղավ գրատանը, ձեռագրատանը և տպարանում³ և իր պատվին կազմակերպված հրաժեշտի ճաշին լուսանկարվեց միաբանների հետ⁴։

¹ Նույն տեղում։

² Գ. Այտընեան, Սահակ Բ. կաթողիկոս Կիլիկիոյ. Վեհափառի օրը ի ս. Ղազար, «Բագմավէպ», Վենետիկ-Սուրբ Ղազար, 1920, յուլիս, էջ 213։

³ Տե՛ս Վ. Խապայան, նշվ. աշխ., էջ 33-34։

⁴ Տե՛ս Գ. Այտընեան, նշվ. աշխ., էջ 215։

Հետդարձի ճանապարհին Վենետիկում կաթողիկոսն այցելում է ս. Մարկոսի տաճար, լինում է Վենետիկի Մուրադ-Ռափայելյան վարժարանում և հանդիպում վարժարանի տեսուչ հ. Վարդան Հացունու հետ: Ի վերջո, Պադուայի, Լիստրայի, Միլանի և Շվեյցարիայի վրայով պատվիրակությունը մայիսի 13-ին վերադարձավ Փարիզ¹:

Փարիզ հասնելուն պես պարզ դարձավ, որ կացությունը Հաճրնում, Ադանայում և Այնթապում է՛լ ավելի է վատթարացել: Իրավիճակից դուրս գալու ելք գտնելու նպատակով նույն օրը Ազգային պատվիրակությունը բացառիկ ժողով գումարեց, որին ներկա էին ինչպես Պողոս Նուբարը և Ա. Ահարոնյանը, այնպես էլ Սահակ Բ Խապայանը և Կ. Պոլսի պատրիարքը: Կաթողիկոսին մտահոգում էր Սան-Ռեմոյի 1920 թ. մայիսի 18-ի որոշումը, ըստ որի՝ Կիլիկիան բաժանվում էր երկու մասի՝ Սիրիային սահմանակից շրջանները և Լեռնային Կիլիկիան անցնում էին Ֆրանսիային, իսկ ստվար հայկական բնակչություն ունեցող Դաշտային Կիլիկիան թողնվում էր Թուրքիային: Այս առիթով նա բողոքագրեր ուղարկեց դաշնակից պետությունների ղեկավարներին և մասնավորապես Մեծ Բրիտանիայի վարչապետին՝ կոչ անելով չեղարկել այդ անարդարությունը²:

Ֆրանսիական կառավարության տմարդի և երկերեսանի քաղաքականությունն առաջ բերեց նաև հայ հոգևորականության դժգոհությունը: Ադանայի առաջնորդ Մուշեղ արք. Սերոբյանը, հասկանալով Ֆրանսիայի արտաքին քաղաքական խաբեկանքները կիլիկիահայությունյան նկատմամբ, քննադատում է Ֆրանսիացի գնդապետ՝ «Հայաստանի կա-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 216:

² Տե՛ս ԳԱԹ, արխիվ. ֆ. Ա. Չոպանյան, գ 9979, III բաժին, ք. 1-3, նաև Ատանայի հայոց պատմութիւն, էջ 554-555:

ռավարիչ» Բրեմոնի վարած հակահայկական քաղաքականությունը, և այդ ամենի արդյունքը լինում է այն, որ Արևելքի ֆրանսիական I զորաբաժնի պատերազմական դատարանը 1920 թ. ապրիլի 23-ին մեղադրանք է առաջադրում Մ. արք. Սերոբյանին՝ չարագործության, պայթուցիկ նյութեր և զենք պահելու կասկածանքով: Այդ առիթով Մուշեղ սրբազանը մայիսի 13-ի նամակով իր բողոքն է հայտնում Ֆրանսիայի հանրապետության նախագահ Պոլ Տեշանեյին¹:

Սահակ Բ Խապայանի կարճատև այցելությունը Լոնդոն և Մանչեստր: Լոնդոնի և Մանչեստրի հայկական գաղութները փափագում էին հանդիպել Սահակ Բ. Խապայանին, որի համար իրենց հոգևոր առաջնորդների միջոցով գրավոր հրավերներ ուղղեցին կաթողիկոսին: Իրականում, Սահակ Բ. Մեծ Բրիտանիայում որևէ քաղաքական նպատակ չունեի, քանի որ Ազգային պատվիրակությունը քանիցս ծանուցել էր, որ Կիլիկիայի հարցով հարկավոր էր դիմել հիմնականում Ֆրանսիային: Սակայն օգտվելով առիթից՝ նա ցանկանում էր Անգլիայում հանդիպել մի շարք հայասեր անձնավորությունների, այդ թվում՝ Զեյմա Բրայսի, Գլադստոնի որդու և Քենթրբերիի արքեպիսկոպոսի հետ:

1920 թ. մայիսի 20-ին Սահակ Բ. Վ. Խուպեսերյանի, Գր. Ժ. վրդ. Պալաքյանի և Զաքարիա Պղտիկյանի ուղեկցությամբ մեկնեց Լոնդոն: Լոնդոնում եղած օրերին՝ մինչև հունիսի 10-ը, կաթողիկոսը առանձին և մասնավոր հանդիպումներ ունեցավ բազմաթիվ մարդկանց հետ: Մասնավորապես, հանդիպեց Լոնդոնի տեղեկատու դիվանի պետ Մալքումի, նրա քարտուղար Ա. Սաֆրաստյանի, Հայ Եկեղեցու հոգաբարձության նորընտիր անդամներ՝ Ներսես Կյուպենկյանի,

¹ Տե՛ս Մ. արքեպ. Սերոբեան, Բողոքս ֆրանսական հանրապետության նախագահին, Իզմիր, 1920, էջ 1-15:

Միհրան Կյուտենյանի, Արմենակ Քեհյանի, Մանչեստրի հոգևոր առաջնորդ Աբել վրդ.-ի, Կ.Պոլսի անգլիական դեսպանատան երբեմնի երեց Ֆ. Տրկլասի և այլոց հետ¹։ Սակայն կաթողիկոսի նախապես ծրագրված շատ հանդիպումներ ի չիք դարձան, քանի որ Զեյմս Բրայսը մեկնել էր Իսպանիա, իսկ Անգլիկան եկեղեցու հոգևորականներն էլ Յորք՝ տեղի եպիսկոպոսի ձեռնադրությանը մասնակցելու համար։ Այդուհանդերձ, մայիսի 31-ին անգլիական պառլամենտի հայասեր պատգամավոր Ուիլհելմի միջնորդությամբ Սահակ Բ. Գր. ծ. վրդ. Պալաքյանի և Տիրացույանի ուղեկցությամբ հանդիպեց Արտաքին գործերի նախարարության խորհրդական Համաֆերտինի և նախարարության ասիական գործերով զբաղվող պաշտոնյայի հետ, որոնց իր խորին շնորհակալությունը հայտնեց Առաջին աշխարհամարտի տարիներին հայ տարագիրներին և գաղթականներին Մեծ Բրիտանիայի ցուցաբերած նյութական և բարոյական աջակցության համար։ Միաժամանակ, նա անգլիական բարձրաստիճան պաշտոնյայի միջոցով Լոյդ Ջորջին փոխանցեց մի գրություն՝ արտահայտելով իր դժկամությունը՝ Կիլիկիան երկու մասի բաժանելու հարցում Սան-Ռեմոյի վեհաժողովի ընդունած որոշման դեմ։

Հունիսի 10-ին Սահակ Բ. Լոնդոնից վերադարձավ Փարիզ, որտեղ շուտով պարզ դարձավ, որ Ֆրանսիայի Արևելյան խնդրի (Պաղեստին և Մոսուլ) և մասնավորապես Կիլիկիայի վերաբերյալ Սան-Ռեմոյի պայմանավորվածության հարցում ձևավորվել էր ընդդիմություն, որի ղեկավարն էր Արտաքին գործերի նախարարության հանձնաժողովի անդամ, նախկին վարչապետ և արտգործնախարար Ա. Բրիանը, որը թե՛ մամուլում և թե՛ խորհրդարանում հանդես էր գալիս

¹ Տե՛ս Վ.Խուպեխեան, նշվ. աշխ., էջ 54:

Սայքս-Պիկոյի համաձայնագրի պաշտպանությունը: Միաժամանակ, «Տյունլիքս» ընկերությունը, որն ուներ ազդեցիկ անդամներ, բողոքագրեր էր պատրաստում Կիլիկիայի, Մուսուլի և Պաղեստինի հարցում Ֆրանսիայի զիջողական քաղաքականության մասին: Օգտվելով առիթից՝ կաթողիկոսի պատվիրակությունը երկու հիշատակագիր պատրաստեց և բաժանեց խորհրդարանականներին: Հարցն այն աստիճան արդիական դարձավ, որ կառավարությունը պարտավորվեց այն խորհրդարանական հանձնաժողովի քննարկման նյութ դարձնել¹:

Հունիսի 20-ին Սահակ Բ.-ին է այցելում իր հայասիրական տրամադրություններով աչքի ընկնող Ֆրանսիայի նախկին վարչապետ Դընիս Կոշեն, որը կաթողիկոսից տեղեկություններ է խնդրում Կիլիկիայի վերջին իրադարձությունների և նախատեսվող զարգացումների վերաբերյալ: Նախկին վարչապետը ցավում էր, որ ի հեճուկս վերջին իրադարձությունների, իր վարչապետության օրոք 1918 թ. կնքված համաձայնագիրը դրական լուծումներ էր առաջ քաշում արևելյան հարցի կապակցությամբ: Դընիս Կոշեի միջնորդությամբ Սահակ Բ. հունիսի 23-ին նախատեսում է հանդիպել Բրիտանին, որը 1916 թ. կնքել էր Սայքս-Պիկոյի համաձայնագիրը: Սակայն նախքան այս հանդիպումը նույն օրը կաթողիկոսը բավականին արդյունավետ հանդիպում է ունենում խորհրդարանի պատգամավոր Քեսթեր-Լընայնի հետ, որը քաջածանոթ լինելով կացությանը², վստահեցնում է, որ Ֆրանսիան, որն իր վրա էր կրում ծանր պարտավորություններ, առանց

¹ Տե՛ս Վ. Խալիֆեհեան, նշվ. աշխ., էջ 61:

² Սահակ Բ. ուղղված Այնթապի կաթողիկոսական փոխամուղ Ներսես Թավուզյանի հունիսի 1-ի նամակից պարզ էր դարձել Ռոբեր Տրեֆի և Մ. Քեմալի միջև կնքված 20-օրյա զինադադարը, ըստ որի՝ Այնթապը հանձնվում էր Թուրքիային: Տե՛ս Ա. Կեսար, Այնթապի գոյամարտը, Պոսթրն, 1945, էջ 55-194:

երաշխիքների չէր թողնի Կիլիկիան: Կաթողիկոսն էլ, հաշվի առնելով Այնթապի և Հաճընի հայությունն ինքնապաշտպանական կորովը, առաջարկում է ֆրանսիական հովանու ներքո ստեղծել հայկական կամավորական գնդեր՝ Անդրանիկի հրամանատարությունը: Սակայն Քեստեր-Լընայը պատասխանում է. «Թերևս կառավարությունը կը զգուշանայ առիթ չը տալու Թուրքերուն նոր գրգռումի և ջարդի»¹:

Հունիսի 23-ին Բրիտանի հետ հանդիպման ժամանակ, որին ներկա էին Վ. Խուպեսերյանը և Զ. Պզտիկյանը, Սահակ Բ. ներկայացնում է Կիլիկիայի հետ կապված բոլոր մանրամասնությունները, քրիստոնյաներին սպառնացող վտանգը և Ֆրանսիայի համար Կիլիկիայից հեռանալու նյութական և բարոյական վնասները: Նա խնդրում է. «Պաշտպանէ՛ք Կիլիկիոյ դատը յօգուտ ֆրանս. և հայկական շահերուն»², քանի որ Կիլիկիայի ազգաբնակչությունը վայելում էր Ֆրանսիայի քաղաքակրթական ներկայությունը և հովանավորությունը և պետք է մտներ նրա մանդատի ենթակայության տակ: Երկկողմ հանդիպման արդյունքը լինում է այն, որ Բրիտանը պարտավորվում է հարցը բարձրացնել խորհրդարանում՝ մինչև վերջնական որոշում կայացնելը: Միաժամանակ, խնդրի կարևորությունը և հրատապությունը մատնանշելու համար և հաշվի առնելով կաթողիկոսի հեղինակությունը, երկու կողմերը պայմանավորվում են, որ Կիլիկիայի խնդիրը խորհրդարանի արտաքին գործերի հանձնաժողովին անձամբ ներկայացնի Սահակ Բ.: Սակայն, ցավոք, արտաքին գործերի հանձնաժողովն այդ հնարավորությունը չի ընձեռում կաթողիկոսին, քանի որ ֆրանսիացի պաշտոնյաների մեղրածորան հավաստիացումները սոսկ դիվանագիտական

¹ Վ. Խուպեսեան, նշվ. աշխ., էջ 63:

² Նույն տեղում, էջ 66:

խաղեր էին: Նրանք խոստանում էին կիլիկիահայություն մասին ելույթներ ունենալ և նույնիսկ՝ «Կիլիկիոյ մէջ հիմնել ինքնավար պետութիւն մը, ուր հայ ժողովրդի ազգային բաղձանքները գոհացում պիտի ստանան»¹:

Ֆրանսիական պետական այրերից հիասթափված Սահակ Բ. պատվիրակությունը որոշում է հեռանալ Ֆրանսիայից և հետ վերադառնալ Կիլիկիա, սակայն հունիսի 24-ին հրաժեշտի կապակցությամբ Արտաքին գործերի նախարարությունում վերջին տեսակցությունն է անցկացնում արտգործնախարար Կամբերերի հետ՝ իր շնորհակալությունը հայտնելով Ֆրանսիական կառավարության տված հավաստիքների համար և ցանկություն հայտնում, որ Ֆրանսիայի ներկայությունը Կիլիկիայում տեական լինի, քանի որ, «Հայոց սէրն առ Ֆրանսա անկեղծ է եւ Արեւելքի մէջ միակ տարրն է, որ իր շահը Ֆրանսայի շահէն չի բաժնեւ եւ նախանձախնդիր է Ֆրանսա պատուոյն»²:

Հունիսի 27-ին վեհափառին է այցելում նաև Այնթապի և Ուրֆայի շրջանում ֆրանսիական զորքերի հրամանատար Գոլոնել Նորմանը, որն արժեքավոր տեղեկություններ է ներկայացնում քաղաքական շրջանակներում տիրող մտայնության մասին³:

Ավարտելով իր աշխատանքները, Սահակ Բ. հուլիսի 1-ին Փարիզից մեկնեց Մարսել, այնտեղից Ալեքսանդրիա, Պորտ Սայիդ և Բեյրութի վրայով նոյեմբերի 1-ին հետ վերադարձավ Ադանա:

¹ Թ. Վեհապետեան, Լուսարձակ մեր անցեալ եւ ներկայ համրային կեանքին վրայ, ներածական 5-րդ գլխիւն. Յաւելեալ լրացուցիչ բաժինով, ընդհ. խորհրդածութեան ատիք մեր հոգեւոր իշխան. եւ ազգ. մարմիններուն, Պէյրութ, 1993, էջ 85:

² Վ. Խապէսեան, նշվ. աշխ., էջ 72:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 77:

Ֆրանսիացի բարձրաստիճան այրերն այդ ամենն անուժ էին զուտ իրենց հեղինակության բարձրացման համար: «Սիոն» ամսագիրը նկատում է. «...պազշոտ դիւանագիտութիւնը և զոհուած արդարութիւնը դէմդիմաց կուգան ալեւոր Հայրապետին գործունէութեան գիծին վրայ, նոր յուսախաբութիւններու կսկիծները արթնացնելով անոր ներսը»¹:

Նշենք նաև, որ Սահակ Բ. Խապայանի արտասահմանյան ուղևորությունը միանշանակ չեն ընդունել ժամանակի ազգային-քաղաքական գործիչները: Կ. Պոլսի Զավեն պատրիարքը փորձում է միտումնավորություն և անտարբերություն տեսնել կաթողիկոսի երոպական ուղևորության մեջ և կարծում է, որ Խապայանը Ֆրանսիա մեկնեց Ֆրանսիական իշխանությունների անմիջական թելադրանքով, քանի որ կաթողիկոսը՝ «Ֆրանսացիներու դէմ քայլ առնել չէր ուզեր»: Զավեն պատրիարքը քննադատում է նաև ազգային պատասխանատվության նկատմամբ ամենայն անտարբերությամբ իրականացված Սահակ Բ. վենետիկյան ճամփորդությունը, որն ի կատար ածվեց մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ Կիլիկիայում իրավիճակը խառն էր: Իսկ թե կաթողիկոսն ինչո՞ւ մեկնեց Լոնդոն և Մանչեսթր՝ ըստ Զավեն պատրիարքի, ոչ ոքի հայտնի չէր: Դեռ ավելին, նա Անգլիայում իշխանություններին դիմումներ չներկայացրեց, որովհետև մտավախություն ուներ, որ այն Ֆրանսիական իշխանությունների կողմից հավանության չէր արժանանա: Միաժամանակ, Զավեն արք. մատնանշում է, որ Սահակ Բ. Խապայանն ընդհանրապես իր արտասահմանյան հանդիպումները չի համակարգել Հայոց ազգային պատվիրակության՝ և հատկապես Պողոս Նուբարի ու Գաբրիել Նորատունկյանի

¹ «Սիոն», Երուսաղեմ, 1929 թ. յունուար, թիւ 1, էջ 76:

հետ, և որ ինքն իրեն լիազորել էր որպես «Կիլիկիոյ Հայոց ներկայացուցիչ»¹։

Այսպիսով, եթե ամփոփելու լինենք Սահակ Բ. կատարած եւրոպական ուղևորության արդյունքները, ապա կարող ենք ասել, որ Սահակ Բ. Խապայանը Ստեփանոս Ե. Սարմատեցուց (1545-1567), Միքայել Ա. Սեբաստացուց (1567-1576), Հակոբ Դ. Զուղայեցուց (1655-1680) և Մկրտիչ Ա. Խրիմյան Հայրիկից (1893-1907) հետո հինգերորդ կաթողիկոսն էր, որ հայկական հարցի քննարկման համար հասնում էր Եւրոպա։ Սակայն առատ խոստումներից և ձևական հարգանքի արժանանալուց բացի, նա ուրիշ ոչ մի բան չի ստանում և դառնում է «անպատիւ քաղաքականութեան, սուտի եւ կեղծիքի գորհ...»²։

ЕВРОПЕЙСКАЯ ПОЕЗДКА 1920 ГОДА КАТОЛИКОСА КИЛИКИИ СААКА II ХАПАЯНА ВО ФРАНЦИЮ, ИТАЛИЮ И ВЕЛИКОБРИТАНИЮ

Ваагн Арутюнян

РЕЗЮМЕ

Осенью 1919 года кемалистская Турция начала войну против армянской Киликии. Принимая во внимание плачевное положение и осаду Хачина кемалистами, Саак II Хапаян, хорошо знакомый с поселением и имевший большую известность за границей, выражает желание немедленно и скрытно выехать в Европу, в частности во Францию, и просить власти для предотвращения дальнейших

¹ Զաւէն արքեպս., Պատրիարքական յուշեր. վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գանիրէ, 1947, էջ 365-370։

² Զ., դոկտ. աւ. ֆենյ. Արզումանեան, S.S. Սահակ Բ. Խապայեան. կաթողիկոսին վերջին այցն ու Կիլիկիոյ ճակատագիրը 1920-1921. «Պայքար» շաբաթաթերթ, բացառիկ, 2020, օգոստոսի 16, թիւ 33 (188), էջ 34։

армянских погромов. Европейское путешествие Саака II Хапаяна началось 13 марта 1920 г. и продолжалось до 1 ноября 1920 г. Прибыв 25 марта в Париж, Католикос встретился сначала с армянскими общественно-политическими деятелями, затем со специальным послом и секретарем президента Франции Луи Эрмитом, дипломатом премьер-министра по восточным делам Паржтоном, премьер-министром Франции Милраном, президентом Франции Полем Дешанелем, Министром культуры Франции, Министром вооруженных сил Франции, генеральным дипломатом Бенина, архиепископом Парижа, кардиналом Леон-Адольфом Аметти, премьер-министром Греции Э. С Венизелосом и другими. 6 мая 1920 г. Саак II Хапаян также отправился в Венецию и на остров Святого Лазаря, а 20 мая 1920 г. в сопровождении В. Хупе-серяна, Высокопреосвященнейшего Владыки Григориса Палакяна и Закария Пзтикяна выехал в Лондон, где встретил с Малкумом, руководителем Лондонского информационного дивана, со своим секретарем А. Сафрас-тяном и членами попечительства Армянской церкви. Саак II Хапаян был пятым католикосом после Степаноса Салмастета, Микаэла Себастати, Акопа Джугаца и Мкр-тича Хримяна Айрика, приехавших в Европу для обсуждения армянского вопроса.

SAHAK II KHAPAYAN'S EUROPEAN TRIP IN 1920 TO FRANCE, ITALY AND GREAT BRITAIN

Vahagn Harutyunyan

SUMMARY

In the fall of 1919, Kemal Turkey started a war against Armenian Cilicia. Taking into account the deplorable situation and the siege of Hachin by the Kemalists, Sahak II Khapayan, who was familiar with the settlement and had a great

reputation abroad, expresses his desire to immediately and quietly leave for Europe, particularly France, and ask the authorities to prevent further Armenian massacres. Sahak II Khapayan's European trip began on March 13, 1920 and lasted until November 1, 1920. Arriving in Paris on March 25, the Catholicos met first with Armenian social and political figures, then with French President's Special Ambassador and Secretary of the Presidency Louis Hermit, Prime Minister's Ambassador for Eastern Affairs Parzhon, French Prime Minister Milran, President Paul Techanel, Minister of Culture, Ambassador of the Ministry of Defense - General Benin, Archbishop of Paris, Amethi, Prime Minister of Greece E. With Venizelos and others. On May 6, 1920, Sahak II Khapayan also went to Venice and St. Lazar, and on May 20, 1920, accompanied by V. Khupeseryan, the Most Reverend Grigor Palakyan, and Zakaria Pztikyan, he left for London, where he met with Malkum, the head of the London Information Diwan. with his secretary A. Safrastyan and members of the Armenian Church's trusteeship. Sahak II Khapayan was the fifth Catholicos, after Stepanos Salmastet, Mikael Sebastati, Hakob Jughayets and Mkrtich Khrimyan Hayrik, who came to Europe to discuss the Armenian issue.

**Վահագն Հարությունյան, պատմական գիտությունների թեկ-
նածու, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դասախոս, ԳԱԱ
Պատմության ինստիտուտի Հայ գաղթօջախների և Սփյուռքի
պատմության բաժնի կրտսեր գիտաշխատող:**

✉ vahag0107@gmail.com

**Ваагн Арутюнян, кандидат исторических наук,
преподаватель факультета Богословии ЕГУ, младший
научный сотрудник отдела истории армянских колоний и
диаспоры Института истории АН.**

✉ vahag0107@gmail.com

Vahagn Harutyunyan, candidate of historical sciences, lecturer of the Faculty of Theology, Junior researcher of the Department of History of Armenian Colonies and Diaspora of the Institute of History Academy of Sciences.

✉ vahag0107@gmail.com:

Էդգար Հովհաննիսյան
Բալինտ Կովաշ

**ՍԻՐԻԱՅԻ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՊԱՏԿԱՆ
ԹԵՄԵՐԻ՝ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆԸ
ԵՒ ԴՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Հիմնաբառեր՝ Հայոց եկեղեցի, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն, Երուսաղեմի հայոց պատրիարքություն, հայկական սփյուռք, Սիրիայի և Լիբանանի երուսաղեմապատկան թեմեր, թեմերի հանձնումը:

Ключевые слова: Армянская церковь, Католикосат Великого Дома Киликийского, Армянский Патриархат Иерусалима, Армянская диаспора, Армянские общины Сирии и Ливана, Епархии Армянского Патриархата Иерусалима в Сирии и Ливане, передача епархий.

Key words: Armenian church, The Catholicosate of the Great House of Cilicia, Armenian Patriarchate of Jerusalem, Armenian Diaspora, Dioceses of Armenian Patriarchate of Jerusalem in Syria and Lebanon, Transfer of Dioceses.

Մուտք

Սիրիայում և Լիբանանում Երուսաղեմի հայոց պատրիարքությանը պատկանող եկեղեցիները, վանքերն ու կալվածքները դարեր շարունակ կարևոր նշանակություն են ունեցել պատրիարքության համար: Վերջիններս հանդիսացել են նաև Հայաստանից և Կիլիկիայից ցամաքային ճանապարհ-

¹ Հարկ ենք համարում նշել, որ Երուսաղեմի հայոց պատրիարքությունը Սիրիայի և Լիբանանի տարածքում թեմերի փոխարեն ուներ հոգևոր տեսչություններ, սակայն հաճախ փաստաթղթերում և մամուլում օգտագործվում է թեմեր բառը, ուստի հոդվածում մենք երբեմն օգտագործում ենք այդ ձևակերպումը:

հով Երուսաղեմ ուխտագնացության մեկնող հայ ուխտավորների համար հանգրվաններ և այդ պատճառով հաճախ կոչվել են «Հոգետուն»։ Բեյրութի, Դամասկոսի և Լաոդիկեի (Լաթաքիա) երուսաղեմապատկան եկեղեցիների ու վանքերի գլուխ կանգնած են եղել Ս. Աթոռի միաբան հանդիսացող հոգևոր տեսուչները։

Ցեղասպանությունից հետո Սիրիայի և Լիբանանի տարածքում էին հաստատվել տասնյակ հազարավոր վերապրածներ, որոնց մեծ մասը Կիլիկիայի և դրա հարակից տարածքների հայության բեկորներն էին։ Վերջիններս ժամանակին գտնվել էին Կիլիկիո կաթողիկոսության հոգևոր իշխանության ներքո։ 1921 թ. Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ Խապայանի Սիսից տարագրվելուց և ժամանակավորապես Հալեպում հաստատվելուց հետո ստեղծվեց յուրահատուկ մի իրավիճակ։ Մի կողմից Սիրիայի և Լիբանանի տարածքի թեմերը գտնվում էին Երուսաղեմի հայոց պատրիարքության ենթակայության ներքո, իսկ մյուս կողմից այդ տարածքներում հաստատված հայության գերակշիռ մասը նախկինում ենթարկվել էին Կիլիկիո կաթողիկոսության հոգևոր տեսչությանը։

Կիլիկիո Աթոռը կորցրել էր նախկինում իրեն պատկանող մոտ երեսուն թեմերը, բացի Բերիո (Հալեպի) թեմից¹։ Նոր պայմաններում Կիլիկիո կաթողիկոսության վերակազմության համար անչափ կարևոր էր նոր թեմերի ձեռք բերման գործընթացը։ Առաջին թեմը, որ անցավ Կիլիկիո կաթողիկոսության ենթակայության տակ 1920-ական թթ. կեսերին դա Կիպրոսի հայոց թեմն էր²։ Սակայն հրատապ խնդիր էր

¹ Տե՛ս Բ. Եղիայեան, Ժամանակակից պատմության Կաթողիկոսություն Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիս, 1975, էջ 280-291։

² Մանուաման տե՛ն Է. Հովհաննիսյան, Կիպրոսի թեմի վերակազմությունը և կիպրահայությունը (1920-1940)։ Պետոս արքեպս. Սարաճյան, Երևան, 2021, 152 էջ։

շարունակում մնալ Սիրիայի և Լիբանանի երուսաղեմապատկան թեմերի պատկանելության հարցի հստակեցումը: 1920-ական թթ. կեսերից կաթողիկոս Սահակ Բ Խապայանը ձեռնամուխ եղավ այդ խնդրի լուծմանը, որն իր հանգուցալուծումն ստացավ 1929 թ.:

Հոգևոր «երկիշխանություն» Սիրիայում և Լիբանանում 1920-ական թթ.: Կիլիկիո Աթոռը տարագրության հետևանքով էականորեն թուլացած էր, գրեթե զրկվել էր նյութական միջոցներից, որը խիստ դժվարություններ էր ստեղծում այդ տարածքներում հաստատված հայության հոգևոր կարիքները հոգալու, անգամ սեփական գոյությունը պահպանելու առումով: Կիլիկիո կաթողիկոսությունը 1924 թ. դրությամբ «...կաթողիկոսին մօտ և այլուր» ուներ ընդամենը ինը միաբան¹: Ստեղծված իրավիճակը որոշ շրջանակների մոտ առաջացրել էր հոռետեսական կանխատեսումներ կաթողիկոսության հետագա գոյության հարցում: Սակայն Կիլիկիո Աթոռի երկարամյա և փորձառու գահակալը՝ Սահակ Բ-ն, այլ ծրագրեր ուներ՝ Կիլիկիո Աթոռը նոր պայմաններում ամրապնդելու, ավելին՝ գաղթական հայության ազգային կյանքի գլխավոր առանցքը դառնալու առումով:

Ուստի, անհրաժեշտ էր մի քանի կարևոր ձեռնարկների իրականացումը, որոնց թվում Սիրիայի և Լիբանանի տարածքում ազգային-եկեղեցական կյանքում առաջացած երկվության վերացումն էր: Փաստորեն, Կիլիկիո կաթողիկոսի՝ իր հոտի հետ, Սիրիայի և Լիբանանի տարածքում հայտնվելը ինչ-որ առումով հոգևոր երկիշխանություն էր ստեղծել: Մի կողմից այդ տարածքները գտնվում էին Երուսաղեմի հայոց պատրիարքության հոգևոր վարչական իշխանության ներքո,

¹ Տե՛ս «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», Գրք Դ, Տ.Տ. Սահակ Բ Խապայան. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ (1891-1940թթ.), Երևան, 1997, էջ 463:

մյուս կողմից այդտեղ հաստատված հայության գերակշխող մասը նախկինում՝ մինչ տեղահանությունը, գտնվել էր Կիլիկիո կաթողիկոսության հոգևոր իշխանության ներքո: Վերջիններս տեղահանությունից հետո էլ նախընտրում էին Կիլիկիո կաթողիկոսի հոգևոր առաջնորդությունը:

Ստեղծված հոգևոր իշխանության երկվությունը կամ «երկիշխանությունը» հղի էր բազմաթիվ վտանգներով, որը կարող էր հերթական լարվածությունը բերել Հայոց եկեղեցու ներսում: Նույն տարածքում երկու նվիրապետական աթոռների ներկայացվածությունը կարող էր որոշակի մրցակցություն առաջացնել երկու աթոռների միջև՝ դրանով ավելացնելով այն խնդիրների թիվը, որոնց առջև կանգնած էր տարագիր հայությունը. «Այս կերպով երևան կուգար ժողովրդեան հոգևոր մատակարարութեան գործին մէջ ակամայ մրցակցութեան եւ երկւութեան պարագայ մը»¹, -գրում էր Սահակ Բ-ն Երուսաղեմի հայոց պատրիարք Նզդիշե արք. Դուրյանին խնդրի վերաբերյալ: Ստեղծված իրավիճակը ենթադրում էր խելամիտ մոտեցում՝ խուսափելու համար նոր խնդիրներից:

Մինչ կիլիկիահայության գաղթը երուսաղեմապատկան երեք թեմերի մեջ առաքելական հայերի թիվը մեծ չէր՝ մոտ 1500-2000 ծուխ²: Այդ հանգամանքն է Սահակ Բ-ն մատնանշում 1925 թ. Կիպրոսի թեմի առաջնորդ Պետրոս արք. Սարաճյանին գրած նամակում. «Դուք Պեյրութ տեսչութիւն ըրած էք, քանի՞ տուն ծուխ ունէիք, մենք ալ 1881ին Դամասկոս մնացած ենք, ուր հազիւ 25 տուն ծուխ ունէր Ս. Սարգիս

¹ Միսիոյ երուսաղեմապատկան թեմերուն Կիլիկիոյ կաթողիկոսութեան փոխանցումը, Երուսաղեմ, 1930, էջ 5:

² Տե՛ս Թղթակցութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ երեւ կաթողիկոսներու եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Խորէն Ա. Մորադբէկեանի, Անթիլիաս, 2002, էջ 39, տե՛ս նաև Վաւերագրեր..., Գրք Դ, էջ 449, 453, 486:

եկեղեցին: Այսօր միայն Պէյրութ 25 հազար եւ Դամասկոս 13 հազար հայեր կան»¹:

Նրուսահեմի պատրիարքության միաբան Բաբկեն եպ. Կյուէսեքյանը 1923 թ. գարնանը այցելում է Սիրիա և Լիբանան՝ տեղում ծանոթանալու հայ գաղթականության օրհասական վիճակին²: Վերջինս, սեփական նախաձեռնությամբ, մի տեղեկագրեր է պատրաստում, որտեղ Նդիշե պատրիարքին, Ազգային պատվիրակությանը և հայ մեծահարուստներին է ներկայացնում գաղթականների վիճակը³՝ ակնկալելով ստանալ վերջիններիս աջակցությունը, որպեսզի. «...այս գաղթականութիւնը չկորսուի եւ չկորսնցնէ իր ազգային նկարագիրը մեր յոռետեսութեան եւ անհոգութեան երեսէն»⁴: Իր այս այցից հետո Բաբկեն սրբազանը Սահակ Բ-ին գրած նամակներից մեկում, անդրադառնալով առաջնային անելիքներին, գրում է. «Այս ժողովուրդը պէտք ունի հոգեւոր մխիթարութեան եւ ազգային գործոց վարչական կանոնադրութեան»՝ միաժամանակ առաջարկելով «երեք գլխաւոր գաղութային կենդրոններու մէջ՝ Պերութ, Հալէպ, Շամ» բարձրաստիճան հոգևորականների հրավիրել հոգևոր տեսչության⁵:

¹ «Թղթակցութիւն Սահակ Բ. կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարանեանի», «Կիլիկիոյ կաթողիկոսութեան արխիւներ», թիւ 4, խմբագիր՝ Վարուժան արքեպիսկոպոս, Նիկոսիա-Կիպրոս, «Հայկական մատենաշար Գալուստ Կիպլենկեան հիմնարկութեան», 2010, էջ 138:

² Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. եւ Բաբգէն Ա. Կաթողիկոսներու», «Կիլիկիոյ կաթողիկոսութեան արխիւներ», թիւ 1, Անթիլիաս, 1999, էջ 23-26:

³ Տե՛ս «Տեղեկագիր Սուրիոյ և Պաղեստինի հայ գաղթականութեան մասին», պատրաստուած ընդ հսկողութեամբ Գեորգ Բաբգէն եպիս. Կիլեսեւեան, Նրուսահեմ, 1923, Փարիզի Նուբարյան գրադարան, թղթապանակ՝ *Refugies (Prosche-Orient.)*, *apres le 1eu g. m.*, էջ 1-13:

⁴ «Թղթակցութիւն...», թիւ 1, էջ 26:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 24:

Բաբկեն սրբազանը հասկանում էր, որ նման քայլի զնալու դեպքում հնարավոր է Երուսաղեմի հայոց պատրիարքության հետ առաջանան որոշ թյուրիմացություններ։ Սակայն վերջինս միաժամանակ կարծում էր, որ գործնականում խնդիրը հնարավոր է հարթել, եթե «...առժամանակեայ կարգադրութիւն մը ընել այս մասին՝ հասկացողութեան մը գալով Երուսաղէմի հետ»¹։ Փաստորեն, Բաբկեն սրբազանը, լինելով Երուսաղեմի հայոց միաբանության անդամ և տեղում ծանոթանալով իրավիճակին, ստեղծված պարագաներում որպես արդյունավետ լուծում հանգեց թեմերի փոխանցման մտքին։ «Եթէ լքուի այս գաղթական հայութիւնը իր բախտին եւ գոնէ հոգեւորապէս առարկայ չըլլայ մասնաւոր հոգածութեան, պէտք է գիտնալ, որ այս ութը տարուան թշուառութեանց հետեւանքները ծանր պիտի ըլլան եւ այս ժողովուրդը բոլորովին պիտի կորսուի»², - գրում է Բաբկեն սրբազանը։

Այն, որ Սիրիայի և Լիբանանի հայ բնակչության հոգևոր իշխանության կազմակերպմամբ Կիլիկիո Աթոռը զբաղվում էր մինչ թեմերի պաշտոնական հանձնումը, վկայում է 1924 թ. օգոստոսին Սահակ Բ-ի նամակը հղված Ֆրանսիական բարձր կոմիսար Վեյկանին, որտեղ կաթողիկոսը վերջինիս է ներկայացնում Սիրիայում, Լիբանանում և Կիպրոսում կենտրոնացած հայերի վիճակագրական տվյալներ, ինչպես նաև, իր կատարած «թեմերու վարչական կենրոնացումները» և տեղական առաջնորդների անունները ըստ հինգ թեմերի բնակավայրերի, միաժամանակ խնդրելով. «...Նորին վսեմութենէն որ հաճի բոլոր իշխանութեանց յանձնարարել իր կողմէ նշանակուած այս պատասխանատու եկեղեցականներուն

¹ Նույն տեղում, էջ 24:

² Նույն տեղում, էջ 26:

պարտականութեանց կատարման դիւրութիւններ ընծայելու»¹։ Այս պարագայում չի կարելի չհամաձայնել Բ. Եղիայանի այն պնդման հետ, թե, «...գործնականապէս ժողովուրդը տեղաւորուծ էր ու թեմական գործերը կը կառավարուէին Սահակ կաթողիկոսի հոգածութեան ներքեւ»²։

Փաստորեն, մինչ երուսաղեմապատկան թեմերի պաշտոնական հանձնումը Կիլիկիո կաթողիկոսությունը փաստացի սկսել էր դրանք իրեն ենթարկելու և գաղթականների հոգևոր կարիքները հոգալու գործընթացը։ Սահակ վեհափառը շուտով ձեռնամուխ է լինում թեմերի պաշտոնական հանձնումը իրականություն դարձնելու գործին։ Դրանով նախ կվերացվեր հոգևոր «երկիշխանությունը», հետո նաև Կիլիկիո Աթոռը կարևոր հենարան կստանար տարածաշրջանում ամրապնդվելու և իր գործառույթներն արդյունավետ իրականացնելու հարցում։

Ջանքեր երուսաղեմապատկան թեմերը Կիլիկիո կաթողիկոսությանը փոխանցելու ուղղությամբ։ Երուսաղեմապատկան թեմերի փոխանցման ուղղությամբ առաջին պաշտոնական քայն արվում է 1924 թ., երբ մարտի 14-ին Սահակ Բ-ն դիմում է պատրիարք Եղիշե արք. 'Դուրյանին՝ խնդրելով «անգնահատելի ծառայութիւն» մատուցել և թեմերը հանձնել Կիլիկիո կաթողիկոսությանը. «Ժողովուրդը թողուլ ներկայ անկազմակերպ վիճակի մէջ, ինչպէս ակնարկեցինք, Եկեղեցին կործանումի և ժողովուրդը տեղական քրիստոնեայ տարրին հետ ձուլումի պիտի առաջնորդէ»,- ասված էր նամակում։ Նույն նամակում կաթողիկոսն անդրադառնում է «առաջ գալիք խաչաձեւումներին ու բարդութիւններին, եթե Սիրիայում և Լիբանանում միաժամանակ շարունակեին գոր-

¹ Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 282։

² Նույն տեղում, էջ 282։

ծել Երուսաղեմի պատրիարքության տեսուչ-փոխանորդները: «Մէկ հօտին երկու հովիւ եւ մէկ Եկեղեցւոյն երկու առաջնորդ ունենալը...»¹, այլ խոսքով, հոգևոր «երկիշխանութեան» գոյութիւնը, Սահակ վեհափառը, իրավացիորեն, վտանգավոր է համարում Հայոց Եկեղեցու համար: Վերջինս շեշտում է, որ Կիլիկիո կաթողիկոսութիւնը ակնկալում է միայն «...եկեղեցիները և անոնց յարակից ու վարդապետաց յատկացեալ բնակավայրերը»², ոչ մի հավակնութիւն չունենալով Երուսաղեմին պատկանող կալվածքների և դրանց եկամուտների նկատմամբ: Սահակ կաթողիկոսը չէր թաքցնում, որ հետագայում, երուսաղեմապատկան եկեղեցիները ձեռք բերելուց հետո, նպատակ ուներ. «...Հալէպի և Անտիոքի Կիլիկիեան թեմերուն վրայ երկու նոր թեմեր և առաջնորդութիւններ աւելցնել...»³:

Երուսաղեմի պատրիարքութիւնն սկզբում դեմ էր թեմերի հանձնմանը: 1924 թ. Երուսաղեմից Մայր Աթոռ կաթողիկոսի տեղակալ Բագրատ արք. Վարդազարյանին հղված մի տեղեկագրում նշվում է, որ թեև Սահակ Բ-ն ցանկանում է Սիրիայի և Լիբանանի իրենց թեմերը, քանի որ ժողովուրդը իր նախկին հօտի ներկայացուցիչներն են, սակայն իրենք դեմ են թեմերի փոխանցմանը՝ պատճառաբանելով, որ եկեղեցիները «անխտիր» բաց են բոլորի առջև, իսկ այդտեղ գտնվող վանքերը Երուսաղեմի սեփականութիւնն են⁴:

Նույն տեղեկագրում նշվում էր, որ Սիրիայում որևէ վիճակ՝ այսինքն թեմ, գոյութիւն չունի և այնտեղ գտնվող հոգևորականները՝ վարդապետներ և քահանաներ, Երուսաղեմի հոգևոր տեսչութեան ներքո մատակարարում են ժողովրդի

¹ Նույն տեղում, էջ 295:

² «Սիւրիոյ երուսաղեմապատկան թեմերուն...», էջ 10:

³ Նույն տեղում, էջ 9:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3783, ք. 4:

հոգևոր պետքերը¹։ Նամակում նշվում էր նաև, որ Հալեպ քաղաքում, որտեղ կար եկեղեցի, դպրոց, որբանոց, իբրև կաթողիկոսական փոխանորդ պաշտոնավարում էր արմաշական Փառեն ծ.վարդապետ Մելքոնյանը²։ Հայտնի է, որ Հալեպում միաժամանակ գոյություն ունեւր Կիլիկիո կաթողիկոսութանը պատկանող թեմ։

Երուսաղեմապատկան թեմերը իր ենթակայության տակ փոխանցելու ցանկությունը ցույց է տալիս, որ Կիլիկիո կաթողիկոսությունը, ի դեմս իր պետ Սահակ Բ կաթողիոսի, արդեն որոշակիորեն կորցրել էր Կիլիկիա վերադարձի հույսը և այլևս Կիլիկիո Աթոռի ծրագրերը կապված էին Սփյուռքի հետ, մասնավորապես Սիրիայում և Լիբանանում հաստատված և սփյուռքացման ուղին բռնած հարյուր հազարից ավելի գաղթական հայության հետ։ Ասվածի ապացույցն են 1924 թ. մարտի 14-ին Սահակ Բ-ի Եղիշե պարտորարքին գրած նույն նամակի հետևյալ տողերը. «Եթէ յուսոյ բեկոր մի ունենայինք վերադարձի, առանց որևէ խնդրանքի կը մնայինք երկար տարիներ ներկայ վիճակով, ինչպէս մնացինք շուրջ երեք տարիներ, սակայն առայժմ յոյսերը խուսափով երազներու պէս կը ցնդին...»³։ Վերադարձի մարող հույսն էր ստիպում ալեհեր վեհափառին երիտասարդական ավյունով ձեռնամուխ լինելու ցիրուցան եղած գաղթահայության կազմակերպման գործին՝ «...Լիբանանեան և Սուրիական բոլոր հողամասին վրայ համախոնուած հարիւր հազարաւոր հայութիւնը օժտել վերջապէս եկեղեցական ու վարչական միօրինակ ու միաձոյլ կազմակերպութեամբ մը Կիլիկիոյ Կաթողի-

¹ Տե՛ս, նույն տեղում։

² Տե՛ս նույն տեղում։

³ «Սիրիոյ երուսաղեմապատկան թեմերուն...», էջ 11։

կոսին՝ իբրև իրենց Գերագոյն Պետին, վերին նախագահութեան և ուղղակի անմիջական վերահսկողութեան ներքև»¹։

Սահակ կաթողիկոսին ուղարկված պատասխան նամակում Նղիշե սրբազանը մերժում է վերջինիս առաջարկը, պատճառաբանելով, թե. «...այդպիսի տնօրէնութիւնը մը վեր կը մնայ մեր իրաւասութենէն, ցորչափ Երուսաղէմի Վանքն իր բոլոր իրաւունքներովն ու սեպհականութիւններովը Մեզի աւանդող Ազգին՝ Կենդրոնի՝ կամքը չէ կարելի հարցնել ներկայ ծանօթ պարագաներու բերմամբ»²։ Այս, թերևս, անհասկանալի պատճառաբանությամբ մերժման փոխարեն Նղիշե սրբազանը առաջարկում է «ժամանակաւոր (ընդգծումը բնագրային է) կարգադրութիւն մը», որը ենթադրում էր Սիրիայում և Լիբանանում Երուսաղէմի Աթոռին ենթակա հոգևոր տեսուչներին Կիլիկիո կաթողիկոսի կողմից ճանաչել որպէս առաջնորդական փոխանորդներ³։ Դրանով, փաստորեն, վերջիններիս համար ենթադրվում էր ստեղծել կրկնակի ենթակայության հանգամանք՝ առաջացնելով ավելի խառնակ իրավիճակ։ Ուստի Սահակ Բ-ն մերժում է այդ առաջարկը, հետևյալ հիմնավորմամբ.

«Ա. Առաջնորդական խնդրոյ թնճուկ մը չստեղծելու։

Բ. Առաջնորդական փոխանորդներու դէմ ժողովրդական դժգոհութեան պարագային թէ՛ զինքը և թէ՛ Երուսաղէմի պարտրիարքութիւնը աղմուկներու առջև չդնելու։

¹ Նույն տեղում, էջ 8։

² Նույն տեղում, էջ 16։

³ 1924 թ. Երուսաղէմի պատրիարք Դուսյան սրբազանը Սահակ կաթողիկոսին «հանութիւն կը յայտնէր» որ Բէշրոսի և Դամասկոսի տեսուչներին վերջինս ճանաչէր որպէս առաջնորդական փոխանորդներ, սակայն արդեն մեկ տարի անց Երուսաղէմից հրահանգվում է տեսուչներին «չընդունիլ Առաջնորդական փոխանորդ» տիտղոսը, տե՛ս Թղթակցութիւն..., թիւ 4, էջ 133։

Գ. Կիլիկիոյ պատմական Աթոռի ներկայ միաբանները ապրուստի միջոցներէ չզրկելու համար»¹։

Սահակ կաթողիկոսը չի սահամանափակվում միայն նամակներով և գրություններով հարցը բարձրացնել։ Շուտով երուսաղեմապատկան թեմերի հանձնման անհրաժեշտությունը «բանիւ բերանոյ» ներկայացնելու համար Երուսաղեմ է ուղարկում Անդրանիկ Կենճեանին²։ Սիրիայի և Լիբանանի հայության շրջանում միասնական ազգային-եկեղեցական վարչակարգի հաստատման հապաղումը հղի էր նաև այլ վտանգներով։ Սահակ Բ-ն երուսաղեմապատկան թեմերի փոխանցումը փորձում էր հիմնավորել նաև աղանդավորներից և այլ հարանվանական ուղղություններից Հայոց Եկեղեցին ապշտպանելու անհրաժեշտությամբ³, որի համար կարիք կար ավելի ամրապնդել Կիլիկիո կաթողիկոսության դիրքերը։ «Ժողովուրդը թողուլ ներկայ անկազմակերպ վիճակին մէջ, ինչպէս ակնարկեցի, Եկեղեցին կործանումի եւ ժողովուրդը տեղական քրիստոնեայ տարրին հետ ձուլումի պիտի առաջնորդէ»⁴, - գրում է այդ մասին կաթողիկոսը։

Սահակ կաթողիկոսը Կիլիկիո կաթողիկոսության վերակազմության և վերջինիս հոգևոր իշխանության շրջանակի հարցը պարբերաբար փորձում է բարձրացնել նաև ազգային-հասարակական տարբեր շրջանակների առջև⁵՝ հիմնականում ստանալով դրական արձագանքներ։ Վերջինս թեմերի փոխանցման հարցը փորձում էր հիմնավորել նաև սփյուռքի հայության և ազգային մամուլի⁶ խնդրի նկատ-

¹ «Սիրիոյ երուսաղէմապատկան թեմերուն...», էջ 23։

² Տե՛ս նույն տեղում, էջ 9։

³ Տե՛ս Բ. Եղիայեան, նշվ. աշխ., էջ 288-289։

⁴ «Սիրիոյ երուսաղէմապատկան թեմերուն...», էջ 8-9։

⁵ Տե՛ս «Վսվերագրեր...», Գիրք Դ, էջ 448-449, 452-453, 464-465։

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 450, 458-460։

մամբ դրական վերաբերմունքով: Մասնավորապես հարցին միջամտում է Ազգային պատվիրակության նախագահ Գ. Նորատունկյանը: Վերջինս այդ հարցով Փարիզից նամակով դիմում է Եղիշե պատրիարքին, ընդգծելով երուսաղեմապատկան թեմերի փոխանցման կարևորությունը, քանի, որ. «...ազգային օգուտի տեսակետով եւս անհրաժեշտ դարձած է Սուրիոյ հայ գաղութինն կազմակերպութիւնը որուն կորիզը, ներկայ պայմանաց մէջ ...ուրիշ բան չի կրնար ըլլալ, այլ միայն Սոյ Կաթողիկոսական Աթոռին վերահաստատումը Սուրիոյ կենդրոնին, այն է Պէյրութի մէջ...»¹: Ազգային-հասարակական տարբեր շրջանակներ դիմում-նամակներով երուսաղեմապատկան թեմերի փոխանցման հարցը բարձրացնում էին նաև Ամենայն Հայոց կաթողիկոսի առջև²:

Եղիշե պատրիարքի համար պատրաստված մի տեղեկագրում, որը հեղինակել էր թեմերի հանձնման հարցում պատրիարքի կողմից լիազոր ներկայացուցիչ նշանակված Մաթևոս եպս. Գայրգճյանը, հատուկ ընդգծվում էր Կիլիկիո կաթողիկոսության վճռականությունը ստեղծված պայմաններին հարմարվելու և իր առաքելությունը շարունակելու մասով. «Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը ...կուզէ, հայկական եկեղեցական հաստատութեան գովելի նախանձախնդրութեամբ, պահել իր նուիրապետութիւնն ու աւանդութիւնները, և իր հոգևոր իշխանութիւնը՝ իր ժողովուրդին վրայ»³, -ասված է տեղեկագրում: Կաթողիկոսությունը անում էր ամենինչ փոխելու իր, այսպես ասած, «հյուրի հանգամանքը»:

Շուտով համառ ջանքերը տալիս են իրենց արդյունքը: Այդ առումով հատկապես կարևոր էր Կիլիկիո կաթողիկո-

¹ Նույն տեղում, էջ 459:

² Տե՛ս նույն տեղում, էջ 494:

³ «Սխիոյ երուսաղեմապատկան թեմերում...», էջ 5:

սության կարգավիճակի հստակեցումը: 1924 թ. մարտի 18-ին Սահակ կաթողիկոսը, ի պատասխան իր օրեր առաջ կատարած հայցմանը, ստանում է Սիրիայում ֆրանսիական բարձր կոմիսար գեներալ Վեյկանի գրությունը, որով Կիլիկիո կաթողիկոսությունը ֆրանսիական իշխանությունների կողմից պաշտոնապես ճանաչվում է Սիրիայի և Լիբանանի հայ բնակչության հոգևոր պետ¹: Սրան հաջորդում է 1924 թ. օգոստոսի 30-ի և 1925 թվականի հունվարի 19-ի հրովարտակները, որով ֆրանսիական բարձր կոմիսարությունը Սիրիայում և Լիբանանում բնակվող հայությանը տալիս է հպատակության իրավունք²: Այս ամենի արդյունքում Կիլիկիո կաթողիկոսությունը ճանաչվում է որպես «...տեղական հպատակութիւնը վայելող կազմակերպութիւն մը», այն պարագայում, երբ Երուսաղեմի Աթոռին ենթակա պատրիարքական փոխանորդները շարունակում էին պահպանել իրենց «օտարականի բնոյթը»³: Այս հանգամանքն ավելի էր բարդացնում ստեղծված կացությունը և միաժամանակ հաստատում Կիլիկիո կաթողիկոսության այն տեսակետը, որ «...քաղաքականապէս աւելի օգտակար կլլար եթէ Սիւրահայերուն հոգևոր մատակարարութիւնը լրացուէր տեղական կառավարութեան հպատակ հայ եկեղեցական կազմակերպութեան մը միջոցաւ»⁴:

Սրանով, փաստորեն, Ֆրանսիայի մանդատային ենթակայության տարածքներում ազգային վարչական գործերի կառավարումը պաշտոնապես տրվում է Կիլիկիո կաթողիկոսությանը: Հպատակության մասին հրամանագրով էլ Երուսաղեմին ենթակա տեսուչները, որոնք գործում էին Սիրիայի

¹ Տե՛ս Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 297-298:

² Տե՛ս նույն տեղում, էջ 298:

³ «Սիւրիոյ երուսաղէմապատկան թեմերուն...», էջ 25:

⁴ Նույն տեղում, էջ 25:

և Լիբանանի տարածքում, ավտոմատ դառնում էին օտարահպատակ: Այս հանգամանքները խիստ կարևոր նշանակություն է ունենում երուսաղեմապատկան թեմերի հանձնման հարցում:

Այս ամենից հետո էլ «երկութեան» վիճակը շարունակվեց ևս մի քանի տարի: 1925 թ. փետրվարին Սահակ Բ-ի հետ ստեղծված հարցերը քննարկելու համար Եղիշե պատրիարքի կողմից Բեյրութ է ուղարկվում պատրիարքական փոխանորդ Մկրտիչ եպս. Աղավնունին¹: Վերջինս, Բ. Եղիայանի բնորոշմամբ, իր վերադարձից հետո «վերապահ» տեղեկագիր է ներկայացնում պատրիարքին²:

1925 թ. ամռանը Երուսաղեմում Եղիշե պատրիարքի նախաձեռնությամբ և Պոլսո նախկին Զավեն պատրիարքի և Եգիպտոսի թեմի առաջնորդ Թորգոմ սրբազանի մասնակցությամբ տեղի է ունենում մի խորհրդակցություն, որտեղ քննարկվում է նաև Բեյրութի և Դամասկոսի վրա Երուսաղեմի հոգևոր իրավասության հարցը: Զավեն սրբազանը առաջարկում է Բեյրութը և Դամասկոսը հանձնել Կիլիկիո կաթողիկոսությանը, իսկ Կիպրոսը միացնել Երուսաղեմին³: Այս առաջարկը հիմնավորվում էր նրանով, որ Կիպրոսը, ինչպես որ Երուսաղեմը, այդ շրջանում գտնվում էին անգլիական ենթակայության ներքո, իսկ Սիրիան և Լիբանանը Ֆրանսիական: Թեև սույն առաջարկին կողմ է լինում Դուրյան պատրիարքը, սակայն դեմ են լինում Երուսաղեմի միաբանության անդամները և վերջիվերջո որևէ որոշում չի կայացվում: Ընդհանրապես Դուրյան պատրիարքը դրականորեն էր տրամադրված թեմերի հանձնման հարցին⁴: Եղիշե սրբազանի

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 23-24:

² Տե՛ս **Բ. Եղիայեան**, նշվ. աշխ., էջ 298:

³ Տե՛ս «Թղթակցութիւն...», թիւ 4, էջ 134-137

⁴ Տե՛ս «Թղթակցութիւն...», թիւ 1, էջ 175:

Կիլիկիո Աթոռի նկատմամբ ունեցած դրական վերաբերմունքի մասին է վկայում նաև վերջինիս կողմից Սահակ Բ-ին 1924 թ. մարտին գրած նամակը, որտեղ վերջինիս հորդորում է որպես Կիլիկիո կաթողիկոսության նստավայր ընտրել Հալեպը և ոչ թե Բեյրութը: Վերջինս խորհուրդ է տալիս նաև ջանքեր գործադրել հետագայում Կիլիկիո կաթողիկոսի ընտրության համապատասխան կարգ մշակել և որպես «Երկրորդը էջմիածնի Ընդհանուր Հյարապետութեան» խուսափել ընտրությունները կազմակերպել «Սուրիական հայութեան անձուկ շրջանակին մէջ», այլ դրանց մասնակից դարձնել ավելի մեծ շրջանակ: Ուստի վերջինս հորդորում էր այդ կարգը սահմանել հիմա՝ խորհրդակցելով մյուս նվիրապետական աթոռների և առաջնորդությունների հետ¹:

Մեր կարծիքով, թեմերի փոխանցման հարցում էական նշանակություն է ունենում նաև 1928 թ. Սահակ կաթողիկոսի որոշումը Երուսաղեմի միաբանության անդամ Բաբեկեն եպս. Կյուլենսերյանին Կիլիկիո աթոռակից կաթողիկոս ընտրելու վերաբերյալ: Եղիայանի դիպուկ բնորոշմամբ. «Սահակ կաթողիկոս այլեւս իրեն զօրավիզ կարեւոր ներկայացուցիչ մը ունէր Երուսաղէմի Պատրիարքարանին մէջ»²:

1928 թ. փետրվարի 29-ին Հալեպում Սահակ Բ հրապարակում է իր հայտնի «Կտակի»³, որը կաթողիկոսի մտորումներն էր Կիլիկիո կաթողիկոսության հետագա ճակատագրի վերաբերյալ՝ ուղղված հայության բոլոր շրջանակներին: «Կտակի» հրապարակումը մեծ արձագանք գտավ հայության շրջանում և շատերը իրենց տեսակետներում պնդում էին Կիլիկիո կաթողիկոսության պահպանման և ամրապնդման հա-

¹ Տե՛ս «Սխրիոյ երուսաղէմապատկան քեմէրուն...», էջ 19-22:

² Բ. Եղիայեան, նշվ. աշխ., էջ 298:

³ Տե՛ս «Սահակ Բ. Կաթողիկոս Կիլիկիոյ», «Կտակ», Հալեպ, 1928:

մազգային անհրաժեշտությունը: Այստեղ ևս կաթողիկոսն անդրադառնում է Սիրիա-Լիբանանի երուսաղեմապատկան թեմերի հարցին¹: Նույն թվականի մարտին Բաբկեն եպս. Կյուլեսերյանը, ի պատասխան Սահակ Բ «Կտակի» վերաբերյալ նամակի, Կիլիկիո կաթողիկոսության պահպանման համար երեք խնդիր է նշում, որոնցից երկրորդը Սիրիայում և Լիբանանում Երուսաղեմին ենթակա թեմերի «իր իսկ հաճութեամբ» Կիլիկիո կաթողիկոսության հանձնումն էր, որը ըստ Բաբկեն սրբազանի «...մշակելի եւ իրագործելի ծրագիր մըն է»²: Սա ցույց է տալիս, որ Կիլիկիո կաթողիկոսության պահպանման հարցով մտահոգ էին ոչ միայն Սահակ Բ և Կիլիկիո կաթողիկոսության սակավաթիվ հոգևորականները, այլև Հայոց Եկեղեցու շատ բարձրաստիճան հոգևորականներ: Թեև պետք է նշել, որ Բաբկեն սրբազանը հարցի արդյունավետ լուծման տարբերակներից մեկը տեսնում էր նաև Երուսաղեմի պատրիարքության և Կիլիկիո կաթողիկոսության միավորման մեջ, որի արդյունքում. «...միացեալ Աթոռներուն իրաւասութիւնը տարածուի գոնէ Նեղոսէն մինչեւ Տիգրիս տարածուող երկիրներու Հայոց վրայ», այսինքն այն երկրների վրայ, որոնք. «անգլիական ազդեցութեան շրջանակին մէջ են»³: Այստեղ միայն Սիրիան ու Լիբանան էին, որ գտնվում էին ֆրանսիական ազդեցության ներքո, որի խնդիրն էլ, ըստ Բաբկեն սրբազանի, հնարավոր էր լուծել ֆրանսիացիների հետ համաձայնության արդյունքում, և նա ենթադրում էր, որ ֆրանսիացիները դեմ չեն լինի դրան: Այնուամենայնիվ նշենք, որ Բաբկեն սրբազանը աստիճանաբար հանգում է թեմերի հանձնման մտքին: Արդեն 1928 թ. օգոս-

¹ «Թղթակցութիւն...», թիւ 1, էջ 325-326:

² Նույն տեղում, էջ 104:

³ Նույն տեղում, էջ 103:

տոսին Բաբկեն սրբազանը իր հերթական նամակներից մեկում Սահակ Բ-ին կրկին ներկայացնում է իր դրական դիրքորոշումը Կիլիկիո Աթոռի վերակազմության և երուսաղեմապատկան թեմերի հանձնման վերաբերյալ՝ նշելով, որ հարցը պետք է լուծվի. «...երկու Աթոռներու միջեւ ուղղակի բանակցութեամբ»¹:

Սահակ կաթողիկոսը թեմերի հանձնման հարցով Եղիշե պատրիարքին դիմում է նաև 1928 թ. հուլիսի 23-ին՝ վերջինիս հրավիրելով այցելել Սիրիա և Լիբանան «միասին խորհրդակցելու»²: Կաթողիկոսը իր խնդրանքը հիմնավորում էր Սիրիայում և Լիբանանում կաթողիկոսների և բողոքականների աշխուժացմամբ: Վերջինիս մտահոգում է հատկապես այն պարագան, որ հայ կաթողիկոսները պատրաստվում են իրենց Աթոռը Պոլսից տեղափոխել Լիբանան³:

Դատելով Բաբկեն սրբազանի Սահակ Բ-ին 1928 թ. հոկտեմբերին գրած մի նամակից երուսաղեմապատկան թեմերի Կիլիկիո Աթոռին փոխանցման հարցի շուրջ ներքին համաձայնություն կայացել էր արդեն 1928 թ. վերջերին, անգամ այդ մասին պատրիարքը նախնական հանձնարարական էր տվել Սիրիայում և Լիբանանում գտնվող իր տեսուչներին⁴: Իսկ մեկ այլ նամակում՝ գրված մեկ ամիս անց, Բաբկեն սրբազանը կաթողիկոսին է փոխանցում պատրիարքի հետևյալ խոսքերը. «Ատիկա լուծուած եւ լմնցած խնդիր է»,

¹ Նույն տեղում, էջ 128:

² Բ. Եղիայեան, նշ. աշխ., էջ 298:

³ 1931 թ. Հայ Կաթողիկե եկեղեցու կենտրոնը Պոլսից տեղափոխվում է Լիբանանից ոչ հեռու գտնվող Զմմառ, որը մինչ օրս հանդիսանում է կաթողիկոս-պատրիարքի նստավայրը:

⁴ Տե՛ս «Թղթակցութիւն...», քիւ 1, էջ 134:

իր կողմից ավելացնելով. «Ս. Պատրիարքը շատ բարեացակամ է եւ ասիկա մեծապէս քաջալերական է մեզի համար»¹։

Թեմերի փոխանցմանն հարցը չէր կարող լուծում ստանալ առանց Մայր Աթոռի դրական դիրքորոշման։ Սահակ կաթողիկոսը 1926 թ. մարտի 16-ին այդ հարցով դիմում է նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցին։ Թեմերի փոխանցման նպատակահարմարության համար կաթողիկոսը հերթական անգամ ակնարկում է այդ տարածքներում հաստատված հայության «մեծամասնութեամբ կիլիկեցի» լինելը և տեղի ֆրանսիական իշխանությունների կողմից Կիլիկիո կաթողիկոսության հոգևոր իշխանության ճանաչումը Սիրիայի և Լիբանանի հայության շրջանում։ Սահակ Բ նամակում ակնարկում է, որ իր խնդրանքին հակառակ երուսաղեմի պատրիարքությունը Սիրիայի և Լիբանանի իր տեսուչներին պատրիարքական փոխանորդի կարգավիճակ է տվել։ Վերջինս նշում է նաև, որ թեմերի փոխանցմանը ավելի շատ ընդդիմանում է ոչ թե պատրիարքը, այլ որոշ միաբաններ²։

Նույն հարցով Սահակ Բ 1928 թ. մայիսին գրում է նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Խորեն արք. Մուրադբեկյանին. «Մեր հրատարակած «Կտակ»-ի մասին կարելուր ազգայիններ խորհրդակցական ժողով գումարելով իբրեւ լաւագոյն կարգադրութիւն յարմար դատած են, հաւանութեամբ Ընդհանրական Հայրապետին, Դամասկոսի, Պէյրութի եւ Լաւողիկէի վիճակները, որ ֆրանսական հովանաւորութեան տակ կը գտնուին, Կիլիկիոյ կաթողիկոսութեան յատկացնել, իսկ անգլիական պաշտպանութեան տակ գտնուող Միջագետքի, Կիպրոսի եւ Եգիպտոսի թեմերը երու-

¹ Նույն տեղում, էջ 146։

² Տե՛ս Բ. Եղիայեան, նշ. աշխ., էջ 295-296։

սաղէմի Աթոռոյն իրաւասութեան յանձնել»¹: Մեջբերումից երևում է, որ Կիլիկիո Աթոռը անգամ պատրաստ էր Երուսաղեմին զիջել իր ենթակայութեան տակ անցած Կիպրոսի թեմը՝ այդպիսով թեմերի բաժանման հիմքում ընդունելով տվյալ տարածքի մանդատային պատկանելութեան՝ անգլիական կամ ֆրանսիական, գործոնը:

Մի քանի ամիս տևած քննարկումներից հետո Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե թեմերի փոխանցման հարցով 1928 թ. դեկտեմբերի 25-ին դիմում է Երուսաղեմի պատրիարքին՝ հույս հայտնելով, որ «խնդիրը քննուի լայն սկզբունքային տեսակէտով»², ակնարկելով նաև, որ վերոնշյալ խնդիրների դրական լուծումը «...կը լինէր իր կամքի արտայայտութիւն»³:

Այսպիսով, Կիլիկիո ալեգարդ հայրապետ Սահակ Բ հսկայական ջանքեր էր թափում Կիլիկիո կաթողիկոսութեան վերակազմութեան ուղղութեամբ, որի արդյունավետութեան համար կարևոր խնդիր էր հանդիսանում Սիրիայի և Լիբանանի երուսաղեմապատկան թեմերի փոխանցումը Կիլիկիո կաթողիկոսութեանը:

Սիրիայի և Լիբանանի երուսաղեմապատկան թեմերի փոխանցման գործընթացը և Կիլիկիո կաթողիկոսության նոր թեմերի կազմավորումը: Աստիճանաբար Երուսաղեմի պատրիարքությունը եկավ այն համոզման, որ անհրաժեշտ է երուսաղեմապատկան թեմերը հանձնել Կիլիկիո կաթողիկոսութեան՝ ի շահ վերջինիս «վերակազմութեան և պահպանումի», ինչպես նաև խուսափելու համար հետագա հնարավոր անախորժություններից: Սակայն Եղիշե պատրիարքը թեմերի

¹ «Թղթակցութիւն...», թիւ 1, էջ 39:

² «Վավերագրեր...», Գիրք Դ, էջ 494:

³ «Թղթակցութիւն...», թիւ 3, էջ 44:

հանձնումը գտնում է հնարավոր այն պայմանով, որ «...ազգային կազմակերպուած պաշտոնական մարմին մը»¹ ստեղծվի, որին էլ պաշտոնապես կհանձնվեն թեմեր:

1928 թ. ամռանը Բաբեկեն եպ. Կյուլեսերյանը կազմում է մի ծրագիր «Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմական կազմակերպութիւնը Սիւրիոյ մէջ» վերնագրով, իսկ հոկտեմբեր 3-ին Հալեպում Սահակ Բ գումարում է «Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմերու Օժանդակ Յանձնաժողով»², որը որոշում է, որ թեմերի փոխանցումից հետո ստեղծվելու են հինգ թեմեր՝ Հալեպի, Բեյրութի, Դամասկոսի, Լաոդիկեի (Լաթաքիա) և Կիպրոսի: Հանձնաժողովն ընդգծում է, որ նոր թեմերի կազմակերպման գործն արժանացել է համընդհանուր հավանության:

Արդեն 1929 թ. փետրվարի 23-ին Կիպրոսից հրավիրվում է Եղիշե եպ. Կարոյանը և նշանակվում Բեյրութի թեմի առաջնորդ³: Մի քանի օր անց՝ մարտի 3-ին, Եղիշե պատրիարքին հղած նամակում Սահակ կաթողիկոսը վերջինիս տեղեկացնում է Բեյրութի թեմի վերակազմակերպման և Եղիշե եպս. Կարոյանի նշանակման մասին, ինչպես նաև, որ վերջինիս աջակցելու նպատակով ստեղծվել է վարչական ժողով «Իբրեւ խորհրդական և օգնական Կաթ. Փոխանորդին» և դադարեցված են զավառական և քաղաքական ժողովների գործունեությունը⁴: Փաստորեն, մինչ Երուսաղեմի պատրիարքության վերջնական որոշումը Կիլիկիոյ կաթողիկոսությունը սկսել էր թեմերը իր ենթակայության տակ վերցնելու գործընթացը: Հայոց եկեղեցու «երկուութիւնը» վերացնելու գոր-

¹ Բ. Եղիայեան, նշվ. աշխ., էջ 299:

² Նույն տեղում, էջ 299-300:

³ Տե՛ս Բ. Կիպեսերեան, Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը), Անթիլիաս, 1990, էջ 990:

⁴ «Սիւրիոյ երուսաղեմապատկան թեմերուն...», էջ 27:

ծընթացը, ինչպես կաթողիկոսն է նշում իր նամակում, սկսվել էր հենց Լիբանանից:

Կարոյան սրբազանը Բեյրութի թեմի կազմավորման, տեղի հայության խնդիրները լուծելու և վերջիններիս հայոց եկեղեցու շուրջ համախմբելու ուղղությամբ ձեռնարկում է մի շարք քայլեր: Նախ նախատեսվում է տեղի գաղթականների առանց այն էլ ծանր սոցիալական վիճակը մեղմելու համար վերջիններիս ազատել «...առաջնորդարանի անունով տարեկան 60-70 հնչուն ոսկի վճարէն»¹: Նախատեսվում է նաև Ս. Նշան եկեղեցին դարձնել եպիսկոպոսարան, իսկ տեղի երկսեռ դպրոցը դնել տեղի հոգևոր առաջնորդի անմիջական հսկողության տակ: Այս և մի շարք այլ քայլերի արդյունքում Սահակ կաթողիկոսը վստահ էր, որ գաղթական հայությունը «...կրկնապատկուած սիրով պիտի փարին Ս. Եկեղեցիին և այսու արտաքին վտանգի ուժգնութիւնը իր թափը պիտի կորսնցնէ»²:

Փաստորեն, Եղիշե պատրիարքին այլ բան չէր մնում անելու, քան ձեռնամուխ լինել երուսաղեմապատկան թեմերի պատկանելության ստեղծված փաստացի վիճակի դե-յուրե ամրագրմանը:

Բնականաբար Եղիշե պատրիարքը չէր կարող միանձնյա որոշում կայացնել այդ կարևոր հարցում: Ուստի վերջինս 1929 թ. մարտի 21-ին պատրիարքության Տնօրեն ժողովի անունից Միաբանական ընդհանուր ժողովին գրավոր ներկայացնում է Սահակ Բ դիմումը «առժամապէս» Կիլիկիո կաթողիկոսությանը «Պէյրութի, Դամասկոսի եւ Լաւողիկէի մեր վանքերն ու ժամատուները» հանձնելու վերաբերյալ³: Մի

¹ Նույն տեղում, էջ 27:

² Նույն տեղում, էջ 27-28:

³ Նույն տեղում, էջ 28-32:

քանի օր անց՝ մարտի 26-ին, Միաբանական ընդհանուր ժողովը (պատրիարք Եղիշե արք. Դուրյանի նախագահությամբ), որին մասնակցում էին 33 միաբաններ, ինչպես նշված է համապատասխան արձանագրության մեջ, «նկատի առնելով Կիլիկիոյ կաթողիկոսութեան Սիւրոյ մէջ կազմակերպութեան օժանդակելու պարտքը Ս. Աթոռիս կողմէն»¹ միաձայնությամբ քվեարկում է երուսաղեմապատկան երեք թեմերը՝ Բեյրութ, Դամասկոս, Լաոդիկե, իրենց ենթակա վանքերով, եկեղեցիներով ու ուսումնական հաստատություններով Կիլիկիո կաթողիկոսությանը հանձնելու օգտին²։ Այստեղ խոսք չէր գնում Երուսաղեմի պատրիարքությանը պատկանող կալվածքների և դրանց եկամուտների մասին, որոնք առաջարկվում էր տնօրինել հայոց պատրիարքարանի կողմից նշանակված աշխարհիկ անձի կողմից։ Պատրիարքության միաբան վարդապետները, ովքեր տեսչության պաշտոն էին զբաղեցնում այդ թեմերում, պետք է անմիջապես վերադառնային Երուսաղեմ³։ Նույն օրը այդ որոշման մասին հեռագրով տեղեկացվում է Սահակ կաթողիկոսը⁴։ Իսկ երկու օր անց Եղիշե պատրիարքը Սահակ Բ-ին անձնական նամակով ևս տեղեկացնում է հանձնման որոշման մասին, միաժամանակ հայտնելով «...փոխանցումն սկսել Պէյրութէն, ուր Ձեր Ս. Օծութեան կողմէ Կաթողիկոսական Փոխանորդ է կարգուած արդէն (ընդգծումը-է. Հ) Գեր. Տ. Եղիշէ Եպս. Կարոյեան»⁵։ Այսինքն սկսել այն թեմից, որն ըստ էության, արդեն հանձնված էր կամ մեկ այլ ձևակերպմամբ արդեն վերցված էր։ Սահակ Բ պատասխան նամակով իր շնոր-

¹ Թղթակցութիւն..., թիւ 1, էջ 331:

² Տե՛ս «Սիոն», Երուսաղեմ, ապրիլ, թիւ 4, 1929, էջ 126:

³ Տե՛ս «Սիւրիոյ երուսաղեմապատկան թեմերուն...», էջ 32:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 34:

⁵ Նույն տեղում, էջ 34:

հակալուծյունն է հայտնում այդ «բարեդէպ» որոշման համար¹։

Եղիշե պատրիարքը թեմերի հանման մասին նամակով իրազեկում է նաև Սիրիայի և Լիբանանի Ֆրանսիական Բարձր կոմիսար Մ. Բոնսոյին, որն էլ պատասխան նամակով իր գոհունակությունն է հայտնում պատրիարքին Կիլիկիո կաթողիկոսության վերակազմության հարցում վերջինիս ունեցած դերի և «գոհողության» համար²։ Այս նամակը հերթական անգամ ապացուցում է Ֆրանսիական իշխանությունների շահագրգռվածությունը Կիլիկիո կաթողիկոսության վերակազմության և ամրապնդման հարցում։

Թերևս Երուսաղեմի պատրիարքության համար հասկանալի էր, որ «առժամապէս» ասվածը խիստ հարաբերական էր և իրականում այդ թեմերը տրվում էին ընդմիշտ։ Այսպիսով, Երուսաղեմի պատրիարքության թեմերի «կամավոր» հանձնումը, ըստ էության, գալիս էր, այսպես ասած, լեզիտիմացնելու ստեղծված դե ֆակտո վիճակը։

Այստեղ հարկ է միաժամանակ ընդգծել պատրիարք Եղիշե արք. Դուրյանի և Երուսաղեմի Միաբանական ժողովի խելամիտ դիրքորոշման կարևորությունը, այլապես հակադրությունը կլիներ արկածախնդրություն, որը կարող էր հերթական պառակտումն ու ճգնաժամը առաջացնել Հայոց եկեղեցու ներսում։ Սփյուռքյան մամուլում հաճախ էր հնչում այն տեսակետը, որ Երուսաղեմի հայոց պատրիարքությունը ինքը կարող է ստանձնել Սիրիայի և Լիբանանի հայության եկեղեցական կյանքի ղեկավարումը և կարիք չկա ջանքեր գործադրել Կիլիկիո կաթողիկոսության վերակազմության ուղղությամբ։ Երուսաղեմի հայոց պատրիարքությունը

¹ Տե՛ս «Սիոն», Երուսաղեմ, ապրիլ, թիւ 4, 1929, էջ 126։

² Տե՛ս Բ. Եղիայեան, նշ. աշխ. էջ 302-303։

խնդիրը դիտարկում էր այլ տեսանկյունից և գտնում էր, որ ստեղծված իրավիճակում, երբ տազնապալի դրուժյան մեջ էր հայտնվել հայոց եկեղեցին պետք է ջանքեր գործադրել այն ավելի զորացնելու՝ իր դեմս իր նվիրապետական աթոռների, որպեսզի. «...այդ տազնապալ չվերածուի վտանգի մը, պետք է կազմակերպել ու զորացնել Հայոց եկեղեցին ո՛ւր որ հնարաւորութիւն կայ ընելու այդ բանը»¹, -գրում էր Երուսաղեմի պաշտոնաթերթ «Սիրոն»-ը: Կիլիկիո կաթողիկոսության վերակազմավորման գործը Երուսաղեմի հայոց պատրիարքությունը՝ պատրիարքի գլխավորությամբ, դիտարկում էր որպես Հայոց եկեղեցու ամրապնդմանն ուղղված ջանք: «...Այսօր ինչ տեղի ունեցաւ երկու Աթոռներու միջև... պատմական իրողութիւններու նշանակալից մէկ շրջումն է, նո՛ր շարժում մը փոխադարձ համակրանքի և իրերօգնութեան, գեղեցիկ և տրամաբանական շարժում մը, որուն արժէքը ինքն Սիւրոյ հայութիւնն է որ պիտի կրնայ բարձրացնել, սրտանց լծորդուելով և նուիրուելով կազմակերպութեան կենսական գործին»², -գրում է «Սիրոն»-ը: Սա էր Երուսաղեմի պաշտոնական դիրքորոշումը և վերջինս ներդրումն անառարկելի էր Կիլիկիո Աթոռի ամրապնդման գործում:

Գործարքը բնականաբար չէր կարող տեղի ունենալ առանց Մայր Աթոռի համաձայնության: Ինչպես արդեն նշվել է, Սահակ վեհափառը, ինչպես նաև շատ «բարեմիտ ազգայիններ» հաճախ էին դիմում Մայր Աթոռին այդ հարցով³:

1928 թ. մայիսին Սահակ Բ՝ խորեն արք. Մուրադբեկյանին հղած նամակում հայտնում է, որ «Կտակ»-ից հետո հայության տարբեր շրջանակներում ձևավորվել են տրամադ-

¹ «Սիրոն», Երուսաղեմ, ապրիլ, թիւ 4, 1929, էջ 132:

² Նույն տեղում, էջ 133:

³ ՀԱՍ., ֆ. 409, ց.1, գ. 4463, թ. 5, շրջերես:

րությունները ֆրանսիական իշխանությունների հովանուներքո գտնվող տարածքների թեմերը Կիլիկիո կաթողիկոսությանը հանձնելու շուրջ, միաժամանակ ընդգծելով, որ, «Կիլիկիոյ եւ Երուսաղեմի Աթոռներուն եղբայրական համաձայնութիւնը միայն Ս.Հայրապետին սիրալիր միջնորդութեամբ կրնայ լինել»¹։ Այս նամակով Կիլիկիո Աթոռը ակնկալում էր Մայր Աթոռի աջակցութիւն թեմերի հանձնման հարցում։ Այս ոչ միայն հարգալից ժեստ էր Մայր Աթոռի նկատմամբ, այլ նաև խնդրի արդյունավետ լուծման համար կարևոր քայլ։

Անսալով այդ խնդրանքին՝ 1928 թ. դեկտեմբերի 25-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Սուրենյանցը Եգիպտոսի հայոց առաջնորդ Թորգոմ արք. Գուշակյանի միջոցով դիմում է Եղիշե պատրիարքին. «Գլխաւորապէս մենք ի նկատի ունինք մեր հոգեւոր զաւակների ազգային-կրօնական եւ եկեղեցական-վարչական գործերը, որպիսի տեսակէտով մօտենալով խնդրին, մենք միանգամայն անհրաժեշտ եւ անյետաձգելի ենք համարում Սիւրոյ հայոց թեմերի շուտափոյթ լաւ կազմակերպումը, որպէսզի այնտեղի ազգային-եկեղեցական բազմապիսի գործերն աւելի կանոնաւոր ընթացք ստանան, Հայատառնեայց եկեղեցւոյ զաւակները չընկնեն կաթոլիկ եւ բողոքական միսիոներների որոգայթների մէջ և շօտարանան»², - ասված էր նամակում։ Գևորգ վեհափառին միաժամանակ մտահոգում էր ապագայում հրավիրվելիք ազգային-եկեղեցական ժողովում Սիրիայի և Լիբանանի հայոց թեմերից, իր բնորոշմամբ, «որոնք գտնուում են Կիլիկիոյ

¹ «Թղթակցութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ եւեմ կաթողիկոսներու եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Խորէն Ա. Մուրադբէկեանի», թիւ 3, Անթիլիաս, 2002, էջ 39, տե՛ս նաև «Վաւերագրեր...», Գիրք Դ, էջ 487։

² ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4463, ք. 5։

կաթողիկոսութեան իրաւասութեան տակ»¹ պատգամավորներին ընտրութեան հարցը:

Քանի դեռ կարգավորված չէր թեմերի հարցը՝ խոսել պատգամավորների թվի և առհասարակ դրանց ընտրութեան մասին անհնարին էր: Փաստորեն, Գեորգ վեհափառը, հստակ գիտակցելով ստեղծված իրավիճակը, Երուսաղեմի պատրիարքութեանը ակնարկում էր թեմեր հարցը լուծել և դրանք տրամադրել Կիլիկիո կաթողիկոսութեանը: Նույն նամակում կաթողիկոսը հորդորում է հարցը քննել «լայն սկզբունքային տեսակէտով» և որոշումը հայտնել իրեն²: 1929 թ. ապրիլի 30-ին Երուսաղեմ է ժամանում Եգիպտոսի թեմի առաջնորդ Թորգոմ սրբազանը Եղիշե պատրիարքին անձամբ հանձնելու Մայր Աթոռից ստացված վերը նշված գրութունը³:

1929 թ. օգոստոսին ստացված նամակով խորեն Մուրադբեկյանը Սահակ վեհափառին պաշտոնապես հայտնում է, որ, «Գերագույն Հոգեւոր խորհուրդը պատիւ ունի յայտնելու, որ Նորին Վեհափառութիւնը ուրախ է, որ իր առաջարկով դրական լուծում է ստացել եւ Սիրոյ Սաղիմական իրաւունքները փոխանցուել են Կիլիկիոյ Կաթողիկոսութեան...»⁴: Նույն նամակին կից ուղարկվում է նաև Մայր Աթոռի շրջաբերականը, որն ուղարկվել էր վերջինիս ենթակա թեմական առաջնորդներին թեմերի փոխանցման վերաբերյալ Ամենայն հայոց կաթողիկոսի և Գերագույն հոգեւոր խորհուրդի կարծիքը ներկայացնելու նպատակով:

¹ Նույն տեղում:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4463, ք. 5, շջերէս:

³ Տե՛ս «Սիոն», Երուսաղեմ, մայիս, քիւ 5, 1929, էջ 160:

⁴ «Թղթակցութիւն», քիւ 3, էջ 44:

Հետաքրքիր է, որ շուրջ մեկ տարի անց՝ 1930 թ. օգոստոսի 11-ին Սահակ վեհափառը գրում է կաթողիկոսի տեղակալ Խորեն Մուրադբեկյանին՝ խնդրելով Ամենայն հայոց կաթողիկոսի Երուսաղեմ ուղարկված վերը նշված նամակի պատճենը տրամադրել իրենց՝ կաթողիկոսական դիվանատանը պահպանելու համար : «Անցեալ տարի հայ թերթերը գրեցին, որ Ն. Վեհափառութիւն Երջանկայիշատակ Հայրապետը յատուկ գրութեամբ պատուիրած է Գեր. տ. Թորգոմ արքեպիսկոպոսին երթալ Երուսաղեմ առաջարկելու Ս. պատրիարքին և միաբանութեան, որ Կիլիկիոյ կաթողիկոսութեան Սուրիոյ մէջ կազմակերպութեան գործը դիւրացնելու համար երուսաղէմապատկան եկեղեցիները, դպրոցները և տեսչութիւնները ի Պէյրութ, ի Դամասկոս և ի Լաւողիկէ, յանձնուին Կիլիկիոյ կաթողիկոսութեան»¹, -ասված էր նամակում: Պատասխան նամակով 1930 թ. նոյեմբերին Սահակ վեհափառին է ուղարկվում Գևորգ Ե 1928 թ. դեկտեմբերի 25-ի Երուսաղեմ ուղարկված գրության վավերացված պատճեն: Այդ նամակում հերթական անգամ հաստատվում էր, որ Եգիպտոսի առաջնորդ Թորգոմ սրբազանը Գերագույն Հոգևոր խորհրդի կողմից «...յատուկ յանձնարարութիւն ունէր անձամբ ներկայացնելու Պատրիարքին յիշեալ Հայրապետական գրութիւնը եւ յայտնել Ս. էջմիածնի տրամադրութիւնը Ձերդ սրբութեան ցանկութիւնը կատարելու վերաբերութեամբ»²:

Փաստորեն, թեմերի փոխանցման այս կարևոր գործարքը տեղի է ունենում Մայր Աթոռի կարևոր համաձայնությամբ, որը միանգամայն համապատասխանում էր երկու աթոռների միջև այդ շրջանում ստեղծված ջերմ հարաբերությունների տրամաբանությունը: Սրանով Մայր Աթոռը կար-

¹ ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 4469, ք. 10:

² Անդ, ք. 12:

ևոր նպաստ բերեց Կիլիկիո կաթողիկոսության վերակազմավորման գործին, ոչ միայն շխտչնդոտելով, այլև իր սեփական միջնորդությունը կատարելով, որպեսզի Երուսաղեմի հայոց պատրիարքությունը կատարի թեմերի հանձնումը:

Մայր Աթոռի «շնորհաբաշխ հաճութեան» և Երուսաղեմի ողջախոհության արդյունքում Հայոց Եկեղեցու նվիրապետական Աթոռները խելամտորեն խուսափեցին հնարավոր անպտուղ ու պառակտիչ վեճից, որը պատիվ չէր բերի որևէ մեկին:

Թեմերի փոխանցման գործի կազմակերպումը հանձնարարվում է Մաթևոս եպս. Գայրգճյանին¹, որին պետք է գործընթացը կազմակերպելու հարցում աջակցեր Երուսաղեմի Աթոռի դիվանապետ Կարապետ Նուրյանը²: Վերջիններիս 1929 թ. ապրիլի 11-ին ուղղած հանձնարարագրով Եղիշե պատրիարքը հայտնում էր, որ Կիլիկիո կաթողիկոսությանը պետք է հանձնվեն.

«1. Պէրութի մէջ³.

Երուսաղէմապատկան եկեղեցին⁴, յարակից վանատունը և ազգային վարժարանը: Իսկ Ս. Աթոռոյս սեփականութիւնը կը մնայ հին գերեզմանատան հողը⁵:

2. Դամասկոսի մէջ.

¹ Մաթևոս եպիսկոպոս Գայրգճյանը 1937 թ. Անթիլիասի կալվածքները գնած և Կիլիկիո կաթողիկոսությանը հանձնած բաւերար Սիմոն Գայրգճյանի եղբայրն է:

² Տէն «Սիոն», Երուսաղէմ, յունիս, թիւ 6, 1929, էջ 192:

³ Կիլիկիո կաթողիկոսությանը հանձնված գույքի և կալվածքների ավելի մանրամասն ցուցակ ներկայացված է Բյուզանդ Եղիայեանի աշխատության մէջ, տէ՛ս Բ. Եղիայեան, նշվ. աշխ., էջ 302:

⁴ Խոսքը ս. Նշան եկեղեցու մասին է:

⁵ Այս գերեզմանատան տարածքը 1933 թ. Կիլիկիո կաթողիկոսությունը գնում է Երուսաղեմի պատրիարքությունից, որտեղ կառուցվում է կաթողիկոսության առաջին հասարակարար Խեղյան կալվածքը:

Երուսաղէմապատկան եկեղեցին¹, յարակից վանատունը և ազգային վարժարանը: Իսկ Ս. Աթոռոյս սեփականութիւնը կը մնայ Աղքատանոցի թաղը, վարձու տրուած միւս կալուածները և վանքին կից պարիսպէն դուրս գտնուող պարտէզը: Դամասկոսի ներկայ Ազգային վարժարանի շէնքը ցորքան ծառայէ իր նպատակին՝ կը մնայ Կիլիկիոյ կաթողիկոսութեան իրաւասութեան ներքէ: Իսկ վարժարան ըլլալէ դադրելու պարագային՝ ըստ առաջնոյն կանցնի Երուսաղէմի կալուածներուն կարգը:

3. Լաւողիկէի մէջ.

Երուսաղէմապատկան եկեղեցին², յարակից վանատունը և ազգային վարժարանը: Իսկ Ս. Աթոռոյս սեփականութիւնը կը մնայ վարձու տրուած միւս կալուածները, հին գերեզմանատան հողը և Յագուպիէի 9 կտոր ձիթաստաններուն կէս բաժինը»³:

Նշված հանձնարարագրով հայտնվում էր նաև, որ հանձնվող եկեղեցիներից յուրաքանչյուրի մեջ պետք է մեկ կահավորված սենյակ պահվի. «...իբրև Երուսաղէմատան մաս, Ս. Աթոռոյ Միաբանութեան անունով»⁴:

Եկեղեցիների փոխանցումից հետո Երուսաղէմի երեք թեմերի տեսուչներին կամ պատրիարքական փոխանորդներին հանձնարարված էր, որ անմիջապէս վերադառնան Երուսաղէմ: Պատրիարքութեան Սիրիայում և Լիբանանում պահպանվող կալվածքների եկամուտները տնօրինելու համար պետք է նշանակվեին գործակալներ տեղի երեւելիներից, ովքեր պարտավոր էին ստացված եկամուտները անմիջապէս փոխանցել պատրիարքութեան հաշվին. «...զգուշանա-

¹ Խոսքը ս. Սարգիս եկեղեցու մասին է:

² Խոսքը ս. Աստվածածին եկեղեցու մասին է:

³ «Սիրիոյ երուսաղէմապատկան թեմերուն...», էջ 38-39:

⁴ Նոյն տեղում, էջ 39:

լով յատկացնել զանոնք փոխանորդներու ծախուց, ըլլան ա-
նոնք Երուսաղէմի միաբան կամ ոչ»¹:

Արդեն 1929 թ. ապրիլի 14-30-ը Մաթևոս Գայրգճյանը և Կարապետ Նուրյանը մեկնում են Լիբանան թեմերի հանձ-
նամ գործընթացը կազմակերպելու նպատակով²: Ինչպես որ
կողմերը պայմանավորվել էին, առաջինը հանձնվում է Բեյ-
րութի Ս.Նշան եկեղեցին: Պատրաստվում է հանձնվող գույ-
քի՝ շարժական և անշարժ, ցուցակ, որը ստորագրում են Կի-
լիկիո կաթողիկոսության Լիբանանի թեմի առաջնորդ Եղիշե
եպս. Կարոյանը և գործող պատրիարքական փոխանորդ Գ-
ևորգ վարդապետ Ճանսզյանը: Այնուհետև, նույն ընթացա-
կարգով, հանձնվում են Դամասկոսի Ս. Սարգիս և Լավողի-
կեի Ս. Աստվածածին գլխավոր եկեղեցիները երուսաղեմա-
պատկան այլ հաստատությունների հետ, որոնց ընդունման
համար Սահակ Բ-ի կողմից նշանակված էր Խաղ ծ. վարդա-
պետ Աշապահյանը³, որը նաև Դամասկոսի նորաստեղծ թե-
մի կաթողիկոսական փոխանորդ էր նշանակվել⁴:

Կիլիկիո կաթողիկոսությանը հանձնված Լավողիկեի թե-
մի առաջնորդությունը ստաժնանում է Անտիոքի թեմի գոր-
ծող առաջնորդ Եփրեմ ծ. վարդապետ Տոհմունին⁵: Այսինքն
Լավողիկեի երուսաղեմապատկան եկեղեցիները անցնում
են Կիլիկիո Անտիոքի թեմի վարչական ղեկավարման տակ:

Տեղերում հանձման-ընդունման գործողությունները
կատարելուց հետո կազմվում է երկու ցուցակ, որը Բեյրութ-

¹ Նույն տեղում, էջ 39:

² Տե՛ս «Սիոն», Երուսաղէմ, յունիս, թիւ 6, 1929, էջ 192:

³ Տե՛ս «Սիւրիոյ երուսաղէմապատկան թեմերուն...», էջ 41-46:

⁴ Դամասկոսի թեմի առաջնորդ Խաղ ծ. վարդ. Աշապահյանը և Հալեպի թեմի առաջ-
նորդ Արտավազդ ծ. վարդ. Սուրմէյանին եպիսկոպոս է ձեռնադրում Սահակ Բ՝ 1929 թ.
սեպտ. 29-ին Հալեպի Սբց. Քառասուն Մանկանց եկեղեցում:

⁵ Տե՛ս «Սիւրիոյ երուսաղէմապատկան թեմերուն...», էջ 46:

Թում ապրիլի վերջին ստորագրում են Սահակ Բ և Մաթևոս եպս. Գալբադյանը: Սրանով էլ ավարտվում է երուսաղեմի հայոց պատրիարքության և Կիլիկիո կաթողիկոսության միջև թեմերի փոխանցման գործընթացը: Պատրիարքի հանձնարարականով Մաթևոս սրբազանը ապրիլի 30-ին հանդիպում է նաև Ֆրանսիական բարձր կոմիսարին և նրան է փոխանցում Եղիշե պատրիարքի պաշտոնագիրը, որով վերջինս տեղեկացվում էր թեմերի փոխանցման և դրա պատճառների մասին¹: Ֆրանսիական բարձր կոմիսար Բոնսոն Եղիշե պատրիարքին հղած պատասխան գրության մեջ իր գոհունակությունն ու շնորհակալությունն է հայտնում այդ կարևոր որոշման համար²:

Այսպիսով, տարիներ առաջ սկսած գործընթացն ավարտվեց հաջողությամբ և Սիրիայի և Լիբանանի տարածքում երուսաղեմապատկան թեմերը փոխանցվեցին Կիլիկիո կաթողիկոսությանը, որը կարևոր գործոն հանդիսացավ տարագրությունից հետո կաթողիկոսական աթոռի վերականգնության գործում:

Վերջաբան

Տարագրությունից հետո նոր պայմաններում Կիլիկիո կաթողիկոսությունը բախվեց բազում խնդիրների: Նոր իրավիճակում, բազում խնդիրների շարքում, կենսական նշանակություն ունեին թեմերի վերականգնությունը և նորերի ստեղծումը: Սիրիայի և Լիբանանի երուսաղեմապատկան թեմերի փոխանցումը, որը տարիներ տևած համառ պայքարի արդյունք էր, ավարտվեց հաջողությամբ: Այս ամենում պետք է արժանին գնահատել Կիլիկիո ալեգարդ գահակալ Սահակ Բ-ի ջանքերին: Կարևոր է ընդգծել նաև Մայր Աթոռի

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 49-53:

² «Սիրիոյ երուսաղէմապատկան թեմերուն...», նույն տեղում, էջ 55-57:

դրական վերաբերմունքը այս հարցում: Այսպիսով, երուսաղեմապատկան Բեյրութի, Դամասկոսի և Լաոդիկեի տեսչությունների գործունեության դադարեցման և դրանք Կիլիկիո կաթողիկոսությանը հանձնելուց անմիջապես հետո Կիլիկիո կաթողիկոսը ձեռնամուխ է լինում իր ենթակայության ներքո նոր թեմերի կազմավորման գործին: Կարճ ժամանակում կազմավորվում և վերակազմավորվում են չորս թեմեր՝ Բեյրութի, Հալեպի, Դամասկոսի և Անտիոքի: Այդուհետ, Կիպրոսի թեմի հետ, Կիլիկիո կաթողիկոսության թեմերի թիվը հասնում է հինգի: Երուսաղեմապատկան թեմերի հանձնումով, ըստ «Սիոն»-ի, «...վերջ տրուեցաւ անպատեհ խաչաձևումներով»¹: Բուզանդ Նղիպանն էլ գնահատելով այդ գործարքի կարևորությունը՝ ճշմարտացիորեն գրում է. «Փոխանցուած այդ կալուածներուն մէջ կարելորը անոնց նիւթական արժէքը չէր, այլ ազգային վարչական արժէքը՝ Կիլիկիոյ Ս. Աթոռի վերակազմութեան եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ նուիրապետական Աթոռներու բարւոք յարաբերութեանց տեսակէտէն: Այս փոխանցումին համար ո՛չ միայն Սահակ կաթողիկոս գոհ է ու երջանիկ, այլ նաեւ ամբողջ Ազգը՝ իր պաշտոնական Աթոռներով, վարչական մարմիններով ու հեղինակաւոր մտաւորականներով»²:

Թեմերի ստեղծման գործում ևս առկա էին բազում խնդիրներ, որոնց բախվեց կաթողիկոսությունը: «Կը կարծուէր թէ Երուսաղէմ եթէ պահանջուած զոհողութիւնը ընէր, կազմակերպութեան մէկ խոշոր դժուարութիւնը կը վերացուէր, մինչդեռ նոր դժուարութեան բաղխուեցանք»³, գրում է Սահակ Բ Բաբկեն սրբազանին: Այնուամենայնիվ նոր թեմե-

¹ «Սիոն», Երուսաղեմ, մայիս, թիւ 5, 1931, էջ 130:

² Բ. Նղիպեան, նշվ. աշխ., էջ 303-304:

³ Թղթակցութիւն, թիւ 1, էջ 188:

րի ստեղծման գործընթացը վճռական քայլ էր Կիլիկիո կաթողիկոսության վերակազմության և նոր պայմաններում ամրապնդման ուղղությամբ:

Այսպիսով, թեմերի հանձնումը հիրավի համահայկական նշանակության գործարք էր և այն տեղի ունեցավ հայության տարբեր շրջանակների համաձայնության ներքո: Բյուզանդ Եղիայանը իրավացիորեն գրում է, որ թեմերի հանձնումը. «...կատարուած է կամքովը ամբողջ ազգին, Երուսղէմի Ս. Պատրիարքին եւ միաբանութեան, վաւերացուած բարձրագոյն պետական ճանաչումով, բոլորին վերեւ շնորհաբաշխհաճութեամբը Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին...»¹:

ПЕРЕДАЧА ЕПАРХИЙ СИРИИ И ЛИВАНА АРМЯНСКОГО ПАТРИАРХАТА ИЕРУСАЛИМА КАЛИКИЙСКОМУ КАТОЛИКОСАТУ И ЕГО ЗНАЧЕНИЕ

*Эдгар Оганнесян
Балинт Ковач*

РЕЗЮМЕ

После геноцида на территории Сирии и Ливана поселились десятки тысяч армянских беженцев, большинство из которых были выходцами из Киликии. Последние до изгнания находились под духовной властью Киликийского католикосата. Епархии и поместья Армянской церкви в Сирии и Ливане, кроме Алеппо, находились в ведении Армянского Патриархата Иерусалима. В 1921 году в Алеппо поселился и католикос Киликии Саак II Хапаян. После всего этого в Сирии и Ливане было создано уникальное духовное «Двоевластие».

¹ Բ. Եղիայան, նշվ. աշխ., էջ 303:

В новых условиях большое значение для восстановления Киликийского католикосата имело приобретение новых епархий. В 1920-х годах за решение этой проблемы взялся католикос Саак II Хапаян. После долгой борьбы в 1929 году Иерусалимский Армянский Патриархат передал свои епархии в Сирии и Ливане Киликийскому Католикосату.

Передача епархий была делом общеармянского значения. Это было осуществлено с согласия различных кругов армян по всему миру и всех иерархических престолов Армянской церкви. Эта сделка сыграла огромную роль в восстановлении Киликийского католичества.

THE TRANSFER OF DIOCESES OF SYRIA AND LEBANON OF THE ARMENIAN PATRIARCHATE OF JERUSALEM TO THE CATHOLICOSATE OF CILICIA AND ITS SIGNIFICANCE

Edgar Hovhannisyan
Bálint Kovács

SAMMARY

After the genocide, tens of thousands of Armenian refugees settled in the territory of Syria and Lebanon, most of them were from Cilicia. The latter, before their exile, were under the spiritual authority of the Catholicosate of Cilicia. The dioceses and estates of the Armenian Church in Syria and Lebanon, except for Aleppo, were under the authority of the Armenian Patriarchate of Jerusalem. In 1921 Catholicos of Cilicia Sahak II Khapayan also settled in Aleppo. After all this, a unique spiritual “Dual power” was created in Syria and Lebanon.

Under the new circumstances, the acquisition of new dioceses was of great importance for the restoration of the Catholicosate of Cilicia. In the 1920s, Catholicos Sahak II

Khapayan set about solving this problem. After a long struggle, in 1929 the Armenian Patriarchate of Jerusalem transferred its dioceses in Syria and Lebanon to the Catholicosate of Cilicia.

The transfer of dioceses was an undertaking of pan-Armenian importance. It was carried out with the consent of various circles of Armenians all around the world and all the Hierarchical Sees of the Armenian Church. That deal played a huge role in the restoration of the Catholicate of Cilicia.

էղգար Հովհաննիսյան, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՊՄՀ պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ հայկական սփյուռքի պատմություն, հայրենիք-սփյուռք հարաբերություններ, հայոց եկեղեցու և հայկական հոգևոր-կրոնական կառույցների պատմություն՝ մասնավորապես Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության պատմության հարցեր: Հեղինակ է շուրջ հիսուն գիտական թողական հրապարակումների, այդ թվում մեկ մենագրության.

✉ hovhannisyanedgar@yahoo.com

Hovhannisyanedgar16@aspu.am

Բալինթ Կովաչ, պատմաբան, աստվածաբան, իրավաբան: Բուդապեշտի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի Հումանիտար և սոցիալական գիտությունների ֆակուլտետի դոցենտ, նույն համալսարանի Հայագիտության ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ հայերը արևելյան և կենտրոնական Եվրոպայում, պատմության տեսության հիմնախնդիրներ և գաղափարներ: Հանդիսանում է «Հայերը Արևելյան Եվրոպայում» (հրատարակիչ՝ Boehlau Publishers, Գերմանիա) և "Studia Armenologica Hungarica" (հրատարակիչ՝ L'Harmattan Publishers, Բուդապեշտ) մատենաշարների հիմնադիրը և համախմբագիրը.

✉ kovacs.balint@btk.ppke.hu

Эдгар Оганнисян, Кандидат исторических наук, доцент, декан факультета истории и обществоведения АГПУ. Сфера научных интересов: история армянской диаспоры, отношения Армения-Диаспора, история Армянской церкви и религиозных организаций, в частности вопросы истории Католикосата Киликийский. Является автором около пятидесяти научных и методических публикаций, в том числе одной монографии.

✉ hovhannisyanedgar@yahoo.com hovhannisyanedgar16@aspu.am

Балинт Ковач, историк, богослов и юрист, доцент факультета гуманитарных и социальных наук Католического университета им. Петера Пазмани в Будапеште, заведующий кафедрой арменоведения. Сфера научных интересов: Армяне Центральной и Восточной Европы, вопросы и концепции теорий истории. Он является основателем и соредактором серии книг «Армяне в Восточной Европе» (издательство: Boehlaу Publishers в Германия) и серии книг «Studia Armenologica Hungarica» (издательство: L'Harmattan Publishers, Будапеште).

✉ kovacs.balint@btk.ppke.hu

Edgar Hovhannisyan, PHD, Associate professor, Dean of the Faculty of History and Social Sciences of the Armenian State Pedagogical University. Scope of Academic interests: History of Armenian Diaspora, Armenia-Diaspora relationships, History of Armenian Church and religious organizations, particularly the issues of History of the Great House of Catholicosate of Cilicia. He is the author of about fifty scientific and methodical publications, including one monograph.

✉ kovacs.balint@btk.ppke.hu

Bálint Kovács, historian, theologian and lawyer, associate professor at the Faculty of Humanities and Social Sciences of Péter Pázmány Catholic University, in Budapest, head of the Department of Armenian Studies. Scope of Academic interests: the Armenians of Central and Eastern Europe, the issues and concepts of theories of history. He is the founder and co-editor of the book series "Armenians in Eastern Europe" published by Boehlau Publishers in Germany and the book series "Studia Armenologica Hungarica" published by L'Harmattan Publishers in Budapest.

✉ kovacs.balint@btk.ppke.hu

**ՍԻՐԻԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԵՏԻ
ՍԱՆՋԱՔԻ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ «ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ»
ՏԱՐԻՆԵՐԻՆ (1936-1939 ԹԹ.)**

Հիմնաբառեր՝ Ալեքսանդրետի սանջաքը, կարգավիճակ, մանդատ, Ֆրանսիա, Ազգերի լիգա, սիրիահայություն դիրքորոշում, ժնկյան համաձայնություն, Հաթայ պետություն:

Ключевые слова: Санджак Александретский, статус, мандат, Франция, Лига Наций, позиция сирийских армян, Женевское соглашение, государство Хатай.

Keywords: Sanjak of Alexandrette, status, mandate, France, League of Nations, Syrian Armenian position, Geneva agreement, Hatay state.

Մերձավոր Արևելքը եղել և մնում է ինչպես միջազգային հարաբերությունների ամենաբարդ թնշուկը, այնպես էլ համաշխարհային տնտեսական համակարգի գործունեության «կենսական» բաղադրիչը: Այս համապատկերում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Երկրորդ աշխարհամարտի նախօրեին Թուրքիայի արտաքին քաղաքականության որոշ առանձնահատկությունների ուսումնասիրումը: Ավելին, թուրք-սիրիական հարաբերությունների վատթարացման արմատները գտնվում են դեռ 1920-1930 ական թթ. ծավալվող իրադարձությունների մեջ: Այս տեսանկյունից կարևոր է համակողմանի վերլուծության ենթարկել երկկողմ հարաբերությունների ամենակնճռոտ հիմնախնդրի՝ Ալեքսանդրետի սանջաքի (Իսքենդերուն) հիմնախնդրի «կարգավորման» գործընթացը՝ ներկայացնելով այս հարցում սանջաքա-

հայության և ընդհանրապես սիրիահայության որդեգրած դիրքորոշումը:

Ալեքսանդրետի սանջաքը, որը գտնվում է Հյուսիսային Սիրիայում, 1918 թ. հոկտեմբերի 30-ի Մուդրոսի զինադադարով անցավ Անտանտի զորքերի վերահսկողության տակ: 1918 թ. նոյեմբերի 27-ին, որպես ինքնուրույն վարչական միավոր ստեղծվում է «Ալեքսանդրետի ինքնավար սանջաքը»¹: 1921 թ. հոկտեմբերի 20-ի Փրանս-թուրքական համաձայնագրով Ալեքսանդրետի սանջաքը մտնում է Սիրիայի կազմի մեջ, որն իր հերթին գտնվում էր Փրանսիական մանդատի տակ²: Պայմանագրի 7-րդ հոդվածով նախատեսվում էր «սանջաքին տալ կառավարման հատուկ կարգավիճակ, և տարածքի թուրք բնակչությանը մշակութային որոշ արտոնություններ»³:

Փաստորեն 1921 թ. Փրանս-թուրքական համաձայնագիրը հանդիսանում է դիվանագիտական այն միակ զենքը, որի շնորհիվ թուրքական կառավարությունը կարողացավ «հետևողականորեն» հասունացնել Ալեքսանդրետի հարցը, հանել այն միջազգային դիվանագիտության թատերաբեմ և ապօրինի ձևով միացնել իրեն:

Ալեքսանդրետի սանջաքի հարցի քննարկումը 1936 թ. դեկտեմբերին, թուրքական կողմի նախաձեռնությամբ և ֆ-

¹ В. Луцкий, *Национально-Освободительная война в Сирии (1925-1927гг.)*, Москва, 1964, с. 107, Միջդեռ Անկարայի կողմից դա համարվում էր անհիմն և անընդունելի, Բանգի Սանջաքը, համաձայն «Ազգային ուխտի» մտնում էր Թուրքիայի սահմանների մեջ: О. Baskin, *Türk dış Politikası, Cilt, 1*, Istanbul, 2001, s. 280.

² Ազգերի լիգայի մանդատը Սիրիայի և Լիբանանի վրա պաշտոնապես հաստատվեց 1922 թ. հուլիսի 24-ին, իսկ 1923թ սեպտեմբերի 29-ին մանդատային պետություն Ֆրանսիային հանձնվեց Սիրիայի և Լիբանանի կառավարումը, В Луцкий., նշվ. աշխ., с.100.

³ М. Paillares, *Le ke'malisme devant les Allie's, Paris, 1922, pp. 359-362*, նաև О. Baskin, նշվ. աշխ., էջ 281.

րանսիական կառավարության համաձայնությամբ տեղափոխվեց Ազգերի լիգայի խորհուրդ (Ժնև): Դեկտեմբերի 8-ին Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ռ.Արասը հեռագրում է Ազգերի լիգայի խորհրդի քարտուղար Ժոզեֆ Ավրենոյին՝ առաջարկելով Լիգայի խորհրդի արտակարգ նստաշրջանի օրակարգ մտցնել «Ալեքսանդրետ-Անտիոքի ու շրջակա տարածքների ապագայի վերաբերյալ Թուրքիայի և Ֆրանսիայի միջև գոյություն ունեցող վեճի»՝ քննարկումը: Օգտվելով Ֆրանսիայի «բարեհաճությունից»՝ սանջաքի թուրք ծայրահեղականները շարունակաբար պահանջում էին շրջանի անջատումը Սիրիայից կամ սանջաքի ուղղակի կցումը Թուրքիային¹, նշելով, որ «Իսքենդերունի սանջաքը Ազգային ուխտի սահմանների մեջ է եղել» (նշումը մերն է. Ա. Մ): Այս նպատակով դեռ վաղուց Սիրիայում ստեղծվել էին Ալեքսանդրետի «ազատագրման» կոմիտեներ և կիսառզմականացված թուրքական կազմակերպություններ, որոնք գործելով անպատժելիության միջոցով, բացահայտ ահաբեկման քաղաքականություն էին վարում տեղի արաբ, հայ բնակչության նկատմամբ: Հենց այսպիսի գաղափարների հիման վրա էլ հիմնված էր ծայրահեղականների «Հալք-է-վի» (Ժողովրդի տներ), խմբավորման ողջ գործունեությունը: Ֆրանսիացի նախկին պատգամավոր և արևելյան հարցերի մասնագետ Անրե Լպենը «Կիլիկիայից հետո Սիրիան» վերտառությամբ հոդվածում, քննադատելով Ֆրանսիայի վարած քաղաքականությունը, կատարում է դիպուկ հարցադրում-

¹ Սակայն տարբեր հեղինակների տվյալներով սանջաֆում թուրքական մեծամասնություն գոյություն չուներ և թուրքերի թիվը այնտեղ կազմել է 23-30%: Այսպես. 1937 թ. Ալեքսանդրետի սանջաֆի 240.000 բնակիչներից արաբները կազմում էին 48% (115.000), թուրքերը՝ 23% (55.000), հայերը՝ 18 տոկոս (43.000), մնացած 11տոկոսը՝ (27.000)՝ թուրմեններ, ֆրդեր, չեֆեզներ և այլք: Ն. Հավհաննիսյան, Հ. Սարգսյան, Սիրիան անկախության համար մղված պայքարում, Երևան, 1975, էջ 183:

ներ. «Ինչ է տեղի ունենում Սիրիայում, արդյոք դիպվածաբար կհավակնին կրկնել Կիլիկիայի խաղը, որը մի իսկական ոճիր էր»։ Հոգվածի հեղինակը, անդրադառնալով նաև կիլիկիահայությունյան ճակատագրին, գրում է. «Սիրիայի մեջ հարյուր հազարավոր հայեր կան, թերևս ավելի շատ ընտանիքներ արդեն կոտորվել են, մինչդեռ մենք նրանց պաշտպանելու հանձնառություն էինք ստանձնել։ Մեր երկրի այս հավատարիմ բարեկամներին սառնասրտորեն և վայրագորեն պետք է հանձնենք»¹ - հավելում է հեղինակը։

Փաստերը ցույց են տալիս, որ սանջաքի հայ ազգաբնակչությունը և հայ քաղաքական-հասարակական խմբավորումները ընդհանրապես որդեգրել են Սիրիայի անկախության պայքարին համահունչ քաղաքական գիծ։ «1936-1937 թթ. ճգնաժամի ժամանակ հայերը արաբների հետ կազմեցին ընդհանուր քաղաքական մեկ ճակատ»², - վկայում է Ա. Թոյնբին։ Արաբ գործիչները ևս բազմիցս դրվատել են սանջաքի հայերի գործունեությունը. «Ալեքսանդրետի սանջաքի 35000 հայեր իրենց դրսևորեցին որպես գերազանցորեն լավ սիրիացիներ։ Արաբների հետ նրանց հարաբերությունները միշտ էլ եղել են հիանալի, իսկ նրանց սքանչելի դիրքավորումը Ալեքսանդրետի հակամարտության այս օրերին ավելի ամրապնդեց այդ հարաբերությունները», - ասում է Սիրիայի ականավոր քաղաքական գործիչ Ա. Շահբանդարը՝ Կահիրեի հայ լրագրողներին տված հարցազրույցի ժամանակ³։ Հայերի և արաբների սերտ համագործակցության մասին է խոսում նաև այն փաստը, որ սանջաքի ընտրությունների ժամանակ հայերից քվեարկության մասնակցում են իրավունք

¹ «Հայրենիք», Բոստոն, 16.05.1936:

² A. Toynbee, *Survey of international Affairs.*, 1938, vol. 1, London, 1941, p. 480.

³ Ա. Բայրամյան, Ալեքսանդրետի սանջաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը. 1936-1939 թթ., Երևան, 1998 էջ 40:

ունեցող 5504 հայեր և ըստ օրենքի ընտրում 5 երեսփոխաններ¹: 1936 թ. դեկտեմբերի 31-ին սանջաքի ներքաղաքական դրուժյունը ուսումնասիրելու համար չեզոք դիտորդական հանձնաժողովը ժամանում է սանջաք, հանդիպումներ ունենալով տարբեր շրջանների արաբ, հայ, թուրք, թուրքմեն խառը ազգաբնակչության հետ: Դիտորդները հաստատում են, որ «անհամաձայնության որևէ տարր գոյություն չունի, թուրքերը, արաբները, հայերը աշխատում և ապրում էին կատարյալ համերաշխության մեջ»²:

Միայն, երբ դիտորդները ժամանեցին Անտիոք, /որտեղ բնակչության մեծամասնությունը թուրքեր էին/ թուրք ծայրահեղականները իրենց «ազդեցիկ» ցույցերով փորձեցին վերջիններիս հավատացնել, թե «Անտիոքի բնակչության ստվար մասը չի ուզում միանալ Սիրիային և սիրիական ու ֆրանսիական իշխանությունները խոչընդոտներ են հարուցում, որպեսզի Անտիոքի թուրք բնակչությունը չկարողանա արտահայտել իր կամքը»³: Ի պատասխան՝ հունվարի 11-ին արաբները և հայերը կազմակերպեցին բազմահազարանոց ցույց. «տասնյակ հազարավոր արաբներ, հայեր շրջում էին քաղաքի փողոցներում՝ վանկարկելով կեցցե՝ Սիրիան»: Դիտորդական խումբը հաստատում է նաև քաղաքի քրիստոնեական գերեզմանատանը հայկական շիրիմների սրբապղծման փաստը թուրքերի կողմից. «Թուրքական ամբոխը ասպատակել է հայոց գերեզմանատունը ու վայրագ ձևով տապալել խաչերը»⁴- գրում է «Արագ» թերթը:

Սանջաքի համար բախտորոշ այս օրերին ինչպես Սիրիայի, այնպես էլ Ալեքսանդրետի հայությունը հեռագիր ու-

¹ «Արմաղան», Ստամբուլ, 29.10.1938թ.:

² Paul du Veou, *Le desastre d'Alexsandrette*. 1934-1938. Paris, 1938, p. 64.

³ «Արագ», Բուխարեստ, 14.01.1937:

⁴ «Արագ», 20.01.1937:

դարկեց Սիրիայի բարձրագույն կոմիսարին և Ազգերի լիգային.

«Մենք՝ հայ համայնքի ներկայացուցիչներս, որ Սիրիան ընտրեցինք իբր երկրորդ հայրենիք, հույս ունենք, որ միշտ կատարյալ համերաշխությամբ կապրենք Սիրիայի արաբների հետ: Բարձր ժողովին /Ազգերի լիգա/ կհայտնենք մեր վախճը Սիրիայի մեկ մասի՝ Ալեքսանդրետի սանջաքի վերաբերյալ, որ թուրքերը առանց որևէ իրավունքի ուզում են անջատել Սիրիայից: Համոզված լինելով հանդերձ Սանջաքի նկատմամբ սիրիացիների տեսակետի իրավացի լինելու մեջ՝ քաղաքակիրթ աշխարհի ուշադրությունը կհրավիրենք այն աղետալի հետևանքների վրա, որ պիտի վիճակվի Ազգերի լիգայի կողմից, սանջաքի մեջ տեղավորված հազարավոր հայերին, եթե Թուրքիայի միջնորդության իրավունքը ճանաչվի¹: Հետևաբար, Բարձր ժողովին կհայտնենք մեր անխուս՝ նվիրումը մեր սիրիական հայրենիքին և մասնավորապես մեր հայրենիքի այն անբաժան գավառին՝ Ալեքսանդրետի սանջաքին, և կխնդրենք Ազգերի ազնիվ լիգային, որ սանջաքի խնդրով զբաղվելու ժամանակ նկատի առնեն մեր զգացմունքները»² :

Հայերի վերաբերմունքի մասին նշել են թե՛ Սիրիայի պետական գործիչները, թե՛ արաբ հեղինակները: «Մենք շատ գոհ ենք հայերից, որովհետև նրանք Սանջաքի խնդրի առ-

¹ Անտիոքի (Սանջափ) թեմի այդ տարիների Հայոց առաջնորդ արք. Աջապանյանը գրում է, որ Սանջափ մեջ այդ տարիներուն կային 35-000 -են ավելի Հայ Առաքելական եկեղեցւոյ զավակներ, կային նաև 5-6 Հազար կաթողիկէ և բողոքական Հայեր»: Ա. Բայրամյան, Ալեքսանդրետի սանջափ իրավական ստատուսը և փառափական խմբավորումները (1920-1930-ական թթ), Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի տեղեկագիր, Հասարակական գիտություններ, հ. 12, Երևան, 1964, էջ 29:

² «Արագ», 18.02.1937:

Թիվ վեհանձն կեցվածք ունեցան և լայնորեն գործակցեցին մեզ հետ՝ կատարյալ անկեղծությամբ նվիրվելով սիրիական տեսակետին։ Սանջաքի մեջ հայերի և արաբների գործակցությունը ու եղբայրությունը մեծապես գոհացրել է մեզ... Թուրքական թերթերը ուզածի չափ կարող են գրել հայերի մասին, վստահ եղե՞ք հավատացող չկա, արաբները շատ լավ ճանաչում են հայերի անկեղծությունն ու հայրենասիրությունը և այլևս չեն կարող հավատալ նման հերյուրանքների»¹- հայտարարում էր Սիրիայի հայտնի պետական և քաղաքական գործիչներից դոկտոր Ա. Ռահմանը։

Բեյրութի «Աս Սիրի» պարբերականը անդրադառնալով սանջաքի հայության դիրքորոշմանը, գրում է. «Հայտնի է, որ սանջաքի հայ տարրը միացած է սիրիական թեզին և պայքարում է թուրքական տեսակետների դեմ»։ Պարբերականը նաև իր մտավախությունն է հայտնում հայության ճակատագրի հարցում. «Եթե սանջաքի նոր վարչակարգը որևէ ձևով հաստատի Թուրքիայի գերակայությունը, ապա հայերը այլևս ապահովության մեջ չեն լինի և կգտնվեն նոր արտագաղթի վտանգի տակ։ Սիրիայում, որտեղ ջարդված ու կոտորված ազգի մի քանի ցրված անդամներ կարողացել են վերապրել, պետք է ամեն սպառնալիքից ազատ լինեն»²։

Այս համատեքստում հարկ է շեշտել, որ որպես առանձին քաղաքական միավորի՝ սանջաքի համար մշակվելու էր նոր կարգավիճակ և հիմնական Օրենք (Սահմանադրություն), որի իրականացումն էլ երաշխավորելու էր Ազգերի լիզան³։ Սակայն դա ամենևին չխանգարեց Ն. Մենեմենչիօղլուն հայտարարելու, որ «սանջաքի նոր կարգավիճակը և

¹ «Արագ», 23.05.1937:

² Արագ, 28.03. 1937:

³ Б. Поцхверия, Турция между двумя мировыми войнами, Москва, 1992, с.167:

հիմնական օրենքը ինքնաբերաբար ուժի մեջ կմտնեն նույն ամսի 29-ին¹»- գրում է դյու Վեուն և հավելում, «Մենք հակիրավական քայլ կատարեցինք՝ հայտարարելով, որ նոր կարգավիճակը և հիմնական Օրենքը ուժի մեջ են մտնում»։ Քաղաքական այս նոր սխալը էլ ավելի խորացրեց հակաֆրանսիական ատելությունն ու թշնամանքը Սիրիայում և հատկապես Ալեքսանդրետի սանջաքում²։ Չնայած, որ 1937 թ. ֆրանսիական մանդատը դեռևս շարունակվում էր Սիրիայում, և ֆրանս-սիրիական պայմանագիրը ուժի մեջ չէր մտել, այսուհանդերձ Ֆրանսիայի մանդատային իշխանությունները տուրք տալով ներքին և արտաքին մի շարք գործոնների տեղի տվեցին թուրքերի պահանջներին և 1937 թ. նոյեմբերի 29-ին պաշտոնապես հայտարարեցին՝ սանջաքի նոր կարգավիճակն ու հիմնական օրենքը ուժի մեջ են մտնելու մասին։

Իսկ երբ մայիսի 27-ին սանջաքի նոր կարգավիճակի բովանդակությունն ըստ էության պարզ դարձավ, Սիրիայում ժողովրդական դժգոհության ու բողոքի ալիքը նոր թափ ստացավ գործադուլների ալիքը կաթվածահար արեց առևտուրը, տրանսպորտը, հասարակական կյանքը։ 1937 թ. հունիսի 3-ին բողոքի ալիքը տարածվեց ոչ միայն սանջաքում այլև ողջ Սիրիայում։ Տասնյակ հազարավոր ցուցարարներ Հալեպում, Համայում և Դամասկոսում շրջում էին փողոցներով՝ վանկարկելով «Ալեքսանդրետը արաբական է»³։ «Ժնևյան համաձայնությունը մեզ համար հայրենադավություն է, մի՛ հավատացեք թուրքերին, անկեղծ և իրական բարեկա-

¹ P. Du Véou, նշվ. աշխ., էջ 79-80:

² P. Du Véou, *Les chetiens en Peril au Moussa-Dagh*, Paris, 1939, pp. 28-29.

³ Ա. Բայրամյան, Ալեքսանդրետի սանջաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը. 1936-1939 թթ., էջ 85:

մությունը մեզ մոտ է»¹ գրում է Դամասկոսի «Էլլիվա» թերթը: Հունիսի 2-ին սիրիական պառլամենտը բողոքի հուշագիր ուղարկեց Ազգերի լիգային, որտեղ խստորեն դատապարտում էր Ժնևյան համաձայնագրերը, «Սիրիական պառլամենտը, ներառյալ սանջաքի բոլոր պատգամավորները, որոնք իսկապես ներկայացնում են ժողովրդին, պաշտոնապես հայտարարում է, որ Սիրիայի գերիշխանությունից սիրիական հայրենիքի որևէ մաս պոկելու փորձը կհանդիսանա աներկբայորեն կոպիտ խախտում մի սահմանադրության, որը հաստատվել է հենց Ազգերի լիգայի կողմից, ինչպես նաև մի դաշնագրի, որի թանաքը դեռևս թաց է: Սիրիական ազգը չի կարող ճանաչել որևէ լուծում, որը խախտում է սիրիական միասնությունը և վճռել է պաշտպանվել իր հավատի ու իրավունքի բոլոր ուժերով»²:

Սակայն միջազգային նման լարված իրավիճակում, երբ առկա էր վերահաս պատերազմի իրական վտանգ, Ֆրանսիան գերադասեց վերջնականապես չընդհարվել Թուրքիայի հետ, ավելին աչքաթող արեց Թուրքերի բացահայտ անօրինական գործողությունները և բավարարեց նրանց անհիմն պահանջները, կապված սանջաքում պառլամենտական ընտրությունների հետ: Արդյունքում 1938թ. հունիսին տեղի ունեցած ընտրությունները անցան Թուրքական սցենարով, և ինչպես վկայում է. Ա. Թոյնբին, «Տեղի ունեցավ Թուրք ընտրողների «տոկոսային աճ»՝ հասնելով 63 %»³: Անտեսելով ազգաբնակչության ճնշող մեծամասնության օրինական իրավունքները՝ օգոստոսի 30-ին հրապարակվեցին ընտրական արձանագրությունների նոր ցուցակներ՝ Թուր-

¹ Արագ, 11. 02.1937, Բուխարեստ:

² Ա. Բայրամյան, նշվ. աշխ., էջ 84-85:

³ A. Toynbee, *Survey of international Affairs*, 1938, vol 1, London, 1941, p. 488.

քերը խորհրդարանում կազմեցին մեծամասնություն՝ ստանալով այդքան սպասված 22 աթոռ /40 տեղից/։ Միանշանակ «թուրքական ներկայությունը» Հաթայում¹ Անկարայի օգտին էր, քանի որ ընտրությունների ելքի վրա մեծապես ազդեց սանջաքում գտնվող թուրքական զինուժի ներկայությունը, որը, ինչպես գիտենք, Ալեքսանդրետի տարածքում, Ֆրանսիական ուժերի հետ համատեղ «կոչված էր պահպանելու» կարգ ու կանոնը սանջաքում»²։ «Հաթայի նախագահ» Թայֆուր Սյոքմենը, խոսելով այս մասին, նույնպես խոստովանում է. «Մեր հաջողության գլխավոր պայմանը հանդիսացավ Հաթայում թուրքական զորքերի ներկայությունը»³։ Փաստորեն, թուրքական և ֆրանսիական սվինների ներքո անցկացված կեղծ ընտրությունների արդյունքում, ազգաբնակչության միայն 25-30% կազմող թուրքական համայնքը պառլամենտում ձևավորեց մեծամասնություն։ Սա, արդեն իսկ խոսում է այն մասին, որ ընտրություններն իսկապես կեղծված էին և բեմականացված։ Հետևաբար, պառլամենտում թուրքերի ձևավորած մեծամասնությունը չէր արտացոլում սանջաքի բնակչության իրական պատկերը։ Այս երկարատև բեմադրության ավարտից հետո, 1938 թ. սեպտեմբերի 2-ին Անտիոքում հրավիրվեց սանջաքի նորընտիր ասամբլեայի առաջին գումարումը, Ալեքսանդրետի սանջաքը վերանվանվեց «Հաթայի պետություն», որի նախագահ «ընտրվեց» Թայֆուր Սյոքմենը։

Հնտրական կանոնադրության նման «վերամշակումը»՝ Թուրքիայի ցանկացած ձևով, 1937 թ. մայիսի 29-ի ժնկյան

¹ «Հաթայ» անվան ծագման մասին մանրամասն տե՛ս նաև՝ *O. Baskın*, նշ. աշխ., էջ 280:

² Թուրքական զորքերը 1938 թ. հուլիսի 5-ին ներխուժեցին Հաթայ՝ կատարելու իրենց պարտականությունները, *C. Arcayürek*, նշվ. աշխ., էջ 38:

³ *T. Sökmen*, նշվ. աշխ., էջ 96:

կարգավորման տրամաբանական շարունակությունն էր: Սա մեկ անգամ ևս հաստատեց այն համոզմունքը, որ Ֆրանսիացիները ի վերջո սանջաքը զիջելու են՝ ելնելով իրենց շահերից: «1940-ից առաջ սանջաքը կկցվի Թուրքիային, իսկ այդ կցումը անհրաժեշտ է, որպեսզի Թուրքիան Գերմանիայի կողմը չանցնի»,- հայ համայնքի ներկայացուցիչներից Եղիա Բեդեկյանին գաղտնի ասում է ընտրական հանձնաժողովի բեկիացի անդամ Ժ. Լազրանժը¹:

Միջազգային բարդ իրավիճակը և Թուրքիային իր դաշնակիցների շարքում տեսնելու Ֆրանսիայի ցանկությունը, ամենևին չի արդարացնում վերջինիս անօրինական գործելաճը: Այս գործողություններով ավելի ամրապնդվեց այն համոզմունքը, որ Թուրքիայի կողմից Ալեքսանդրետի սանջաքի բռնազավթման ամբողջ պատասխանատվությունը ընկնում է Ֆրանսիայի վրա: Նկատի ունենալով այդ հանգամանքը կիսում ենք անգլիացի հեղինակ Ա. Հուրանիի այն կարծիքը, որ «սիրիական կառավարությունը ոչինչ չէր կարող անել, բացի բողոքելուց»²:

Այս երկարատև բեմադրության ավարտից հետո, 1938 թ. սեպտեմբերի 2-ին Անտիոքում հրավիրվեց սանջաքի նորընտիր ասամբլեայի առաջին գումարումը, Ալեքսանդրետի սանջաքը վերանվանվեց «Հաթայի պետություն», որի նախագահ «ընտրվեց» Թալֆուր Սյոքմենը³:

Նախ կազմվեց «Հաթայի կառավարություն», որի ղեկավար նշանակվեց, ինչպես պետք էր սպասել, ազգությամբ Թուրք Աբդուրրահման Մելեքը, որը մինչ այդ վարում էր

¹ Ա. Բայրամյան, Ալեքսանդրետի սանջաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը. 1936-1939 թթ., էջ 94:

² A. Hourani, *Syria and Lebanon*, London, 1946, p. 209.

³ Թուրքական զորքերը 1938 թ. հուլիսի 5-ին ներխուժեցին Հաթայ՝ կատարելու իրենց պարտականությունները, C. Arcayürek, նշվ., աշխ., էջ 38.

սանջաքի ներքին գործերի նախարարի պաշտոնը /1938 թ. հունիսից/։ Հաթայի նոր մայրաքաղաք Ալեքսանդրետի փոխարեն հռչակվեց Անտիոքը, որը բնակեցված էր մեծամասամբ թուրքերով։ Իսկ 1938թ. սեպտեմբերի 7-ի նիստում «պառլամենտը միաձայն» հաստատեց սանջաքի նոր կարգավիճակը և հիմնական Օրենքը, հետո էլ թուրքական դրոշը, շատ քիչ տարբերությամբ, /սպիտակ աստղի կենտրոնում ավելացվեց կարմիր շրջանակ/ ընդունվեց Հաթայի դրոշ, իսկ Թուրքիայի հիմնը դարձավ պետության օրհներգ։

Արդյունքում, 1939 թ. հունիսի 23-ին Թուրքիայի արտաքին գործերի նախարար Շ. Սարաջիօղլուն և Թուրքիայում Ֆրանսիայի դեսպան Ռ. Մասիգլին Անկարայում ստորագրեցին «Թուրքիայի և Սիրիայի միջև տարածքային հարցերի շուրջ վերջնական կարգավորման մասին համաձայնագիր», որով Ալեքսանդրետի սանջաքը հանձնվեց Թուրքիային¹։

Այսպիսով, օրակարգ բերելով Ալեքսանդրետի սանջաքի կարգավիճակի հարցը, թուրքական կողմը բազմափուլային մարտավարությամբ և իրեն բնորոշ վարքագծով, քաղաքական լարված մթնոլորտ ստեղծեց սանջաքում և կարողացավ խնդիրը «լուծել» իր համար նախընտրելի ձևով։ Ալեքսանդրետի շուրջ վեճի վերջնական կարգավորումը իրավական հիմքերից տեղափոխելով քաղաքական հարթության՝ ֆրանսիական կառավարությունը՝ Սիրիայի ժողովրդի ու պետության կամքին հակառակ, խախտեց Սիրիայի տարածքային ամբողջականությունը և Ալեքսանդրետը զիջեց թուրքերին։

¹ Մանրամասն տե՛ս **Y. Müzehher**, «Fransız Arşiv Belgelerinde 23 Haziran 1939 Tarihli Türk – Fransız Antlaşması», *Atatürk Araştırma Merkezi Dergisi*, sayı 99, Ankara 2019, s. 220.

ПОЗИЦИЯ СИРИЙСКИХ АРМЯН В ГОДЫ «УРЕГУЛИРОВАНИЯ» ПРОБЛЕМЫ АЛЕКСАНДРЕТСКОГО САНДЖАКА (1936-1939г.г.)

Арман Мартиросян

РЕЗЮМЕ

Накануне Второй мировой войны Франция и Англия, чтобы обеспечить дружбу и военную поддержку Турции, пошли на раздел сирийской территории и «подарили» Турции Александреттский санджак. На протяжении всей борьбы за сохранение территориальной целостности Сирии и за арабский санджак, армяне санджака, и все сирийские армяне, стояли на стороне народа Сирии. Однако не только не было учтено мнение большинства арабского и армянского населения, но и в результате постепенной тюркизации Санджака Александретта была несправедливо передана туркам.

THE POSITION OF ARMENIANS OF SYRIA IN THE YEARS OF "REGULATION" OF THE SANJAK OF ALEXANDRET PROBLEM (1936-1939)

Arman Martirosyan

SUMMARY

On the eve of the Second World War, France and England, in order to ensure Turkey's friendship and military support, went to the division of the Syrian territory and "gifted" the Alexandretta Sanjak to Turkey. Throughout the struggle for the preservation of the territorial integrity of Syria and for the Arab sanjak, both the Armenians of the sanjak and all Syrian Armenians stood by the people of Syria. However, not only was the opinion of the majority Arab and Armenian population not taken into account, but

as a result of the gradual Turkification of the Sanjak, Alexandrette was unfairly handed over to the Turks.

Արման Մարտիրոսյան, պատմական գիտությունների թեկնածու, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ղեկավար: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ Եվրոպայի և Ամերիկայի երկրների նորագույն պատմություն, թուրք-ֆրանսիական հարաբերություններ, էթնոքաղաքական հակամարտություններ:

✉ arman.martirosyan.81@mail.ru

Арман Мартиросян, кандидат исторических наук, доцент кафедры всеобщей истории и методики ее преподавания АГПУ им. Абовяна. Сфера научных интересов: новейшая история стран Европы и Америки, турецко-французские отношения, этнополитические конфликты.

✉ arman.martirosyan.81@mail.ru

Arman Martirosyan, candidate of Historical Sciences, Docent of the Department of World History and its Teaching Methodology at the ASPU named after Kh. Abovyan. Scope of scientific interests: recent history of European and American countries, Turkish-French relations, and political conflicts.

✉ arman.martirosyan.81@mail.ru

**ՍՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԱԼՎԱԾՔՆԵՐԸ ԵՒ
ԹՈՒՐԲԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՆՑ
ԲՈՒՆԱԶԱՎԹՈՒՄԸ**

Հիմնաբառեր՝ Արևմտյան Հայաստան, Օսմանյան կայսրություն, Սսի կաթողիկոսություն, Սահակ Բ. կաթողիկոս, Կիլիկիա, անշարժ գույք:

Ключевые слова: Западная Армения, Османская империя, Католикосат Сиса, Католикос Саак II, Киликия, недвижимость.

Keywords: Western Armenia, Ottoman Empire, Catholicosate of Sis, Catholicos Sahak II, Cilicia, real estate.

Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ տարածքներում հայերի նկատմամբ ցեղասպանական քաղաքականությանը զուգահեռ թուրքական իշխանություններն իրականացնում էին ոչ միայն սպանված կամ աքսորված հայերին ու հայկական համայնքներին, այլև Հայ Առաքելական Եկեղեցուն պատկանող անշարժ գույքի և ունեցվածքը բռնազավթում: Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության արխիվում պահվող նյութերի ուսումնասիրության հիման վրա սույն հոդվածի շրջանակներում փորձ է կատարվել մոտավոր ներկայացնել Սսի կաթողիկոսության անշարժ գույքի ծավալները, որոնք թուրքական իշխանությունների և մահմեդականների կողմից բռնազավթվեցին ինչպես Հայոց ցեղասպանության ընթացքում և դրանից հետո:

Ինչպես հայտնի է, վանական համալիրները և եկեղեցական հաստատություններն իրենց տիրապետման տակ ունեին իջևանատներ, խաներ (վաճառատներ), պանդոկներ, տներ, խանութներ, այգիներ, պարտեզներ, անտառներ,

շրաղագսներ և այլ կալվածքներ, որոնցից ստացվող եկամուտներով էլ ապահովվում էր կրոնական և կրթական կառույցների բնականոն գործունեությունը¹։ Մինչև 1912 թ. Օսմանյան կայսրությունում կրոնական կառույցներն իրավունք չունեին իրենց անունով կալվածքներ գրանցել, ուստի դրանք գրանցվում էին վստահելի անձանց կամ սրբերի անուններով։ 1912-13 թթ. թուրքական իշխանությունների որոշման համաձայն ոչ մահմեդական համայնքները պատրաստեցին իրենց ազգապատկան ու եկեղեցապատկան գույքերի ամբողջական ցանկերը և ներկայացրեցին իշխանություններին։

1915 թ. սեպտեմբերի 3-ին ստացվեց Կիլիկիո կաթողիկոսության տարագրման մասին Սսի կառավարչի հրահանգը։ Հալեալ տեղափոխվելու համար տրված էր ընդամենը 10 օր ժամանակ։ Ինքնին հասկանալի է, որ այդ կարճ ժամանակում հնարավոր չէր ժողովել ու տեղափոխել կաթողիկոսությանի ամբողջ շարժական գույքը, ուստի միաբաններն օր ու գիշեր փորձում էին առանձնացնել ամենաարժեքավոր ու կարևոր գույքերը²։ Անգամ առանձնացված գույքը չհաջողվեց անվնաս և ամբողջությամբ դուրս բերել անվտանգ վայրեր։

Մուգրոսի զինադադարից և Կիլիկիայում ֆրանսիական զորքերի հաստատվելուց հետո Սսի կաթողիկոսարանը քեմալականների հարձակումներից պաշտպանելու անվան տակ ֆրանսիացիները վանքի տարածքը վերածեցին զորա-

¹ Տե՛ս Հ. Տաճատ վրդ. Եսրաղմեան, Հայաստանի վանքերուն եւ եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 եւ 1915-1925 տարիներուն, Վեներտիկ-Սթ. Դազար, 1995, էջ 76-77։

² Տե՛ս Բ. Նդիայեան, Ժամանակակից պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս, 1975, էջ 166-167։

նոցի, զինարանի և մթերանոցի¹։ Առաջին աշխարհամարտի ընթացքում թուրքական իշխանությունների կողմից Սսի կաթողիկոսությունը հասցված նյութական վնասները վերականգնելու նպատակով Կիլիկիայում հաստատված ֆրանսիական Գերագույն կոմիսարությունը Սահակ կաթողիկոսին առաջարկեց պատրաստել Կիլիկիո կաթողիկոսարանի գույքերի ցանկը՝ դրան կցելով կալվածքների ու շինությունների նյութական արժեքի մասին տեղեկությունները։ Սսի կաթողիկոսության կալվածքների ցանկը² պատրաստվեց և ներկայացվեց ֆրանսիական իշխանություններին, սակայն այդ ուղղությամբ գործնական որևէ քայլ չձեռնարկվեց։ 1921 թ. Կիլիկիայից ֆրանսիական զորքերի դուրսբերման հետևանքով Սսի կաթողիկոսության ամբողջ անշարժ գույքը վերջնականապես անցավ թուրքական իշխանությունների տիրապետության տակ, Սահակ Վեհափառին էլ հայտնվեց, որ ֆրանսիական իշխանություններն իրավունք չունեն միջամտելու թուրքիայի ներքին գործերին։

Սսի կաթողիկոսության միայն անշարժ գույքի մասին եղած տեղեկություններն արդեն իսկ պատկերացում են տալիս, թե թուրքական իշխանություններն ինչ հսկայական ծավալների հասնող ունեցվածք են բռնազավթել Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետական այդ աթոռից։

Ադանայի նահանգի Սիս-Գողանի գավառի Սիս քաղաքում էր գտնվում 4000 մ քարե պարսպով շրջապատված

¹ Այս մասին նշվում է 1927 թ. օգոստոսի 23-ին Հալեպում կազմված «Սսի բռնագաղթից հետո բեմալականների վերագրված Կիլիկիայի կաթողիկոսանիստ մայրավանքի կալվածքների, շտեղափոխված գույքի և այլ ունեցուածքի ցուցակ»-ի ծանոթագրությունում։ Տե՛ս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Արխիւ (Այսուհետ՝ ՄՏԿԿԱ.), Սահակ Բ. Կաթողիկոսի ֆօնդ, հասաֆաժոյ 21, ց. 1, քղք. 26։

² Այդ փաստաթղթի պատճենը պահվում է Անթրիպատում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի արխիվում։

բազմադարյա Կաթողիկոսության համալիրը, որն իրենից ներկայացնում էր՝ վեհաշուք կաթողիկոսարանը, Մայրավանքը, եկեղեցին, աղոթատեղին և զանգակատները: Մայրավանքի 50 սենյակների և սրահներից պատերը զարդարված էին Քյոթահյայից բերված 15000 կավե հնաոճ սալիկներով: Օսմանյան կայսրերի մի քանի արտոնագրերով (Ֆերման) Սսի հայոց կաթողիկոսությանը շնորհված 125 հա մակերեսով միայն Կաթողիկոսության համալիրի տարածքն իր շենք-շինություններով գնահատվում էր 100000 թուրքական լիրա¹:

Կաթողիկոսության համալիրում կար հնաոճ իրերի հարուստ հավաքածու ունեցող թանգարան և գրադարան, որտեղ պահվում էին հին մանրապատկերներով 400 ձեռագրեր և ավելի քանի 4000 տպագիր հատորներ: Եթե շենքերն ու շինությունները և դրանց հասցված վնասը հնարավոր է գնահատել և դրանց դիմաց հատուցման ինչ-որ չափ որոշել, ապա մանրանկարներով հայ հին ձեռագրերի և հնատիպ գրքերի ոչնչացումը հայ ժողովրդի համար դրամական հատուցմամբ չվերականգնվող կորուստ է:

Կաթողիկոսության համալիրի հարևանությամբ տեղակայված 14 500 մ² մակերեսով ընդարձակ հողատարածքի վրա կառուցված էին բնակելի մի քանի շենքեր, այնտեղ էին գտնվում նաև Սբ. Սոփիայի հին եկեղեցու ավերակները: Սեփականության վկայակագրով (թափու) Կիլիկիայի կաթողիկոսությանը պատկանող այդ հողատարածքը գնահատվում էր 2000 թ. լ.²: Դրանից բացի, կաթողիկոսությունը արտոնագիր ուներ նաև հին հայկական վանքի նկատմամբ, որն իր

¹ Նույն տեղում, հաաբաժոյ 40, ց. 1, թղթ. 63:

² Տե՛ս K. Baghdjian, *The confiscation of Armenian properties by the Turkish Government said to be abandoned*, Antilias, Printing House of the Armenian Catholicosate of Cilicia, 2010, pp. 97-98:

ունեցվածքով, 5 հա տարածքի վրա և դրան կից կառուցված աղոթարաններով, դպրոցով և գերեզմանատնով գնահատվում էր 6000 թ. և՛:

Սսի քրիստոնեական թաղամասի շուկայում Կիլիկիայի կաթողիկոսությանը պատկանող շինություններից մեկի առաջին հարկում բնակելի տուն էր՝ կից հողամասով, վարձակալության տրված երկրորդ շենքի առաջին հարկում գործում էր խաղատուն, իսկ շինությունների մյուս հատվածները զբաղեցնում էին 7 խանութներ: Նույն թաղամասում էին գտնվում կաթողիկոսությանը պատկանող 30 հա տարածքով հողամասեր, 3,5 հա տարածքով պարտեզներ, 2 տուն, բաղնիքի ավերակներ և ջրաղաց¹:

Սսի Մահմուդլը թաղամասում կաթողիկոսությանն էին պատկանում 2,6 հա տարածքով հողամասեր, իսկ Արսլան փաշա թաղամասում հողամաս և 400 մ² տարածքով տուն²: Միայն Սիս քաղաքում Կիլիկիայի հայոց կաթողիկոսության անշարժ գույքը 1921 թ. դրությամբ գնահատվում էր 116020 թ. և՛:

Գոգանի գավառի Թլան գյուղում կաթողիկոսությանը պատկանող 1000 հա տարածքի վրա էր գտնվում նշանավոր անասնագոմը, որի քարից կառուցված հսկայական ախոռներում պահվում էին 80 եզ, 50 կով, 30 շորի, ինչպես նաև այծերի ու ոչխարների անթիվ հոտեր, իսկ շենքերում և պահեստներում՝ շարժական գույք և գյուղատնտեսական մեքենաներ: Անասնագոմի շուրջը 10000 պտղատու ծառերով հսկայական ոռոգվող այգի էր³:

¹ Տե՛ս ՄՏԿԿԱ, Սահակ Բ. կաթողիկոսի ֆոնդ, հաաբաժոյ 21, ց. 1, թղթ. 26. հմմտ. նույնի՝ հաաբաժոյ 40, ց. 1, թղթ. 63:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում:

Ադանա քաղաքում Կիլիկիայի կաթողիկոսությանն էր պատկանում տարածքային փոստի և հեռագրատան ծառայության 500 մ² մակերես ունեցող մեծ շենքը, իսկ Զիհանի (- Զեյհան) գավառակում՝ 300 մ² մակերեսով տուն և 200 մ² հողամաս¹:

Մարաշի գավառակի Թերլիգեն գյուղում Կիլիկիայի կաթողիկոսությանն էին պատկանում 1,4 հա խաղողի այգիներ, 3000 մ² հողամասով պարտեզ, Այաքլըջա-Օլուխ գյուղում՝ 2000 մ² տարածքով հողամաս, տուն և 3000 մ² տարածքով խաղողի այգիներ, իսկ Սարի-Կայա գյուղում՝ 2000 մ² տարածքով խաղողի այգի: Մարաշ քաղաքում կաթողիկոսությունը տնօրինում էր վաճառատուն, 8 խանութ և խաղատուն²: Ընդհանուր առմամբ, Մարաշի գավառում Կիլիկիայի հայոց կաթողիկոսությանը պատկանող անշարժ գույքը գնահատվում էր 4265 թ. լ.:

Համադրելով Սիրիայում և Լիբանանում Ֆրանսիայի բարձրագույն հանձնաժողովում Կիլիկիայի հայկական խորհրդի նախկին նախագահ Զաքարիա Բեզիկյանի հուշագրի ցուցակների և Սահակ Բ կաթողիկոսի փաստաթղթերի տվյալները, կարող ենք արձանագրել, որ Ադանայի նահանգի Սիս և Ադանա քաղաքներում, Զիհանի գավառակում, Գոզանի գավառի Թլան գյուղում, ինչպես նաև Մարաշ քաղաքում ու Մարաշի գավառակում Կիլիկիայի հայոց կաթողիկոսությանը պատկանող անշարժ գույքի ընդհանուր արժեքը 1921 թ. դրությամբ գնահատվում էր 185 035 թ. լ.:

Սսի կաթողիկոսության անշարժ գույքի գնահատման բերված թվային տվյալներն ամենեկին չեն արտահայտում դրանց իրական արժեքը, քանզի գնահատողները միտում-

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս նույն տեղում:

նալոր այն ժամանակվա շուկայական գներից ցածր են գնահատել հողատարածքներն և շենք-շինությունները: Դրանից բացի, ներկայացվածը միայն կաթողիկոսարանի ունեցվածքն է և չի արտահայտում նրա ենթակայություն տակ գործող թեմերի ու համայնքների անշարժ գույքը, որն ամբողջությամբ մնաց թուրքական պետությանը կամ տեղի մահմեդական բնակչությանը: Ինչ վերաբերում է Սսի Կաթողիկոսության շարժական գույքին, ապա դրա արժեքը մոտավորապես կազմում էր շուրջ 9-10 մլն թուրքական ոսկի, ինչը համարժեք է 900-1000 մլն ԱՄՆ դոլարի¹: Ներկայումս այդ բռնագավթված կալվածքների եկամուտը ստանում են կա՛մ առանձին անհատներ ու կազմակերպություններ, կա՛մ էլ թուրքական պետությունը:

Սսի կաթողիկոսությունը նյութական կորուստներն է կրել նաև վարձակալության տրված իր տարածքների դիմաց չվճարումների հետևանքով: Այսպես, Սահակ Բ կաթողիկոսը Ադանայի Բուջակ թաղամասում Ս. Ստեփանոս եկեղեցուն պատկանող 20000 թուրքական լիրա գնահատված մոտ 1130 մ² հողատարածքը 1911 թ. 25 տարով վարձակալության էր տրամադրել «Orosdi-Back» ընկերությանը, որի գլխավոր գրասենյակը գտնվում էր Փարիզում: Հստ վարձակալության պայմանագրի, ֆրանսիական ընկերությունը պարտավորվել էր այդ հողատարածքի վրա 6000 թուրքական լիրայի տարեկան շրջանառությամբ առևտրի կենտրոնի եռահարկ շենք կառուցել: Ընկերությունը Սսի կաթողիկոսությանը հողատարածքի համար տարեկան խորհրդանշական 240 թուրքական լիրա պետք է վճարեր, իսկ 25 տարի անց կառուցված շինությունը պետք է փոխանցվեր կաթողիկոսությանը:

¹ K. Baghdjian, նշվ. աշխ., էջ 98-99:

Առաջին աշխարհամարտի սկսվելուց հետո ընկերությունը սկսեց չվճարել Սսի կաթողիկոսության խորհրդանշական վարձավճարը, իսկ 1921 թ. ֆրանսիացիների կողմից Կիլիկիան քեմալականներին հանձնելուց մինչև 1927 թ. 7 տարվա 1680 թուրքական լիրա վարձը վճարվել էր թուրքական իշխանություններին¹:

1927 թ. առևտրի կենտրոնի շենքի հրկիզվելուց հետո այն վերականգնելու մտադրություն չունեցող ֆրանսիական ընկերությունը դադարեցրեց նաև թուրքական իշխանություններին տարեկան վարձավճարների փոխանցումը: Առևտրի կենտրոնի շենքի հրկիզումից հետո «Orosdi-Back» ապահովագրական կազմակերպություններից 20000 ֆունտ ստերլինգի ապահովագրական հատուցում ստացավ և հեռացավ տնտեսական առումով անհեռանկար այդ տարածքից²:

Այդուհանդերձ, շենքի հրկիզումը «Orosdi-Back» ընկերությանը Սսի կաթողիկոսարանի առջև իր ստանձնած պարտավորություններից չէր ազատում, քանզի, վարձակալության պայմանագրի համաձայն, հրդեհի կամ որևէ այլ պատճառով շենքը քանդվելու կամ վնասվելու դեպքում «Orosdi-Back» ընկերությունը պարտավոր էր վերականգնել այն, հակառակ դեպքում պետք է վճարեր մինչև 1936 թ. հողատարածքի 25 տարվա վարձակալման ամբողջ գումարը՝ 6000 թուրքական լիրա³:

Ստեղծված իրավիճակում 1927 թ. օգոստոսի 25-ին Սահակ Բ կաթողիկոսը նամակ է ուղարկում Փարիզ՝ հայ գործիչներին խնդրելով զբաղվել «Orosdi-Back» ընկերություն-

¹ Տե՛ս ՄՏԿԿԱ, հաւաքածոյ 40, ց. 1, թղթ. 63:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում:

նից կաթողիկոսարանի հասանելիք գումարը վերադարձնելու հարցով: Համակողմանիորեն ուսումնասիրելով տվյալ գործը, Փարիզի հայ գործիչներից Թագվոր Փիլիպոսյանը մի տեղեկագիր է պատրաստում, որում իրավական բնույթի մի շարք խնդիրներ է առանձնացնում:

Յեղասպանության հետևանքով կայսրության հայ բնակչության, այդ թվում ադանահայերի բնաջնջումից ու տեղահանությունից հետո Ադանայի թեմի իրավատեր (լիազոր) մարմին այլևս գոյություն չունեն, ուստի Ֆրանսիական ընկերության հետ համաձայնության հասնելու նպատակով ի հայտ էր գալիս համայնքը ներկայացնող այլ մարմնի առաջ բերելու հարցը: Քանի որ Ադանայի թեմը գտնվում էր Սսի կաթողիկոսության ենթակայության տակ, ապա որպես թեմական ժողովի իրավահաջորդ մարմին կարող էր հանդես գալ Սիրիայում Կիլիկիայի հայոց կաթողիկոսի նախագահությանը գործող ժողովը՝ պայմանով, որ «Orosdi-Back» ընկերությունը տվյալ մարմինը համաձայնվի ճանաչել այդ կարգավիճակում: Տեղեկագրում փաստացի ակնարկվում էր, որ Ֆրանսիական կազմակերպությունը կարող էր շահարկել ջեղասպանության հետևանքով Ադանայի համայնքի այլևս գոյություն չունենալու հանգամանքը՝ համայնքի առջև ունեցած պայմանագրային պարտավորություններից խուսափելու նպատակով: Կանխատեսվում էր նաև, որ Ադանայի թեմին պատկանող հողատարածքի վարձավճարի վճարման պահանջի ներկայացման դեպքում «Orosdi-Back» ընկերությունը կարող էր առարկել, թե սեփականատիրոջ իրավահաջորդն իրավունք չունի պայմանագրի ժամկետը՝ 1936 թ. լրանալուց առաջ իրենից պահանջել հրկիզված շենքի վերականգնումը և/կամ վարձերի վճարումը:

Հիմնավոր կասկածներ ունենալով, որ ընկերության հետ շենքի վերականգնման շուրջ հնարավոր չի լինելու համա-

ձայնություն գալ, կարծիք էր հայտնվում, որ պետք է փորձել ընկերության հետ համաձայնության հասնել գոնե պայմանագրի ստորագրումից մինչև հրդեհն ընկած ժամանակահատվածի (1912-1927 թթ.), այսինքն՝ հողատարածքի 15 տարիների վարձը՝ 3600 թ.լ. ստանալու հարցի շուրջ: Այս մոտեցումը, սակայն, ֆրանսիական ընկերության կողմից նույնպես կարող էր չընդունվել, քանի որ, ինչպես նշվեց, հողատարածքի 1921- 1927 թթ. 7 տարվա 1680 թ.լ. վարձավճարը արդեն իսկ վճարել էր թուրքական իշխանություններին: Ստացվում է, որ ֆրանսիական ընկերության հետ իրական համաձայնություն կարող էր ձեռք բերվել միայն պայմանագրի ստորագրումից մինչև Կիլիկիայից ֆրանսիական զորքերի դուրսբերումը՝ 1913-1920 թթ. ժամանակահատվածի, այսինքն՝ 8 տարվա վարձավճարի գումարի՝ 1920 թ.լ. շուրջ: Վարձավճարի մնացած 1680 թ.լ. Սսի կաթողիկոսությունը պետք է փորձեր ետ ստանալ թուրքական իշխանություններից:

Քանի որ պայմանագրում նշում չկար այն մասին, որ հողի վարձը պետք է վճարվի օսմանյան ոսկեդրամով, ենթադրելի էր, որ «Orosdi-Back»-ը, Թուրքիայի և Ֆրանսիայի միջև ձեռք բերված պայմանավորվածությունների հիման վրա, ձգտելու էր վարձի վճարումը կատարել թղթադրամով, ինչի հետևանքով ստացվող գումարի արժեքը 7-8 անգամ նվազելու էր:

Թվարկված խնդիրներն արդեն իսկ հիմք էին տալիս եզրակացնելու, որ գործը կարող է լուծվել միայն դատական կարգով և իրատեսական էր համարվում, որ «Orosdi-Back» ընկերության պատասխանատուների հետ լավագույն դեպքում հնարավոր կլիներ պայմանավորվածություն ձեռք բերել գործը արբիտրաժին հանձնելու շուրջ: Միևնույն ժամանակ նշվում էր, որ հաշվի առնելով Կիլիկիայի կաթողիկո-

սության ծանր տնտեսական վիճակն ու կարիքները, չէր կարելի թույլ տալ, որ դատական ծախսերը գերազանցեին ակնկալվող գումարի $\frac{1}{4}$ -ը: Փիլիպոսյանին հանձնարարվել էր զբաղվել փաստաբան վարձելու հարցով, որպեսզի ընկերությանը հարկադրվեր հողի վարձը վճարել օսմանյան ոսկեդրամով¹:

Սահակ Բ կաթողիկոսին սեպտեմբերի 22-ին Փարիզից ուղարկված պատասխան նամակում ներկայացնելով Փիլիպոսյանի տեղեկանքը, հայտնվում էր, որ վերջինիս հանձնարարվել է զբաղվել փաստաբան վարձելու հարցով: «Orosdi-Back»-ի գործը արբիտրաժին հանձնելու գաղափարը Վեհափառի հավանությանն արժանանալու դեպքում խնդրվում էր իր նախագահության տակ գործող ժողովականների ստորագրությամբ և Հալեպի իշխանությունների վավերացմամբ լիազորագիր ուղարկել Թ. Փիլիպոսյանի անունով, որպեսզի վերջինս Փարիզում այդ հարցերով զբաղվելու համար իրավական հիմք ունենար:

Պատասխան նամակի բովանդակությունից ու դրա վերլուծությունից պարզ է դառնում, որ արբիտրաժի միջոցով «Orosdi-Back» ընկերությունից հնարավոր էր լինելու ստանալ Ադանայի թեմի հողատարածքի վարձակալության ընդհանուր գումարի միայն չնչին մասը, ինչը հազիվ բավարարելու էր դատական ծախսերը: Ստեղծված պայմաններում ծագում էր արբիտրաժի գործընթաց նախաձեռնելու նպատակահարմարության հարցը: Վերջին հաշվով, ֆրանսիական կազմակերպությունից վարձակալության գումարների վերականգնման կաթողիկոսության բազմաթիվ պահանջագրերը մնացին անպատասխան²:

¹ Տե՛ս ՄՏԿԿԱ, հաւաքածոյ 40, ց. 1, թղթ. 63:

² Տե՛ս K. Baghdjian, նշվ. աշխ., էջ 196-197:

Կիլիկիայի կաթողիկոսության գույքի բռնագրավման գործելաոճը շարունակվեց նաև թուրքական հաջորդ վարչակարգերի կառավարման տարիներին: 1939 թ. ֆրանս-թուրքական պայմանավորվածությունների հետևանքով Սիրիայի կազմում գտնվող Ալեքսանդրեթի սանջակը (գավառ) Թուրքիային հանձնելուց հետո հայ բնակչությունը լքեց սանջակը, քանի որ չէր ցանկանում կրկին հայտնվել թուրքերի գերիշխանության տակ: Սանջակից հայ բնակչության հեռանալուց հետո համայնքին և Կիլիկիայի հայոց կաթողիկոսության թեմին պատկանող կալվածքներն իբրև «լքյալ գույք» անցան թուրքական պետության տիրապետմանը, և 1940-ական թթ. ընթացքում թուրքական կառավարությունը սկսեց գանձել սանջակի հայկական կալվածքներից ստացվող վարձակալության գումարները:

1950 թ. հոկտեմբերի 29-ին Բերիո թեմի առաջնորդ Զարեհ եպիսկոպոսը նամակով դիմում է Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա-ին, հայտնելով, որ թուրքական նոր կառավարությունը Ալեքսանդրեթի սանջակի «լքյալ գույքերն» իրենց նախկին տերերին վերադարձնելու, ինչպես նաև 1939-1949 թթ. ընթացքում այդ գույքից գանձված վարձավճարները վերադարձնելու որոշում էր կայացրել: Դրա հիման վրա Հալեպի հույն կաթոլիկ եպիսկոպոսը մեկնել է Ալեքսանդրեթ և թուրքական պետությունից ստացել անցած տասը տարիների վարձերը, ինչից հետո քրիստոնեական մյուս համայնքները նույնպես սկսեցին քայլեր ձեռնարկել այդ ուղղությամբ: Սրբազանը Վեհափառին խնդրում էր կաթողիկոսության միաբաններից մեկին ուղարկել սանջակ՝ Կիլիկիայի կաթողիկոսությանը հասցված վնասների վերականգնման հարցերով զբաղվելու նպատակով¹:

¹ Տե՛ս ՄՏԿԿԱ, հաւաքածոյ 24, ց. 1, թղթ. 423:

Նամակին կցված Ալեքսանդրեթի սանջակի հայ ազգային կալվածքների ցուցակի համաձայն, Ալեքսանդրեթ քաղաքում հայկական համայնքին էր պատկանում Սբ. Քառասուն մանկանց եկեղեցին, ինչպես նաև Նուպարյան ազգային վարժարանն իր շինություններով և ընդարձակ բակով: Եկեղեցու շուրջը կառուցված էին 8 խանութներ, որոնցից երեքի տարածքը միացվել և գործում էր իբրև սրճարան, իսկ մյուս 5-ը՝ տրված էին վարձակալության: Խանութների երկրորդ հարկի չորս սենյակներում տեղակայված էր ազգային առաջնորդարանը: Համայնքին էր պատկանում Պողոս աղա Շամլյանի կտակած տունը և Զալ Մահալլեսի թաղամասում ևս մեկ տուն: Քաղաքից դուրս, Հալեպի ճանապարհի վրա էր գտնվում համայնքին պատկանող ազգային գերեզմանատուներ՝ թթաստանով և շրջակա հողատարածքով, որի վրա տուն և խանութ էր կառուցված:

Պեյլանում հայկական համայնքին էր պատկանում Սբ. Սարգիս եկեղեցին, հինգ սենյակից բաղկացած ազգային վարժարանի երկհարկանի շենքը: Եկեղեցուն կից էին գտնվում համայնքին պատկանող տունը, սրճարանը և պարտեզը: Սովուղ-Օլուղում համայնքն ուներ դպրոցի շենք, որը ծառայում էր նաև որպես եկեղեցի, 1000 մ² տարածքով հողամաս, որի վրա 2 խանութ էր կառուցված: Համայնքին էր պատկանում նաև եկեղեցի կառուցելու նպատակով Հակոբ Սարաֆյանից գնված 5000 մ² հողամասը: Ներկիչլիքում համայնքն ուներ ազգապատկան շենք, դպրոց, մատուռ և խանութ: Աթրգում համայնքին էր պատկանում Սբ. Խաչ եկեղեցին, դպրոցը, իսկ Պեյլանի ճանապարհի վրա կային արտեր, որոնց մի հատվածը պատկանում էր կաթողիկոսարանին, իսկ մնացածը՝ համայնքի անդամներին: Գրըրզ-Խան բնակավայրում համայնքի տնօրինության տակ էին գտնվում Աբ. Աստվածածին եկեղեցին, ընդարձակ բակով դպրոցը, սրճա-

րանը, 2 խանութ, 4-սենյականոց տուն, որը նախկինում որպես դպրոց էր ծառայում:

Անտիոքում հայկական համայնքը իր իրավունքն էր պահպանել դեռևս 1909 թ. կիլիկիահայերի կոտորածների ժամանակ այրված հին հայկական եկեղեցու և հարակից հողամասի նկատմամբ, ինչպես նաև տնօրինում էր նոր կառուցված դպրոցն իր հարակից հողամասով: Ռիհանիեում համայնքն ուներ եկեղեցի, իսկ Աբդուլ-Հյուսյուքում և Հայաշենում՝ մեկական դպրոց¹: Ցավոք, Ալեքսանդրեթի սանջակում Կիլիկիո կաթողիկոսությանը և հայկական համայնքին պատկանող կալվածքների վերաբերյալ Ջարեհ եպիսկոպոսի կազմած ցանկում բացակայում են ինչպես անշարժ գույքի գնահատման, այնպես էլ դրանց սեփականության վկայականների մասին նշումները:

Ալեքսանդրեթի սանջակում Կիլիկիո կաթողիկոսության բռնազավթված գույքի հետ կապված հարկ ենք համարում նշել, որ հույն կաթոլիկ եպիսկոպոսը հատուցում էր ստացել ոչ թե Ալեքսանդրեթի սանջակի հունական կալվածքների դիմաց, այլ թուրքական իշխանությունների կողմից դրանց վարձակալությունից 10 տարիների ընթացքում գանձված գումարները, ինչն, ամենայն հավանականությամբ, հաջողվել էր Հոռմի Պապի և սանջակը թուրքիային հանձնելու հարցում վերջինիս օժանդակած կաթոլիկ Ֆրանսիայի միջնորդությամբ: Ինքնին հասկանալի է, որ Հայ Առաքելական եկեղեցուն և հայկական համայնքին պատկանող գույքի վերադարձի կամ դրանցից գանձվող վարձավճարների հարցում կաթոլիկ եկեղեցին և Ֆրանսիան նույն աջակցությունը, իսկ թուրքական իշխանությունները՝ նույն բարյացկամությունը չէին դրսևորելու:

¹ Տե՛ս ՄՏԿԿԱ, հաւաքածոյ 24, ց. 1, թղթ. 423:

Ամփոփելով, պետք է արձանագրենք, որ Հայոց ցեղասպանության ընթացքում և դրան հաջորդող ժամանակահատվածում թուրքական իշխանությունների կողմից Սսի կաթողիկոսությանը հասցվեցին վիթխարի նյութական վնասներ և հոգևոր կորուստներ: Եւ եթե նյութական վնասները հնարավոր է հաշվարկել և դրա դիմաց հատուցում պահանջել, ապա հայ ժողովրդին և Հայ Առաքելական եկեղեցուն հասցված ահռելի հոգևոր կորուստներն անգնահատելի և անվերականգնելի են:

ИМУЩЕСТВО КАТОЛИКОСАТА СИСА И ЕГО ЭКСПРОПРИАЦИЯ ТУРЕЦКИМИ ВЛАСТЯМИ

Армен Марукян

РЕЗЮМЕ

Наряду с массовым истреблением армянского населения в Западной Армении и других армянонаселенных районах Османской империи, турецкие власти проводили политику массовой экспроприации имущества не только убитых или насильственно депортированных армян, но и недвижимость и все имущество Армянской Апостольской церкви. На основе изучения материалов, хранящихся в архивах Католикосата Великого Дома Киликии делается попытка хотя бы приблизительно представить ту недвижимость Католикосата Сиса, которая была экспроприрована турецкими властями и мусульманским населением как во время осуществления Геноцида армян, так и в последующие годы.

PROPERTY OF THE CATHOLICOSATE OF SIS AND ITS EXPROPRIATION BY TURKISH AUTHORITIES

SUMMARY

Along with the mass extermination of the Armenian population in Western Armenia and other Armenian-populated regions of the Ottoman Empire, the Turkish authorities pursued a policy of mass expropriation of the property of not only killed or forcibly deported Armenians but also the property and all property of the Armenian Apostolic Church. Based on the study of materials stored in the archives of the Catholicosate of the Great House of Cilicia, an attempt is made to at least approximately present the real estate of the Catholicosate of Sis, which was expropriated by the Turkish authorities and the Muslim population both during the implementation of the Armenian Genocide and in subsequent years.

Արմեն Մարուքյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի վարիչ: 60-ից ավելի գիտական հոդվածների, հայերեն, ռուսերեն և անգլերեն 10 գրքերի հեղինակ և փաստաթղթերի 4 ժողովածուների կազմող է: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են հայ ժողովրդի նոր և նորագույն շրջանի պատմության, մասնավորապես՝ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության հարցերը, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրները.

✉ mararmts@yahoo.com

Армен Марукян, доктор исторических наук, профессор. Заведующий отделом истории Армянского вопроса и Геноцида армян Института истории НАН РА. Автором более 60 научных статей, 10 книг на армянском, русском и английском языках, а также автором 4 сборников документов. В сферу научных интересов входят вопросы но-

вого и новейшего периода истории армянского народа, в частности, Армянский вопрос, история Геноцида армян, проблемы преодоления последствий Геноцида армян.

✉ mararmts@yahoo.com

Armen Marukyan, Doctor of Sciences in History, Professor, Head of the Armenian Question and Armenian Genocide History Department of the Institute of History of the National Academy of Sciences of the Republic of Armenia. Author of more than *60* scientific articles, *10* books in Armenian, Russian and English, and the author of *4* collections of documents. Within the scope of scientific interests are the issues of the new and most recent period of the history of the Armenian people, in particular, the issues of the Armenian question and the history of the Armenian Genocide, the problems of overcoming the consequences of the Armenian Genocide.

✉ mararmts@yahoo.com

**ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

Հիմնաբառեր՝ Գարեգին Հովսեփյան, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն, հայրապետ, հայագետ, բանագետ, բարբառագետ:

Ключевые слова: Гарегин Овсепян, Католикосат Великого Дома Киликийского, патриарх, арменовед, филолог, языковед.

Key words: Garegin Hovsepyan, Catholicosate of the Great House of Cilicia, patriarch, Armenologist, philologist, linguist.

Նախաբան: Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գ. Հովսեփյանը նշանավոր է նաև գիտակրթական գործունեությամբ: Անվանի աստվածաբանը բազմակողմանիորեն զարգացած անհատականություն էր¹: Տիրապետում էր մի քանի օտար լեզուների և Ղարաբաղի, Մոկսի և Մուշի բարբառներին: Հայերենագիտական գործերը երեք հիմնական ուղղություններով են՝ ա) բանահավաքչություն, բ) բանագիտություն և գ) լեզվաբանություն: Գրի է առել «Սասնայ ծռերի» պատումներ, ժողովրդական ստեղծագործություններ: Հեղինակ է բանագիտական և բարբառային տեսական դրույթների և բացահայտումների: Կազմել է Մոկսի բառապաշարի բառարան:

¹ Տե՛ս Մեղիճյան Ա., Գարեգին Ա. Հովսեփյան. երանաշնորհ հայրապետն ու մեծ գիտնականը, «ՎԷՄ», 2018, N 1-2-3, էջ I-XXIX, I-XV: <https://www.academia.edu/36741555/%D4%B3%D5%A1%D6%80%D5%A5%>

Հոգևոր, գիտակրթական գործունեությունը: Գանձասարի, Ամարասի Կուսապատի, Շուշիի հոգևոր կենտրոններում նախնական կրթություն ստացած, Մաղավուզի գյուղական կրթարանի 14-ամյա ուսուցիչ Գ. Հովսեփյանը գալիս է Գևորգյան ճեմարան ընդունվելու: Այդ մասին կենսագիրը գրում է. «Չորս օր բեռան կառքով ճամբորդելով՝ կը հասնի էջմիածին՝ բեռը ուսին, հնամաշ աշակերտական հագուստով»¹: Հետագա տարիները բազմաբովանդակ ու բազմադյուն ճանապարհներ են բացում ուշիմ պատանու առջև՝ Բեռլինի, Հալեի, Լայպցիգի, Վեսթֆալիայի, Բիլեֆիլտի կրթօջախներ, Մայր Աթոռի մատենադարանապետ, Երևանի թեմական դպրոցի, Գևորգյան ճեմարանի տեսուչ, «Արարատ» ամսագրի խմբագրապետ, ԽՀ Գիտությունց ինստիտուտի գիտական անդամ, Ալեքսանդրապոլի համալսարանի դոցենտ, պատմալեզվաբանական ֆակուլտետի դեկան, Երևանի համալսարանի հայ արվեստի և հնագիտության ամբիոնների վարիչ և այլն: Իր կատարած հսկայածավալ աշխատանքի մասին «Եղիշէի ձեռագիրների համեմատություն» գրքի ներածականում համեստորեն գրում է. «Մենք համարձակում ենք այս շնչին լուծան ձգել մեր մատենագրութեան գանձանակի մէջ»²: «Նոր գիր» հանդեսի խմբագիր Բ. Նուրիկյանին ուղղված խոսքերով բանաձևում է իր գործունեության առաջնահերթությունը. «Գրի և գրքի համար կատարուած աշխատանքը, կորցրած ժամանակն ու նիւթական

¹ «Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանց», Հրատարակութիւն Ամերիկայի հայոց առաջնորդարանի, Մեծի Տանն Կիլիկիոյ երանաշնորհ կաթողիկոսին մահուան 10-րդ տարեդարձին առթիւ, Նիւ Եորք, 1962, էջ 8:

² Գարեգին Սարկաազ, Եղիշէի ձեռագիրների համեմատություն, Վաղարշապատ, 1892:

գոհողութիւնը ամենագնահատելին է եւ յաւիտենականը, եւ բարիք ընդհանրութեան համար»¹:

Հայերենագիտական առաջին ուսումնասիրությունները կատարում է հետևյալ հիմնական ուղղություններով՝ ա) բանահավաքություն, բ) բանագիտություն և գ) լեզվաբանություն՝ լեզվի մասին դրույթներով և բարբառագիտության տեսություններ:

Բանահավաքչություն: Տակավին սարկավագ՝ էջմիածնում ուսուցչություն անելիս արժևորում է ժողովրդի խորիմաստ խոսքը: «Բանահիւսութիւնը ժողովրդական կեանքի հայելին է»², -սահմանում է նորընծա հոգևորականը: Այն համարելով հայոց պատմության կարևոր աղբյուր՝ գրի է առնում «Սասնայ ծռեր» դյուցազնավեպի նոր պատումներ և ժողովրդական այլ ստեղծագործություններ: Այդ մասին կարդում ենք. «Մէկ տարի կը ծառայէ իբրեւ սարկաւագ եւ իբրեւ ուսուցիչ՝ գիւղի դպրոցին մէջ, եւ յետոյ տպարանի մէջ տպուած գիրքերու որպէս սրբագրիչ: Նոյն շրջանին, ժողովրդական բանահիւսութեան իր հաւաքած նիւթերը երկու հատորով՝ «Սասնայ ծռեր» եւ «Փշրանքներ ժողովրդական բանահիւսութիւնից» կը տպագրուի Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերութեան կողմէ: Այս երկու գործերը պատճառ կ'ըլլան, որ Գարեգին Սարկաւագ ընդունուի իբրեւ սան Կովկասեան բարեգործական ընկերութեան, արտասահման

¹ «Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանց», հրատարակութիւն Ամերիկայի հայոց առաջնորդարանի, Մեծի Տանն Կիլիկիոյ երանաշնորհ կաթողիկոսին մահուան 10-րդ տարեդարձին առթիւ, Նիւ Եորք, 1962, էջ 21:

² Թիֆլիսի Ընկերութիւն հայերէն գրքերի հրատարակութեան, N 50, ժողովրդագրական նիւթեր, Գիւրգէն, «Սասնայ ծռեր», «Սասունցի Դաւիթ» ժողովրդական վեպի երկու նոր վարիանտներ (Աբարանի և Մոկաց բարբառներով), Գրի առաւ **Գարեգին Սարկաւագ**, Թիֆլիս, տպարան Մ. Շարաձէի, 1892, էջ Ե:

դրկուելու»¹։ Մ. Աբեղյանն արժևորում է նրա բանահավաք-
չական գործունեությունը և բանահյուսական նյութեր ու-
սումնասիրելու հակումը։ Այդ մասին նա գրում է. «Շնորհալի
Գարեգին սարկաւազն իւր ժողովածուի սկզբում դրել է մի
յառաջաբան, որի մէջ համառօտակի, բայց ամփոփ խօսում է
ժողովրդական գրականութեան-բանահիւսութեան նշանա-
կութեան մասին ազգային կեանքի ու լեզուի ուսումնասիրու-
թեան և գրականութեան առաջդիմութեան համար»²։ Թերթի
հաջորդ համարներում Մ. Աբեղյանը հանգամանորեն անդ-
րադառնում է «Փշրանքներ ժողովրդական բանահիւսութիւ-
նից»³ ժողովածուին, որում ընդգրկված են «ժողովրդական
վիպական երգեր՝ վիպերգեր, կրօնական, կէս կրօնական ու
կէս պատմական, մանկական, սիրոյ և ուրիշ կենցաղական
երգեր, ժողովրդական առակներ, աւանդութիւններ, անէծք-
ներ և օրհնութիւններ, հեքիաթներ», ինչպես նաև Ապարանի
տեղագրության, բնակիչների նիստուկացի, սովորույթների
ու ծեսերի, սնոտիապաշտության համառոտ նկարագրու-
թուններ, «որոնք լիառատ նիւթ են ներկայացնում ժողովր-
դական բանահիւսութեան ուսումնասիրութեան համար»⁴։

«Սասմայ ծոերի» առաջաբանում Գ. Հովսեփյանը ներ-
կայացնում է բանահյուսական նյութերի հավաքման իր եղա-
նակները։ Այդ մասին գրում է. «Մոկաց բարբառով մեր
գրած վարիանտները, երգերը, աւանդութիւնները գրի ենք
առել պանդուխտ մոկացիներից, թէև լեզուի մաքրութեան

¹ ԱՄՆ-ի կենսագրականը, էջ 8։

² «Նոր-դար», «Մատենախօսութիւն», Թիֆլիս, 1892, N 163, N 165։

³ Վեհափառ Հայրիկին, Թիֆլիսի Ընկերութիւն հայտէն գրէրի հրատարակութեան, N 56, «Ժողովրդագրական նիւթ», Գիրք Գ, «Փշրանքներ ժողովրդական բանա-
հիւսութիւնից», ժողովեց Գարեգին սարկաւազ Յովսէփեանց, Թիֆլիս, տպարան Մ.
Շարաձէ, 1892։

⁴ Վարսամ, «Մատենախօսութիւն», «Նոր-դար», Թիֆլիս, 1893, N 7, 8, 9։

մասին մեր ընթերցողներին երաշխաւորել չենք կարող, բայց ճշտիւ արձանագրելու համար արել ենք այն, ինչ որ կարող էինք»¹: Ապա, խոսելով «Սասմայ ծոերի» տարբերակների մասին, նշում է, որ Գ. Սրվանձտյանցի կողմից գրանցված է Մուշի, Մ. Աբեղյանի կողմից՝ Մոկաց տարբերակները, սակայն Սասունում կա նաև մի երրորդ տաբերակ, որը նախաձեռնում է գրի առնել, սակայն ավարտին չի հասցնում: Բանահավաքը փաստում է, որ Սասունի պատումում Սասունի բերդը կոչվում է «Մհերի տապան», որով տարբերվում է Մուշի և Մոկաց տարբերակներից: Ապարանի Զամրու, Ափնա և Ղազնաֆար գյուղերում ևս երեք տարբերակ գրառելուց հետո եզրակացնում է. «Այսպիսով տեսնում ենք, որ ընդունուած կարծիքի հակառակ՝ գաղթական ռուսահայոց մէջ ևս կան ժողովրդական բանահիւսութեան նշանաւոր մնացորդներ»²:

Բացի բարբառային նյութեր գրառելուց, հեղինակում է նաև բանագիտական տեսական դրույթներ: «Ազգագրական հանդէսում» տպագրում է «Ռուստամ Զալի» մի պատում՝ հրնթացս կատարելով արժեքավոր վերլուծություններ: Նա նկատում է, որ «Մեր բանահիւսութեան լաւագոյն կտորները մոկացոց ենք պարտական, ոչ միայն ազգային դիւցազներգութեան գեղեցիկ վարիանտներ, այլ և այնպիսի վիպական երգեր, ինչպէս «Ասլան աղէն», «Մուկաց միրգէն», «Նարեկացին», «Կարոս խաչը»: Դեռ ո՞վ գիտէ՝ ինչ թանկագին գոհարներ անյայտ են մեր բանասիրութեան»³:

Արժեւորելով Գ. Նարեկացու, Մ. Գոշի, Ն. Շնորհալու, Հ. Թլկուրանցու և միջնադարի այլ հեղինակների երկերում,

¹ «Սասմայ ծոեր», Գրի առաւ **Գարեգին սարկաւազ**, Թիֆլիս, 1892, էջ Թ:

² Նույն տեղում:

³ «Ռուստամ Զալ», ռուսումնասիրութիւն **Գ. Վրդ. Յովսէփեանի**, «Ազգագրական հանդէս», XII գիրք, Թիֆլիս, 1905, էջ 30:

ծննդյան տաղերում, գանձարաններում՝ հոգևոր երգերում և ողբերում առկա բանահյուսական նմուշները՝ կատարում է բնագիր-բանահյուսական տարբերակ տեքստային համեմատություն և բարբառագիտական ուրույն դիտարկումներ¹ : Գարեգին վարդապետը Պ. Կոստանյանցի² միջնադարյան ավետիսներից մի քանիսը համադրում է Մոկսի բարբառային տարբերակների հետ՝ զուգահեռներ անցկացնելով Ղարաբաղ-Ջանգեզուր բարբառատարածքի տարբերակների միջև: Ապա եզրակացնում է, որ «Ժողովրդական բանահյուսութեան հետ մեծ առնչութիւն ունին անշուշտ և տաղարանների մէջ պատահած առակները (ՃԱՇԽԱ): Բանահիւսութեան այս տեսակը տարաբաղդաբար մեր բանահաւաքների կողմից առանձին ուշադրութեան չէ արժանացել: Մեր ժողովրդի մէջ գործածուող առակներից կարելի է մի ստուար հատոր կազմել, որից ապագայ Կռիլովը Գոշ Մխիթարի և Վարդանի առակների հետ հարուստ նիւթ կունենար ձեռքի տակ»³:

Բանագիտություն: Գ. Հովսեփյանի բանագիտական գործունեությունը համակողմանիորեն բնութագրում է Ս. Հարությունյանը: Արժևորելով մտավորական-հոգևորականի կողմից Մոկսի և Ապարանի ժողովրդական բանահյուսության ինքնատիպ նմուշների, փոփոխականների գրառումը՝ Ս. Հարությունյանը փաստում է, որ դրանք «...աչքի են ընկնում ոճաբարբառային յուրահատկությունների պահպանության խիստ ճշգրտությամբ ու հարազատությամբ, բանահյուսա-

¹ Գարեգին վարդ. Յովսէփեան, Ժողովրդական բանահիւսութեան հետեւեւ միջնադարեան տաղարաններում, «Արարատ», 1898, էջ 544-551, 1899, էջ 44-47:

² Կոստանեանց Պ., Նոր ժողովածու, Ա. պրակ, Միջնադարեան հայոց տաղեր եւ ոտանատօներ, Թիֆլիս, 1892:

³ Գարեգին վարդ. Յովսէփեան, Ժողովրդական բանահիւսութեան հետեւեւ միջնադարեան տաղարաններում, «Արարատ», 1898, էջ 547:

կան նյութերի գիտական մատուցման պատշաճ որակով: Երկու ժողովածուն էլ օժտված են մի ընդհանուր առաջաբանով, բարբառային բառերի բացատրություններով ու բառարանով: Իսկ երբ նկատի ենք առնում, որ երիտասարդ բանահավաքի երկու ժողովածուն էլ հրապարակ եկան այն ժամանակ, երբ ասպարեզում ազգագրական-բանահյուսական ժողովածուները հազվադեպ էին, ապա պարզ է դառնում գիտա-պատմական այն մեծ արժեքը, որ ունենալու էին և իրոք ունեցան Հովսեփյանի գրքերը հայ բանագիտության պատմության համար»¹:

Բանագիտական սահմանումներ կատարելու առումով արժեքավոր է «Սասմայ ծոերի» «Յառաջաբանը»², որում գրում է. «Եւրոպական ազգերի գրականութեան մէջ ժողովրդական բանահիւսութիւնը նշանաւոր տեղ է բռնում. նոքա՝ իբրև քաղաքակրթութեան աւելի բարձր աստիճանի ազգեր՝ շուտ կարողացան ըմբռնել ժողովրդական բանահիւսութեան արժէքը, ուստի և ոչ մի ջանք չխնայեցին կատարելապէս ուսումնասիրելու այդ առարկան և օգտաւէտ գիտութիւնների շարքը դասելու»³: Ապա հավելում է, որ XIX դարի վերջում ժողովրդական բանահյուսությունը գրավում է գիտական աշխարհի հետաքրքրությունը: «...ժողովրդական ստեղծա-

¹ Հարությունյան Ա., Գարեգին Հովսեփյանը որպէս բանագետ (ծննդյան 100-ամյակի առթիւ), ՊԲՀ, 1968, թիվ 1, էջ 150:

² «Սասմայ ծոեր», Գրի առաւ Գարեգին սարկաազ. Թիֆլիս, 1892:

³ Նույն տեղում, էջ 4: Ասում է Գրիմ եղբայրների «ջանքերով ժողովրդական բանահիւսութիւնը արհամարհանքի աստիճանից լուրջ գիտութիւնների կարգը բարձրացաւ»: Հատկապէս արժանաւոր է բանահյուսության դերը գեղարվեստական գրականության մէջ: Ռուս լեզվաբան, բանագետ, տրամաբանական ֆեռականության ներկայացուցիչ Ֆյոդոր Բուսլակի տեսական դրույթների հիման վրա կատարում է բանագիտական սահմանումներ՝ երբեմն տեղին հղումներ կատարելով նրա «Ռուս ժողովրդական բանահյուսության և արվեստի պատմական ակնարկներ» (հ. 1-2, 1861) գրքից:

գործությունը և՛ անհատի, և՛ բազմության ներքին աշխարհի յայտարարն է»,-բանաձևում է Գարեգին սարկավազը՝ բանասացի խոսքի տպավորիչ և ազդեցիկ լինելը համեմատելով քարոզչի խոսքի հետ¹:

Մոկսի տարածքի երգերի լեզուն ավելի մաքուր և վստահելի է համարում, քանի որ մոկացին չի կրել լեզվական այլ ազդեցություն: Մեկնաբանում է նաև «Սասմայ Ծռեր» վերնագիրը, որը նախընտրելի է, քանի որ գործող անձինք շատ են, իսկ «Սասունցի Դաւիթ կամ Մհերի Դուռ», «Դաւիթ և Մհեր» վերնագրերը սահմանափակում են ասքը:

Բանագիտական դիտարկումներ և բնագրերի հիմնավոր վերլուծություններ կան «Արարատ» հանդեսի «Հայագիտական այլ եւ այլք»² վերնագրով հոդվածաշարում:

Լեզվաբանություն: Գ. Հովսեփյանի լեզվաբանական հետաքրքրություններն ընթանում են երկու ուղղությամբ՝ 1) լեզվի մասին ընդհանուր դրույթներ և 2) բարբառագիտություն:

Հետաքրքրական են հայերենին, լեզվական փոխազդեցություններին նվիրված մտածումները: Այսպես, նա գրում է. «Օտար ազդեցությունների ստրուկ լեզուն օտար դարձուածներով և բառերով այլանդակուած լեզուն անկարող է ծառայել իւր բարձր կոչմանը՝ միութեան կապ և քաղաքակրթութեան արդիւնքների մատակարար դառնալ բազմաբարբառ ժողովրդի անդամների մէջ» կամ «աղքատ և անմշակ լեզուով չի կրող արդիւնաւորուել տաղանդը»³ : Նա նշում է, որ

¹ Էպոսը համեմատում է «Իլիականի», «Ռիլանդի երգի», «Ռուստամ Զալի», «Համլետի» հետ, որոնց հիմքում ընկած են ազգային պատմությունն ու ավանդույթը: Վկայաբերում է Վեսելովսկուն՝ «ժողովրդական բանաստեղծական գրականությանը կարելի է պատմություն գրել»:

² «Արարատ», 1914, էջ 919-926, 1915, էջ 211-219: Նվիրված է Հ. Երզնկացուն, Աշոտ և Նաղաշ Հովնաթանյաններին, Գրիգոր Շիրայակիին և այլոց:

³ Նշվ. աշխ., էջ 9:

լեզվի զարգացումը թռիչքաձև չէ, և այն զարգանում է աստիճանաբար՝ լեզվական օրենքների հիման վրա՝ լեզուաբանական գիտությունը:

Բարբառագիտություն: Բարբառակիր հոգևորականը արժևորում է բարբառագիտության հիմնադիրներ Ա.Այտրնյանին և Ք.Պատկանյանին, որոնք «ցոյց են տուել բարբառների հնությունն ու անկախությունը գրաբարից և նույն իսկ նոցա ազդեցությունը գրաբարի վերայ»¹: Նրա համար ելակետային է Ք. Պատկանյանի հետևյալ միտքը. «Ժողովրդական բարբառները անսպառ աղբիւր են բանաստեղծի համար լեզուն հարստացնելու. նա ոչ միայն բառեր, դարձուածներ կ'առնի իւր լեզուն ճոխացնելու համար, այլ և խորասուզուելով կենդանի բարբառի մէջ՝ նորա ոգու համաձայն ինքն էլ կը ստեղծէ նոր-նոր բառեր ու դարձուածներ»²:

Բարբառների առաջացման, գրական լեզվի հետ կապի մասին գրում է. «Մեր երկրի բնական և քաղաքական հանգամանքները բազմաթիւ բարբառներ են ստեղծել, որոնք, մի ընդհանուր ծագում ունենալով հանդերձ, ունին և այնպիսի առանձնություններ, որ ուսումնասիրութեան անհրաժեշտ նիւթ պիտի լինին: ... Բարբառների իսկական արժէքը այն է, որ դոքա աղբիւր են նոր լեզուն հարստացնելու և կանոնաւորելու համար, բարբառների բազմազանութիւնը լեզուի ապագայ զարգացման գրաւականն է, իսկ գրական լեզուի զարգացումը՝ ազգայնութեան մտաւոր և բարոյական յառաջադիմութեան խթանները»³: Նա գրական լեզվի զարգացման պայման է համարում ժողովրդական բարբառների ուսումնասիրությունը և ժողովրդական բառերի և դարձ-

¹ «Սասմայ ծոե», Թիֆլիս, 1892, էջ է:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

վածքների բառարանի ստեղծումը: «Բարբառների ուսումնասիրությունը լեզուաբանական տեսակէտից մեծ նշանակութիւն ունի գրական լեզուի քերականութիւնը կանոնաւորելու համար, բարբառները իրենց քերականական ձևերով և կանոններով աւելի հաստատուն են և միջոց են ըմբռնելու գրական լեզուի ոգին»¹: Կարևորում է նաև համեմատական լեզվաբանությունը, որը հնարավորություն է ընձեռում բարբառները համեմատելու և հնդեվրոպական լեզվաընտանիքում հայոց լեզվի տեղը որոշելու: Բարբառային լեզվի ուսումնասիրությունը կարևորում է նաև ժողովրդական երգերի տաղաչափության և բանահյուսական տարբեր նմուշներ ուսումնասիրելու առումով: Նա նկատում է, որ «Բանահյուսութիւնը պատմական աղբիւր է ոչ միայն իւր բովանդակութեամբ, այլ և լեզուի կողմից, շատ անգամ բարբառներում պատահում են այնպիսի բառեր և դարձուածներ, որ խորին հնութեան հետքեր են բովանդակում իրենց մէջ»²:

Գ. Հովսեփյանի գրի առած երկու ժողովածուներն էլ պարունակում են բարբառային նյութի քննություն: Մուշի բարբառի Ապարանի խոսվածքով «Սասմայ Ծներ» տարբերակի գրառումն ունի տողատակային բացատրություններ, որոնք նշում են ոչ միայն երեք գյուղերի փոփոխակաների միջև առկա տարբերությունները, այլև ներկայացնում են Ապարանի խոսվածքի հնչունական և քերականական առանձնահատկությունները³: Տողատակերը ի մի բերելով՝ կարելի է գաղափար կազմել վերոնշյալ գյուղերի՝ 1892 թ. գործող բարբառային հատկանիշների մասին: Բարբառագիտական այս դիտարկումները և տեքստերին կից բառաբա-

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում, էջ 9:

³ Նույն տեղում, էջ 13-60:

ցատրությունները կարելի է միավորել և կազմել բարբառային աշխատություն՝ հետևյալ կարևոր եզրակացություններով. «Աբարանի բարբառը Մշոյ բարբառի մի ստորաբժինն է. ընդհանուր բարբառների մէջ արևմտեան բարբառների շարքում պիտի դասել իւր հնչման և քերականական կազմութեան պատճառով: Ուշագրութեան արժանի է այս բարբառի մեծ նմանութիւնը գրաբարի հետ. մեր հին լեզուի ծագումը բոլորովին պարզուած չէ. եթէ Արարատեան և Մշոյ բարբառները համեմատենք գրաբարի հետ, աւելի սերտութիւն դէպի վերջինն ենք նկատում»¹: Հնչունական և քերականական հատկանիշները մեկնաբանվում են բարբառային օրինակներով: Այսպես՝ «Այս բարբառում իւ երկբարբառը ու-ի է փոխում, օր. ուր, սում, ձում, առում, երկուդ, ալուր, աշուր, արում»: «Բառի սկզբում ե միշտ է է դառնում. օր. երկու, երկիր, երդիկ, երկէն, Եկեղեցի, երեխայ, երկանք, երուսաղէմ, էդ, երես»: «Ա ձայնաւորը երբեմն ը-ի է փոխում. օր. ըբա (<ապա>), ըհա, ըղուդ (ուրիշ բարբառներում՝ աղուդ), ըմեն, բընց, յըր (<յար>): «Ե ձայնաւորը շատ բառերում ը է դառնում, օր. մըր, ձըր, վըր (<վրայ>), կըղտոտել, չընք (<չենք>), ըղումք» (տտ 14): «Ոյ երկբարբառը բառի մէջ միշտ ու է դառնում, օր. լուս, քուր, նկուք, անուշ, բում (<բոյն>): «Նախագրութիւնները շատ անգամ գրաբարի նման են դրում. օր. եղև անցման, կիգան յառէ ձըգի, Աստուած խըտ քըգի եղի, տղեն գնաց մըչ քաղքին ժոտ գալու, վըր իմ գլխում, վըր իմ երեսին և այլն»: «Ա-ի է փոխուելը սովորական երևոյթներից մէկն է այս բարբառում. օր. յառէչ, Եվել (աւելի), Էնել, կէր»: «Ա ձայնաւորը երբեմն փափկանում է և եա երկբարբառին մօտենում. օր. քեանի»: «Այ երկբարբառը բառի մէջ և բառի վերջը, եթէ դիմորոշ յօդ

¹ Նույն տեղում, էջ Թ:

ունի, է է դառնում, օր. հեւ, մեւ, ախպեւ, բել, փէտ, ձօն, վերու (<վայրենի), վրէն, տըղէն, Էրեխէն, փեսէն»։ «Անցեալ անկատարի մէջ ի ձայնաւորը զեղչուած է բոլոր դէմքերում» (հաց կտանէն <կտանէին)։ «Բառի սկզբում ուն միշտ օ է դառնում, օր (<որ), օսկի, օտ, օխշար, օղորմոստեն»։ «Նախդիրների գործածութիւնը գրաբարի նման՝ սովորական է այս բարբառում, օր. գնաց հասաւ ի փաղափ, նախիր փշեց ի սար, գացին ի Ղարս. մինչև իսկ պահպանուել է նախդրի փոփոխութեան կանոնը, օր. գէղ խօսքն ըսեց, զթագաւորի ախշիկ կուզիմ իմ տղին, զիմ տէր կսաղցում»։ «Երբեմն յատկացուցիչը յատկացեալից յետ է դրուում գրաբարի նման, օր. շարեց ի նակատ ուրանց, հաց ուրանց կերան»¹։

Մոկսի բարբառով գրառված «Սասմայ ծռերի»² տողատակերում բանագիտական մեկնաբանութիւններից և համեմատութիւններից բացի, կան բառերի և բառակապակցութիւնների, բանաձևային արտահայտութիւնների բացատրութիւններ՝ թվով 450։ Ըստ այսմ՝ կարող ենք ասել, որ Գ. Հովսեփյանը կազմել է Մոկսի գործուն բառապաշարի բառարան։ Այս պատումը հնչյունական և քերականական մեկնութիւններ չունի։ Բարբառագիտական առումով արժեքավոր է նաև «Փշրանքները», որում Մոկաց երգերի և «Ժողովրդական առակների» բառերի մեծ մասը բացատրութիւններով են՝ թվով 130³։ Բանահյուսական երկրորդ ժողովածուում ներառված են՝ «Աւանդութիւններ», ազգագրական նյութ՝ «Աբարանի կեանքից», տոնական, հարսանյաց,

¹ Տե՛ս Նույն տեղում, էջ 13-60։

² Նույն տեղում, էջ 61-151։

³ «Փշրանքներ ժողովրդական բանահիստութիւնից», ժողովեց Գարեգին սարկաազ Յովսէփեանց, Թիֆլիս, 1892, էջ 3-30։

աշխատանքային երգեր, հանելուկներ, անեծք-օրհնանքներ, «Հէքիաթներ», «Բառարան (Աբարանի բարբառով)»:

«Ժողովրդական բանահյուսության տարբեր ու բազմազան բարբառներով հորինված նմուշները Հովսեփյանը համարում է հայ բարբառագիտության և առհասարակ հայոց լեզվի պատմության ուսումնասիրման անզնահատելի վավերականներ»¹, - հավաստում է բանագետ Ս. Հարությունյանը:

Այսպիսով, Հայոց հայրապետների շարքում իր ուրույն տեղն ունի մեծանուն հոգևորական և խորագետ մտավորական Գ. Հովսեփյանը, որը հեղինակ է գիտական հարուստ ժառանգության: Թերևս պատահական չէ, որ համընկնում են նրա ավագանի և հոգևոր անունները, քանի որ նրա կյանքը հավասարապես նշանավորվում է և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր-եկեղեցյանվեր մեծագործություններով: Ծանրակշիռ է նաև նրա հայերենագիտական ավանդը: Լինելով արևելյան խմբակցության Ղարաբաղի բարբառի կրող՝ տիրապետում էր ոչ միայն մի քանի օտար լեզուների (ռուսերեն, թուրքերեն, գերմաներեն, անգլերեն, արաբերեն, ֆրանսերեն և այլն), այլև քաջագիտակ էր արևմտյան խմբակցության Մոկսի և Մուշի բարբառներին: Ինչպես ասում է Նորին Սրբություն Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, «Պատմութեան մէջ մեծութիւններ կան, որոնք լոյս կը դառնան, լոյս կը մնան պատմութեան յուշերու դիմաց: Անոնք իրենց հոգեմտաւոր ստեղծագործութեամբ վեր են պատմութեան հոգուց: Այսպիսին եղաւ և այսպիսին մնաց Գարեգին Յովսէփեանց Կաթողիկոսը»²:

¹ Հարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 151:

² <http://ter-hambarzum.net/metci-tann-kilikio-garegin-hovsephyan-kathoghikosin-shnorhandes/>

АРМЕНОВЕДЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ КАТОЛИКОСА Г.ОВСЕПЯНА

Айкануш Месропян

РЕЗЮМЕ

Католикос Великого Дома Киликийского Г. Овсепян известен научной и просветительской деятельностью. Знаменитый богослов известен также как искусствовед, библиограф, литограф, фольклорист, лингвист и т.д. Будучи уроженцем Арцаха, он знал несколько иностранных языков, а так же диалекты Мокса и Муша. Еще в студенческие годы Г. Овсепян проявил интерес к науке и в последние годы своей учебы опубликовал несколько научных статей в журнале «Арарат». Его первыми фольклорными и диалектологическими трудами стали армянский эпос «Сасма црер» и «Крошки из народной фольклористики», в которых он сделал новых открытий в области арменоведения. Он также является автором научно-теоретических вопросов и диалектологических выводов. Условием развития литературного языка он считает изучение диалектов и создание словаря популярных слов и выражений. Составил словарь лексики Мокса.

ARMENIAN STUDIES OF CATHOLICOS GAREGIN HOVSEPYAN

Haykanush Mesropyan

SUMMARY

Catholicos of the Great House of Cilicia G. Hovsepyan is known for his scientific and educational activities. The famous theologian is also known as an art critic, bibliographer, lithographer, folklorist, linguist, etc. Being a native of Artsakh, he knew several foreign languages, as well as the dialects of Moks and Mush. Even in his years, G. Hovsepyan showed

interest in science and in studies recent years he published several scientific articles in the journal «Ararat». But his serious scientific and dialectology works were Armenian epic “Sasma Crer” and “Crumbs from folklore”, in which he made new discoveries in the field of Armenian studies. He is also the author of scientific and theoretical questions and dialectological conclusions. He considers the study of dialects and the creation of a dictionary of popular words and expressions as a condition for the development of a literary language. Compiled a dictionary of Moks vocabulary.

Հայկանուշ Մեսրոպյան, բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ, բարբառագետ, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստ. առաջատար գիտաշխատող:

✉ haykanushm@mail.ru

Айкануш Месропян, доктор филологических наук, доцент, диалектолог, ведущий научный сотрудник института языка имени Р. Ачаряна НАН РА.

✉ haykanushm@mail.ru

Haykanush Mesropyan, Doctor of Philology, Associate Professor, dialectologist, Leading Research Fellow at the Institute of Language after R. Acharyan of the National Academy of Sciences of the Republic of Armenia.

✉ haykanushm@mail.ru

էդիկ Մինասյան

**ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ
ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ
ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-2018 ԹԹ.)**

Հիմնաբառեր՝ հայունիներ, հասարակական կյանք, կրթամշակութային ոլորտ, հոգևոր արժեք, օրիորդաց դպրոցներ, հայունիների բարեգործական ընկերություն, Թամարա և Ժենյա Ադամյաններ, Նատալյա և Սաթենիկ Մատինյաններ:

Ключевые слова: армянские женщины, общественная жизнь, образовательная и культурная сфера, духовная ценность, женские школы, армянское женское благотворительное общество, Тамара и Женя Адамяны, Наталья и Сатеник Матиняны.

Keywords: Armenian women, public life, educational and cultural sphere, spiritual value, women's schools, Armenian Women's Charitable Society, Tamara and Zhenya Adamyans, Natalya and Satenik Matinyans.

Հայոց անկախության վերականգնումը ամբողջ հայ ժողովրդի, այդ թվում Հայ Առաքելական Եկեղեցու, հոգևորականության նվիրական երազանքի իրականացումն էր: Հայոց եկեղեցին իր ժողովրդի հետ միասին աշխուժորեն մասնակցեց նվաճված հաղթանակներին, հանրապետության կայացման ողջ գործընթացում:

Արցախյան ազատամարտի առաջին իսկ օրերից բազմաթիվ հայ հոգևորականներ զինվորագրվեցին հերոսամարտին, մասնակցելով պաշտպանական ու ազատագրական մարտերին: Նրանք մարտերից առաջ վերցնելով խաչը՝ մկրտում էին չկնքված մարտիկներին և զենքը ձեռքին

մտնում կռվի դաշտ: Արցախյան մարտադաշտերում 1991-1994 թթ. ընթացքում իրենց անունը փառքով պսակեցին Արցախյան թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, Վրթանես վարդապետ Աբրահամյանը Հովհաննես քահանա Հովհաննիսյանը, Ռաֆիկ սարկավազ խաչատրյանը, Գրիգոր քահանա Մարկոսյանը, Կորյուն քահանա Կարապետյանը, Վահան վարդապետ Դավթյանը, Արմեն դպիր Թովմասյանը և ուրիշներ, որոնք պարզևատրվեցին ԼՂՀ ջբանշաններով ու մեղալններով: Պատերազմում հոգևորականությունը ևս ունեցավ անդառնալի կորուստներ, զոհվեցին Վահան վարդապետ Դավթյանը, Ռաֆայել սարկավազ խաչատրյանը և Արմեն դպիր Թովմասյանը¹: Արցախին սատարելու նպատակով Հայոց եկեղեցին Վազգեն Ա կաթողիկոսի նախաձեռնությամբ բուռն գործունեություն ծավալեց արտերկրում, դիմեց միջազգային հեղինակավոր կրոնական կազմակերպություններին՝ եկեղեցիների համաշխարհային խորհրդին, Եւրոպայի եկեղեցիների համաժողովին (conference), տարբեր պետությունների ղեկավարներին՝ խնդրելով տնտեսական օգնություն ցույց տալ շրջափակման մեջ գտնվող Արցախին ու Հայաստանին: Նման գործունեության արդյունքում միայն 1992 թ. ԱՄՆ-ի երկու թեմերից Արցախին աջակցելու համար հանգանակվել էր 6 մլն. դոլար²: Չնայած բարդ ու լարված իրավիճակին՝ հանրապետության նորընտիր իշխանությունների հետ միասին Հայոց

¹ Առավել մանրամասն տե՛ս Պ. արքեպ. Մարտիրոսյան, Մ. Հաւորայեան, Արցախյան թեմը և Ադրբեջան-Արաբաղ հակամարտությունը, «Հայկական բանակ», 2011, հ. 1-2 (27-28), էջ 184-88:

² Տե՛ս էդ. Մինասյան, «Հայ Առաքելական եկեղեցին անկախության և հանրապետության կայացման ժամանակաշրջանում» Աստվածաբանության ֆակուլտետի «Տարեգիրք», Գ, 2008, էջ 346:

եկեղեցին իր մասնակցությունը բերեց պետական-հասարակական կարգը բարեփոխելու քաղաքականությունը:

Հայ Առաքելական եկեղեցին ազգային եկեղեցի ճանաչելու և նրա դավանանքը ազատ քարոզելու ու տարածելու գործում կարևոր նշանակություն ունեցավ 1991թ. հունիսի 17-ին ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունած «ՀՀ-ում խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը: Դրանով Հայոց եկեղեցին և չնայած առաջացած տարիքին հայոց առաքելական եկեղեցու առաջնորդ Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսն իր անգնահատելի ներդրումն ունեցան թե՛ Արցախյան շարժման ու Արցախյան Ազատամարտի և թե՛ Հայաստանի անկախության վերականգնման մեջ: Դեռևս 1988 թ. փետրվարի 25-ին Հայոց հայրապետը Արցախը խորհրդային Հայաստանին վերամիավորելու հարցով դիմել էր ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովին¹: Նամակում մասնավորապես շեշտվում էր Արցախի հայության իրավական առումով արդարացի պահանջը դուրս գալու Ադրբեյջանի կազմից²: Բացի վերոնշյալ նամակից՝ նա նույն խնդրով դիմել էր նաև Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարքին ակնկալելով խնդրի լուծում³: Իր ժողովրդի արդարացի պահանջները խորհրդային ղեկավարներին հասցնելու նպատակով Մոսկվայում նույն թվականի սեպտեմբերին նա նույնիսկ դիմեց խորհրդանշական հացադուլի՝ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի, հրապարակագիր Զորի Բալայանի և այլոց կողքին:

1988 թ. նոյեմբերի 26-ին Ամենայն Հայոց Հայրապետը նորից է դիմում ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովին Կի-

¹ Տե՛ս «Վազգեն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց», Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008, էջ 7:

² Տե՛ս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվ, Գործ N 444, փետրվարի 25, 1988:

³ Տե՛ս նույն տեղում, Գործ N 444, փետրվարի 26, 1988:

րովաբաղի շուրջ քառասուն հազար հայերի ադրբեջանական իշխանությունների մահվան սպառնալիքից փրկելու հարցով¹։ Այս անգամ ևս նա օգնություն էր ակնկալում Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարքից, որպեսզի չկրկնվեր Սումգաիթում ամիսներ առաջ իրականացված հայերի ցեղասպանությունը²։

1989 թվականին, երբ Արցախի շուրջ ծավալված հակամարտությունը հասել էր գագաթնակետին, իսկ Մ. Գորբուշովի վարչակարգն անթաքույց օժանդակում էր մեր նենգ հակառակորդին, Վազգեն կաթողիկոսը Հայրապետական կոնդակով վավերացրեց և վերահաստատեց Արցախի թեմը³, որը ադրբեջանական իշխանությունների ճնշումներով լուծարվել էր 1933 թվականին։ Կաթողիկոսը թեմի առաջնորդ նշանակեց Պարգև եպս. Մարտիրոսյանին, որի եռանդուն գործունեությամբ թեմը վերագարթնեց⁴։ Ժամանակի քաղաքական եղելությանը քաջաժանոթ լինելով՝ այժմ կարող ենք համարձակորեն ասել, թե ինչ աստիճանի համարձակություն ու հերոսական կամք էր այդ քայլը։ Նաև պետք է արժ-

¹ Տե՛ս նույն տեղում, Գործ N 444, նոյեմբերի 26, 1988 (ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովին)։

² Տե՛ս նույն տեղում, Գործ N 444, նոյեմբերի 26, 1988 (Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարխ Պիմենին)։

³ Հատկապես նշելի է նորաբաց թեմերի հանգամանքը, որով նկատելի է Նորին Վեհափառության վերաբերմունքն ու սկետուն ուշադրությունն աշխարհի տարբեր մասերում ձևավորվող հայկական նոր համայնքների նկատմամբ։ Այս առումով վեհափառը նախաձեռնել էր այդ տարածաշրջաններում ստեղծել հոգևոր կենտրոններ ու թեմական վիճակներ։ 1984 թ. վեհափառը կոնդակով հայտարարում է Կանադայի հայկական նոր թեմի բացումը, նույն տարում կազմավորվում են նաև Արգենտինայի, Բրազիլիայի և Ուրուգվայի թեմերը, 1989 թվականին՝ Արցախի թեմը։ 1991-ին հիմնվում է Ուկրաինայի թեմը, 1992-ին՝ Գերմանիայի և Շվեյցարիայի թեմերը։

⁴ Առաջնորդամիստր Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրիչ եկեղեցին էր։ Այն ընդգրկում էր ԼՂՀ տարածքը և հարակից հայկական շրջանները։

և որել այդ իրադարձության իրական նշանակությունն ար-
ցախյան գոյամարտում: Վազգեն Ա-ն իր բողոքի ձայնը
բարձրացրեց նաև, երբ Ադրբեջանի հայատյաց իշխանութ-
յունները փորձեցին վերստին փակել Արցախում վերաբաց-
ված Գանձասարի և Ամարասի պատմական վանքերը:

Վազգեն Ա-ն մի առանձին ջերմությամբ օրհնեց Հայաս-
տանի անկախության վերականգնումը 1991թ. սեպտեմբերի
21-ին, ինչպես նաև վասն հավատո և հայրենյաց մղվող Ար-
ցախյան ազատամարտի հայ զորականներին: Նրան բախտ
վիճակվեց ականատես լինելու հայոց նորագույն պատմութ-
յան փառապանծ երկու իրադարձություններին՝ հայրենա-
կան անկախ պետականության վերականգնմանն ու Արցա-
խի ազատագրմանը:

Իր գահակալության վերջին տարիներին՝ խորհրդա-
յին իշխանությունների հարուցած խոչընդոտների անհետա-
նալուց հետո, ազգի հոգևոր կարիքները բավարարելու հա-
մար Վազգեն Ա-ն մեծ թափ հաղորդեց հոգևորականների
պատրաստման անհետաձգելի գործին: Երկրորդ ծնունդ
ապրեց Հոգևոր ճեմարանը: Վազգեն Ա օրհնությամբ և Արա-
րատյան Հայրապետական թեմի Առաջնորդական Փոխա-
նորդ Գարեգին Արք. Ներսիսյանի (հետագայում՝ Գարեգին Բ
Ամենայն Հայոց Կաթողիկոս) նախաձեռնությամբ Սևանի
թերակղզում 1990 թվականին բացվեց հոգևոր դպրանոց, ո-
րը Վազգեն Ա-ի վախճանից հետո՝ 1994 թվականին, ի պա-
տիվ նրա՝ անվանվեց «Վազգենյան Հոգևոր Դպրանոց»¹ Հան-

¹ Վազգենյան դպրանոցը գիշերօթիկ հնգամյա ուսումնական հոգևոր հաստատություն է, որի շրջանավարտները, ևս մեկ տարի ուսանելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանում, անցնում են հոգևոր լիարժեք սպասավորության: Դպրանոց կառուց են ընդունվել միջնակարգ կրթության երիտասարդները՝ հանձնելով ընդունելության ֆննդությունները: Ստուգվում են նաև դիմորդների երաժշտական ընդունակություն-
ները:

րապետությունում Հայ եկեղեցու ծառայությունն ավելի լավ կազմակերպելու համար նրա տնօրինությամբ Արարատյան Հայրապետական և Շիրակի թեմերի կողքին հանրապետության տարածքում ստեղծվեցին Սյունիքի և Գուգարքի թեմերը: Վազգեն Ա կաթողիկոսն իր կյանքի մայրամուտին կատարած վերջին վեցերորդ մյուռոնօրհները կատարեց Հայաստանի անկախության հռչակումից հաշված օրեր անց՝ 1991 թվականի սեպտեմբերի 29-ին, և դա անվանվեց «Անկախության Մյուռոն»՝ հաստատ հավատք ունենալով Մյուռոնի հետ հայոց անկախ պետականության հավերժության: «Անկախության Մյուռոնով» նա օծել է Մայր տաճարի Ավագ խորանի «Տիրամայրը մանկան հետ» պատկերը՝ այն անվանելով Անկախության Տիրամայր: «Հայրե՛ր, հրգևոր զավակներ Մեր այս սրբազան Մյուռոնով միացե՛ք, եղբայրացե՛ք, եղե՛ք մե՛կ կամք, եղե՛ք մե՛կ ուրախություն, եղե՛ք մեկ ցավ: Եղե՛ք մե՛կ ազգ, մե՛կ ընտանիք, մե՛կ ժառանգած երզում և հավատացե՛ք մեր այս մի բուռ հայրենի հողին ու նրա գալիքին՝ սուրբգրային Արարատի հայացքի տակ, Սուրբ էջմիածնի օրհնության ներքո»¹- սրբազան արարողության ժամանակ պատգամել է Վեհափառ Հայրապետը:

Մեծ է Վեհափառի ավանդը Հայաստան համահայկական հիմնադրամի ստեղծման գործում, որին սատարելու և տեղական կառույցների ձևավորման համար 1992-ի մայիսի 28-ին հատուկ կոչով դիմել է Հայաստանյաց Առաքելական Սուրբ եկեղեցու թեմակալ առաջնորդներին²:

Նրա հայրական օրհնությամբ կնքվեց Հայաստանի անկախության հանրաքվեի վավերագիրը, որով իրենց առաքելությունն ստանձնեցին ՀՀ առաջին նախագահը և խորհր-

¹ Վազգեն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008, էջ 8-9:

² Տե՛ս նույն տեղում, էջ 7:

դարանը: Այսպես, հայրենիքին ու ազգին իր անսակարկ և ամբողջական նվիրումի համար Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը պատմության մեջ եղավ առաջին անհատը, որն արժանացավ «Հայաստանի ազգային հերոս» բարձրագույն կոչման և «Հայրենիք» պետական բարձրագույն շքանշանին (1994թ. հուլիսի 29), որոնք 1994թ. ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն անձամբ հանձնեց ծերունազարդ Հայրապետին՝ նրա Աջը համբուրելով¹:

Վազգեն Կաթողիկոսի նախաձեռնությամբ հաստատվեց ներքին թեմերի եկեղեցական կանոնադրությունը, վերականգնվեցին խորհրդային տարիներին արգելված եկեղեցասեր կազմակերպություններն ու միությունները, մանկական կրոնական երգչախմբերը, վերականգնվում էին կիսաքանդ եկեղեցիները, կառուցվում էին նորերը: Ամրապնդվեցին Մայր աթոռի կապերը ոչ միայն Կիլիկիո Կաթողիկոսության հետ, այլև քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ: 1994թ. օգոստոսի 18-ին վախճանվեց Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա: 1995 թ. ապրիլին Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում վեցդարյա ընդմիջումից հետո անկախ Հայաստանի պայմաններում բացվեց համայն հայությունը ներկայացնող Ազգային-եկեղեցական պատգամավորական ժողովը, որտեղ Ա-

¹ 28 հուլիսի 1994 թ. ՀՀ Կառավարության որոշումը Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաքինին «Հայաստանի Ազգային հերոս» Հայաստանի Հանրապետության բարձրագույն կոչում շնորհելու միջնորդություն հարուցելու մասին: «Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է Հաշվի առնելով ազգային և հոգևոր արժեքների պահպանության ու զարգացման գործում Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Առաքինի դրսևորած անձնուսաց նվիրումը և մատուցած բացառիկ ծառայությունները, միջնորդել Հայաստանի Հանրապետության նախագահին Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Առաքինին «Հայաստանի Ազգային հերոս» Հայաստանի Հանրապետության բարձրագույն կոչում շնորհելու համար: ՀՀ վարչապետ՝ Հ. Բազումյան, ՀՀ կառավարության գործերի կառավարիչ Ա. Խաչատրյան»: ՀԱԱ, ֆ. 113, ց. 171, գ. 334, թ. 1:

մենայն Հայոց Կաթողիկոս ընտրվեց Մեծի տան Կիլիկիո աթոռակալ Գարեգին Բ-ն՝ վերանվանվելով Գարեգին Ա։ Նրա կարճատև, բայց եռանդուն գործունեության տարիներին (1995-1999) ընդարձակվեց եկեղեցաշինությունը, ստեղծվեցին հոգևոր եկեղեցական նոր կառույցներ, սերտացան միջեկեղեցական կապերը¹։

Նրա Կաթողիկոսության տարիներին վերակառուցվում է Հայոց եկեղեցում թեմական կառույցը, որը հարմարվում է ՀՀ Վարչատարածքային նոր բաժանմանը։ Նախկին 4 թեմերի փոխարեն հաստատվեց և սկսեց գործել 8 թեմ։ Նոր թեմեր հիմնվեցին հարավային Ռուսաստանում և Ուկրաինայում²։ Հայոց եկեղեցու ջանքերով Երևանի պետական համալսարանում Հիմնվեց Աստվածաբանության ֆակուլտետը։ Մեծ ծավալի աշխատանքներ կատարվեցին Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի նախապատրաստման ուղղությամբ։ Մոսկվայում՝ Կրեմլում կազմակերպվեց «Հայ եկեղեցու գանձերը» ցուցահանդեսը, որը դիտեց 20 հազար մարդ։ 1997 թ. Օշականում կառուցվեց Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատունը, որը դարձավ խոշոր գիտամշակութային կենտրոն։ Հայոց եկեղեցին ընդլայնեց կապերը Վատիկանի, եկեղեցիների Համաշխարհային խորհրդի հետ³։

Նրա գահակալության օրոք աշխույժ վերելք ապրեց նաև հոգևոր ու մշակութային կյանքը։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայ ժողովուրդը հասել է իր դարավոր երազանքին անկախ պետականության հաստատմանն ու գաղափարական ազատությանը Գարեգին Ա կատարեց ամենաառաջին և կարևոր քայլը՝ Մայր Աթոռում բացեց Քրիստո-

¹ Գ. Բախիճյան, Հայոց հարյուր երեսնամեկերորդ հալածվածը, Երևան, 2011, էջ 108-111։

² Տե՛ս նույն տեղում, էջ 108։

³ Տե՛ս նույն տեղում, էջ 109։

նեական քարոզչության և դաստիարակության կենտրոն, որը մեծ թվով հավատացյալ մարդկանց հասցրեց քրիստոնեության լույսը: Բարելավվեցին էջմիածնի հոգևոր ճեմարանի ուսումնական պայմանները, ուսանողների թիվը նախկին 40-ի փոխարեն հասավ 120-ի: 1997թ 80-ամյա ընդմիջումից հետո, վերաբացվեց Գևորգյան հոգևոր ճեմարանի հիմնովին վերանորոգված շենքը¹: Մեծ թափ առավ քրիստոնեական գրականության հրատարակության գործը: Տպագրվեց քարոզչական, կրոնաճանաչողական, հայագիտական, գրական-պատմական շուրջ 100 անուն գիրք, այդ թվում քրիստոնեության 1700-ամյակի առթիվ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանը: 1996 թ. Նրա նախաձեռնությամբ հիմնվեց Հայաստանի Աստվածաշնչային ընկերությունը: Գարեգին Ա-ի գահակալության տարիներին Հայաստանում լայն ծավալ ստացավ էկումենիկ շարժումը: Հայրապետը Մայր Աթոռում ընդունեց մի շարք էկումենիկ պատվիրակությունների՝ Հայաստանը դարձնելով էկումենիկ շարժման գործուն անդամ: Գարեգին Ա հայրապետության տարիներից սկսած պետությունը եկեղեցուն որպես սեփականություն սկսեց հանձնել 150-ից ավելի եկեղեցի ու վանք, հողային տարածքներ ու շենքեր, որոնք բռնագրավվել էին խորհրդային տարիներին²: Սկսված գործընթացը շարունակվեց Գարեգին Բ-ի օրոք:

Գարեգին Ա-ի մահից հետո Մայր Աթոռ Ս. էջմիածնում 1999 թ. հոկտեմբերի 26-28-ը տեղի ունեցած Ազգային-եկեղեցական ժողովում Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվեց Արարատյան Հայրապետական թեմի ռաջնորդական փոխանորդ Գարեգին արքեպս. Ներսիսյանը: Հայոց 132-րդ Հայրապետը գահ բարձրացավ Հայոց պետականության համար

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 110:

² Տե՛ս նույն տեղում, էջ 111:

խիստ ծանր իրավիճակում, երբ Հոկտեմբերի 27-ին Ազգային ժողովում տեղի ունեցած ահաբեկչության հետևանքով սպանվեցին Ազգային ժողովի նախագահը, վարչապետը, պետական ու քաղաքական այլ գործիչներ: Պատահական չէ, որ Հայրապետական անդրանիկ՝ 2000 թ. փետրվարի կոնդակում անդրադառնալով հոկտեմբերի 27-ի ողբերգությանը՝ Գարեգին Բ համազգային մտահոգության և անձնական պատասխանատվության կոչով դիմեց հանրությանը՝ հաղթահարելու ներքաղաքական լարվածությունը, ամրապնդելու երկրի կայունությունն ու անվտանգությունը՝ որպես հետագա զարգացման և առաջընթացի հիմնարար պայման¹: Հայոց կաթողիկոս Գարեգին Բ գործունեության սկզբում լայն ծավալ ստացան եկեղեցաշինարարական աշխատանքները: Լոռու, Արարատի, Շիրակի մարզերում և Երևանում կառուցվեցին բազմաթիվ նոր եկեղեցիներ, վերանորոգվեցին հները²: 2000 թ. նոյեմբերին Հռոմի Հովհաննես-Պողոս Բ պապի հետ հանդիպման արդյունքում Հայաստան տեղափոխվեցին Գրիգոր Լուսավորչի մասունքները: Գարեգին Կաթողիկոսի ուխտագնացությունը Երուսաղեմ 2000 թ. և Դեր-Զոր 2001 թ. վկայում էր, որ հայ ժողովուրդը չի մոռացել ցեղասպանության զոհերի հիշատակը³:

Հոբեյանական տարվա ընթացքում եղան ուխտագնացություններ, հանդիպումներ, գիտաժողովներ, կրթամշակութային բազմաթիվ միջոցառումներ: միջոցառումից հիշատակելի է Գարեգին Բ Հայրապետի ուխտագնացությունը Դեր Զոր (2001 թ. ապրիլ), որտեղ՝ Սբց. Նահատակաց եկեղեցում,

¹ Տե՛ս **Էդ. Մինասյան**, Հայոց 132-րդ հայրապետ, «Քրիստոնյա Հայաստան», բացառիկ նվիրված Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի գահակալության 20 և ծննդյան 70-ամյակին, 2021, էջ 21, ավելի մաքամասն տե՛ս նույն տեղում էջ 25:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս «Էջմիածին» 2001, ժ, էջ 53:

Հայոց Հայրապետը մատուցել է սուրբ Պատարագ: 2001 թ. հուլիսին Վեհափառ Հայրապետն աշխարհասփյուռ հայ երիտասարդներին կոչ արեց համախմբվելու Սուրբ Էջմիածնում իբրև ուխտավորներ: Պատմական նշանակություն ունեցող երիտասարդական ուխտագնացությունը իրենց մասնակցությունը բերեցին Հայաստանի և Սփյուռքի ավելի քան 2000 երիտասարդներ: Նույն թվականի սեպտեմբեր ամսին Նորին սրբությունը հյուրընկալեց քրիստոնեական եկեղեցի հոգևոր պետերին, որոնք իրենց մասնակցությունը բերեցին 1700-ամյակի առթիվ կազմակերպված տոնակատարություններին: 2003 թ., Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ, մեծ շուքով նշվեցին Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի օծման 1700-ամյակը և Ս. Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» աղոթագրքի 1000-ամյակը¹:

Գարեգին Բ Հայրապետի գահակալությունից հետո օծվեցին նորանոր եկեղեցիներ, դրվել են նոր եկեղեցիների հիմքեր:

Վեհափառ Հայրապետի ձեռամբ մասնավորապես օծվել են Սպիտակի Ս. Հարություն, Երևանի Ս. Սարգիս, Վաչքի Ս. Տրդատ, Տաշիրի Ս. Սարգիս, Մալիշկայի Ս. Աննա, Ջարենցավանի Ս. Ամենափրկիչ, Ալավերդու Գրիգոր Նարեկացի, Կապանի Ս. Մեսրոպ Մաշտոց, Առինջի Ս. Աստվածածին, Գյումրիի Ս. Հակոբ, Մարմաշենի Ս. Գևորգ նորակառույց եկեղեցիները, ինչպես նաև Երևանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցու զանգակատունը, Ռուսաստանի Դաշնության Կրասնոյարսկ քաղաքի Ս. Սարգիս, Պյատիգորսկ քաղաքի Ս. Սարգիս, Լվովի Ս. Աստվածածին եկեղեցիները: Վերասրբագործվել են Դվինի Ս. Հարություն, Սանկտ Պետերբուրգի Ս. Կատարինե, Մուլնու Ս. Գևորգ եկեղեցիները, Սաղմոսավան-

¹ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», 2021, բացառիկ, էջ 25:

քը, Ծաղկաձորի Կեչառիսի վանական համալիրը, Լոնդոնի Ս. Նիլշե, Ապարանի Ս. Խաչ եկեղեցիները:

Վեհափառ Հայրապետի ձեռամբ վերասրբագործվել են ՀՀ Մասիս քաղաքի Ս. Թադևոս եկեղեցու հիմքերը¹:

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առթիվ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքում կառուցվել են Բաց խորանը և Սուրբ Էջմիածնի նոր գլխավոր մուտքը, որը կրում է ս. Գրիգոր Լուսավորչի անունը: 2001 թ. սեպտեմբերի 23- ին Վեհափառ Հայրապետի ձեռամբ կատարվել է Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու օծումը: Բարենորոգվել և վերակառուցվել են խոնարհված բազմաթիվ եկեղեցիներ: Կաթողիկոսը հաճախ անձամբ հետևել է շինարարական աշխատանքների ընթացքին և ոգեշնչել շինարարներին: Եկեղեցաշինական հսկայածավալ աշխատանքներն առ այսօր շարունակվում են ի Հայաստան և ի սփյուռք աշխարհի:

Թումանյանական գորություն կա նրա մեջ, որը մեր ազգային հույզերի, զգացումների ու խոհերի արդյունք է: Նա չի դավաճանել ազգային ոգուն: Հայոց Հայրապետի բնորոշմամբ «գործը մարդու երկրային անմահության այցեքարտն է»: «Երկնային անմահություն Աստված շնորհում է բոլորին, մեծ կոչենք նրան, որն իր գործով կարժանանա նաև երկրային անմահության...», - տիեզերքում հնչում են անմահ լուռեցու խոսքերը: Հենց այս խոսքով էլ առաջնորդվում է Գարեգին Երկրորդը՝ իրականացնելով եկեղեցաշինական լայնածավալ գործունեություն²:

Գարեգին Երկրորդը Մայր Աթոռում բացված Քրիստոնեական քարոզչության և դաստիարակության կենտրոնի

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», 2021, բացառիկ, էջ 26:

միջոցով տարածել է քրիստոնեական լուսւր: Կաթողիկոսի ջանքերով մեծ թափ առավ քրիստոնեական գրականության հրատարակման գործը: Քրիստոնեության ընդունման 1700-ամյակի առթիվ տպագրվել է կրոնաճանաչողական, հայագիտական, գրական-պատմական շուրջ 400 գիրք: Նշանակալից երեույթ պիտի համարել Մ. Օրմանյանի «Ազգապատում» մենագրության վերահրատարակությունը 2001 թ.¹:

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700- ամյակի նախօրյակին զգալի աշխատանքներ կատարվեցին: Հայոց կաթողիկոսը հանդիպումներ ունեցավ Վլադիմիր Պուտինի, Ջորջ Բուշի և ուրիշների հետ: Կաթողիկոսի անմիջական նախաձեռնությամբ դեռևս 1990 թ. Սևանի թերակղզում Հիմնադրված Հոգևոր դպրոց, որը կոչվել էր Վազգենյան, 1997 թ. տվեց իր առաջին շրջանավարտները: 2003 թ. սկսած ՀՀ և ԼՂՀ բոլոր դպրոցներում դասավանդվում է «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան: 2001 թ. մեծ շուքով նշվեց Հայոց եկեղեցու 1700-ամյա Հոբելյանը: Այն նշվեց ազգովին և պետականորեն, երբ 2000 թ. դեկտեմբերի 31-ի տարեմուտի գիշերը Հայոց Հայրապետը և Հանրապետության նախագահը՝ Ռ. Քոչարյանը, իրոք Վիրապից Մայր աթոռ բերեցին Լուսավորչի կանթեղը, որի լուսից տարածված մոմավառությունը ազդարարեց Հայոց դարձի 1700-ամյա հոբելյանը և երրորդ հազարամյակի սկիզբը:

Գարեգին երկրորդը իր աշխույժ գործունեությամբ, արտասահմանյան, երկրներ կատարած հովվապետական այցելություններով մեծապես նպաստեց հայ առաքելական եկեղեցու կապերի ամրապնդմանը:

Նորին Սրբությունն այցելել է Ֆրանսիա (դեկտեմբեր, 2001 թ.) և Ավստրիա (նոյեմբեր, 2001 թ.): 2004 թ. մայիսի 4-

¹ Տես նույն տեղում:

25-ը՝ Գարեգին Բ Կաթողիկոսը հովվապետական անդրանիկ այցով եղավ Հարավային Ամերիկայի հայոց թեմերում՝ իր այցելութեամբ հոգևոր նոր վերազարթոնք և խանդավառություն պարգևելով տեղի հայ հավատացյալ ժողովրդին։ Նույն թվականի հունիսի 14-18-ը Վեհափառ Հայրապետը հովվապետական այցով եղավ նաև Անգլիայում¹։

Վեհափառ Հայրապետը հովվապետական այցով եղել է նաև հայաստանյան թեմերում՝ Շիրակի և Արցախի (հուլիս, սեպտեմբեր 2000թ), ԱՄՆ Արևմտյան Կանադայի և ԱՄՆ Արևելյան հայոց թեմերում (մայիս 2001թ) ամենուր ներկայությունամբ և օրհնությունամբ մխիթարություն և հոգևոր խնդություններելով բազմահազար հայորդիներին²։

Գարեգին Բ հայրապետի հովվապետության շրջանում եկեղեցիների հոգևոր առանորդների փոխադարձ այցելությունները դարձել են առավել հաճախակի և արդյունավետ։ Միջեկեղեցիական հանդիպումներն ու քննարկումներն ավարտվում են հուշագրերի, հռչակագրերի, հայտարարությունների կամ ուղերձների ստորագրմամբ, քրիստոնեական սիրո և վստահության ձևավորմամբ։ Ընդլայնվել են հարաբերությունները քույր եկեղեցիների, կրոնական և էկումենիկ բոլոր կազմակերպությունների, նաև մյուս կրոնների հոգևոր առաջնորդների հետ, ինչը էական նշանակություն ունի ազգամիջյան և միջմշակութային հարաբերությունների հաստատման, ինչպես նաև միջկրոնական երկխոսության ծավալման տեսանկյունից։ Նշենք նաև, որ միանգամայն նոր բովանդակություն և որակ է ստացել կաթողիկ եկեղեցու հետ համագործակցությունը, որը ավելի սերտ ու գործնական է դարձել։

¹ Տե՛ս էդ. Միճալյան, Հայոց 132-րդ հայրապետ, էջ 22։

² Տե՛ս նույն տեղում։

Համայնավարական կարգերի փլուզումից հետո՝ հետխորհրդային շրջանում որակական ու բովանդակային առումով նոր շրջափուլ սկսվեց Հայ Առաքելական և Ռուս ուղղափառ եկեղեցիների համար։ Պատմաքաղաքական որոշակի փոփոխությունների պայմաններում սերտ համագործակցություն ծավալվեց երկու եկեղեցիների միջև։

Հայոց Հայրապետը մեծ դերակատարում է ունեցել Հայ և Ռուս եկեղեցիների հարաբերությունների զարգացման գործում։ 2000 թ. փետրվարին Ալեքսի Բ Պատրիարքի հրավերով Գարեգին Բ Կաթողիկոսի՝ Մոսկվա կատարած այցից հետո¹, 2001 թ., Ռուս Ուղղափառ եկեղեցու պետն այցելել է Հայաստան՝ պաշտոնապես մասնակցելու Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակի միջոցառումներին։ 2000 թ. Ռուս եկեղեցու երջանկահիշատակ Ալեքսի Բ Պատրիարքը մասնակցել է Պետերբուրգի Սուրբ Կատարինե եկեղեցու օծման տարողությունը, Մոսկվայի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու օծմանը²։ Հայ Առաքելական և Ռուս ուղղափառ եկեղեցիների հովվապետերի հանդիպումներն ու արդյունավետ համագործակցությունը շարունակվեց նաև հաջորդ տարիներին։

Երկու միլիոնից ավելի հայ է ապրում Ռուսաստանում։ Հայ եկեղեցին այս երկրում ունի թեմեր՝ բազմաթիվ եկեղեցիներով, կրթական ու մշակութային հաստատություններով։ Հայ հոգևորականները համագործակցում են Ռուս եկեղեցու սպասավորների հետ, նրանց հետ կազմակերպում կրթական, մշակութային միջոցառումներ։ 2005թ. մայիսի 31-ին Մոսկվայում Ամենայն Հայոց կաթողիկոսը հանդիպեց Մոսկվայի և համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Բ-ին։ Հանդիպման

¹ Տե՛ս «Էքմիաժին», 2000, Ա.-Բ, էջ 3-19։

² Տե՛ս նույն տեղում, էջ 3։

ժամանակ հոգևոր առաջնորդները անդրադարձան եկեղեցական կյանքում արձանագրված հաջողություններին, հոգևոր վերազարթոնքին, մեծածավալ եկեղեցաշինությունը¹։

2009 թ. էջմիածնում հրատարակվեց Մոսկվայի - Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլի «Ազատություն և պատասխանատվություն» գրքի հայերեն թարգմանությունը։

2010 թ. մարտի 16-ին Ամենայն հայոց կաթողիկոսի հրավերով տեղի ունեցավ Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլի պաշտոնական այցը Հայաստանի Հանրապետություն։ Նրա երկու արժեքավոր աշխատությունները թարգմանվել են հայերեն և պահվել Սուրբ էջմիածնի թանգարանում։

2011 թ. Գյումրու ռուսական զորամասում վերաբացվեց 1920 թ. թուրքերի հրկիզած եկեղեցին²։

Վերոնշյալ հարաբերություններում կարևոր ու վճռորոշ նշանակություն ունեն երկու եկեղեցիների պետերի բարեկամությունն ու եղբայրական կապերը, փոխայցելությունները, համատեղ անցկացրած միջոցառումները։ Նրա հայրապետության շրջանում առավել են ամրապնդվել ու սերտացել հարաբերություններն ու համագործակցությունը քրիստոնեական բոլոր եկեղեցիների հետ։ Այդ է վկայում Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարություններին Քրիստոնյա բոլոր եկեղեցիների հոգևոր առաջնորդների, միջազգային կառույցների ներկայացուցիչների և էկումենիկ տարբեր կազմակերպությունների ղեկավարների մասնակցությունը։ Միջեկեղեցական կապերի ամրապնդման նպատակով Վեհափառ Հայրապետն այցելել է քույր եկեղեցիներին և նրանց պետերին։

¹ Տե՛ս «էջմիածին», 2005 թ., էջ 3։

² Տե՛ս **էդ. Մինասյան**, Հայ և Ռուս եկեղեցիների հարաբերությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2010), 21-րդ դարի մատահրավերները և Հայաստանը, գիտաժողովի նյութեր, Երևան, 2011, էջ 2։

Նորին Սրբությունն այցելել է ոչ միայն ռուս Ուղղափառ Եկեղեցի և նրա գահակալ՝ Մոսկվայի Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ին, այլև Վրաստանի կաթողիկոս-պարտիրարք Իլյա Բ-ին (2000 թ.), Ռումին Օրթոդոքս Եկեղեցու գահակալ Թեոկտիստ Պատրիարքին (2000 թ.), Ղպտի Ուղղափառ Եկեղեցու գահակալ Շենուդա Գ Պատրիարքին (2000 թ.), Եթովպիայի Թեաֆեո Եկեղեցու գահակալ Աբունա Պաուլոս Պատրիարքին (2000 թ.), Հոմի Կաթոլիկ Եկեղեցու գահակալ Հովհաննես Պողոս Բ պապին (2000 թ.), Բուլղար Ուղղափառ Եկեղեցու գահակալ Մաքսիմ Պատրիարքին (2002 թ.), Անգլիական Եկեղեցու գահակալ դր. Ռոուան Վիլյամսին (2004 թ.):

Վեհափառ Հայրապետը հանդիպել է նաև օտար կրոնների ներկայացուցիչների և կրոնապետերի հետ: 2000թ. Նյու Յորքում Գարեգին Բ Հայրապետը մասնակցել է ՄԱԿ կազմակերպած կրոնական առաջնորդների՝ հազարամյակի խաղաղության համաշխարհային խորհրդաժողովին և ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովում զեկուցում կարդացել «Դեպի ներդաժողովյուն և հաշտություն» թեմայի շրջանակներում:

Նորին Սրբությունը հանդիպել է նաև Ալ Ազհարի շեյխ մեծ իմամ Ալ Թանտաուիի, Եգիպտոսի հանրապետության մուֆթիի, Կովկասի մուսուլմանների հոգևոր պետ, շեյխ ուլ-իսլամ Ալլահշուքյուր փաշա Զադեի հետ¹:

Անուրանալի են հայ առաքելական եկեղեցու ջանքերն ու գործունեությունը հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման, հոգևոր նշանավոր գործիչների աշխատությունների հրատարակման, հոգևոր կրթական հաստատությունների գործունեության արդյունավետ կազմակերպման գործում:

¹ Տե՛ս Էդ. Մինասյան. «Քրիստոնյա Հայաստան», 2008, բացառիկ, էջ 23:

20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին միանշանակ առաջընթաց ապրեցին Հայոց եկեղեցու հոգևոր-կրթական հաստատությունները: Վեհափառ հոր ջանքերով վերաաշխուժացան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր կրթարանները՝ Հառիճի ընծայարանը, Սևանի Վազգենյան դպրանոցը և Գևորգյան հոգևոր ճեմարանը: Հոգևոր կրթարանների առաջընթացը կապված էր հատկապես բարձրակարգ դասախոսների ընտրության և ուսումնական նոր ծրագրերի մշակման հետ, որոնք կատարվեցին հայոց Հայրապետի անմիջական մասնակցությամբ ու ղեկավարությամբ: Գևորգյան հոգևոր ճեմարանի ուսումնական հագեցած ծրագիրը նկատի ունենալով, ինչպես նաև արտերկրի բարձրագույն ուսումնական հաստատություններում Գևորգյան հոգևոր ճեմարանի սաների ուսումնառությունը շարունակելու հնարավորությունն առավել ընդլայնելու նպատակով՝ Նորին Սրբությունը դիմեց ՀՀ կառավարությանը՝ Գևորգյան հոգևոր ճեմարանը ճանաչելու որպես բարձրագույն ուսումնական հաստատություն: Արդյունքում Գևորգյան հոգևոր ճեմարանը դարձավ պետականորեն ճանաչված աստվածաբանական համալսարան, իսկ Հառիճի ընծայարանը և Վազգենյան դպրանոցը դարձան նրա մասնաճյուղերը՝ Շիրակի և Գեղարքունյաց թեմերում¹: Այս ամենը, ինչ խոսք, պայմանավորված էր Կաթողիկոսի անձով, սակայն չպետք է մոռանալ պատմական այն հանգամանքներն ու իրավիճակը, որում հայտնվել էր Հայաստանը 20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին:

Վեհափառ Հայրապետը Գևորգյան հոգևոր ճեմարանի ուսուցչապետն է: Վեհափառ Հայրապետի մանկավարժական-դասախոսական գործունեությունն սկսվել է դեռևս սարկավագության տարիներից: Ներկայումս Նորին Սրբությո-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 24:

յունը ճեմարանում դասախոսում է «Քարոզխոսություն» առարկան՝ իր սաներին սովորեցնելով Աստծու խոսքի քարոզչության և հոգևոր ճշմարտությունները հավատացյալներին մատուցելու սկզբունքներն ու միջոցները: Ամենատարբեր առիթներով իր քարոզներում և զրույցներում նա հազարաձև հոլովույթներով կրկնում էր Հայ Եկեղեցու և հայ մարդու հավատի պահպանման ու ամրապնդման աստվածահաճո առաքելությունը:

Նորին Սրբությունը մեծապես կարևորում է շրջանավարտների կրթության շարունակումն այլ արտերկրի բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Հոգևոր-կրթական հաստատությունների հետ աղերս ունեն հայորդյաց տները: Հմուտ ուսուցիչ մանկավարժների ջանքերով առավել զարգանում են հայորդյաց տներ հաճախող երեխաների ու պատանիների ստեղծագործական ունակությունները, միաժամանակ նրանք ստանում են նաև քրիստոնեական դաստիարակություն:

1999 թ. հիմնադրվեց Գարեգին Ա-ի անվան աստվածաբանական-հայագիտական կենտրոնը, «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանը, որի հսկայական գրադարանը մեծապես նպաստում է Մայր Աթոռի միաբանների գիտական և աստվածաբանական մտքի զորացմանը: Կենտրոնում աշխատելու և գրականության հարուստ հավաքածուից օգտվելու հնարավորություն է ընձեռվել նաև հայ և օրտարազգի մտավորականությանը: Գարեգին Երկրորդը շատ բան վերափոխեց Հայաստանյայց Եկեղեցու կամարների ներսում: Հիմնվեցին նոր թեմեր

2001 թվականը յուրատեսակ նշաձող էր Հայ Եկեղեցու անցած 1700-ամյա ճանապարհին: 1700-ամյա հոբելյանը նշվեց Հայոց Եկեղեցու և քրիստոնյա աշխարհի կողմից: Հայրապետը դարձավ Հայաստանը Սփյուռքի հետ կապող այն

օղակը, որը հավերժացրեց քրիստոնեության ընդունման 1700-ամյա հոբելյանը՝ որպես ամբողջ աշխարհի քրիստոնյա մարդկության վերածննդի տոն:

2010թ. մարտի 18-ին Ռուսաց Պատրիարքի պաշտոնական այցի վերջին օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Վեհաբանի դահլիճում Վեհափառ Հայրապետն ու Կիրիլ Ա ստորագրեցին համատեղ հայտարարություն¹:

2016թ նոյեմբերի 21-ին Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը երկօրյա այցով մեկնեց Մոսկվա՝ մասնակցելու Կիրիլ պատրիարքի ծննդյան 70-րդ տարեդարձի հոբելանական հանդիսություններին²:

2019 թ. ապրիլի 2-ին Մոսկվայում՝ Ս. Դանիելի պատրիարքանիստ վանքում տեղի ունեցավ Գարեգին Բ-ի հանդիպումը Կիրիլ Ա-ի հետ, որտեղ քննարկվեցին երկու եկեղեցիների միջև զարգացումներն ու փոխգործակցությունը կրոնական և հասարակական ոլորտներում³:

Գարեգին Երկրորդը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը կարևոր քայլ է համարում ազգային առաջնահերթ նպատակին հասնելու ճանապարհին: Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչումը՝ որպես արդարության իրազորման և իրավունքների հաստատման ազդեցիկ օրինակ, կնպաստի ապահով ու արդար աշխարհի կերտմանը:

Հայտնի իրողություն է, որ Վատիկանը՝ սուրբ Հովհաննես Պողոս Երկրորդ Պապը Գարեգին Երկրորդի հետ մեկտեղ հայտարարությամբ 2001 թվականին ճանաչել է հայոց ցեղասպանությունը:

¹ Տե՛ս «Էջմիածին», 2010, Գ, էջ 48-64:

² Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», 2016, նոյեմբեր Բ:

³ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», 2019, ապրիլ, Ա:

Ամենայն Հայոց Գարեգին Երկրորդ Կաթողիկոսը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ Վատիկանում՝ Սուրբ Պետրոսի տաճարում, Հռոմի Ֆրանցիսկոս Պապի կողմից մատուցված Պատարագի ընթացքում ասված իր խոսքում ընդգծել է:

«Այս իմաստով Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը հրավեր է աշխարհին անտարբեր չգտնվելու մարդկային տառապանքի ու նորօրյա նահատակությունների հանդեպ և գործադրելու առավել ջանքեր՝ դադարեցնելու և կանխելու համար մարդկության դեմ գործվող ոճիրները: Սա է այն պտուղը, որ պիտի աճի նահատակության արմատից»¹:

Պատարագի ժամանակ խոսքով է հանդես եկել նաև մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինը: Սրբազան արարողության ընթացքում հայ առաքելական եկեղեցու հայրերից սուրբ Գրիգոր Նարեկացին Կաթողիկ եկեղեցու կողմից հռչակվել է «եկեղեցու վարդապետ»:

Պատարագի ժամանակ Հռոմի պապը իր խոսքով դատապարտել է թուրքերի կողմից իրականացրած հայոց ցեղասպանությունը: Պատարագի ավարտին հայկական ծեսով կատարվել է հոգեհանգստյան արարողություն՝ մեծ եղեռնի նահատակների համար, որոնք Ս. Էջմիածնում ապրիլի 23-ին սրբադասվեցին վասն հավատո և վասն հայրենյաց մարտիրոսության համար:

Պետություն-եկեղեցի հարաբերություններում որոշակի փոփոխություններ նկատվեցին 2018 թվականի մայիսից, երբ Թավշյա հեղափոխությունից հետո անտեսվեցին ազգային արժեքները և որոշակի խմբերի կողմից շարժում սկսվեց Հայոց Հայրապետի դեմ: Հարց բարձրացվեց հանրակրթական դպրոցի պարտադիր առարկայացանկից հանել «Հայոց

¹ «Քրիստոնյա Հայաստան», 2021, բացառիկ, էջ 24:

Եկեղեցու պատմություն» առարկան: Հայոց արժեքների պահպանման համար պայքարում Հայոց Հայրապետը կարողացավ դիմագրավել այդ ուժերին և տեղի չտվեց՝ մնալով հաստատակամ մինչև վերջ:

2019 թ. հոկտեմբերի 9-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում անցկացվող «Եկեղեցին և ընտանիքը 21-րդ դարում. արժեքներ և մարտահրավերներ» խորագրով միջազգային համաժողովի ժամանակ Գարեգին Երկրորդն ընդգծեց հայոց արժեքային համակարգում ընտանիքի առանցքային դերը. «Արդի աշխարհում վտանգվում են ընտանիքի եւ նրա առաքելության մասին ընկալումները: Տարածում են գտնում ընտանիքի նվիրական գաղափարներն աղճատող եզրույթներ, որոնք ներկայացվում են իբրև ժամանակակից կյանքի թելադրանքներ: Մտայնության ու բարքերի այսօրինակ՝ այլափոխումը հաճախ քողարկվում է անհատի ազատության եւ իրավունքների լուսի ներքո՝ խեղաթյուրելով ընտանեկան կյանքի իրական արժեքն ու բացառիկությունը: Եկեղեցու տեսակետներն ընտանիքի վերաբերյալ հիմնված են ոչ թե մարդկային փոփոխվող կենսակերպի և մտայնությունների, այլ Աստծու կենարար խոսքի ու հայտնության վրա...Ընտանիքի առջև ծառացած հիմնախնդիրները վեր հանելու, անդրադարձ կատարելու և հաղթահարելու տեսլականով, մենք 2019 թվականը հռչակեցինք Ընտանիքի տարի, որպեսզի այդ առումով իրագործվեն առավել նպատակային քայլեր ու նախաձեռնություններ»¹:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն իրականացնում է սոցիալական մի շարք ծրագրեր: Մայր Աթոռի միաբանական ժողովի մասնակիցներն այցելել են Հայաստանի տարբեր շրջաններում ապրող կարիքավոր ընտանիքներին՝ բերելով

¹ Նույն տեղում, էջ 27, 28:

իրենց օրհնությունն ու եկեղեցու նյութական աջակցությունը: Այս ծրագրերը շարունակական են, որոնց ընթացքը պիտի նշանավորվի ընտանիքների օրհնության հատուկ արարողությամբ:

Հայ ժողովրդին ու նրա Հայրապետին մեծ վիշտ պատճառեց Արցախյան 44-օրյա պատերազմը: 2020 թ. դեկտեմբերին Սուրբ Գայանե վանքում Վեհափառը ներկա է գտնվել սուրբ Պատարագին, որի ավարտին, նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, զոհված հերոսների համար կատարվել է հոգեհանգստյան արարողություն: Արարողությունից հետո Նորին Սրբությունն իր խոսքն է ուղղել հոգևոր դասին, ներկա բարեպաշտ հավատացյալներին և համայն հայ ժողովրդին.

«Այսօր վերստին ոգեկոչում ենք լույս հիշատակի հայրենիքի համար զոհված մեր զինվորների, աշխարհայինների և զորահրամանատարների, որոնք պատերազմում խիզախաբար պայքարեցին թշնամու դեմ և իրենց թանկագին արյան հեղումով արժանացան նահատակության անթառամ պսակին: Քաջարի սխրագործություններով նրանք անմահացան մարտի դաշտում և ժառանգեցին հավիտենական կյանքի պարգևը, որը խոստացավ մեր Տեր Հիսուս Քրիստոսն ասելով. - նրանց հավիտենական կյանք կտամ, և նրանք հոգով չեն կորչի (Հովհ., Ժ 28)¹:

Հայ ժողովուրդը կրկին հերոսներ ծնեց ովքեր բարձր ու լուսաշող տեղ գրավեցին Հայոց տարեգրության մեջ և երկնքում դասվեցին բոլոր ժամանակներում վասն հավատո և վասն հայրենյաց մարտնչած ու նահատակված քաջերի կողքին: Մեր հերոսները զոհվեցին արցախահայության ազատ ապրելու արդար իրավունքի և հայրենիքի խաղաղ, ապահով

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 27:

և բարձր կյանքի տեսիլքով՝ պատգամելով մեզ աննկուն լինել ոգով և արիաբար պայքարել՝ հանուն մեր ազգային նպատակների իրագործման¹:

Ազգային համերաշխությամբ ու համընդհանուր շահերի վսեմ գիտակցությամբ ապրելու ու արարելու մեր ընթացքը պիտի լինի պատվաբեր»:

Այսպիսով Հայոց Առաքելական Եկեղեցին իր հայրապետերի ղեկավարությամբ անկախության տարիներին իրագործել է բազմաթիվ հայրենանվեր ձեռնարկներ և ամրապնդել միջազգային կապերը աշխարհի բազմաթիվ եկեղեցիների հետ, նպաստելով Հայաստանի Երրորդ Հանրապետության կայացման ու զարգացման գործընթացներին:

Деятельность армянских женщин в общественной и образовательно-культурной сферах армянской действительности во второй половине

XIX и начале XX века

Эдик Минасян

РЕЗЮМЕ

В научной статье на основе анализа богатого документального материала подробно описана роль армянских женщин в армянской общественной жизни, особенно в образовательной и культурной сферах, их широко-масштабная просветительская деятельность, от основания школ и училищ до создания ими обществ и благотворительных организаций, начиная со второй половины 19 века в эру национального пробуждения. В результате той активной героической работы было воспитано и получило образование целое поколение известных деяте-

¹ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», 2021, բացառիկ, էջ 28-29:

лей национально-освободительной борьбы, которые своей деятельностью доказали свою готовность безотказно служить родине и народу, и, будучи верными заветам, которые им передали революционно настроенные армянские женщины, они увековечили в деле армянской освободительной борьбы ту идею, что никакой другой преданности, кроме освобождения родины от чужестранцев, нет. Таким образом, после многовекового перерыва результаты общественно-просветительской и культурной деятельности армянских женщин во второй половине 19-го и начале 20-го века, не заставили себя долго ждать. Они проявились не только в освободительной борьбе, но и многими героическими подвигами армянских женщин наравне с армянскими мужчинами в ходе оборонительных боев в 1915-1923 гг., что способствовало восстановлению независимой армянской государственности, созданию первой Республики Армения в 1918-1920 гг.

The Activities of Armenian Women in the Social and Educational-Cultural Spheres of Armenian Reality in the Second Half of the 19th and Early 20th Centuries the 19th and Early 20th Centuries

Edik Minasyan

SUMMARY

Based on the analysis of rich documentary material, the scientific article describes in details the role of Armenian women in Armenian public life, especially in the educational and cultural spheres, their large-scale pedagogical activities, from the founding of schools and colleges to the creation of societies and charitable organizations, starting from

the second half of the 19th century in the era of national awakening. As a result of that active heroic work, a whole generation of famous figures of the national liberation struggle was brought up and educated, who by their activities proved their readiness to serve their motherland and people without fail, and, being faithful to the precepts that the revolutionary-minded Armenian women passed on to them, they immortalized in deed Armenian liberation struggle the idea that there is no other devotion than the liberation of the motherland from foreigners. Thus, after a centuries-old break, the results of the social, educational and cultural activities of Armenian women in the second half of the 19th and early 20th centuries were not long in coming. They manifested themselves not only in the liberation struggle, but also in many heroic deeds of Armenian women along with Armenian men during the defensive battles in 1915-1923, which contributed to the restoration of an independent Armenian statehood, the creation of the first Republic of Armenia in 1918-1920.

Էդիկ Մինասյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան, հայոց պատմության ամբիոնի վարիչի պաշտոնակատար: Մեկ տասնյակից ավելի դպրոցական և բուհական դասագրքերի և ուսումնա-մեթոդական ձեռնարկների համահեղինակն է: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայոց նոր և նորագույն պատմության հիմնահարցերը, հայոց ազատագրական պայքարի, հայոց ցեղասպանության, հայուհիների հերսական գործունեության, երկրորդ համաշխարհային պատերազմին հայերի մասնակցության հայոց ժամանակակից պատմության, ՀՀ ներքին և արտաքին քաղաքականության բազմաթիվ հիմնախնդիրներ.

✉ eminasyan@ysu.am

Эдик Минасян, доктор исторических наук, профессор, декан факультета истории Ереванского государственного университета, и.о. заведующего кафедрой истории Армении, Является соавтором более десятка школьных и вузовских учебников и учебных пособий. В круг его научных интересов входят проблемы новой и новейшей истории Армении, армянской освободительной борьбы, Геноцида армян, героической деятельности армянских женщин, участия армянского народа во Второй мировой войне, многие проблемы внутренней и внешней политики Республики Армения.

✉ eminasyan@ysu.am

Edik Minasyan, Doctor of History, Professor. Dean of the Faculty of History, Yerevan State University, Acting Head of the Chair of History of Armenia, He is a co-author of more than a dozen school and university textbooks, as well as manuals. His scientific interests include the problems of modern and recent history of Armenia, the Armenian liberation struggle, the Armenian Genocide, the heroic activities of Armenian women, the participation of the Armenian people in World War II, and many problems of the domestic and foreign policy of the Republic of Armenia.

✉ eminasyan@ysu.am

**ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ԻՐԱՆԱՀԱՅ
ԿԵԱՆՔՈՒՄ**

Հիմնաբառեր՝ Իրանահայ, Էջմիածնի Մայր Աթոռ, Մեծի Տանն Կիլիկիոյ, Ա.Թադէի վանք, Թեմեր, Անթիլիաս:

Ключевые слова: Ирано-армянский, Первопрестольный Эчмиадзин, Великий Дом Киликии, Монастырь Св. Фаддея, церковные епархии, Антилиас.

Keywords: Iranian-Armenian, Mother See of Etchmiadzin, Great House of Cilicia, St. Thaddeus Monastery, Ecclesiastical dioceses, Antilias.

Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը երկու տարբեր ժամանակաշրջաններում իր դերն ու ազդեցութիւնն է ունեցել իրանահայ կեանքում, առաջինը ԺԳ դարում երբ Ամէնայն Հայոց Կաթողիկոսութիւն էր, իսկ երկրորդը 20-րդ դարում որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն:

Իրանի տարածքում հայերը ունեցել են թէ բնիկ և թէ գաղթական կարգավիճակ: Իրանի հիւսիս արևմտեան տարածքներում, որը պատմական Հայաստանի Պարսկահայք նահանգը և Վասպուրական նահանգի մի մասն է, հայերը բնիկ են եղել, իսկ Իրանի միւս շրջաններում ունեցել են գաղթականի կարգավիճակ:

Իրանահայ համայնքը թէ բնիկ և թէ գաղթական վիճակով միշտ սերտ կապի մէջ է եղել Ամէնայն Հայոց Կաթողիկոսութեան հետ և ենթարկուել նրա որոշումներին ու բնականաբար Աթոռի հետ տեղի ունեցած որևէ իրադարձութիւն իր ազդեցութիւնն է թողել Իրանի հայ համայնքի կեանքում:

Ներկայիս, Հայ Առաքելական Եկեղեցու երեք թեմեր կան Իրանի տարածքում, իրենց թեմակալ առաջնորդներով, որոնցից ամենահինը Ատրպատականի թեմն է, ապա Նոր Զուղայի (նախկին Իրան-Հնդկաստան) թեմը և ամենաերիտասարդը՝ Թեհրանի թեմն է, որոնք Ի դարի կէսից ենթարկուել են Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան:

Իրանի Մակու (պատմական Արտազ) գաւառում է գտնուում Ս. Թադէի վանքը, որտեղ ամփոփուած է Ս. Թադէոս առաքեալի աճիւնները, որը Ս. Բարդուղէմիոս առաքեալի հետ հիմնադրել են Հայաստանեայց Առաքելական եկեղեցին, որի պատճառով էլ Ս. Թադէի վանքը միշտ եկեղեցու ղեկավարութեան ուշադրութեան կենտրոնում է գտնուել և կարևոր դեր է ունեցել կաթողիկոսների ընտրութեան ժամանակ¹: Ս. Թադէի վանքը սկսած Դ դարից, հոգևոր կարևոր կենտրոն լինելուց բացի, իրանահայ համայնքը կաթողիկոսութեան հետ կապող կամուրջ է եղել, որովհետև այնտեղ է գտնուել համայնքի հոգևոր ղեկավարութիւնը: Կաթողիկոսութեան Աթոռը տեղափոխուելով Կիլիկիա, չնայած իրանահայ համայնքը շարունակում էր ենթարկուել Կիլիկիայի կաթողիկոսութեան, բայց հեռու ընկնելով կաթողիկոսութեան աթոռից, իր կապը հայրենիքի հետ պահպանում էր որոշ ժամանակ Աղթամարի կաթողիկոսութեան, ապա Սիւնիքի հոգևոր կենտրոնների միջոցով, մինչև ԺԳ դարի իրադարձութիւնները:

Խաչակրաց արշաւանքների արդիւնքում Կիլիկիայի թագաւորութեան հարևանութեամբ կազմաւորուեց Խաչա-

¹ Տէս Ա. Մանուչարեան, Միջնադարեան Հայաստանի մի քանի ազդեցիկ եպիսկոպոսական Աթոռների սահմաններն ըստ վիմագրերի, «Բանբեր» եՊՀ, 2019, թիվ 1, էջ 31-39:

կիրնների իշխանութիւններ, որոնք գտնւում էին կաթողիկ եկեղեցու ղեկավար՝ Պապի ազդեցութեան տակ:

Կաթողիկ Եկեղեցու հոգևորականները և քարոզիչները, որոնք տարածուած էին խաչակիրների իշխանութիւններում նաև Կիլիկիայում, հայերին խրախուսում էին ընդունել կաթողիկ դաւանանքը, իսկ ԺԳ դարից, երբ Իկոնիայի սուլթանութիւնը սկսեց յարձակուել Կիլիկիայի արևմտեան սահմաններին, ապա հարաւից Կիլիկիան վտանգուեց Մամլուքների միջոցով, Պապերը առիթը օգտուելով պատրաստակամութիւն յայտնեցին Կիլիկիային ռազմական օժանդակութիւն ցուցաբերել, եթէ Հայոց եկեղեցին ընդունի կաթողիկ դաւանանքը և ենթարկուի Պապերի գերազահութեանը:

Նոյն պահին դաւանական վէճեր էին տեղի ունենում երկու Եկեղեցիների հոգևորականների միջև, թէ որ Եկեղեցին է գտնւում քրիստոնէական ճիշտ ուղու վրայ: 1246 թ. Պապը մի նամակ է ուղարկում Կոստանդին Ա. Բարձրաբերդցի (1221-1267 թթ) կաթողիկոսին, որտեղ շեշտում է թէ կաթողիկ եկեղեցին հիմնուել է Պետրոս առաքեալի միջոցով, որը միակ Եկեղեցին է, որ Առաքելական է և սոյն Առաքեալի իրաւայաջորդը Պապն է, ուստի նա իրաւունք ունի գլխաւորելու բոլոր քրիստոնեայ Եկեղեցիները: Կոստանդին Ա. Բարձրաբերդցի կաթողիկոսը հենուելով Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալների վրայ, որոնք հիմնել էին Հայաստանեայց Առաքելական եկեղեցին, մերժելով Պապի մօտեցումը պատասխանում է նրան թէ, Հայոց Եկեղեցին ևս Առաքեալներն են հիմնել, որից յետոյ նրա ուշադրութեան կենտրոնում է յայտնւում Ս. Թադէի վանքը, որը այդ օրերին նորոգման ընթացքի մէջ էր: Նա մի կոնդակով վերահաստատում է Ս. Թադէի վանքի եպիսկոպոսանիստ լինելը նաև այն կարգում է Արտազ գաւառի առաջնորդանիստ և նիւթական օժանդակութիւն ցուցաբերում վանքին: Կիրակոս Գանձակե-

ցու վկայութեամբ՝ Կոստանդին Ա. Բարձրաբերդցի կաթողիկոսը կոնդակով վանքին է նուիրում նրա տարածաշրջանի գիւղերը և ընծաներ ուղարկում վանքի համար¹ որպէսզի բարձրացնելով Ս. Թադէի վանքի հոգևոր դիրքը, հակակշռել Պապի մօտեցմանը:

Բայց Ս. Թադէի վանքը ուշադրութեան կենտրոն դառնալով, աւելի ուշ դաւանական փոթորիկի օջախ դառաւ, երբ Կիլիկիայում նստած Գրիգոր է. Անաւարդեցի (1293-1307 թթ) և Կոնստանդին Գ. Կեսարացի (1307-1322 թթ) կաթողիկոսները որոշեցին Հայ Առաքելական եկեղեցին միաւորել Կաթողիկ եկեղեցու հետ, որի դիմաց Պապը ռազմական օժանդակութիւն պիտի ցուցաբերեր Կիլիկիային: Այդ որոշումին դէմ դուրս եկան մի շարք հոգևոր կարևոր կենտրոններ, իսկ Ս. Թադէի վանքի վանահայր Տիրացու Ա. Եպիսկոպոսը (1285-1298 թթ) հակառակ միաբանութեան մօտեցումին, ենթարկուեց կաթողիկոսի որոշմանը:

Պապի հրամանով 1293 թ. Իրանի Մարաղա² քաղաքում կենտրոնացան կաթողիկ քարոզիչներ և կազմաւորեցին Ունիթորական³ շարժումը, որից յետոյ տեղափոխուեցին Մակու (Արտազ) և կաթողիկոսի թոյլտուութեամբ հաստատուեցին Ս.Թադէի վանքում⁴, նրա հոգևոր կարևորութիւնը նկատի առնելով: Վանքում դաւանական վէճերը աւելի սրեց երբ 1315 թ. վանահայր ապա 1321 թ. թեմի առաջնորդ նշանակուեց Զաքարէ Ա. Եպիսկոպոսը, որը հովանաւորում էր Կիլիկիոյ կաթողիկոսութեան և կաթողիկ քարոզիչների կողմից:

¹ Տէն «Բանբեր Մատեադարանի», 2020, թիվ 29, էջ 304:

² Տէն Գոնուտ է Ատրպատականում, Թաւրիզ քաղաքից հարաւ:

³ Տէն Միաբանող եղբայրներ:

⁴ Տէն «Բանբեր Մատեադարանի», 1973, թիվ 11, էջ 147:

1317 թ. Ադանայում տեղի ունեցավ հոգևորականների բարձրագույն ժողով, որին ներկայ էին նաև Պապի ներկայացուցիչները, ելքեր փնտրելու նպատակով, չեղոքացնել ընդդիմութեան կենտրոնները: Այդ ժողովին նաև հրաւիրած էր Ս.Թադէի վանքի վանահայր՝ Զաքարէ եպիսկոպոսը:

Բայց նկատի առնելով Հայաստանի հոգևոր կենտրոնների ընդդիմանալը, որոնց հետ համագործակցում էին Ս. Թադէի վանքի միաբանութիւնը, կաթողիկ քարոզիչները պարտադիր եղան 1340 թ. լքել Ս. Թադէի վանքը և տեղափոխուել իրենց միջոցով ԺԳ հարիւրամեակի վերջին հիմնած Ծոր Ծորի վանքը, որի դպրոցի հիմնադիր և առաջին վանահայրն էր եղել՝ Յովհաննէս եպիսկոպոս Երզնկացին կամ Ծործորեցին (1225-1293 թթ.), որի մահից յետոյ նրան յաջորդել էր Ֆրանցիսկեան հոգևորական Ֆրա Բոնիֆէսիուսը (Fra Bonifacius):

Հարկ է նշել, որ Ծոր Ծորի վանքի Ս. Աստածածին եկեղեցին մինչև օրս կանգուն է, որը սիմուլն է Ունիթորական և Հայ Առաքելական հոգևորականների անհաշտ պայքարի: Եկեղեցին վերանորոգուելուց յետոյ, Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսի ձեռամբ օծուեց 2001 թ., որպէս Հայ Առաքելական եկեղեցի:

Ս. Թադէի վանքում Զաքարէին ընդդիմացող հոգևորականներից էր վարդապետ Մեսրոպ Արտագեցին, որը 1359 թ. ընտրուեց կաթողիկոս և 1362 թ. չեղարկեց նախկին երկու կաթողիկոսների որոշումը, բայց վերջ չը դրուեց դաւանական վէճերին, որ երկար ժամանակ շարունակուեց իրանահայ համայնքում, յատկապէս Արտագ գաւառում և թողեց իր բացասական հետեւանքները:

1441 թ. երբ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան Աթոռը վերադարձաւ Հայաստան, իրանահայերը ենթարկուեցին էջ-

միաձնի Մայր Աթոռի կաթողիկոսութեան, որը շարունակուեց մինչև Ի դարի կէսը:

Մինչև 1604 թ. իրանահայ համայնքը հիմնականում կենտրոնացած էր Իրանի հիւսիս արևմտեան շրջաններում, բայց սոյն թուականին փոխուեց պատկերը: Շահ Աբբաս Ա հրամանով մի քանի հարիւր հազար հայեր բռնի գաղթեցւում են Իրանի խորքերը, որի հետևանքով կազմաւորւում են բազմաթիւ նոր գաղթավայրեր: Ժամանակի Իրանի մայրաքաղաք Սպահանի հարաւում, բնակչութիւն են հաստատոււմ Արաքս գետի ափին գտնուող Զուղա քաղաքի հայերը, որոնք հիմնում են Նոր Զուղայի ականը: Նոր Զուղայեցիները կառուցում են եպիսկոպոսանիստ վանք, որը ի յիշատակ Նախիջևանի Ամենափրկիչ վանքի, կոչւում են սոյն անունով, որտեղ կազմւում է իրանահայութեան երկրորդ թեմը, Իրան-Հնդկաստան անունով, որը ևս ենթարկւում էր էջմիածնի Մայր Աթոռին:

Հայաստանի առաջին հանրապետութեան անկումից յետոյ, Իրանը հայ հակաբոլշևիկեանների ճամբար դառաւ, որոնք պաշարւում էին վերականգնել Հայաստանի անկախութիւնը, իսկ հորհրդային Միութեան յատուկ ծառայութիւնը իրենց գործակալներին, որոնք հիմնականում հայեր էին գործուղւում է Իրան, պաշարելու նրանց դէմ: Այդ իրավիճակում Իրանի երկու թեմերը իրենց կապը պահպանելով էջմիածնի հետ, ջանում էին հեռու մնալ գաղթօջախներում տեղի ունեցող քաղաքական միջադէպերից:

1930ականներին մեծացել էր հայ համայնքի թիւը Իրանի մայրաքաղաք՝ Թեհրան քաղաքում, որոնք դիմում են Մայր Աթոռին, թոյլտուլիւն ստանալու համար անջատուելով Իրան-Հնդկաստան թեմից, հիմնել Թեհրանի թեմը¹, որը հաս-

¹ Տե՛ս «Հայ Սփիւռքի հանրագիտարան», Երևան 2003, էջ 249:

տատուում է և կաթողիկոսի տեղակալ Գեորգ արքեպս. Չէորէքեանը մի պատուիրակութեան հետ ժամանում է Թեհրան, կարգաւորելու Թեհրանահայ համայնքի խնդրանքը¹ և այսպիսով 1944 թուականից էջմիածնի Մայր Աթոռին պատկանող Իրանի թեմերի թիւը դառնում է՝ երեք:

Հարկ է նշել, որ 1931 թուականից Իրանում հակախորհրդային հայ քաղաքական ուժերը ջանում էին Անթիլիասը հանել էջմիածնի դէմ², բայց այդ օրերին նրանց չը յաջողեց իրագործել իրենց ծրագիրը և չը կարողացան իրենց ազդեցութեան տակ առնել նոր հիմնուած թեմը, մինչդեռ ԱՄՆ-ում հասել էին որոշ յաջողութիւնների:

Հակառակ քաղաքական տիրող իրավիճակին, իրանահայ երեք թեմերը սերտ կապի մէջ էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ, այնպէս որ համաշխարհային պատերազմի ժամանակ իրենց ներդրումը ունեցան կաթողիկոսութեան կողմից Սասունցի Դաւիթ հրասայլերի շարասեան կազմաւորման ընթացքին³:

Համաշխարհային երկրորդ պատերազմից յետոյ աշխարհը բաժանուեց երկու հակադիր ճամբարների, որը թողեց իր անմիջական ազդեցութիւնը մեր ժողովուրդի վրայ: Հայաստանը գտնւում էր Խորհրդային Միութեան ճամբարում իսկ Միջին արևելքում և արևմուտքում գաղթօջախները հակառակ ճամբարում էին: Այդ իրավիճակում չնայած էջմիածնի Մայր Աթոռի և Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնները գտնւում էին երկու հակադիր ճամբարներում, բայց ամեն ճիշդ ու ջանք տարւում էր պահպանելու սերտ հա-

¹ Տե՛ս «Էջմիածին» Զ, 1944, էջ 24, նաև «Ալիֆ» օրաթերթ, 1944, Թեհրան քիւ 98:

² Տե՛ս Միլզայիսանյան Հ., Իրանահայ համայնքի իրողութիւնները Առն Անարունեանի Փոքրկի մէջ, Թեհրան 2010, էջ 10:

³ Տե՛ս «Էջմիածին», Ա.Գ, 1944, էջ 13, 6:

մագործակցութիւնը մինչև 1950ականների իրադարձութիւնները:

1945 թ. Փետրուար 15-ին, Թեհրան է ժամանում Մայր Աթոռի միաբան՝ Վահան Եպիսկոպոս Կոստանեանը, որպէս Իրան-Հնդկաստան համայնքի թեմակալ առաջնորդ, որին դիմաւորում են Թեհրանի հայ համայնքի եկեղեցական ու հասարակական մարմինների ներկայացուցիչները¹: Թեհրանի թեմի պատգամաւորական ժողովի որոշումով Կոստանեանը նաև նշանակում է Թեհրանի թեմի առաջին թեմակալ առաջնորդ, որն ըստ կատարուած դիմումի հաստատում է կաթողիկոսական տեղակալը: Ապա Կոստանեանը որպէս երկու թեմերի առաջնորդ ներկայանում է Իրանի արքայ՝ Մոհամէդ Րեզա շահին²:

Խորէն Ա. Մուրադբէկեան կաթողիկոսին (1932-1938 թթ.) խեղտամահ անելուց յետոյ Ամենայն Հայոց կաթողիկոսի Աթոռը թափուր էր մնացել, մինչև 1945 թ., երբ կաթողիկոս է ընտրւում Գէորգ Զ. Զէորէքեանը (1945-1954 թթ.), որի օծման առիթով էջմիածին է ժամանում Գարեգին Ա. Յովսէփեան (1943-1952 թթ.) Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսը:

Կոստանեանը որպէս Իրան-Հնդկաստանի և Թեհրանի համայնքների առաջնորդ ներկայ էր կաթողիկոսի ընտրութեան և օծման արարողութեան, և իր հետ Մայր Աթոռ էր բերել իրանահայ համայնքների ողջոյնի և շնորհաւորական խօսքը նաև դրամական նուիրատուութիւն, իսկ վեհափառի համար թանկարժէք գորգ և մի աւտօմեքենայ³:

Գարեգին Ա. կաթողիկոսը օծման արարողութիւնից յետոյ մեկնում է Իրան: Թեհրանի համայնքը արդէն աւարտել

¹ Տե՛ս «Էջմիածին» Գ.Դ, Մարտ և Ապրիլ 1945, էջ 7:

² Տե՛ս անդ., էջ 9 և 11:

³ Տե՛ս «Էջմիածին», Զ.Է, 1945, էջ 24-25:

էր թեմի առաջնորդանիստ Ս. Աստուածածին եկեղեցու շինարարութիւնը, որի օծումը կատարուեւ է Գարեգին Ա. Յովսէփեան կաթողիկոսի ձեռամբ 29 Յուլիս 1945 թ., Թեհրանի թեմի առաջնորդ՝ Կոստանեանի, Ատրպատականի թեմի առաջնորդ՝ Ներսէս Մելիք Թանգեանի և Երուսաղէմի պատրիարք՝ Գէորգ Իսրայէլեանի ներկայութեամբ: Հաւանաբար Գարեգին Ա. կաթողիկոսը, Ամենայն Հայոց կաթողիկոսի խնդրանքով էր կատարել Ս. Աստուածածին եկեղեցու օծումը, որ ապացոյցն էր երկու կաթողիկոսութիւնների մէջ գոյութիւն ունեցող համերաշխութեան:

1946 թուականին Կոստանեանը մեկնում է Նոր Զուղայ, ստանձնելու Իրան-Հնդկաստան թեմի առաջնորդի պարտականութիւնը, իսկ նրա տեղը Թեհրան է ժամանում Ռուբէն Եպիսկոպոս Դրամբեանը: Նա կարևոր դեր ունեցաւ 1946 թ. դէպի Հայաստան կատարուած իրանահայրութեան զանգուածային ներգաղթի կազմակերպման մէջ:

Համաշխարհային երկրորդ պատերազմից յետոյ Իրանը որդեգրել էր հակախորհրդային քաղաքականութիւն և սկսել երկրի ներսում հալածել և հետապնդել խորհրդային միութեան համակիրներին, իսկ ԽՍՀՄ-ի քաղաքացիներին դիտում էին որպէս լրտեսներ: Վատատեսութիւնը այն աստիճանի է հասնում, որ երբ մահանում է Ատրպատականի թեմի առաջնորդ արքեպս. Մելիք Թանգեանը 1948 թ., Մայր Աթոռը չի կարողանում նրա տեղը նոր առաջնորդ գործուղել Թաւրիզ և թեմի գործերը երկար տարիներ ղեկավարում էին տեղացի հոգևորականները, որպէս առաջնորդի տեղակալներ:

Բայց բոլոր դժուարութիւններով հանդերձ իրանահայ համայնքն իր կապը պահում է Մայր Աթոռի հետ, այնպէս,

որ համայնքը շարունակում է իր նուիրատուներին կատարել Մայր Աթոռին¹։

1949 թ. Իրանի նախարարների խորհուրդի որոշումով, Իրանի ժամանած հոգևորականները պետք է ընդունվեն Իրանի քաղաքացիություն, որը դժուարություն առաջացրեց ԽՍՀՄ-ի քաղաքացիություն ունեցող թեմերի առաջնորդների համար, և Կոստանեանը պարտադրուած լքում է Իրանը։ Հարկ է նշել, որ Դրամբեանը այդ օրէնքը ընդունելուց 6-7 ամիսներ առաջ, մինչև օրս չը պարզուած պատճառով լքել էր Թեհրանի թեմը և վերադարձել հայրենիք²։

Իսկ Մայր Աթոռը թեմերի ներկայացուցիչների միջոցով, Իրանի իշխանությունների հետ բանակցություններ է սկսում, ելք գտնելու սոյն կացութեան համար։

1952 թ. մահանում է Գարեգին Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսը իսկ նոր կաթողիկոսի ընտրութեան համար Անթիլիասում անհամաձայնություն է ծագում, որը դուրս գալով Անթիլիասի հոգևորականների շրջանակից տարածում է Սիրիայի և Լիբանանի համայնքներում։ Այդ տարածայնութեան հիմնական պատճառը աշխարհում գոյություն ունեցող երկու հակադիր ճամբարների ազդեցությունն էր։ Դրանցից իւրաքանչիւրի հայ ներկայացուցիչները ջանում էին Կիլիկիոյ կաթողիկոսությունն իրենց հսկողութեան տակ առնել։

1955 թ. Սեպտեմբեր 30-ին Ամենայն Հայոց կաթողիկոս է ընտրւում Վազգէն եպիսկոպոս Բուխարեստեցին (Պելճեան)։ Կաթողիկոսի ընտրութեան ներկայ էին Կիլիկիոյ կաթողիկոսութեան ներկայացուցիչները։ Ընտրությունը կատարւում է Մայր Աթոռին պատկանող թեմերի ներկայացուցիչների մի-

¹ Տե՛ս «Էջմիածին», Գ.Դ, 1948, էջ 89։

² Տե՛ս «Էջմիածին», Բ, 1952, էջ 17։

ջոցով, որոնց մէջ էին նաև իրանահայ երկու թեմերի¹ ներկայացուցիչները², որը ապացոյցն էր, թէ տիրող վիճակում դեռ իրանահայ թեմերը իրենց կապը պահպանել էին Մայր Աթոռի հետ:

Անթիլիասում տեղի ունեցող քաղաքական տարաձայնութիւնների հետևանքով դեռևս չէր յաջողել կաթողիկոս ընտրել, ուստի Վազգէն Ա. կաթողիկոսը առաջարկում է Կիլիկիոյ կաթողիկոսութեան բոլոր եպիսկոպոսներին և ազգային իշխանութեան ներկայացուցիչներին, նաև Երուսաղեմի ու Կոստանդնուպոլսի պատրիարքներին մեկնեն էջմիածին, որտեղ լուծեն գոյութիւն ունեցող խնդիրը և օծեն նոր կաթողիկոսին, որը Կոստանդնուպոլսի պատրիարք Գարեգին արքեպս. ընդառաջում է, բայց Անթիլիասից կաթողիկոսի տեղապահ խորեն եպիսկոպոս Բարոյեանը առաջարկը մերժում է: Վազգէն կաթողիկոսը պատասխան հեռագրով պատրաստակամութիւն է յայտնում օժանդակել Անթիլիասի միաբանութեան որպէսզի կաթողիկոսի ընտրութիւնը կատարուի Անթիլիասում³:

Ուստի Անթիլիասում խնդիրները լուծելու նպատակով, Վազգէն Ա. կաթողիկոսը 1956 թ. Փետրուար 12-ին Պէյրութ է ժամանում, մասնակցելու պատգամաւորական ժողովին, որի ընթացքին պիտի ընտրուէր կաթողիկոսը, բայց ժողովը անարդինք աւարտւում է և վեհափառը հեռանում է Անթիլիասից: Իսկ Փետրուար 20-ին նորից գումարւում է պատգամաւորական ժողով, որի ընթացքին ընտրւում է Զարեհ եպիսկո-

¹ Իրան-Հնդկաստան թեմից, Վարդան աւագ ֆահանայ Վարդանեանը, Խաչիկ Եղիկեանը և Հայկ Նաչարեանը: Ատրպատականի թեմից, Կարապետ աւագ ֆահանայ Տէր Կարապետեանը, Ռոման Արզումանեանը և Խաչիկ Հայրապետեանը: Տե՛ս «էջմիածին», Ժ.ԺԱ, 1955, էջ 31:

² Տե՛ս անդ:

³ Տե՛ս «էջմիածին», Զ, Յունիս 1956, էջ 8-9:

պոսը, որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս, որը չի ընդունում Անթիլիասի մի խումբ եպիսկոպոսների նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից: Միաբանութեան այն խումբը, որ մերժում էր կաթողիկոսի ընտրութիւնը, խաղ եպիսկոպոս Աջապահեանին ընտրում է որպէս կաթողիկոսի տեղակալ մինչև նոր կաթողիկոսի ընտրութիւնը: Սոյն վիճակի հետևանքով երկու խմբերի և նրանց հովանաւորող քաղաքական ուժերի մէջ քաշքշուք է տեղի ունենում, որը հանգում է ֆիզիքական բախումների:

Վազգէն Ա. կաթողիկոսը 1956 թ. Օգոստոս 13-ին մի նամակով ամբողջ եղելութիւնը բացատրում է Լիբանանի նախագահ Քամիլ Շամունին և տեղեկացնում նրան, որ Հայոց եկեղեցու եպիսկոպոսական դասի կողմից Զարեհ եպիսկոպոսի ընտրուելը որպէս կաթողիկոս օրինական չի համարւում¹:

Վազգէն Ա. կաթողիկոսը երկու կողմերին հրաւիրում է էջմիածին, անհամաձայնութիւնները լուծելու նպատակով նաև Զարեհ և Ղևոնդ եպիսկոպոսներից խնդրում հետաձգել կաթողիկոսի ընտրութիւնը մինչև երկու կողմերի բանակցութիւնը, բայց այն մերժում է խորէն եպիսկոպոսի կողմից և Զարեհ եպիսկոպոսին որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս օծում են Սեպտեմբեր 2-ին²: Սա պիտի համարել էջմիածնի Մայր Աթոռի և Անթիլիասի կաթողիկոսարանների նախկին սերտ յարաբերութիւնների աւարտը³:

Այն քաղաքական ուժերը, որոնք հովանաւորել էին Զարեհ կաթողիկոսին հակախորհրդային մօտեցում ունէին, որի գործունէութիւնը համընկնում էր Իրանի, Յունաստանի և

¹ Տէն «Էջմիածին», Լ-Թ, 1956, էջ 10:

² Տէն նոյն տեղում, էջ 10-14, նաև «Էջմիածին», Ժ-ԺԲ, 1956, էջ 8:

³ Տէն «Էջմիածին», Ժ-ԺԲ, 1956, էջ 8-12, նաև «Էջմիածին», Գ, Մարտ 1960:

ԱՄՆ-ի վարած քաղաքականութեան հետ: Հակախորհրդային այդ ուժերը 1952 թուականից սկսել էին իրենց ազդեցութիւնը տարածել Իրանի երէք թեմերի պատգամաւորական ժողովների վրայ, որոնց մօտեցումը համընկնում էր Իրանի իշխանութիւնների որդեգրած քաղաքականութեան հետ, յատկապէս, որ Իրանը 1955 թ. միացաւ ԱՄՆ-ի կազմաւորած CENTO¹ կազմակերպութեանը, որի նպատակն էր պայքարել ԽՍՀՄ դէմ և նրա ազդեցութիւնը չէզոքացնել տարածաշրջանում:

Չնայած Իրանը և ԽՍՀՄ գտնուում էին հակադիր ճամբարներում բայց դեռևս մինչև 1957 թ. իրանահայութեան երեք թեմերի հոգևոր դասը իրենց կապը պահպանել էին Մայր Աթոռի հետ²: Իսկ անկախ գոյութիւն ունեցող աշխարհաքաղաքական վիճակից Ամենայն Հայոց կաթողիկոսը ջանում էր իր կապը պահպանել Իրանի արքայի հետ, լուծելու նպատակով գոյութիւն ունեցող դժւարութիւնը³:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Կիլիկիոյ կաթողիկոսութեան յարաբերութիւնները դառնում են մրցակցային և աշխարհում տիրող քաղաքական իրավիճակի ազդեցութեան ներքոյ հայկական կուսակցութիւնների գործունէութեան հետեանքով աւելի է խորանում նրանց միջև գոյութիւն ունեցող սառն վերաբերմունքը: Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը ջանում է իր ազդեցութեան տակ առնել Իրանի երեք թեմերը, որն աննկատ չի մնում Մայր Աթոռի աչքին, որ իր սրտնեղութիւնն է յայտնում Կիլիկիոյ կաթողիկոսութեան⁴:

Իրանի երէք թեմերից, Թեհրանի թեմը առաջինն էր, որ 1958 թ. Մարտի 29-ին մի կարճ նամակով տեղեկացնում է

¹ Central Treaty Organization՝ Կենտրոնական դաշնագրի կազմակերպութիւն:

² Տե՛ս «Էջմիածին» Ա, 1957, էջ 24 և 26, նաև «Էջմիածին», Դ, 1957, էջ 14 և 20:

³ Տե՛ս «Էջմիածին», Դ, Ապրիլ 1958, էջ 7:

⁴ Տե՛ս «Էջմիածին», Ե, 1958, էջ 3-7:

Վազգէն Ա. կաթողիկոսին թէ Թեհրանի թեմի պատգամաւորական ժողովը հիմնւելով Իրանի նախարարների խորհուրդի 1949 թ. որոշումի վրայ, որոշել է դադարեցնել իր «ձևական կապը» էջմիածնի Մայր Աթոռի հետ, որին ի պատասխան Վազգէն Ա. կաթողիկոսը Ապրիլ 24-ին մի նամակով մերժում է կայացրած որոշումը այն անօրինական համարելով և վստահեցնում Թեհրանի Թեմական խորհուրդին, որ Իրանի իշխանութիւնների հետ տեղի ունեցող բանակցութիւնները պիտի արդիւնք տան, ուստի խրախուսում է Թեմական խորհուրդին որևէ գործ չը ձեռնարկել այդ կապակցութեամբ¹:

1958 թ. Անթիլիասից Իրան է ժամանում Խորէն արքեպիս. Բարոեանը, որը հանդիպումներ է ունենում երեք թեմերի Թեմական խորհուրդների և համայնքների քաղաքական ղեկավարութեան հետ: Տեղի ունեցող բանակցութիւնների բուն թեմաները և մանրամասութիւնները մինչև օրս չի հրապարակւել:

Սոյն տարւայ Յուլիսի 24-ին Ատրպատականի թեմի կողմից, Թեհրանի թեմի նամակի բովանդակութիւնով մի նամակ է յղւում Վազգէն Ա. կաթողիկոսին, որտեղ նշւում է, թէ թեմի պատգամաւորական ժողովը Յուլիս 12-ին որոշել է դադարեցնել «ձևական կապը» Մայր Աթոռի հետ և Անթիլիասին միանալու որոշում է կայացրել, իսկ նոյն ժամանակ Անթիլիասից ևս մի նամակ է ուղարկւում էջմիածնի Մայր Աթոռին և տեղեկացնում թէ Իրանի երէք թեմերը արդէն պատկանում են Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան: Էջմիածին Մայր Աթոռից նամակ է յղւում Ատրպատականի թեմին Սեպտեմբեր 1-ին և տեղեկացնում, որ Մայր Աթոռի համար անընդունելի է թէ Թեհրանի և թէ Ատրպատականի թեմերի

¹ Տե՛ս «Էջմիածին», Զ, 1958, էջ 7-8:

պատգամաւորական ժողովների որոշումը, անջատուելու համար էջմիածնի Մայր Աթոռից¹։

Հարկ է նշել, որ Մայր Աթոռին պատկանող թեմերի անջատուելու գործընթացքը չի սահմանափակուում միայն Իրանով, այնպէս, որ դոյն տարուայ Հոկտեմբեր ամսին յունահայ թեմը ևս դադրեցնում է իր կապը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ և միանում Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան²։

Հակառակ էջմիածնի Մայր Աթոռի մերժումին և իրանահայ համայնքների ցանկութեան³, Իրանահայ քաղաքական ուժերի որոշումով և Իրանի ժամանակի իշխանութեան ցանկութեամբ, երեք թեմերը անցնում են Կիլիկիոյ կաթողիկոսութեան հսկողութեան ներքոյ և իւրաքանչիւր թեմի համար Անթիլիասից գործուղում են թեմակալ առաջնորդներ։

1959 թ. Թեհրանի թեմի առաջնորդ է նշանակում՝ Արտակ արքեպս. Մանուկեանը, 1961 թուականին Իրան-Հնդկաստան թեմի համար նշանակում է Ներսէս վարդապետ Բախտիկեանը, իսկ Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսէս արքեպս. Մելիք Թանգեանի մահից յետոյ 1948 թ., թեմի հոգևոր գործերը ղեկավարում էին տեղապահ հոգևորականների միջոցով մինչև 2002 թ., երբ Անթիլիասից Թարիզ է ժամանում Նշան արքեպս. Թոփուզեանը, որպէս Ատրպատականի թեմի առաջնորդ։

Ի դարի՝ երեք թեմերին կապուող իրադարձութիւնների փաստաթղթերը մինչև օրս չեն հրատարակուել, և շատ հարցեր անպատասխան են մնացել։ Իսկ հասարակութեան այն հարցին, թէ ինչու թեմերը անջատուեցին Մայր Աթոռից, համայնքի ղեկավարութիւնն անջատուելու միակ պատճառը

¹ Տե՛ս «Էջմիածին», Թ, 1958, էջ 7-8։

² Տե՛ս «Էջմիածին», Գ, 1960, էջ 48։

³ Տե՛ս Ատն Ահարոնեան, Փոքրկոտ կեանքիս օրերը, Թեհրան 2009, էջ 384։

ներկայացնում է 1949 թ. Իրանի իշխանութիւնների քաղաքական դիրքորոշմանը¹: Մինչդեռ պարզ իրականութիւն է, որ Հայաստանի խորհրդայնացումից յետոյ Հայաստանից դուրս գտնուող հայկական հակախորհրդային ուժերը նպատակադրուել էին Մայր Աթոռից պոկել այն բոլոր թեմերը, որոնք գտնուում էին ԽՍՀՄ տարածքից դուրս և դրանք կցել Անթիլիասի կաթողիկոսութեան, իրենց քաղաքական նպատակները իրագործելու համար², ինչն աւելի արագ ընթացք ստացաւ Բ աշխարհամարտից յետոյ առաջացած իրադրութեան բերումով:

1958 թ. իրանահայ համայնքը հակառակ իր ցանկութեան պարտաւորուեց դարաւոր կապը խզել Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի հետ, որի դրական կամ բացասական հետևանքները քննարկման նիւթ են:

РОЛЬ КАТОЛИКОСАТА КИЛИКИИ В ЖИЗНИ ИРАНСКИХ АРМЯН

Шаген Овсепян

РЕЗЮМЕ

Католикосат Киликии в две разные период времени имел свою роль и влияние в жизни иранских армян. Первое было в 13-ом веке, когда Киликийский Католикосат был еще католикосатом всех армян, а второе влияние было уже когда он был Католикосатом Великого Дома Киликии.

После Крестовых походов в 1246г. Римский Папа отправил письмо католикосу всех армян Константину Первому Бардзрабердци, где подчеркивал, что

¹ Տե՛ս «Յոյս», Թեհրան, թիվ 64:

² Տե՛ս **Յովհաննէս Փանկեանեան**, Իրանահայ համայնքը, Երևան 1989, էջ 174:

католический церковь был основан благодаря Апостола Петра, и значит, что католическая церковь является единственной Апостольской цер-ковью и преемником этой церкви является Римский Папа, и только он имеет право возглавлять все Христианские церкви. Католикос Бардзрабердский основываясь на том, что Армянская церковь осно-вали Апостолы Фадей и Варфоломей и что армян-ская церковь тоже основали Апостолы и она имеет полное право называться Апостольской, и отказал Папе, ответив, что Армянская Апостольская Церковь то-же основали Апостолы.

Константин Бардзрабердский католикос стал про-водить объединяющую политику армянских церквей, и таким образом его внимание сосре-доточелось и на монастырь им. Святого Фадея, который находился в регионе Маку современного Ирана. Но ситуация так не остовалась и религиозная буря дошла и до монастыря Св. Фадея. По решению католи-косов Григория VII Анаварзийского и Константина III Кесарийского, Армянская Апостольская Церковь объединилась с Католической церковью. Против этого решения выступили священники нескольких знаменитых духовных центр, а вот монастырь Св. Фаддея подчинялся решению католикоса.

Имея в виду то, что армянские духовные центры были против воссоединению с католической цер-ковью, католические проповедники в 1340г. вынужденно покинули монастырь Св. Фадея и переехали в монастырь Цор Цори. В 1362 г. католикос Месроп Артазинский отменил решения предедущих католи-косов, но не смотря на это в армянском обществе Ирана религиозные споры и несогласия продол-жа-лись еще долгое время.

В 1441г, когда центр Католикосата Всех армян был перемещен из Киликии в Армению, община армян Ирана

подчинялась ему, которая длилась до середины 20-ого века.

После окончания Второй Всемирной войны, Иран усыновил антисоветскую политику. В 1949 г. по решению Совета Иранских министров, священники, которые прибыли в территорию Ирана, должны были принять гражданство Ирана, и по этой причине лидеры армянских епархии в Иране покинули страну, а уже в 1955 г. Иран присоединился к организации Синто, цель которого было бороться против СССР, а организатором были США.

По причине политической ситуации Ирана армянская епархия Тегерана 29 марта 1958 г. поставила в известность католикоса Всех Армян Вазгена I (А), что они прекращают связь с Эчмиадзином, а 12 июля этого же года то же самое решение принял и епархия Атропатена (Атрпатакан).

Вопреки отказу Эчмиадзина и желания общины иранских армян, три епархии иранских армян перешли под покровительство католикосата Киликии.

THE ROLE CATHOLICOSATE OF CILICIA IN THE LIFE OF ARMENIAN COMMUNITIES OF IRAN

Shahen Hovsepyan

SAMMARY

The Catholicosate of Cilicia had its role and influence in the life of Armenian communities of Iran in two different periods, the first when it was considered the Catholicosate of all Armenians and the second time as The Armenian Catholicosate of the Great House of Cilicia.

St. Thaddeus monastery has always been an important spiritual center since the 4th century and was a bridge between the Catholicoses and the Armenian communities of Iran. When Catholicosate moved to Cilicia, although the spiritual centers

of the Armenian communities of Iran follow catholicos of Cilicia.

In 1246 Pope sends a letter to Armenian catholicos at Cilicia, where he emphasized that the Catholic Church was founded through the Apostles Paul, which is the only church that is Apostolic and the rightful successor of that Apostles is the Pope, so he has the right to head all Christian churches. Armenian catholicos relying on the Apostles Thaddeus and Bartholomew, who founded the Armenian Apostolic Church, and replied that the Armenian Church was also founded by the Apostles, after which his attention was focused on the monastery of St. Thaddeus.

Due to political and security reasons two catholicos of Cilicia decided to unite the Armenian Church with the Catholic Church on 13 century, which was opposed by a number of important spiritual centers, but the abbot of St. Thaddeus monastery approached the decision of the catholicos.

After time being under pressure of oppositional spiritual centers, the Catholic preachers had to move to the Tsor Tsor monastery founded by them near to St. Thaddeus monastery. On 1362 AD, the catholicos of Armenian church cancelled the decision of two catholicos to unite Armenian church with Catholic church but religious conflicts continued between advocates of both side for a few centuries in Armenian community of Iran.

The Catholicosate of Armenia moved back to Armenia at Edjmiatsin city on 1441 but Catholicosate of Cilicia at Sis city continued to remain. Armenians of Iran as Armenians of Armenia obeyed from Catholicosate of Edjmiatsin.

After World War II, the World divided into communist and anti-communist parties, and as a result the Catholicosate of Edjmiatsin remained in Soviet Armenia and Catholicosate of Cilicia in Lebanon which was anti-soviet country and had its influence on Armenians of World.

Iran became member of Central Treaty Organization member on 1955, which was anti-Soviet organization and under the pressure of Iran's government and the anti-Soviet leaders of Armenian communities at Iran, the three Armenian dioceses of Iran begin to sever their ties with Etchmiadzin catholicos and as a result of which the three dioceses appear in an uncertain situation for several years, until in 1958, when without consideration the objection of Etchmiadzin catholicos the three dioceses were placed under the control of the Catholicosate of Cilicia, and diocesan leaders are sent from Antelias for each diocese as of today.

Շահէն Յովսէփեան, անկախ հետազոտող Իրանից: Մասնագիտութեամբ՝ հաշւապահ: Աւելի քան 30 տարի ուսումնասիրել է Հայաստանի և Իրանի պատմութիւնը, ճարտարապետութիւնը և դրամագիտութիւնը, որոնց արդիւնքները հայերէն և պարսկերէն լեզուներով հրատարակել են Իրանի մի քանի գիտամշակոյթային պարբերականներում: Թեհրանում լոյս տեսնող «Պայման» պարբերականի խմբագրական կազմի անդամ է:

✉ shahenhovsepian@gmail.com

Шаген Овсепян, независимый исследователь из Ирана, бухгалтер по профессии. Более 30 лет он изучал историю, архитектуру и нумизматику Армении и Ирана, результаты которых были опубликованы в нескольких научных и культурных периодических изданиях Ирана на армянском и персидском языках. Он является членом редакции периодического издания «Пайман», издаваемого в Тегеране.

✉ shahenhovsepian@gmail.com

Shahen Hovsepian, independent researcher from Iran. By profession as accountant who has **30** years research on history, architecture and numismatic of Armenia and Iran, which the result published on Armenian and Farsi languages in scientific and cultural magazines at Iran. He is a member of the editorial staff of "Paiman" periodical published in Tehran.

✉ shahenhovsepian@gmail.com

Մանյա Նաջարյան

Կ. ՊՈԼՍԻ ԵՒ ԿԻԼԻԿԻԱՅԻ (ՍՍԻ) ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՅՈՂՈՒՄԸ Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Հիմնաբառեր՝ Կիլիկիայի կաթողիկոսություն, Ազգային ժողով, Կ.Պոլսի պատրիարքարան, էջմիածին, նվիրապետական արքունեք, Աջապաղյաններ:

Ключевые слова: Киликийский католикосат, Народное собрание, Константинопольский патриархат, Эчмиадзин, Национальная Конституция, иерархический престол, Ачапачяны.

Key words: Cilicia's Catholicosate, National Assembly, Constantinople's Patriarchate, Ejmiadzin, National Constitution, Hierarchichal Sees, Ajapachyans.

Հոգվածում խոսվում է Կ. Պոլսի և Կիլիկիայի (Սսի) նվիրապետական Աթոռների հակասությունների մասին, որոնք առնչվում են կաթողիկոս ընտրելուն, ընտրության կարգին, իրավասության (Սսի կաթողիկոս-Ազգային ժողով-Կ. Պոլսի հայոց պատրիարք, Ամենայն հայոց կաթողիկոս) խնդրին: Մենք փորձել ենք աղբյուրագիտական քննության միջոցով Ազգային ժողովի ատենադրություններից վեր հանել անել այն կարևոր տեղեկությունները, որոնք կարող են լույս սփռել Կիլիկիայի կաթողիկոսության այդքան կարևոր հարցերի վրա:

Կիլիկիայի կաթողիկոսական աթոռը շուրջ 1,5 դար (1731-1865 թթ.) գտնվում էր Աջապաղյան տոհմի ձեռքում,

ինչպես Մ. Աբեղյանն է բնութագրում, այն «...ժամանակից ի վեր մի տեսակ ժառանգական էր Աջապահեան ցեղին»¹։ Սակայն Կիրակոս Բ կաթողիկոսի (1855-1865 թթ.) մահվանից հետո Կ. Պոլսի պատրիարքարանը չի ընդունում ժառանգական այս դրույթները, «մանաւանդ աչքի զարնող դէմք մըն ալ չէր մնացած Աջապահեան տոհմէն՝ ուղիղ գծով»², և որոշում է կաթողիկոսական ընտրութիւններն անցկացնել Ազգային սահմանադրութեան դրույթներին համապատասխան։ Հաշվի առնելով, որ կաթողիկոսական երեք աթոռներն էլ (Էջմիածնի, Սսի, Աղթամարի) միաժամանակ թափուր են մնացել, 1865 թ. դեկտեմբերի 24-ին Ազգային ժողովում կազմվում է կաթողիկոսական հանձնաժողով, որին էլ հանձնարարվում է զբաղվել այդ հարցով³։ Ազգային վարչութիւնը մինչև ընտրութիւնների անցկացումը Կիլիկիայի աթոռի տեղապահ է նշանակում Այնթապի առաջնորդ Մկրտիչ եպիսկոպոս Սեմերճյանին, որի վերաբերյալ 1866 թ. փետրվարի 7-ին հրամանագիր է հղում Բ. Դուռ, միաժամանակ նամակ է ուղարկում Սսի եպիսկոպոս Նիկողոսին (մայրական գծով Աջապահյան էր, Կիրակոս Աի քեռորդին էր)⁴, սակայն վերջինս օգտվելով Ազգային վարչութեան խառը դրույթներից՝ 1866 թ. հուլիսի 11-ին գիշերով զաղտագողի օծվում է կաթողիկոս։ 1866 թ. հուլիսի 12-ին Եկեղեցական համագումար ժողովը ոչ միայն անվավեր է ճանաչում Սսի եպիսկոպոսի կաթողիկոսութիւնը, այլև ընտրելիների եռանուն ցանկ է պատրաս-

¹ Մ. Աբեղյան, Գեորգ Դ. Մեծագործ կաթողիկոս Ամենայն Հայոց (Համառօտ կենսագրութիւն), Վաղարշապատ, 1899, էջ 39։

² Բաբգէն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը), Անթիլիաս-Լիբանան, 1939, էջ 674։

³ Տէն Ատենագրութիւն Ազգային ժողովոյ, 1860-1870, էջ 286։

⁴ Տէն Բաբգէն Ա. նշվ. աշխ., էջ 682։

տում¹։ Կիրիկիայի աթոռի կաթողիկոսի թեկնածու են ընտրվում երեք արժանավոր եկեղեցականներ՝ Ներսես եպիսկոպոս Վարժապետյանը (21 ձայն), Արիստակես եպիսկոպոս Դերձակյանը (17 ձայն), Հովհաննես եպիսկոպոս Նդեսյանը (15 ձայն)²։ Հուլիսի 22-ին հրավիրված Ազգային ժողովը միաձայն հաստատում է եկեղեցական համագումար ժողովի վճիռը և թափուր հռչակում Սսի ու Աղթամարի կաթողիկոսական աթոռները³։ Կ. Պոլսի պատրիարքն էլ շրջաբերական կոնդակով անարժան է ճանաչում երկու ինքնակույժ կաթողիկոսներին⁴։ Խոսելով Նիկողոս եպիսկոպոսի մասին՝ Պողոս պատրիարքը նկատում է, որ վերջինս «... այնպիսի գայթակղելի անցեալ մը ունի, որ եթէ շատերու հաւանութեամբ ալ ընտրուելու ըլլար՝ դարձեալ եկեղեցին չի պիտի հաճէր ու պիտի մերժէր զնա իբրեւ իսպառ անարժան այսպիսի բարձր աստիճանի»⁵։

Պատրիարքը խնդիրը ներկայացնում է նաև Ամենայն հայոց կաթողիկոսին, որի հրամանով հաստատված մասնաժողովը 1867 թ. փետրվարի 6-ին վեց հոդվածից բաղկացած

¹ Տե՛ս «Առջալոյս Արարատեան», 1866, թիւ 784։ Իրականում, Վինակային ժողովի կողմից Սսի և Աղթամարի աթոռների համար ընտրելիների ցուցակ պատրաստելը հակասում էր կաթողիկոսական հանձնաժողովի տեղեկագրին, քանի որ երկու դեպքում էլ պետք է միաբանության կողմից ներկայացված ցուցակից ընտրվեր կաթողիկոսը։ Բայց քանի որ հիշյալ աթոռների միաբանությունները տվյալ պահին այն վիճակում չէին, որ կարողանային օրինավոր թեկնածուների ցուցակ կազմել, ուստի Վինակային ժողովը որոշում է ցուցակ կազմելու պարտավորություն իր վրա վերցնել, որն, ըստ մեզ, նման պարագայում ավելի ճիշտ է։

² Տե՛ս Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», 1860-1870, էջ 321-325։ Մ. Իզմիրլեան, Հայ-րապետութիւն Հայաստանեայց եկեղեցոյ և Սիս ու Աղթամար, 1881, էջ 570-571։

³ Տե՛ս Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1860-1870, էջ 326։ Մ. Իզմիրլեան, նշվ. աշխ., էջ 573։

⁴ Տե՛ս Մատենադարան, ձեռագիր N 3721, ք. 65 ա։

⁵ Գրականության և Արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Թ. Ագապյանի ֆ., ք. 4, գ. 83, ք. 1։

առաջարկներ է հանձնում պատրիարքին¹: Փետրվարի 10-ին հրավիրված նիստը արդյունք չի տալիս՝ քվորումի բացակայության պատճառով, իսկ փետրվարի 24-ին կայացած նիստում այլ հարցերի հետ քննարկվում է նաև Սսի կաթողիկոսի կողմից երեսփոխաններին ուղղված բողոքագիրը, որում Նիկողոս եպիսկոպոսը ամբաստանություն էր համարում իր՝ գաղտագողի կաթողիկոս օծվելու հանգամանքը, պնդելով, որ օծվել է ժողովրդի խնդրանքով ու ներկայությունամբ «... քանի որ Կիլիկիոյ ազգայինք վստահ չէին Պատրիարքարանի կողմէն Տեղապահ ընտրուած անձին վրայ»²:

Ազգային ժողովը կաթողիկոսական հարցը քննելու համար նոր հանձնաժողով է կազմում, որի ձախողումից հետո 1867 թ. հոկտեմբերի 20-ին որոշվում է գործը հանձնել խառն ժողովին և առաջարկել տեղեկագիր կազմել՝ հաշվի առնելով թեմական իրավունքները, Աջապահյան գերդաստանի ժառանգականության գործոնը, ինչպես նաև երկու աթոռները Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքություններին միացնելու գաղափարը³:

Խառն ժողովը տասը հոգվածից բաղկացած առաջարկ⁴ է ներկայացնում, որի ուսումնասիրությունից այն եզրահանգմանն ենք գալիս, որ Սիսն այս բոլոր խժոժություններից հետո Ամենայն Հայոց կաթողիկոսության Աթոռին հավասար է (չնայած Ամենայն Հայոց վերտառությունը միայն էջմիածնի կաթողիկոսի իրավունքն է) և պետք է պարտա-

¹ Տե՛ս Մ. Իզմիրյան, նշվ. աշխ., էջ 639-650: Օրմանյան Մ., Ազգապատում, նշ. աշխ., էջ 4776-4777:

² Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1860-1870, էջ 335-336:

³ Տե՛ս նույն տեղում, 1860-1870, էջ 353: Իզմիրյան Մ., նշվ. աշխ., էջ 691-694: Մ. արժեսպար, Օրմանյան, նշվ. աշխ., էջ 4778:

⁴ Տե՛ս Մ. Իզմիրյան, նշվ. աշխ., էջ 702-710:

վորվի նրա նկատմամբ բարեկամական կարգավիճակում մնա:

Խառն ժողովի տեղեկագրի ու նրա քննարկումների մասին տեղեկություններ չկան Ազգային ժողովի ատենադրություններում: Դրանց մասին որոշակիորեն պատկերացում կարելի է կազմել Գևորգ Դ կաթողիկոսի՝ 1868 թ. ապրիլին Կ. Պոլսի Պողոս պատրիարքին ուղղված կոնդակից¹, որում կաթողիկոսը պահանջում է, որ այդ Սիսն ու Աղթամարը հպատակվեն Մայր աթոռին, այլապես սպառնում է նախկինի նման թողնել իբրև հակաթոռ: Գևորգ Դ կարծում էր, որ ազգային եկեղեցու միասնությունը հնարավոր է ապահովել ոչ թե երեք համահավասար իրավունքներով կաթողիկոսներ ճանաչելով, այլ մասնավոր կաթողիկոսներին՝ էջմիածնի ընդհանրական կաթողիկոսին ենթարկվելով:

Խառն ժողովի ծրագիրը հավանության չի արժանանում նաև Կ. Պոլսում, անգամ չի հասցնում քննարկվել Ազգային ժողովում: Անպաշտոն մնալու պայմանով Նիկողոսին թույլատրվում է վերադառնալ Կիլիկիա (Կ. Պոլիս էր բերվել 1866 թ. մարտի 17-ին), իսկ Սսի աթոռը տեղապահական պաշտոնով վարում է Հաճընի Պետրոս եպիսկոպոսը: Թեև դրանից հետո էլ, ինչպես փաստում է Իզմիրլյանը, Նիկողոսը ոչ պաշտոնապես շարունակում է Սսում հավասար պատիվներ վայելել, մինչև անգամ համարձակվում է եպիսկոպոսներ ձեռնադրել²:

Կիլիկիայի կաթողիկոսություն խնդիրը դարձյալ առաջ է քաշվում Մկրտիչ Խրիմյանի պատրիարքության ժամանակ (1869-1873): Վերջինիս պատրիարք ընտրվելու կապակցությամբ

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 711-735:

² Տե՛ս նույն տեղում, էջ 736-737:

յամբ շնորհավորական կոնդակ¹ հղելով՝ Գևորգ Դ պատվիրում է նախանձախնդիր լինել նախնիների իրավունքներին, գործել Մայր աթոռի օգտին, թույլ չտալ, որ Սսի ու Աղթամարի եպիսկոպոսները Ս. Էջմիածնի թեմում իրավունք բանեցնեն կամ պաշտոն վարեն:

Կիլիկիայի կաթողիկոսության հարցը նորակազմ Ազգային ժողովում քննարկման է դրվում 1870 թ. օգոստոսի 28-ին: Քաղաքական ժողովի ատենադպիր Տիգրան Յուսուֆյանը հակիրճ ներկայացնում է այն մի քանի գործողությունների մասին, որոնք ձեռնարկել է Քաղաքական ժողովը: Դրանք են՝ 1) Նիկողոսին Սսից հեռացնելու համար դիմել են Բ. Դռանը, 2) Մինչև նոր կաթողիկոսի ընտրությունը Սսի կաթողիկոսական տեղապահ են ընտրել Տիգրանակերտի առաջնորդ Հակոբ եպիսկոպոսին:

Վեց նիստ շարունակ բուռն քննարկումներ են ընթանում Ազգային ժողովում Կիլիկիայի կաթողիկոս ընտրելու, ընտրության կարգի, իրավասության խնդրի շուրջ: Հիմնական առաջարկներով հանդես են գալիս չորս երեսփոխաններ՝ Ռուբեն Կումուշկերտանը, Գրիգոր Օտյանը, Ստեփան Փափազյանը և Նահապետ Ռուսինյանը: Առաջինն առաջարկում է, որ Կ. Պոլիսը չմիջամտի հարցին և Սսի կաթողիկոսի ընտրության իրավունքը հանձնի Էջմիածնի կաթողիկոսին:

Օտյանն էլ, պատմական ակնարկ անելով 1866 թ. որոշումներին, գտնում է, որ պետք է առաջնորդվել Ազգային ժողովով և ոչ մի կերպ չպետք է հարցի լուծումը հանձնել Էջմիածնին, հակառակը, պետք է հզորացնել Սսի կաթողիկոսությունը հենց Էջմիածնի կաթողիկոսության համար:

¹ Տե՛ս Մատենադարան, Իզմիրյան կաթողիկոսի արխիվ, քղթ. 10, վավ. 74, ք. 2-3, ձեռագիր, բնագիր: ՀԱՍ, ֆ. 57, ց. 2, գ. 16, ք. 1-3:

Փափագյանն իր մտահոգությունն է հայտնում, որ Սսի միաբաններից իրենց կաթողիկոսին ընտրելու դարավոր իրավունքներից զրկելով «Բ. Դուռն ալ իրաւունք կունենայ ժամանակին պահանջած հանգամանքները չունիք ըսելով մեր ձեռքէն խլել մը իրաւունքները առնուլ, եւ մինչեւ իսկ Պատրիարքն ընտրել»¹:

Խնդրի մանրամասն լուսաբանմամբ հանդես է գալիս Ռուսինյանը: Ընտրությունը թողնելով թեմականներին՝ նա առաջարկում է վավերացումը վերապահել կեդրոնին, «ընտրութեան իրաւունքը տեղացւոցն է, վաւերացման իրաւունքը կեդրոնին է»²: Ռուսինյանի առաջարկը հավանության է արժանանում, իսկ հոկտեմբերի 16-ի նիստում որոշվում է, որ Ազգային ժողովը կատարի կաթողիկոսական ընտրության վավերացումը, միաժամանակ կազմվում է հանձնաժողով Կ. Պոլսի պատրիարքի և երեք՝ էջմիածնի, Սսի և Աղթամարի կաթողիկոսների հարաբերությունների խնդիրը քննելու համար:

Կիլիկիայի կաթողիկոսության խնդրի շուրջ երկու ամիս, վեց նիստ տեւած քննարկումներից, վիճաբանություններից հետո որոշում են Մայր աթոռի ընդհանուր իրավասությունը ճանաչելով հանդերձ նրան դուրս թողնել ընտրության գործողություններից, քանի որ կաշկանդված է Պոլսի թեմականներից, ուստի և անկախ չի կարող գործել, միաժամանակ հարգել թեմականների իրավունքը՝ ամրապնդելով Կ. Պոլսի ու Ազգային ժողովի դիրքերը:

¹ «Ատեմագրութիւն Ազգային ժողովոյ», 1870-1874, էջ 36:

² Նույն տեղում, էջ 61: Մի ամբողջ նիստ էլ զբաղեցնում է այն հարցի բնարկումը, թե ինչ պետք է հասկանալ «կեդրոն» ասելով, հառն ժողովը, թե՞ Ընդհանուր: Ի վերջո, որոշվում է, որ այդ իրավասությունը պատկանում է Ազգային Ընդհանուր ժողովին: Տե՛ս Ատեմագրութիւն Ազգային ժողովոյ, 1870-1874, էջ 118:

Սաի խռովություններն առժամանակ դադարում են, բայց մեկ տարուց ավելի ժամանակ է պահանջվում, մինչև որ վավերացվում է կաթողիկոսի ընտրությունը: Թեև Կեդրոնական վարչության հրահանգը տրվել էր 1871 թ. մայիսի 4-ին¹, բայց միայն օգոստոսի 14-ին է պատրիարք Խրիմյանին հաջողվում կառավարության աջակցությամբ Սսից հեռացնել Նիկողոս եպիսկոպոսին: Սիս են ուղարկվում եպիսկոպոս Սիմեոն Սեֆերյանը և առևտրական Հովհաննես Ֆրենկյանը, որոնց էլ միանում է Բ. Դուան կողմից ուղարկված Խուրշիդ փաշան, ով պետք է հսկեր վերոհիշյալ հրահանգի անխափան գործադրումը:

1871 թ հոկտեմբերի 21-ին Ադանայում կայացած ընտրությունների արդյունքում չորս թեկնածուներից ընտրողական ժողովը հոկտեմբերի 27-ին քսանութ քվեով Սսի կաթողիկոս է ընտրում Բերայի առաջնորդ Մկրտիչ Քեֆսիզյանին²:

1871 թ. նոյեմբերի 12-ին Ազգային ժողովի 34-րդ նիստում³ վավերացվում է Մկրտիչ Քեֆսիզյանի ընտրությունը, որն ապօրինի է համարում Գևորգ Դ կաթողիկոսը և դեկտեմբերի 11-ին Կ. Պոլսի պատրիարքին ուղղված հեռագրով մեղադրում է նրան անօրինական որոշում կայացնելու համար և «...ընդդեմ նուիրական աւանդութեանց ... առանց Մայր Աթոռոյս յօժարի գործել յանուն մեր՝ առանց մեր գիտութեան»⁴: Մի քանի օր անց, դեկտեմբերի 15-ին, նմանատիպ հեռագիր-կոնդակով Գևորգ Դ-ն առաջարկում է Մկրտիչ Քեֆսիզյանին հրաժարվել անօրեն պաշտոնից, և «յարգել յամենայն սրտէ եւ ի մտաց զսահմանս և զկանոնս նախնեաց

¹ Տե՛ս «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», 1870-1874, էջ 517-518:

² Տե՛ս Մ. Իզմիրլյան, նշ. աշխ., էջ 862: Բաբգեն Ա., նշվ. աշխ., էջ 715:

³ Տե՛ս «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», 1870-1874, էջ 530:

⁴ Մ. Իզմիրլյան, նշվ. աշխ., էջ 895-896, «Արարատ», 1871, թիւ 8, էջ 417-423:

մերոց»¹։ Մի կոնդակ էլ հասցեագրված էր Խորեն Նար Բեյին (Գալֆայան)²։ Կոնդակից երևում է, որ Գևորգ Դ-ն ուզում է միանգամից վերջ տալ Սսի ու Աղթամարի կաթողիկոսների անկախությանը և այդ թեմերը ենթարկել էջմիածնին։ Կաթողիկոսը նաև մտահոգություն է տեսնում եկեղեցու հնավանդ սովորությունների առումով, երբ էջմիածնի եպիսկոպոսը (այս դեպքում Մկրտիչ Քեֆսիզյանը) լինելու է Սսի կաթողիկոս³։

Գևորգ Դ-ի մեղադրանքներին ի պատասխան պատրիարք Խրիմյանը և Ազգային Վարչությունը 1872 թ. մարտի 10-ին բավականին ընդարձակ գրություն⁴ են ուղարկում կաթողիկոսին, որում փորձում են հիմնավորել, որ Սսի կաթողիկոսությունը ենթարկելով Կ. Պոլսի Ազգային ժողովին և օրինականության սկզբունքին՝ կանխել են Հայաստանյայց Ս. Եկեղեցու միասնությանն ու ամբողջականությունը սպառնացող վտանգը։ Իսկ ինչ վերաբերում է Մկրտիչ Քեֆսիզյանի՝ էջմիածնի եպիսկոպոս լինելու հանգամանքին, ապա դա ավելի է հաստատում էջմիածինն իբրև գերագահ ընդունելու փաստը։

Թվում էր, թե կրքերը պետք է հանդարտվեին, բայց տեղի է ունենում հակառակը։ 1872 թ. ապրիլի 28-ին ստացվում է Ամենայն հայոց կաթողիկոսի մեղադրանքներով լի նամա-

¹ Մ. Իզմիրյան, նշ. աշխ, էջ 898-905, «Արարատ», 1871, թիւ 8, էջ 424-425։

² Տե՛ս «Փունջ», 1872, թիւ 706։

³ Սսի կաթողիկոսի ընտրության, Կ. Պոլսի պատրիարքության և Խրիմյանի հետ կապված հարցերի շուրջ որոշակի տեղեկություններ ենք փառում նաև Գևորգ Դ-ի՝ Կովկասի փոխարա Նիկոլայ Պավլովիչին ուղղված նամակներից, գրություններից (1871 թ. դեկտեմբերի 15-ին։ Տե՛ս Մատենադարան, Իզմիրյան կաթ. արխիվ, թղթ. 10, վավ. 76, ձեռագիր, բնագիր)։ 1872 թ. մարտի 15 (Մատենադարան, Իզմ. կաթ. արխիվ, թղթ. 10, վավ. 77, ձեռագիր, բնագիր)։ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, թ. 28-31, ձեռագիր)։

⁴ Տե՛ս «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», 1870-1874, էջ 662-665։ «Փունջ», 1872, թիւ 721, Մ. Իզմիրյան, նշվ. աշխ, էջ 925-950։

կը¹, որն Ազգային ժողովում քննարկման է դրվում 1872 թ. մայիսի 26-ին: Գևորգ Դ-ն խրիմյանին որակում է որպես օտարների ձեռքի գործիք է, որի միջոցով ձգտում են ջլատել հայ եկեղեցու միությունը Մեղադրանքներից ազատվելու համար խրիմյանն առաջարկում է անձամբ գնալ էջմիածին և փարատել կաթողիկոսի կասկածները, բայց Ազգային ժողովը մերժում է պատրիարքի այդ առաջարկը:

Կաթողիկոսի կոնդակի խնդրով Ազգային ժողովը զբաղվում է մինչև դեկտեմբերի 29-ը: Ի վերջո, Ազգային ժողովի 55-րդ նիստում խնդիրն ուսումնասիրելու նպատակով կազմվում է 12 անդամից բաղկացած հանձնաժողով², բայց վերջինս ևս չի կարողանում գործն ավարտին հասցնել: Ժողովրդի մեջ կրկին դժգոհություններ չառաջացնելու համար պատրիարքը հաստատված է համարում Մ. Քեֆսիզյանի ընտրության վավերացումը, և հարցը որոշ ժամանակ փակվում է:

Այն կրկին քննարկման առարկա է դառնում Ներսես Վարժապետյանի պատրիարքության ժամանակ (1874-1884), երբ Մ. Քեֆսիզյանը պաշտոնից հրաժարվելու սպառնալիքով մի շարք պահանջներ ու առաջարկներ է ներկայացնում Ազգային ժողովին: Առաջարկները հիմնականում հետևյալն էին, ա) կաթողիկոսությունը Սսից տեղափոխել այլ վայր, բ) թուրքական տերության կողմից ամսական վճար սահմանել, գ) Սսո վիճակներն ընդարձակել, դ) Կիլիկիայի կաթողիկոսության արտոնություններն ու իրավասություններն ընդարձակել³:

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 19, ք. 54-57:

² Տե՛ս «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», 1870-1874, էջ 786:

³ Տե՛ս Իգլորյան Մ., նշ. աշխ., էջ 1079-1082; Օրմանյան Մ., նշ. աշխ., էջ 4976: Բաբգեն Ա. նշ. աշխ., էջ 731-732:

Մ. Քեֆսիսյանը 1874-1876 թթ. ընթացքում բազմիցս հանդես է գալիս նմանատիպ առաջարկներով ու սպառնալիքներով: Դեռևս 1875 թ. մայիսի 16-ին Ազգային ժողովի կողմից այդ առաջարկ-սպառնալիքները քննելու նպատակով ստեղծվել էր մասնաժողով, որի եզրակացությունը հիմք ընդունելով Ազգային ժողովը 1876 թ. մարտի 12-ին կայացրած նիստում մեկ առ մեկ մերժելով Մ. Քեֆսիսյանի առաջարկները՝ որոշում է հաղորդել վերջինիս, որ դրանք պնդելու դեպքում պետք է ընդունված համարի նրա հրաժարականը¹: Որոշումն էլ պատրիարք Վարժապետյանը հատուկ պաշտոնագրով² 1876 թ. մայիսի 17-ին տեղեկացնում է Մ. Քեֆսիսյանին: Վերջինս որոշ ժամանակ լռություն է պահպանում՝ հասկանալով, որ օգուտ չունի պնդելը, բայց և շարունակում է դիմել կամայականությունների ու անօրինականությունների, որոնց մասին թեմականներից անընդհատ զանգատներ են հղվում Ազգային ժողով: Ելնելով քաղաքական ծանր անցուդարձերից՝ պատրիարքարանն առժամանակ (մինչև 1880 թ.) դադարեցնում է հարցի քննարկումը՝ փորձելով իր կողմից ուղարկված առաջնորդներով ու տեղապահներով որոշակի քայլեր ձեռնարկել Կիլիկիայի թեմերի վիճակները բարելավելու համար: 1880 թ. հուլիսի 9-ին պատրիարք Վարժապետյանը հատուկ պաշտոնագրով պահանջում է Մ. Քեֆսիսյանից վերջ դնել անօրինականություններին: Ստանալով պաշտոնագիրը՝ Քեֆսիսյանը փորձում է թեմական երեսփոխանների միջոցով արգելել Ազգային վարչությանը «քանդել» Սսի կաթողիկոսությունը: Մ. Քեֆսիսյանն անձամբ է գալիս Կ. Պոլիս (1880 թ. դեկտեմբերի 17-ին) և պատրիարքին հանձնում թեմական ժողովի կազմած տե-

¹ Տե՛ս «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», 1875-1876, էջ 438:

² Տե՛ս Մատենադարան, Իզվ. կաթ. արխիվ, թղթ. 12, վավ. 268, ք. 14, ձեռագիր:

դեկագիրը, որով պահանջում էին ընդլայնել Կիլիկիայի կաթողիկոսի իրավասությունները, գումարներ տրամադրել կաթողիկոսարանի վերանորոգման, 25 գիշերօթիկ վարժարան պահելու համար և այլն¹։ Սակայն Մ. Քեֆսիզյանի ձգտումներն իրականություն չեն դառնում, դեռ ավելին, պատրիարքարանն է նոր պահանջներ ներկայացնում նրան։ Մ. Քեֆսիզյանն այս անգամ բանակցություններ է սկսում Բ. Դուան հետ՝ փորձելով նրա միջոցով կաթողիկոսությունը Կ. Պոլսի պատրիարքական իշխանությունից անկախ հռչակել։ Ձնայած որ թուրքական կառավարությունը հատուկ պաշտոնագրով բավարարում է Մ. Քեֆսիզյանի պահանջը, սակայն վերջինս զրկվում է մի շարք առանձնաշնորհումներից, ուստի և ինքն է հետ վերադարձնում այդ պաշտոնագիրը։ Ազգային ժողովը Կիլիկիայի կաթողիկոսական խնդրին անդրադառնում է նաև 1881 թ. օգոստոսի 27-ին, բայց ապարդյուն։

Եւս 13 տարի (մինչև 1894 թ.) «պաշտոնավարած» Մ. Քեֆսիզյանը այդպես էլ չի ենթարկվում Ազգային ժողովի ընդունած որոշումներին, հանդես է գալիս Ազգային պատրիարքարանի, Մայր Աթոռի, տեղի հայության դեմ՝ վարելով աստանդական կյանք, «գտնուելով երբեմն Այնթապ, երբեմն Հալէպ, բայց աւելի՝ Մարաշին կից Քերխան գիւղի ամառանոցում»²։

Մ. Քեֆսիզյանի մահվանից հետո թուրքական իշխանություններն անընդհատ առիթ էին փնտրում ազդելու ընտրության արդյունքների վրա։ Երբ 1895 թ. հունիսին Կիլիկիայի կաթողիկոս է ընտրվում Գրիգորիս արքեպիսկոպոս Ալեաթճյանը, որոշ գործիչներ կառավարությանը, Ամենայն

¹ Տե՛ս նույն տեղում, թ. 30, նեոագիր։

² «Կիլիկիա։ Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ», Պետերբուրգ, 1894, էջ 143։

Հայոց կաթողիկոսին բողոքում են այդ ընտրության դեմ¹ և զաղտագողի կաթողիկոս օծում Սսի եպիսկոպոս Հովհաննես Գազանճյանին։ Կառավարությունն էլ անօրինական է համարում Գ. Ալեաթճյանի ընտրությունը։

Իրավիճակը փոխվում է միայն Մ. Օրմանյանի պատրիարքության ժամանակ (1896-1908), Հ. Գազանճյանը հեռացվում է Կիլիկիայից, և Գ. Ալեաթճյանը հաստատվում է կաթողիկոսի պաշտոնին ու մնում մինչև իր մահը՝ 1899 թ.։ Համեմատաբար կայունացում նկատվում է 1902 թ., երբ 62 քվեով միաձայն Կիլիկիայի կաթողիկոս է ընտրվում բոլորի կողմից ընդունված Սահակ եպիսկոպոս Խապայյանը։

Ընդհանուր առմամբ, Կիլիկիայի կաթողիկոսության հարցը համընկնում է Կ. Պոլսի 8 պատրիարքների պաշտոնավարման ժամկետին, որոնց մեծ մասի նախագահությամբ գումարված Ազգային ժողովի օրակարգերում այն ամենասուր քննարկվող խնդիրներից մեկն է հանդիսանում։ Հակասություններով լի փոխհարաբերություններն իրենց բացասական անդրադարձն են ունենում Հայոց եկեղեցու, ժողովրդի միասնության վրա, որից էլ հմտորեն օգտվում է օսմանյան կառավարությունը։

ОТРАЖЕНИЕ ПРОТИВОРЕЧИЙ МЕЖДУ ИЕРАРХИЧЕСКИМИ ПРЕСТОЛАМИ КОНСТАНТИНОПОЛЯ И КИЛИКИИ (СИС) В АРМЯНСКОМ НАЦИОНАЛЬНОМ СОБРАНИИ КОНСТАНТИНОПОЛЯ

Маня Наджарян

РЕЗЮМЕ

В статье говорится о противоречиях иерархических престолов Константинополя и Киликии (Сис), связанных

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 17, գ. 74, ք. 7։

с избранием католикоса, процедурой избрания, вопросом юрисдикции (какие отношения должны быть у Католикоса Киликийского с Национальным Собранием, Константинопольским Патриархом, Католикосом Всех Армян). С помощью источниковедческого исследования мы постарались извлечь важные сведения из летописей Народного собрания, которые могут пролить свет на столь важные вопросы Киликийского католикосата.

Престол Киликийского католикоса находился в руках династии Аджапахян около 1,5 веков (1731-1865), но после смерти католикоса Киракоса II (1855-1865) Константинопольский Патриархат решил провести выборы католикоса под своим контролем в соответствии с положениями Национальной конституции, надеясь обеспечить легитимность и единство Армянской церкви.

THE REFLECTION OF THE CONTRADICTIONS BETWEEN THE HIERARCHICAL SEES OF CONSTANTINOPLE AND CILICIA (SIS) AT THE ARMENIAN NATIONAL ASSEMBLY OF CONSTANTINOPLE

Manya Najaryan

SUMMARY

The article is about the contradictions of the Hierarchical Sees of Constantinople and Cilicia (Sis), which are related to the election of a Catholicos, the procedure of election, the issue of jurisdiction (what kind of relationship the Catholicos of Cilicia should have with the National Assembly, the Patriarch of Constantinople, the Catholicos of All Armenians). According to the source study, we have tried to bring out the important information from the chronicles of the National Assembly, which can shed light on such important issues of the Cilicia's Catholicosate.

The Catholicos seat of Cilicia was in the hands of the Ajapahyan dynasty for about 1.5 centuries (1731-1865), but after the death of Kirakos II catholicos (1855-1865), Constantinople's Patriarchate decided to take control of elections of Catholicos and conduct them in accordance with the provisions of National Constitution, hoping to ensure the legitimacy and unity of the Armenian Church.

Մանյա Նաջարյան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ասպիրանտ, Երևանի «Ուսում» դպրոցի պատմության ուսուցիչ: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայոց նոր և նորագույն շրջանի պատմության հարցեր.

✉ manya.najaryan@gmail.com

Маня Наджарян, Аспирант Института истории НАН РА, учитель истории ереванской школы "Усум". Круг научных интересов: вопросы нового и новейшего периода армянской истории.

✉ manya.najaryan@gmail.com.

Manya Najaryan, Post-graduate student of the Institute of History of the NAS of the RA, teacher of history at "Usum" Yerevan school. Range of scientific interests: issues of the new and recent period of Armenian history.

✉ manya.najaryan@gmail.com

Գայանե Զիլավյան

«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ «ՄԻԱԲԱՆՈՂ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ» ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Հիմնաբառեր՝ ունիթորականներ, Կիլիկիա, հայ-հռոմեական եկեղեցական շփումներ, կաթոլիկություն:

Ключевые слова: унитарии, Киликия, армяно-римские церковные контакты, католицизм.

Key words: Unitarians, Cilicia, Armenian-Roman church contacts, Catholicism.

1290-ական թվականներից մինչև Կիլիկիայի թագավորության անկումը հայ իրականության մեջ հասարակական կյանքի կարևորագույն երևույթներից մեկը դավանաբանական պայքարն էր կաթոլիկության դեմ: «Հանդէս Ամսօրեայ»-ն անդրադարձ է կատարել այս խնդրին՝ ներկայացնելով հայ-հռոմեական եկեղեցական առնչությունները, Հռոմի պապերի և հայ կաթողիկոսների նամակագրությունները, Միաբանող եղբայրների ծագումը, գործունեությունը և դրա հետևանքները: Ստորև ներկայացվում է «Հանդէս Ամսօրեայ» թերթի արձագանքը Միաբանող եղբայրների և հայ եկեղեցու հարաբերություններին:

ԺԱ դ. սկսած հայ-հռոմեական եկեղեցական հարաբերություններում նկատվեց ջերմացում՝ կապված խաչակրաց արշավանքների հետ: Երբ Արևելքում վերացան խաչակրաց պետությունները, իսկ Կիլիկիայի դաշնակից մոնղոլները թուլացան, հայոց արքունիքն իր հայացքը հառեց դեպի Արևմուտք, մասնավորապես Հռոմ՝ Պապի միջոցով ցանկալի

օգնությունն ստանալու համար: Այս ժամանակաշրջանում էլ սկսվեց և մինչև Կիլիկյան Հայաստանի անկումը շարունակվեց պայքարը կաթոլիկության ընդունման համար: Հայ եկեղեցու ներսում առաջացան քաղաքական երկու հակադիր խմբավորումներ, որոնք կատաղի պայքար սկսեցին միմյանց դեմ¹: Նրանց մի մասը ցանկանում էր ընդունել կաթոլիկությունը (միութենասեր) և օգնությունն ստանալ Արևմուտքից, իսկ մյուս մասը դեմ էր դրան (միութենամերժ): Վերջիններս դեմ չէին եկեղեցիների միությանը, սակայն դեմ էին հրաժարվելու հայ եկեղեցու դավանաբանական ու ծիսական ավանդույթից²:

«Հանդէս Ամսօրեայ» թերթը իր էջերում անդրադառնում է ունիթորականներին՝ նրանց անվանելով Միաբանող եղբայրներ: Հստ թերթի, թեև հայ և օտարազգի պատմաբանները համարում են, որ հայ և հռոմեական եկեղեցիների միջև անմիջական հարաբերությունները սկսվել են ԺԱ դարի երկրորդ կեսից, բայց այն գոյություն է ունեցել ԺԱ դարից առաջ, և, որպես ապացույց, թերթը մեջբերում է Նիկողայոս Ա կաթողիկոսի «Առ Արեւելայնս» նամակը՝ գրված 863 թ.:

«Հանդէս Ամսօրեայ»-ի ճիշտ գնահատմամբ, ԺԱ դարի երկրորդ կեսից սկսած երկու եկեղեցիների միջև հարաբերությունները կապված «խաչակրութեանց առիթով» ավելի հաճախակի դարձան: Եւ թերթը զանազանում է վերոհիշյալ հարաբերության մեջ երեք տարբեր շրջաններ:

Առաջին շրջանը (1074-1198 թթ.) թերթն անվանում է այդ հարաբերության հարաճուն զարգացման ժամանակաշրջան՝ նշմարելով Լուսավորչի հաջորդների մոտ երկու

¹ Տե՛ս Միֆայեյան Գ., Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան, 2007, էջ 442:

² Տե՛ս Պետրոսյան Ե., Հայ եկեղեցու պատմություն (հնագույն ժամանակներից մինչև 1441 թվականը), Երևան, 1995, էջ 136:

միտում: Հիրավի մի կողմում տեսնում ենք, գրում է «Հանդէս Ամսօրեայ»-ն, հայ կաթողիկոսների հարատե քանքը և հոգա-
ծությունը միաձուլելու հայ եկեղեցին այն եկեղեցու հետ, որ
«Քրիստոս հիմնեց Պետրոսեան Վիմին վրայ», մյուս կողմում՝
լուելայն, բայց անժխտելի ընդդիմութիւն է նշմարվում նույն
կաթողիկոսների դեմ՝ որոնք փորձում են ներմուծել հայ եկե-
ղեցու մեջ մյուս եկեղեցիների ծիսական ավանդութիւնները:

Թերթը հիշում է մի քանի կարևորագույն դեպքեր: Օրի-
նակ՝ Գրիգոր Վկայասերը 1080 թ. Գրիգոր է պապին նամակ
էր գրել հերքելով հույների ամբաստանութիւնները հայոց ե-
կեղեցու դեմ և հայտնել նրա փարումը Հռոմի աթոռին: Հռո-
մի պապը պատասխան նամակում հարց էր բարձրացրել՝
հայոց եկեղեցին ջրի քանի կաթիլ է խառնում սուրբ պատա-
րագի ժամանակ, չորս առաջին սուրբ ժողովները ընդունում
է թե ոչ: Թերթը գրում է, որ իրենք չգիտեն, թե Գրիգոր Վկա-
յասերը ինչ է պատասխանել, բայց գիտեն, որ անապակ գի-
նու եւ Խաչեցարի ծիսական» տարբերութիւնները Հայ եկե-
ղեցու մեջ անփոփոխ են մնացել, նաև, որ Գրիգոր Վկայասե-
րը Հռոմից ընդունել է սուրբ Թիկնոց (Pallium), որը նշանա-
կում է «միութիւն ի հաւատս»¹: «Հանդէս Ամսօրեայ»-ն հի-
շում է նաև, որ Գրիգոր Գ Պաշլավունին 1145թ. պատվիրա-
կութիւն ուղարկեց Եւգինեոս Գ պապին, որպեսզի հույն և
հայ եկեղեցիների միջև ծագած ծիսական վիճաբանութիւն-
ները պարզաբանվեն: Հռոմի հայրապետը միայն հանձնա-
րարեց Կիլիկիայի կաթողիկոսին սուրբ պատարագի բաժա-
կի մեջ ջուր խառնել և Քրիստոսի ծնունդը դեկտեմբերի 25-
ին տոնել: Ներսէս Շնորհալին մեծ հարգանք էր տածում Հ-
ռոմի գահի նկատմամբ և կարծում էր «թէ այդպիսի ծիսա-
կան տարբերութիւնները ուղղափառ հաւատքին վնաս չէին

¹ «Հանդէս Ամսօրեայ», յովիս-սեպտեմբեր, 1969, թիւ 7-9, էջ 359:

հասներ»։ Գրիգոր Դ Տղան 1184 թ. Լուկիոս Գ պապին ուղարկել էր պատվիրակություն՝ խնդրելով հռոմեական եկեղեցունկարագրության կարգը։ Հռոմի պապը դեկտեմբերի 3-ին, թերթի դիտարկմամբ, ի միջ այլոց պատասխանել էր Գրիգոր Դ Տղային. «Եւ որովհետեւ հաւատքի դաւանութիւտնը, զոր ունիք, բոլորովին ուղիղ է, ինչ որ թերի է եկեղեցական կարգապահութեան մէջ դուք ուղղեցէք... Մինչ այն, անարատ հաւատքի մէջ զոր ունիք, ձեզ սիրով կ'ողջագուրենք»¹։ Ուրեմն, եզրակացնում է «Հանդէս Ամսօրեայ»-ն, Լուկիոս պապը զանազանելով հավատքը դրվատեց Հայաստանյայց Եկեղեցու անարատութիւնը՝ նորից հանձնարարելով պատարագի բաժակին ջուր խառնել և Քրիստոսի ծնունդը դեկտեմբերի 25-ին նշել։

Թերթի գնահատմամբ հայ-հռոմեական հարաբերության բարիդրացիական գոյավիճակը իր գագաթնակետին հասավ Գրիգոր Զ Ապիրատի օրոք՝ 1198 թ. հունվարի 6-ին։ Այդ օրը Կեղեստինոս Գ պապի պատվիրակը, ներկայացնելով Լևոն իշխանին Հռոմի պապի կողմից առաքված թագը, կնքեց «հաւատոյ եւ սիրոյ պաշտօնական միաբնաութիւնը՝ Հռոմէական եւ Հայկական Եկեղեցիներու միջեւ»։ Սրանից թերթը եզրակացնում է, որ հայ նվիրապետութիւնը ընդունեց Հռոմի պատվիրակի առաջարկը՝ խոստանալով վերոհիշյալ ծիսական փոփոխությունների կիրառությունը Հայ Եկեղեցու մեջ²։

Հայ-հռոմեական հարաբերությունների երկրորդ շրջանը (1198-1298 թթ.), «Հանդէս Ամսօրեայ»-ն բնորոշում է հավատքի և սիրո միության շրջան։ Թերթը նշում է, որ հայոց կաթողիկոսը Ինոկենտիոս Գ պապին մասնավոր նամակ գրեց, որի մեջ «Դլուխ յետ Քրիստոսի... Կաթողիկէ Հռոմէա-

¹ «Հանդէս Ամսօրեայ», յովիս-սեպտեմբեր, 1969, թիւ 7-9, էջ 361։

² Տե՛ս անդ։

կան Եկեղեցույ՝ որ է մայր ամենայն Եկեղեցեաց Քրիստոսի» է դավանում¹։ Թերթի հաղորդմամբ նույն վերաբերմունքը պետրոսյան աթոռի հանդեպ տաժում էին հայ եկեղեցու հետևյալ կաթողիկոսները՝ Հովհաննես Մեծաբարոն, Կոստանդին Բարձրբերդցին, Հակոբ Գիտնականը, Կոստանդին Պրոնագործը, Ստեփանոս Հռոմկլայեցին։ Ըստ Թերթի, հարկ չկա անդրադառնալու յուրաքանչյուր հայրապետի գործունեությանը՝ փաստելու անկեղծ հարումը Հռոմի աթոռին։

Հայ-հռոմեական հարաբերության երրորդ շրջանը, ըստ «Հանդէս Ամսօրեայ»-ի, զանազանվում է երկու հիշատակելի ցնցումներով։ Առաջինը տեղի ունեցավ Գրիգոր Անավարզեցի և Կոստանդին Կեսարացի, իսկ երկրորդը՝ Հակոբ Սսեցի և Մխիթար Գոներցի կաթողիկոսների օրոք։

Գրիգոր է Անավարզեցի կաթողիկոսն սկսեց եռանդով բարեկարգության ծրագիր մշակել, որպեսզի Հայ Եկեղեցին Հռոմի Եկեղեցու հետ ավելի միաձև ընթանար։ «Հանդէս Ամսօրեայ»-ի կարծիքով կաթողիկոսը, մտածելով թե զանազան ծեսերը դժվար կարելի է իրար հաշտեցնել², հավատքի և ծեսի ծրագիր պատրաստեց և 1307 թ. Սսի մեջ գումարվելիք ժողովին հրավիրեց հայ հոգևորականությանը։ Մահը վրա հասավ և կաթողիկոսը չհասցրեց զլխավորել ժողովը։ Թերթի գնահատմամբ ժողովականների ստվար հատվածը, «ի յարգանս հանգուցեալ կաթողիկոսին», հաստատեց նրա ծրագիրը, իսկ ժողովականների փոքրամասնությունը բողոքեց օտարամուտ ծիսական նորությունների դեմ և Կիլիկիայի մեջ խռովության փոթորիկ հանեց։ «Հանդէս Ամսօրեայ»-ն հաղորդում է, որ դրանից հետո Ադանայում 1316 թ. նոր ժողով գումարվեց, որը վերահաստատեց Սսի ժողովի վճիռները,

¹ Անդ. էջ 362։

² Տե՛ս «Հանդէս Ամսօրեայ», յուլիս-սեպտեմբեր, 1969, 7-9, էջ 363։

բայց դրանք գործադրվեցին Սսի և հարակից թեմերի մեջ՝ նոր խառնակությունից խուսափելու համար:

Հակոբ Սսեցի կաթողիկոսի օրոք Մեծ Հայքում և Կիլիկիայում խռովության և անկարգության նոր շարք սկսեց: Դա հայ եկեղեցու մեջ ունիթորների կամ «Հանդէս Ամսօրեայ»-ի բնութագրմամբ Միաբանող եղբայրների միությունն էր: Թերթի տեղեկություններով ԺԳ դարի կեսերին Մեծ ու Փոքր Հայքում և Կիլիկիայում Ֆրանցիսկյան եղբայրությանը կից գործում էին Դոմինիկյան կրոնավորները¹:

Մինչ այդ՝ 1300-1304 թթ. հիմնվել էր «Եղբարց շրջելոց վասն Քրիստոսի ի մէջ անհաւատիցն Միաբանութիւնը»: Այն Դոմինիկյան Եղբարց ճյուղն էր, որոնք ուխտել էին շրջել անհավատների երկրներում որպես քարոզիչներ: Սրանց առաջնորդ Բարդուղիմէոս եպիսկոպոսի համբավը հասավ Գլաձորի դպրոց, և Եսայի Նշեցին 1328 թ. իր աշակերտ Հովհաննես Քոնեցուն ուղարկեց Մարաղա, որպեսզի «Շրջող Եղբարց» մասին տեղեկություն քաղեր: Հ. Քոնեցին Մարաղայում սովորեց լատիներեն, կապվեց միաբանության հետ և 1330 թ. նամակ գրեց իր վարդապետին հայ-հռոմեական Եկեղեցիների միաբանության հարցը քննարկելու նպատակով²: Այն հոգևորականները, ովքեր մասնակցեցին այս ժողովին դարձան միաբանության անդամ, իսկ Քոնիի կամ «Աստուածածնայ վերին» վանքը դարձավ Միաբանող Եղբայրների կենտրոնը՝ տարածվելով Կիլիկիայում:

Թերթի հաղորդմամբ Միաբանող եղբայրները հայկական և հռոմեական եկեղեցիների միջև որպես կատարյալ միության միջոց ընտրեցին ուսումը և քարոզչությունը: 1334 թ. Դոմինիկյան «Շրջող Եղբարց» աշակցությամբ հայերեն

¹ Տե՛ս անդ. էջ 365:

² Տե՛ս անդ. էջ 368:

Թարգմանվեցին մի քանի աշխատություններ՝ Ս. Թովմա Ա-
քուինացու «Գիրք ընդդէմ Հեթանոսաց», «Յաղագս բնու-
թեանց եւ անձնաւորութեան քրիստոսի եւ Յաղագս խորհր-
դոց եկեղեցւոյ եւ առաքինութեանց հոգւոյ», Ալբերտոս Մեծի
«Աստուածաբանութիւնը», Բարդուղիմեոս Մեծի «Աստուա-
ծաբանութիւնը», Պետրոս Արագոնացու, Գ. Պորրետանուսի, Հ.
Ռիբելինի գործերը: Այս ցանկից թերթը եզրակացնում է, որ
Միաբանող եղբայրների արժանիքը մեծ պետք է համարել
մշակութային և գիտական առումով:

Ըստ «Հանդէս Ամսօրեայ»-ի Միաբանող եղբայրները հե-
տապնդելով Հայ և Հռոմեական եկեղեցիների միջև ծեսի
միաձևութիւնը, կարծում էին, թե լատին ծեսը միութեան ըն-
տիր օղակ պիտի հանդիսանա: Նրանք որոշեցին արմատա-
կան բարեփոխություն մտցնել հայ եկեղեցու մեջ՝ փոխելով
հայ ծեսն ու կարգերը, որոնք, ըստ իրենց, հերետիկոսութ-
յան սերմեր էին, և որդեգրելով լատին կարգը, սկսեցին այն
հայերեն թարգմանել¹: Այս ժամանակ վանականների մեջ
ծագեց առաջին կասկածները և հակակրանքը Միաբանող
եղբայրների նկատմամբ: Հրավերը, որը ուղղված էր նրանց
միաբանության համար բացահայտ մերժումի արժանացալ:
Ժողովրդի մեջ, որ բոլորովին պատրաստ չէր նման խնդի-
րների յուրացման, սկսեցին վնասակար վիճաբանություններ՝
հավատքի վերաբերյալ: Միաբանող եղբայրները շարունա-
կեցին վտանգել իրենց առաքելությունները և մկրտել աշ-
խարհականների, ովքեր անցնում էին իրենց կողմը:

«Հանդէս Ամսօրեայ»-ն եզրակացնում է, այսպիսով հայ
եկեղեցու հավատացյալները բաժանվեցին երեք խմբի: Ա-
ռաջին խումբը նրանք էին, ովքեր չէին ընդունում Սսի և Ա-
դանայի ժողովների որոշումները, երկրորդ խումբը՝ հայ ծե-

¹ Տե՛ս «Հանդէս Ամսօրեայ», հոկտեմբեր-դեկտեմբեր, 1969, թիւ 10-12, էջ 469.

սը և ավանդությունները պահելով ընդունել էին վերոհիշյալ փոփոխությունները և իրենց կոչում էին «Կաթողիկէ հայեր», երրորդ խումբը՝ հետևելով Միաբանող եղբայրներին, ընդունել էին լատին ծեսը՝ հայերեն լեզվով և իրենց անվանում էին «գուտ Կաթողիկէ»¹։

«Հանդէս Ամսօրեայ»-ն շարունակում է նյութի լուսաբանումն ու անդրադառնում Միաբանող եղբայրների գործունեության հետևանքներին։

1334 թ. Եւրոպայում լավեցին նոր խաչակրաց արշավանքի մասին լուրեր, բայց Անգլիայի և Ֆրանսիայի ներքին անհամաձայնության պատճառով այն չեղարկվեց։ Մելիք Նասր սուլթանը՝ մոտալուտ արշավանքի լուրից սարսափած, 1335 թ. Հալեպի էմիրին ուղարկեց Կիլիկիա, իսկ 1337 թ. անձամբ արշավեց։ Սուլթանը հանձն առավ դաշինք կնքել Լևոն Դ-ի հետ, պայմանով, որ վերջինս հարաբերություն չպիտի ունենա Հոռոմի պապի և արևմտյան եւրոպայի երկրների հետ։ Թերթի կարծիքով Մելիք Նասրը դիտավորություն չի ունեցել Կիլիկիայի հողերի վրա, այլ պարզապէս նպատակ ուներ չեզոքացնել ու անվտանգ դարձնել քրիստոնյա զորքերի սահմանային դիրքերը։

Նման պայմաններում Հակոբ Սսեցի կաթողիկոսը և եպիսկոպոսները առաջարկում էին նամակներ և դեսպաններ չուղարկել Եւրոպա՝ սուլթանի մոտ կասկածներ չառաջացնելու և Կիլիկիայի վրա նոր արշավանքի առիթ չտալու նպատակով։ Լևոն Դ թագավորը և իշխանները ցանկանում էին շարունակել հարաբերությունները լատինների հետ։ Պարզ մարդկային տեսակետով-գրում «Հանդէս Ամսօրեայ»-ն, կաթողիկոսի դիրքորոշումը շրջահայաց էր, քանի որ Եւրոպան անբավարար էր Կիլիկիայի համար հաղթահարելու քրիս-

¹ Տե՛ս ամդ. էջ 475։

տոնյաների թշնամիներին, իսկ կաթողիկոսյան տեսակետով՝ Հակոբ կաթողիկոսի զգուշությունը ոչ միայն արդար էր, այլ նաև շատ խոհական¹։ Կաթողիկոսը իմանալով, որ թագավորը լատին քարոզիչների միջոցով գաղտնի նամակներ էր ուղարկել Հռոմի պապին հանդիմանեց նրան, ինչի արդյունքում գահընկեց արվեց և նրան հաջորդեց Մխիթար Գոներցին։

«Հանդէս Ամսօրեայ»-ի հաղորդմամբ Միաբանող եղբայրների գլխավոր գործիչներից Ներսես Պալենցը շտապեց ներկայանալու նորընտիր կաթողիկոսին, բայց մերժվեց։ Նա հայ կաթողիկոսի կողմից մերժված լինելու համար սաստիկ զայրացավ և մեկնեց Ավինիոն՝ Բենեդիկտոս ԺԲ պապին գանգատվելու²։ Ն. Պալենցը Կիլիկիայից եկած Միաբանող եղբայրների ներկայացուցիչների հետ միասին հորինեց Ներսեսի գրքուկը, որով ամբաստանում էր Հայ Եկեղեցուն 117 մոլորությունների համար։ Թերթի կարծիքով Հայոց Եկեղեցու «մոլորությունների» 117 կետից բաղկացած ցանկը (Libellus) ստեղծվեց հայ կաթողիկոսի կողմից մերժված լինելու համար։

1341 թ. Լևոն Դ-ն դեսպաններ ուղարկեց Ավինիոն՝ քրիստոնյա Արևմուտքից օգնություն խնդրելու, որոնց Բենեդիկտոս ԺԲ սիրալիր ընդունելության արժանացրեց և հայոց թագավորին ուղղված երկու նամակ հանձնեց։ Այս նամակներում Հռոմի պապը հորդորում էր 117 մոլորությունները մերժել և խոստանում «Հայ Ազգը իր գործովագուծ բազուկներուն մէջ ընդգրկել»³։ Թերթը եզրակացնում է՝ ուրիշ խոսքով

¹ Տե՛ս «Հանդէս Ամսօրեայ», հոկտեմբեր-դեկտեմբեր, 1969, 10-12, էջ 477։

² Տե՛ս անդ. էջ 479։

³ Անդ. էջ 480։

քահանայապետը խոստանում էր իր նպաստը հայ եկեղեցու վերափոխումների պայմանով:

Մխիթար կաթողիկոսի խորհրդով Կիլիկիան պատվիրակություն ուղարկեց Ավինոն, որը 1341թ. պատրաստում էր Բենեդիկտոս ԺԲ խնդրանքով պատասխան «Հայոց վերագրուած մոլորութեանց», բայց 1342 թ. մահացավ Լևոն Դ թագավորը, իսկ նույն տարվա մայիսին՝ Բենեդիկտոս ԺԲ: Նոր թագավոր Գվիդոն Լուսինյանը 1343 թ. նոր պատվիրակություն ուղարկեց Կղեմես Զ պապին: Ըստ թերթի Հռոմի պապը լավ էր տրամադրված Կիլիկիայի հանդեպ, բայց մամուլենբրը, մինչ այդ իմանալով հայ թագավորի քայլերը Եւրոպայի հետ, նորից հարձակվեցին Կիլիկիայի վրա:

Մխիթար կաթողիկոսը Սսում 1344 թ. ժողով գումարեց՝ մերժելով Ներսես Պալենցի 117 մոլորությունները: Կղեմա Զ իմանալով Սսի ժողովի որոշումը 1346 թ. պատվիրակություն ուղարկեց Կիլիկիա՝ 53 հոգվածների, իսկ 1351 թ. մեկ այլ պատվիրակություն՝ 16 հոգվածների վերանայման համար: Բայց 1352 թ. մահացավ Կղեմես Զ և նրան հաջորդեց Իննուկենտիոս Զ: Նույն տարվա վերջին Հակոբ Սսեցին Ավինիոն գնալով կարողացավ Հռոմի պապին խաղաղեցնել և համոզել հայ եկեղեցու անկեղծ նվիրապետությունը: Հակոբ Սսեցին նաև գնաց Հռոմ՝ Ս. Պետրոսի և Պողոսի դամբարանները մեծարելու¹: Վերադառնալով Կիլիկիա, Մխիթար կաթողիկոսի մահվան պատճառով, Հակոբ Սսեցին կրկին ընտրվեց կաթողիկոս:

«Հանդէս Ամսօրեայ»-ն, շարադրանքը հասցնելով մինչև 1360 թ., գրում է, որ իրենք այս ուսումնասիրության ավարտին եզրակացնում են, որ Միաբանող եղբայրները, անտարակույս, Աստծու և հայ ազգի նախանձով էին տոգորված: Ն-

¹ Տե՛ս «Հանդէս Ամսօրեայ», հոկտեմբեր-դեկտեմբեր, 1969, 10-12, էջ 486:

րանք ունեին եռանդ, բայց հավասարակշռված չէին զանազանելու ու գնահատելու Հայաստանյայց Եկեղեցու հոգևոր և մշակութային արժեքները: Միաբանողները վեհ նպատակ հետապնդելով, կարծում էին, թե ճիշտ ուղու վրա են, սակայն անհաջողություններ սկսեցին կրել: Թերթը հավաստիացնում է, որ որևէ նպատակ չունի ամբողջությամբ դատապարտելու Միաբանող եղբայրների գործունեությունը, սակայն հարկ է համարում նշել, որ նրանք բարի գործեր արեցին հայ մշակութային ոլորտում, բայց չարիք պատճառեցին հայ ազգի կրոնական և քաղաքական կյանքին¹:

РЕАКЦИЯ ГАЗЕТЫ «АНДЕС АМСОРЯ» НА ОТНОШЕНИЯ МЕЖДУ «БРАТЬЯМИ- ОБЪЕДИНИТЕЛЯМИ» И АРМЯНСКОЙ ЦЕРКОВЬЮ

Джилавян Гаяне

Резюме

Начиная с XI века в связи с крестовыми походами произошло потепление армяно-римских церковных отношений. Эти события не остались незамеченными газетой «Андес Амсоря». «Андес Амсоря» ссылается на унитаристов на своих страницах, называя их Объединяющими братьями.

Издаваемая Мхитарянской католической конгрегацией Вены газета объективно представляет армяно-римские церковные отношения, обращая внимание читателя на то, что целью Объединяющих братьев было «воссоединение всего армянского народа и церкви с верой к Римской церкви».

В газете делается вывод, что Европа не могла помочь Киликии победить врагов христиан. По мнению «Андес Амсоря» единственный положительный результат

¹ Տե՛ս «Հանդիս Ամսօրեայ», յունուար-մարտ, 1970, 1-3, էջ 74:

деятельности Объединяющих братьев был в культурной сфере, а в целом они были злом в религиозно-политической жизни армянского народа.

THE RESPONSE OF "HANDES AMSORYA" NEWSPAPER TO THE RELATIONS BETWEEN THE CONGREGATIONAL BRETHERN AND THE ARMENIAN CHURCH

Gayane Jilavyan

Summary

Since XI century the relationship between Armenian-Roman church became warmer it's connected with crusade. These events didn't remain unnoticed from the attention of "Handes Amsorya" newspaper. "Handes Amsorya" refers to the Unitarians in its page by calling them brothers.

The newspaper published by the Mkhitaryan catholic congregation of Vienna presents objectively Armenian-Roman relationship by drawing the reader's attention to the fact that the goal of confederate brothers "is to reunite the whole Armenian nation and church with Roman church".

The journal concludes that Europe was insufficient for Cilicia to overcome the enemies of the Christians. According to "Handes Amsorya" the only positive result of the activities of the confederate brothers was the cultural field, but generally they were evil in Armenian religious and political life.

**Զիլավյան Գայանե, ՎՊՀ Հումանիտար գիտությունների
ֆակուլտետի Պատմության բաժնի մագիստրատուրայի 2
կուրսի ուսանողուհի.**

✉ gay13.00@mail.ru

Джилавян Гаяне, Магистрант второго курса
факультета Истории Гуманитарных наук ВГУ.

✉ gay13.00@mail.ru

Gayane Jilavyan, Faculty of Humanities, Department of
History, 2st year master student of VSU.

 qay13.00@mail.ru

Սամվել Պողոսյան

ԿԻԼԻԿԻԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Հիմնաբառեր՝ Կիլիկիա, Ադանա, Առաջին համաշխարհային պատերազմ, Օսմանյան կայսրություն, Բեռլին-Բաղդադ երկաթուղի:

Key words: Cilicia, Adana, First World War, Ottoman Empire, Berlin-Baghdad railway.

Ключевые слова: Киликия, Адана, Первая мировая война, Османская империя, железная дорога Берлин-Багдад.

Կիլիկիան տնտեսական ու ռազմաքաղաքական չափազանց բարենպաստ դիրք ունեցող երկրամաս է, որը հայ ազգի կենսագործունեության և պետականության օրրաններից է եղել: Առաջին աշխարհամարտի նախօրյակին այն գրեթե պահպանել էր իր հայեցի դիմագիծը: Ուսումնասիրության նպատակն է լուսաբանել այդ երկրամասի վարչական, տնտեսական, էթնիկական վիճակը պատերազմից առաջ: Աշխատանքը կառուցված է ուսումնասիրությունների և արխիվային նյութերի ուսումնասիրության, համեմատության, վերլուծության վրա:

Վարչական բաժանումը: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին երկրամասը գտնվում էր օսմանյան տիրապետության տակ: Միջերկրական ծովի հյուսիսարևելյան ափին գտնվող Կիլիկիան հարավից շուրջ 500 կմ եզերվում է ծովով: Տավրոսի լեռնահամակարգով արևմուտքից ու հյուսիսից բաժանվում էր Փոքր Ասիայից, հյուսիս-արևելքից՝ Հայկական բարձրավանդակից, իսկ հարավ-արևելքում Ամանոսի լեռներով սահմանակցում է Սիրիային: Ամանոսի լեռ-

նազանգվածը հարավում ավարտվում է Ռաս էլ Խնզիր հրվանդանով, ուր գտնվում է նշանավոր Մուսա լեռը¹։

Այսպիսով՝ Կիլիկիան շրջակա երկրամասերից առանձնացած է բարձր լեռներով և ծովով, որը հեշտացնում է նրա պատմաաշխարհագրական դիրքի ու սահմանների որոշումը։ Իհարկե, երկրամասի աշխարհագրական սահմանները հաճախ չէին համապատասխանում տարբեր ժամանակաշրջաններում անընդհատ փոփոխվող վարչական բաժանումներին։

Կիլիկիան շուրջ 400 տարի գտնվում էր Օսմանյան կայսրության կազմում և այդ ընթացքում վարչական ամենատարբեր բաժանումների է ենթարկվել։ Համաշխարհային պատերազմի նախօրյակին Կիլիկիայի տարածքը հիմնականում բաժանված էր երկու վարչական միավորների միջև։ Մեծ մասն ընդգրկված էր Ադանայի նահանգի մեջ, որը բաժանված էր 5 գավառների՝ Ադանա, Մերսին, Զեբեկ Բերեքեթ, Խոզան, Իչիլ։ Կիլիկիայի արևելյան շրջանները կազմում էին Հալեպի նահանգի մի մասը։ Վերջինս բաժանված էր 3 գավառների (Հալեպի, Մարաշի, Ուրֆայի), 23 գավառակների։ Մարաշի գավառը, Հալեպի գավառի Այնթապի, Քիլիսի, Անտիոքի, Ալեքսանդրետի և Բեյլանի գավառակները Կիլիկիայի մասերն էին²։

Անկարայի նահանգի Յոզղատի գավառի հարավային շրջանները, Սեբաստիայի նահանգի Մանջիլիկ, Կյուրին, Դարենդե, Աշոգի գավառակներ նույնպես աշխարհագրորեն կազմում էին Կիլիկիայի մասերը։ Հետևաբար՝ Առաջին Աշխարհամարտի նախօրյակին աշխարհագրական Կիլիկիա

¹ Տե՛ս Պողոսեան Յ., Հանքնի ընդհանուր պատմությունը եւ շրջակայ Գօգան-տաղի հայ գիւղերը, Լօս Անճէլըս, 1942, էջ 1։

² Տե՛ս Գալուստեան Գ., Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զեյթուն, Նիւ Եօրթ, 1934, էջ 30։

երկրամասը չէր կազմում վարչական մեկ ամբողջություն: Այն բաժանված էր Ադանայի, Հալեպի, Սեբաստիայի, Անկարայի նահանգների միջև:

Ադանայի նահանգի (39,000 կմ²), Մարաշի (18,400 կմ²) և Այնթապի (7,000 կմ²) գավառների, Անտիոքի, Բեյլանի և Ալեքսանդրետի գավառակների (4,200 կմ²) ընդհանուր տարածքը կազմում էր 68,600 կմ² Առաջին աշխարհամարտի նախօրյակին¹:

Հաշվի առնելով, որ Կիլիկիայի հիմնական մասն ընդգրկված էր Ադանայի նահանգի մեջ, շատ դեպքերում Կիլիկիան այդ շրջանում նույնացվում էր հենց այդ նահանգի հետ: Դրանով է պայմանավորված, որ որոշ ուսումնասիրողներ Կիլիկիայի տարածքը հաշվում են ընդամենը 40,000 կմ²: Սակայն դա աշխարհագրական և պատմական տեսանկյունից չի համապատասխանում իրականությանը:

Այսպիսով խոսելով մինչպատերազմյան Կիլիկիայի մասին, ճիշտ ենք համարում ոչ թե հասկանալ միայն Ադանայի նահանգը, այլ այն ամբողջ աշխարհագրական տարածքը, որը հնուց ի վեր հայտնի էր Կիլիկիա անունով: Իսկ թուրքական վարչական բաժանումները չպետք է հանդիսանան չափանիշ այդ երկրամասի տարածքը որոշելու համար:

Տնտեսությունը: Կիլիկիայի դաշտային շրջանները չափազանց բերրի են: Կլիման մեղմ է և բարենպաստ տարբեր թանկարժեք բույսերի մշակման համար: Մշակելի հողատարածքները 1914 թ. կազմում էին 2.600.000 հեկտար: Այնտեղ բարձր բերքատվությամբ աճում էին գյուղատնտեսական բարձրարժեք մշակաբույսեր՝ բամբակ, ձիթապտուղ, ծխախոտ, քունջութ, ցորեն, տարբեր դեղաբույսեր և բուրումնա-

¹ Տե՛ս Թաքոյան Ռ., Կիլիկիահայության թիվը հայոց ցեղասպանության նախօրյակին, Երևան, 2021, էջ 22, 60:

վետ բույսեր: Մինչ պատերազմը այնտեղ արտադրվում էին 150.000 տոննա հատիկավոր մշակաբույսեր, սակայն այն կարող էր հասցվել 1.800.000-ի¹:

Կիլիկիայի բամբակով առաջինը հետաքրքրվել էին գերմանացիները: 1903 թ. ստեղծվել էր Գերմանա-լևանտական բամբակի ընկերությունը, որը կարճ ժամանակում իր ձեռքն էր վերցրել Կիլիկիայում արտադրվող ամբողջ բամբակի վերամշակման և արտահանման գործը: Նրանք Կիլիկիայում կառուցել էին մի քանի խոշոր բամբակագտիչ գործարաններ²: 1905 թ. Ադանայի նահանգում արտադրվում էր 45.000 հակ բամբակ: Ամերիկյան «Քլիվլենդ» տեսակի բամբակ ցանելուց և երկաթուղային ցանցի ընդլայնումից հետո արտադրությունը տարեցտարի մեծացել էր: 1911 թ. արտադրվել էր 85.000, 1914 թ.՝ 150.000 հակ կամ 300.000 տոննա բամբակ³: Իզուր չէ, որ գործվածքի արտադրությամբ զբաղվող որոշ պետություններ հետաքրքրված էին բամբակով հարուստ այդ երկրամասով:

Կիլիկիայի տարածքը հարուստ է երկաթի, կապարի, արծաթի, կրաքարի հանքերով, արջասպի, ծծմբի, բորակի, սև ու սպիտակ ձյուլի, խեժի, աղի, ապակեհողի պաշարներով, տարբեր բուժիչ ջերմուկներով, անտառանյութով և այլ հարստություններով⁴: Մայրի ծառերի ամենախոշոր անտառները գտնվում են Կիլիկիայում:

¹ Տե՛ս Саакян Р., Франко-турецкие отношения и Киликия в 1918-1923 гг., Ереван, 1986, с. 42-43.

² Տե՛ս Раздел Азиатской Турции по секретным документам бывшего министерства иностранных дел. Под редакцией Е.Адамова, Москва, 1924, с. 20.

³ Տե՛ս Առանայի Հայոց պատմություն, Խմբ.՝ Բ. Եղիայեան, Ամրիլիաս, 1970, էջ 155:

⁴ Տե՛ս Գալուստեան Գ., Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զեյթուն, Նիւ Եօթ, 1934, էջ 7:

Կիլիկիայի հարստության մասին է վկայում այն, որ 1919 թ. ֆրանսիական իշխանություններն այնտեղ ծախսել են 2,900,000 թուրքական լիրա, գանձել 3,000,000 լիրա¹։ Եւ դա այն ժամանակ, երբ պատերազմի հետևանքով տնտեսությունը զգալի հետընթաց էր ապրել, հայերի ցեղասպանությունից հետո աշխատող ձեռքերն ու մասնագետները պակասել էին, իսկ ֆրանսիացիները նոր էին մտել երկրամաս և բավական մեծ ծախսեր էին կատարում այնտեղ հաստատվելու համար։

Բեռնա/ապրանքափոխադրությունը։ Կիլիկիայի նավահանգիստները, հատկապես՝ Ալեքսանդրետը և Մերսինը, մեծ կարևորություն ունեին Միջերկրականի արևելքում առևտրի զարգացման ու ռազմական նավատորմի տեղակայման համար։ Սակայն Օսմանյան իշխանությունները ո՛չ տնտեսական, ո՛չ ռազմական կարիքների համար բավարար չափով չէին զարգացրել այդ նավահանգիստները։

Կիլիկիայով էր անցնում ռազմավարական ու տնտեսական մեծ նշանակություն ունեցող Բեռլին-Բաղդադ երկաթուղին։ Մերսին-Տարսոն-Ադանա երկաթուղագիծը կառուցել է 1886 թ. բրիտանա-ֆրանսիական ընկերությունը։ 1908 թ. գերմանական ընկերությունը գնել էր այդ երկաթուղագիծը, ընդլայնել և դարձրել Բեռլին - Կ. Պոլիս - Բաղդադ մեծ երկաթուղագծի կարևոր հանգույցներից։

1915 թ. Կիլիկիայում կար 511 կմ երկարությամբ երկաթուղագիծ՝ Մերսին-Տարսոն-Ենիճե-Ադանա (68 կմ), Պոզանտ-Ենիճե (88 կմ), Ադանա-Թոփրակ Կալե-Իսլահիե-Մեյդանէքպեզ (295 կմ), Թոփրակ կալե-Ալեքսանդրետ (60 կմ)²։

¹ Տե՛ս Ատանայի Հայոց պատմություն, էջ 155։

² Տե՛ս նույն տեղում, էջ 153։

Այդ զարգացած երկաթուղային համակարգը նպաստում էր տնտեսության առաջընթացին՝ միաժամանակ ունենալով ռազմավարական հսկայական նշանակություն:

Կիլիկիան իր աշխարհագրական դիրքով, բնական հարուստ պաշարներով և արգավանդ դաշտերով երկրամասը միշտ էլ հետաքրքրություն է առաջացրել իր նկատմամբ:

Բնակչությունը: Պետք է արձանագրենք, որ Կիլիկիայում բնակչության ճշգրիտ վիճակագրություն մինչև պատերազմը չէր արվել: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ հայերը կազմում էին մեծամասնություն այդ հայկական երկրամասում, իսկ թուրքերն ամեն կերպ փորձում էին թաքցնել այդ փաստը, ինչպես վարվում էին նաև կայսրության մյուս շրջանների հայ ազգաբնակչության դեպքում:

Հետևաբար՝ բավական բարդ խնդիր է վերջնական ու ճշգրիտ վիճակագրական տվյալներ հաղորդելը: Ուսումնասիրության մեջ փորձել ենք հենվել հայկական այն տվյալների վրա, որոնք ընդունելի են եղել նաև օսմանյան և ֆրանսիական իշխանությունների համար: Կարծում ենք, այդ դեպքում գործ ունենք քիչ թե շատ ճշգրիտ վիճակագրության հետ:

1919 թ. Փարիզի հաշտության համաժողովին հայկական պատվիրակությունների ներկայացրած վիճակագրության համաձայն Ադանայի նահանգում և Մարաշի գավառում՝ մինչև պատերազմը բնակվում էր 490.000 մարդ, որից՝ 205.000 հայ, 81.000 հույն, ասորի և այլ քրիստոնյաներ, 78.000 թուրք, 58.000 քուրդ, 20.000 այլ մահմեդականներ, 48.000 եզդի և արևի¹: Այսինքն՝ 286.000 քրիստոնյաների դիմաց կային 156.000 մահմեդականներ: Այս վիճակագրությու-

¹ Տե՛ս Հայկական հարցը հաշտության կոնֆերանսից առաջ, Թիֆլիս, 1919, էջ 32:

նից դուրս են թողնվել Այնթապի և Անտիոքի գավառների հայերը:

Պատմաբան Կարապետ Բասմաճյանի 1919 թ. հրատարակած ուսումնասիրության համաձայն, 1914 թ. Կիլիկիայի բնակչությունը թիվը 875.604 էր, որից հայ՝ 380.000-ը՝ 43,4%-ը¹:

Ըստ 1920 թ. հունվարի 14-ին Պ. Նուբարի մեծ տերություններին հանձնած հուշագրի՝ Կիլիկիայի նախապատերազմյան բնակչության թիվը ներկայացված էր՝ 508.273 քրիստոնյա, 294.762 մահմեդական, 54.756 այլ դավանանքների հետևորդներ: Ըստ դրա՝ Ադանայի, Խոզանի, Զեբել-Բերեթի, Մարաշի և Այնթապի գավառներում բնակվել են 857.791 մարդ, որից՝ 407.000-ը հայ և 131.534-ը թուրք²:

Վերոնշյալ երկու աղբյուրներն էլ, ինչպես տեսնում ենք, չնչին տարբերությամբ, գրեթե միանման թվեր են բերում:

1914 թ. Կիլիկիայում 407.000 հայ բնակչության գոյության մասին է վկայում նաև Մայր Աթոռի «Արարատ» ամսագիրը³: Կարծում ենք, Պ. Նուբարը հենվել է նաև այս տեղեկության վրա:

Կարելի է բավական ճշգրիտ համարել 1912 թ. Կ. Պոլսի «Արևելյան տարեցույցի» հրատարակած վիճակագրությունը, որը տպագրվել էր սուլթանական կառավարության թույլտվությամբ: Ըստ դրա՝ Ադանայի նահանգում բնակվում էին 215.000 քրիստոնյա և 185.000 մահմեդական⁴: Այստեղ խոսքը միայն Ադանայի նահանգին է վերաբերում: Հաշվի առնելով, որ այս վիճակագրությունը հրատարակվել է նախապատերազմյան շրջանում և թուրքական վերահսկողութ-

¹ Տե՛ս Саакян Р., Франко-турецкие отношения, с. 82.

² Տե՛ս Boghos Nubar, *The Pre-War Population of Cilicia*, London, 1920, p. 3.

³ Տե՛ս «Արարատ», Ա. էջմիածին, 1914, թիւ 9, էջ 810:

⁴ Տե՛ս «Ատանայի Հայոց պատմութիւն», էջ 148: Р. Саакян, նշ. աշխ, էջ 83:

յան տակ, ապա հասկանալի է, որ քրիստոնյա բնակչության թիվը ուռճացնել կամ մահմեդականների թիվը նվազեցված ցույց տալ հնարավոր չէր: Ի դեպ, այդ թիվը բերում է նաև Կիլիկիայի ֆրանսիական կառավարիչ հեռուարդ Բրեմոնը¹:

Մաղաքիա արք. Օրմանյանը Կիլիկիայի կաթողիկոսությանը ենթակա գավառների հայ բնակչության թիվ ներկայացնում է 312.000²:

Մեր ուսումնասիրության ընթացքում հանդիպած ամենաուշագրավ, և մեր կարծիքով, քիչ թե շատ ամբողջական ու ճշգրիտ վիճակագրությունը տալիս է Հայաստանի ազգային արխիվում պահվող, 1910 թ. թվագրվող ֆրանսերեն մի փաստաթուղթ, ըստ որի՝ Կիլիկիայում բնակվում էր 404.350 հայ: Դրանում ընդգրկված են ոչ միայն Ադանայի ու Հալեպի, այլև՝ Սեբաստիայի ու Անկարայի նահանգների մեջ ընդգրկված Կիլիկիայի տարածքների հայերի թիվը: Կարելի է փաստել, որ սա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը ենթակա թեմերի հայ բնակչության թիվն է: Ըստ դրա՝ Ադանայի գավառում բնակվում էր 25.000, Սսի (Կոզան) գավառում (Հաճնի, Կարս Բազարի, Վահկայի (Ֆիկե) գավառակներ)՝ 47.600, Մարաշի գավառում (Ջեյթունի, Կոկիսոնի, Ալբիստանի գավառակներ)՝ 86.800, Օսմանիեի գավառում (Բախչեի, Համիդիեի (Ջիհան), Զոք Մարզվանի (Դյորթ Յոլ) գավառակներ)՝ 44.750, Մերսինի գավառ (Տարսոնի գավառակ)՝ 7.400, Հալեպի գավառում (Այնթապի, Քիլիսի, Անտիոքի, Ալեքսանդրետի, Սուեթիա-Քեսաբի գավառակներ)՝ 84.900, Ուրֆայի գավառում՝ 36.000, Յոզղաթի գավառում՝ 28.500, Սե-

¹ Տե՛ս Պրեմոն Է., Կիլիկիա 1919-1921 Շրջանին, Պոստոն, 1921, էջ 6:

² Տե՛ս Օրմանեան Մ. արքեպս., Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը, ու ներկայ կացութիւնը, Կոստանդնուպոլիս, 1911, էջ 263-264:

բաստիայի նահանգի Մանջիլիկ, Կյուրին, Դարենդե, Աշոդի գավառակներում՝ 43,400 հայ¹։

Ինչպես տեսնում ենք, այստեղ հայ բնակչության թվաքանակը տրված է ոչ թե միայն ըստ նահանգների կամ գավառների, այլ նաև՝ գավառակների։ Դա թույլ է տալիս համեմատել թվերը մյուս վիճակագրությունների հետ՝ դուրս բերելով այն գավառների ու գավառակների հայերի թիվը, որոնք նախորդներում չեն հաշվարկվել։

Վերոնշյալ փաստաթղթի թվերը գրեթե ամբողջությամբ համապատասխանում են մյուս վիճակագրություններում բերված թվերին։ Եթե դուրս բերենք Սեբաստիայի և Յոզղաթի հայերի թիվը, կտեսնենք, որ այն համապատասխանում է Կ. Բասմաճյանի առաջարկած թվաքանակին։ Միայն Ադանայի և Մարաշի հայերի թվաքանակը առանձնացնելու դեպքում կհանգենք գրեթե նույն թվերին, որոնք բերված են 1912 թ. և 1919 թ. վիճակագրություններում։

Որպես նախապատերազմյան Կիլիկիայի և շրջակա գավառների հայ բնակչության թվաքանակ մեզ ավելի համոզիչ է թվում Հայաստանի ազգային արխիվում պահվող վերոնշյալ փաստաթղթում ներկայացված վիճակագրությունը։ Հետևաբար՝ Ադանայի, Հալեպի, Սեբաստիայի, Անկարայի վիլայեթների միջև բաժանված Կիլիկիայում բնակվում էր ավելի քան 400.000 հայ բնակչություն։

Այսպիսով՝ չնայած Օսմանյան կայսրության հայահալած ու ջարդարարական քաղաքականությանը, հատկապես՝ 1909 թ. կիլիկյան կոտորածները, որոնց զոհ էին գնացել շուրջ 30.000 հայեր, նախապատերազմյան շրջանում Կիլիկիայի բնակչության գրեթե կեսը դեռևս հայերն էին, իսկ թուրքերը կազմում էին միայն 15 տոկոսը։

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 57, ք. 11-12։

1919 թ. ֆրանսիական վարչության հաշվարկներով պատերազմից հետո Ադանայի նահանգ էին վերադարձել 120.000 հայեր: Նրանց կողքին կային 100.000 անսարի (ալեւի) արաբներ, 30.000 քրդեր ու ղզլբաշներ, 28.000 հույներ, 20.000 թուրքեր, 15.000 չերքեզներ, 5.000 ասորիներ¹: Փաստորեն, ըստ ֆրանսիական պաշտոնական հաշվարկների, նույնիսկ Հայոց ցեղասպանությունից հետո Կիլիկիայում ապրում էին գրեթե հավասար թվով քրիստոնյաներ ու մահմեդականներ:

Այսպիսով՝ պատերազմի նախօրյակին Կիլիկիան Օսմանյան պետության ամենազարգացած ու ռազմավարական տեսանկյունից կարևոր երկրամասերից էր, որի բնակչության մեջ հայերը և մյուս քրիստոնյաները կազմում էին մեծամասնություն:

КИЛИКИЯ НАКАНУНЕ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

Самвел Погосян

РЕЗЮМЕ

Киликия была одной из колыбелей жизнедеятельности и государственности армянского народа. Накануне Первой мировой войны она почти сохранила свое армянское лицо. Исследование охватывает административное, экономическое, этническое положение этого региона в предвоенный период. Работа основана на изучении, сопоставлении и анализе архивных материалов и научных работ. Накануне Первой мировой войны Киликия входила в состав ряда административных единиц: Аданский вилайет, Марашский и Айнтапский санджаки, Антиохийский, Бейланский и

¹ Տ՛ես Տաакян Р., նշվ. աշխ, էջ 82:

Александритский каза, общая площадь которых составляла 68 600 км². Исследование показывает, что Киликия была чрезвычайно богата природными ресурсами и плодородными полями. Он имел развитую железнодорожную систему, которая способствовала развитию экономики и имела огромное стратегическое значение. Киликия была одним из наиболее развитых и стратегически важных регионов Османского государства. Несмотря на гамидийские погромы, киликийскую резню 1909 года, накануне войны армяне и другие христиане составляли большинство населения Киликии.

CILICIA ON THE EVE OF THE FIRST WORLD WAR

Samvel Poghosyan

SUMMARY

Cilicia was one of the cradles of the life activity and statehood of the Armenian nation. On the eve of the First World War, it almost kept its Armenian face. The study covers the administrative, economic, ethnic situation of that region before the war. The work is based on the study, comparison and analysis of archival materials and scientific works. On the eve of the First World War, Cilicia was included in a number of administrative units: Adana vilayet, Marash and Aintap sanjaks, Antioch, Beilan and Alexandret kazas, the total area of which was 68,600 km². The study shows that Cilicia was extremely rich in natural resources and fertile fields. It had a developed railway system that contributed to the progress of the economy and was of immense strategic importance. Cilicia was one of the most developed and strategically important regions of the Ottoman state. Despite the Hamidian pogroms, the Cilician massacre of 1909, on the eve of the war, Armenians and other Christians were the majority in the population of Cilicia.

Սամվել Պողոսյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՄՀ պատմության և հասարակագիտության ֆակուլտետի գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ Հայկական հարց և միջազգային դիվանագիտություն, Հայոց ցեղասպանության պատմություն, Մեծ տերությունների մերձավորարևելյան քաղաքականությունը 20-րդ դարի առաջին քառորդին, Պողոս Նուբարի գործունեությունը, Կիլիկիան 1914-1923թթ., ֆրանսիական բանակի Հայկական լեգեոն, դասավանդման խնդիրները բուհերում.

✉ poghosyansamvel@yahoo.com

Самвел Погосян, доктор исторических наук, профессор, заместитель декана по науке и международному сотрудничеству АГПУ.

Научные интересы: Армянский вопрос и международная дипломатия, история геноцида армян, ближневосточная политика великих держав в первой четверти XX века, деятельность Погоса Нубара, Киликия 1914-1923 гг., Армянский легион французской армии, проблемы обучения в университетах.

✉ poghosyansamvel@yahoo.com

Samvel Poghosyan, Doctor of historical sciences, professor. ASPU, Faculty of History and Social Science, Deputy Dean for Science and International Cooperation. Scientific Interests: Armenian Question and international diplomacy, history of the Armenian genocide, the Middle Eastern policy of the great powers in the first quarter of the 20th century, the activities of Boghos Nubar, Cilicia in 1914-1923, the Armenian Legion of French Army, teaching problems in universities.

✉ poghosyansamvel@yahoo.com

Լիլիթ Սարվազյան

ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Հիմնաբառեր՝ Կիլիկիո կաթողիկոսություն, էջմիածնի Մայր Աթոռ, գերագույն իշխանություն, իրավասություններ, երկրորդական Աթոռներ:

Ключевые слова: Католикосат Киликии, Первопрестольный Эчмиадзин, верховная власть, духовные полномочия, второстепенные престолы.

Key words: Catholicosate of Cilicia, Mother See of Etchmiadzin, sovereignty, spiritual authority, secondary Seats.

Հոգվածում մեկնաբանվում է Կիլիկիո Հայոց կաթողիկոսության հոգևոր և պատմաքաղաքական դերը՝ Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռների հարաբերությունների համատեքստում: Հիմնավորվում է, որ հայոց հոգևոր Աթոռների գոյությունն ու հարաբերությունները պայմանավորված են Հայաստանի պատմական իրողություններով, քաղաքական կեցությանը, Հայ Եկեղեցու նվիրապետական կարգով, կաթողիկոսների ընտրակարգով, իրավասություններով և պատասխանատվության չափաբաժնով: Սկզբնաղբյուրների հիման վրա փաստարկվում են Սիսի Աթոռի գոյապահպանման իրավունքն ու հոգևոր գործառնության անհրաժեշտությունը՝ հանուն Կիլիկիո թեմի ժողովրդի իրավունքների պաշտպանության և 1836 թ. Պոլսի ժողովրդի իրավունքներով սահմանափակված էջմիածնի Մայր Աթոռի իրավասությունների և վարչական անկախության վերականգնման:

Հայ Եկեղեցու պատմությունը միահյուսված է հայոց քաղաքական պատմությանը, ինչը թույլ է տալիս բացահայտել ազգային կեցության հոգևոր և աշխարհիկ իրողությունների

առնչությունը: Հայ եկեղեցու ինքնիշխանության, Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռի ինքնության և իրավունքների պաշտպանությունը հայ ազգի համար ունեցել է ոչ միայն հոգևոր-բարոյական և իրավական նշանակություն, այլև քաղաքական ետնախորք, քանզի ազգի հոգևոր անկախությունը նրա քաղաքական ինքնակազմակերպման ու ինքնակառավարման հիմքն է եղել պետականազուրկ բոլոր պատմաշրջաններում: Հարկ է նշել, որ Հայ եկեղեցին բնորոշվել է որպես էություն՝ ազգային և վարչակարգով՝ ժողովրդավարական հաստատություն, ուստի՝ «...չէ՛ եղած կղերապետություն մը», և այս հատկորոշիչների շնորհիվ «...դիրույթեամբ եւ յօժարութեամբ յարմարած է նոր ըմբռնումով սահմանադրական կարգերու»¹:

Եկեղեցական իշխանությունը կամ նվիրապետությունը սահմանված է Աստվածային օրենքներով և Հայ Կանոնական իրավունքով: Հայ եկեղեցու գերագույն Աթոռը էջմիածնի Մայր Աթոռն է՝ Հայրապետական անօտարելի ու անբաժանելի իշխանությամբ, քանզի, ինչպես հաստատում է Մաղաքիա Օրմանյանը (1841-1918), այն «...յատուկ և միակ Աթոռ մըն է, և ամեն Աթոռ իւր միակ աթոռակալը կրնայ ունենալ, և ոչ երկու կամ աւելի»²:

Քաղաքական անբարենպաստ պայմաններում Հայրապետական Աթոռը գտնվել է «վտարանդիության» մեջ, էջմիածնի գահակալները տեղափոխվել են հայոց քաղաքական կենտրոններ՝ Սիս, Հռոմկլա, Ծամնդալ, Անի, Արզինա, Աղթամար, Դվին: Սակայն «...չէ փոխուեր Աթոռոյն իշխանութեանց և իրաւասութեանց և արտօնութեանց և պաշտա-

¹ Կիպեւեւեան Բ. Նպս., Հայաստանեայց եկեղեցի (Բանախօսութիւն), Պոսթըն, 1924, էջ 24:

² Օրմանեան Մ. արքեպս., Ազգապատում, մասն Բ, Կ.Պոլիս, 1913, էջ 2147:

մանց կերպն ու կարգը, և Հայաստանեայց Աթոռը միշտ և յարաժամ անդատին ի սկզբանէ և յիւր ծագմանէ եղել է ազատ և ինքնագլուխ»¹։ Ըստ Բաբկեն Կյուլեսերյանի (1868-1936)՝ «Հայ ազգին քաղաքական կեանքի հոսանքներն ո՛ր որ ուղղուած ու հանգրուան մը շինած են, այդ հանգրուաններ Հայոց Կաթողիկոսութեան համար ալ աթոռանիստ եղած են, որովհետեւ պետութեան և Եկեղեցւոյն գործակցութիւնը անհրաժեշտ պայման մըն էր Հայ ժողովուրդի գոյութիւնը պաշտպանելու և անոր քաղաքակրթութիւնը հովանաւորելու համար»²։

Այնուամենայնիւ, հայոց քաղաքական կեցութիւնը հանգեցրել է կաթողիկոսական այլ՝ Աղթամարի և Սիսի Աթոռների գոյութեան անհրաժեշտութեան, ինչն առիթ է տվել հոռմեադավան որոշ գործիչների մեղադրանքին, թե Հայ եկեղեցին «...բազմագլխեան է և յատուկ գլուխ մը չունի, վասնզի մէկէ աւելի կաթողիկոսներ կը ճանչնայ»։ Իրականում Մայրաթոռի գերագոյն իշխանութիւնը երբեք չի բաժանվել, և նշված կաթողիկոսութիւնները դիտվել են որպէս մասնավոր իրավունքներով օժտված երկրորդական Աթոռներ՝ նույնիսկ «...մինչև աստիճան մը ինքնագլուխ իրաւասութեամբ, բայց միշտ գերագոյն աթոռին իշխանութիւնը ճանչնալով»³։

Հետևաբար՝ հայ եկեղեցական իրավունքով ճանաչվում է միայն Մայր Աթոռի գերիշխանության օրինականությունը, և ո՛չ «երկգլխեան» կամ «եռափեղկեալ» իշխանութիւնը։ Նույնիսկ որոշ գործառույթներ իրականացնելու նպատակով Ամենայն Հայոց Կաթողիկոսի լիազոր փոխանորդների և

¹ Օրմանեան Մ. արքեպս., Աթոռ Հայաստանեայց, Վաղարշապատ, 1886, էջ 2։

² Բաբգէն Ա. Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչև մեր օրերը), Անթիլիաս-Լիբանան, 1939, էջ 5։

³ Օրմանեան Մ. արքեպս., Ազգապատում, մասն Բ, էջ 2649։

խորհրդականների նշանակման պարագայում Հայրապետական իրավասությունների փոխանցում կամ բաժանում չի եթադրվում: Ուստի՝ «...ցորչափ Աթոռի տէր կաթողիկոս մը կենդանի է, ուրիշ մը համահաւասար կաթողիկոս չկրնար ընդունուիլ», իսկ ժամանակավոր պաշտոնյաները համարվում են «...աթոռակից կամ կաթողիկոսակից՝ լիազօր փոխանորդի կամ գործակից օգնականի կերպարանով, և ոչ աւելի»¹:

Սիսի Աթոռը հիմնադրվել է 1446 թ. Կիլիկիայի Սիս քաղաքում՝ Հայոց կաթողիկոսության նախկին նստավայրում, 1441 թ. Էջմիածնի Ազգային ժողովի որոշմամբ Հայրապետական Աթոռը Ս. Էջմիածնում վերահաստատվելուց հետո: Աղթամարի կաթողիկոսությունը սկզբնավորվել է 1113թ. և գոյատևել մինչև 1895²:

ԺԶ-ԺԷ դարերում ծավալվել են վեճեր Էջմիածնի Գերագույն Աթոռի և Սիսի ու Աղթամարի Աթոռների միջև՝ կաթողիկոսական իշխանության օրինականության և իրավասությունների սահմանների վերաբերյալ: Աթոռների հարաբերության խնդիրը քննարկվել է Երուսաղեմի 1651թ. ժողովում, որտեղ կնքված դաշնագրի համաձայն՝ կաթողիկոսական յուրաքանչյուր Աթոռ միայն իր թեմերի համար պետք է եպիսկոպոս ձեռնադրեր, և մեկ Աթոռից ձեռնադրվածն այլ Աթոռի իրավասության ներքո գտնվող թեմերում վարչական որևէ պաշտոն ստանձնել չէր կարող: Կարևորվում էր նաև **ժողովրդի** կարծիքը՝ կաթողիկոսների թեկնածուների մասին, ու եթե «Եպիսկոպոս մը որ առանց իւր կաթողիկոսին հրամանին... այլազգեսց բռնութեամբ վիճակի մը տիրանայ, լուծ-

¹ Նույն տեղում, էջ 2147:

² Տե՛ս Ակիճեաճ Բ. Ն. Վրդ., Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ (Պատմական ուսումնասիրութիւն), Վիեննա, 1920, էջ 8-13:

ցի ի կարգէն»¹։ Թեև Երուսաղեմի ժողովի նպատակը Աթոռների միջև առկա հակամարտությունը չեզոքացնելն էր, այնուհանդերձ, ակնհայտ է, որ անտեսված է Մայր Աթոռի գերագահության սկզբունքը, և առաջնային է Աթոռների իրավահավասարության սկզբունքը։ Մաղաքիա Օրմանյանի դիտարկմամբ՝ «...գլխաւոր հայրապետութիւնը հնար չէր երկուքի վերածել՝ առանց Հայոց եկեղեցին ալ կիսելու, իսկ Ամենայն Հայոց Հայրապետական իրաւունքը ճանշցուած էր բոլոր հայութենէ»²։

Հայ եկեղեցու նվիրապետական կարգում Սիսի և Աղթամարի կաթողիկոսական Աթոռները, ինչպես նաև Երուսաղեմի ու Կ.Պոլսի Հայոց պատրիարքություններն օժտված են վարչական լայն իրավասություններով միայն այն գավառների նկատմամբ, որոնք ուղղակի նրանց թեմական իշխանության ներքո են։ Այս թեմերի կառավարումը չի ենթադրում Մայրաթոռի անմիջական և անհարկի միջամտություն, եթե չեն խախտվում սահմանված կանոնները։ Ուստի՝ Աթոռների վարչական իրավունքների փոխանաչման պարագայում ինքնակառավարումը չի խաթարում հայոց եկեղեցական միությունը, «...զի ո՛չ հաւատքն ու դաւանութիւնը բաժան են, և ո՛չ պաշտամունքն ու իշխանութիւնը անջատ։ Մի եկեղեցին երկու չլինիր»³։

Տարբեր պատմաշրջաններում Հայ եկեղեցու հոգևոր իշխանության աստիճանակարգում Աթոռների հարաբերությունները բարդանում էին, երբ որոշ կառավարիչների վար-

¹ Տե՛ս Առաքել վարդապետի Դավիթեցոյ Պատմութիւն, Վաղարշապատ, 1884, էջ 255-256։

² Օրմանեան Մ. արքեպս., Ազգապատում, մասն Բ, էջ 2462։

³ Օրմանեան Մ. արքեպս., Էջմիածին, մասն Բ «Արարատ», Վաղարշապատ, 1888, թիւ Բ, էջ 67։

չաքաղաքական հավակնությունների պատճառով խախտվում էին Աթոռների իրավասությունների սահմանները: Առավել բարդ իրավիճակ էր ստեղծվում **հակաթոռությամբ** պարագայում, երբ առանց օրինական ընտրության՝ **ինքնակոչ** կաթողիկոսներ էին հայտնվում, ինչպես օրինակ՝ «Դաւիթ Թոռնիկեան կաթողիկոս հռչակեցաւ յԱղթամար ի 1113, և Գրիգոր Մուսաբէկեան բաժանեալ կաթողիկոս եղև ի Սիս 1441»¹: Իհարկէ՝ ավելի ուշ Սիսի և Աղթամարի կաթողիկոսները ճանաչեցին էջմիածնի Աթոռի գերագահությունն ու նախամեծարությունը՝ գործադրելով Հայ եկեղեցու ավանդական կանոնակարգով հաստատված իրենց իրավունքները, որոնք առավել բարձր են եպիսկոպոսների և թեմական առաջնորդների իրավասություններից:

Ազգային եկեղեցական գործիչները փորձում էին Հայ եկեղեցու նվիրապետական Աթոռների հարաբերության խնդիրը լուծել հոգևոր իշխանության **կենտրոնամետ և ապակենտրոն** սկզբունքներից որևէ մեկի առաջնայնության տեսանկյունից: Դեռևս Սիմեոն Ա. Երևանցին (1710-1780) միանշանակ պաշտպանում էր խիստ կենտրոնացված իշխանության գաղափարը՝ Մայրաթոռի գերակա իրավասությունները մեկնաբանելով հետևյալ կերպ. «Եւ այստեղ նստող հայրապետին է (վերապահված) առանձնակի իշխանություն՝ հիմնելու հայոց բոլոր եկեղեցիները, բարեկարգելու, կանոնի մեջ պահելու, վերացնելու ավելորդը եւ լրացնելու թերին... անկասելի եւ բացարձակ (իր այն) իշխանությամբ հրահանգելու հոգևորն ու օգտակարը, փակել եւ բանալ, կապել եւ

արձակել»¹։ Ըստ Երևանցու՝ էջմիածնի Աթոռը միշտ այս կանոնակարգով է առաջնորդվել և կառավարել, իսկ Դվինում, Անիում և այլուր գտնվող կաթողիկոսները սոսկ Գրիգոր Լուսավորչի ժառանգորդն են համարվել, քանի որ էջմիածնի Հայրապետը հայոց միապետական գլուխն ու գահակալն է։ Վերջինս գերապատիվ է նաև Սիսի ու Աղթամարի կաթողիկոսներին, և այս իրողությունը ճշմարիտ է «...ոչ միայն ըստ բուն, սեփական եւ իսկական, գերակա հոգեւորական իշխանության, այլեւ ըստ այլազգի եւ մերազնյա հասարակության վճիռների, ըստ աշխարհիկ տերերի ու մյուս իշխանավորների կողմից տրված հրամանների»²։

Սիմեոն Երևանցին առավել արմատական դիրքորոշում է դրսևորում Կ. Պոլսի Հայոց պատրիարքության նկատմամբ՝ այն անվանելով առաջնորդություն, որն իբր չի տարբերվում թեմական այլ կենտրոններից։ Ու քանի որ բոլոր առաջնորդներին նշանակում է Ամենայն Հայոց Հայրապետը, ապա օտար՝ օսմանյան կառավարության հրամանով պատրիարքի նշանակումը համարում է Հայ կանոնական իրավունքի խախտում և ընդգրիմություն Մայր Աթոռին³։ Հարկ է նշել, որ Կ. Պոլսի Հայոց պատրիարքի հոգևոր ու քաղաքական իրավասությունները սահմանված էին օսմանյան օրենսդրությամբ, հետևաբար՝ չէին կարող բխել Հայ կանոնական իրավունքից։ Սիմեոն կաթողիկոսը տեղյակ էր այս իրողությանը, ուստի՝ անհիմն էր առկա քաղաքական կեցությունից բխող

¹ Սիմեոն Կաթողիկոս Երևանցի, Ջամբու. Հիշատակարան էջմիածնի Սուրբ Աթոռի եւ նրա հարակից վանքերի (թարգմ., առաջ, եւ ծան. Վ. Համբարձումյանի), Երևան, 2003, էջ 75։

² Նույն տեղում, էջ 78։

³ Խնդրի մանրամասն վերլուծությունը տե՛ս Սարվազյան Լ., Մաղափա Օրմանյան (Ազգային-փիլիսոփայական հայեցակարգը), Երևան, 2013, էջ 219-221։

իրավական կարգավիճակն ազգային կանոնականությամբ փոխելու նրա ձգտումը:

Այդպիսով, հայ ազգի պատմաքաղաքական կեցությամբ պայմանավորված՝ հայոց հոգևոր Աթոռների հարաբերության խնդիրը հնարավոր էր լուծել ոչ միայն Հայ կանոնական իրավունքի հիման վրա, այլև հաշվի առնելով ռուսական և օսմանյան օրենքները, ինչպես նաև 1860թ. ընդունված և 1863թ. Բ. Դռան կողմից վավերացված արևմտահայոց «Ազգային Սահմանադրության» հիմնադրույթները:

Կ. Պոլսի Հայոց պատրիարքը միջնորդավորում է Ազգային վարչության հարաբերությունները հայ ազգի, Մայրաթոռի և Բ. Դռան հետ: Ընդ որում՝ Ազգային վարչությունը պարտավոր է. «Արարատեան Մայր Աթոռին հետ՝ աւանդապահ մնալ միշտ նոյն յարաբերութեանց որոնցմով նախնեացմէ անտի կապուած են իրարու հետ Ազգն ու Աթոռն»¹, և «...Հաստատնեայց Եկեղեցւոյ Կրօնական կանոնաց և օրինաց համեմատ վարուիլ»²: «Ազգային Սահմանադրության» այս հիմնադրույթներով հաստատվում են և՛ Մայր Աթոռի գերիշխանությանն համաչափ պատրիարքական իշխանության նկատմամբ, և՛ Հայ կանոնական իրավունքի անփոփոխելիությունն ու համապարտադիր լինելը: Իսկ պատրիարքի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի փոխանորդ լինելը բառացի սահմանված է «Ազգային Սահմանադրության» 1870թ. վերաքննված տարբերակում. «Պատրիարքը... հայոց պաշտօնական հոգևոր պետն է, իբրեւ ներկայացուցիչ կաթողիկոսին ամենայն Հայոց, և միանգամայն միջնորդ է հեղինակութեան Բ. Դրան՝

¹ Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Ի Կօստանդնուպօլիս, 1860, յօդ. 8, էջ 14:

² Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Կ. Պօլիս, 1863, Կէտ Թ, էջ 6:

Ազգին հետ ունեցած յարաբերութեանցը մէջ»¹։ Հետևաբար՝ Հայոց պատրիարքը վարչական իրավասությամբ բարձր է առաջնորդներից, բայց ենթարկվում է էջմիածնի Հայրապետական Աթոռի գերիշխանությանը։

Մաղաքիա Օրմանյանի մեկնաբանությամբ՝ Հայ եկեղեցու վարչական կառուցակարգը և հոգևոր պաշտոնեությունը «...ընդհանրապէս կեդրոնացուցման ձևով չեն, որովհետև իւրաքանչիւրը ազատ և սեփական իրաւունքներ կը վայելէ, իրեն բնական կամ կանոնական պաշտօնները կատարելու, առանց բարձրագոյն աստիճանի վերապահութեան կամ արգելքին ենթարկուելու»²։ Ամենայն Հայոց Կաթողիկոսի վերահսկողութեան իրավունքը գործադրվում է բացառիկ դեպքերում, երբ՝ ա) ծագում են հոգևոր կամ ազգային-քաղաքական հրատապ խնդիրներ, և խորհրդակցության կարիք է լինում, բ) ներեկեղեցական գործառույթներում հակասություններ են առաջանում, գ) օտար միջամտություններին հակազդելու անհրաժեշտություն է ծագում, դ) պաշտոնակատարության ժամանակ զեղծումներ են լինում և այլն։

ԺԺ դարակեսին Կաթողիկոսական Աթոռների հարաբերությունները դարձյալ բարդանում են՝ Սիսի և Աղթամարի Աթոռների որոշ ինքնակոչ կաթողիկոսների անօրինական գործողություններով պայմանավորված։ Գեորգ Դ. Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսը 1866 թ. իր կոնդակով պահանջում է, որ «...հպատակական ըլլան այս աթոռներուն Մայր Աթոռոյ հետ յարաբերությունները»՝ սպառնալով, որ

¹ Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Երկրորդ վերաճնութիւն, Կ. Պոլիս, 1870, յօդ. 3, էջ 5։

² Օրմանեան Մ. արքեպս., Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը, ու ներկայ կացութիւնը, Կ.Պոլիս, 1911, էջ 165։

գոր Օտյանի, Ստեփան Փափագյանի և Նահապետ Ռուսին-
յանի կողմից: Իբրև անվերապահ պայման՝ բոլոր առաջարկ-
ներում էջմիածնի Մայր Աթոռը նախաշվում է Ամենայն Հայոց
Գերագույն Աթոռ՝ իր բարձրագույն իրավագործությամբ: Առա-
ջարկները հիմնականում տարբերվում էին Սիսի կաթողիկո-
սի ընտրության և վավերացման պայմաններով:

Ա. Ռ. Կյումուշկերտյանի համոզմամբ՝ Կ. Պոլսի Կենտրո-
նական իշխանությունը չպետք է միջամտի Սիսի կաթողիկո-
սի ընտրությանը, այլ Կիլիկիո ժողովուրդը մեծամասնությ-
յամբ առաջադրի երկու թեկնածու, որոնցից մեկին պետք է
ընտրի Ամենայն Հայոց կաթողիկոսը: Միաժամանակ նա չի
ընդունում «տեր-ծառա» հարաբերությունները Մայր Աթոռի
և մասնավոր Աթոռների միջև, ինչը հակասում է Հայ եկեղե-
ցու ավանդական սկզբունքներին ու կանոններին, և հորդո-
րում է, որ Վեհափառը «...իբրեւ հաւասարապատիւ կաթողի-
կոս ճանչնայ զիրենք, միշտ գերագահութիւնը եւ բոլոր Հա-
յաստանեայց Եկեղեցւոյ կառավարութիւնը իրեն պահելով»¹:

Բ. Ըստ Գր. Օտյանի՝ Սիսի կաթողիկոսի ընտրությունը
չպետք է էջմիածնի Կաթողիկոսի բացառիկ իրավունքը հա-
մարել, քանի որ Պոլոժենիեի կանոնակարգով նրա իրավա-
սությունները սահմանափակված են, և վարչական անկա-
խությունը դարձել է վիճարկելի: Հայ Եկեղեցու հոգևոր
միասնությունն անխաթար պահելու նպատակով Օտյանը
կարևորում է Կ. Պոլսի Հայոց պատրիարքության՝ իբրև Ազ-
գային Կենտրոնական վարչության և պատրիարքի՝ որպես
Ամենայն Հայոց կաթողիկոսի փոխանորդի մասնակցությու-
նը Սիսի կաթողիկոսի ընտրությանը: Այս համապատկերում
օրենսգետն առաջարկում է, որ Քաղաքական ժողովն առա-

¹ Ատեմագրութիւնմ Ընդհանուր Ժողովոյ 1870-1874 նստաշրջանի, նիստ երկրորդ,
օգոստոս 28, 1870, Կ. Պոլիս, էջ 28:

ջադրի Սիսի կաթողիկոսի երեք թեկնածու, և Ազգային ժողովի քվեարկությամբ նրանցից մեկն ընտրվի:

Գր. Օտյանն անդրադառնում է նաև «**ճակարտության**» խնդրին՝ ազգային-քաղաքական առկա իրավիճակում հույժ վտանգավոր համարելով Կիլիկիո Հայոց Աթոռն իբրև «հակաթոռ» ճանաչելը և կաթողիկոսության լուծարման պահանջը: Հստ նրա՝ «Պէտք է պահել Սսոյ Կաթողիկոսութիւնը... էջմիածնայ կաթողիկոսութեան համար: Եթէ Սսոյ կաթողիկոսութիւնը վերցնես, մեծ վնաս կը հասցնես էջմիածնայ կաթողիկոսութեան»¹, քանի որ բացառված չէ, որ ռուսական կառավարության հակազգային քաղաքականության հետևանքով Մայրաթոռն ավելի նվաստ վիճակում հայտնվի: Նա անհրաժեշտ է համարում **էջմիածնի Գերագոյն Աթոռի ավանդական իրավունքների ու անկախության վերականգնումը, ինչը** գրեթե անհնար էր թվում ազգի հպատակության պայմաններում: Սակայն Գր. Օտյանի համոզմամբ՝ ազգն ունի մի հզոր ուժ գերտերության դեմ. «Քանի որ Սսոյ կաթողիկոսը կեցած է, երբոր ուզենք, կրնանք էջմիածնայ Կաթողիկոսին անկախութիւնն ու Պալաժէնիայի բարձունքն ընդունիլ. եւ երբ այս արդիւնքը ձեռք բերենք, ա՛յն ատեն պէտք է սկսինք մտածել Սսոյ Կաթողիկոսութիւնը վերցնելու համար»²:

Գ. Ստ. Փափազյանի կարծիքով՝ Սիսի և Աղթամարի թեմականներին չպետք է զատել «Ազգին ամբողջականութենէ», և «...ընդունիլ՝ Սիս եւ Աղթամար իբր մասնաւոր կաթողիկոսունք իրենց կաթողիկոսական յաջորդութիւնը պահպանելու են, և մեք զանոնք իբր լոկ հոգեւոր բարձրաստիճան պաշտօնեաներ նկատելու եմք՝ ինչպէս Երուսաղէմայ Պատրիարքը, եւ ինչպէս այս վերջինիս ընտրութեանը կը մաս-

¹ Ատենագրութիւնք Ընդհանուր ժողովոյ, նիստ եօթներորդ, հոկտեմբեր 7, 1870, էջ 94:

² Նոյն տեղում:

նակցի երեսփոխանութիւնը, այնպէս պէտք է որ մասնակցի Սսոյ եւ Աղթամարայ կաթողիկոսաց ընտրութեան»¹։ Ըստ «Ազգային Սահմանադրութեան»՝ մասնավոր Աթոռներն իրենց թեմերը կառավարում են Երեսփոխանական ժողովի հրահանգներին համապատասխան։

Դ. Ն. Ռուսինյանը Սիսի կաթողիկոսի ընտրությունը համարում է Կիլիկիո ժողովրդի իրավունքը, բայց ընտրութեան արդյունքների վավերացումը վերապահում է միայն Կ. Պոլսի վարչական կենտրոնին՝ Ազգային ժողովին։ Վավերացումը որևէ իրողութեան՝ օրենքներին համապատասխան կատարված լինելը պաշտոնապես հաստատելն է։ Նա կարևորում է մասնավոր կաթողիկոսների ոչ միայն հոգևոր, այլև վարչական գործառնութենքը՝ բացատրելով. «Խնդիրը այդ կաթողիկոսաց սրբագործական իշխանութեան վրայ չէ՝ որ՝ սրբազան ժողովի մը տարուի. անոնց հովուապետական, առաջնորդական, եւ մէկ բառով՝ ժողովուրդը կառավարելու կերպին վրայ է, եւ ասով է որ զընդհանուր վարչութիւնը ներկայացնող կեդրոնական ժողովին հեղինակութենէն չի կրնայ խուսափի»²։ Սիսի կաթողիկոսը ընդհանրական հայրապետ չէ, այլ մասնավոր հովվապետ, գավառական առաջնորդ, նահանգի պատրիարք, ով պաշտոնավարում է ցմահ։

Ռուսինյանը հիշեցնում է, որ կաթողիկոսի կառավարելու իշխանությունը բխում է ժողովրդից, և բնական օրինաչափությամբ՝ ժողովուրդն էլ պետք է ընտրի իր հովվապետին։ Հետևաբար՝ «Կիլիկեցիք կամ Աղթամարցիք՝ որք տէրն են իրենց տանը, ... իրենք միայն պիտի ընտրեն իրենց առաջնորդը, կաթողիկոսը... եւ ո՛չ ոք իրաւունք ունի միջամտութեան, ինչպէս որ ամեն գաւառ ինք կ'ընտրէ ըստ իրաւանց իր առաջ-

¹ Ատենագրութիւն Ընդհանուր ժողովոյ, նիստ երրորդ, սեպտեմբեր 4, 1870, էջ 38։

² Ատենագրութիւն Ընդհանուր ժողովոյ, նիստ հինգերորդ, սեպտեմբեր 18, 1870, էջ 58։

նորդը, որպէս կը պահանջէ եւ Սահմանադրութիւնը»¹։ Իսկ ընտրութեան արդշունքը հատուկ տեղեկագրով պետք է ներկայացվի Կենտրոնական վարչութեանը՝ ստուգելու, որ ընտրութեանը կատարված է ազգային օրենքների համաձայն կամ հակասում է դրանց։ Եթե հակասութեան չլինի սահմանված ընտրակարգի հետ, Ազգային Երեսփոխանական ժողովը կվավերացնի Սիսի կաթողիկոսի ընտրութեանը։

Այդպիսով՝ Նահապետ Ռուսինյանի առաջադրած բանաձևը՝ «**Ընտրութիւնը՝ գաւառին, վաւերացումը՝ կեղոնին**», ընդունեցին Ազգային ժողովի թե՛ աշխարհիկ, թե՛ հոգևորական պատգամավորները 1870 թ. սեպտեմբերի 25-ի VII նիստում։ Այս բանաձևով պաշտպանվեցին Կիլիկիո կաթողիկոսին ընտրող թեմական ժողովրդի կամքի ազատութեանն ու անկախութեանը, մյուս կողմից՝ ազատ ընտրութեանը վավերացնող Ազգային ժողովի իշխանութեան գերակայութեանը։

Պատմական այս ժամանակաշրջանում լուծվեց Կիլիկիո կաթողիկոսութեան խնդիրը, բարելավվեցին Հայ Եկեղեցունվիրապետական Աթոռների հարաբերութեանները, չեզոքացան այն հակասութեանները, որոնք ծագել էին ինքնահռչակ կաթողիկոսների ապազգային գործունեութեան ու «հակաթոռութեան» գաղափարի իրացման փորձերի հետևանքով։ Իհարկէ՝ թեև հետագա տարիներին որոշ հանգամանքներում դարձյալ հարուցվեցին խնդիրներ կաթողիկոսական և պատրիարքական Աթոռների միջև, այնուամենայնիվ՝ դրանց լուծման բանալին համարվեցին անօտարելի հռչակված հետևյալ սկզբունքները.

❖ Ճանաչել էջմիածնի Մայրաթոռի գերիշխանութեանն ու բացառիկ իրավագորութեանը՝ որպէս համայն հայութեան միասնութեան հիմք։

¹ Նույն տեղում, էջ 60։

❖ Մերժել երկրորդական Աթոռների հակաթոռության ազգավնաս գաղափարը՝ հստակ սահմանելով և պաշտպանելով նրանց իրավասությունները՝ իրենց ենթակայության ներքո գտնվող թեմերում:

❖ Սիսի և Աղթամարի կաթողիկոսների ընտրությունը համարել թեմական ժողովրդի, ոչ թե Մայրաթոռի բացառիկ իրավունքը: Իսկ ընտրության արդյունքի վավերացման իրավունքը վերապահել Կ.Պոլսի Ազգային ժողովին:

❖ Հարգել Կ. Պոլսի Ազգային պատրիարքության՝ որպես Ամենայն Հայոց կաթողիկոսության փոխանորդի սահմանված իրավունքները:

❖ Բացառել Սիսի և Աղթամարի աթոռակալների ուղղակի հարաբերությունները Բ.Դռան և օտար եկեղեցիների հետ:

❖ Հայ հոգևոր Աթոռների հարաբերությունները կարգավորել՝ հիմնվելով միայն ազգային-եկեղեցական ավանդական օրենքների, Հայ Եկեղեցու նվիրապետական կարգի և «Ազգային Սահմանադրության» հիմնադրույթների վրա:

АРМЯНСКИЙ КАТОЛИКОСАТ КИЛИКИИ И ПРОБЛЕМА СООТНОШЕНИЯ ДУХОВНЫХ ПРЕСТОЛОВ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ

Лилит Сарвазян

РЕЗЮМЕ

В статье оценивается духовная и историко-политическая роль армянского Католикосата Киликии в контексте взаимоотношений Патриархатской и Католикосской Престолами. Утверждается, что существование и соотношение духовных Престолов обусловлены историко-политическим бытием Армении, ие-

рархией Армянской Церкви, а также избирательной системой католикосов, их полномочиями и долей ответственности. Верховным Престолом Армянской Церкви является Первопрестольный Эчмиадзин, обладающий неделимой властью и юрисдикцией. А Католикосаты Сиса и Агтамара, а также Армянские Патриархаты Иерусалима и Константинополя, как второстепенные престолы, наделены широкими административными полномочиями над провинциями, находящимися в непосредственном их епархиальном ведении. Управление этими епархиями не предполагает прямого вмешательства Первопрестольного Эчмиадзина. С другой стороны, в случае взаимного признания прав Престолов самоуправление не подрывает церковный союз.

THE ARMENIAN CATHOLICOSATE OF CILICIA AND THE PROBLEM OF RELATIONSHIP OF THE SPIRITUAL THRONES OF ARMENIAN CHURCH

Lilit Sarvazyan

SUMMARY

The article appritiates the spiritual and historical-political role of the Armenian Catholicosate of Cilicia in the context of the relationship between the Catholicosal and Patriarchal Sees. It is argued that the existence and relationship of the Sees is conditioned by the historical and political existence of Armenia, hierarchy of the Armenian Church, electoral system of Catholicos, extent of authorities and responisibilities. The Supreme See of the Armenian Church is the Mother See of Etchmiadzin,

with indivisible authority and jurisdiction. And the Catholicosals Sees of Sis and Aghtamar, as well as the Armenian Patriarchates of Jerusalem and Constantinople, as secondary Sees, are endowed with broad administrative powers over the provinces that are directly under their diocesan authority. The management of these dioceses does not involve direct intervention of the Mother See. On the other hand, in the case of mutual recognition of the rights of the Sees, self-government does not disrupt the church union.

Լիլիթ Սարվազյան, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ՀՊՄՀ հասարակագիտության ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ հայ քաղաքական փիլիսոփայություն, իրավունքի փիլիսոփայություն, ազգային և համաշխարհային իրավաքաղաքական ուսմունքների պատմություն, քաղաքակրթական զարգացումների տեսություններ, արևմտահայ սահմանադրաիրավական մտքի պատմություն.

✉ lilit.sarvazyan@gmail.com

Лилит Сарвазян, кандидат философских наук, доцент кафедры обществоведения АГПУ. Диапазон научных исследований: армянская политическая философия, философия права, история национальной и всемирной политико-правовых учений, теории цивилизационных развитий, история западноармянской конституционно-правовой мысли.

✉ lilit.sarvazyan@gmail.com

Lilit Sarvazyan, Candidate of Philosophical Sciences, Associate Professor of Chair of Social studies of ASPU. Scientific researches: Armenian Political Philosophy, Philosophy of Right, History of National and World Legal and Political Studies, Theories on Civilized Developments, History of Western Armenian Constitutional and Legal Mind.

✉ lilit.sarvazyan@gmail.com

Անի Ֆիշենկճեան (Ֆշնկջեան)

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՐԻԿՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ «ՀԱՍԿ» ԱՄՍԱԹԵՐԹԸ ԲԵՐԻՈՅ ԹԵՄԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հիմնաբառեր՝ Բերիոյ հայոց թեմ, Լաթափա, Գամիշլի, Ճեզիրէի Առաջնորդական փոխանորդութիւն, կրթական, գաղթ, Արեւմտեան Հայաստան:

Ключевые слова: Армянская епархия Берио, Латакия, Камышлы, Джезире Викарий Лидерства, образование, эмиграция, Западная Армения.

Key words: the Armenian Diocese of Perio, Latakia, Kamishli, The Armenian prelaty- Vicarge of Jezireh, educational, emigration, Western Armenia.

Ներածութիւն

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պաշտօնական «Հասկ» ամսաթերթը՝ իր հրատարակման առաջին համարէն՝ 1932 Յունուար, սկսեալ իբրեւ ամսօրեայ հրատարակութիւն, պարբերական տեղեկագիրը դարձաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ թեմերու /առաջնորդարաններու/ գործունէութեան, «որպէս զի ստոյգ եւ կանոնաւոր տեղեկութիւնները եւ լուրերը ուղղակի իր ակնաղբիւրէն իմանայ մեր ժողովուրդը»¹:

Թեմային առնչուող մեր յօդուածը նուիրուած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Հասկ» ամսաթերթի 90-ամեայ պատմութեան: Ամսաթերթը իր 90-ամեայ հրատարակութեամբ ընթերցող հասարակութեան իրազեկ դարձուց եւ

¹ «Հասկ» ամսաթերթ, Ա տարի, թիւ 1, Յունուար, Անթիլիաս, 1932, էջ 1:

կը դարձնէ ե՛լ կաթողիկոսութեան, ե՛լ թեմերու գործունէութեան մասին, «Հասկ»-ի համարները կը բովանդակեն կրօնական, գրական, լեզուական, թեմական, կրթական բնոյթի արժէքաւոր գրութիւններ, ինչպէս նաեւ կաթողիկոսութեան թեմերու հասարակական կեանքի վերաբերող հաղորդումներ եւ այլն:

Մեր յօդուածը կառուցած ենք ուսումնասիրելով «Հասկ»-ի 1932-1942 թթ. համարները եւ անոնց անդրադարձը «Հալէպ»-ի կամ «Բերիոյ Թեմի» գործունէութեան վերաբերեալ: Բերիոյ Հայոց Թեմի գործունէութեան առնչուող նիւթերը ամսաթերթին մէջ բազմազան են. անոնք մեծ մասամբ լոյս կը սփռեն յետեղեռնեան տարիներուն դէպի Հալէպ, Դամասկոս, Լաթաքիա եւ Սուրիոյ այլ հայկական բնակավայրերու մէջ ապաստան գտած եւ տարբեր ժամանակներու գաղթականներու տեղաւորման, հաւաստի տեղեկութիւններ անոնց վիճակագրական տուեալներուն¹, Թեմակալ Առաջնորդներու եւ Ազգային իշխանութեանց կողմէ ծրագրուած բարենորոգչական, կրթական, կազմակերպչական ու հոգեմտաւոր ազգային եւ քրիստոնէական դաստիարակութեան միտուած գործունէութեան, ինչպէս նաեւ թեմական եւ հովուապետական այցելութիւններու, թեմի շինարարական աշխատանքներու, թեմի կողմէ հովանաւորուող Գաղթականաց կեդրոնական յանձնախումբերու գործունէութեան, Սուրիոյ հիւսիս-արեւելեան շրջանի Ճեզիրէ Առաջնորդութեան Փոխանորդութեան անհրաժեշտութեան եւ կազմաւորման, «Սանճագի հայոց

¹ Տարեկան վիճակագրական ցուցակ Բերիոյ թեմին մէջ. «Հասկ» ամսաթերթ, Բ տարի, թիւ 5-6, Մայիս-Յունիս, Անթիլիաս, 1933, էջ 32, «Հասկ» ամսաթերթ, Դ տարի, թիւ 2, Փետրուար, Անթիլիաս, 1935, էջ 24:

գաղթ»-ի, «Սանճագի հայ գաղթականաց տեղաւորման»¹ եւ Սուրիոյ հայկական բնակավայրերու եւ այլ թեմաներու շուրջ: «Հասկ»-ի տարբեր համարներուն մէջ տեղ գտած այդ յօդուածները ունին աղբիւրագիտական նշանակութիւն, որոնց միջոցով կրնանք որոշակի պատկերացում ունենալ Բերիոյ /Հալէպի/ Թեմի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան գործունէութեանց ու յարաբերութեանց վերաբերեալ:

Կազմակերպական գործունէութիւն

Ինչպէս գիտենք՝ 1921թ. Դեկտեմբերէն Սիսը դադրած էր Կիլիկիոյ Կաթողիկոսութեան աթոռանիստը ըլլալէ: Սուրիոյ եւ Լիբանանի մէջ դեգերելէն ետք 1930թ. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կը հաստատուի Անթիլիաս (Լիբանան): Առաջին հերթին անհրաժեշտ էր թեմերու կազմակերպումն ու վերակազմակերպումը: Ուստի Սահակ Բ. Խապայեան հայրապետի հրաւերով Անթիլիասի մէջ 1932 Մարտ 8-14 գումարուած նիստերը կը զբաղին «Թեմերու կազմակերպութեան լրացումի եւ միօրինակ վարչական դրութեան վերածելու անհրաժեշտութեան խնդիրով»², եւ որպէսզի հինգ թեմերու համար վարչական Սահմանադրական միաձեւութիւն որդեգրուի, կը ներկայացուի հետեւեալ ծրագիրը. Լաւողիկէի /Լաթաքիոյ/ այժմեան, 1932թ.-ի, թեմին կցել Հալէպի թեմին պատկանող «Իսկէնտէրունի Ազատ Սանճագը եւ Անտիոքի ու Սուէյտիոյ ամբողջ շրջանակը եւս» եւ վերակազմելի թեմը կոչել պատմական անունով՝ «Առաջնորդութիւն Անտիոքի Թեմին»³, իսկ Դամասկոսի թեմին կցել մինչ այդ Հալէ-

¹ Տե՛ս «Հասկ» ամսաթերթ, Ժ տարի, թիւ 3-4, Մարտ-Ապրիլ, էջ 52 Կիրակնօրեայ դպրոց, 54 գաղթականներ, էջ 55-56 Վիճակագրութիւն՝ Դամասկոսի թեմի, Բերիոյ թեմի վիճակագրութիւն, եկեղեցիներ, մատուոներ, քահանաներ:

² «Հասկ» ամսաթերթ, Ա տարի, թիւ 3, Մարտ, Անթիլիաս, 1932, էջ 15:

³ Անդ, էջ 16:

պի թեմին ենթակայ Համայնի. Հոմսի եւ Սէլիմիէյի շրջանակները¹:

Սակայն վարչական դժուարութեանց հետեւանքով կարելի չ'ըլլար երկու վերոնշեալ թեմերու կազմակերպումը ձեռնարկել²: Դժուարութիւնը յաղթահարելու եւ ծրագիրը իրագործելու նպատակով Դամասկոսի կաթողիկոսական փոխանորդ Խադ. եպս. Աջապահեան Անտիոք, իսկ Լաթաքիոյ կաթողիկոսական փոխանորդ Եփրեմ վրդ. Տոհմունի Դամասկոս կը փոխադրուին «միեւնոյն տիտղոսով»³: Անկասկած որ աշխատանքներ կը տարուին այդ ծրագիրը իրականացնելու համար, բայց եւ այնպէս, հակառակ կազմակերպման համար նախորդ շրջաններու բազմիցս կայացուած որոշումներուն, մինչեւ 1941 թուական Կիլիկեան թեմերը, Բացի Հալէպէն չեն ստանար սահմանադրական վարչաձեւ եւ չեն օժտուիր ընտրեալ առաջնորդներով⁴: 1941թ.-էն սկսեալ հարկ կը համարուի կաթողիկոսութեան հին թեմերը բարեփոխելու եւ նոր թեմեր կազմելու. Սուրիոյ պարագային՝ Ճեզիրէի, Լաթաքիա-Քեսապ շրջաններու: Սակայն նկատի ունենալով Ճեզիրէի հոծ հայութեան անմիջական կարիքները եւ Հալէպի (Բերիոյ) Առաջնորդարանի կողմէ տարիներէ ի վեր կատարուած դիմումները՝ շրջանը օժտելու Առաջնորդական փոխանորդով մը, Եպիսկոպոսական Ժողովը սկզբուն-

¹ Տե՛ս «Հասկ» ամսաթերթ, Ա տարի, թիւ 3, Մարտ, Անթիլիաս, 1932, էջ 16: Շրջանակ ըսելով պէտք է հասկնանք քանի մը գաւառներու, գաւառակներու, իրարու մօտ հայաբնակ վայրերու ամբողջութիւն:

² Տե՛ս, «Հասկ» ամսաթերթ, Բ տարի, թիւ 9-10, Սեպտեմբեր-Հոկտեմբեր, Անթիլիաս, 1933, էջ 44:

³ Անդ:

⁴ Տե՛ս «Հասկ» ամսաթերթ, Ժ տարի, թիւ 9-10, Սեպտեմբեր-Հոկտեմբեր, Անթիլիաս, 1941, էջ 150:

քով կ'ընդունի «վեդարաւոր մը զրկել հոն», իբրեւ Առաջնորդական Փոխանորդութիւն՝ ցնոր տնօրինում¹:

Ճեզիրէն, որ կը գտնուի Սուրիոյ հիւսիս –արեւելքը, ան սահմանակից է Թուրքիոյ եւ Իրաքի: 1923թ.-էն սկսեալ պարբերաբար Արեւմտեան Հայաստանի գաւառներէն հայութեան հոսք մը կը սկսի դէպի այդ տարածքը: Սակայն ամենամեծ գաղթի սկիզբ կը դրուի 1925-ի քրտական ապստամբութենէն ետք: 1927թ., ապա՝ 1929 թուականներուն հայութեան եւ քրիստոնեայ միւս փոքրամասնութեան զանգուածային գաղթ տեղի կ'ունենայ դէպի Գամիշլի եւ յարակից շրջաններ: Եւ այսպէս, 1927-1930 թթ. դէպի Սուրիա գաղթող հայերը, 31 Մարտ 1930թ.-ի տուեալներով, մեծ մասամբ տեղաւորուած էին Սուրիոյ հիւսիս-արեւելեան հետեւեալ շրջաններու մէջ. «Հասիշէ 100 ընտանիք լուսաւորչական (առաքելական- Ա. Ֆ.) եւ 100 ալ հայ կաթողիկէ. Գամիշլի 400 ընտանիք լուսաւորչական եւ 30 ընտանիք հայ կաթողիկէ. Գարամանիշ 15 լուսաւորչական եւ հայ կաթողիկէ. Ամուտա՝ 20 կաթողիկէ եւ 40-50 տուն լուսաւորչական»²:

Գաղթեալներուն օժանդակութիւն ցոյց տալու համար Թեմի եւ Կաթողիկոսութեան ջանքերով կը կազմուի Գաղթականաց կեդրոնական յանձնախումբ եւ տեղաւորման ենթա-յանձնախումբ, որոնց պարտականութիւնն էր կազմակերպել գաղթականներու կրթական, առողջապահական եւ ամէնէն կարեւորը տեղաւորման (բնակեցման) գործընթացը:

1934թ.-ի Հոկտեմբեր-Նոյեմբերին Աթոռակից Բարգէն Կաթողիկոս, Բերիոյ Թեմի առաջնորդ Արտաւազդ եպս. /հետագային արք./ սրբազանին հետ կ'իրականացնէ թեմական

¹ Տե՛ս անդ:

² Տե՛ս, Ա. Ֆիշենկեւան, Քամիշլիի հայ համայնքը եւ Ճեզիրէի հայոց Առաջնորդական Փոխանորդութիւնը (1920-1960ականներ), Սուրիոյ հայերը գիտաժողովի նիստեր (24-27 Մայիս 2015), Պէյրութ, 2018, էջ 421:

այցելութիւն թեմի հովանաւորութեան տակ գտնուող՝ «Հալէպ, Պապ, Մամպըճ, Ճարապլուս, Արաբ-Փունար, Այն-Արուս, Թէլ-Ապետ, Թինա, Բագգա, Թէլ Սիման, Խըրպըթ-Բըզ, Բաս-Իւ-Այն, Տէրպէսիյէ, Ամուտէ, Գամիշլիէ, Գուպուր-Պիթ, Վանիկ, Տէրիկ... Թէլ-Պրաք, Հասիշէ, Տէյր-էզ-Զօր»¹։ «Թեմական Այցելութիւն» խորագիրը կրող հաղորդագրութենէն կ'իմանանք, որ 1934թ.-ին արդէն Սուրիոյ հիւսիս եւ հիւսիս-արեւելեան շրջաններու մէջ գոյութիւն ունէին 20-22 վայրեր գաղթական հայերով բնակեցուած, որոնք «եկած են սահմանին միւս կողմէն, այսինքն՝ Անթապէն, Պէրէճիքէն, Ուրֆայէն... Մարտինէն, Տիարպէքիրէն, Սղերդի շրջանակէն» եւ կազմած փոքր հայկական բնակավայրեր, ուր նորակազմ շրջաններու մէջ բնակութիւն կրցած էին հաստատել 1700 ընտանիք², որոնց մէջ առաւել աչքի կը զարնէին պշերիկցի քրտախօս հայերը, որոնք հարստահարուած մեծ մասամբ գաղթելով Արեւմտեան Հայաստանէն բնակութիւն հաստատած էին Գամիշլի եւ շրջակայ գիւղերը մինչեւ Այն-Տիվար³։ Պատուիրակութիւնը առաւել կը հետաքրքրուի յատկապէս պշերիկցի քրտախօս հայերով, կը ծանօթանայ անոնց սովորութիւններուն, կաթողիկոսը «Կոնդակ Պշերիկցի հայոց» ուղերձին մէջ կը գրէ, որ Պշերիկցիները թէեւ «վէմի պէս հաստատուն հաւատք ունէին եւ կը սիրէին իրենց մայրենի եկեղեցին»⁴, սակայն թուրքերու եւ քիւրտերու կողմէ այդ բռնագրաւեալ Արեւմտեան Հայաստանի բնակավայրերէն ներս տիրող բռնութեանց պատճառով անոնք մոռցած էին իրենց մայրենի լեզուն՝ հայերէնը. իւրացուցած էին կարգ մը հակամարդկային եւ հակաքրիստոնէական սովորութիւն մը։ «Պշերիկցի

¹ «Հասկ» ամսաթերթ, Գ տարի, թիւ 12, Դեկտեմբեր, Անթիլիաս, 1934, էջ 101:

² Տե՛ս նոյն տեղում:

³ Տե՛ս անդ:

⁴ «Հասկ» ամսաթերթ, Դ տարի, թիւ 2, Փետրուար, Անթիլիաս, 1935, էջ 22:

հայոց» 1935թ. Յունուարի 25-ի կոնդակով, որ քրտերէնի թարգմանուած էր նաեւ, կոչ կ'ուղղէ Գամիշլիի, Վանիկի, Տէրիկի եւ Այն-Տիվարի պշերիկցի հայոց՝ հեռու մնալ կարգ մը սովորութիւններէ, իսկ քահանաներուն կը թելադրէր, չբաշալերել եւ չօրհնել պսակը անոնց որոնք դրամով աղջիկ կը ծախեն. կոնդակին մէջ կ'ըսուի. «Ձեր աղջիկները ո՛չ անասուն են, ո՛չ ալ ապրանք որ ծախուին դրամով: Ասոնք թէեւ ձեզմէ ծնած են, բայց հայ ազգին զաւակներն են, եւ պէտք է որ անոնք կրթուին ազգին պահանջած օրէնքին համաձայն»¹:

Այնուամենայնիւ, քրտախօս հայերու երեխաները ազգային դպրոցներէն ներս կը ստանան հայեցի կրթութիւն, հայերէն կը սկսին խօսիլ եւ ծառայել Հայ եկեղեցւոյ²:

Հետզհետէ Գամիշլի հաստատուող հայերու թիւի աճը եւ շրջակայքը հիմնուած 21-22 փոքր հայկական գիւղերը, առհասարակ, 10-15 ընտանիքներով եւ ծխական դպրոցներով, հրատապ առաջադրանքի առջեւ պիտի դնէր հոգեւոր դասը եւ Ազգային իշխանութիւնը շրջանը օժտելու հոգեւոր կառույցով՝ Առաջնորդական Փոխանորդութեամբ, կազմակերպելու համայնքի հոգեւոր եւ ազգային կեանքը, որուն խիստ կարիքը ունէր շրջանի հայութիւնը³:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանական Ընդհանուր Ժողովը 4-Սեպտեմբեր նիստին, Բերիոյ Առաջնորդարանի դիմումին հիման վրայ, սկզբունքով կ'ընդունի վեղարաւոր մը դրկել ձեզիրէ: Նոյն թուականի Հոկտեմբեր 15-ին կ'որոշուի Կիլիկիոյ միաբաններէն Տ. Խորէն վարդապետ Բարոյեանը /հետագային Մեծի Տանն Կիլիկիոյ կաթո-

¹ «Հասկ» ամսաթերթ, Դ տարի, թիւ 2, Փետրուար, Անթիլիաս, 1935, էջ 22:

² Տե՛ս անդ:

³ Տե՛ս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն Արխի Բերիոյ Թեմ (յետայսու ՄՏԿԿԱ ԲԹ), հաւաքածոյ (հ.) 3, ցուցակ (ց.) 1, թղթածրար (թղթ.) 101, էջ 5-6:

դիկոս/ ուղարկել, իբրեւ Ճեզիրէ Հայոց Առաջնորդական Փոխանորդ. ան կը մեկնի իր պաշտօնատեղին Գամիշլի: 1942թ.-ին սկիզբ կ'առնէ Ճեզիրէ Հայոց Առաջնորդական փոխանորդութեան գործունէութիւնը եւ ութ տասնամեակ ան՝ Առաջնորդը, հակառակ բազում դժուարութիւններու կը շարունակէ իր աշխատանքները՝ համայնքը աշխոյժ պահելու¹:

Կայացած որոշումներու համաձայն, «Ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդութիւնը ուղղակի կապուած է Հալէպի Ազգ. Առաջնորդարանին, ներկայացուցչական հանգամանք մը ունենալով Հալէպի Առաջնորդին եւ պատասխանատու անոր՝ իր գործունէութեան մասին:

Ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդ Հայր Սուրբին կեդրոնն է Գամիշլի քաղաքը:

Ճեզիրէի շրջանի հոգեւոր հովուութեան մէջ կը մտնէին Գամիշլի, Հասիշէ, Տէր Զօր, Ռաս-էլ-այն, Տերպեսիէ, Ամուտա, Թէլ-Պրաք, Գուպր-Պիթ, Թէլ-Քօշէք եւ Այնտիվար»²:

Սանճագի հայոց վիճակով նաեւ մտահոգ էր ե՛ւ թեմը, ե՛ւ կաթողիկոսութիւն³: Կիլիկիոյ պարպումէն 18 տարի անց, արեւմտահայութեան հայրենի բոյներէն վերջին ալ պիտի դատարկուէր Թուրքիոյ յանձնումով: Գաղթը արդէն սկսած էր 1938-ին: Սանճագի գաղթականներու մնացորդները, կը գրէ ամսագիրը, մօտաւորապէս 15 հազար հոգի կը կեդրոնանան երեք կայաններ.

ա/Հալէպի կայանը կը փոխադրուին Գըրգ-խանի, Րէհանիէի, Հայաշէնի, Ապտալ Հիւլիւկի եւ դաշտային շրջանի ժողովուրդը մօտ 3000 անձ, տեղւոյն գաղթականաց խնամակալութեան հոգածութեամբ.

¹ Տե՛ս «Հասկ» ամսաթերթ, ժԱ. տարի, թիւ 3-4, Մարտ-Ապրիլ, Անթիլիաս, 1942, էջ 64:

² ՄՏԿԿԱ, ԲԹ, Բ. 3, ց. 1, թղթ.48, էջ 33:

³ Տե՛ս «Հասկ» ամսաթերթ, Զ. տարի, թիւ 1-2, Յունուար-Փետրուար, Անթիլիաս, 1937, էջ 16, «Թեմական լուրեր Անտիոքէն»:

բ/ Մուսա լերան շրջանի ժողովուրդը, մօտ 6000 անձ դէպի Պասիթի ծովեզերեայ շրջանը, իսկ երրորդ խումբը կուգար Ալեքսանտրէթ քաղաքի եւ շրջակայ լեռնային շրջաններու ժողովուրդը շուրջ 3750 անձ, որոնք իջեւանած էին Թարթուս։ Բոլորն ալ իրենց հետ բերած էին իրենց գոյքերն ու կենդանիները¹։

1938թ.-ին Ապրիլ 4-5 կայացած Կաթողիկոսութեան եպիսկոպոսական ժողովին կ'արծարծուի Լաթաքիոյ եւ շրջակայ գիւղերը հովուութեան հարցը եւ օրակարգի նիւթ կը դառնայ Լաթաքիոյ Անտիոքի եպիսկոպոսական աթոռի վարչական գոյավիճակը։ Ժողովը նկատի ունենալով Սանճագի նոր ստացած քաղաքական եւ վարչական հանգամանքով սահմանէն դուրս մնացած Լաթաքիան եւ շրջակայ քանի մը գիւղերը, կ'որոշէ զանոնք կցել Դամասկոսի Առաջնորդական վիճակին (Առաջնորդարանին)²։

1939 թ., 18-20 Դեկտեմբերին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական տեղապահ Տ. Պետրոս արք. Սարաճեանի հրաւերով կայացած Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եպիսկոպոսական ժողովը, սակայն, կ'որոշէ Լաթաքիա-Քեսապ շրջանը առժամապէս կցել Բերիոյ (Հալէպի) թեմին՝ Դամասկոսի թեմի փոխարէն³։

Ալեքսանտրէթի Սանճագի շուրջ դարձած քաղաքական խնդիրը թէեւ շահագրգռուող պետութիւններու միջեւ լուծում գտաւ, սակայն ազգային դիտանկիւնէն յանգեցաւ 30.000 հայ բնակչութեան տեղահանման ու գաղթի դէպի Լի-

¹ Տէն «Հասկ» ամսաթերթ, Բ. տարի, թիւ 7-8, Յուլիս-Օգոստոս, Անթիլիաս, 1939, էջ 125։

² Տէն «Հասկ» ամսաթերթ, Է. տարի, թիւ 5, Մայիս, Անթիլիաս, 1938, էջ 72-73։

³ Տէն **Տէմիրճեան Վ. Եպս.**, Գաղափարագիրք Կիւսնանի եւ Սուրիոյ հայոց թեմերու առաջնորդութեանց, Ա. հատոր, Անթիլիաս, 1980, էջ 327-328։ Տէն նաեւ «Հասկ» ամսաթերթ, Բ. տարի, թիւ 11-12, Նոյեմբեր-Դեկտեմբեր, Անթիլիաս, 1939, էջ 175։

բանան եւ Սուրիա, կը գրէ «Հասկ» ամսաթերթի յօդուածագիրը¹:

Այսպիսով 1939-էն ետք, Բերիոյ թեմը իր չորս գլխաւոր շրջաններով՝ բաժնուած 39 քաղաքներու եւ աւաններու, կը պարզէր հետեւեալ պատկերը.

Բերիոյ թեմ 1939 ²	հայ առաքելական	հայ կաթողիկէ	Հայ աւետարանական	ընդհանուր
Հալէպ քաղաք արուարձաններով	50.000	2.000	3.000	55.000
Հալէպ քաղաքի աւանները (Ազէզէ, Արաբ Փունար, Ճարապուս, Աֆրին, Այն էլ Արուս, Ամուտա, Պապ, Մունպուճ, Այն Տիվար)	5.000	-	-	5.000
Հիւսիսային Սուրիա-Ճեզիրէի նահանգ (Գամիշլի, Հասիէ, (Հասաքէ), Ռաս Ուլ Այն, Տէր Զօր, Տէրպէսիէ)	12.500	-	--	12.500
Քեսապ եւ Լաթաքիոյ շրջանը	6.250	--	-	6.250

Կրթամանկավարժական գործունէութիւն: Անթիլիասի մէջ 1932 Մարտ 8-14 գումարուած Եպիսկոպոսական ժողովը կը զբաղի Ազգային եւ կրօնական կրթութեան վերաբերեալ հիմնահարցերով: Խորհրդածութեան կարեւոր հարցերէն էր նաեւ Թեմերու մէջ նախակրթարաններու համար ստեղծել միօրինակ ծրագիր եւ ապահովել անոր գործադրութիւնը: Այդպիսի կրթական Յանձնախումբ մը արդէն կազմուած էր Հալէպի մէջ եւ ունէր իր ծրագիրը. ուստի ժողովը նպատա-

¹ Տե՛ս, «Հասկ» ամսաթերթ, Ը. տարի, թիւ 9-10, Սեպտեմբեր-Հոկտեմբեր, Անթիլիաս, 1939, էջ 138, «Սանճագի հայ գաղթականաց տեղատուումը»:

² Տե՛ս **Ֆիլեմկեան Ա.**, Սուրիոյ հայ համայնքի պատմութիւնը 1946-1970 թթ., Երեւան, 2018, էջ 35:

կայարմար կը գտնէ որ Լիբանանի, Հալէպի եւ այլ թեմերուն մէջ պատրաստուած ծրագիրները միացնել եւ միօրինակ ծրագիր մը պատրաստել ու զայն տրամադրել բոլոր թեմերու ազգային վարժարաններու եւ ի գործ դնել սոյն թուակա-նի Սեպտեմբերէն: Նաեւ կ'որոշուի.

-Կրօնի դասերը պարտաւորիչ ընել եւ շաբաթական երկու ժամ տրամադրել դասաւանդման.

-կրօնի դասերը յանձնել կարող քահանաներու եւ ձեռնհաս ուսուցիչներու.

-Ուսուցիչ աշակերտներու համատեղ այցելութիւնը եկեղեցի¹:

Վերոյիշեալ երեք կէտերով կաթողիկոսութիւնը կը միտէր հայ դպրոցի ճանապարհով հայ մանուկին տալ «հոգեւոր կեանք, ազգային եւ եկեղեցական ինքնաճանաչում, քրիստոնէական դաստիարակութիւն ...»²: 1942 թուականին Սուրիոյ եւ Լիբանանի մէջ արդէն կը գործէին 30 Կիրակնօրեայ դպրոցներ, շուրջ 204 ուսուցիչներով եւ 3107 աշակերտներով³:

Ժողովի որոշումներէն էր նաեւ այն, որ Ազգային վարժարանները վստահուած էին Առաջնորդներուն եւ Առաջնորդը ի պաշտօնէ իրաւունք եւ պարտք ունէր այդ հսկողութիւնը կատարելու, բայց նկատի ունենալով Առաջնորդներու

¹ Տէն, «Հասկ» ամսաթերթ, Ա. տարի, թիւ 3, Մարտ, Անթիլիաս, 1932, էջ 17:

² Վարժապետեան Բ. աբղ., Կրօնաբարոյական դաստիարակութիւնը հայ մատաղ սերունդին մէջ. տէն «Հասկ» ամսաթերթ, ԺԱ. տարի, թիւ 3-4, Մարտ-Ապրիլ, Անթիլիաս, 1942, էջ 60:

³ Բերիոյ թեմի կողմէ կը հովանաւորուէ 14 Կիրակնօրեայ դպրոց հետեւեալ հայկական բնակավայրերու մէջ՝ Հալէպ (Կեդրոն), Տալուսիէ, Նոր գիւղ, Գերմանիկ (Մէլտան), Սէպիլ, Տեր Զօր, Ազէզ, Հոմա, Եագուպիէ, Սելիմիէ, Համա, Աֆրին, Մէլտանիֆպէզ, Կիւրիկ. տէն Վարժապետեան Բաբգէն Աբղ., Կրօնաբարոյական դաստիարակութիւնը հայ մատաղ սերունդին մէջ. տէն «Հասկ» ամսաթերթ, ԺԱ. տարի, թիւ 3-4, Մարտ-Ապրիլ, Անթիլիաս, 1942, էջ 61:

զբաղած ըլլալը կ'որոշուի Կիլիկեան թեմերու բոլոր Ազգային վարժարաններու համար կաթողիկոսարանին կողմէ նշանակուի կրթական քննիչ մը՝ Ազգային եւ կրօնական ուսուցման եւ կանոնաւոր աւանդման հսկելու եւ միօրինակ ծրագիրը գործադրութեան դնելու¹:

«Հասկ» ամսաթերթի 1939թ.-ի համարներէն մէկուն Բերիոյ թեմէն ներս կատարուած կրթամանկավարժական եւ Հալէպահայ ուսուցչական միութեան գործունէութեան վերաբերեալ եւս արձագանք կայ. (Միութիւնը հովանաւորութիւնը կը վայելէր Բերիոյ թեմին), նաեւ Հայ Ազգային Կարմիր խաչի բարեգործութեան եւ այլն:

«Հասկ»-ի 1946թ.-ի համարներուն մէջ կան Կաթողիկոսութեան հովանաւորութեամբ կազմակերպուած թեմերու Կրթական Ա. համագումարի ատենագրութիւնները. համագումարին մասնակցութիւն բերած էր նաեւ Բերիոյ թեմը իր ներկայացուցիչներով եւ Հալէպահայ ուսուցչական միութեան կողմէ պատրաստուած կրթական յատուկ ծրագիրով:

«Հասկ»-ի տարբեր համարներու մէջ ակնարկ կայ թեմերէն ներս Կիրակնօրեայ դպրոցներ կազմակերպման վերաբերեալ յօդուածներ եւ հաղորդումներ²:

Ստորեւ կը ներկայացնենք միայն Բերիոյ թեմի Կիրակնօրեայ վարժարաններու ցուցակը.

դպրոց	ուսուցիչ	աշակերտ
Հալէպ (Կեդրոն)	20	250
Տափուտիէ	9	175
Նոր գիւղ	20	350
Գերմանիկ (Մէլտան)	5	160
Սէպիլ	8	75

¹ Տե՛ս, «Հասկ» ամսաթերթ, Ա. տարի, թիւ 3, Մարտ, Անթիլիաս, 1932, էջ 17:

² Տե՛ս, «Հասկ» ամսաթերթ, է. տարի, թիւ 12, Դեկտեմբեր, Անթիլիաս, 1938; Ժ. տարի, թիւ 3-4, Մարտ-Ապրիլ, 1941; ԺԱ. տարի, թիւ 3-4, Մարտ-Ապրիլ, 1942:

Տէր Զօր	5	30
Ազէզ	5	90
Հոմս	4	80
Եագուպիէ	3	40
Սէլիմիէ	1	35
Համա	-	-
Աֆրին	3	50
Մէլտան էքպէզ	-	30
Կէմրիկ	-	-

Վիճակագրական ցուցակներ¹

Տարեկան վիճակագրութիւն Բերիոյ Թեմի հայ առաքելական եկեղեցւոյ զաւակներու

Քա- ղաք/1932 ²	1934³	1935⁴	1937⁵	1938⁶	1939⁷	1940⁸
Հալէպ	Հալէպ	Հալէպ	Հալէպ	Հալէպ	Հալէպ	Հալէպ
Ալէք- սանտրէթ	-	-	-	-	-	-
Ազազ	Ազազ	Ազազ	Ազազ	Ազէզ	Ազազ	Ազազ
Արաբ-- Փունար	Արաբ-- Փունար	Արաբ-- Փունար	Արապ-- Բունար	Ա.-Բու- նար	Արաբ-- Բունար	Արաբբու- նար
Աֆրին	Աֆրին	Աֆրին	Աֆրին	Աֆրին	-	Աֆրին

¹ Տարեկան վիճակագրական ցուցակ Բերիոյ թեմին մէջ 1934-ի ընթացքին պատահած ամուսնութեանց, ծնունդներու եւ մահերու: Տե՛ս «Հասկ» ամսաթերթ, Դ. տարի, թիւ 2, Փետրուար, Անթիլիաս, 1935, էջ 24:

² Տե՛ս «Հասկ» ամսաթերթ, Բ. տարի, թիւ 5-6, Մայիս-Յունիս, Անթիլիաս, 1933, էջ 32:

³ Տե՛ս «Հասկ» ամսաթերթ, Դ. տարի, թիւ 2, Փետրուար, Անթիլիաս, 1935, էջ 24:

⁴ Տե՛ս «Հասկ» ամսաթերթ, Ե. տարի, թիւ 3-4, Մարտ-Ապրիլ, Անթիլիաս, 1936, էջ 31:

⁵ Տե՛ս «Հասկ» ամսաթերթ, Է. տարի, թիւ 5, Մայիս, Անթիլիաս, 1938, էջ 80:

⁶ Տե՛ս «Հասկ» ամսաթերթ, Ը. տարի, թիւ 3, Մարտ, Անթիլիաս, 1939, էջ 48:

⁷ Տե՛ս «Հասկ» ամսաթերթ, Թ. տարի, թիւ 5, Մայիս, Անթիլիաս, 1940, էջ 80:

⁸ Տե՛ս «Հասկ» ամսաթերթ, Ժ. տարի, թիւ 3-4, Մարտ-Ապրիլ, Անթիլիաս, 1941, էջ 55:

Ապտալ-- Հէօիւկ	-	-	-	-	-	-
Այնտի- վար	Այնտի- ւար	Այն Տի- վար	-	-	Այնտի- վար	Այն-Տի- վար
Գամիշլի	Գամիշլիէ	Գամիշլի եւ շրջ.	Գամիշլի	Գամիշլի	Գամիշլի եւ շրջ.	Գամիշլի
Գըրգ-- հան	-	-	-	-	-	-
Աթրգ	-	-	-	-	-	-
Եագու- պիչէ,	Եագուպի- լէ	Եագուպի- լէ	Եագուպի- լէ	Եագուպի- լէ	Եագուպի- լէ	Եագուպի- լէ
Ճիսր-- Շուզուր	Ճիսր-- Շուզուր	Ճիսր-Շ- դուր	Ճիսր-Շ- դուր	Ճիսր-էլ- Շդուր	Ճիսր եւ Ընկզիկ	Ճիսրշ- դուր
Թէլ- Ա- պիաթ	Թէլ- Ա- պեաթ	Թէլ Ա- պիաթ	Թէլ- Ա- պիաթ	Թէլ- Ա- պիատ	Թէլ- Ա- պիատ	Թէլ- Ա- պիատ
Համա	-	-	-	-	-	-
Հօմս	-	-	-	-	-	-
Սէյիմիլէ	-	-	-	-	-	-
Մէնպիճ	Մէնպիճ	Մէնպիճ	Մէմպիճ	Մէմպիճ	-	-
Նարկիդ- լիկ	-	-	-	-	-	-
Թինա	Թինա	-	-	-	-	-
Տէրիկ	Տէրիկ	Տէրիք եւ շրջ.	Տէրիք եւ շրջ.	Տէրիք եւ շրջ.	Տէրիք եւ շրջ.	Տէրիք
Րագգա	Րագգա	Րագգա	Րագգա	Րագգա	Րագգա	Րագգա
Ճարապ- լուս	Ճարապ- լուս	Ճարապ- լուս	Ճարապ- լուս	Ճարապ- լուս	Ճարապ- լուս	Ճարապ- լուս
Տէր- Զօր	Տէլր- Զօր	Տէր Զօր	Տէր Զօր	Տէլր- էգ-- Զօր	Տէր Զօր	Տէլր- էգ-- Զօր
Րահանի- լէ	-	-	-	-	-	-
Հալաշէն	-	-	-	-	-	-
Համամ	-	-	Համամ	-	-	-
Հասիչէ	Հասիչէ	Հասիչէ	Հասիչէ	Հասիչէ	Հասիչէ	-
Պապ	Պապ	Պապ	Պապ	Պապ	-	Պապ- Մէնպիճ
Պէլլան	-	-	-	-	-	-
Սօվուգ-Օ- լուգ	-	-	-	-	-	-
Սօվուգ-- Սու	-	--	-	-	-	-

Չաթալ-- Թէփէ,	-	-	-	-	-	-
Ռաս-էլ- ալն	Ռաս-էլ- ալն	Ռաս-էլ- ալն	Ռաս-էլ- ալն	Ռաս-էլ- Ալն	Ռաս-էլ- Ալն	-
-	Այն-Արուս	Այն Արուս	Այն-Արուս		Այն-Արուս	Այն- էլ-Ա- րուս
-	Մէլտան էքպէզ	Մէլտան էքպէզ	Մէլտան էքպէզ	Մէլտան էքպէզ	Մէլտան էքպէզ	Մէլտան էքպէզ
-	-	Թէլ Սէմէն	-	-	-	-
-	-	Գուպր էլ պիթ	Գուպր էլ պիթ	Գուպր-էլ- պիթ	Գուպր էլ պիթ	Գուպր-- Պիթ
-	-	Վանիկ	-	-	-	-
-	-	-	Տէրպէսի- լէ	Տէրպէսի- լէ	Տէրպէսի- լէ	Տէրպէսի- լէ
-	-	-	Բաճօ	Բաճօ	-	-
-	-	-	Թէլ Պրազ	Թէլ-Պրազ	Թէլ-Պրազ	Թէլ-Պրազ
-	-	-	-	Ամուտա	Ամուտա	Ամուտա
-	-	-	-	-	Լաթաքիա եւ շրջ.	Լաթաքիա
-	-	-	-	-	Քէսապ	Քէսապ
-	-	-	-	-	-	Թէլ-Քօչէկ
-	-	-	-	-	-	Թարթուս
-	-	--	-	-	-	Կէմրիւկ
-	-	-	-	-	-	Ղընէմիէ եւ Արամօ
ընդամենը 55.241 անձ	ընդամենը 48.101 անձ	ընդամենը 49.281 անձ	ընդամենը 50.963 անձ	ընդամենը 53.739 անձ	ընդամենը 65.176	ընդամենը 66.173

Հետաքրքիր վիճակագրական տուեալներ կան Բերիոյ թեմի եկեղեցիներու եւ քահանաներու վերաբերեալ: 1941թ.-ի վիճակագրութեան համաձայն թեմը ունեցած է 16 եկեղեցի, 4 մատուռ եւ 29 քահանայ¹. տե՛ս աղիւսակը.

¹ Քահանաներու անունները տե՛ս «Հասկ» ամսաթերթ, Ժ. տարի, թիւ 3-4, Մարտ-Ապրիլ, Ամրիլիաս, 1941, էջ 55-56:

ԲԵՐԻՈՅ (ՀԱԼԷՊԻ) ԹԵՄ՝		
	Եկեղեցի	մատուռ
Հալէպ	Ս. Քառասուն Մանուկ Աթոռանիստ եկեղեցի	
Հալէպ	Ս. Աստուածածին եկեղեցի	
Հալէպ	Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի	
Հալէպ	Ս. Գէորգ եկեղեցի	
Հալէպ		Ս. Յակոբ մատուռ
Հալէպ		Տափուտիէի մատուռ
Ազազ	Ս. Թագաւոր եկեղեցի	
Աֆրին	Ս. Նշան եկեղեցի	
Եագուպիւէ	Ս. Աննա եկեղեցի	
Ճարապլուս	Ս. Աստուածածին եկեղեցի	
Արաբ-Բունար	Ս. Աստուածածին եկեղեցի	
Գամիշլի	Ս. Յակոբ եկեղեցի	
Հասիշէ	Կիսաւարտ եկեղեցի	
Տէրիք		Մատուռ
Տէր-Զօր	Ս. Հռիփսիմէ եկեղեցի	
Րազգա		Մատուռ
Թէլ-Ապիատ	Ս. Աստուածածին եկեղեցի	
Քէսապ	Ս. Աստուածածին եկեղեցի	
Գարատուրան	Ս. Աստուածածին եկեղեցի	
Լաթաքիա	Ս. Աստուածածին եկեղեցի	

Բերիոյ (Հալէպի) թեմի դպրոցներու, ուսուցչութեան եւ աշակերտութեան թիւի վերբերեալ 1940թ.-ի վիճակագրական ցուցակ²

քաղաք	ուսուցչութիւն	աշակերտութիւն
Հալէպ	178	4919
Ազազ	8	294
Աֆրին	2	97
Արաբ Բունար	8	307

¹ Տե՛ս «Հասկ» ամսաթերթ, Ժ. տարի, թիւ 3-4, Մարտ-Ապրիլ, Անթիլիաս, 1941, էջ 55-56:

² Տե՛ս «Հասկ» ամսաթերթ, Ժ. տարի, թիւ 5-6, Մայիս-Յունիս, Անթիլիաս, 1941, էջ 80:

Այն էլ-Արուս	3	90
Գամիշլի	7	323
Գուպր-Պիթ	1	25
Եագուպիլէ,	3	62
Թէլ- Ապիատ	3	125
Թէլ-Քօշէլ	1	15
Թէլ-Պրագ	3	69
Թարթուս	2	35
Լաէաքիա	10	261
Կէմրիւկ	1	26
Հասիլէ	3	72
Ղրնէմիէ եւ Արամօ	1	22
Ճարապլուս	9	312
Պապ-Մէնպիճ	1	30
Ռաս-էլ-Այն	3	82
Տէրպէսիէ	2	34
Տէրիք	1	24
Տէլր- Էգ-Զօր	6	108
Րագգա	3	103
Քէսապ	11	424
	272	7879

Եւ վերջապէս, «Հասկ»-ը մեզի կը փոխանցէ նաեւ Դպրեվանքի այն շրջանաւարտ-սաներու անունները, որոնք Կաթողիկոսութեան թեմերէն ներս մատուցած են մշակութային ծառայութիւններ . (Միայն Բերիոյ թեմի մէջ¹).

քաղաք	վարժարան	անուն	պաշտօն
Հալէպ	Կիւլպէնկեան	Սիմոն Սիմոնեան ²	ուսուցիչ
Հալէպ	Կրթասիրաց վարժարան	Կարապետ Սապունճեան	ուսուցիչ

¹ Տե՛ս «Հասկ» ամսաթերթ, Ժ. տարի, թիւ 7-8, Յուլիս- Օգոստոս, Անթիլիաս, 1941, էջ 113-114:

² Դպրեվանքի սաներէն ոմանք իրենց պաշտօնէն բացի, կատարած են զրական աշխատութիւններ, որոնցմէ է Ս. Սիմոնեան. ան նախակրթարաններու համար Ազգային Պատմութեան շարք մը պատրաստած է որուն առաջին փոքրիկ հատորները լոյս կը տեսնեն 1941-ին. տե՛ս «Հասկ» ամսաթերթ, Ժ. տարի, թիւ 7-8, Յուլիս-Օգոստոս, Անթիլիաս, 1941, էջ 115:

Հալէպ	-	Արմէն Տէր-Պետրոսեան	դպրապետ- ուսուցիչ
Հալէպ	-	Վարդան Սէրայտարեան	դպրապետ- ուսուցիչ
Լաթաքիա	Ազգային վարժարան	Յովհաննէս Թիթիզեան	դպրապետ- ուսուցիչ
Տէր-Զօր	Ազգային վարժարան	Յովհաննէս Թօփալեան	դպրապետ- ուսուցիչ
Եագուպիյէ	Ազգային վարժարան	Պարգեւ Նազարեան	աւագ-ու- սուցիչ
Ճարապլուս	-	Սիմոն Հովիւեան	դպրապետ- ուսուցիչ
Քէսապ	Ազգային վարժարան	Յովսէփ Փոլատեան	ուսուցիչ
Քէսապ	Ազգային վարժարան	Կիրակոս Գարալեան	ուսուցիչ
Գամիշլի	Ազգային վարժարան	Յակոբ Աշակերտեան	դպրապետ- ուսուցիչ
Հասիշէ	Ազգային վարժարան	Անդրանիկ Մովսէսեան/ Թերաւարտ	ուսուցիչ
Րազգա	Ազգային վարժարան	Մկրտիչ Գասպարեան /Թերաւարտ	ուսուցիչ

Եզրակացութիւն.- Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Հասկ» ամսաթերթի 1932-1942 թթ. համարներու մէջ առկայ են Բերիոյ թեմին առնչուող յօդուածեր, թեմական լուրեր, վիճակագրական տուեալներ, որոնք թէեւ թեմի պատմութիւնը հետազօտողներու համար կրնան սկզբնաղբիւրի դերով հանդէս գալ եւ նպաստել Բերիոյ Հայոց թեմի պատմութեան ուսումնասիրութեան, սակայն տեղեկութիւնները անբաւարար են, չեն արտացոլեր թեմի ողջ գործունէութեան վերաբերեալ յստակ պատկերացում: Այստեղ կարելի է այլ դիտարկում մը կատարել այն է, որ վիճագրական ցուցակներու մէջ տեղ գտած տեղանուններու նոյնաձեւութիւնը չէ պահպանուած, այլ խօսքով տեղանունը տարբեր համարներու մէջ արձանագրուած է տարբեր ձեւերով (Արաբ Բունար, Արաբբունար, Արաբ-Փունար եւ այլն): Այնուամենայնիւ, այս

*եւ այլ վրիպակներ չեն խոչընդոտեր ամսաթերթի ուսումնա-
սիրման գործընթացը:*

ГАЗЕТА "АСК" КАТОЛИКОСАТА ВЕЛИКОГО ДОМА КИЛИКИЙСКОГО О ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ЕПАРХИИ БЕРИО

Ани Фишенкян,

РЕЗЮМЕ

В выпусках 1932-1942 годов журнала "Хаск", издаваемого Католикосатом Великого Дома Киликийского, есть ценные сведения о деятельности "Епархии Перио" после 1920-х годов, где говорится о переселении беженцев в Алеппо, Дамаск, Латакия и другие армянские населенные пункты.

В журнале также сообщаются сведения о приездах просветительских, организационных и духовных руководителей епархии, народных и христианских просветительских, епархиальных и строительных работах, вопросы, связанные с деятельностью центральных комитетов эмигрантов.

статья имеет источниковологическое значение, благодаря которому мы имеем возможность составить определенное представление о деятельности и взаимоотношениях Бериоской епархии и Великого Дома Киликийского Католикоса. Это способствует изучению истории епархии Берио.

THE HASK MAGAZINE OF THE GREAT HOUSE OF CILICIA ON THE ACTIVITIES OF THE BERIO ARMENIAN DIOCESE

Ani Fishenkjjan/Fchnkjian

SUMMARY

In the *1932-1942* issues of the "Hask" magazine published by the Catholicosate of the Great House of Cilicia, there is valuable information about the activities of the "Diocese of Perio" after the *1920s*, where they talk about the resettlement of refugees in Aleppo, Damascus, Latakia, and other Armenian settlements.

The magazine also conveys information about the visits of educational, organizational, and spiritual leaders of the diocese, popular and Christian education, diocesan and construction works, and issues related to the activities of the central committees of emigrants.

the article has sociological significance, through which we have the opportunity to have a certain idea about the activities and relationship between the Berio Diocese and the Great House of Cilicio Catholicos. This contributes to the study of the history of Perio Diocese.

Անի Ֆիշենկյան, պատմական գիտությունների թեկնածու: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատողի պաշտոնակատար: Գիտական հետաfrրությունների շրջանակն ընդգրկում է Սիրիայի հայ համայնքի և ընդհանրապես հայկական սփյուռքի պատմությունը: Հեղինակ է 2 մենագրության, շուրջ 20 գիտական հոդվածների և հրապարակումների.

✉ fishenkjianani@gmail.com

Ани Фишенокян, кандидат исторических наук. Исполняющий обязанности старшего научного сотрудника

Института истории НАН РА. Научные интересы: история армянской общины в Сирии и армянской диаспоры в целом. Она является автором 2 монографий, около 20 научных статей и публикаций.

✉ fishenkjianani@gmail.com

Ani Fishenkjian/Fchnkjian/, Candidate of Historical Sciences, Researcher at the NAS RA Institute of History. Scientific interests: The history of the Armenian community of Syria and the Diaspora in general. Author of a monograph and over 20 academic articles.

✉ fishenkjianani@gmail.com

**ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ
«ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՄ.
ՍԻՍԻՑ ՄԻՆՉԵՒ ԱՆԹԻԼԻԱՍ»**


2022 թ. սեպտեմբերի 8-9

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ



**Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ. 011-52.79.74
Էլ. փոստ lusakn@rambler.ru**



ISBN 978-9939-0-4559-7



9 789939 045597